ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
Դ. ԿԱՆԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ-ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ

(փորձագիտական-ուսումնական ձեռնարկ)

ՄԱՍ 2

ԵՐԵՎԱՆ ♦ 2013

ՀՏԴ 355/359(479.25)(07)
ԳՄԴ 68.49(2Հ)g7
Հ 247

Ջեռնարկի գիտական խմբագիրներ՝ Հ. Ս. ՔՈԹԱՆՋՅԱՆ,
քաղաքական գիտությունների դոկտոր,
Ս. Մ. ՕՀԱՆՅԱՆ,
քաղաքական գիտությունների թեկնածու

Երաշխավորված է ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի գիտական խորհրդի և ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի կողմից

Հաստատված է ՀՀ Կրթության և գիտության նախարարի 01.02.2013 թ. հմ. 86-Ա/Ք հրամանով

ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-Ի «ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ» ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Քոթանջյան Հ. Ս. (նախագահ), քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), Ռազմական գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի իսկական անդամ, Պաշտպանական ազգային համալսարանի հրավիրված առաջատար պրոֆեսոր (ԱՄՆ), *Չիլինգարյան Դ. Ս.* (գլխ. խմբ.), *Այդինյան Ռ. Ա., Այվազյան Լ. Գ., Ապրիամով Է. Ա., Ավետիսյան Վ. Ն., Գասպարյան Տ. Շ., Դավթյան Ա. Մ., Իսախանյան Մ. Ռ., Խաչատրուրով Յու. Գ., Կարապետյան Մ. Ն., Մաթևոսյան Ի. Ժ., Մարգարյան Վ. Հ.* (գլխ. խմբ. տեղ.), *Մարտիրոսով Լ. Ա., Միրզաբեկյան Ա. Ռ., Մուրադյան Կ. Ռ., Նազարյան Ա. Ս., Շիրինյան Մ. Ա., Սեդրակյան Ս. Գ., Վարդանյան Ա. Գ., Տեր-Գրիգորյանց Ն. Գ., Տոնոյան Դ. Է.*

ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Աղուզումցյան Ռ. Վ., հ. գ. թ., դոց., *Առաքելյան Ն. Հ.,* ակադ., *Բաղդասարյան Գ. Ե.,* ակադ., *Գևորգյան Հ. Ա.,* ակադ., *Գևորգյան Ռ. Գ.,* երկր. գ. դ., պրոֆ., *Հարությունյան Վ. Մ.,* ակադ., *Մանթաշյան Ա. Հ.,* ակադ., *Մինասյան Է. Գ.,* պ. գ. դ., պրոֆ., *Միրիջանյան Մ. Մ.,* բժ. գ. դ., պրոֆ., *Մոսոյան Կ. Ս.,* տեխ. գ. դ., պրոֆ., *Չիլինգարյան Յու. Ս.,* ակադ., *Սարգսյան Վ. Ս.* ակադ., *Միսակյան Հ. Ս.,* բժ. գ. դ., պրոֆ.

Հ 247 ՀՀ պաշտպանական-անվտանգային համակարգի բարեփոխման ուղենիշները/Խմբ. խորհուրդ.– Եր: ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌՀԻ, 2013. Մաս 2.–416 էջ:

Սույն փորձագիտական-ուսումնական ձեռնարկում ամփոփված են ՀՀ պաշտպանության հիմնական ոլորտների արդի վիճակին և պաշտպանական-անվտանգային համակարգի հեռանկարային բարեփոխումներին առնչվող փորձագիտական-վերլուծական հոդվածները, որոնց հեղինակները տվյալ ոլորտի համար պատասխանատու ՊՆ և ԶՈՒ-ի, ակադեմիական շրջանների, ՀՀ նախարարությունների ու գերատեսչությունների, հասարակական կազմակերպությունների մասնագետներ են: Նյութերը հրապարակվել են ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի 2008–2012 թթ. մասնագիտացված համարներում՝ անցնելով ԲՈՀ-ի պահանջներին համապատասխանող մասնագիտական փորձաքննություն:

Ջեռնարկը նախատեսված է պաշտպանական կրթության համակարգի հաստատությունների և զորային կառույցում մարտական պատրաստման համար:

ՀՏԴ 355/359(479.25)(07)
ISBN 978-99941-2-787-0 ԳՄԴ 68.49(2Հ)g7

© Քոթանջյան Հ. Ս., 2013
© Օհանյան Ս. Մ., 2013
© ՀՀ ՊՆ ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ, 2013

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՌՈՒՄՆԵՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՆԱԿԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

Ա. Ս. ՆԱԶԱՐՅԱՆ, ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ

Խորհրդային հասարակարգի փլուզումից և Հայաստանի երրորդ Հանրապետության հռչակումից հետո տեղի ունեցավ անցում հասարակական մի հարաբերություններից սկզբունքորեն տարբերվող այլ հասարակական հարաբերությունների, և բնական է, որ այդ անցումային շրջանը, որը շարունակվում է մինչ օրս, պետք է առաջ բերեր մի շարք հիմնարար իրավական խնդիրներ, որոնց լուծման ընթացքում հաջողությունների հետ մեկտեղ անխուսափելիորեն տեղ կգտնեին բացթողումներ և թերություններ:

Անցումային ժամանակաշրջանում իրավական զարգացումը Հայաստանի Հանրապետությունում բնութագրվում է ինչպես դրական, այնպես էլ հակասական միտումներով: Մի կողմից՝ հանրապետության քաղաքական և սոցիալ-տնտեսական վերափոխումները խթանեցին իրավաստեղծ գործունեությունը և, հետևաբար, նաև իրավական ակտերի քանակական աճը, մյուս կողմից՝ քանակական աճին զուգահեռ ընդգծվեցին իրավականի և իրականի տարբերությունը, ինչպես նաև հակասություններն ամբողջ օրենսդրական համակարգում: Այս առումով բացառություն չեն կազմել նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտը կարգավորող իրավական ակտերը: Խնդիրն այն է, որ Խորհրդային Միությունից «ժառանգված» իրավական ակտերն արդեն իսկ կորցրել են իրենց արդիականությունը և արդյունավետ կերպով չեն կարգավորում Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում առաջացող որակապես նոր հասարակական հարաբերությունները: Պաշտպանական ոլորտը կարգավորող այն իրավական ակտերը, որոնք ստեղծվել են Հայաստանի երրորդ Հանրապետության հռչակումից ի վեր, հիմնականում հախուռն են և հետևանք են նորաստեղծ Զինված ուժերի ձևավորման գործընթացով պայմանավորված իրավաստեղծ գործունեության:

Այսօր, երբ հայ ժողովուրդն ամրապնդում է իր ազգային պետականությունը, պաշտպանական ոլորտում ծագող իրավահարաբերությունների պատշաճ կարգավորման անհրաժեշտությունը ձեռք է բերել առանձնահատուկ կարևորություն:

Պաշտպանական ոլորտի օրենսդրության շարունակական կատարելագործումը այսօր անվիճելիորեն համարվում է Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի բնականոն զարգացման, Զինված ուժերում զինվորական կարգապահության և օրինապահության ամրապնդման կարևորագույն նախապայմանը: Խնդիրն արդիական է դառնում հատկապես բանակաշինության ներկա փուլում, երբ Հայաստանի պաշտպանական համակարգը գտնվում է որակապես նոր վերա-

փոխումների ժամանակաշրջանում, ինչը պայմանավորված է ներքին և արտաքին մի շարք գործոնների առկայությամբ:

Մեր տեսակետից՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտի օրենսդրության ձևավորման համար հիմք հանդիսացավ 1990 թվականի օգոստոսի 23-ին Գերագույն խորհրդի կողմից ընդունված «Հայաստանի անկախության մասին» հռչակագիրը, որով ոչ միայն հայտարարվեց անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը, այլև ամրագրվեց Հայաստանի Հանրապետության անվտանգությունն ու սահմանների անձեռնմխելիությունն ապահովելու նպատակով սեփական զինված ուժերի ստեղծման անհրաժեշտությունը: Հռչակագրով հստակորեն ամրագրվեց նաև, որ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում գործում են միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և օրենքները[1]:

Հռչակագրի ընդունումից հետո՝ 1991 թվականի սեպտեմբերի 25-ին, ընդունվեց պաշտպանական ոլորտի օրենսդրության ձևավորման համար իր կարևորությամբ երկրորդ իրավական ակտը՝ «Անկախ պետականության հիմնադրույթների մասին» ՀՀ սահմանադրական օրենքը, որով ամրագրվեց, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը պետության և ժողովրդի հիմնական խնդիրներից մեկն է և դրա իրականացման նպատակով կազմակերպվում են Զինված ուժեր: Առաջին անգամ սահմանվեց նաև, որ Զինված ուժերում ծառայելը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների պարտքն է:

Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտի օրենսդրական զարգացման գործընթացը Հայաստանի երրորդ Հանրապետության հռչակումից ի վեր պայմանականորեն կարելի է բաժանել 3 ժամանակագրական փուլերի:

Առաջին փուլն ընդգրկում է 1990 թվականից մինչև 1997 թվականն ընկած ժամանակահատվածը, երբ ԽՍՀՄ որոշ իրավական ակտեր մեխանիկորեն արտացոլվեցին նաև նորանկախ Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ, ինչպես նաև առաջին անգամ փորձ արվեց կարգավորելու Հայաստանի Հանրապետության նորաստեղծ Զինված ուժերում ծագող զինվորական իրավահարաբերությունները: Մասնավորապես, նման գործընթացի բոհով անցան «Զինապարտության մասին» (1991 թ. դեկտեմբերի 9), «Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովության մասին» (1993 թ. հունվարի 7), «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կայազորային և պահակային ծառայությունների կանոնագիրքը հաստատելու մասին» (1996 թ. դեկտեմբերի 3), «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» (1996 թ. դեկտեմբերի 3) Հայաստանի Հանրապետության օրենքները, «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կարգապահական կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշումը (1996 թ. օգոստոսի 12) և մի շարք այլ իրավական ակտեր:

Հարկ է նկատել, որ վերը նշված ժամանակաշրջանում տեղի էր ունենում ազգային

[1] Տես «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի 2-րդ և 5-րդ կետերը: «ՀՀ Գերագույն խորհրդի տեղեկագիր», 1990 թ., հմ. 16:

ազատագրական պայքար, որը մեծ ջանքերի շնորհիվ պսակվեց ԼՂՀ անկախությամբ: Այս առումով, կարծում ենք, որ նշված իրավական ակտերի ընդունումը՝ թեկուզև ԽՍՀՄ իրավական ակտերի ընդօրինակման ճանապարհով, պայմանավորված էր նորաստեղծ Զինված ուժերում ծագող նոր հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման հրատապությամբ:

Երկրորդ փուլը, մեր կարծիքով, սկսվում է 1997 թվականից և ավարտվում 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեի արդյունքների հիման վրա Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ կատարված փոփոխություններով: Այս ժամանակահատվածում ընդունվել են ներկայումս պաշտպանական ոլորտում գործող այնպիսի կարևորագույն իրավական ակտեր, ինչպիսիք են «Պաշտպանության մասին» (1997 թ. մայիսի 29), «Զինվորական ծառայություն անցնելու մասին» (2002 թ. հուլիսի 3), «Զինծառայողների նյութական պատասխանատվության մասին» (2003 թ. դեկտեմբերի 17), «Սահմանված կարգի խախտմամբ պարտադիր զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների մասին» (2003 թ. դեկտեմբերի 17), «Այլընտրանքային ծառայության մասին» (2003 թ. դեկտեմբերի 17) Հայաստանի Հանրապետության օրենքները, «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների բնակարանային ապահովության մասին» (1997 թ. մարտի 7), «Նախազորակոչային, զորակոչային տարիքի անճանց և պահեստազորայինների զինվորական հաշվառման կարգը հաստատելու մասին» (1997 թ. հուլիսի 17), «Օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական կամ գիտակրթական հաստատություններ ընդունված Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը հաստատելու մասին» (2002 թ. օգոստոսի 29), «Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» (2005 թ. հունիսի 9) ՀՀ կառավարության որոշումները և այլ իրավական ակտեր:

Որոշակի զարգացում ապրած պաշտպանական ոլորտի հասարակական հարաբերությունները այս փուլում կատարելագործման կարիք ունեին, որովհետև հետպատերազմյան իրավիճակում պաշտպանական ոլորտի հասարակական հարաբերությունների որակապես նոր կարգավորման անհրաժեշտություն էր առաջացել: Դրանով էր պայմանավորված այն հանգամանքը, որ վերը նշված երկրորդ փուլում վերընդունվեցին «Զինապարտության մասին» (1998 թ. սեպտեմբերի 16) և «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» (1998 թ. հոկտեմբերի 27) Հայաստանի Հանրապետության օրենքները:

Երրորդ փուլն սկսվում է 2005 թվականի նոյեմբերի 27-ին և շարունակվում է մինչ օրս:

Հարկ է նկատել, որ 2005 թվականի նոյեմբերի 27-ի հանրաքվեով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ կատարված փոփոխությունները հիմք դարձան Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտի օրենսդրության զարգացման ռազմավարական ծրագրի մշակման և օրենսդրական բարեփոխումների իրականացման համար: Իրավագիտության մեջ ընդունված է, որ օրենսդրության

զարգացման ռազմավարական ծրագրի հիմքը պետք է լինի Սահմանադրությունը, որը ոչ միայն երկրի օրենսդրության ստեղծվելիք համակարգի հիմքն է, այլև դրա հետագա զարգացման և կատարելագործման ուղեցույց ծրագիրը, քանզի սահմանադրական նորմերը ելակետ ու խթան են օրենսդրության ամբողջ համակարգի և նրա առանձին ճյուղերի ձևավորման համար:

2005 թվականից մինչ օրս ընդունվել են իրենց կառուցվածքով և տրամաբանությամբ առանձնացող այնպիսի իրավական ակտեր, ինչպիսիք են «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» (2006 թ. դեկտեմբերի 5), «Ռազմական ոստիկանության մասին» (2006 թ. դեկտեմբերի 21) Հայաստանի Հանրապետության օրենքները: Անկասկած, երրորդ փուլի ձեռքբերումներից կարելի է համարել ՀՀ Նախագահի հրամանագրով հաստատված «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին» հրամանագրերը:

Օրենսդրական զարգացման ներկա՝ երրորդ փուլում, սահմանադրական փոփոխությունների հենքի վրա, Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտի օրենսդրական բարեփոխումներն իրականացվում են հետևյալ հիմնական ուղղություններով.

1. Հայաստանի Հանրապետության պաշտպանական հայեցակարգի մշակում.

2. Հայաստանի Հանրապետության պաշտպանության կազմակերպման հիմքերի օրենսդրական կարգավորում, պաշտպանության բնագավառում ՀՀ Նախագահի, ՀՀ կառավարության, պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների տարանջատում, պաշտպանական ոլորտի պլանավորման թափանցիկության ապահովում,

3. Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների զարգացում և ամրապնդում,

4. պաշտպանական ոլորտում քաղաքացիական ծառայության ներդրում,

5. զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության օրենսդրական հիմքերի վերանայում և կատարելագործում,

6. պաշտպանության բնագավառում հանրային իրազեկման հայեցակարգի արդյունավետ և թափանցիկ միջոցների մշակում,

7. Հայաստանի Հանրապետությունում զինապարտության, զինվորական ծառայություն անցնելու հետ կապված զինվորական իրավահարաբերությունների, Զինված ուժերի ներքին ծառայության ու կայազորային և պահակային ծառայությունների կանոնագրքերի, ինչպես նաև կարգապահական կանոնադրության դրույթների վերանայում:

Հայաստանի Հանրապետության անվտանգային հիմնարար փաստաթղթերի ստեղծման ուղղությամբ կատարված աշխատանքների շրջանակներում, ինչպես արդեն նշել ենք, մշակվել և Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով հաստատվել են «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության

ռազմավարությունը» և «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը»: Նշված փաստաթղթերն ունեն ելակետային բնույթ և ուղենիշ են Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտում իրականացվող բարեփոխումների համար:

Հարկ է նկատել, որ ինչպես «Ազգային անվտանգության ռազմավարությունը», այնպես էլ «Ռազմական դոկտրինը» առանձնակի կարևորություն են տալիս Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտում շարունակական օրենսդրական բարեփոխումների իրականացմանը: Մասնավորապես, «Ազգային անվտանգության ռազմավարությունը» հռչակում է, որ Հայաստանի Հանրապետության կայուն և անվտանգ զարգացումը պահանջում է կառավարման համակարգի արդյունավետության մեծացում, ժողովրդավարական արժեքների արմատավորում, տնտեսական աճի պահպանմանն ուղղված քայլերի ձեռնարկում, ինչի անհրաժեշտության գիտակցմամբ Հայաստանի Հանրապետությունը ձեռնամուխ է եղել համապարփակ բարեփոխումների իրագործմանը: Միաժամանակ, «Ազգային անվտանգության ռազմավարության» մեջ շեշտվում է, որ նշված բարեփոխումներն արտահայտվում են ՀՀ Սահմանադրության դրույթների, միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների, օրենքների, ՀՀ Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, կառավարության որոշումների և դրանցից բխող նորմատիվ ակտերի համալիրի միջոցով[2]: Հայաստանի Հանրապետության Ռազմական դոկտրինը, մասնավորեցնելով օրենսդրական բարեփոխումների վերը նշված գործընթացը, սահմանում է, որ ռազմական անվտանգության համակարգի բարեփոխումները պետք է ապահովեն ռազմական անվտանգության ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործումը, Զինված ուժերում օրինականության ամրապնդումը, ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով և օրենքներով սահմանված ՀՀ քաղաքացիների իրավունքների և ազատությունների երաշխավորումը[3]:

Ազգային անվտանգության ռազմավարության իրականացման շրջանակներում Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի դերակատարության մասին անդրադարձ է կատարվել նաև Հայաստանի Հանրապետության Նախագահի նախընտրական ծրագրում: Ըստ այդ ծրագրի՝ ազգային անվտանգության ռազմավարությունն ուղղված է մեր երկրի ու տարածաշրջանի կայունության ապահովմանը և հակասությունների հաղթահարմանը, ինչն առաջին հերթին նշանակում է՝ անկախություն, պետության և ժողովրդի պաշտպանվածություն, խաղաղություն և միջազգային համագործակցություն, հայապահպանություն ու բարեկեցություն: Տարածաշրջանի աշխարհաքաղաքական իրավիճակը թելադրում է կարգաբերված արդյունավետ

[2] Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի հմ. ՆՀ-37-Ն հրամանագիրը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2007 թ., հմ. 11 (535)):

[3] Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի հմ. ՆՀ-308-Ն հրամանագիրը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2008 թ., հմ. 1 (591)):

պաշտպանության և անվտանգության համակարգ ունենալու անհրաժեշտություն: Այդ համակարգի գլխավոր օղակը բանակն է[4]:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության կազմակերպման հիմքերի օրենսդրական կարգավորման և պաշտպանության ոլորտում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների տարանջատման ուղղությամբ կատարված աշխատանքների շրջանակներում մշակվել և ավարտուն տեսքի է բերվել «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի նախագիծը: Նշված նախագծով առավել հստակեցվել և կանոնակարգվել են պաշտպանական ոլորտի մի շարք հարցեր, որոնցից են՝

• պաշտպանության նպատակներով ՀՀ տարածքում օտարերկրյա պետությունների զինվորական կազմավորումների տեղակայման, ինչպես նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում ՀՀ տարածքից դուրս ՀՀ Զինված ուժերի կողմից խաղաղապահական գործունեության իրականացման և ռազմական գործողությունների մասնակցության խնդիրները,

• Զինված ուժերի կառուցվածքի վերաբերյալ դրույթները, ինչպես նաև առաջին անգամ համալիր եղանակով սահմանվել են Զինված ուժերի գործառույթները,

• Զինված ուժերի՝ քաղաքական հարցերում չեզոքության պահպանման և քաղաքացիական վերահսկողության ներքո գտնվելու վերաբերյալ դրույթները,

• պաշտպանության բնագավառում ՀՀ Նախագահի, ՀՀ կառավարության, պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները:

Զինված ուժերի ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների զարգացման ու ամրապնդման ուղղությամբ պաշտպանական ոլորտի օրենսդրական բարեփոխումների իրականացման համար հիմք հանդիսացան ՀՀ Սահմանադրության մեջ 2005 թվականին կատարված փոփոխությունները: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8.2 հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության Զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության անվտանգությունը, պաշտպանությունը և տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը: Զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո»[5]: Փաստորեն, նշված դրույթով առաջին անգամ սահմանվեց Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի՝ քաղաքացիական վերահսկողության ներքո գտնվելու սահմանադրաիրավական պահանջ, որի հենքի վրա համապատասխան դրույթներ սահմանվեցին «ՀՀ ռազմական դոկտրինում», «Պաշտպանության մասին» ՀՀ նոր օրենքի նախագծում:

Քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների զարգացման և ամրապնդման ուղղությամբ կատարված աշխատանքների շրջանակներում մշակվել և 2007 թվականի նոյեմբերի 28-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել է նաև «Քաղա-

[4] Տես «Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյանի նախընտրական ծրագիրը» (http://www.president.am/library/arm/?task=46):

[5] «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», հոդ. 8.2: Ե., 2005:

քացիական հատուկ ծառայության մասին»[6] Հայաստանի Հանրապետության օրենքը, որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում քաղաքացիական հատուկ ծառայության ինստիտուտի ներդրման, կազմակերպման և ղեկավարման հետ կապված հարաբերությունները:

Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում քաղաքացիական հատուկ ծառայության ինստիտուտի ներդրման նպատակն է նախարարության համակարգում կանոնակարգել և արդյունավետ դարձնել ոչ զինվորական բնույթի խնդիրների համար պատասխանատու մասնագետների ծառայության կազմակերպումը, ապահովել անհրաժեշտ ոչ զինվորական լավագույն մասնագետների ներհոսքը համակարգ, կիրառել քաղաքացիական վերահսկողության որոշ մեխանիզմներ, ինչպես նաև նպաստել ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի կառավարման ոլորտի թափանցիկության ապահովմանը: Հարկ է նշել, որ ՀՀ կառավարության, ՀՀ Պաշտպանության նախարարի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից հաստատվել են նաև «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» օրենքից բխող մեկ տասնյակից ավելի նորմատիվ ակտեր:

Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության օրենսդրական հիմքերի վերանայման և կատարելագործման ուղղությամբ կատարված աշխատանքների շրջանակներում մի շարք փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքում: Դրանք հիմնականում միտված են զինծառայողների՝ սոցիալապես առավել խոցելի շերտերի սոցիալական պայմանների բարելավմանը և նրանց որոշակի արտոնությունների տրամադրմանը: Այժմ նոր որակ է ստացել պաշտպանական ոլորտում իրականացվող բնակարանային քաղաքականությունը, որով և պայմանավորված է զինծառայողների բնակարանային ապահովության ոլորտի օրենսդրության կատարելագործման և փոփոխման անհրաժեշտությունը: Ներկայումս աշխատանքներ են տարվում զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին սեփականության կամ անհատույց օգտագործման իրավունքով բնակարաններ տրամադրելու կարգը կատարելագործելու և նախկինում եղած օրենսդրական բացերը լրացնելու ուղղությամբ:

Պաշտպանության բնագավառում հանրային իրազեկման ռազմավարության արդյունավետ և թափանցիկ միջոցների մշակման ուղղությամբ կատարված աշխատանքների շնորհիվ մշակվել և Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարի կողմից հաստատվել է «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրային իրազեկման հայեցակարգը»[7]:

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հան-

[6] Տես «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» 2007 թ. նոյեմբերի 28-ի ՀՕ-286-Ն ՀՀ օրենքը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2007 թ., հմ. 66 (590)):

[7] «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրային իրազեկման հայեցակարգ» (http://www.mil.am/arm/index.php?page=111):

րային իրազեկման հայեցակարգը» ՀՀ պաշտպանական գերատեսչության միասնական տեղեկատվական քաղաքականության իրագործմանն ուղղված հիմնարար դրույթների ամբողջություն է, որը բխում է պետության ներքին և արտաքին անվտանգության ռազմավարության հիմնական ուղղություններն ու առաջնահերթությունները սահմանող ուղեցույց փաստաթղթերի՝ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության և ՀՀ ռազմական դոկտրինի պահանջներից: «ՀՀ պաշտպանության նախարարության հանրային իրազեկման հայեցակարգի» հիմնական նպատակն է սահմանել պաշտպանության բնագավառի կատարելագործմանն ու արդիականացմանն ուղղված ծրագրերի հանրային իրազեկման քաղաքականության առաջնահերթություններն ու նպատակները, ինչպես նաև դրանց իրագործման վերաբերյալ հանրային իրազեկման ապահովման մեթոդներն ու միջոցները՝ նպաստելով պաշտպանության բնագավառի ընթացիկ ու ծրագրվող բարեփոխումների վերաբերյալ տեղեկացված լինելու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների սահմանադրական իրավունքի իրացմանը:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի կարգապահական, ներքին ծառայության ու կայազորային և պահակային ծառայությունների, զինվորական ծառայություն անցնելու, զինապարտության հետ կապված զինվորական իրավահարաբերությունների կանոնակարգմանը, ապա այդ ուղղությամբ աշխատանքներ են տարվում նշված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը որակապես նոր աստիճանի բարձրացնելու, ԽՍՀՄ օրենսդրական հնացած դրույթները վերանայելու ուղղությամբ:

Իրականում օրենսդրական բարեփոխումների իրականացումը Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում բավական բարդ գործընթաց է, քանի որ ցանկացած իրավական ակտ, որպես կանոն, կարգավորվող հասարակական հարաբերության մեխանիկական արտացոլումը չէ, այլ դրա փոխակերպումն է իմացության մեջ, այն է՝ օբյեկտի սուբյեկտիվ պատկերը: Բացի այդ, մեր տեսակետից, պաշտպանական ոլորտի օրենսդրական բարեփոխումները պետք է ուղեկցվեն նաև համապատասխան կադրային և գաղափարախոսական քաղաքականությամբ: Հակառակ դեպքում նույնիսկ ամենակատարյալ օրենքը չի կարող լիարժեք գործել, եթե իրավական նորմերը կիրառողը չի պահպանում օրինականության սկզբունքը, չունի անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներ և աշխատանքային ունակություններ: Այստեղ տեղին է հիշել մեծն հայորդի Գարեգին Նժդեհի «Մեծ գաղափար» աշխատության մեջ տեղ գտած հետևյալ խոսքը. «Օրենքները փոխելուց առաջ անհրաժեշտ է փոխել մարդկանց»[8]: Տվյալ համատեքստում, կարծում ենք, անհրաժեշտ է Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում իրականացնել զինծառայողների իրավագիտակցության, բարոյահոգեբանական, ազգային գաղափարախոսական պատրաստության մակարդակի բարձրացմանն ուղղված ծավալուն և համակարգված աշխատանք, ինչը կնպաստի Զինված ուժերի մարտունակության մակարդակի բարձրացմանը, զինվորական կարգապահության ու օրինականության ամրապնդմանը: Այս

[8] *Գարեգին Նժդեհ,* Մեծ գաղափար (Նորահայտ մասունքներ): Ե., 2003, էջ 132:

առումով տեղին է հիշատակել նաև Ռուդոլֆ Իերինգի խոսքը. «Յուրաքանչյուրը կոչված է և պարտավոր է ճնշել կամայականության և անօրինականության բունը, որտեղ էլ որ այն բարձրացնի իր գլուխը: Յուրաքանչյուրը, օգտվելով իրավունքի բարեգործությունից, պետք է իր հերթին և իր ուժերի չափով աջակցի օրենքի զորությանն ու հեղինակությանը, յուրաքանչյուրը բնածին մարտիկ է իրավունքի համար՝ հանուն հասարակության շահերի»[9]:

Հետևաբար, զինծառայողների իրավագիտակցության, բարոյահոգեբանական ու ազգային գաղափարախոսական պատրաստության մակարդակի բարձրացմանն ուղղված աշխատանքները կյանքի կոչելուն պետք է իրենց գործուն մասնակցությունը ցուցաբերեն բոլորը՝ Զինված ուժերի հրամանատարական կազմից մինչև շարքային կազմի զինծառայողները:

Ամփոփելով վերը ասվածը՝ ևս մեկ անգամ շեշտենք, որ պաշտպանական ոլորտի օրենսդրության զարգացման շարունակականությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է վերագնահատել պաշտպանական ոլորտի օրենսդրական համակարգը, վերլուծել ինչպես դրական, այնպես էլ բացասական գործոնները, որոնք այս կամ այն կերպ ազդում են ոլորտի իրավական կարգավորման արդյունավետության վրա: Միայն ամբողջական և համակողմանի վերլուծությունը հնարավորություն կընձեռի պարզելու պաշտպանական ոլորտի օրենսդրության իրական վիճակը, բացահայտելու օրենսդրության հակասություններն ու բացերը, գիտականորեն հիմնավորված մեթոդաբանությամբ ապահովելու քննարկվող ոլորտի օրենսդրական համակարգի սահուն, նպատակամղված և հետևողական զարգացումը:

[9] *Р. Иеринг.* Борьба за право. М., 1991, с. 37.

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ ЗАКОНОДАТЕЛЬНЫХ РЕФОРМ В ОБОРОННОЙ СФЕРЕ РА НА СОВРЕМЕННОМ ЭТАПЕ СТРОИТЕЛЬСТВА ВООРУЖЕННЫХ СИЛ

А. С. НАЗАРЯН, заместитель Министра Обороны РА

РЕЗЮМЕ

Непрерывное совершенствование законодательства в оборонной сфере является одним из важнейших условий обеспечения естественного развития ВС и соблюдения законности и дисциплины в вооруженных силах.

На данном этапе развития законодательства РА правовые реформы в оборонной сфере, основанные на конституциональном реформировании и созвучные основоположениям Стратегии национальной безопасности и Военной доктрины РА, осуществляются по следующим основным направлениям:

1. разработка оборонной концепции Республики Армения;

2. законодательное урегулирование основ организации обороны РА, разделение полномочий Президента, правительства, государственных и местных органов самоуправления РА в сфере обороны, обеспечение прозрачности планирования оборонной сферы;

3. развитие и укрепление механизмов гражданского контроля над Вооруженными силами;

4. внедрение института специальной гражданской службы в оборонной сфере;

5. пересмотр и совершенствование законодательных основ социального обеспечения военнослужащих и членов их семей;

6. разработка эффективных и прозрачных средств общественного информирования в сфере обороны;

7. пересмотр военно-правовых отношений, связанных с военнообязанностью, прохождением военной службы, требований Уставов внутренней, гарнизонной и караульной служб, а также «Дисциплинарного положения».

BASIC DIRECTIONS OF LEGISLATIVE REFORMS IN THE RA DEFENSE SPHERE AT THE CONTEMPORARY STAGE OF BUILDING THE ARMED FORCES

A. S. NAZARYAN, Deputy Minister of Defense of the RA

SUMMARY

Continuous improvement of the legislation in the defense sphere is one of the most important conditions of ensuring natural development of the Armed Forces and observing legality and discipline in the Armed Forces.

Legal reforms in the defense sphere, based on the constitutional reformation and which are concurrent with the fundamental principles of the RA National Security Stretegy and Military Doctrine at the given stage of the RA legislation development are implemented in the following basic directions:

1. elaboration of the defense concept of the Republic of Armenia;

2. legislative regulation of the principles of the RA defense organization, division of plenary powers of the RA President, the Government, State and local self-governing bodies in the defense sphere, ensuring planning transparency in the defense sphere;

3. development and strengthening of mechanisms of civil control over the Armed Forces;

4. introduction of the special civil service institution into the defense sphere;

5. reviewing and improvement of legislative principles for the servicemen and their family members' social maintenance;

6. elaboration of efficient and transparent tools for public awareness in the defense sphere;

7. reviewing military-legal relations connected with the military duty, military service, requirements of Regulations of internal, garrison and patrol services, as well as «The Disciplinary provisions».

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԲԱՆԱԿԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ս. Գ. ՍԵԴՐԱԿՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ Իրավաբանական վարչության պետ

1990 թվականի օգոստոսի 23-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունեց «Հայաստանի անկախության մասին հռչակագիրը», որով հայտարարվեց անկախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը և ազգային բանակի ստեղծման համար բացվեցին նոր իրավական ու գործնական հեռանկարներ[1]: Հայտնի է, որ անկախության ձեռքբերումից ի վեր Հայաստանն անցել է պետականության կառուցման բարդ ուղի: Արցախյան ազատագրական պայքարից հետո, աստիճանաբար հաղթահարելով տնտեսական, սոցիալական և իրավական ճգնաժամը, արտաքաղաքական, ներքաղաքական և գաղափարախոսական հակասությունները, մեր երկիրը ընտրեց զարգացման նոր ուղի: Առանձնակի կարևորություն տրվեց պետականության ձևավորման և ազգային անվտանգության ապահովման հիմնարար երաշխիքներին, դրանց իրացման համար անհրաժեշտ մեխանիզմների սահմանմանն ու ստեղծմանը: Քանի որ հայոց պետականության և ազգային անվտանգության ապահովման առաջնային երաշխիքներից է մարտունակ ազգային բանակ ունենալը[2], ապա նրա հզորացմանը նպատակաուղղված միջոցառումները դառնում են պետական գործունեության գերակայություն: Դա շեշտվեց նաև 2007 թվականի փետրվարի 7-ին հանրապետության Նախագահի հմ. ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատված «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» մեջ[3]:

Զինված ուժերի բարձր մակարդակի մարտունակության ապահովումը շարունակական գործընթաց է, ուստի և այդ նպատակով իրականացվող պաշտպանական բարեփոխումները պետք է ծրագրված լինեն ոչ միայն առկա, այլև հեռանկարում կանխատեսվող մարտահրավերների հաշվառմամբ: Արդեն մի քանի տարի իրականացվող պաշտպանական բարեփոխումները բխում են ռազմական անվտանգության ապահովման անհրաժեշտությունից, ստանձնած միջազգային-իրավական պարտավորություններից, «Ռազմական դոկտրինի» ռազմաքաղաքական, ռազմական-ռազմավարական, ռազմատնտեսական և ռազմատեխնիկական հայեցակետերից:

Հարկ է փաստել, որ իրականացվող պաշտպանական բարեփոխումները ենթադրում են նաև պաշտպանական ոլորտի օրենսդրության շարունակական վերանայում ու կատարելագործում, ինչը հնարավորություն կտա ապահովելու պաշտպանության բնագավառում ծագող, փոփոխվող ու դադարող «իրավահարաբերությունների

[1] Տես «Հայաստանի անկախության մասին հռչակագիր», Նախաբան և կետ 5:

[2] Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 13:

[3] Տես նույն տեղում:

օրենսդրական կարգավորման պատշաճ մակարդակ, որը համահունչ կլինի մեր երկրում տեղի ունեցող հասարակական-քաղաքական զարգացումներին»[4]:

Զինվորական օրենսդրության կատարելագործմանը նպատակաուղղված և Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումների 2007–2015 թվականների աշխատանքային ծրագրով նախատեսված աշխատանքները պաշտպանական բարեփոխումների կազմակերպման և արդյունավետ իրագործման համար նախադրյալների ստեղծման հիմքն են: Դրանց մի մասն արդեն իրականացվել է, մյուս մասը ներկայումս իրականացման փուլում է կամ նախատեսվում է իրականացնել բանակաշինության շրջանակներում ծրագրված միջոցառումների ընթացքում:

1. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության մշակում: Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի հմ. ՆՀ-37-Ն հրամանագրով հաստատվեց «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը», որը Հայաստանի Հանրապետության այդ ժամանակվա Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, Պաշտպանության նախարար (ներկայումս՝ հանրապետության Նախագահ) Ս. Սարգսյանի գլխավորած միջգերատեսչական հանձնաժողովի մեկ տարվա գործունեության արգասիքն է[5]: «Ռազմավարությունն» ըստ էության պետության գլխավոր քաղաքական փաստաթուղթն է և ունի ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային նշանակություն: Այն որակապես նոր մակարդակ տեղափոխեց Հայաստանի անվտանգության համակարգի կատարելագործումը և պաշտպանական ռազմավարության զարգացումը: Կարելի է ասել, որ այդ փաստաթուղթը, սահմանադրաիրավական բարեփոխումներից հետո, առաջին ակտն էր, որով հիմք դրվեց բանակաշինության գործում նոր որակի պաշտպանական բարեփոխումների կազմակերպման ու իրականացման համար: Առաջին անգամ սահմանվեցին ազգային անվտանգության հիմնական ռազմավարական ուղղությունները, և առաջին անգամ իշխանություններն իրենց առջև խնդիր դրեցին արդիականացնելու Զինված ուժերն ու բարձրացնելու դրանց մարտունակության և արդյունավետության մակարդակը[6]:

Այդ փաստաթուղթը նաև ռազմաքաղաքական հիմքեր ստեղծեց Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինի մշակման համար[7]:

[4] «Օրենսդրական բարեփոխումներ: Զրույց ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի հետ»: «Հայ զինվոր», 2008 թ. օգոստոսի 9–16:

[5] Տես «Հարցազրույց Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար, ազգային անվտանգության ռազմավարության նախագծի աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ Սերժ Սարգսյանի հետ»: «ՀՀ ԱԱՌ», էջ 8:

[6] Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն», էջ 15:

[7] Այս մասին ավելի հանգամանորեն տես «ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի պետ, ՀՀ Պաշտպանության նախարարի խորհրդական, ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության նախագծի մշակման գիտական ղեկավար, քաղաքական գիտությունների դոկտոր, գեներալ-մայոր Հ. Քոթանջյանի բացման խոսքը»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4:

2. Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինի մշակում: Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի դեկտեմբերի 25-ի հմ. ՆՀ-308-Ն հրամանագրով հաստատվեց «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը», որի նախաբանում սահմանվում է, որ դոկտրինը զարգացնում և մանրամասնում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության՝ ռազմական ոլորտին վերաբերող դրույթները: Դոկտրինի նախագծի մշակման նպատակով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում ստեղծվեց ներգերատեսչական հանձնաժողով, այնուհետև ձևավորվեց միջգերատեսչական հանձնաժողով՝ երկրի բոլոր շահագրգիռ գերատեսչությունների ներկայացուցիչների մասնակցությամբ: Ռազմական դոկտրինն իր բնույթով բաց փաստաթուղթ է, ինչը հնարավորություն է տալիս այն քննարկելու բաց տեքստով: Կանգ չառնելով այդ փաստաթղթի նշանակության վրա՝ նշենք, որ պաշտպանական բարեփոխումների անցումային այս փուլում չափազանց կարևորվում է հայեցակարգային մոտեցումների որդեգրումը: Դրա շնորհիվ հնարավոր է դառնում ազգային բանակի կայուն զարգացման և երկրի պաշտպանության նոր որակի ապահովումը[8]:

Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինն ունի պաշտպանողական բնույթ և նպատակաուղղված է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնարար արժեքների հետևողական պաշտպանությանը, ռազմական անվտանգության համակարգի հնարավորությունների, ինչպես նաև փոխգործության ընդլայնման միջոցով ռազմական անվտանգության ապահովմանը, տարածաշրջանում խաղաղության ու կայունության ամրապնդմանը:

Հարկ է նկատել, որ ռազմական դոկտրինն առանձնակի դեր է հատկացնում պաշտպանության բնագավառում օրենսդրական բարեփոխումներին: Դոկտրինի համաձայն՝ ռազմական անվտանգության համակարգի բարեփոխումները պետք է ապահովեն ռազմական անվտանգության ոլորտը կարգավորող օրենսդրության կատարելագործումը, Զինված ուժերում օրինականության ամրապնդումը, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով ու օրենքներով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների իրավունքների և ազատությունների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովման խնդիրներին համապատասխան այլընտրանքային ծառայության իրավունքի երաշխավորումը[9]: Այդ ամենը դրական ազդեցություն է գործում կամ կարող է գործել պաշտպանական անվտանգության համակարգի ամրապնդման և քաղաքացիական վերահսկողության ներքո նրա զարգացման վրա:

3. «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը: Ինչպես հայտնի է, 2005 թվականի նոյեմբերին իրականացված

[8] Տես «ՀՀ ռազմական դոկտրինի մշակման միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ, ՀՀ Պաշտպանության նախարար Մ. Հարությունյանի «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինի նախագիծը» զեկուցումը»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4:

[9] Տես «ՀՀ ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4, էջ 50:

սահմանադրական բարեփոխումների շնորհիվ Հայաստանի Հանրապետության Զինված ուժերը գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո: Ի թիվս մյուս միջոցառումների՝ անհրաժեշտություն առաջացավ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում ներդրելու զինվորական ծառայությունից որակապես, այդ թվում՝ բովանդակությամբ, տարբերվող մեկ այլ՝ ոչ զինվորական բնույթի պետական ծառայություն: Խոսքը վերաբերում է քաղաքացիական հատուկ ծառայությանը, որն իր էությամբ տարբերվում է պետական մյուս մարմիններում իրականացվող քաղաքացիական ծառայությունից, թեև ներառում է քաղաքացիական վերահսկողության և հասարակայնության համար պաշտպանական ոլորտը թափանցիկ դարձնելուն միտված սկզբունքներ: 2007 թվականի նոյեմբերի 28-ին Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովն ընդունեց «Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» ՀՕ-286-Ն Հայաստանի Հանրապետության օրենքը, որը կոչված է կարգավորելու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում քաղաքացիական հատուկ ծառայության հաստատության ներդրման, կազմակերպման և ղեկավարման հետ կապված հարաբերությունները: Այս հաստատության ներդրման նպատակն է արդյունավետ դարձնել ոչ զինվորական բնույթի խնդիրների համար պատասխանատու մասնագետների ծառայության կազմակերպումը, կանոնակարգել նրանց աշխատանքը, ապահովել անհրաժեշտ ոչ զինվորական լավագույն մասնագետների ներհոսքը բանակ, իրացնել քաղաքացիական վերահսկողության որոշ մեխանիզմներ և, իհարկե, ապահովել նախարարության համակարգի կառավարման ոլորտի թափանցիկությունը: Օրենքում սահմանվել են քաղաքացիական հատուկ ծառայության հասկացությունը և կարգավորման առարկան, գործունեության ոլորտն ու հիմնական սկզբունքները, քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների դասակարգումը, դասային աստիճանները, պաշտոնին նշանակման և պաշտոնից ազատման կարգը, ինչպես նաև կարգավորման են ենթարկվել քաղաքացիական հատուկ ծառայության հետ կապված հիմնական հարաբերությունները:

Հատկանշական է, որ քաղաքացիական հատուկ ծառայության հաստատության ներդրման հետ կապված՝ համապատասխան լրացում կատարվեց նաև «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում: Դրանով քաղաքացիական ծառայողների կարգավիճակը հավասարեցվեց զինծառայողների կարգավիճակին և նրանց իրավունք վերապահվեց օգտվելու զինծառայողների համար սոցիալական ապահովության ոլորտի մի շարք իրավունքներից ու երաշխիքներից: Այս լրացման նպատակն էր լուծել երկու խնդիր. ա) բացառել ԶՈՒ-ում երկար տարիներ ծառայած քաղաքացիական ծառայողների սոցիալ-իրավական ու հոգեբանական բնույթի կերպափոխումները, բ) բանակում խթանել քաղաքացիական հատուկ ծառայությունը և խրախուսել ոչ քաղաքացիական կադրերի ներհոսքը պաշտպանության ոլորտ:

«Քաղաքացիական հատուկ ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապե-

տության Պաշտպանության նախարարի 10 հրամաններով սահմանվում են քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոնների զբաղեցման համար մրցույթ անցկացնելու, քաղաքացիական ծառայողների վերապատրաստման, մասնագիտական գիտելիքների խորացման և աշխատանքային ունակությունների կատարելագործման նպատակով նրանց գործուղելու, քաղաքացիական ծառայողի ատեստավորում անցկացնելու, ծառայողական քննություն անցկացնելու, կադրերի ռեզերվում գրանցելու և կադրերի ռեզերվից հանելու, քաղաքացիական ծառայողների անձնական գործերը վարելու և ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգերը, քաղաքացիական ծառայողի վարքականոնները: Սահմանվում են նաև մրցույթ և ատեստավորում անցկացնելու համար թեստեր կազմելու, քաղաքացիական հատուկ ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու ու այդ պաշտոններն զբաղեցնող քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնող մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը[10]: Հարկ է նաև նշել, որ Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի ապրիլի 4-ի հմ. 320-Ն որոշմամբ հաստատվել է քաղաքացիական հատուկ ծառայության և զինվորական ծառայության հավասարազոր պաշտոնների ցանկը: Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2008 թվականի հունիսի 28-ի հմ. 528-Ն որոշմամբ հաստատվել է «Քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագիրը», որի հիման վրա մշակման փուլում են գտնվում նախատեսվող քաղաքացիական հատուկ ծառայության պաշտոնների յուրաքանչյուր խմբի (բարձրագույն, գլխավոր, առաջատար և կրտսեր) պաշտոնների անձնագրերը: Դրանցում հստակեցվում են քաղաքացիական ծառայողի կարգավիճակը, պահանջվող կրթական կամ աշխատանքային ցենզերը, հստակ սահմանվում են նրա խնդիրներն ու պարտականությունները, լիազորությունները:

Ըստ իս՝ քաղաքացիական հատուկ ծառայության հաստատության ներդրումը Զինված ուժերը քաղաքացիական վերահսկողության ներքո պահելու կարևոր նախադրյալներից է: Դրանով ապահովվում է զինված ուժեր–հասարակություն կապը, որի ամրությունը մեծապես պայմանավորված է փոխադարձ վստահությամբ և բանակի կենսագործունեության թափանցիկությամբ:

4. «Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի մշակում: Հատկանշական է, որ Հայաստանի Հանրապետության պաշտպանական բնագավառի օրենսդրության ձևավորման առաջին իսկ տարիներից անհրաժեշտություն առաջացավ սահմանելու այնպիսի իրավական հիմունքներ, որոնցով հնարավոր լիներ ապահովել երկրի պաշտպանությունը, երաշխավորել պետության սահմանների անձեռնմխելիությունը: Այդ հիմունքներն իրենց արտացոլումն են ստացել 1997 թվականի մայիսի 29-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «Պաշտպանության մասին» ՀՕ-120 Հայաստանի Հանրապետության օրենքում, որի գլխավոր նպատակն էր սահմանել հանրապետության պաշտպանության ապահով-

[10] Տես «ՀՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագիր», 2008, հմ. 20:

ման հիմնական ուղղությունները: Ժամանակի ընթացքում պարզ դարձավ, որ օրենքի գործող դրույթների մի մասն այլևս չի համապատասխանում պահանջվող չափանիշներին, չի բխում պետության պաշտպանունակության ամրապնդման և բանակաշինության ու Զինված ուժերի զարգացման պահանջներից: Ավելին. սահմանադրաիրավական վերջին բարեփոխումներից հետո է՛լ ավելի ակնհայտ դարձավ «Պաշտպանության մասին» գործող օրենքի կատարելագործման անհրաժեշտությունը[11]:



Պաշտպանական ոլորտի իրավական բարեփոխումների
հերթական քննարկումը ՀՀ ՊՆ Իրավաբանական վարչությունում

Այդ պատճառով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի գործունեության ծրագրում դրվեց տվյալ օրենքը վերանայելու ու կատարելագործելու կոնկրետ պահանջ[12]: Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունում ստեղծվեց համապատասխան օրենքի նախագիծը մշակող հանձնաժողով, որի անդամների առջև խնդիր դրվեց առավել հստակ և ամբողջական կերպով կարգավորելու պաշտպանության ոլորտի հետ կապված հարաբերությունները, գործող օրենքի դրույթները համապատասխանեցնելու Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, ինչպես նաև միջազգային իրավունքի առանձին սկզբունքներին:

«Պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն ունի իր տրամաբանությամբ առանձնացող նոր կառուցվածք ու բովանդակություն, ընդգրկում է պաշտպանության ոլորտում ծագող հասարակական հարաբերությունների առավել համապարփակ համալիրը: Նոր օրենքի նախագծով առավել հստակեցվում և կանոնակարգվում են մի շարք հարցեր.

[11] Տես «ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի զեկուցումը Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի պաշտպանական բարեփոխումների իրականացման վերաբերյալ»: «ՀԲ», 2007, հմ. 1:

[12] Տես ՀՀ կառավարության 2007 թվականի նոյեմբերի 29-ի հմ. 1440-Ն որոշմամբ հաստատված «ՀՀ կառավարության 2008 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի» 44-րդ կետը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2007 թ., հմ. 66.1):

ա) առաջին անգամ օրենքում իրավական տեսանկյունից ամրագրվում են այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «պաշտպանություն», «ռազմական անվտանգության համակարգ», «միացյալ զինված ուժեր», «այլ զորքեր», «տեղեկատվական անվտանգություն» և այլն (3-րդ հոդված),

բ) սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա պետությունների զինվորական կազմավորումների տեղակայման, ինչպես նաև ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման շրջանակներում հանրապետության տարածքից դուրս զինված ուժերի կողմից խաղաղապահական գործունեության իրականացման և ռազմական գործողություններին մասնակցության խնդիրները (4-րդ հոդված),

գ) հստակեցվում և սահմանադրական իրավանորմերի պահանջներին են համապատասխանեցվում պաշտպանական բնագավառում հանրապետության Նախագահի, կառավարության, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները, հիմնարկների, այլ կազմակերպությունների գործառույթները, պաշտոնատար անձանց ու քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները (5–9-րդ հոդվածներ),

դ) սահմանվում են քաղաքական հարցերում Զինված ուժերի՝ չեզոքություն պահպանելու և քաղաքացիական վերահսկողության ներքո գտնվելու վերաբերյալ դրույթները, ամրագրվում է, որ Զինված ուժերի ընդհանուր ղեկավարումն իրականացնում է հանրապետության Նախագահը՝ որպես Զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար (ընդ որում, խաղաղ ժամանակ՝ պաշտպանության նախարարի միջոցով, պատերազմի ժամանակ՝ Զինված ուժերի Գլխավոր շտաբի, իսկ գլխավոր հրամանատար նշանակելու դեպքում՝ վերջինիս միջոցով): Ամրագրվում է նաև, որ Զինված ուժերի անմիջական ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարը, որը կառավարում և վերահսկում է Զինված ուժերի ու նախարարության համակարգի մեջ մտնող այլ մարմինների ու կազմակերպությունների գործունեությունը, խաղաղ ժամանակ պատասխանատու է Զինված ուժերի մարտական ու զորահավաքային պատրաստության համար (10-րդ և 11-րդ հոդվածներ),

ե) հստակեցվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Զինված ուժերի Գլխավոր շտաբի գործառույթները: Ըստ նախատեսված դրույթի՝ Զինված ուժերի Գլխավոր շտաբը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կառավարման ոլորտում գործող պետական մարմին է, իսկ Գլխավոր շտաբի պետը՝ խաղաղ ժամանակ Զինված ուժերում զինվորական ամենաբարձր պաշտոնատար անձը, որն անմիջականորեն պատասխանատու է Զինված ուժերի մարտական ու զորահավաքային պատրաստության համար: Սահմանվում է, որ մեր ՋՈՒ-ի նեղ մասնագիտական կառավարումն այսուհետև իրագործվելու է Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի Գլխավոր շտաբի կողմից՝ պաշտպանության նախարարության ռազմաքաղաքական, ռազմական-ռազմավարական, ռազմատնտեսական ու ռազմատեխնիկական վերահսկմամբ (12–14-րդ հոդվածներ):

Նոր օրենքի նախագիծն արդեն արժանացել է Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանը և ներկայացվել է օրենսդիր մարմնին: Նախքան օրենսդրի քննարկմանը ներկայացնելը՝ նախագիծը համաձայնեցվել է Հայաստանի Հանրապետության պաշտպանական համակարգի կառուցվածքային ստորաբաժանումների, պետական բոլոր շահագրգիռ մարմինների, այդ թվում՝ հանրապետության Նախագահի աշխատակազմի, Մարդու իրավունքների պաշտպանի, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության, Ազգային անվտանգության ծառայության հետ, ինչպես նաև պաշտոնական իրավական փորձաքննություն է անցել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում: Նոր օրենքի կիրառմամբ հնարավոր կլինի իրականացնել արդյունավետ պաշտպանական քաղաքականություն, լուծել առաջադրված խնդիրները և երաշխավորել երկրի անվտանգության, տարածքային ամբողջականության ու նրա սահմանների անձեռնմխելիության ապահովումը:

5. Համազորային կանոնագրքերի և կանոնադրությունների վերանայում: 1995 թ. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումը հիմք դարձավ երկրի ռազմաքաղաքական գործունեության օրենսդրական դաշտի ձևավորման համար: Հաջորդ երկու տարիների ընթացքում ընդունվեցին ոչ միայն «Պաշտպանության մասին», «Ռազմական դրության մասին», «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, այլև Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի «Ներքին ծառայության» և «Պահակային ու կայազորային ծառայությունների» կանոնագրքերը, ինչպես նաև «Կարգապահական» և «Մարտական» կանոնադրությունները, որոնց նպատակն էր բարձրացնել պետության ռազմական կազմակերպվածքի մարտունակության մակարդակը, զորքերում արդյունավետ կերպով կազմակերպել ներքին, պահակային ու կայազորային, մարտական ծառայությունները, ամրապնդել զինվորական կարգապահությունը: Անշուշտ, տվյալ ժամանակահատվածում (1996–1997 թթ.) այդ ակտերով հնարավոր եղավ հասնել ցանկալի արդյունքի, բայց այսօր՝ ավելի քան 10 տարի անց, դրանք ի զորու չեն բավարարելու իրականացվող բարեփոխումների պահանջները, չափանիշները: Այդ պատճառով պաշտպանական բարեփոխումների իրավաբանական ապահովման կարևորագույն խնդիր է նաև համազորային կանոնագրքերի ու կանոնադրությունների վերանայումը, դրանց համապատասխանեցումը սահմանադրաիրավական պահանջներին:

Այսպես. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (փոփոխություններով) 83.5 հոդվածով հռչակվում է, որ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, պատասխանատվության տեսակները (1-ին կետ), ինչպես նաև քրեական, վարչական, տնտեսական (գույքային) և կարգապահական պատասխանատվության ենթարկելու դեպքերը (6-րդ կետ): Այսօր Զինված ուժերում զինծառայողների իրավունքների և ազատությունների սահմանափակումների, նրանց պարտականութ-

յունների, պատասխանատվության տեսակների ու կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի «Կարգապահական կանոնադրությամբ», որն իր կարգավիճակով օրենք չէ, քանի որ հաստատվել է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից[*]: Այս առումով նախատեսվում է այդ կանոնադրությունը վերանայել, փոփոխել ու լրացնել այնպիսի դրույթներով, որոնք բխում են արդի պահանջներից: Վերանայման կարիք են զգում նաև Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի «Ներքին ծառայության» և «Պահակային ու կայազորային ծառայությունների» կանոնագրքերը: Դրանք պետք է համապատասխանեցնել նոր՝ առաջադիմական, պահանջներին՝ որպես հիմք ընդունելով ազգային բանակի և հայ զինվորի առանձնահատկությունները: Համազորային կանոնագրքերի և կանոնադրությունների ոչ արդյունավետ իրացումը զինվորական կոլեկտիվում թուլացնում է կարգապահությունը, վնաս է հասցնում զորքերի մարտունակությանը, խախտում է օրինականության սկզբունքը՝ դառնալով իրավախախտումների, նաև՝ հանցագործությունների պատճառ:

6. Զինվորական կարգապահության ամրապնդմանը, զինծառայողների իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը, զինվորական հանցավորության մակարդակի նվազեցմանը և զորքերում օրինականության ապահովմանն ուղղված կազմակերպահրավական միջոցառումներ: Ինքնին հասկանալի է, որ զինվորական ծառայության և ընդհանրապես զինված ուժերի հետ կապված հասարակական հարաբերությունները պաշտպանական բարեփոխումների նպատակներին և խնդիրներին համապատասխանեցնելու ցանկացած փորձ կարող է ձախողվել, եթե չստեղծվեն զինվորական իրավակարգի ամրապնդման, զինծառայողների կարգապահության մակարդակի բարձրացման ամուր հիմքեր, բանակում չնվազեցվի հանցավորությունը, չլինեն զորքերի մարտունակության ապահովման հուսալի երաշխիքներ: Զինծառայողների կողմից կատարված իրավախախտումները, մասնավորապես՝ զինվորական հանցագործությունները, կազմակերպական, նյութական, ֆիզիկական և բարոյական վնաս են պատճառում (կամ կարող են պատճառել) զինվորական ծառայության շահերին: Հետագայում դրանք նաև մեծ բացասական ազդեցություն են գործում զորքերի մարտունակության, բարոյահոգեբանական վիճակի վրա, ինչն էլ, իր հերթին, նվազեցնում է պետության պաշտպանունակությունը: Իսկ եթե նկատի ունենանք, որ Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինում որպես երկրի պաշտպանական ռազմավարության հիմնական նպատակ նշվում է նաև պայքարը Հայաստանի Հանրապետության անվտանգությանն սպառնացող հանցագործությունների դեմ[13], ապա է՛լ ավելի են կարևորվում բանակում հանցավորության խնդրի վերլուծությունն ու լուծումը:

Հարկ է նկատել, որ իրավաբանական ապահովման առումով խնդրի լուծման

[*] ՀՀ ԶՈՒ-ի «Կարգապահական կանոնադրությունն» ընդունվել է ՀՀ կառավարության 1996 թվականի օգոստոսի 12-ի հմ. 247 որոշմամբ:

[13] Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին», էջ 37:

ուղղությամբ որոշակի քայլեր արդեն արվել են: Ընդունվել է «Ռազմական ոստիկանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը[14], որը սահմանում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում գործող ռազմական ոստիկանության խնդիրներն ու գործառույթները, ամրագրում է ռազմական ոստիկանի իրավունքներն ու պարտականությունները: Այդ օրենքով դրվեց կառույցի գործունեության իրավական հիմքը, և նախադրյալներ ստեղծվեցին զորքերում օրինականության պահպանման նոր որակ ապահովելու համար: Կարևոր էին նաև Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում, «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ու «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ և լրացումներ նախատեսող այն օրինագծերի մշակումն ու ընդունումը[15], որոնք իրավական հիմքեր են ստեղծել զինվորական քննիչներին Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգից Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգ տեղափոխելու համար: Այս որոշման կարևորությունը առաջին հերթին պայմանավորված է այն իրողությամբ, որ միևնույն մարմնին (տվյալ դեպքում՝ զինվորական դատախազությանը) արդեն արգելվում է իրականացնել թե՛ բանակում կատարվող հանցագործությունների վերաբերյալ նախաքննություն, թե՛ այդ քննության նկատմամբ հսկողություն:

Բանակում օրինականության ու զինվորական կարգապահության ամրապնդման, զինվորական հանցավորության մակարդակի նվազեցման հետ է առնչվում նաև 2007 թվականի նոյեմբերի 13-ի «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-268-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կայազորային կարգապահական մեկուսարանների ներքին կանոնակարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մայիսի 22-ի հմ. 595 որոշման ընդունումը: Այս ակտերով կարգավորվում են կարգապահական գումարտակի և կայազորային կարգապահական մեկուսարաններում գտնվող անձանց (զինծառայողների) պահելու, հսկելու և պատիժ կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցերը, որոնք ունեն ոչ միայն կամ ոչ այնքան պատժիչ, որքան կանխարգելիչ նշանակություն: Կանխարգելիչ նշանակություն ունեցավ նաև 2008 թվականի հունվարի 5-ից ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-275-Ն Հայաստանի Հանրապետության օրենքը, որով խստացվեցին առանձին զինվորական հանցագոր-

[14] Տես «Ռազմական ոստիկանության մասին» ՀՕ-13-Ն ՀՀ օրենքը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2007 թ., հմ. 6 (530)): Ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006 թ. դեկտեմբերի 21-ին:

[15] Տես, օրինակ, «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-129-Ն ՀՀ օրենքը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2007 թ., հմ. 19 (543)): Ընդունվել է ՀՀ Ազգային ժողովի կողմից 2007 թ. փետրվարի 22-ին:

ծությունների, մասնավորապես՝ դասալքության համար պատժաչափերը: Միևնույն ժամանակ համապատասխան փոփոխություններ կատարվեցին նաև «Զինապարտության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում: Այդ փոփոխություններով բացառվեցին այն դեպքերը, երբ դասալքության համար պատիժ կրած քաղաքացին կրկին վերադառնում էր զորամաս (իրականում նման կատեգորիայի անձանց մուտքը զորամաս ունենում էր միայն բացասական հետևանքներ):

Ինչ վերաբերում է զինծառայողների իրավագիտակցությանը և նրանց բարոյահոգեբանական վիճակին, ապա պաշտպանական բարեփոխումների շրջանակներում պետք է առավել մեծ ուշադրություն դարձվի զինծառայողների իրավական կուլտուրայի մակարդակի բարձրացմանը: Անչափ կարևոր է գիտական ու գործնական վերլուծության ենթարկել զինվորական ծառայությանն ու զինված ուժերին բնորոշ գործոնները, ուսումնասիրել այն քրեածին պայմանները (նրանց առաջացման պատճառները), որոնք անձի մեջ ձևավորում են օրենքի պահանջները չկատարելու, դրանց չենթարկվելու, իրավակարգը խախտելու, ուրիշների իրավունքները ոտնահարելու և այլ նմանատիպ հակաիրավական ցանկություններ: Այս առումով, կարծում եմ, որ էական դեր կարող են խաղալ երկրում իրականացվող սոցիալ-տնտեսական բարեփոխումները: Ոչ պակաս կարևոր պետք է համարել զինվորական կանոնագրքերի ու կանոնադրությունների արդյունավետ լրամշակումը, ինչպես նաև զորքերում սպա-հոգեբանի հաստատության ստեղծումն ու հրամանատարի՝ սոցիալ-իրավական աշխատանքի գծով օգնական սպայի հաստիքների վերականգնումը:

Պաշտպանական ոլորտի բարեփոխումների ընթացքում առաջնահերթ վերանայման անհրաժեշտություն ունեն «Զինապարտության մասին», «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին», «Զինվորական ծառայություն անցնելու մասին», «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքները, որոնցով հնարավոր կլինի արդյունավետ կերպով կարգավորել համապատասխան ոլորտներում առաջացող հարաբերությունները:

Եվ քանի որ պաշտպանական բարեփոխումներն ունեն շարունակական բնույթ, շարունակական պետք է լինեն նաև դրանց իրավական ապահովման ուղղությամբ իրականացվող կազմակերպահիրավական միջոցառումները: Չպետք է սահմանափակվել միայն կատարվածով կամ նախատեսվածով, այլ պետք է միշտ առաջ նայել՝ կատարելագործելով հինը և ստեղծելով նորը: Այսօր բավական նախադրյալներ կան ժողովրդավարական սկզբունքների վրա հիմնվող Զինված ուժերի զարգացումն ապահովելու համար, ուստի մեր ուշադրությունը առավելապես պետք է կենտրոնացնենք ապագայի վրա և հաշվի առնենք անցյալի բացթողումները: Մեր առջև դրված են խնդիրներ, որոնց լուծումը նպաստելու է պետության ռազմական անվտանգության ապահովմանն ու պաշտպանունակության ամրապնդմանը, ազգային բանակի մարտունակության մակարդակի բարձրացմանը:

ЮРИДИЧЕСКОЕ ОБЕСПЕЧЕНИЕ ОБОРОННЫХ РЕФОРМ В КОНТЕКСТЕ СТРОИТЕЛЬСТВА ВООРУЖЕННЫХ СИЛ РА

С. Г. СЕДРАКЯН, полковник, начальник Юридического управления Министерства обороны РА

РЕЗЮМЕ

В деле организации и эффективного осуществления оборонных реформ в РА важную роль сыграли «Стратегия национальной безопасности РА» и зиждущаяся на ее военно-политических положениях «Военная доктрина РА».

Осуществляемые оборонные реформы предполагают постоянный пересмотр и совершенствование законодательства в оборонной сфере для его приведения в соответствие с перманентно развивающимися правоотношениями. Часть положений действующих законов уже не отвечает современным реалиям и критериям и поэтому возникла необходимость в новых законах «Об обороне», «О специальной гражданской службе», во внесении поправок и дополнений в общевойсковые уставы положениями, вытекающими из современных требований.

Существует также необходимость проведения организационно-правовых мероприятий, направленных на обеспечение законности в войсках, укрепление воинской дисциплины, повышение правосознания у военнослужащих.

Решение поставленных задач будет способствовать обеспечению военной безопасности, укреплению обороноспособности государства путем повышения боеспособности национальной армии.

THE LEGAL SUPPORT OF DEFENSE REFORMS IN THE CONTEXT OF BUILDING THE RA ARMED FORCES

S. G. SEDRAKYAN, Colonel, Head of the Board of Law of the Ministry of Defense of the RA

SUMMARY

«The RA National Security Strategy» and «The RA Military Doctrine» which is based on military-political provisions of the «Strategy» played an important role in the process of organization and efficient implementation of defense reforms in the RA.

The defense reforms being implemented assume a constant reviewing and improving the legislation in the defense sphere to bring it to conformity with permanently developing legal relations. A part of the provisions of standing laws no longer meets the contemporary realities and criteria. That's why a necessity arose to pass new laws «On Defense», «On Special Civil Service», to make amendments and supplements in general regulations through provisions resulting from contemporary requirements.

There is also a necessity to carry out organizational and legal measures targeted at ensuring legality in the troops, strengthening military discipline, increasing servicemen's legal conscience.

The solution to the tasks set will further ensuring military security, strengthening the state's defense capability through increasing fighting efficiency of the national army.

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ՈՐՈՇ ԱՌՈՒՄՆԵՐ

Ս. Օ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, գնդապետ,
ՀՀ ՊՆ Միջազգային ռազմական համագործակցության և պաշտպանական ծրագրերի վարչության միջազգային ռազմական համագործակցության բաժնի պետ– վարչության պետի տեղակալ

Մենք ապրում ենք բարդ, բազմաչափ աշխարհում, որտեղ իրադրությունը մշտապես փոփոխվում է, իշխանությունը, լիազորությունները և պատասխանատվությունը հատվածական են, իսկ ռազմավարական առաջատարության հնարավորություններն զգալիորեն սահմանափակված են: Մեր աշխարհը բաժանված է գոտիների, որոնց բնորոշ են տարբեր աստիճանների կայունություն և անվտանգություն, խաղաղություն և պատերազմներ:

Անկայուն միջազգային իրադրությունը անվտանգության ոլորտի վերլուծաբանների և քաղաքագետների առջև դնում է հիմնարար հարցեր. ինչպե՞ս ընկալել անվտանգությունը, եթե հաշվի առնվի նրա ժամանակակից՝ ավելի ընդլայնված, իմաստը, ինչպե՞ս կարելի է վերլուծել և բացատրել անվտանգության զարգացման դինամիկայի բազմաչափ, բազմագործոն ու բազմավեկտորային բնույթը, որը ձևավորում է մեր անվտանգային միջավայրը, ի՞նչ ձեռնարկել ապագա մարտահրավերներն ու սպառնալիքները կանխելու կամ դրանք կատարելապես պատրաստված դիմավորելու համար:

«Սառը պատերազմի» ժամանակաշրջանից տարիներ հետո արմատապես փոխվել է միջազգային անվտանգության պրոբլեմների ըմբռնումը, և անհրաժեշտություն է առաջացել էական շտկումներ կատարելու անվտանգության ոլորտում քաղաքականության մշակման գործում: Սեպտեմբերի 11-ի իրադարձությունները, որոնք սկիզբ դրեցին «ահաբեկչության դեմ պատերազմին», բեկումնային ազդեցություն գործեցին Ամերիկայի Միացյալ Նահանգների և եվրոպական երկրների վրա՝ նրանց կողմից միջազգային անվտանգության պրոբլեմի ընկալման տեսակետից: Միջազգային իրավունքի կիրառման պրակտիկայում վերջերս որոշակի ճշգրտումներ մտցրեց Կոսովոյի, Աբխազիայի, Հարավային Օսեթիայի անկախության ճանաչումը: Այս խորքային փոփոխությունները նաև հրահրեցին միջազգային սուր բանավեճ այն հարցի շուրջ, թե ինչպես առավել արդյունավետ կերպով վերլուծել անվտանգության ոլորտում ձևավորվող նոր իրավիճակով պայմանավորված պրոբլեմները և գտնել դրանց լուծումները: Դրա պատճառով անվտանգության հարցերի գիտական հետազոտությունները ներկայումս դարձել են միջազգային հարաբերությունների բնագավառի ուսումնասիրությունների առավել դինամիկ և առաջնային ուղղություններից մեկը:

Մի շարք վերլուծաբանների կարծիքով՝ վերացել է լայնամասշտաբ միջբլոկային առճակատման սպառնալիքը՝ հղի միջուկային զենքի կիրառման ռեալ հնարավորությամբ: Ըստ նրանց՝ վերջին տարիներին Եվրոպայում, ինչպես նաև ամբողջ աշ-

խարհում կտրուկ նվազել է ավանդական զինված ագրեսիայի հավանականությունը, թեև Վրաստանի այսպես կոչված «հնգօրյա պատերազմը» հանգեցրեց այդ տեսակետում որոշակի ճշգրտումներ կատարելու անհրաժեշտության: Այդ համաչափ սպառնալիքին փոխարինելու են եկել անհամաչափ սպառնալիքները, որոնք ավելի ճապաղ, բազմավեկտոր ու բազմակողմ են, ուստի և ինչպես իրենց բնույթի, այնպես էլ հնարավոր ներգործության առումով ավելի դժվար բացահայտելի ու կանխատեսելի: Նոր մարտահրավերներն ու սպառնալիքները անտեսում են միջպետական սահմաններն ու ազգային շահերի շրջանակները: Անվտանգությունն այլևս պաշտպանության, զինված ուժերի հաշվեկշռի և միջուկային զենքի առկայության գծային ու քանակապես հեշտ հաշվելի ֆունկցիան չէ:

«Սառը պատերազմի» դարաշրջանի աշխարհակարգի փլուզման արդյունքը եղավ նաև ներքին և արտաքին անվտանգության միջև պարզ սահմանազատման վերացումը: Այն ուղեկցվեց միջազգային ասպարեզում բազմազան նոր, հիմնականում՝ ոչ պետական, դերակատարների ու մասնակիցների երևան գալով: Ջսպման ավանդական միջոցները, որոնք նախկինում դրանց նկատմամբ կիրառում էին պետությունները, այժմ, որպես կանոն, ցանկալի արդյունքներ չեն տալիս, անգամ երբեմն լինում են անարդյունավետ:

«Սառը պատերազմի» ավարտից հետո աշխարհում պաշտոնապես գրանցված 100-ից ավելի զինված հակամարտությունների ճնշող մեծամասնությունը դասվում է ներքին հակամարտությունների կատեգորիային: Շատ փորձագետներ հանգել են այն եզրակացության, որ պատերազմը միջպետական հարաբերությունների ոլորտից փոխադրվել է ներպետական հարաբերությունների ոլորտ: Սակայն դրա հետևանքով նոր հակամարտությունները չեն դարձել պակաս արյունահեղ:

Բացի այդ, անհրաժեշտ է նշել, որ անվտանգության ոլորտում առկա իրավիճակի վրա ավելի ու ավելի մեծ ազդեցություն են ունենում զանազան նոր գործոններ, ինչպիսիք են կլիմայի փոփոխությունը, շրջապատող միջավայրի վատթարացումը, չվերականգնվող բնական ռեսուրսների սպառումը, վարակիչ հիվանդությունների տարածումը, կիբերսպառնալիքները:

Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության համար լուրջ վտանգ են ներկայացնում Ղարաբաղյան հակամարտությունը ուժային մեթոդով լուծելու վերաբերյալ Ադրբեջանի քաղաքական ղեկավարության ռազմատենչ հայտարարությունները, նրանց անթաքույց ռազմական նախապատրաստությունները, որոնք դառնում են համաչափ և անհամաչափ սպառնալիքների աղբյուր:

ՀՀ պետականության դեմ ուղղված սպառնալիք է Թուրքիայի և Ադրբեջանի կողմից Հայաստանի տնտեսական ու տրանսպորտային շրջափակումը, որն ըստ էության ուժի կիրառման դրսևորումներից մեկն է[1]: Մեր կարծիքով՝ վերը նշվածի հաշվառմամբ հրատապ է դառնում նոր կադրերով ՀՀ ազգային անվտանգության խորհրդի նպատակային համալրման աշխատանքների ակտիվացումը:

[1] Տես «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 18:

Ըստ ձևավորված ավանդույթի՝ միջազգային անվտանգության համատեքստում կատարվող անվտանգային վերլուծության ժամանակ հիմնականում ուշադրություն էր դարձվում ռազմական բաղադրատարրին: Անվտանգության քաղաքականության մշակման ժամանակ դասական թեմաներ էին «հավասարակշռության պահպանման», «հաղթողների հետ միավորման» ռազմավարությունները, դաշնակիցների որոնումը, դաշնադրությունների ստեղծումը, սպառազինությունների մրցավազքը, պաշտպանության բնագավառում կատարվող ծախսերի ավելացումը:

Երկուս և կես հազար տարի առաջ հույն պատմաբան Թուկիդիտեսը, նկարագրելով երկու հունական քաղաք-պետությունների՝ Աթենքի և Մելոսի միջև ծագած հակամարտության վերաբերյալ բանակցությունները, գրել է. «...ավելի ուժեղը պահանջում է հնարավորը, իսկ թույլն ստիպված է ենթարկվելու»[2]: Դրան համահունչ է Մովսես Խորենացու հայտնի խոսքը. «Սահմանք քաջաց՝ զէնն իւրեանց»: Մեր կարծիքով՝ այս դրույթներն այսօր էլ չեն հնացել:

Անվտանգության հասկացության ավելի լայն առումով դիտարկումը հնարավորություն է տալիս տվյալ քաղաքական ոլորտում գործարկելու նոր սուբյեկտներ և կառուցվածքներ: Ընդհանուր առմամբ շատ կարևոր է, որ հասարակությունը կարողանա անվտանգության ոլորտում քաղաքացիական քաղաքական կառույցների, զինված ուժերի և այլ գերատեսչությունների միջև պահպանել առողջ և արդյունավետ հարաբերություններ: Կառավարող և ուժային կառույցները պետք է ստեղծեն փոխհարաբերությունների կարգավորված, կառավարելի և հստակ կերպով սահմանազատված կառուցվածք: Ժողովրդավարական պետությունում զինված ուժերի (ինչպես նաև պետական անվտանգությամբ զբաղվող գերատեսչությունների ամբողջ սպեկտրի) դերն ու գործառույթը պետք է համապատասխանեն թափանցիկության և բացության ժողովրդավարական նորմերին, որոնց պահպանումը պետք է վերահսկվի քաղաքացիական հասարակության և ժողովրդավարական ընտրությունների հիման վրա ստեղծված իշխանական մարմինների կողմից:

Ազգային քաղաքականության պլանավորման ժամանակ փոքր և միջին պետությունների համար ծագում են էական պրոբլեմներ: Նրանց տնօրինության տակ եղած ինչպես ռազմական, այնպես էլ ոչ ռազմական գործիքների հավաքակազմը խիստ սահմանափակ է: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ առանձին վերցրած այդ պետությունները չունեն բավարար ուժ, որպեսզի լիարժեք կերպով հակազդեն իրենց առջև ծառացող սպառնալիքներին ու մարտահրավերներին: Հետևաբար, նրանք զանազան դաշինքներին, միջազգային կազմակերպություններին իրենց մասնակցությունը դիտում են որպես անվտանգության ռազմավարության կարևոր տարր:

Տվյալ հանգամանքի հաշվառմամբ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» մեջ նշված է, որ «Գիտակցելով արդի մարտահրավերների նկատմամբ մեկ պետության կարողությունների սահմանափակ

[2] *Фукидид.* История. Перевод Г. Стратановского. «Историки античности», т. 1. М., 1989, с. 396.

լինելը՝ Հայաստանի Հանրապետությունը կարևորում է ակտիվ ռազմաքաղաքական համագործակցությունը ինչպես տարածաշրջանի, այնպես էլ արտատարածաշրջանային պետությունների հետ: Հայաստանի Հանրապետության զինված ուժերը մասնակցում են խաղաղության և անվտանգության ապահովման միջազգային գործողություններին»[3]:

Ազգային պետությունն իր ամբողջ պատմության ընթացքում գործնականում հենվել է ուժի օրինական կիրառման մենաշնորհի վրա: Բանակը պետք է ունենա հարկադրելու համար բավականաչափ ուժ, որպեսզի պետական կարգը պաշտպանի արտաքին թշնամիներից: «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» մեջ որպես բանակաշինության նպատակ ամրագրված է «պետության այնպիսի պաշտպանական ներուժի ապահովումը, որն անհրաժեշտ է հետ մղելու որևէ ագրեսիա՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդի ֆիզիկական գոյությունը, ինքնիշխանությունն ու անկախությունը, պետության տարածքային ամբողջականությունը պաշտպանելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգությունն ապահովում են մարտունակ, արտաքին սպառնալիքների հետմղման խնդիրների լուծմանը մշտապես պատրաստ զինված ուժերը»[4]:

Այս գործոնի հետ անմիջականորեն կապված է նաև այն վտանգը, որ կազմակերպված ուժի կառավարման միջոցով բանակը հնարավորություն է ստանում սպառնալու իր իսկ պաշտպանության տակ գտնվող ժողովրդավարական կարգին կամ այն արժեքներին, որոնց վրա այդ կարգը հիմնվում է: Զինվորականների միջամտության և ներգործության պակաս ակնհայտ ձևերն օգտագործելով՝ զինվորական ղեկավարությունը կարող է հետապնդել իր կազմակերպության նեղ գերատեսչական նպատակները կամ իր անձնական շահերը՝ ի վնաս հասարակական շահերի, որոնք որոշվում են իշխանության ժողովրդավարորեն ընտրված քաղաքացիական մարմինների կողմից:

Այդ իսկ պատճառով «Ազգային անվտանգության ռազմավարության» «Բանակաշինություն» ենթաբաժնում ամրագրված է, որ «Հայաստանի Հանրապետությունը հետևողական է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության և ռազմական բյուջեի պլանավորման ժողովրդավարական հիմնարար սկզբունքների ապահովման խնդրում»[5]:

Հարկ է նշել, որ և՛ «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության», և՛ «ՀՀ ռազմական դոկտրինի» մեջ հաշվի են առնված ընթացիկ համաշխարհային ու տարածաշրջանային աշխարհաքաղաքական իրավիճակն ու գործընթացները և դրանց զարգացման միտումները: Դա հնարավորություն է տվել ուրվագծելու տարբեր ոլորտներում պետական կառույցների գործունեությունը միջնաժամկետ ու երկարաժամկետ հեռանկարով:

[3] «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն», էջ 24–25:

[4] Նույն տեղում, էջ 24:

[5] Նույն տեղում:

Միևնույն ժամանակ, պաշտպանական ոլորտում «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» ու «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինի» հիմնադրույթների իրագործման համար անհրաժեշտ է օրենք, որը իրավաբանորեն ամրագրի դրանք և հստակեցնի իրագործման մեխանիզմը: Այդպիսի իրավական ակտ էր Հայաստանի Հանրապետության «Պաշտպանության մասին» օրենքը, որն ընդունվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից 1997 թ. մայիսի 29-ին[6]: Սակայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության փոփոխությունների և ազգային անվտանգության ռազմավարության ընդունման հետ կապված՝ առաջացավ նմանատիպ նոր փաստաթղթի ընդունման անհրաժեշտություն, քանի որ նշված գործող օրենսդրական ակտը չէր համապատասխանում վերը նշված հիմնարար փաստաթղթերի նոր պահանջներին ու դրույթներին: Եվ 2008 թ. «Պաշտպանության մասին» նոր օրենքի նախագիծը ներկայացվեց Ազգային ժողովի քննարկման:

Անգամ այս մասնավոր օրինակը վկայում է, որ պաշտպանական բարեփոխումները, այդ թվում՝ իրավական դաշտում, անընդհատ առաջընթաց գործընթաց են՝ ուղղված ժամանակակից զինատեսակներով սպառազինված բանակի ստեղծմանը, նրա մարտական պատրաստության մակարդակի պահպանմանն ու բարձրացմանը: Եվ այդ գործընթացը տեղի է ունենում անկախ այն բանից, թե դրանք փոքր, միջին, թե մեծ պետության զինված ուժեր են, քանի որ պաշտպանական քաղաքականության ձևավորման տեսակետից կարևոր են ոչ թե ինքնին զինված ուժերը, այլ պետության պաշտպանական նպատակների համատեքստում այն ներուժը, որ նրանք ունեն կամ կունենան: Ներուժ ասելով հասկանում ենք այն հնարավորությունները, որոնք կազմվում են առկա ռեսուրսների և պետության կողմից պահանջված չափելի արդյունքին հասնելու կարողության հանրագումարից:

Անհրաժեշտ է նշել, որ զինված ուժերի բարեփոխումների իրականացման և գործող նորմատիվահիրավական բազայում փոփոխությունների կատարման գործընթացներ նախաձեռնված են շատ պետություններում: Այսպես. Ռուսաստանի Դաշնությունը դեռ 2000 թ. ընդունեց պաշտպանական ոլորտում օրենսդրական բարեփոխման հայեցակարգ, ՆԱՏՕ-ի անդամ պետությունների կողմից ստեղծվեց ՆԱՏՕ-ի Միացյալ զինված ուժերի կերպափոխման գծով Գերագույն գլխավոր հրամանատարություն, բարեփոխումներ են նախաձեռնվել Արևելյան Եվրոպայի, Մերձբալթիկայի պետություններում, Վրաստանում, Աղրբեջանում:

Վերլուծելով անցումային շրջանը հաղթահարած այլ (արևելաեվրոպական, մերձբալթյան) պետություններում իրականացված իրավական բարեփոխումների փորձը՝ կարելի է մեր երկրի առանձնահատկությունների հաշվառմամբ նախանշել ՀՀ-ում իրագործվող պաշտպանական բարեփոխումների իրավական ապահովմանը ներկայացվող հիմնական պահանջները, որոնք են՝

ա) ՀՀ Սահմանադրությանը խիստ համապատասխանությունը,

[6] Տես «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 1997 թ., հմ. 15):

բ) բարեփոխումների գիտականությունը,

գ) Զինված ուժերի իրական տնտեսական, ֆինանսական, քաղաքական, սոցիալական վիճակի հաշվառումը,

դ) շահագրգիռ պետական մարմինների, իրավաբան գիտնականների և հասարակական կազմակերպությունների մոտեցումների ու կարծիքների հաշվառումը,

ե) համակարգվածությունը:

Վերջին տասը տարիների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում ընդունվել են պաշտպանության բնագավառին վերաբերող տասնյակ նորմատիվ-իրավական ակտեր: Սակայն մեր երկրի պաշտպանական օրենսդրությունը դեռևս մի ամբողջական համակարգ չէ, քանի որ տարբեր իրավական ակտերի դրույթներով ամրագրված պահանջները երբեմն չեն համընկնում, ուղղակի ներգործության իրավական նորմերի թիվը բավարար չէ, առանձին օրենքների որոշ դրույթներ կրում են հայտարարական բնույթ, քանի որ մշակված չեն դրանց լիարժեք կիրառման արդյունավետ մեխանիզմներ:

Աշխարհի զարգացած երկրները վաղուց ընդունել են և դեռ շարունակում են ընդունել ու կատարելագործել պաշտպանության կազմակերպման օրենսդրական ապահովման հայեցակարգեր, օրենքներ և այլ նորմատիվ ակտեր ու փաստաթղթեր:

Ռուսաստանի Դաշնության վերը հիշատակված հայեցակարգում, մասնավորապես, նշված է, որ պաշտպանական օրենսդրությունը պետք է հիմնված լինի համապետական շահերի ապահովման վրա՝ նեղ գերատեսչական մոտեցումների բացառման պայմանով[7]: Այս փաստաթղթի մշակման համար հիմք է հանդիսացել 1999 թ. ՌԴ Պետական դումայի կողմից ընդունված «Պաշտպանական բարեփոխումների մասին» դաշնային օրենքը: Հայեցակարգում շեշտվել է բարեփոխումների առաջին փուլում Զինված ուժերում իրավական և սոցիալ-տնտեսական հարաբերությունների վերանայման անհրաժեշտությունը:

Նման փաստաթուղթը հնարավորություն է տալիս համադրելու տարբեր գերատեսչությունների ռեսուրսները, համակարգելու օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերի մշակման աշխատանքները, ապահովելու օրենսդրության մշակման գիտական հիմնավորվածությունը: Հայաստանում ևս անհրաժեշտ է այս ուղղությամբ գործադրվող ջանքերը ուրվագծող ու համադասող փաստաթուղթ, որը հնարավորություն տար հստակեցնելու և նորովի իմաստավորելու անհրաժեշտ ձեռնարկումները, ամբողջացնելու տեսականը:

Պաշտպանության բնագավառի օրենսդրության վերանայումը և կատարելագործումը պահանջում են մասնագիտական մոտեցում: Այդ գործին պետք է լծվեն ամբողջ Զինված ուժերի և այլ զորքերի, ինչպես նաև քաղաքացիական ու ռազմաուսումնական հաստատությունների շահագրգիռ կառուցվածքային ստորաբաժանումները՝ դրանց մշակումների փորձաքննության համար համապատասխան կազմակերպությունների փորձագետների ներգրավմամբ: ՀՀ-ում կա նման կարևոր փաստաթղթերի մշակման ուսանելի փորձ, որը, մեր կարծիքով, պետք է հավուր պատշաճի օգտա-

[7] Տես «Право в вооруженных силах». М., 2007, с. 2:

գործվի նաև այս դեպքում: Նման գործունեության վառ օրինակ է ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության նախագծի մշակումը Միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ, ՀՀ ներկայիս Նախագահ Ս. Սարգսյանի ղեկավարությամբ: Մինչդեռ պաշտպանական ոլորտի օրենսդրական ու ենթաօրենսդրական ակտերը մշակվում են ՊՆ վարչությունների ուժերով և համաձայնեցվում են շահագրգիռ պետական մարմինների հետ՝ հաճախ առանց նրանց լուրջ մասնակցության: Հարկ է նշել, որ պաշտպանության նախարարության համակարգում այս ուղղությամբ ձեռնարկվել են որոշակի քայլեր, մասնավորապես՝ 2007 թ. հունիսի 6-ին ստեղծվել է ՀՀ պաշտպանական բարեփոխումների իրականացման աշխատանքները համակարգող հանձնաժողով[8]: Պաշտպանական բարեփոխումները, պաշտպանական օրենսդրության փոփոխությունները, ինչպես նաև այդ ոլորտի արդիականացման ծրագրերն ու զինծառայողների սոցիալ-իրավական կարգավիճակի հստակեցումը ներառված են 2007 թ. նոյեմբերի 13-ին հաստատված «ՀՀ ՊՆ հանրային իրազեկման հայեցակարգի» առաջնահերթություններում[9]: Սակայն, ցավոք, այս բոլոր նախաձեռնություններն ունեն ավելի շատ ներգերատեսչական բնույթ:

Պետք է արձանագրել, որ բարեփոխումների ընթացքում ձեռք են բերվել զգալի հաջողություններ, սակայն, մեր կարծիքով, կան և հարցեր, որոնք դեռ պատշաճ լուծում չեն ստացել: Նշենք դրանցից մի քանիսը:

1. Զինծառայողի կարգավիճակը սահմանող դրույթներն ամրագրված են տարբեր օրենքներում և ենթաօրենսդրական ակտերում, մինչդեռ նպատակահարմար կլիներ դրանք ամրագրել մեկ իրավական ակտում:

2. Պետք է համաձայնվել այն հեղինակների հետ, որոնց կարծիքով անհրաժեշտ է ընդունել քննիչների, այդ թվում՝ զինվորական, կարգավիճակի մասին օրենք և հստակ կերպով սահմանել նրանց աշխատանքի ընդունելու պայմանները, կարգը, կարգապահական պատասխանատվության հիմքերը և այլն[10]: «Դատավորի կարգավիճակի մասին» օրենքի առկայությունը արդեն իսկ վկայում է, որ տվյալ պետությունը չի նույնացնում դատավորի անձը այն հիմնարկի հետ, որտեղ նա աշխատում է: Սակայն դատախազի (նրա օգնականի, տեղակալի), այդ թվում՝ զինվորական, կարգավիճակի մասին օրենք չկա, ինչի հետևանքով նշված անձանց իրավական վիճակը ամբողջապես բխում է այն հիմնարկի իրավական վիճակից, որտեղ նրանք աշխատում են, այսինքն՝ դատախազն ու դատախազությունը նույնացվում են, ինչը հանգեցնում է օբյեկտի և սուբյեկտի նույնացման:

Կարգավիճակի մասին օրենքները պետք է կոչված լինեն երաշխավորելու այդ մարմինների աշխատողների անկախությունն իրենց գործունեության բոլոր իրավական, սոցիալական ու տնտեսական միջոցների ամբողջության մեջ, ինչպես նաև նրանց մասնագիտական հեղինակությունը, ամրագրելու իրավական պետության

[8] Տես «ՀՀ պաշտպանության նախարարի 2007 թ. հունիսի 6-ի հմ. 665 հրամանը»:

[9] Տես «ՀՀ ՊՆ հանրային իրազեկման հայեցակարգը» (http://www.mil.am/arm/index.php?page=111):

[10] Այս մասին հանգամանորեն տես *Г. С. Казинян.* Актуальные проблемы уголовно-процессуального законодательства в третьей Республике Армения. Е., 1999, сс. 163—179:

պետական ու հասարակական կյանքում նրանց արժանապատվությանը հարիր տեղն ու դերը:

Հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանի խաղաղարարները աշխարհի տարբեր տարածաշրջաններում մասնակցում են խաղաղարարական օպերացիաներին, անհրաժեշտ ենք համարում խաղաղարարության մասին ՀՀ օրենքի ընդունումը: Այդ օրենքում այլ դրույթների հետ մեկտեղ պետք է ամրագրված լինեն քննչական ու հետաքննչական մարմինների, դատախազության ու դատարանների իրավասությունները խաղաղարար ուժերի անձնակազմի այն անդամների նկատմամբ, որոնք կատարել են իրավախախտում:

Մեր կարծիքով՝ հարկ է ճշգրտել նաև հետևյալ հարցերը.

–ՊՆ և ՋՈՒ-ի ԳՇ լիազորությունների տարանջատման համար հիմնավորված չափանիշների սահմանում,

–ՊՆ համակարգում զինծառայողների և քաղաքացիական ծառայողների փոխհարաբերությունների կանոնակարգում,

–քաղաքացիական վերահսկողության համատեքստում ՊՆ և ՋՈՒ-ի ԳՇ զինծառայողների ու քաղաքացիական ծառայողների իրավական կարգավիճակի հաստատում,

–զինծառայողին քաղծառայողի կամ քաղծառայողին զինծառայողի ենթակայության, ինչպես նաև ՊՆ և ՋՈՒ-ի ԳՇ ղեկավարության (հրամանատարության) կարգապահական իրավասությունների շրջանակների հստակեցում:

Ավարտելով այս ուսումնասիրությունը՝ հարկ ենք համարում նշել, որ պետության պաշտպանական կազմակերպության գործունեության արդյունավետությունը էապես պայմանավորված է օրենքի գերակայությամբ: Պաշտպանական օրենսդրության բարեփոխումը թեպետ անհետաձգելի է, սակայն նախատեսված է երկար ժամանակահատվածի համար: Եվ որպեսզի այն չմնա թղթի վրա, պահանջվում են բովանդակային լրախմբագրումներ, լրացումներ, հստակեցումներ, որոնք հիմնված լինեն համալիր ռազմահրավագիտական հետազոտությունների վրա[11]:

[11] Տես *А. А. Тер-Акопов*. Военно-научное обеспечение военно-правовой реформы. М., 1998, с. 23:

НЕКОТОРЫЕ АСПЕКТЫ ПРАВОВОГО ЗАКРЕПЛЕНИЯ ВОПРОСОВ БЕЗОПАСНОСТИ И ОБОРОНЫ

С. О. АБРАМЯН, полковник, начальник отдела международного военного сотрудничества—заместитель начальника Управления международного военного сотрудничества и оборонных программ МО РА

РЕЗЮМЕ

В статье анализируются изменения в геополитической-безопасностной среде после завершения эпохи «холодной войны» и связанные с ними новые несимметричные угрозы. Изменения во внешней среде определенным обра-

зом отражаются и на внутригосударственной среде, причем наличествует и обратная связь, особенно, в случае держав. Эти изменения приводят к необходимости разработки новых методов и средств парирования существующих и потенциальных угроз. Поэтому вся деятельность государств по обеспечению своей безопасности и стабильного развития должна строиться с учетом новых реалий, что должно быть зафиксировано в основных политико-правовых и политико-безопасностных документах, таких, как Конституция государства, Стратегия национальной безопасности, Военная доктрина. Именно с этих позиций рассматривается процесс реформирования оборонной сферы в РА, стимулирующими факторами для которого явились конституциональные изменения, а также международные обязательства РА. Возникающие в ходе реформ новые правоотношения, а также сам процесс реформирования должны получить соответствующее закрепление в законодательных актах, из чего следует необходимость корректировки уже действующих и разработки и принятия новых нормативно-правовых актов.

SOME ASPECTS OF LEGAL AFFIRMATION OF SECURITY AND DEFENSE ISSUES

S. O. ABRAHAMYAN, Colonel, Head of the Department of International Military Cooperation—Deputy Head of the Board of the International Military Cooperation and Defense Programs, MoD, RA

SUMMARY

The changes in the geopolitical-security environment after the «Cold War» epoch and new asymmetric threats connected with them are analyzed in this article. The alterations in the external environment are somehow reflected in the intrastate environment as well, while a reverse connection also exists, especially in case of the powers. These changes necessitate elaborating new methods and means of countering the existing and potential threats. That's why the whole activity of states on ensuring their security and stable development should be built taking into account new realities, which must be fixed in the key political-legal and political-security documents such as the Constitution of the State, the National Security Strategy, the Military Doctrine. These are the positions that the process of reforming of the RA defense sphere is examined. The stimulating factors for that process are the Constitutional amendments, as well as the RA international commitments. New legal relationship arising in implementing reforms, and the process of reforming as well should be appropriately affirmed in legislative acts. That causes the necessity to correct already acting normative-legal acts and elaborate and adopt new ones.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԻՐԱՎԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Տ. Տ. ՔՈՉԱՐՅԱՆ, ավագ լեյտենանտ, իրավաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ Իրավաբանական վարչության սպա

ՀՀ Սահմանադրությունը, որը երկրի պաշտպանությանը մասնակցությունը սահմանում է որպես քաղաքացիների սահմանադրական պարտականություն, նախատեսում է այդ մասնակցության տարբեր իրավական ձևեր: Դրանց թվում է զինվորական ծառայությունը՝ որպես հատուկ տեսակի պետական ծառայություն: Զինվորական ծառայության կազմակերպման և իրականացման ընթացքում ծագում են բազմաթիվ, նաև՝ իրավական բնույթի խնդիրներ, որոնց անհետաձգելի լուծումները նպաստում են Հայաստանի՝ որպես իրավական պետության և մեր երկրում քաղաքացիական հասարակության ձևավորման գործընթացներին:

Հայաստանի Հանրապետության հասարակական կյանքում տեղի ունեցող քաղաքական, տնտեսական, պաշտպանական, սոցիալ-մշակութային բարեփոխումների ընթացքում իրականացվում են պետական կառավարման մեխանիզմների կատարելագործմանը նպատակաուղղված համալիր միջոցառումներ, այդ թվում նաև քաղաքացիների՝ զինվորական ծառայության անցնելուն առնչվող հարաբերությունների կարգավորում: Արդիական խնդիրներ են Զինված ուժերի և ռազմական այլ մարմինների կազմակերպահիրավական բարեփոխումները, որպեսզի նրանք կարողանան լիարժեք կերպով չեզոքացնել երկրի ռազմական անվտանգության դեմ ուղղված ներքին և արտաքին սպառնալիքները: ՈՒստի հարկավոր է հիմնավորված կերպով ուսումնասիրել երկրի պաշտպանական ոլորտում եղած խնդիրները և առաջարկել գործնականում կիրառելի լուծումներ՝ հաշվի առնելով զինվորական ծառայության զարգացման ու կատարելագործման հեռանկարները և պետական ծառայության այդ տարատեսակին ներկայացվող պահանջները:

Վերլուծենք մեր երկրում զինվորական ծառայության կազմակերպահիրավական ապահովմանն ուղղված տեսական ու կիրառական նշանակություն ունեցող որոշ հիմնախնդիրներ:

Պաշտպանական բարեփոխումների գործընթացում կարևոր դեր ունի «զինվորական ծառայություն» հասկացության հետագա տեսական-իրավական զարգացումը՝ նրա առանձնահատկությունների հստակեցմամբ:

Միասնական պետական ծառայության գիտականորեն հիմնավորված և ներկայիս պայմաններին համապատասխանող հայեցակարգի ոչ կատարելությունը հանգեցնում է, մի կողմից, պետական ծառայության այլ տարատեսակների գործողության ոլորտների նեղացման, իսկ մյուս կողմից՝ զինվորական ծառայության կիրառման ոլորտների չափից ավելի ընդլայնման: Մասնավորապես՝ հասարակության մի մասը այն կարծիքին է, թե պետական ամեն մի խնդիր, այդ թվում՝ ոչ ռազմական

բնույթի, կարող են և պետք է լուծեն զինծառայողները, ինչը, սակայն, հակասում է զինվորական ծառայության էությանը: Նման դեպքում խնդիրը հետևյալն է. արդի զինվորական ծառայության առաքելությունը համապատասխանեցնել պետության ռազմական կազմակերպվածքի մեջ ընդգրկված մարմինների ու կազմակերպությունների՝ օրենսդրորեն ամրագրված խնդիրներին և իրականացվող գործառույթներին[1]:

Պետության ռազմական կազմակերպվածքի բարեփոխումների գործընթացը պահանջում է երկրի անվտանգության ու պաշտպանության վերաբերյալ օրենսդրության հետագա զարգացում և կատարելագործում, ինչը կնպաստի զինվորական ծառայություն ներառող պետական մարմինների ու կազմակերպությունների գործունեության արդյունավետության մեծացմանը: Միևնույն ժամանակ, այդ ոլորտի հարաբերություններում ժողովրդավարության սկզբունքի գործնական կիրառումը կնպաստի նաև զինվորական կառավարման մարմինների և պաշտոնատար անձանց գործողություններում օրինականության պահպանմանը, ինչպես նաև զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների անհատական իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությանը:

ՀՀ զինվորական կառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց գործունեության վերլուծությունը որոշակիորեն հանգեցնում է այն կարծիքին, որ զինվորական-ծառայողական հարաբերություններում օրինականության սկզբունքը ոչ բավարար կերպով է պահպանվում: Մասնավորապես՝ Զինված ուժերում (նաև ռազմական կազմակերպվածքի այլ մարմիններում ու կազմակերպություններում) օրենքները չեն գործում այնքան ժամանակ, քանի դեռ դրանք չեն հրապարակվում պաշտպանության նախարարի կամ զինվորական այլ պաշտոնատար անձանց հրամաններով, ինչը երբեմն հանգեցնում է զինծառայողների՝ Սահմանադրությամբ և այլ օրենքներով ամրագրված իրավունքների և օրինական շահերի խախտումների: Խոսքը վերաբերում է ենթաօրենսդրական ակտերի համեմատությամբ (նախարարի, փոխնախարարի հրամաններ, կարգադրություններ և այլն) օրենքների ավելի մեծ իրավաբանական ազդեցություն ունենալուն, ուստի դրանք պետք է սկսեն կիրառվել ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո:

Վերոնշյալ հիմնախնդիրներն արդյունավետ կերպով լուծելու համար նպատակահարմար է ընդունել զինվորական ծառայությանը վերաբերող այնպիսի կարևոր օրենքներ, ինչպիսիք են՝ «Զինծառայողների իրավական կարգավիճակի մասին», «Զինծառայողների մասնագիտացված միությունների մասին» (որը կնախատեսի զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության արդյունավետ արտադատական համակարգ) և այլ օրենքներ: Զինվորական ծառայության իրավական հաստատության կատարելագործման և արդյունավետության մակարդակի բարձրացման նպատակով անհրաժեշտ է ընդունել նաև այլ օրենսդրական ակտեր (ինչը մի շարք ռազմական իրավագետների կողմից համարվում է գիտականորեն արդարացված), որոնք նպաստեն

[1] Տես *Г. В. Атаманчук.* Сущность государственной службы: история, теория, закон, практика. М., 2002, с. 200:

ինչպես զինվորական ծառայության ապահովման իրավական ոլորտի, այնպես էլ այդ հաստատության կատարելագործմանը նպատակաուղղված գործունեության հստակ իրավական կարգավորմանը: Այդպիսի օրենքներ են «Պաշտպանական բարեփոխումների մասին»[2], «Զինծառայողների կարգապահական պատասխանատվության մասին»[3], «Ռազմական կազմավորումների իրավական դրության և ֆինանսատնտեսական գործունեության մասին»[4] օրենքները:

Զինվորական ծառայության կազմակերպման իրավական ապահովումը նաև նպաստում է զինծառայողների կադրային կազմի պահպանմանը: Կադրային կայուն քաղաքականության հիմքն են զինծառայողների ծառայողական-պաշտոնեական առաջխաղացումներին վերաբերող հարցերը: Հարկ է օրենսդրորեն ամրագրել կադրային կայուն քաղաքականության սկզբունքը և սահմանել, որ պետությունը երաշխավորում է պայմանագրային հիմունքներով ծառայության անցնող զինծառայողների պաշտոնեական առաջխաղացումը՝ ըստ նրանց հետ կնքված պայմանագրի դրույթների ու մասնագիտական որակավորման: Սակայն չի կարելի բավարար համարել այդ սկզբունքի միայն հռչակումն ու ամրագրումը: Որպեսզի ապահովվի նրա գործնական կիրառումը, անհրաժեշտ է մշակել զինծառայողների ծառայողական առաջխաղացման գիտականորեն հիմնավորված և մանրամասնորեն կարգավորվող համակարգ: Զինվորական ծառայությունը հռչակելով որպես մասնագիտական ծառայողական գործունեություն՝ անհրաժեշտ է մշակել և օրենսդրորեն սահմանել զինծառայողների բոլոր կատեգորիաների համապատասխան պատրաստման ու վերապատրաստման համակարգեր, որպեսզի նշվածը հայտարարական բնույթ չկրի և արտացոլի զինվորական ծառայության էությունը: Այսինքն՝ քաղաքացին իր զինվորական-ծառայողական պարտականությունների փաստացի կատարմանը պետք է անցնի միայն տվյալ մասնագիտությամբ համապատասխան պատրաստում անցնելուց հետո: Նման մոտեցում է կիրառվում ԱՄՆ-ի բանակում[5]:

Մյուս կողմից՝ դեռ լիարժեք չեն զինվորական ծառայության նկատմամբ քաղաքացիների հետաքրքրության խթանման թե՛ նյութական, թե՛ բարոյահոգեբանական առումները, ինչը պայմանավորված է նաև պետական ծառայության և, մասնավորապես, նրա առանձին տեսակների նորմատիվ-իրավական կարգավորման կատարելագործման անհրաժեշտությամբ: ՀՀ գործող օրենսդրությունը սահմանում է զինվորական ծառայության անցնելը միայն խաղաղ ժամանակ, մինչդեռ հարկավոր է օրենսդրորեն ամրագրել զինվորական ծառայության սկիզբը ռազմական դրության պայմաններում:

[2] Տես *В. А. Озеров.* Конституционно-правовые основы военной реформы в Российской Федерации. М., 2001, с. 10:

[3] Տես *О. В. Шарыкина.* Юридическая ответственность военнослужащих в Российской Федерации: теоретико-правовое исследование. М., 2002, с. 9:

[4] Տես *О. В. Дамаскин.* Криминологические аспекты противодействия преступности в Вооруженных силах России. М., 2002, с. 37:

[5] Տես *В. Ф. Кужилин.* Кадровая политика военного руководства США по формированию офицерского корпуса вооруженных сил. «Военная мысль», 2001, № 3:

ՈՒսումնասիրելով զինծառայողների իրավական կարգավիճակի ներքին առումները՝ Ժ. Ռոքեպլոն այն համեմատում է պետական ծառայողի կարգավիճակի հետ և նշում, որ ինչպիսին էլ լինի ծառայության կամ զբաղեցրած պաշտոնի բնույթը, զինծառայողները (թե՛ պայմանագրային, թե՛ պարտադիր զինվորական ծառայության) պետական այլ կազմակերպությունների ու մարմինների ծառայողների համեմատությամբ նույն կարգավիճակում են: Որպես միակ տարբերություն նա առանձնացնում է այն հանգամանքը, որ զինծառայողները ժամկետային առումով համեմատաբար ավելի երկարատև են իրականացնում իրենց ծառայողական պարտականությունները[6]:

Հայաստանի Հանրապետությունում զինվորական ծառայության կազմակերպաիրավական հիմքերի զարգացման ուղղություններից է զինվորական ծառայություն ներառող պետական մարմինների ու կազմակերպությունների գործունեության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության համակարգի ստեղծումը: Որպես քաղաքացիական վերահսկողության տարրեր կարելի է դիտել Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից բարձրագույն սպայական կազմին կոչումների շնորհման ու պաշտոնների նշանակման ընթացակարգը, զինծառայողների, նրանց ընտանիքների անդամների իրավունքներին ու օրինական շահերին վերաբերող հարցերի համատեղ քննարկումները պետական իշխանության տարբեր մարմինների և հասարակական կառույցների միջև:

Սոցիալական հատուկ նշանակություն ունի քաղաքացիական վերահսկողությունը զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների ու ազատությունների պահպանման և սոցիալ-իրավական պաշտպանվածության նկատմամբ: Քանի որ ՀՀ-ում առայսօր չի եղել տվյալ ոլորտի հասարակական հարաբերությունների քաղաքացիական վերահսկողության կայուն համակարգ, հարկ է այդ հաստատությունը ներդրելիս օգտագործել նաև այլ երկրներում կիրառվող սկզբունքները: Օրինակ՝ Գերմանիայում զինծառայողներին տրամադրվող բազմակողմանի իրավական և գերատեսչական օգնության պարտականությունը, որը ամրագրված է Հիմնական օրենքի 35-րդ հոդվածում, իրականացվում է համաձայն «Պաշտպանության բնագավառում Բունդեստագի լիազոր անձի մասին» օրենքի, ըստ որի՝ դաշնային, տարածքային և համայնքային միավորումները պարտավոր են աջակցություն ցուցաբերել Զինված ուժերի ներկայացուցիչներին: Հիշյալ լիազոր անձը կոչված է «պաշտպանելու զինվորական համազգեստով քաղաքացիների հիմնական իրավունքները» և համարվում է «խորհրդարանական վերահսկողություն իրականացնելու հարցում Բունդեստագին օժանդակող մարմին»[7]:

Պետական ծառայության համակարգի գործառության կարևոր սկզբունքներից են պետական ծառայության հրապարակայնությունն ու մատչելիությունը, որոնցով ապահովվում է նաև նրա նկատմամբ հասարակական վերահսկողությունը: Որպես

[6] Տես *J. S. Roqeplo.* Le statut des militaires. Paris, 1979, P. 46:

[7] Տես «Wehrbeantragte des Deutschen Bundestages und die Streitkrafte der BRD». Truppenraxis, 1994, № 12:

պետության պաշտպանական համակարգի գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողության հաստատություն կարելի է դիտել զինծառայողների մասնագիտական միությունները, որոնք արդեն ստեղծվում են Ռուսաստանի Դաշնությունում՝ «Զինծառայողների կարգավիճակի մասին» օրենքի հիման վրա: Զինծառայողների մասնագիտական միությունների ստեղծումը պետք է, բնականաբար, կանոնակարգվի համապատասխան օրենսդրական ակտերով: Հայաստանի Հանրապետությունում պլանավորվում է ստեղծել մի խորհրդակցական մարմին (հասարակական խորհուրդ), որը պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության ձևավորման և իրականացման ընթացքում ապահովելու է ՀՀ քաղաքացիների, հասարակական կազմակերպությունների և պաշտպանության նախարարության համագործակցությունը, ինչպես նաև ՀՀ պաշպանության նախարարության գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողությունը: Այդ մարմինը նպատակ ունի ապահովելու ՀՀ քաղաքացիների, հասարակական կազմակերպությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակայնության փոխհամաձայնեցված գործունեությունը:

Զինվորական ծառայության կազմակերպման, զինված ուժերում օրինականության ու կարգապահության ամրապնդման համար կարևոր նշանակություն ունեն նաև զինծառայողների պատասխանատվության ենթարկման՝ որպես նրանց վրա իրավական ներգործության միջոցների հարցերը: Հարկ է նշել, որ ՀՀ-ում դրանք դեռ ոչ լիովին են համապատասխանում միջազգային իրավական ակտերին: Այսպես. ՀՀ Զինված ուժերի կարգապահական կանոնադրությունը կարգապահական զանցանք կատարած զինծառայողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս որպես տույժի տեսակ նախատեսում է արտաղատական կարգով կալանատանը մինչև տասը օր պահելը: Մինչդեռ ըստ Մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների պաշտպանության մասին համաձայնագրի՝ յուրաքանչյուր կալանավորված անձ երեք, առավելագույնը՝ չորս, օրվա ընթացքում բերվում է դատավորի կամ դատական իշխանությամբ օժտված այլ պաշտոնյայի մոտ, և նա իրավունք ունի դատարանից պահանջելու իր նկատմամբ ընտրված խափանման միջոցի վերանայում և իրեն տեղում իսկ ազատ արձակում, եթե կալանավորելու կամ ձերբակալելու մասին որոշումը դատարանը ճանաչում է անօրինական[8]: Ռուսաստանի Դաշնությունում այս հարցը կարգավորվել է հետևյալ կերպ. Պետական դուման նշված Համաձայնագիրը վավերացրել է հետևյալ վերապահումով՝ ՌԴ Զինված ուժերի կարգապահական կանոնադրությունում ամրագրված նույն դրույթը (չնայած այդ մասով նշված Համաձայնագրին հակասելուն) շարունակելու է կիրառվել մինչև ներպետական օրենսդրության մեջ համապատասխան փոփոխությունների կատարումը, և նախատեսել է «Ռուսաստանի Դաշնությունում զինծառայողների կարգապահական պատասխանատվության մասին» օրենքի ընդունում[9]: Նշված խնդրի

[8] Տես «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա» (ընդունվել է 1950 թ. նոյեմբերի 5-ին), հոդ. 5:

[9] Տես *Օ. Վ. Շարիկինա,* նշ. աշխ., էջ 8:

լուծման ռուսաստանյան տարբերակը կարելի է կիրառել նաև Հայաստանի Հանրապետությունում՝ նախատեսելով զինծառայողների կարգապահական պատասխանատվության մասին համապատասխան օրենքի ընդունում:

Զինվորական ծառայության կազմակերպաիրավական ապահովման զարգացման ուղղությունների ու հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է համակարգել զինվորական գործող օրենսդրությունը: Զինվորական ծառայության մասին գործող օրենսդրությունը բաղկացած է տարբեր իրավաբանական ուժ ունեցող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերից, որոնց ոչ համակարգված լինելը հաճախ հանգեցնում է դրանց դրույթների կրկնությունների կամ անհամապատասխանությունների: Զինվորական ծառայության մասին օրենսդրության մեջ առկա են ոչ հստակ սահմանումներ, որոնց գործնական կիրառումը հանգեցնում է որոշակի բարդությունների (օրինակ՝ «զինվորական ծառայություն» հասկացության գործող օրենսդրական սահմանումը լիարժեքորեն չի արտացոլում այդ տեսակի ծառայության էությունը): Միավորման դեպքում զինվորական օրենսդրությունը համակարգվում է առանց որևէ էական փոփոխության՝ միայն օրենսդրական բաղկացուցիչ մասերի ներքին համակարգվածության մշակմամբ: Օրինակ՝ Վ. Օզերովն առաջարկում է հրատարակել «Զինվորական օրենքների ժողովածու»[10]: Նման համակարգված նորմատիվ-իրավական ակտը հնարավորություն կտա ավելի դյուրին դարձնելու օրենսդրության կիրառությունը, ինչպես նաև հայտնաբերելու օրենսդրական բացթողումներն ու անճշտությունները և արդյունավետ կերպով վերացնելու դրանք:

Ավելի լուրջ հարց է զինվորական ծառայության մասին օրենսդրության փոխհամաձայնեցումը: Դրա համար անհրաժեշտ է օրենսդրության բաղկացուցիչ տարրերի այնպիսի համակարգում, որը նպատակաուղղված լինի կրկնությունների, հակասությունների վերացմանը, բացերի լրացմանը, օրենսդրական ու ենթաօրենսդրական ակտերի արդյունավետ կիրառմանը:

Զինվորական-ծառայողական հարաբերություններին, օրինականության ու իրավակարգի պահպանմանը վերաբերող հարցերի կարգավորման պրակտիկան վկայում է, որ անհրաժեշտ է զինվորական օրենսդրության կոդիֆիկացում: Կարելի է ընդունել «Զինվորական օրենսգիրք», որը ոչ միայն ներառի զինվորական ծառայությանը վերաբերող հարցերը, այլև կարգավորի պետության ռազմական կազմակերպվածքի մյուս հարցերը՝ պաշտպանության բնագավառում պետական իշխանության մարմինների լիազորությունները, զինված ուժերի կիրառման ոլորտները, զինվորական ծառայության նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը և այլն:

Որոշ մասնագետներ առաջարկում են ընդունել «Պաշտպանական բարեփոխումների մասին» օրենք, որով կարգավորվեն այնպիսի հարցեր, ինչպիսիք են պետության ռազմական կազմակերպվածքի վերակազմավորումը, զինծառայողների սոցիալ-իրավական պաշտպանվածության միջոցների կատարելագործումը, զինծառայողների նյութական ապահովվածության մակարդակի բարձրացումը, բյուրոկրա-

[10] Տես *Վ. Ա. Օզերով,* նշ. աշխ., էջ 17:

տիզմի, որոշ ժամկետային զինծառայողների տրված անօրինական արտոնություններ վերացումը, զինվորական ծառայությունից վաղաժամկետ հրաժարվելու դեպքում զինծառայողներին նյութական պատասխանատվության ենթարկելը, պայմանագրի տեսակների տարբերակումն ըստ զինվորական մասնագիտության կամ համապատասխան զինվորական պաշտոնի և այլն:

Պաշտպանական ոլորտի բարեփոխումների հարցերը վերլուծելիս կարելի է նկատել, որ անհրաժեշտ է գործող օրենսդրությամբ նախատեսել նաև կադրային զինվորական ծառայություն, այսինքն՝ ծառայություն կամավոր հիմունքներով, մեծ արտոնությունների համակարգով և զինվորական ծառայությունից վաղաժամկետ կամավոր արձակվելու հնարավորությամբ: Կադրային զինվորական ծառայությունը պետք է համարվի երկրի պաշտպանությանը մասնակցելու սահմանադրական պարտականությունը կամովին կատարելու ձևերից մեկը, և այն անցնելու հնարավորություն ընձեռվի թե՛ սպայական կազմին, թե՛ սերժանտներին ու ավագներին:

Եվ այսպես. ի մի բերելով վերոշարադրյալը՝ կարող ենք առանձնացնել Հայաստանի Հանրապետությունում զինվորական ծառայության կազմակերպման իրավական ապահովմանն առնչվող երկու խումբ խնդիրներ:

Առաջին խումբը ներառում է զինվորական ծառայության կազմակերպման իրավական ապահովման կատարելագործումը պայմանավորող խնդիրներ, մասնավորապես՝

– զինվորական-ծառայողական հարաբերությունների առաջացման, փոփոխման և դադարման հիմքերի իրավական նշանակության հստակեցում,

– զինծառայողների սոցիալական ապահովվածության հարցերի իրավական կարգավորման համակարգի կատարելագործում,

– զինվորական ծառայության կազմակերպաիրավական ոլորտի հեռանկարային զարգացում,

– պաշտպանական բարեփոխումների հիմնավորված իրավական ապահովման մշակում,

– Զինված ուժերում և այլ զորքերում զինվորական կարգապահության մակարդակի բարձրացում,

– զինվորական ծառայության ու զինծառայողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության համակարգի զարգացում:

Երկրորդ խումբը ներառում է զինվորական ծառայության իրավական հիմունքների կատարելագործման խնդիրներ, մասնավորապես՝

– զինծառայողների իրավունքների ու պարտականությունների, իրավական պատասխանատվության նշանակության ու առանձնահատկությունների սահմանում,

– զինվորական պաշտոնների ու զինծառայողների կարգավիճակի իրավական բովանդակության ձևակերպում, զինծառայողների ծառայողական առաջխաղացման գործնականում կիրառելի համակարգի վերաբերյալ օրենսդրության զարգացում,

–«զինվորական ծառայություն» և «զինծառայող» հասկացությունների գիտականորեն հիմնավորված հստակ սահմանում,

–պետական ծառայության և զինվորական ծառայության վերաբերյալ օրենսդրական հիմունքների միջև առկա որոշ հակասությունների, դրանց պատճառների պարզում ու վերացում,

–զինվորական ծառայության մեջ կիրառվող բոլոր սկզբունքների հստակ համակարգում և դասակարգում,

–զինվորական ծառայության կարգավորման նորմատիվ-իրավական ակտերի համակարգի սահմանում ու հետագա կատարելագործում:

Այսօր Հայաստանի Հանրապետության պաշտպանական բնագավառում իրականացվում են լայնածավալ բարեփոխումներ, մասնավորապես, մշակվում և ներդրվում է զինվորական ծառայության՝ որպես յուրահատուկ ծևի գործունեության և զինծառայողների կարգավիճակի հարցերի իրավական կարգավորման վերաբերյալ հստակորեն մշակված հայեցակարգը: Զինծառայողներին առաջադրվող խնդիրների լուծման արդյունավետությունը պայմանավորված է նաև տվյալ ոլորտի հարաբերությունները կարգավորող օրենսդրության գործնական կիրառելիությամբ ու կայունությամբ՝ եղած բացերն ու անճշտությունները հնարավորինս նվազագույնի հասցնելու պայմանով:

ОРГАНИЗАЦИОННО-ПРАВОВОЕ ОБЕСПЕЧЕНИЕ ВОЕННОЙ СЛУЖБЫ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Т. Т. КОЧАРЯН, старший лейтенант, кандидат юридических наук,
офицер Юридического управления МО РА

РЕЗЮМЕ

В статье с учетом перспектив развития и совершенствования организационно-правовой основы обеспечения военной службы, на основе анализа опыта развитых стран и практики военной деятельности в РА, в рамках оборонных реформ предлагаются теоретически обоснованные решения данных проблем.

В частности, в целях дальнейшего совершенствования систематизированного организационно-правового обеспечения военной службы в РА выдвигаются конкретные предложения в отношении как принятия в рамках оборонных реформ новых законодательных актов, регулирующих правовые отношения в оборонной сфере РА, так и внесения определенных поправок и дополнений в действующие нормативно-правовые акты, что позволит восполнить пока еще существующие в оборонном законодательстве пробелы и устранить противоречия в отдельных положениях законов.

ORGANIZATION-LEGAL SUPPORT OF THE MILITARY SERVICE IN THE REPUBLIC OF ARMENIA

T. T. KOCHARYAN, Senior Lieutenant,
Candidate of Law, Officer at the Law Board of the MoD, RA

SUMMARY

In this article, taking into account the perspectives of developing and improving organization-legal principles of ensuring military service, within the framework of the defense reforms the theoretically grounded solutions to the given problems are introduced on the basis of the analysis of the developed countries experience and the military activities practice in the RA.

Particularly, in order to further the improvement of systematized organization-legal support of the military service in the RA, concrete motions are put forward. They concern both passing new legislative acts within the framework of the defense reforms, which regulate legal relations in the RA defense sphere, and introducing certain amendments and supplements to the normative-legal acts currently in force. That will allow to make up still existing deficiencies in the defense legislation and eliminate contradictions in separate legal provisions.

ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿՈՒՏԱԿԱՅԻՆ-ՀԻՊՈՏԵԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Հ. Ի. ԳԵՎՈՐԳՅԱՆ, ավագ լեյտենանտ, ՀՀ ՊՆ Կադրերի և ռազմական կրթության վարչության ավագ սպա-իրավաբան, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի հայցորդ

ՀՀ Զինված ուժերում իրականացվող բարեփոխումների գործընթացում կարևոր տեղ են գրավում այն խնդիրները, որոնք կապված են զինվորական ծառայություն անցնող անձանց ու նրանց ընտանիքների անդամների նյութական ապահովման և դրա իրավական հիմքերի ստեղծման հետ:

Այսօր ամենահրատապ և վիճահարույց խնդիրներից մեկը նշված կատեգորիայի անձանց բնակարանային ապահովման հարցն է: Դրա լուծված չլինելը բացասաբար է անդրադառնում պետության ռազմական կազմակերպվածքի վրա և հանգեցնում է Զինված ուժերից զգալի թվով մասնագետների արտահոսքի:

Բնակարանային խնդիրը ցանկացած երկրի կարևոր սոցիալական հարցերից մեկն է: Բնակարանը մարդու կյանքի ու գործունեության համար նույնքան կարևոր է, որքան կարևոր են սնունդը, խմելու ջուրը, հագուստը: Դրա համար էլ բոլոր ժամանակներում հոգ է տարվել մարդկանց բնակարանային կարիքների բավարարման համար:

Շուկայական տնտեսավարմանն անցնելուց հետո, երբ Հայաստանի Հանրապետությունում գրեթե դադարեց պետական միջոցներով բնակարանային շինարարությունը, կատարվեց պետական և հանրային բնակարանային ֆոնդի տների մասնավորեցում, այսինքն՝ ապապետականացում: Դրա հետևանքով քաղաքացիների բնակարանային պահանջմունքները պետք է բավարարվեին ոչ թե սպառման հանրային ֆոնդի, այլ իրենց իսկ սեփականություն համարվող բնակելի տարածությունների հաշվին[1]:

Սկզբունքորեն փոխվեց նաև քաղաքացիների բնակարանային իրավունքի նկատմամբ պետության վերաբերմունքը: Եթե Հայկական ԽՍՀ Սահմանադրության մեջ ամրագրված էր, որ քաղաքացիներն ունեն բնակարանի իրավունք, և նրանց տրվում էին այդ կարևոր սոցիալ-տնտեսական իրավունքի իրականացման երաշխիքներ[2], ապա Հայաստանի Հանրապետության 1995 թ. Սահմանադրության մեջ այդ մասին խոսվում է միայն քռուցիկ կերպով:

ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածով սահմանվում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, այդ թվում՝ բնակարանի, ինչպես նաև կենսապայմանների բարելավման իրավունք»: Եվ միայն

[1] Տես *Տ. Կ. Բարսեղյան, Գ. Հ. Ղարախանյան և ուրիշներ,* Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, երկրորդ մաս: Ե., 2001, էջ 176:

[2] Տես «Հայկական ԽՍՀ 1978 թ. Սահմանադրություն», հոդ. 42:

վերջում ավելացված է, որ «Պետությունն անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում քաղաքացիների այս իրավունքի իրականացման համար»[3]: Իսկ Սահմանադրության 48-րդ հոդվածի 3-րդ կետով պետության առջև խնդիր է դրվում խթանելու բնակարանային շինարարությունը, նպաստելու յուրաքանչյուր քաղաքացու բնակարանային պայմանների բարելավմանը:

Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական հնարավորությունների սղության պատճառով պետությունը չի կարող բոլորին երաշխավորել բնակարանների անհատույց տրամադրում: Սակայն, ինչ վերաբերում է զինծառայողներին, ապա այստեղ գործում է և պետք է գործի «բնակարանի մատչելիության սկզբունքը», այսինքն՝ այն պետք է հատկացվի անհատույց կամ մատչելի գնով:

Այսօր Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի զինծառայողների բնակարանային հարաբերությունները կարգավորվում են «Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» և «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի զինծառայողների բնակարանային ապահովության մասին» ՀՀ կառավարության, համապատասխանաբար, 2005 թ. հունիսի 9-ի հմ. 947 և 2007 թ. մարտի 7-ի հմ. 384 որոշումներով հաստատված կարգերով, որոնք հիմնվում են «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի վրա: Առաջին որոշմամբ սահմանվում է զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) կարիքավոր ընտանիքներին բնակարանային հաշվառման վերցնելու և բնակարանային պայմանները բարելավելու նպատակով անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու կարգը: Ըստ այդ կարգի՝ աջակցություն ստանալու իրավունք ունեն ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների (ազատամարտիկների) կարիքավոր ընտանիքների անդամները, զինվորական ծառայության ժամանակ վնասվածքներից, խեղումներից և առաջացած հիվանդություններից հաշմանդամ դարձած զինծառայողները, որոնց Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանման կողմից տրվել է զոհվածի (մահացածի) ընտանիքի անդամի կամ հաշմանդամի կարգավիճակը հավաստող տեղեկանք: Երկրորդ որոշմամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգի՝ բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զինծառայողներին բնակարանային հաշվառման վերցնելու, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հաշվեկշռում գտնվող բնակարանները զինծառայողներին կամ նրանց ընտանիքների անդամներին անհատույց օգտագործման կամ սեփականության իրավունքով տրամադրելու, տնամերձ հողամասի կամ բնակարանի ձեռքբերման համար անհատույց պետական ֆինանսական աջակցությամբ ապահովելու պայմանները:

[3] «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», հոդ. 34: Ե., 2005:

Անշուշտ, իրենց սոցիալական պետություն հռչակած երկրներում միշտ էլ պետական մակարդակով նախատեսվել և իրականացվել են զինծառայողների բնակարանի իրավունքի՝ որպես սահմանադրական կարևորագույն սոցիալ-տնտեսական իրավունքներից մեկի արդյունավետ կենսագործումն ապահովող միջոցառումներ: Նշվածի վառ ապացույցն է զինծառայողների բնակարանային կարիքների բավարարման նոր համակարգը, որը 2005 թվականից հաջողությամբ կիրառվում է Ռուսաստանի Դաշնության Զինված ուժերում[*]: Մինչ նոր համակարգին անցնելը ՌԴ-ում տվյալ խնդրի կարգավորման նպատակով կիրառվում էին ինչպես սոցիալական օգտագործման[**] բնակարանային ֆոնդերի հաշվին բնակելի տարածություն հատկացնելու, այնպես էլ բնակարանների ձեռքբերման համար տարբեր տեսակի սուբսիդիաների ձևով դրամական միջոցներ տրամադրելու մեխանիզմներ, որոնցից էր, օրինակ, «Պետական բնակարանային սերտիֆիկատներ» ենթածրագիրը, որը գործում է մինչ օրս[4]: Երկար տարիների քննարկումներից հետո ընդունվեց այս կատեգորիայի անձանց բնակարանային պահանջմունքները բավարարելու նոր համակարգի հայեցակարգ, որն սկզբնական շրջանում կոչվում էր «Կուտակային համակարգ»[5], իսկ հետագայում վերանվանվեց «Կուտակային-հիպոտեկային համակարգ»: Անհրաժեշտ է նշել, որ համապատասխան իրավական ակտ չլինելու պայմաններում չէր կարելի խոսել նոր համակարգի շրջանակներում բնակարանով ապահովման հստակ մեխանիզմների մասին: Այդ իսկ պատճառով էլ ընդունվեց «Զինծառայողներին բնակարանով ապահովելու կուտակային-հիպոտեկային համակարգի մասին» օրենք, որով սահմանվում են բնակարանով զինծառայողների

[*] Կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետության համար առավել իրատեսական է վերոնշյալ հարցի կարգավորման ուղղությամբ Ռուսաստանի Դաշնության որդեգրած քաղաքականությունը:

[**] ՌԴ-ում բնակարանի կարիք ունեցող քաղաքացիների խնդիրները լուծվում են պետական և հանրային սեփականություն հանդիսացող բնակարանային ֆոնդի օբյեկտների հաշվին, որոնք դասվում են սոցիալական օգտագործման բնակարանային ֆոնդերի թվին:

ՀՀ-ում իրավասու մարմիններն ընդունել են մի շարք նորմատիվային ակտեր, մասնավորապես, ՀՀ կառավարության 1998 թ. փետրվարի 18-ի հմ. 95 որոշմամբ ՀՀ նախարարությունների, գերատեսչությունների և մարզպետարանների տնօրինության տակ գտնվող շենքերն ու շինությունները սեփականության իրավունքով հանձնվել են համապատասխան համայնքներին՝ բնակելի ֆոնդի վերածելու նպատակով, ինչի հետևանքով ՀՀ-ում փաստորեն ձևավորվել է բնակարանային նոր՝ համայնքային, բնակարանային ֆոնդ: Այսպիսով՝ ներկայումս ՀՀ ամբողջ բնակելի տարածությունը բաժանվում է երկու հիմնական ֆոնդերի՝ տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության տակ գտնվող (համայնքային) բնակարանային ֆոնդի և քաղաքացիների սեփականությունը կազմող (անհատական) բնակարանային ֆոնդի:

[4] Տես «О подпрограмме «Государственные жилищные сертификаты» на 2004—2010 годы, входящей в состав федеральной целевой программы «Жилище» на 2002—2010 годы: Постановление Правительства Российской Федерации от 20 ноября 2003 года № 700» СЗ РФ. 2003, № 48, с. 4676:

[5] Տես *З. Х. Акчурин.* Переход к накопительной системе обеспечения жильем военнослужащих: миф или реальность. «Право в Вооруженных Силах» (вкладка в журнал), 2003, № 8:

ապահովման կուտակային-հիպոտեկային համակարգի իրավական, կազմակերպական, տնտեսական և սոցիալական հիմունքները*:

Իսկ ո՞վ կարող է լինել կուտակային-հիպոտեկային համակարգի մասնակից: Համաձայն վերոնշյալ օրենքի՝ սույն համակարգը տարածվում է՝

• այն զինծառայողների վրա, որոնք 2005 թ. հունվարի 1-ից հետո ավարտել են բարձրագույն ռազմաուսումնական հաստատություններ և ստացել առաջին սպայական կոչումներ, ընդ որում, ցանկության դեպքում նշված համակարգի մասնակիցներ կարող են դառնալ նաև տվյալ կատեգորիայի այն անձինք, որոնք զինվորական ծառայության են անցել մինչև 2005 թ. հունվարի 1-ը,

• այն զինծառայողների վրա, որոնք 2005 թ. հունվարի 1-ից հետո զորակոչվել են զինվորական ծառայության պահեստազորից և կնքել զինվորական ծառայության անցման առաջին պայմանագրերը,

• այն ենթասպաների վրա, որոնց զինվորական ծառայության ընդհանուր ժամկետը, հաշվված 2005 թ. հունվարի 1-ից, կազմում է երեք տարի, ընդ որում, ցանկության դեպքում նշված համակարգի մասնակիցներ կարող են դառնալ նաև այն ենթասպաները, որոնք զինծառայության են անցել մինչև 2005 թ. հունվարի 1-ը,

• այն շարքայինների, սերժանտների, ավագների վրա, որոնք զինվորական ծառայության անցման երկրորդ պայմանագրերը կնքել են 2005 թ. հունվարի 1-ից ոչ շուտ և ցանկություն են հայտնել դառնալու կուտակային-հիպոտեկային համակարգի մասնակիցներ:

Կուտակային-հիպոտեկային համակարգի էությունն այն է, որ դրա մասնակից զինծառայողների համար երաշխավորվում է սեփականության իրավունքով մշտական բնակարան ձեռք բերելու համար անձնական հաշիվների վրա համապատասխան միջոցների հաշվանցում՝ անկախ այն հանգամանքից, թե նրանք մինչև ծառայության անցնելն ապահովված եղել են բնակարանով, թե ոչ: Ամեն տարի զինծառայողի անձնական հաշվին ավելանում է որոշակի գումար, որը համարժեք է մոտավորապես 3 մ^2 բնակտարածության արժեքին: Այսպիսով՝ ծառայության քսան տարիների ընթացքում կուտակված գումարը համակարգի յուրաքանչյուր մասնակցին հնարավորություն է տալիս զորացրվելուց հետո սեփականության իրավունքով ձեռք բերելու բնակարան[6]:

Եթե զինծառայողը զորացրվում է մինչև ծառայության 10 տարին լրանալը, ապա նա զրկվում է կուտակված միջոցներն ստանալու հնարավորությունից: Իսկ եթե զորացրումը տեղի է ունենում ծառայության 10–20-րդ տարում և այն էլ հարգելի (կազմակերպական-հաստիքային միջոցառումների, առողջական վիճակի և այլ)

* Ընդունվել է ՌԴ Պետական դումայի կողմից 2004 թ. օգոստոսի 5-ին:

[6] Այս մասին ավելի հանգամանորեն տես *А. Александров.* Что рядовым ждать от генералов? «Российская газета», 9 мая 2002 г.; *Б. Талов.* Именная квартира к дембелю. «Российская газета», 8 июня 2001 г.; *В. Сокирко.* Армия с человеческим лицом. «Московский комсомолец», 10 июня 2001 г.; *М. Янович.* Жилье для военных: копить или нет? «Российская газета», 28 мая 2002 г., և այլն:

պատճառով, զինծառայողն ստանում է կուտակված միջոցները և դրանք կարող է օգտագործել իր բնակարանային հարցի ինքնուրույն կարգավորման համար: Եթե զինծառայողի ծառայության ժամկետը 20 տարուց ավելի է, նա կարող է երկարատև ծառայության շնորհիվ կուտակված լրացուցիչ միջոցների հաշվին սեփականության իրավունքով ձեռք բերել ավելի հարմարավետ բնակարան, ինչն էլ նպաստում է, որ զինծառայողը շահագրգռված լինի ծառայելու ավելի երկար ժամանակ:

Կուտակային համակարգին ոչ պակաս, քան երեք տարվա մասնակցությունից հետո զինծառայողը ձեռք է բերում արդեն իսկ կուտակված միջոցների օգտագործմամբ հիպոտեկային վարկ ստանալու իրավունք: Հետագայում հիպոտեկային վարկի պարտքի հիմնական մասը պետք է մարի պետությունը: Այսպիսով՝ զինծառայողները բնակարան ձեռք բերելու հնարավորություն են ստանում իրենց կարիերայի սկզբնական փուլում:

Եթե զինծառայողը սեփականության իրավունքով ձեռք է բերում բնակարան, սակայն չի բնակվում այնտեղ, նա կարող է այն հանձնել վարձակալության և բնակարանի օգտագործման դիմաց ստանալ համապատասխան եկամուտ:

Հարկ ենք համարում նշել, որ կուտակային-հիպոտեկային համակարգի պայմաններում զինծառայողը շահագրգռված է ծառայելու որքան հնարավոր է երկար, քանի որ պետության կողմից փոխանցվող միջոցների գումարն ուղիղ համեմատական է ծառայության ժամկետի տևողությանը: Իսկ սեփական նախաձեռնությամբ պայմանագրի վաղաժամկետ լուծման դեպքում զինծառայողն ստիպված է լինում մարելու հիպոտեկային վարկի գումարը սեփական միջոցների հաշվին: Միևնույն ժամանակ, նա պետությանը պետք է վերադարձնի պետբյուջեից իր անձնական հաշվին փոխանցված միջոցները:

Ինչպես իրավացիորեն նշում են մասնագետները, վերոնշյալ համակարգն այսօր առավել քան հրատապ է մեծ վարչական կենտրոնների համար, որտեղ չկա ծառայողական բնակարանային ֆոնդ: Հիպոտեկային վարկի միջոցով ձեռք բերված բնակարանը շարունակում է մնալ որպես զինծառայողի սեփականություն անգամ այն դեպքում, երբ նա տեղափոխվում է ծառայության նոր վայր՝ պահպանելով ծառայողական բնակարան ստանալու իրավունքը[7]:

Այսպիսով՝ բնակարանով զինծառայողների ապահովման նոր համակարգի խնդիրներն են.

• զինծառայողներին պետության հաշվին առանձին բնակարաններով ապահովելու համակարգից անցում ըստ բնակության վայրի սեփականության իրավունքով բնակարան ձեռք բերելու համար դրամական միջոցների կուտակման համակարգին,

• կուտակային-հիպոտեկային համակարգին առնվազն երեք տարի մասնակցությունից հետո հիպոտեկային վարկի միջոցով բնակարանի ձեռքբերման հնարավորություն,

[7] Տես *И. Иванюк.* Сколько ждать офицерского новоселья? (Для лейтенантов 2004 года уже начали копить квартирные деньги). «Российская газета», 16 августа 2002 г.:

• զինվորական ծառայությունն անընդմեջ (երկարատև) շարունակելու հարցում շահագրգռվածության շարժառիթի հիման վրա զինվորական կադրերի (առաջին հերթին՝ սպայական կազմի) պահպանում:

Բնակարանով զինծառայողներին ապահովման կուտակային-հիպոտեկային համակարգին անցումը ենթադրում է մի շարք միջոցառումների իրականացում, մասնավորապես՝

• բնակարան ձեռք բերելու համար զինծառայողների անձնական հաշիվներին պետական միջոցների ամենամյա փոխանցում,



ՀՀ պաշտպանության նախարարության կողմից զինծառայողներին հատկացվող ծառայողական բնակարանների բաշխման և նորակառույց բնակշենքի հանդիսավոր բացման արարողությունը.

ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը կտրում է ժապավենը, Երևան, Աջափնյակ թաղամաս, 2008 թ. օգոստոս

• դրամական միջոցների կուտակում՝ զինծառայողի անվանական կուտակային հաշվին պետական հատկացումների ամենամյա փոխանցման ճանապարհով,

• կուտակային-հիպոտեկային համակարգին մասնակցության երեք տարին լրանալուց հետո համակարգի մասնակիցները սեփական նախաձեռնությամբ կարող են օգտագործել անվանական հաշվի վրա գտնվող կուտակված միջոցները՝ հիպոտեկային վարկի օգտագործմամբ սեփականության իրավունքով բնակարան ձեռք բերելու համար: Տվյալ դեպքում վարկը տրամադրվում է բանկի կողմից՝ ձեռք բերվող բնակարանի գրավի դիմաց:

Ընդ որում, միջոցների կուտակման գործընթացը շարունակվում է նաև հիպոտեկային վարկի օգտագործմամբ սեփականության իրավունքով բնակարան ձեռք

բերելուց հետո, ինչը հնարավորություն է տալիս հետագայում բարելավելու բնակարանային պայմանները:

«Զինծառայողներին բնակարանով ապահովելու կուտակային-հիպոտեկային համակարգի մասին» օրենքի ընդունումից հետո ամեն տարի պետբյուջեում նախատեսվում են հատկացումներ, որոնք օգտագործվում են համակարգի մասնակիցների անվանական կուտակային հաշիվների վրա փոխանցումներ կատարելու համար: Այդ միջոցները տնօրինում են գործադիր իշխանության այն մարմինները, որտեղ օրենքով նախատեսված է զինվորական ծառայություն: Վերջիններիս հայտի հիման վրա դրամական միջոցները պետբյուջեից փոխանցվում են համակարգի ղեկավարման նպատակով ստեղծված մարմնի առանձին հաշվին: Այդ դրամական միջոցները հավատարմագրային կառավարմամբ հանձնվում են ղեկավար կազմակերպությանը (կազմակերպություններին), որպեսզի կուտակային միջոցները բազմապատկվեն ներդրումային ճանապարհով եկամուտ ստանալու շնորհիվ: Այնուհետև զինծառայողի ցանկությամբ դրամական միջոցներն ուղղվում են ձեռք բերվող բնակարանի գնմանը կամ հիպոտեկային վարկի նախնական վճարի մուծմանը[8]:

Կուտակային-հիպոտեկային համակարգը զինծառայողին ընձեռում է ընտրության հնարավորություն. կա՛մ ամբողջ ծառայության ընթացքում կուտակել միջոցներ, կա՛մ հիպոտեկային վարկի միջոցով բնակարան ձեռք բերել դեռ ծառայության ընթացքում:

Կուտակային-հիպոտեկային համակարգի առավելությունն այն է, որ դրա շնորհիվ զինծառայողը բնակարանը ձեռք է բերում սեփականության իրավունքով: Եթե զինծառայողը որոշում է զինված ուժերից զորացրվել, ապա պետության կողմից չմարված մնացած վճարումները կատարվում են զինծառայողի կողմից՝ սեփական միջոցների հաշվին:

Հիպոտեկի օգտագործման հիմնական առավելությունն այն է, որ հնարավորություն է տալիս սեփականության իրավունքով գնելու բնակարան ցանկացած պահի՝ չսպասելով ծառայության ժամկետի ավարտին: Այն ընձեռում է նաև բնակարանի գտնվելու վայրի և չափերի ընտրության հնարավորություն՝ ըստ զինծառայողի ցանկության և հնարավորության: Բացի այդ, հիպոտեկի դեպքում վերանում է ծառայության ամբողջ ընթացքում հավաքված միջոցների արժեքազրկման ռիսկի գործոնը: Ընդ որում, հիպոտեկային վարկավորման և կուտակային համակարգի միջև ընտրության հիմնական չափանիշն է բնակարանի գնաճի և քաղաքացու եկամուտների արժեքազրկման աճման տեմպերի հարաբերությունը: Որպես կանոն, այսօր բնակարանի պահանջարկի գործոնը հանգեցնում է այն բանին, որ բնակարանի գնաճի տեմպերը գերազանցում են արժեքազրկման տեմպերը: Այդ իսկ պատճառով ձեռնտու է բնակարան գնել ավելի վաղ շրջանում:

[8] Այս մասին ավելի հանգամանորեն տես «Федеральный закон Российской Федерации от 20 августа 2004 года № 117-ФЗ «О накопительно-ипотечной системе жилищного обеспечения военнослужащих» (принят Государственной Думой 5 августа 2004 года, одобрен Советом Федерации 8 августа 2004 года)», гл. 2—4:

Ինչպես շեշտում են մասնագետները, առաջարկվող կուտակային-հիպոտեկային համակարգի շրջանակներում հիպոտեկային վարկավորման օգտին կատարված ընտրությունը տնտեսապես արդարացված է, քանի որ հիպոտեկային վարկային դրույքն ավելի փոքր է կամ առնվազն հավասար բնակարանի գնի աճման տեմպերին, մինչդեռ կուտակային համակարգի շնորհիվ կուտակված միջոցները ժամանակի ընթացքում բնակարանի արժեքի համեմատությամբ արժեքազրկվում են: Բացի այդ, հիպոտեկի օգտագործումը հնարավորություն է տալիս հաստատագրելու բնակարանի գինն ու մակերեսը և այդպիսով խուսափելու բնակարանի գնաճի նկատմամբ կուտակային միջոցների նվազ աճման ռիսկի հավանականությունից:

Հարկ ենք համարում ևս մեկ անգամ շեշտել այն հանգամանքը, որ սույն ծրագրի մասնակիցներն են միայն զինվորական ծառայություն անցնող անձինք:

Ընդհանրացնելով վերը շարադրվածը՝ կարելի է ուրվագծել հիպոտեկային վարկավորման հետևյալ սխեման. զինծառայողը՝ որպես քաղաքացի, կարող է բնակարան ձեռք բերելու նպատակով ցանկացած ժամանակ բանկից վարկ վերցնել՝ որպես կանխավճար վճարելով բնակարանի գնի որոշակի գումարը (հիմնականում՝ 15–30 %-ը): Պետությունը կուտակային-հիպոտեկային վարկավորման համակարգի մասնակցին օգնություն է ցուցաբերում սկզբնական վճարը մուծելու համար անհրաժեշտ գումար հավաքելու (կուտակելու) հարցում: Որպես կանոն, բնակարանի գնման կանխավճարը ֆինանսավորվում է առաջին տարիներին (3 տարուց ոչ պակաս) զինծառայողի անձնական հաշվին գտնվող կուտակված միջոցների հաշվին: Հետագա ամենամյա կուտակային միջոցները զինծառայողն օգտագործում է հիպոտեկային վարկը մարելու համար:

Անձնական հավելյալ խնայողությունների աճման դեպքում (պաշտոնի, կոչման բարձրացում) զինծառայողի ցանկությամբ կարելի է կա՛մ կրճատել բնակարանի գնման ժամկետները, կա՛մ ընդարձակել ձեռք բերվող բնակարանի մակերեսը: Աստիճանաբար աճող դրամական բավարարման դեպքում հիպոտեկային վարկավորման մարման վճարումների ժամանակացույցը կարելի է կազմել այնպես, որ առաջին տարիներին զինծառայողի անձնական բյուջեի հաշվին կատարվող վճարումները լինեն որքան հնարավոր է փոքր, բայց ունենան հետագայում աճման միտում՝ դրամական բավարարման ինդեքսավորման, ինչպես նաև զինծառայողի ծառայողական առաջխաղացման հաշվառմամբ:

Փաստորեն, նոր մեխանիզմի էությունն այն է, որ յուրաքանչյուր զինծառայողի անձնական հաշվին պետությունը բնակարան ձեռք բերելու նպատակով հաշվանցում է որոշակի քանակությամբ դրամական միջոցներ: Առնվազն երեք տարի ծառայելուց հետո զինծառայողը այդ միջոցների օգտագործմամբ կարող է հիպոտեկային համակարգի միջոցով սեփականության իրավունքով ձեռք բերել բնակարան: Որպես արդյունք՝ զինծառայողը բնակարանն ստանում է ապառիկ կարգով, որի մարումը ծառայության ամբողջ ընթացքում նրա փոխարեն կատարում է պետությունը:

Խոսելով կուտակային-հիպոտեկային համակարգի ներդրման մասին՝ անհրաժեշտ ենք համարում նշել, որ մեր պետության տնտեսական ոլորտի առկա հարա-

ճուն զարգացումը, ինչպես նաև այսօր ՀՀ բանկային համակարգում հիպոտեկային վարկավորման ինտենսիվ քաղաքականության իրականացումը, հնարավորություն են տալիս տվյալ համակարգը կիրառելու նաև հայկական բանակում՝ Հայաստանի Հանրապետությանը բնորոշ առանձնահատկությունների հաշվառմամբ:

Բացի այդ, մեր կարծիքով, կուտակային-հիպոտեկային համակարգի կենսագործումը հնարավորություն կընձեռի՝

• բարելավելու զինծառայողների կոլեկտիվներում և նրանց ընտանիքներում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը,

• զինծառայողների մեջ վստահություն ձևավորելու իրենց ընտանիքներին բնակարանով ապահովելու հարցում,

• փոխհատուցելու այն սահմանափակումները, որոնք կապված են զինվորական ծառայության՝ որպես կյանքի համար վտանգավոր հատուկ պետական ծառայության հետ,

• վերականգնելու սոցիալական արդարությունը,

• հաստատելու և ամրապնդելու զինծառայողների՝ որպես պետության առանձնահատուկ պաշտպանության ներքո գտնվող քաղաքացիների կարգավիճակը:

Ավարտելով այս համառոտ քննարկումը՝ հարկ ենք համարում նշել, որ զինծառայողների բնակարանային խնդիրները, հատկապես՝ վերջին տարիներին, եղել են Հայաստանի Հանրապետության կառավարության և պաշտպանության նախարարության ղեկավարության ուշադրության կենտրոնում: Ասվածի վառ ապացույցն այն է, որ վերջերս ՀՀ Պաշտպանության նախարարը հերթական անգամ մասնակցեց պաշտպանության նախարարության կողմից զինծառայողներին հատկացվող ծառայողական բնակարանների բաշխման և բնակշենքի հանդիսավոր բացման արարողությանը: Հավաքվածներին շնորհավորանքի խոսքեր հղելով՝ Նախարարը խոսեց նաև զինծառայողներին բնակարանով ապահովելու ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցառումների մասին՝ նշելով, որ այս տարի Երևանում և սահմանամերձ շրջաններում նախատեսվում է կառուցել և շահագործման հանձնել շուրջ 450 բնակարան: Վերջում նա ավելացրեց, որ մշակվում է նաև հիպոտեկային վարկի հայեցակարգ՝ ինչպես հիմնական, այնպես էլ ծառայողական բնակարանների կառուցման համար: Գործընթացն անմիջականորեն հսկվում և իրականացվում է ՀՀ վարչապետի կողմից. կարճ ժամկետներում լուծվելու է նաև այդ խնդիրը[9]: Հուսով ենք, որ սույն վերլուծությունը կօգնի ՀՀ-ի համար նման համակարգի մշակմամբ զբաղվող մասնագետներին՝ ծանոթանալու արտասահմանյան փորձին և ստեղծելու մեր պայմանների համար ավելի կատարյալ համակարգ:

[9] Տես «Հայ զինվոր», 2008 թ. հուլիսի 26 – օգոստոսի 2, հմ. 29 (742):

ПЕРСПЕКТИВЫ ВНЕДРЕНИЯ В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РА НАКОПИТЕЛЬНО-ИПОТЕЧНОЙ СИСТЕМЫ ОБЕСПЕЧЕНИЯ ЖИЛЬЕМ

А. И. ГЕВОРКЯН, старший лейтенант, старший офицер-юрист Управления кадров и военного образования МО РА, соискатель кафедры гражданского права юридического факультета ЕГУ

РЕЗЮМЕ

Вопрос квартирного обеспечения военнослужащих и членов их семей является одной из актуальнейших проблем их социально-правовой защиты.

Республика Армения, исходя из своих экономических возможностей, не в состоянии гарантировать безвозмездное предоставление квартир. В связи с этим были разработаны различные механизмы обеспечения военнослужащих и их семей жильем.

Одним из перспективных механизмов является концепция ипотечного кредита, которая уже внедряется в РФ. Концепция включает накопительно-ипотечную систему квартирного обеспечения, которая предоставляет военнослужащим возможность выбора: накопить за время службы средства для приобретения квартиры после демобилизации или же по ипотечному кредиту приобрести жилье в начальный период с погашением задолженности в течение дальнейшей службы.

PERSPECTIVES OF THE INTRODUCTION OF THE SAVINGS AND MORTGAGE SYSTEM FOR HOUSING INTO THE RA ARMED FORCES

H. I. GEVORGYAN, Senior Lieutenant, Senior Officer-legal expert in the Personnel and military education Department of the MoD, RA, Applicant at the Chair of Civil Law of the Law faculty, YSU

SUMMARY

Servicemen and their family members' housing issue is one of the most actual problems of their social and legal protection.

Owing to its economic opportunities the Republic of Armenia is unable to guarantee free apartment provision. In this respect various mechanisms of servicemen and their families' housing were elaborated.

One of the perspective mechanisms is the concept of mortgage loan, which is already being introduced in the RF. The concept includes the savings and mortgage system of housing, which gives servicemen an opportunity for choice: to accumulate funds during the period of service for apartment purchasing after demobilization or to buy accommodation on mortgage loan in the initial period, paying off in the course of further service.

ՀՐԵՏԱՆԻ

ԵՎ ՀՐԹԻՌԱՅԻՆ ԶՈՐՔԵՐ



ՀՀ ԶՈՒ-Ի ՀՐԹԻՌԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ԵՎ ՀՐԵՏԱՆՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ՝ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՄԲ

Յու. Գ. ԽԱՉԱՏՈՒՐՈՎ, գեներալ-գնդապետ, ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ պետ

Հարավկովկասյան տարածաշրջանում տիրող ռազմաքաղաքական իրադրության անկայունությունը՝ պայմանավորված Ադրբեջանի ծգտմամբ Ղարաբաղյան հակամարտության լուծումը բանակցային դաշտից փոխադրելու զինված պայքարի ոլորտ և դրա հետ կապված՝ նրա բացահայտ ռազմականացումը ՀՀ-ից պահանջում են մշտապես կատարելագործել ու հզորացնել իր պաշտպանական համակարգը, ունենալ այնպիսի Զինված ուժեր, որոնք ի զորու լինեն անընդունելի վնասներ պատճառելու սպառնալիքով զսպելու ագրեսիան, իսկ վերջինիս իրագործման դեպքում՝ ջախջախիչ հակահարված հասցնելու հակառակորդին[1]: Այս խնդիրը մեզնից հրամայաբար պահանջում է պաշտպանական բարեփոխումների միջոցով անընդհատ զարգացնել մեր բանակի ռազմատեխնիկական հնարավորությունները և անձնակազմի մարտունակությունը[2]:

Հայտնի է, որ ԶՈՒ-ի հիմնական կրակային հզորությունը պայմանավորված է հրետանային ու հրթիռային սպառազինությամբ[3]: ՈՒստի պաշտպանական համակարգի հզորացման համատեքստում կարևոր տեղ է հատկացվում ՀՀ ԶՈՒ-ի հրթիռային զորքերի և հրետանու զարգացմանը:

Ցամաքային զորքերի ժամանակակից հրետանին լինում է. ըստ նախանշանակման՝ վրագետնյա և զենիթային, իսկ վրագետնյան՝ ըստ մարտական հատկությունների՝ թնդանոթային, հաուբիցային, ռեակտիվ, հակատանկային, լեռնային և ականանետային, ըստ տեղափոխման եղանակի՝ ինքնագնաց, քարշակվող և այլն[4]:

Իհարկե, Հայաստանի նման փոքր, սուղ ֆինանսատնտեսական հնարավորություններ ունեցող պետության համար դժվար է հավասարապես զարգացնել այդ բոլոր տեսակները, ունենալ մեծաթիվ հրետանային զորքեր, կազմակերպել հրետանային սպառազինության ու դրա համար անհրաժեշտ մարտապաշարի յուրային ինքնաբավ արտադրությունը: ՈՒստի կարևոր է դառնում օպտիմալացման խնդրի լուծումը՝ հնարավորինս նվազ ֆինանսական ծախսերով ու սակավ մարդկային ռեսուրսի օգտագործմամբ ապահովել մեծ կրակային հզորություն ու խոցման արդյունավետություն: ՀՀ-ում այդ խնդիրը լուծվում է հրետանու ընդհանուր նախանշանակման, ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարության կող-

[1] Տես *Ս. Օհանյան*, Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումները. երկրորդ փուլ: «ՀԲ», 2008, հմ. 2–3:

[2] Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4:

[3] Տես «Военный энциклопедический словарь». М., 2002, с. 1114:

[4] Տես նույն տեղում, էջ 91:

մից հրթիռային զորքերի և հրետանու առջև դրվող կոնկրետ ընթացիկ ու հեռանկարային խնդիրների, հրթիռահրետանային սպառազինության զարգացման ու կիրառման եղանակների կատարելագործման համաշխարհային միտումների, հավանական հակառակորդի հարձակողական միջոցների զարգացման հիմնական ուղղությունների, հնարավոր պատերազմի թատերաբեմի աշխարհագրական առանձնահատկությունների, հանրապետության ֆինանսատնտեսական ու մարդկային ռեսուրսների և այլ գործոնների հաշվառմամբ:

Այդ խնդիրը ոլորտի համար պատասխանատու հրամանատարությունը լուծում է՝ հենվելով Խորհրդային բանակում ծառայության ժամանակ, մասնավորապես՝ Աֆղանական պատերազմում, ձեռք բերած հմտությունների, առաջատար պետությունների տեսական մշակումների և փորձի ուսումնասիրության վրա՝ հայրենական գիտելիքի ու լավագույն փորձի հետ համադրմամբ ու տարածմամբ:

Հայ հրետանավորներն ունեն լավ ավանդույթներ: Հայրենական մեծ պատերազմի տարիներին Խորհրդային բանակի հրետանու լավագույն կողմերով իրենց դրսևորեցին և արժանացան փառքի Խորհրդային Միության հերոս, գեներալ-գնդապետ Մ. Պարսեղովը, գեներալ-լեյտենանտ Պ. Չունչուզովը, գիտությունների թեկնածու, դոցենտ, դերծովակալ Ա. Սաղոյանը, հմ. 92 հրետանային գործարանի տնօրեն գեներալ-մայոր Հ. Յոլյանը և շատ ուրիշներ: Այդ ավանդույթները ներկայումս շարունակում են ՀՀ ԶՈՒ-ի հրետանավորները:

ՀՀ ԶՈՒ-ի հրթիռային զորքերը և հրետանին ստեղծվեցին Ղարաբաղյան հակամարտության զինված փուլի տարիներին: Առաջին զորամասերը և ստորաբաժանումները կազմավորվեցին դեռ 1992 թ., զինվեցին ԽՍՀՄ-ից փոխանցված և հակառակորդից առգրավված սպառազինությամբ: Շատ կարճ ժամանակահատվածում տիրապետելով վստահված զենքին՝ հայ հրետանավորները կարողացան զգալի կորուստներ պատճառել հակառակորդին՝ իրենց շոշափելի ներդրումն ունենալով ընդհանուր հաղթանակի կերտման գործում:

1994 թ. կնքված հրադադարի պայմանագիրը հնարավորություն տվեց խաղաղ պայմաններում վերանայելու Զինված ուժերի, մասնավորապես՝ հրթիռային զորքերի և հրետանու կառուցվածքը: Այդ աշխատանքները ղեկավարել են ՀՀ ԶՈՒ-ի հրթիռային զորքերի և հրետանու վարչության պետեր՝ գեներալ-մայոր Վ. Ա. Հայրապետյանը, գեներալ-լեյտենանտ Մ. Ն. Կարապետյանը, իսկ ներկայումս՝ գեներալ-մայոր Ա. Գ. Մարդոյանը:

Ներկայումս ըստ առկա խնդիրների՝ ՀՀ Զինված ուժերի զարգացման պլանի և ՀՀ սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրի շրջանակներում իրականացվում են մի շարք կարևոր փոփոխություններ, որոնց շնորհիվ ԶՈՒ-ի հրթիռային զորքերը և հրետանին պատրաստ են խոցելու հակառակորդի ռազմավարական նշանակություն ունեցող կարևոր օբյեկտները ամբողջ օպերատիվ-մարտավարական խորությամբ՝ անկախ տարվա եղանակից, բնակլիմայական և տեսանելիության պայմաններից:

Ընդհանուր առմամբ, ռազմական ոլորտը պետության կենսագործունեութ-

յան այն կարևոր ոլորտներից է, որը չի կարող դոփել տեղում, այլ պետք է մշտապես առաջընթաց ունենա՝ հաջողությունների հաջորդական զարգացմամբ: Դա լիովին վերաբերում է նաև հրթիռային զորքերին և հրետանուն: Խոսելով ԶՈՒ-ի հրթիռային զորքերի և հրետանու զարգացման հիմնական ուղղությունների մասին՝ նպատակահարմար է առանձնացնել դրանցից չորս առավել կարևորները՝

1. ոլորտային ռազմատեխնիկական քաղաքականության կատարելագործում,
2. զորատեսակի վերազինում նոր, արդի պահանջներին համապատասխանող սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով,
3. առկա սպառազինության և ռազմական տեխնիկայի՝ մարտունակ վիճակում պահպանում և արդիականացում,
4. որակյալ կադրերի պատրաստում:

Ոլորտային ռազմատեխնիկական քաղաքականության կատարելագործում: Պետության ռազմատեխնիկական քաղաքականությունը պաշտպանական քաղաքականության բաղադրիչ մասն է, որը սպառազինության արդյունավետ համակարգերով, հատուկ ռազմական տեխնիկայով, ինչպես նաև զորքերի ու զենքի կառավարման միջոցներով զինված ուժերի պատեհաժամ հագեցման ու նյութական ապահովման նպատակով սպառազինության ու ռազմական տեխնիկայի մշակման, արտադրության (կամ գնման) վերաբերյալ պաշտոնական տեսակետների և պետական մարմինների կոնկրետ գործունեության ուղղությունների համակարգ է: Որպես դրա առավել ընդհանուր սկզբունքներ կարելի է նշել՝

– պետության ռազմատեխնիկական ներուժի համապատասխանությունը պաշտպանության պահանջմունքներին,

– ռազմատեխնիկական կարիքների համար հատկացվող նյութական միջոցների տնտեսական հիմնավորվածությունը և արդյունավետ օգտագործումը,

– զենքի զանազան համակարգերի և մարդ–ՍՌՏ համակարգի տարբեր բաղադրատարրերի օպտիմալ հարաբերակցությունը[5]:

Ռազմատեխնիկական քաղաքականությունը բխում է պետության ռազմական դոկտրինից, որն իր հերթին խարսխվում է ազգային անվտանգության ռազմավարության վրա: Ըստ «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինի»՝ ռազմատեխնիկական ապահովման խնդիրն է ռազմական անվտանգության համակարգն ապահովել արդիական ռազմական տեխնիկայով, սպառազինությամբ և այլ միջոցներով, այն է՝ կատարել «ռազմական անվտանգության ապահովման համար միջազգային արդի ռազմական գիտության, ռազմական արվեստի, ռազմատեխնիկական առաջընթացի և գործնական փորձի ձեռքբերումների ուսումնասիրման հիման վրա անհրաժեշտ ուժերի, միջոցների, պաշարների ստեղծումը և նպատակային կիրառումը, ժամանակակից տեղեկատվական համակարգերի ներդրումը»[6]:

[5] Տես «Национальная доктрина России» (http://www.rau.su/observer/N5-8_94/5-8_30.htm):

[6] «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»:

Հրթիռային զորքերի և հրետանու ոլորտում ՀՀ ռազմատեխնիկական քաղաքականության հիմնական դրույթներն են.

– հանրապետության ֆինանսատնտեսական հնարավորությունների սահմաններում հանրապետության պաշտպանության համար առավել նպաստավոր համակարգերի ընտրությունն ու գնումը,

– ՍՌՏ տարբեր համակարգերի համար փոխլրացման ու գործակցելիության ապահովումը,

– ոչ նյութատար եղանակներով ՍՌՏ կատարելագործումը, առաջին հերթին՝ զենքի կառավարման էլեկտրոնային համակարգերի կատարելագործմամբ դրանցով խոցման արդյունավետության մեծացումը (գերազանցապես՝ ճշգրտության մակարդակի բարձրացմամբ),

– այնպիսի ՍՌՏ ընտրություն, որի շահագործման համար անհրաժեշտ են սակավ մարդկային ու նյութական ռեսուրսներ,

– սպասարկող անձնակազմի մարտական պատրաստականության (գիտելիքների ու հմտությունների) մակարդակի բարձրացումը:

Զորատեսակի վերազինումը: Նոր տեսակի սպառազինությամբ վերազինումն իրականացվում է ՀՀ Զինված ուժերի զարգացման պլանի և ՀՀ սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրի շրջանակներում: Այս ուղղությամբ արդեն կատարվել են զգալի աշխատանքներ. համազորային զորամասերի հրետանու կառուցվածքը և համալրվածության աստիճանը նրանց հնարավորություն են տալիս ինքնուրույնաբար կատարելու առաջադրված խնդիրները, դրանցից շատերում երկրորդ հրետանային դիվիզիոնները վերազինվել են 152-մմ տրամաչափի հրանոթներով, տանկային (զրահատանկային) զորամասերը լրահամալրվել են ինքնագնաց հրետանային 2Ս-3Մ և 2Ս-1 կայանքներով, իսկ հակատանկային ստորաբաժանումները վերազինվել և լրահամալրվել են մեծ արդյունավետություն ունեցող հակատանկային կառավարվող հրթիռային համալիրներով: Միայն վերջին երկու տարիների ընթացքում հրթիռային զորքերի և հրետանու համար ձեռք է բերվել բավականին մեծ թվով ժամանակակից զինամթերք, այդ թվում՝ հեռահար գերճշգրիտ հրթիռներ, տարբեր տրամաչափի հրետանային արկեր և կրակոցներ, տարբեր հակատանկային համակարգերի համար կառավարվող հրթիռներ, ինչի շնորհիվ ապահովվում է զորատեսակին առաջադրված խնդիրների կատարման հուսալիությունը և արդյունավետությունը:

Կենտրոնական ենթակայության հրթիռային զորամասերը լրահամալրվել են նոր տեսակի գերճշգրիտ հրթիռային համալիրներով, մեծ տրամաչափի հեռահար համազարկային կրակի ռեակտիվ համակարգերով, կազմավորվել են նոր ստորաբաժանումներ: ՋՈՒ-ի հրթիռային զորքերը հնարավորություն ունեն ցանկացած պահի՝ անկախ եղանակային և բնակլիմայական պայմաններից, օպերատիվ և օպերատիվ-մարտավարական ամբողջ խորությամբ խոցելու հակառակորդի ռազմավարական նշանակություն ունեցող կարևոր օբյեկտները: Ներկայումս Հայաստանի Հանրապետության ձեռնարկություններից մեկում իրականացվում են նոր, գերճշգրիտ հրթիռային համալիրի

ստեղծման փորձակոնստրուկտորական աշխատանքներ, և մոտ ժամանակներս ԶՈՒ-ն կհամալրվի հայրենական արտադրության գերճշգրիտ հրթիռային հա-ալիրներով:

Այսպիսով՝ հրետանային զորամասերում կատարվել են մի շարք կառուց-վածքային փոփոխություններ. դրանք համապատասխանեցվել են առաջա-դրված խնդիրները մեծ արդյունավետությամբ ու կարճ ժամանակամիջոցում կատարելու պահանջներին: Զգալիորեն թարմացվել է հրետանային զորամա-սերի ավտոմոբիլային հավաքակազմը, հրետանային քարշակները հիմնակա-նում փոխարինվել են նոր ձեռք բերված հզոր քարշակներով, ինչով կապահովվի զորամասերի արագ տեղաշարժը մեծ հեռավորություններով և անհրաժեշ-տության դեպքում՝ ըստ ընտրված ուղղությունների ուժեղացնելու հրետանային խմբավորումները:

Սպառազինության և ռազմական տեխնիկայի պահպանումը մարտունակ վիճակում և արդիականացումը: Ծավալուն աշխատանքներ են կատարվել առկա սպառազինության և ռազմական տեխնիկայի արդիականացման ուղ-ղությամբ: Այս առումով հարկ է նշել, որ աշխատանքները իրականացվում են Հայաստանի Հանրապետության ձեռնարկություններում, հայ մասնագետների ուժերով և, իհարկե, Զինված ուժերի համապատասխան ծառայությունների անմիջական աջակցությամբ ու հսկողությամբ: Արդիականացվել և արդեն զորքերում շահագործվում են խորհրդային արտադրության հրետանու կա-ռավարման 1Վ12 և 1Վ17 համալիրների հատուկ մասերը, իսկ ընթացա-մասերը փոխարինվել են ավելի հզոր ամենագնաց մեքենաներով: Նշված համալիրների նոր տարբերակը հնարավորություն է տալիս նախորոշված շրջանում արագ բացազատվելու, մեքենայի տեղակապակցման և տիեզե-րական ուղեվարման տեղորոշումային համակարգերի կիրառությամբ արագ և ճշգրիտ տեղակապակցվելու՝ ներդրված օդերևութաբանական կայանից ստացված և նախկինում խոցված նշանակետերի (եթե այդպիսիք եղել են) տվյալների հաշվառմամբ, հաշվված վայրկյանների ընթացքում նախապատ-րաստելու և ավտոմատ բանելակարգով կրակային հաշվարկներին փոխան-ցելու հայտնաբերված նշանակետի խոցման համար տվյալները, ինչի շնոր-հիվ նշանակետի հայտնաբերումից մինչև խոցումը ժամանակը հասցվել է մեկից երկու րոպեի:

Շարունակվում են Զինված ուժերում առկա ԲՄ-21 համազարկային կրակի ռեակտիվ կայանքների արդիականացման աշխատանքները. ռեսուրսն սպա-ռած բենզինային շարժիչները փոխարինվում են շահագործման ավելի հզոր դիզելային շարժիչներով, նույն կայանքներից ավելի մեծ հեռահարության ռեակտիվ արկերով կրակելու նպատակով իրականացվում է հատուկ մասի որոշակի հանգույցների արդիականացում:

Զինված ուժերում ընդունվել և արդեն շահագործման է հանձնվել հրե-տանային դիվիզիոնների համար հրետանային հետախուզության և կրակի կառավարման՝ հայրենական արտադրության 2Կ-02 ավտոմատացված հա-մակարգը: 2Կ-02 համակարգն իր մարտավարատեխնիկական բնութագրերով

արժանացել է ՀԱՊԿ-ի անդամ պետությունների մեծ հետաքրքրությանը: Համակարգը հնարավորություն է տալիս հետախուզում կատարելու ցերեկային, գիշերային և սահմանափակ տեսանելիության պայմաններում, բարձր ճշգրտությամբ նշահատելու և որոշելու նշանակետերի կոորդինատները, ավտոմատացված բանելակարգում տվյալները կրակային դիրքերին հաղորդելու, հրետանու ընտրված համակարգի համար կրակ բացելու համար տեղակայումները որոշելու:

Կադրերի պատրաստում: ՀՀ ՋՈՒ-ի հրթիռային զորքերի և հրետանու մասնագիտություններով կադրերի պատրաստման գործընթացն իրականացվում է երկու մակարդակով՝ բուհական և զորային, և նպատակաուղղված է որակյալ մարդկային ռեսուրսների ճիշտ օգտագործմամբ մեծացնելու ՍՌՏ արդյունավետությունը, կրճատելու դրանց շահագործման համար անհրաժեշտ նյութական ու մարդկային ռեսուրսները:

Հրթիռային զորքերի և հրետանու համար կրտսեր հրամանատարական կազմ պատրաստում է Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը: ՀՀ-ում իրականացվող ռազմակրթական բարեփոխումների շնորհիվ կատարելագործվում է նաև հրետանավորների պատրաստման համակարգը: Մեր կարծիքով՝ հույժ կարևոր առաջադիմական քայլ էր ինստիտուտի համապատասխան ֆակուլտետի և զորային կառույցների միջև հետադարձ կապի սերտացումը: Դա հնարավորություն է տալիս կատարելու ուսումնական ծրագրերի ճշգրտում, ուսուցողական մեթոդիկաների կատարելագործում: Ինստիտուտի գիտամանկավարժական ներուժի մեծացման առումով կարևոր նախաձեռնություններից են գիտահետազոտական հակում ունեցող մի քանի երիտասարդ սպաների գործուղումը արտասահմանյան ադյունկտուրաներ, օտարերկրյա մասնագետների ներգրավմամբ գիտաուսումնամեթոդական սեմինարների ու գիտաժողովների կազմակերպումը:

Զորային կառույցում հրետանավորների մարտական պատրաստման տեսակետից, մեր կարծիքով, առաջընթացը հիմնականում պայմանավորված է հայրենական համակարգչային վարժասարքերի լայն կիրառմամբ, մանկավարժահոգեբանական աշխատանքների որակական մակարդակի բարձրացմամբ, ինչի շնորհիվ աճում է զինծառայողների գիտակցական վերաբերմունքը ծառայության նկատմամբ, նոր գիտելիքներ ու հմտություններ ձեռք բերելու ձգտումը:

Հրթիռային զորքերի և հրետանու զարգացման համար շատ բան է արված, բայց առջևում կան դեռ բազմաթիվ բարդ խնդիրներ, որոնք ոլորտի համար պատասխանատու բարձր հրամանատարական կազմից պահանջում են մշտական տքնաջան նպատակասլաց աշխատանք՝ ֆիզիկական ու մտավոր ուժերի գերլարմամբ: Այդուհանդերձ, ներկան հուսադրող է և մեզ իրավունք է տալիս այս ոլորտում ակնկալելու նորանոր հաջողություններ:

Այսպիսով՝ ՀՀ ՋՈՒ-ի հրթիռային զորքերի և հրետանու զարգացման խնդիրները իրենց կարևոր տեղն ունեն պաշտպանական համակարգի բարեփոխումներում, և այդ ուղղությամբ իրականացվող միջոցառումները լինելու են

շարունակական, այլ ոլորտներում իրականացվող բարեփոխումներին համահունչ և դրանց հետ փոխհամաձայնեցված, իսկ դրանց արդյունքները՝ շոշափելի: Դա է պահանջում Հայաստանի Հանրապետության պաշտպանական անվտանգության ապահովման գերխնդիրը:

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ РАЗВИТИЯ РАКЕТНЫХ ВОЙСК И АРТИЛЛЕРИИ ВС РА В КОНТЕКСТЕ ОБОРОННЫХ РЕФОРМ С УЧЕТОМ МИРОВЫХ ТЕНДЕНЦИЙ

Ю. Г. ХАЧАТУРОВ, генерал-полковник, начальник ГШ ВС РА

РЕЗЮМЕ

Развитие оборонной мощи государства как одну из важных составляющих включает усиление огневой мощи ВС, в значительной мере обусловленной состоянием ракетных войск и артиллерии (РВ и А). Для малых государств с ограниченными людскими финансово-экономическими и материальными ресурсами как Армения, эта проблема представляет собой оптимизационную задачу обеспечения высокой эффективности огневого поражения целей противника при минимизации расходов. Одним из основных инструментов решения данной задачи является реалистичная отраслевая военно-техническая политика, совершенствование которой составляет одно из главных направлений развития ракетных войск и артиллерии ВС РА.

Основными положениями отраслевой военно-технической политики РА являются:

– выбор и покупка систем ВВТ с учетом их боевой и эксплуатационной эффективности, географических особенностей ТВД, тенденций развития средств нападения у вероятного противника и финансово-экономических возможностей РА;

– обеспечение взаимодополняемости и взаимодействия различных систем ВВТ;

– усовершенствование ВВТ без применения материалоемких технологий: повышение эффективности поражения путем усовершенствования электронной системы управления оружием;

– выбор такого ВВТ, для эксплуатации которого необходимы малые человеческие и материальные ресурсы;

– повышение уровня боевой выучки обслуживающего персонала.

За последние 2 года для РВ и А приобретено довольно большое количество новейших боеприпасов, в том числе: сверхточные ракеты дальнего действия; артиллерийские снаряды различного калибра; управляемые ракеты для противотанковых систем, благодаря чему обеспечивается надеж-

ность и эффективность выполнения боевых задач, стоящих перед этим родом войск.

Другим важным направлением развития РВ и А являются поддержание боеспособности и модернизация наличествующих ВВТ, в первую очередь– усовершенствование электронных систем управления и подготовки к боевым действиям, а также артиллерийской разведки, причем эти работы выполняются на предприятиях РА, силами высококвалифицированных армянских специалистов при непосредственной поддержке и контроле со стороны соответствующих служб ВС.

Благодаря этим работам существенно повысилась эффективность поражения разнородных целей, а также усовершенствовалась система обслуживания ВВТ.

Подготовка кадров для РВ и ВС РА осуществляется на двух уровнях: вузовском и войсковом. Работа в данной сфере нацелена на повышение эффективности боевого применения ВВТ путем совершенствования системы подготовки квалифицированных специалистов и на сокращение человеческого и материального ресурсов, необходимых для эксплуатации ВВТ.

Подготовка младшего командного состава для РВ и А осуществляется в военном институте им. В. Саргсяна. В рамках общего реформирования системы военного образования совершенствуется также система подготовки артиллеристов. Планомерно осуществляется подготовка соответствующих научно-педагогических кадров в адъюнктурах зарубежных стран.

Для подготовки кадров в войсковом звене все шире применяются новейшие обучающие технологии, в частности, компьютерные тренажеры, как закупаемые за рубежом, так и отечественного производства.

Благодаря осуществленным мероприятиям ракетные войска и артиллерия ВС РА способны поражать важные объекты вероятного противника на всю оперативно-тактическую глубину.

THE MAIN DIRECTIONS OF THE RA AF ROCKET FORCES AND ARTILLERY DEVELOPMENT IN THE CONTEXT OF DEFENSE REFORMS WITH A GLANCE AT GLOBAL TRENDS

YU. G. KHACATUROV, Colonel-General, Chief of the Main Staff, RA AF

RESUME

The development of a state's defense power embraces the reinforcement of the Armed Forces firepower as one of its major constituents, which largely depends on the state of the Rocket Forces and Artillery. For such small states with limited human, financial, economic and material resources like Armenia, this problem bears an optimization task of ensuring the high efficiency of the fire destruction of enemy targets with the least expenses. One of the main tools

to handle the given task is the realistic sectoral military-technical policy, the improvement of which is one of the main directions in the RA AF Rocket Forces and Artillery development.

The fundamentals in the sectoral military-technical policy of the RA are the following:

- Selection and purchase of weapons and military equipment systems with a glance at their combat and exploitation efficiency, the geographical features of the theater of war, tendencies in the development of means to be used during a potential enemy attack as well as the financial and economic capabilities of the RA;
- Ensuring complementarity and interaction among various systems of weapons and military equipment;
- Improvement of weapons and military equipment without use of resource-demanding technologies, the destruction efficiency rise by means of improving the electronic control weapons;
- Choosing such weapons and military equipments, the exploitation of which would require small human and material resources;
- Rise in the combat training of the personnel.

During the last 2 years quite a large number of ammunition supplies has been acquired for the Rocket Forces and Artillery, namely, ultra-precise long-range missiles; artillery shells of various calibers; anti-tank guided missile systems, thanks to which the reliability and efficiency of combat missions to be accomplished by these corps is guaranteed.

Another important direction in the development of the Rocket Forces and Artillery is the maintenance of combat capability and modernization of the available supply of weapons and military equipment, and first of all, the improvement of electronic control systems and the preparation for combat actions, as well as artillery reconnaissance, with these works being carried out in Armenian enterprises by means of skilled professionals with direct support and supervision by relevant AF services.

Ought to these works the efficiency of engagement of diverse targets has been significantly improved, so has the Weapons and Military Equipment maintenance support.

Personnel training for the RA Rocket Forces and Armed Forces is done on two levels: college and military. The work in this sphere is aimed at the efficiency rise of the weapons and military equipment operational use by means of improvement of the professional experts training system and the reduction of human and material resources necessary for the weapons and military equipment exploitation.

Training of the non-commissioned officers for the Rocket Forces and Artillery is carried out in V. Sargsyan Military Institute. In the frameworks of the overall reformation of the military education system the training system for

the artillerymen is improved as well. Post-graduate training of relevant academic and teaching staff in foreign military colleges is systematically accomplished.

Modern teaching technologies, and particularly, computer simulators, bought both abroad and homemade, are more widely used in training the military echelon.

Thanks to the carried out activities the RA AF Rocket Forces and Artillery are capable of operationally and tactically destructing the potential enemy's major facilities down to his throat.

ՀՐԵՏԱՆՈՒ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԵՏԱՆԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԿՐԱԿԱՅԻՆ ԽՆԴՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Ա. Գ. ՄԱՐԴՈՅԱՆ, գնդապետ-մայոր, ՀՀ ԶՈՒ-ի Հրթիռային զորքերի և հրետանու վարչության պետ,
Գ. Գ. ԱՍՐՅԱՆ, փոխգնդապետ,
Միխայլովյան ռազմական հրետանային ակադեմիայի «Հրետանու և հրթիռային զորքերի ամենօրյա գործունեության օպերատիվ-մարտավարական պատրաստման և կառավարման» ամբիոնի աղյունկտ (ՌԴ)

Հարավկովկասյան տարածաշրջանում տիրող ռազմաքաղաքական իրադրությունը, Ադրբեջանի կողմից սանձազերծված սպառազինությունների մրցավազքը Հայաստանի Հանրապետությունից պահանջում են ուշադրության կիզակետում պահել իր պաշտպանական անվտանգության ապահովման խնդիրը: Հայաստանի Հանրապետության անվտանգությունը կարող է ապահովված լինել այն դեպքում, երբ տարածաշրջանում պահպանվի ռազմավարական հաշվեկշիռը, ինչին հնարավոր է հասնել ակտիվ ՀՀ արտաքին ու ռազմական քաղաքականություն մշակելու և իրացնելու, ինչպես նաև ռազմական հզորությունը պատշաճ մակարդակի վրա պահելու միջոցով: Դա մեծապես վերաբերում է Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի հրթիռային զորքերին և հրետանուն, որոնք ՀՈՒ-ի կրակային հզորության հիմնական բաղադրիչն են:

Հակառակորդի կրակային խոցման արդյունավետությունը պայմանավորված է հրետանու կրակի պատեհաժամությամբ, ճշգրտությամբ, հանկարծակիությամբ, խոցման միջոցների ճիշտ ընտրությամբ, կրակային խնդրի կատարման նպատակահարմար եղանակի ու կարգի նշանակմամբ: Ժամանակակից մարտում հրետանու հրամանատարն ընդունում է որոշում և հակառակորդի կրակային խոցման խնդիրը կատարում է ժամանակի սղության պայմաններում: Լավագույն որոշումը, կրակային խնդրի ժամանակին և գրագետ կատարումը ապահովում են օպերացիայում (մարտում) հրետանու մարտական հնարավորությունների բարձր աստիճանի իրացում: Հրետանային կազմավորումների պաշտոնատար անձանց պատրաստվածության մակարդակը այն առաջնային գործոններից է, որոնք ազդում են հրաձգության արդյունավետության վրա: Հրետանային զորամասերում և ստորաբաժանումներում հրաձգության և կրակի կառավարման գծով պատրաստումը ուսուցման հիմնական առարկաներից է և կոչված է պատրաստելու այնպիսի նախաձեռնող հրամանատարների, որոնք ունակ լինեն հակառակորդի կրակային խոցման խնդիրները կատարելու տարբեր իրադրության պայմաններում:

Հրետանային հրամանատարի ուսումնավարժվածության մակարդակի ազդեցությունը կրակի արդյունավետության վրա կրակային խնդիր կատարելիս կդրսևորվի հակառակորդի ընդդիմամարտող խմբավորման խոցման պայման-

ներում: Հակառակորդի խմբավորումը բաղկացած է առանձին օբյեկտներից, որոնցից յուրաքանչյուրի խնդիրն է նպաստել յուրային զորքերին կորուստ պատճառելուն: Ընդսմին այդ օբյեկտներից յուրաքանչյուրի կարևորությունը որոշվում է յուրային զորքերի հնարավոր կորուստներում նրա ունենալիք ներդրման չափով: ՈՒստի հակառակորդի խմբավորման կազմում եղած օբյեկտների կարևորության գնահատման հիմքը այն վնասն է, որը յուրային զորքերը կրում են դրա ներգործությունից:

Կրակային խնդրի կատարման արդյունավետությունը գնահատելու համար կարող ենք համեմատել հակառակորդի օբյեկտի կարևորության գործակիցները՝ որոշված դրա վրա կրակային խոցման միջոցների ներգործության արդյունքները հաշվի չառնելու և հաշվի առնելու դեպքում:

Դիցուք յուրային զորքերին հակազդեցություն գործող օբյեկտը կազմված է n միատիպ կրակային միջոցներից, որոնցից յուրաքանչյուրը բնութագրվում է t' ժամանակի միավորում ներունակ հաջող կրակոցների j հոսքով: Այդ դեպքում հակառակորդի օբյեկտի կողմից յուրային զորքերին հասցվող վնասը t' ժամանակի միավորում կկազմի

$$W(t') = nj(t'): \qquad (1)$$

Վնասի մեծությունը, որը դիտարկվող օբյեկտի գործառման դեպքում կհասցվի յուրային զորքերին, կարելի է արտահայտել հետևյալ բանաձևով.

$$e_i'(t) = \int_{t_H}^{t_k} w_i(t')dt, \qquad (2)$$

որտեղ՝ t-ն յուրային զորքերի վրա հակառակորդի օբյեկտի ներգործության ընդհանուր ժամանակն է,

$W_i(t')$-ն՝ այն վնասը, որը կհասցվի յուրային զորքերին *i*-րդ օբյեկտի ներգործության հետևանքով t' ժամանակի միավորում,

t_H-ը յուրային զորքերի վրա հակառակորդի օբյեկտի ներգործության սկզբնապահն է,

t_k-ն՝ յուրային զորքերի վրա հակառակորդի օբյեկտի ներգործության դադարեցման պահը:

Այն վնասի մեծությունը, որը յուրային զորքերին հասցրել է հակառակորդի օբյեկտը, նրա վրա կրակային ներգործությունը հաշվի առնելու դեպքում կկազմի՝

$$e_i^3(t) = \int_{t_H}^{t_3} w_i(t')dt\,, \qquad (3)$$

որտեղ t_3-ը կրակային խնդրի կատարման տևողությունն է:

Հակառակորդի օբյեկտի կրակային խոցման խնդրի կատարման հետևանքով վնասի մեծությունը, որը նա կարող է հասցնել յուրային զորքերին, կնվազի հետևյալ մեծությամբ՝

$$\Delta e_i = e_i'(t) - e_i^3(t): \qquad (4)$$

ՈՒստի յուրային զորքերին հակառակորդի օբյեկտի ընդդիմամարտության ժամանակի նվազումը կհանգեցնի նրա հասցրած վնասի մեծության նվազմանը:

Դիտարկվող դեպքում հակառակորդի օբյեկտն սկսում է ներգործել յուրային զորքերի վրա նախքան նրա վրա անմիջական կրակային ազդեցության սկիզբը: ՈՒստի այն ժամանակը, որն անհրաժեշտ է հրետանու հրամանատարին, որպեսզի նա իրագործի կրակային խնդրի կատարման համար բոլոր նախապատրաստական միջոցառումները, էապես կազդի խնդրի կատարման ընդհանուր տևողության վրա:

Դիտարկվող օբյեկտի հնարավորությունների իրացման աստիճանի վրա ազդում են պատահական բնույթի բազմաթիվ գործոններ (իրադրության պայմանները, կապի և կառավարման վիճակը, ռազմամթերքով ապահովվածությունը, կենդանի ուժի բարոյահոգեբանական վիճակը և այլն): Օբյեկտների կարևորության քանակական չափման համար անհրաժեշտ է այն համեմատել մի որևէ չափանմուշի (հաշվարկային միավորի) հետ, որպես այդպիսին կիրառվում է ֆիքսված պայմաններում համանման օբյեկտով պատճառվելիք վնասի մաթեմատիկական սպասման մեծությունը: Կարևորության բնութագիրը անվանում են կարևորության գործակից և նշագրում $A_i(t)$-ով

$$A_i(t) = \frac{M\left[e_i(t)\right]}{M\left[e_э^*(t)\right]}, \qquad (5)$$

որտեղ՝ $M\left[e_i(t)\right]$-ը վնասի մաթեմատիկական սպասումն է, որը կարող է որոշակի t ժամանակահատվածում հասցվել յուրային զորքերին *i*-րդ օբյեկտի հակազդեցության հետևանքով,

$M\left[e_э^*(t)\right]$-ը՝ այն վնասի մաթեմատիկական սպասումը, որը կարող է յուրային զորքերին հասցվել հակառակորդի՝ որպես չափանմուշ վերցված օբյեկտի հակազդեցության հետևանքով:

Իր հերթին՝

$$e_э^*(t) = \int_{t_H}^{t_k} W_{e_э^*}(t)dt\,, \qquad (6)$$

որտեղ՝ $e_э^*(t)$-ն այն վնասն է, որը կարող է հասցվել յուրային զորքերին հակառակորդի՝ որպես հաշվարկային միավոր (չափանմուշ) վերցված օբյեկտի հակազդեցության հետևանքով,

$W_{e_э^*}(t)$-ն՝ այն վնասը, որը ժամանակի միավորում կհասցվի յուրային զորքերին որպես հաշվարկային միավոր (չափանմուշ) վերցված օբյեկտի հակազդեցության հետևանքով:

Վերը շարադրվածի հիման վրա կարելի է եզրակացնել, որ հակառակորդի i-րդ օբյեկտի խոցման կրակային խնդրի կատարման հետևանքով յուրային զորքերին նրա կողմից հասցվելիք վնասի մաթեմատիկական սպասման $M\left[e_i(t)\right]$ արժեքը կնվազի, ուստի ավելի փոքր արժեք կունենա նրա կարևորության Ai(t) գործակիցը:

Կանխված վնասի մեծությունը բնութագրում է կրակային խնդիր կատարող ստորաբաժանումների հնարավորությունների օգտագործման աստիճանը: Անհրաժեշտ է նշել, որ խոցման միջոցների ներգործության արդյունքներն ունեն

պատահական բնույթ: Հակառակորդի օբյեկտի կողմից յուրային զորքերին հասցվող վնասի ցուցանիշի մեծությունը դիտարկվում է որպես ժամանակի պատահական ֆունկցիա: Արդյունքների պատահականությունը պայմանավորված է այն սխալներով, որոնք ուղեկցում են կրակի պատրաստումը, արկերի ցրումը: ՈՒստի որպես արդյունավետության ցուցանիշ կարող է լինել այն մեծությունը, որը սահմանվում է որպես օբյեկտի՝ նախքան խոցման միջոցների ներգործությունը և դրանից հետո ունեցած կարևորության գործակիցների տարբերության մաթեմատիկական սպասում

$$W_{i03} = A_i(t) - M\left[A_i^*(t)\right], \qquad (7)$$

որտեղ՝ $A_i(t)$-ն օբյեկտի կարևորության գործակիցն է նախքան նրա վրա խոցման միջոցների ներգործությունը,

$A_i^*(t)$-ն՝ օբյեկտի կարևորության գործակիցը խոցման միջոցների ներգործության հաշվառմամբ:

Կրակի արդյունավետության ցուցիչի արժեքը, որը համապատասխանում է առանձին կրակային խնդրի կատարմանն այն պայմանով, որ օբյեկտը մարտի մեջ է մտել կրակային հարձակումն սկսելու պահին, որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_i = A_i(t)\left[1-(1-M)e^{-at_{OH}}\frac{1}{am_\tau+1}\right], \qquad (8)$$

որտեղ՝ $A_i(t)$-ը օբյեկտի կարևորության գործակիցն է կրակային հարձակումն սկսելու պահին,

M-ը՝ օբյեկտի այն կրակային միջոցների բաժնեմասի մաթեմատիկական սպասումը, որոնք առաջացնում են անդառնալի կորուստներ,

a-ն՝ պարամետր, որն արտացոլում է փոխադարձ խոցման հետևանքով կողմերի առաջին խմբի միջոցների նվազման ինտենսիվությունը,

t_{OH}-ը՝ կրակային տարափի տևողությունը,

m_τ-ը՝ կրակային տարափից հետո օբյեկտի վերականգնման ժամանակի մաթեմատիկական սպասումը,

t-ը՝ մարտի սկզբից հաշվվող ժամանակը:

(8) հարաբերակցության վերլուծությունը ցույց է տալիս, որ կրակային խնդրի կատարման արդյունավետությունը պայմանավորվում է ինչպես նշանակետի հրակոծման եղանակով, այնպես էլ առաջադրված խնդիրը կատարողի կողմից ընդունված որոշման որակով, կրակային տարափը սկսելու ժամանակով և տևողությամբ, կրակի խտությամբ և աջակցություն ստացող ստորաբաժանումների հետ փոխգործության որակով:

Կրակային խնդիր կատարող հրետանային հրամանատարի թույլ տված տարբեր սխալների ազդեցությունը դիտարկենք կոնկրետ օրինակով:

152-մմ 2U3 ԻՀ դիվիզիոնն ստացել է դաշտային հրետանու ՌՏԿ-ն խոցելու

առաջադրանք: Կրակային խոցման համար տեղակայումների որոշումը կատարվում է լրիվ պատրաստման եղանակով: Հրաձգության միջին հեռահարությունը 10 կմ է: Արկերի ծախսը և նշանակետի հրակոծության եղանակը համապատասխանում են ՀԿ և ԿԿ (ПС и УО) պահանջներին: Արկը ՕՖ-540 է:

Վերլուծենք նշանակետի բնույթը և կրակային խնդրի կատարման պայմանները: Նշանակետը առանձին է, չդիտարկվող: Հիմնական խոցվող տարրը ալեհավաքն է, խոցիչ գործոնը բեկորներն են: Նշանակետի խոցման խնդիրը՝ ՌՏԿ-ն երկու ժամից ոչ պակաս ժամանակով շարքից հանելն է: Հրաձգությունը՝ ամբողջ դիվիզիոնով, լրիվ պատրաստմամբ: Հրաձգությունը՝ արհեստական ցրմամբ. նշանառման կետերի թիվն ըստ հեռավորության՝ $n_г$=3, ըստ ուղղության՝ $n_ф$=6 ($n_ф$ անկյունաչափի մի նախադրմամբ հրաձգության դեպքում համարում են մարտկոցում հրանոթների թվին հավասար), նշանառման կետերի միջև հեռավորությունն ըստ հեռվության՝ h_x=67 մ, ըստ ուղղության՝ h_z=33 մ: Նշանակետի խոցման բերված մակերեսը՝ $S_п$=985 մ^2:

Սխալների 4 խմբերի համակարգում հրաձգությունը հանգեցնենք հրաձգությանը սխալի 2 խմբերի համակարգում.

2с3, հրաձգության հեռավորությունը՝ 10 կմ, լրիվ պատրաստում	Համաբերված միջին սխալների հավաքածու	Едо=63 մ, Ено=38 մ Вдо=48 մ, Вбо=21 մ:

Արկերի ցրման իրական օրենքը փոխարինելով հավասարաչափ ցրման հավանականության օրենքով, երբ համաչափ ցրման գոտին ունի հետևյալ չափերը՝ ըստ խորության $Г_{з.р.р.}$=311 մ և ըստ ճակատի $Ф_{з.р.р.}$=223 մ, ինչպես նաև օգտագործելով մուտքային մեծությունները (համաչափ ցրման գոտիով նշանակետի վրածածկման հավանականությունը Θ=0,8608, արկերի ծախսը՝ N=150 արկ, նշանակետի խոցման բերված մակերեսը՝ $S_п$=985 մ^2)՝ որոշենք նշանակետի խոցման հավանականությունը: Այն կլինի՝ P=0,7585 (76 %):

Որոշում ընդունելիս և այն իրացնելիս հրետանու հրամանատարը կարող է թույլ տալ սխալներ, որոնք կհանգեցնեն կրակային խնդրի կատարման արդյունավետության նվազմանը:

Եթե հրահանգվել է սահմանված քանակից 20 %-ով պակաս արկեր ծախսել, ապա նշանակետի խոցման հավանականությունը կնվազի 5,3 %-ով (վրածածկման հավանականությունը Θ=0,8608; N=120 արկ; $S_п$=985 մ^2, P=0,7051):

Նշանակետի հրետակոծության եղանակի հրահանգման սխալը, երբ նշանակետը նշանոցի՝ ՀԿ և ԿԿ-ով նախատեսված երեք տեղակայումով հրետակոծման փոխարեն հրետակոծվում է մեկ տեղակայումով, հանգեցնում է նշանակետի խոցման հավանականության նվազմանը 4,9 %-ով (վրածածկման հավանականությունը Θ=0,7568, N=150 արկ, $S_п$=985 մ^2, P=0,7099):

Այսպիսով՝ կրակային խնդրի կատարման արդյունավետությունը և, ընդհանրապես, հակառակորդի կրակային խոցումը պայմանավորված են հրետանավոր սպայի մասնագիտական պատրաստության մակարդակով:

Կրակային խնդրի կատարման արդյունավետությունը կախված է բազմաթիվ պատահական գործոններից և այն սխալներից, որոնք թույլ է տալիս կրակային խնդիր կատարողը որոշում ընդունելիս, այն է՝

- կրակային խնդրի կատարման պատեհաժամությունից ($T_{oз}$),
- լիցքի և հետագծի ձևի ընտրությունից,
- հրաձգության համար տեղակայումների որոշման եղանակի և կրակի ճշգրտման միջոցների ընտրությունից,
- արկերի ցրումն ըստ հեռության և ուղղության (B_{∂}, $B_{б}$) բնութագրող միջին շեղումներից,
- հրաձգության ճշգրտության բնութագրերից (E_{∂}, $E_{б}$),
- նշանակետի հրետակոծման եղանակի պարամետրերից՝ նշանառման կետերի թվից ($n_{г}$ և $n_{ф}$) և դրանց միջև եղած հեռավորությունից (h_x և h_z),
- արկերի ծախսից ($N_{Ц}$),
- խոցման բերված Sn գոտիով բնութագրվող արկի, պայթուցիչի ընտրությունից,
- նշանակետի կարևորության A_i գործակցից:

Այս գործոնների մի մասը կախված է կրակային խնդրի կատարմանը մասնակցող հրետանային կազմավորման անձնակազմի մասնագիտական պատրաստման մակարդակից ($P_{упп}$): Արտաքին պայմաններից կախված գործոնների բազմությունը ընդհանուր տեսքով նշագրենք $P_{вн}$-ով:

ՈՒստի կրակային խնդրի կատարման հետևանքով հակառակորդի օբյեկտին հասցվող վնասի մեծությունը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով՝

$$W_e = f(\mathrm{P}_{\text{упп}}, \mathrm{P}_{\text{вн}}): \qquad (9)$$

Այսպիսով՝ հակառակորդի օբյեկտին հասցված վնասը կհանգեցնի յուրային զորքերին կորուստներ պատճառելու նրա կարողության փոփոխմանը: Վնասի մեծության արժեքը կախված է կրակային խնդիրը կատարող հրետանային հրամանատարի մասնագիտական պատրաստության մակարդակից: Կրակային խնդիր կատարող հրետանավոր սպայի ոչ բավարար մակարդակի ուսումնավարժվածությունը էապես նվազեցնում է խնդրի կատարման արդյունավետությունը:

ВЛИЯНИЕ УРОВНЯ ОБУЧЕННОСТИ АРТИЛЛЕРИЙСКОГО КОМАНДИРА НА ЭФФЕКТИВНОСТЬ ВЫПОЛНЕНИЯ ОГНЕВОЙ ЗАДАЧИ ПОДРАЗДЕЛЕНИЯМИ АРТИЛЛЕРИИ

А. Г. МАРДОЯН, генерал-майор, Начальник Управления ракетных войск и артиллерии ГШ ВС РА, Г. Г. АСРЯН, подполковник, адъюнкт кафедры «Оперативно-тактической подготовки и управления повседневной деятельностью ракетных войск и артиллерии» Михайловской военной артиллерийской академии, РФ

РЕЗЮМЕ

В статье с применением математического аппарата исследуется влияние уровня обученности артиллерийского командира на эффективность выполнения подчиненным ему подразделением огневой задачи. Расчеты построены на том допущении, что эффективность боевых действий отдельных объектов противостоящей группировки противника снижается при его обстреле. На основе математических выкладок в статье доказывается, что эффективность выполнения огневой задачи и, в целом, огневое поражение противника зависит от множества случайных факторов и ошибок, допускаемых выполняющим огневую задачу при принятии решения: своевременности выполнения огневой задачи, выбора заряда и вида траектории, выбора способа определения установок для стрельбы и средств для корректировки огня, срединных отклонений, характеризующих рассеивание снарядов по дальности и направлению, характеристик точности стрельбы, параметров способа обстрела цели: числа точек прицеливания, расстояния между ними, расхода снарядов, выбора снаряда, взрывателя, характеризуемых приведенной зоной поражения, коэффициента важности цели, причем многие из этих факторов зависят от уровня профессиональной подготовки командира и артиллерийского формирования, вовлеченного в выполнение огневой задачи.

THE IMPACT OF THE TRAINING LEVEL OF AN ARTILLERY COMMANDER ON THE EFFECTIVE IMPLEMENTATION OF A FIRE MISSION BY ARTILLERY UNITS

A. G. MARDOYAN, Major General, Chief of the Department of Rocket Forces and Artillery, the RA Main Staff, G. G. ASRYAN, Colonel, Graduate Student at the Department of Operational-Tactical Training and Management of Daily Activity of the Rocket Forces and Artillery, Michael Artillery Academy, RF

SUMMARY

With the use of mathematical tools this article examines the impact of the training level of the artillery commander on the effective implementation of a fire mission by his subordinate unit. The calculations are based on the assumption that the effectiveness of combat operations of separate units

opposing an enemy force diminishes when it fires. On the basis of mathematical calculations the article proves that the effective implementation of a fire mission and, in general, fire destruction of an enemy depends on many random factors and mistakes made by the one performing a fire mission while taking a decision: timeliness of a fire mission, choice of the charge and form of the trajectory, choice of a method to determine settings for firing and means to adjust the fire, standard deviations characterizing the dispersion of shells in distance and direction, the characteristics of fire precision, target shooting process parameters: the number of aiming points, the distance between them, the consumption of shells, the choice of a shell, exploder characterized by the given defeat zone, coefficient of importance of a goal, and many of these factors depend on the professional training level of the commander and the artillery formation involved in the implementation of a fire mission.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՀՐԵՏԱՆԱՅԻՆ ՍԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԱՍԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Ա. Ե. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի հրետանու ֆակուլտետի պետ,
Գ. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի հրետանու ֆակուլտետի սպառազինության և շահագործման ամբիոնի պետ

ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանը նշում է, որ «Վերջին երկու տասնամյակներում աշխարհում տեղի ունեցած ռազմատեխնոլոգիական հեղափոխության, գիտատար սպառազինության և ռազմական տեխնիկայի ի հայտ գալու հետևանքով ռազմական արվեստի (ռազմավարական և օպերատիվ-մարտավարական) և ընդհանրապես պատերազմների նկատմամբ նոր մոտեցումների մշակման շնորհիվ զինված ուժերի մարտունակության գնահատման ժամանակ սկսեցին գերակա դեր խաղալ որակական չափանիշները: ...Ոչ պատահական չէ, որ պետությունների՝ ռազմարվեստի ժամանակակից տեսության վրա հիմնվող զինված ուժերում ռազմական կրթության և ընդհանրապես անձնակազմի կառավարման ոլորտը համարվում է պաշտպանական համակարգի արդյունավետության և ՋՈՒ-ի մարտունակության ապահովման առաջնային գործոն»[1]:

Ըստ այդմ՝ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը նպատակ է հետապնդում ՀՀ ՋՈՒ-ում իրականացվող ռազմակրթական բարեփոխումների շրջանակներում զինվորական կադրերի պատրաստման համակարգը համապատասխանեցնելու ժամանակակից չափանիշներին:

Ժամանակակից մարտահրավերները խիստ պահանջներ են ներկայացնում ռազմական կադրերի, այդ թվում և հրետանավորների, պատրաստման մշտապես զարգացող համակարգին: Ինստիտուտի ղեկավարությունը շեշտում է, որ՝ «Քաջ գիտակցելով մեր երկրի անվտանգության ապահովման գործում Ռազմական ինստիտուտի՝ որպես բանակին որակյալ սպայական կադրերով ապահովող հիմնական օղակի դերը՝ մենք անհրաժեշտ ենք համարում վերանայել թե՛ կազմակերպական, թե՛ ուսումնական, թե՛ նյութատեխնիկական բազայի կատարելագործման ու արդիականացման հետ կապված որոշ մոտեցումներ»[2]:

Ինստիտուտի այդ ընդհանուր քաղաքականության համատեքստում զգալի աշխատանքներ են կատարվում նաև հրետանու ֆակուլտետում: Ժամանակակից ռազմական բախումներում հրետանու դերի ու կիրառման եղանակների,

[1] *Ս. Մ. Օհանյան,* Ռազմական կրթության համակարգի զարգացումը՝ որպես ՀՀ պաշտպանական համակարգի արդյունավետության մեծացման գործոն: «ՀԲ», 2012, հմ. 3:

[2] *Մ. Ն. Կարապետյան, Ա. Ս. Մելքոնյան,* Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի խնդիրները և զարգացման հեռանկարները ՀՀ պաշտպանական բարեփոխումների համատեքստում: «ՀԲ», 2010, հմ. 1:

մասնագետների պատրաստման միջազգային փորձի, ինչպես նաև ռազմատեխնիկական զարգացման միտումների վերլուծության հիման վրա ճշգրտվում են ուսումնական ծրագրերը, կատարելագործվում ուսումնավարժական մեթոդները: Մասնավորապես՝ ուսումնական գործընթացում հաշվի են առնվում գիտության տեսության և պրակտիկայի նորագույն նվաճումները, ինչը նպաստում է ոչ միայն ուսուցման որակի բարելավմանը, այլև ՋՈՒ-ի մարտունակության ամրապնդմանը:

Ռուսաստանի Դաշնության այս ոլորտի մասնագետները նշում են, որ ներկայումս հրետանային գիտության տեսության և պրակտիկայի զարգացման հաշվառմամբ ուսումնական ծրագրերի զարգացումը պետք է շարունակել գերազանցապես հետևյալ կարևոր ուղղություններով. հրաձգության ճշգրտության գնահատման, տեսական հիմունքների մշակման և հրաձգության տեղակայումների որոշման միջոցների կատարելագործում, նոր տեսակի մարտապաշարների խոցող ներգործության ուսումնասիրություն և տարբեր նշանակետերի խոցման համար դրանց կիրառման հանձնարարականների մշակում, կրակային խոցումից հետո հակառակորդի օբյեկտների մարտունակության գնահատում, հրետանու կրակային համակարգի արդյունավետության գնահատման տեսական հիմունքների մշակում և առանձին կրակային առաջադրանքների կատարում, հրետանու կրակի արդյունավետության գնահատման, կրակի կառավարման և հրաձգության վերաբերյալ հանձնարարականների մշակման համար մաթեմատիկական մոդելների ստեղծում, կրակի ավտոմատացված կառավարման համակարգերի օգտագործմամբ կրակի կառավարման դեպքում հրետանային հրամանատարների կողմից որոշումների ընդունման տեսական հիմունքների մշակում, հատուկ պայմաններում ու տեղային պատերազմների վարման և զինված հակամարտությունների ժամանակ հրաձգության և կրակի կառավարման վերաբերյալ հանձնարարականների մշակում[3]:

Այդ ոլորտում առաջատար պետությունները ներկայումս հրետանային հրաձգության և կրակի կառավարման տեսության ու պրակտիկայի զարգացումը հասցրել են բարձր մակարդակի: Սակայն սպառազինության և ռազմական տեխնիկայի կատարելագործման շարունակականության պատճառով գրեթե միշտ փոփոխության են ենթարկվում մարտավարության՝ մինչ այդ ընդունված սկզբունքները: Այլ կերպ ասած՝ այդ ոլորտը պահանջում է ապահովել բոլոր մակարդակների հրամանատարների գիտելիքների անընդհատ զարգացում:

Ինչպես հայտնի է, հրետանու համար նախատեսված սպառազինությունն ու ռազմական տեխնիկան շահագործող անձնակազմը որոշակի ժամանակահատվածում կատարում է որոշակի մեխանիկական գործողություններ՝ լիցքավորում, նշանառում, կրակոցի կատարում և այլն, իսկ մարտավարական ու կրակի կառավարման խնդիրները կատարում են սպաները՝ հրետանային մասնագետները, հետևաբար հրետանու կիրառման արդյունավետությունը

[3] Տես *Ю. В. Кобылин, О. А. Очеретько*. Роль академии в развитии теории и практики стрельбы и управления огнем артиллерии. «Военная мысль», январь 2006, N 1:

հիմնականում կախված է սպայակազմի պատրաստության աստիճանից: ՈՒստի անհրաժեշտ է պատրաստել այնպիսի հրետանավոր սպայի, որ նա՝

1. հասնի լիակատար մարտական պատրաստականության, մարտական գործողությունների ժամանակ վստահորեն կատարի պարտականությունները, կարողանա մարտը կազմակերպել կոնկրետ տեղանքում, բարդ ու փոփոխվող իրադրության պայմաններում՝ անձնակազմի մեջ ձևավորելով բարձր մարտական ու բարոյահոգեբանական հատկություններ, ֆիզիկական տոկունություն և զինվորական կարգապահության նկատմամբ գիտակցված վերաբերմունք,

2. կարողանա կառավարել հրետանային ստորաբաժանման կրակը, ենթականերին մեթոդապես ճիշտ ուսուցանել ինչպես հրետանային սպառազինության, այնպես էլ կրակի կառավարման այլ միջոցների մարտական կիրառումը, ենթակաների հետ անցկացնել համապատասխան տեսական, գործնական, մեթոդական պարապմունքներ,

3. կարողանա օգտվել անհատական ու կոլեկտիվ պաշտպանական միջոցներից, օգտագործել հաստիքային տեխնիկայի ու տեղանքի պաշտպանական հնարավորությունները, հակառակորդի կողմից միջուկային, քիմիական մանրէաբանական (կենսաբանական) զենքի կիրառման դեպքում կատարել ինքնօգնություն ու փոխօգնություն, կատարել հատուկ առաջադրանքներ, ենթակաների հետ անցկացնել համապատասխան տեսական, գործնական, մեթոդական պարապմունքներ,

4. կատարելապես տիրապետի հաստիքային զենքերին, հետախուզության արդյունքների հիման վրա որոշի հրաձգության համար տեղակայումները, արագորեն և առաջին իսկ կրակոցով (համազարկով) խոցի նշանակետը, կարողանա կիրառել հրաձգության բոլոր եղանակները, ճշգրտել կրակը ինչպես ցերեկը, այնպես էլ գիշերը՝ լեռնային, օդերևութաբանական ու բալիստիկական պայմանների հաշվառմամբ,

5. կարողանա դիմանալ տևական ֆիզիկական ու հոգեբանական ծանրաբեռնվածություններին և հաջողությամբ գործել ժամանակակից մարտում, ենթակաների մեջ զարգացնել երկարատև ռազմերթ ու երթարշավ կատարելու դիմացկունություն, խոչընդոտների հաղթահարման, ձեռնամարտի վարման հմտություններ, համապատասխան պարապմունքներ անցկացնել ենթակաների հետ,

6. գիտակցի ռազմական հոգեբանության և վարքականոնի հիմունքների կարևորությունը, գիտակցված մղումով ու նվիրումով ծառայի Հայաստանի Հանրապետությանը, կարողանա գիտելիքներ հաղորդել ենթակա անձնակազմին, դաստիարակել նրանց ռազմահայրենասիրական ոգով՝ ուսուցանելով հայ ժողովրդի հերոսական պատմությունն ու ավանդույթները, ձևավորել առողջ բարոյահոգեբանական մթնոլորտ, և այլն:

Այսպիսով՝ մարտի դաշտում հրետանու առավել արդյունավետ կիրառումը հնարավոր է ապահովել միայն բարձրակարգ մասնագետների միջոցով, որոնք տիրապետեն սպասարկող անձնակազմի պատրաստման արդյունավետ մեթոդներին, գիտենան հրթիռային զորքերի և հրետանու սպառազինության և ռազմական տեխնիկայի կառուցվածքը, շահագործման ու սպասարկման կանոն-

ները, մարտական հնարավորությունները, դրանք ամբողջ հզորությամբ կիրառելու մարտավարական հնարները:

Ինչպես ընդհանրապես ՀՀ Զինված ուժերում, այնպես էլ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում բարեփոխումների գործընթացը թևակոխել է որակական նոր փուլ: Վերջին երկու տարվա ընթացքում բարեփոխումների շրջանակներում Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտը ՀՀ ԶՈՒ-ի Հրթիռային զորքերի և հրետանային վարչության հետ համատեղ մշակում է սպայակազմի պատրաստման և վերապատրաստման նոր ուղիներ, ուսումնական ծրագրեր, մեթոդներ, որոնք համապատասխանեցվում են արդի պահանջներին:

ՈՒսումնական գործընթացում առանձնահատուկ կարևորություն է տրվում ստեղծագործական և կոլեկտիվի կառավարման ունակությունների ձևավորմանը: Հրետանային մասնագետի որակավորման ժամանակ հաշվի է առնվում ժամանակակից մարտի բարդ և սրընթաց փոփոխվող պայմաններում արագ ու ճիշտ կողմնորոշվելու և օպտիմալ որոշում կայացնելու ունակությունը: Հետևաբար, հրետանային բարձրակարգ մասնագետը ստորաբաժանում ղեկավարելիս պետք է կարողանա ցուցաբերել ստեղծագործական մոտեցում: Գաղտնիք չէ, որ հետախուզմանը, տվյալների պատրաստմանը, կրակադիրք դրանց փոխանցմանը, լիցքավորմանը, նշանառմանը և հրաձգությանը մասնակցում են 10-14 տարբեր զինվորական մասնագետներ, հետևաբար հրետանավոր սպան մարտի կազմակերպման ժամանակ պետք է կարողանա հաշվի առնել իր ենթակաների անձնային առանձնահատկություններն ու մասնագիտական որակները և ըստ այդմ կազմավորել ներդաշնակ գործող կոլեկտիվ: ՈՒստի զարգացող է համարվում ուսուցման այն համակարգը, որն ապահովում է կառավարելու և ստեղծագործելու ունակությամբ օժտված մասնագետի պատրաստում:

ՀՀ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում ուսումնական գործընթացը կազմակերպելիս առաջնորդվում են հիմնավորականացման, անհատականացման և համակարգչայնացման սկզբունքներով:

Հիմնավորականացման սկզբունքը ենթադրում է մասնագիտական պատրաստման պրոֆիլի ընդլայնում՝ հիմնարար գիտությունների խորացված ուսումնասիրությամբ, ինչը հնարավորություն է տալիս սովորողների շրջանում ձևավորելու մասնագիտական լայն մտահորիզոն: Հրետանավորների մասնագիտական դասընթացի ամբողջ համակարգը կառուցվում է ֆիզիկամաթեմատիկական առարկաների հիմքի վրա: Ընդ որում, այդ առարկաների և դասավանդվող նյութի ընտրությունը կատարվում է դրանց փոխադարձ կապի ու կառուցվածքի հաշվառմամբ:

Հրետանային մասնագետի մասնագիտական որակը որոշվում է ընդհանուր գիտական, ինժեներական և մասնագիտական պատրաստության աստիճանով: Այդ պատճառով ներկայումս ուսուցման առավել ընդունելի սխեման լայն պրոֆիլի մասնագետների պատրաստումն է, մասնավորապես՝ հրետանավոր սպաները պետք է կարողանան շահագործել ՀՀ ԶՈՒ-ի զինանոցում գտնվող բոլոր տեսակի հրետանային համակարգերը, ընդսմին ուսուցման ընթացքում

հաշվի են առնվում նաև հետագայում նոր զինատեսակներով համալրմամբ պայմանավորված խնդիրները:

Անհատականացման սկզբունքով նախատեսվում է ուսումնառության ընթացքում հաշվի առնել տվյալ անձնավորության հոգեֆիզիոլոգիական ու այլ անձնային առանձնահատկությունները և ցուցաբերել անհատական մոտեցում: ՈՒստի կուրսանտների ուսուցման և դաստիարակության գործընթացը պետք է կազմակերպվի հոգեբանական մասնագիտական ընտրազատման արդյունքների հիման վրա, ինչը կնպաստի ուսուցման արդյունավետության մեծացմանը[4]:

Համակարգչայնացման սկզբունքը նախատեսում է ուսուցում նոր տեղեկատվական ու մեթոդական հիմքի վրա՝ ԷՀՄ-ի և այլ համակարգչային տեխնիկայի լայն կիրառմամբ: Հրետանու կրակի ճշգրտումը կախված է մի շարք գործոններից՝ մարտակարգի տարրերի տեղակապակցման, հետախուզական տվյալների, օդերևութաբանական ու բալիստիկական պայմանների որոշման եղանակներից և որպես վերջնական արդյունք՝ հրաձգության համար հաշվարկված տվյալների որոշման ճշգրտությունից ու արագությունից:

Հրաձգության համար տվյալների որոշումն առավելագույն ճշգրտությամբ և արագությամբ հնարավոր է միայն մասնագիտացված հաշվողական տեխնիկայի՝ համակարգիչների կիրառման դեպքում:

Համակարգչային տեխնիկան կիրառվում է նաև ժամանակակից հրետանային բարդ համակարգերի տեխնիկական վիճակը ստուգելու, մարտական կիրառմանը դրա պատրաստությունը որոշելու, տեղակապակցում կատարելու, տեղեկույթը հաղորդելու, ինչպես նաև հրանոթի նշանառման գործընթացը ավտոմատ եղանակով կատարելու համար: Հետևաբար՝ առանց համակարգչային տեխնիկայի կիրառության հնարավոր չէ պատկերացնել ժամանակակից ՍՌՏ-ների շահագործումը և ստորաբաժանումների կառավարումը:

ՀՀ ԶՈՒ-ում հրետանային մասնագիտական պատրաստման համակարգի արդիականացումը ենթադրում է.

1. ուսումնական ծրագրերի վերամշակման ժամանակ մեծապես հաշվի առնել ներկայիս տեղային պատերազմներում ու զինված բախումներում, այդ թվում և Արցախյան ազատամարտում, հրետանու մարտական կիրառման փորձը, ռազմական գործողությունների թատերաբեմի (ՌԳԹ) բնակլիմայական և աշխարհագրական առանձնահատկությունները և հավանական հակառակորդի՝ ձեռք բերվող ժամանակակից ՍՌՏ մարտավարատեխնիկական բնութագրերը,

2. կազմակերպել և անցկացնել բարձր կուրսի կուրսանտների և ունկնդիրների հետ դաշտային պայմաններում մարտավարական վարժանքներ՝ ներգրավելով զորքերից համապատասխան մասնագիտությամբ աչքի ընկած սպաների, ինչը կնպաստի առաջավոր փորձի տարածմանը,

3. ներդրել ժամանակակից չափանիշներին համապատասխանող պրոֆեսորադասախոսական կադրերի ընտրության համակարգ,

[4] Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Վ. Հ. Մարգարյան*, Պաշտպանական ոլորտում կադրերի հոգեբանական մասնագիտական ընտրազատման հարցի շուրջ: «ՀՔ», 2012, հմ. 3:

4. ներդրել զինվորական կադրերի պատրաստման՝ արտերկրի առաջավոր փորձը,

5. ատեստավորման կազմակերպման և անցկացման ժամանակակից համակարգի ներդրման միջոցով բարձրացնել գիտամանկավարժական կադրերի որակավորման մակարդակը,

6. ժամանակակից չափանիշներին համապատասխան կատարելագործել կուրսանտների ուսուցման և դաստիարակության մեթոդները՝ շեշտը դնելով ստեղծագործական վերաբերմունքի ձևավորման վրա,

7. պարբերաբար համալրել և թարմացնել մասնագիտական լսարանների նյութատեխնիկական բազան, առաջին հերթին՝ նորագույն հայրենական վարժասարքերով, և այլն:

Այսպիսով՝ հրետանավոր սպան պետք է իրեն դրսևորի որպես առաջավար, կարողանա ստեղծել արդյունավետ, սերտ համագործակցող թիմ, հոգատար լինի ենթակաների նկատմամբ, օժանդակի նրանց մասնագիտական աճին, մշտապես ուղղորդի նրանց, անձնակազմին սովորեցնի առանց խուճապի մատնվելու, դատողաբար ու հաշվենկատորեն գործել հանկարծակի ծագող ամենատարբեր պայմաններում և իրավիճակներում, ենթակաների համար լինի հեղինակություն, ձեռք բերի վերադասի վստահությունն ու հարգանքը, ունենա ռազմական, իրավական և հասարակական գիտելիքների անհրաժեշտ պաշար, նպաստի երիտասարդ սպաների մասնագիտական կայացմանն ու աճին:

ОСНОВНЫЕ ТЕНДЕНЦИИ МОДЕРНИЗАЦИИ СИСТЕМЫ АРТИЛЛЕРИЙСКОЙ ПРОФЕССИОНАЛЬНОЙ ПОДГОТОВКИ В ВООРУЖЕННЫХ СИЛАХ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

А. Е. БАГДАСАРЯН, полковник, начальник факультета артиллерии Военного института МО РА им. В. Саргсяна,

Г. А. КАРАПЕТЯН, полковник, начальник кафедры вооружения и эксплуатации факультета артиллерии Военного института МО РА им. В. Саргсяна

РЕЗЮМЕ

Подготовка профессиональных артиллерийских кадров младшего офицерского состава осуществляется на факультете артиллерии Военного института им. В. Саргсяна. В рамках реформирования всей системы военного образования при методологической поддержке группы экспертов из стран НАТО происходит модернизация учебного процесса и на факультете артиллерии. В частности, с учетом роли и способов применения артиллерии в современных локальных войнах и военных столкновениях, международного опыта подготовки специалистов в данной области, а также на основе анализа тенденций военно-технического развития уточняются и корректируются учебные программы с широким применением современных технологий, в том числе компьютерных тренажеров отечественного производства, совершенствуются методы обучения с целью подготовки квалифицированных специалистов-

офицеров, способных в экстремальных условиях максимально эффективно использовать тактико-технические возможности артиллерийского вооружения и техники, быстро и правильно ориентироваться при принятии решений в быстро меняющейся боевой обстановке и т. д.

В процессе профессиональной подготовки, кроме формирования профессионально важных качеств, особое внимание уделяется их подготовке к работе с личным составом. Для этого предусмотрено формирование у будущих офицеров прочных военно-педагогических знаний и навыков, позволяющих методически правильно определять индивидуально-психологические особенности подчиненных и их профессиональные качества с последующим формированием слаженно действующего коллектива.

MAJOR TRENDS OF MODERNIZING THE ARTILLERY PROFESSIONAL TRAINING IN THE ARMED FORCES OF THE REPUBLIC OF ARMENIA

A. E. BAGHDASARYAN, Colonel, Head of the Artillery Department, V. Sargsyan Military Institute, MOD, RA
G. A. KARAPETYAN, Colonel, Head of the Arms and Operation Chair of the Artillery Department, V. Sargsyan Military Institute, MOD, RA

SUMMARY

Training of professional artillery personnel of junior officers is performed at the Artillery Department of the V. Sargsyan Military Institute. As part of the reforms of the entire military education system with the methodological support of the NATO expert group the educational process at the Artillery Department also undergoes modernization. In particular, with regard to the role and methods of using artillery in modern local wars and armed conflicts, the international experience of training specialists in the field, and on the basis of trend analysis of military-technical development the training programs are being adjusted and revised with extensive use of modern technologies, including computer simulators of domestic production, training methods are being improved in order to train qualified specialist-officers capable of most effectively leveraging tactical and technical capabilities of artillery weapons and equipment under extreme conditions, acting quickly and correctly in decision-making in a rapidly changing combat environment, etc.

In the process of professional training, besides shaping professionally important qualities, special attention is paid to their preparation for work with the personnel. This is achieved through delivering stable military-pedagogical knowledge and skills to the future officers that will ensure methodically correct identification of individual-psychological characteristics of subordinates and their competencies and subsequent formation of cohesive personnel.

ՀՀ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԴԵՐԸ ՀՐԹԻՌԱՅԻՆ ԶՈՐՔԵՐԻ ԵՎ ՀՐԵՏԱՆՈՒ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ա. Հ. ԵՍԱՅԱՆ, ՔՀԾ 3-րդ դասի խորհրդական, ՀՀ ՊՆ Ռազմատեխնիկական ծառայության տեխնիկական բաժնի գլխավոր մասնագետ, Բ. Վ. ՈՍԿԱՆՅԱՆ, ՔՀԾ 2-րդ դասի առաջատար ծառայող, ՀՀ ՊՆ Ռազմատեխնիկական ծառայության տնտեսական բաժնի առաջատար մասնագետ

Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության գործում կարևոր դեր ու նշանակություն ունի ՀՀ ռազմական արդյունաբերության համալիրը (ՌԱՀ): ՌԱՀ-ը գիտական և արտադրական կազմակերպությունների մի համակարգ է, որն իրականացնում է ռազմական տեխնիկայի, սպառազինության, ռազմամթերքի և ռազմատեխնիկական միջոցների մշակման, արտադրության ու նորոգման պետական պատվերներ, որոնք պայմանավորված են ԶՈՒ-ի ներկայիս զարգացման պահանջմունքներով: ՈՒստի հանրապետության մարդկային և ֆինանսատնտեսական, այդ թվում՝ հումքային, ռեսուրսների սահմանափակության պայմաններում հույժ կարևոր է դառնում եղած ռեսուրսների ճիշտ կառավարումը, որի հիմնական գործիքը ռազմատեխնիկական քաղաքականությունն է: Այն մշակվում է ինչպես պաշտպանական կարիքների և խաղաղ ու պատերազմական ժամանակներում ԶՈՒ-ի խնդիրների, այնպես էլ հավանական հակառակորդի ռազմական ներուժի զարգացման հիմնական ուղղությունների և ընդհանրապես զինված պայքարի միջոցների ու եղանակների միտումների հաշվառմամբ:

ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանը նշել է. «Վերջին երկու տասնամյակում ի հայտ են եկել ռազմական պայքարի նոր միջոցներ, որոնցից են, մասնավորապես, գերճշգրիտ զենքերը: Դրանց և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիական բազայի վրա ստեղծված կառավարման, հետախուզման և նշանառման համակարգերի համատեղ օգտագործումը կտրուկ կերպով փոխում է ռազմական գործողությունների վարման ձևերն ու մեթոդները… Այսպիսի պատերազմներում հաղթանակի երաշխիք են հակառակորդի կառավարման տեղեկատվական համակարգերի նկատմամբ առավելություն ունեցող կառավարման բազմաֆունկցիոնալ համակարգերը և գերճշգրիտ զենքերը, որոնք ապահովում են հակառակորդի զորքերի խոցելի տարրերի արագ հայտնաբերումն ու դրանց նկատմամբ խոցող միջոցների անհապաղ կիրառումը: Այլ կերպ ասած՝ մոտ ապագայում պետությունների սպառազինությունների համակարգերի հզորությունը բնութագրվելու է հիմնականում ոչ թե դրանց քանակով, այլ որակական հատկանիշներով»[1]:

[1] *Ս. Մ. Օհանյան,* ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացումը որպես պաշտպանական բարեփոխումների առաջնային խնդիր: «ՀԲ», 2011, հմ. 3:

Ասվածը մեծապես վերաբերում է հրթիռահրետանային սպառազինությանը, որի կրակային հզորությունը, խոցման ճշգրտությունը, հեռահարությունը ժամանակակից պատերազմներում հաջողության հասնելու հիմնական գրավականներից են: Մասնավորապես՝ մեծ էր հրետանու դերը Լեռնային Ղարաբաղում և ՀՀ սահմանամերձ գոտում մղվող մարտերում: Այս կարևոր դրույթի գիտակցմամբ էլ ձևավորվում է ՀՀ ՊՆ ռազմատեխնիկական քաղաքականությունը հրթիռահրետանային սպառազինության ոլորտում: Այսօր ՀՀ ՊՆ նոր ռազմատեխնիկական քաղաքականությունը նպատակաուղղված է հակառակորդի կառավարման տեղեկատվական համակարգերի նկատմամբ առավելություն ունեցող կառավարման բազմաֆունկցիոնալ համակարգերի ու գերճշգրիտ զենքերի մշակմանը և սեղմ ժամկետներում դրանցով ԶՈՒ-ի համալրմանը, ինչի շնորհիվ կապահովվեն հակառակորդի զորքերի խոցելի տարրերի արագ հայտնաբերումն ու դրանց նկատմամբ խոցող միջոցների անհապաղ արդյունավետ կիրառումը:

Հրետանային զորքերի բարձր մարտական պատրաստության և մարտունակության ապահովման համար մեծ նշանակություն ունի հաստիքային ՍՌՏ մարտունակ վիճակում պահպանումը, ժամանակակից տեխնոլոգիաների զարգացմամբ ու գիտատեխնիկական առաջընթացով պայմանավորված ձեռքբերումների կիրառմամբ առկա տեխնիկայի արդիականացումը և փոխարինումը կատարելագործված տեխնիկական միջոցներով ու սարքերով:

Հրթիռային զորքերի և հրետանու հաստիքային ՍՌՏ և ռազմատեխնիկական գույքի ստեղծման, արտադրության, արդիականացման ու նորոգման աշխատանքները կատարվում են ՌԱՀ-ի ընկերություններում՝ պետական պատվերների միջոցով: Մասնավորապես՝

– նախագծվել և արտադրվել են դիվիզիոնի միասնական կառավարման հրետանային հետախուզական օպտիկաէլեկտրոնային համակարգեր, լազերային հեռաչափեր, ավտոմատացված թվային կողմնացույց-անկյունաչափեր (բուսոլներ), շրջադիտակներ, «Լույս» նմուշի լուսավորման սարքեր, որոնք արդեն ընդունված են զորքերի հաստիքային սպառազինության մեջ: Պետական պատվեր կատարող ձեռնարկություններում արտադրվում են հակատանկային կառավարվող հրթիռների «Լուսային խափանումների ցուցիչներ», ինչպես նաև հրետանու սպայի ռադիոֆիկացված պլանշետներ, որոնցով ապահովված են բոլոր հրետանային ստորաբաժանումները,

– ստեղծված շարժական լաբորատորիաների միջոցով զորամասերում և մարտական հերթապահության ստորաբաժանումներում պարբերաբար անցկացվում են արատորոշիչ աշխատանքներ. ստուգվում է հակատանկային կառավարվող հրթիռների աշխատունակությունը, կատարվում են արձակող կայանքների ստուգում, նորոգում և ճշգրտում,

– շարունակվում է դիվիզիոնի կառավարման համակարգի՝ դիվիզիոնի հրամանատարի, դիվիզիոնի շտաբի պետի, մարտկոցի հրամանատարի և մարտկոցի ավագ սպայի հրամանատարական մեքենաների արդիականացումը, դրանք համալրվում են ժամանակակից ՋՊՍ *(GPS)* սարքերով, կապի նորագույն համակարգերով և այլ միջոցներով: Ընդունիչ-հաղորդիչ սարքերը փոխարինվում

են համակարգիչներով: Կատարվում են հակատանկային կառավարվող հրթիռների («Ֆագոտ», «Շտուրմ-Ս», «Կոնկուրս», «Մետիս») և «Հրետանային համակարգչային հրաձգարաններ» վարժասարքերի նորոգման, արդիականացման ու զորքերում տեխնիկական սպասարկման աշխատանքներ: Աշխատանքներ են տարվում հրթիռային կայանքների հիդրոհամակարգերի արդիականացման ուղղությամբ,

– նորոգող ձեռնարկություններում կազմակերպվում են հրետանային հետախուզության միջոցների (ՄՆԱՌ-10, ԱԶԿ-7, ՄՌԿ-1, ԱՌԿ-1)՝ լազերային հեռաչափների, հրետանային կողմնացույց-անկյունաչափների, դեսանտային օդերևութաբանական կայանքների նորոգման աշխատանքներ: Նման աշխատանքներ են կատարվում նաև զորամասերում և ստորաբաժանումներում՝ շարժական նորոգող արհեստանոցների միջոցով: Ռազմաարդյունաբերական գործարաններում կատարվում են մարտավարական համակարգերի, օպերատիվ-մարտավարական հրթիռների նորոգման ու սպասարկման աշխատանքներ,

– բոլոր հրետանային միջոցների համար պատրաստվում են անհատական և խմբային պահեստամասեր ու գործիքներ՝ հրետանային համակարգերի փոխարինմամբ և համալրմամբ,

– պետական պատվերներ կատարող ընկերություններում և ռազմաարդյունաբերական ձեռնարկություններում կատարվել են գերմաքուր ազոտ գազ ստանալու գազաֆիկացման կայանի հավաքակցում և կարգաբերում, կատարվում է բարձր ճնշման (400 մթն) գերմաքուր ազոտ գազի գլանանոթների (բալոններ) լցավորում,

– օպտիկաէլեկտրոնային համակարգերի համար ընկերություններում աճեցվում են բարձր որակի լազերային բյուրեղներ, որոնք նաև մեծ պահանջարկ ունեն միջազգային շուկաներում:

Կատարված աշխատանքների շնորհիվ ստեղծվել է գիտաարտադրական բազա, որը հնարավորություն է տալիս մշակելու և ստեղծելու սկզբունքորեն նոր տեսակների ՍՌՏ՝ գերճշգրիտ, էլեկտրամագնիսական, տեղեկութային և մի շարք այլ տեսակների զենքեր, ինչը նպաստում է ՋՈՒ-ի ընդհանուր մարտունակության մեծացմանը:

Հրթիռային զորքերի և հրետանու զարգացումը, ինչպես նաև մարտունակությունն ապահովվում են հետախուզական-կրակային եզրագծերի ստեղծմամբ: Դա հնարավորություն է տալիս ժամանակային առումով ապահովելու նշանակետերի խոցումը, հրթիռային զորքերը և հրետանու զորամասերն ու ստորաբաժանումները զինելու գերճշգրիտ զենքով, մեծացնելու խոցման միջոցների հեռահարությունը, կրակի նախապատրաստման ու վարման ավտոմատացումը:

ՀՀ Զինված ուժերում տարեցտարի ընդլայնվում է ՍՌՏ նոր նմուշների ներդրումը, հրետանային ստորաբաժանումների տեխնիկական միջոցների ու սարքավորանքի փոխարինումը ժամանակակից նմուշներով: Հայաստանում նոր տեսակի ՍՌՏ կամ դրա կատարելագործված նմուշների մշակումն ու արտադրությունը ծրագրելիս կարևոր է ճիշտ հասկանալ ու գնահատել համապատաս-

խան համաշխարհային միտումները: Այդ նպատակով ուսումնասիրվում են առաջատար պետություններում այդ ոլորտում կատարվող մշակումները: Վերլուծությունը ցույց է տալիս, որ հրթիռահրետանային սպառազինության զարգացման առավել հեռանկարային ուղղություններն են.

– նոր սերնդի հրետանային բալիստիկական ռադիոտեղորոշումային կայանը, որը, արդյունավետության մեծացման համար, մասնավորապես, հնարավորություն է տալիս նշանառման ընթացքում չափելու և հաշվառելու կրակող համակարգերի արկերի (ականների) թռիչքի իրական սկզբնական արագության մեծությունը: ՈՒկրաինացի մասնագետներն ստեղծել են ռադիոտեղորոշումային համակարգի միջոցով արկերի (ականների) թռիչքի սկզբնական արագության մեծության չափման նոր եղանակ՝ հիմնված դոպլերյան մեթոդի վրա: Ստեղծված նոր սերնդի հրետանային բալիստիկական կայանը, որի սարքավորանքը պատրաստված է նոր ներդրված ռադիոէլեկտրոնային տեխնոլոգիայով, փորձարկման ժամանակ ցույց է տվել մեծ արդյունավետություն: Ըստ էության, տեխնիկատնտեսական ցուցանիշներով այն կարելի է տեղադրել ցանկացած հրետանային համակարգի վրա, կամ էլ կարող է կիրառվել ինքնավար եղանակով,

– հրետանային հետախուզության «Արթուր» համակարգը, որը ժամանակակից շարժական միջոց է՝ նախատեսված հակառակորդի կրակ վարող հրետանային միջոցները հայտնաբերելու համար: Այն ցամաքային ռադիոտեղորոշումային համակարգ է, որը որոնում է թռչող հրետանային արկերը, մի քանի վայրկյանում կառուցում է դրանց հետագիծը, և դրա հիման վրա ստացված տվյալներով հայտնաբերում արկի արձակման վայրը՝ կրակող հրետանային միջոցի դիրքը: «Արթուր» համակարգը կարող է հայտնաբերել նաև ականանետային և նռնականետային ստորաբաժանումների դիրքերը:

Այսօր զարգացած պետությունների սպառազինությունը համալրում են՝

– արդիականացված 152-մմ «ՄՍՏԱ-Ս» ավտոմատ հրետանային կայանքը, որը համալրված է ավտոմատացված կառավարման համակարգով և նշանառման սարքերով,

– 1Լ219 «Զոոպարկ» հրետանային հետախուզական ռադիոտեղորոշումային համալիրը, որը նախատեսված է հակառակորդի կրակային դիրքերի (ականանետների, հրետանու, համազարկային կրակի հրթիռային համակարգերի և մարտավարական հրթիռների) կոորդինատները կրակոցով (արձակումով) որոշելու, յուրային հակազդող միջոցներին նշանացուցում տալու և հրաձգության արդյունքները վերահսկելու համար: Ապահովում է մեկ րոպեում մինչև 70 կրակային դիրքի միաժամանակյա հայտնաբերման, մինչև արկի ընկնելու պահը (համազարկից 20 վրկ հետո) կրակային դիրքի կոորդինատների հաղորդման, կառավարման հրամանատվական կետերի հետ տեղեկույթի ավտոմատացված փոխանակման խնդիրների կատարում: ՈՒՆի մոդուլային կառուցվածք, ռադիոէլեկտրոնային խանգարումների նկատմամբ կայուն է:

Մի շարք պետությունների զինված ուժերը մոտ ապագայում կհամալրվեն համազարկային կրակի հրթիռային համակարգերի («Սմերչ», «ՈՒրագան»,

«Գրադ») նոր՝ արդիականացված, փոփոխակներով, որոնք կունենան ավելի մեծ ճշգրտություն, արդյունավետություն և հեռահարություն: Կատարելագործվում են նաև հրետանային հետախուզության միջոցները, ստեղծվում նորերը՝ ռադիոտեղորոշումային («Կրեդո-1», «Աիստյոնոկ», «Զոոպարկ-1Մ»), ձայնային (ԱԶԿ-7Մ), օպտիկաէլեկտրոնային (ՊՈՊ-4Ա) և օդային հրետանային «Տիպչակ» միջոցներ, որոնք ունեն հետախուզության և ստացվող տեղեկույթի մշակման ժամանակակից սարքեր և հնարավորություն են տալիս մեծացնելու հետախուզության հեռավորությունը և բարձրացնելու հրաձգության սպասարկման որակը: Դրանք կատարում են նշանակետերի ուղեկցում և կոորդինատների ավտոմատ ստացում, ապահովում են հետախուզական տեղեկույթի ավտոմատացված հաղորդումը խոցման միջոցներին:

Ոխսումնասիրելով արտասահմանյան երկրների զինված ուժերի համալրվածությունը ժամանակակից սպառազինությամբ, հագեցվածությունը կատարելագործված նորագույն միջոցներով և դրանց կառավարման համակարգերը, հաշվի առնելով ժամանակակից սպառազինության զարգացման միտումները, աշխարհագրական և այլ կարգի գործոնները՝ նպատակահարմար ենք համարում ՀՀ Զինված ուժերի սպառազինությունը ամբողջությամբ համալրել ժամանակակից կառավարման ավտոմատացված համակարգերով, հրթիռային զորքերի և հրետանու պետի՝ կառավարման ավտոմատացված, հրետանային դիվիզիոնների կրակի կառավարման ավտոմատացված, ինչպես նաև փոքրածավալ, դյուրակիր ականանետային մարտկոցների կառավարման համալիրներով, որոնք միացված լինեն զինված ուժերի կառավարման ընդհանուր համակարգին: Այս համալիրներն զգալիորեն կնվազեցնեն կառավարման փուլի և տվյալների մշակման տևողությունը:

Կառավարման ավտոմատացված համակարգի միջոցով կարելի է ապահովել հրետանային ստորաբաժանումների խնդիրների կատարումը միասնական հետախուզատեղեկատվական տարածությունում, ինչը հնարավորություն կտա տարբեր հետախուզական միջոցներից, ինչպես նաև անօդաչու թռչող ապարատներից ժամանակին ստանալու տվյալներ:

Տեխնիկական նորամուծությունները հնարավորություն են տալիս ձևավորելու ռադիոտեղորոշման, հետախուզման, դիտարկման, կառավարման համակարգերի, նշանառման և ինքնանշանառման խոցման միջոցների նկատմամբ նոր մոտեցումներ, որոնց տրամաբանական շարունակությունն է ռոբոտացված համակարգերի ստեղծումն ու մարտի դաշտում կիրառումը: Այդ նպատակն իրագործելու նկատառումներով պաշտպանության նախարարությունը սերտորեն համագործակցում է ՀՀ-ում գործող բարձր տեղեկատվական տեխնոլոգիաներով մշակումներ առաջարկող կազմակերպությունների հետ: Բավական է նշել, որ Հայաստանը օպտիկաէլեկտրոնիկայի բնագավառում զբաղեցնում է աշխարհում ոչ հետնապահի դիրք:

Այսպիսով՝ տվյալ ոլորտի հետագա զարգացումը պետք է հիմնված լինի միջազգային փորձի վերլուծության, ռազմատեխնիկական համագործակցության և գիտականության սկզբունքների վրա:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4:

2. *Մ. Ռ. Իսախանյան, Ա. Պ. Պետրոսյան,* ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացմանն ուղղված հիմնական միջոցառումները պաշտպանական բարեփոխումների շրջանակում: «ՀՔ», 2011, հմ. 3:

3. *Վ. Ա. Հայրապետյան,* Հրետանու մարտական կիրառումը տեղային պատերազմներում: «ՀՔ», 1999, հմ. 2:

4. *В. В. Меньщиков*. Оборонно-промышленный комплекс: состояние, проблемы, перспективы. «Военная мысль», 2006, N 12.

РОЛЬ ВОЕННО-ПРОМЫШЛЕННОГО КОМПЛЕКСА РА В ДЕЛЕ ТЕХНИЧЕСКОГО РАЗВИТИЯ РАКЕТНЫХ ВОЙСК И АРТИЛЛЕРИИ

А. А. ЕСАЯН, советник 3-ого класса СГС, главный специалист технического отдела военно-технической службы МО РА,
Б. В. ВОСКАНЯН, ведущий служащий 2-ого класса СГС, главный специалист экономического отдела военно-технической службы МО РА

РЕЗЮМЕ

В настоящее время ВПК в РА развивается в нескольких основных направлениях: поддержание в боеспособном состоянии наличествующих артиллерийских ВВТ, модернизация систем их управления в целях обеспечения эффективного поражения целей, а также разработка и производство новых. В частности, созданы достаточные информационная производственная базы на основе высоких технологий и позволяющие осваивать, проектировать и производить артиллерийские разведывательные оптико-электронные совместно управляемые комплексы дивизиона, лазерные дальномеры, автоматизированные цифровые буссоли, перископы, осветительные приборы военного назначения, а также современную продукцию гражданского назначения.

Технические инновации позволяют формировать новые подходы к разработке систем разведки, радиолокации, наблюдения, управления, наведения и самонаведения. Создаются условия для применения на поле боя роботизированных систем. Исходя из этих целей соответствующие структуры Министерства обороны тесно сотрудничают с действующими на территории РА предприятиями, осуществляющими разработки в области информационных и высоких технологий.

THE ROLE OF THE RA MILITARY-INDUSTRIAL COMPLEX FOR TECHNICAL DEVELOPMENT OF THE ROCKET FORCES AND ARTILLERY

A. A. YESAYAN, 3rd Class Advisor of Special Civil Service, Chief Specialist of Technical Branch of Military-Technical Service, MOD, RA
B. V. VOSKANYAN, 2nd Class Senior Official of Special Civil Service, Key Specialist of Economic Branch of Military Technical Service, MOD, RA

SUMMARY

At present, the Military-Industrial Complex in the Republic of Armenia is developing in several mainstreams: maintenance of combat-readiness of the present artillery weapons and equipment, modernization of their control systems aimed at efficient target destruction as well as the design and manufacture of new ones. In particular, sufficient information and manufacturing capabilities are created on the basis of high-tech allowing us to develop, design and manufacture artillery reconnaissance optoelectronic co-managed complexes of division, laser rangefinders, automated digital compasses, periscopes, illuminating defense equipment, as well as up-to-date civilian products.

Technical innovations allow adopting new approaches to the development of the systems of reconnaissance, radar, surveillance, control, guidance and homing. Conditions are created for using robotized systems on the battlefield. In these terms, the relevant structures of the Ministry of Defense are closely working with the active businesses in the RA which implement elaborations in the field of information and high technology.

9Կ72 «ԷԼԲՐՈՒՍ» *(«SCUD-B»)* ՕՊԵՐԱՏԻՎ ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ՀՐԹԻՌԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ

Մ. Օ. ԲԱԲԱՋԱՆՅԱՆ, գնդապետ,
ՀՀ ՋՈՒ-ի ԳՇ օպերատիվ վարչության ուղղության խմբի պետի տեղակալ

Օպերատիվ-մարտավարական հրթիռային «Էլբրուս» համալիրը, որը կիրառվում է 8Կ14Մ-1 տեսակի բալիստիկական հրթիռների 8Ֆ44Մ-1 մարտական մասերով, նախանշանակված է կենդանի ուժի, կառավարման կետերի, օդանավակայանների և հակառակորդի այլ կարևոր օբյեկտների խոցման համար: Այն ունի 50-300 կմ հեռահարություն: Թեև հրթիռային համալիրը համարվում է բարոյապես հնացած, սակայն ապացուցել է իր հուսալիությունը ամբողջ աշխարհում:

Համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով նույնիսկ գերտերությունները գործնականում հրաժարվեցին տեխնիկական պիտանիության ժամկետները լրացած կամ հնացած սպառազինությունը շահագործումից հանելուց և նորերով փոխարինելուց՝ նախընտրելով արդիականացնել եղածը:

Ըստ այդմ՝ թեև 1980-ական թվականների վերջերից «Էլբրուսի» համալրող մասեր չեն թողարկվում, սակայն համալիրի շահագործման ընթացքում բազմիցս կատարվել են հրթիռների և մարտական մասերի կարգորոշված, ինչպես նաև 9Պ117Մ արձակման կայանքների հատուկ մասի արդիականացման ծավալուն աշխատանքներ:

Հրթիռային համալիրի կառավարման համակարգի արդիականացումը հնարավորություն տվեց կրճատելու ժամանակային ցուցանիշները, մեծացնելու կարգորոշված ու տեխնիկական սպասարկման աշխատանքների արդյունավետությունը և վերը նշված սպառազինության շահագործման ժամկետները երկարաձգելու նվազագույնը մեկ տարով՝ մինչև հաջորդ կարգորոշված և տեխնիկական սպասարկման աշխատանքները:

Կարգորոշված և տեխնիկական սպասարկման աշխատանքները ավելի ճշգրիտ և սեղմ ժամկետներում կատարելու համար մեր մասնագետներն ստեղծել են համապատասխան համակարգչային սարքավորանք, որով փոխարինել են խորհրդային տարիներին հրթիռային համալիրի կառավարման համակարգի և սարքավորումների սպասարկման հսկայական բազան: Դա հնարավորություն տվեց սպասարկման աշխատանքները կատարելու դաշտային պայմաններում՝ անկախ եղանակային պայմաններից:

Նշանակետի կոորդինատներն ստանալուց հետո հրթիռի արձակման համար հաշվարկները կատարվում էին հաշվիչ մեքենայով, որը տեղակայված էր ԶԻԼ-131 ավտոմեքենայի թափքում: Հրթիռի թռիչքի տվյալները որոշվում էին ՏՌ-550 աղյուսակով՝ ճշգրտիչ գրաֆիկական սարքի միջոցով, ինչի հետևանքով հաշվարկների համար պահանջվում էր զգալի ժամանակ: Տեխնիկական միջոցների արդիականացման շնորհիվ հաշվիչ մեքենան

փոխարինվել է համակարգչով, որը հաշվարկները կատարում է վայրկյանների ընթացքում: Հատուկ ծրագրի միջոցով (ՏՈ-550-ի տվյալները մուտքագրվում են համակարգչի մեջ) հաշվարկների ճշգրտությունը ևս բարելավվել է:

Արդիականացվել են նաև հրթիռների մարտագլխիկների կարգորոշված աշխատանքների կատարման սարքերը: Դա նույնպես հնարավորություն է տալիս ավելի ճշգրիտ կերպով որոշելու մարտագլխիկների պիտանիության աստիճանը, հրթիռի ինքնաոչնչացման համակարգի կապը հրթիռի էլեկտրական համակարգի հետ և դրանց աշխատունակության աստիճանը:



Արդիականացման աշխատանքների շնորհիվ հրթիռային համալիրը ընդհանուր առմամբ ձեռք է բերել մի շարք առավելություններ. առաջին՝ կրճատվել է հրթիռների նախապատրաստման և արձակման ժամանակը, երկրորդ՝ մեծացվել է խոցման ճշգրտությունը:

Հարկ է նշել, որ համալիրն ունի նաև բացասական կողմեր: Մասնավորապես՝ ժամանակակից հակաօդային պաշտպանության միջոցները ունակ են որսալու հրթիռը: Մեր մասնագետները համապատասխան աշխատանքներ են տանում այդ թերությունները վերացնելու և համալիրը ՀՕՊ-ի միջոցների համար անորսալի դարձնելու ուղղությամբ:

ПРИМЕНЕНИЕ ОПЕРАТИВНО-ТАКТИЧЕСКОГО РАКЕТНОГО КОПЛЕКСА 9К72 «ЭЛЬБРУС» («SCUD-B») С ИСПОЛЬЗОВАНИЕМ СОВРЕМЕННЫХ ТЕХНОЛОГИЙ

М. О. БАБАДЖАНЯН, полковник, заместитель начальника группы направления Оперативного управления ГШ ВС РА

РЕЗЮМЕ

В конце 80-ых годов ракеты и комплектующие армейского оперативно-тактического ракетного комплекса советского производства 9К72 «Scud-B» сняты с производства в связи с тем, что этот комплекс является довольно громоздкой и морально устаревшей. Однако с учетом того, что данный комплекс с ракетой 8К14-1 является достаточно надежным, он в настоящее время находится на вооружении и входит в состав ракетной группировки ВС РА. Комплекс был неоднократно модернизирован. Как в плане компьютеризации вычислительной системы комплекса, так и тех приборов, по которым осуществляются регламентные работы с улучшением качественных характеристик приведения комплекса в высшие степени готовности. Работа специалистов, по модернизации армейского

оперативно-тактического ракетного комплекса 9К72 «Scud-B» позволила существенно повысить эффективность поражения цели, а также сократить время на подготовку и пуск ракет.

THE APPLICATION OF THE TACTICAL BALLISTIC MISSILE SYSTEM 9K72 «ELBRUS» («SCUD-B») WITH THE USE OF MODERN TECHNOLOGIES

M. O. BABAJANYAN, Colonel, Deputy Chief of the Line Group of the Operative Department in the Main Staff, RA AF

SUMMARY

In late 80-s the missiles and the components of the Soviet production 9K72 «Scud-B» army tactical ballistic missile system were laid off production on the grounds that the system is rather cumbersome and obsolete. However, with the account of the above-mentioned system operating quite reliably with 8K14-1 missile, at this moment it is in service and is part of the missile grouping of the RA AF. The system has been upgraded more and once both in terms of computerization of its operating system, and also the apparatus, by which the maintenance work is carried out. It has evidenced improvements in the quality indicators of bringing the system to the highest levels of readiness. The experts work on modernization of the 9K72 «Scud-B» army tactical ballistic missile system enabled to seriously increase the efficiency of target engagement, as well as to reduce the time for the rockets preparation and launch.

ՂԵԿԱՎԱՐՎՈՂ ԹՌՉՈՂ ՍԱՐՔԵՐ ԵՎ ԴՐԱՆՑ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՀԱՍԱԿԱՐԳԵՐԻ ԴԻՆԱՄԻԿ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Վ. Ռ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ևախագահության սփյուռքի բաժնի պետ, ԵՊՀ պրոֆեսոր

1. Թռչող սարքեր և դրանց նշանակությունը

Թռչող սարքեր են անվանում Երկրի մթնոլորտում կամ տիեզերական տարածությունում թռչելու համար նախատեսված սարքերը: Այն թռչող սարքերը, որոնց թռիչքները իրականացվում են առանց անձնակազմի (օդաչուի), անվանում են անօդաչու թռչող սարքեր (ԱԹՍ): Դրանք լինում են չղեկավարվող և ղեկավարվող[*]: Ղեկավարվող ԱԹՍ-ները լինում են ավտոմատ ղեկավարվող (կամ ինքնաղեկավարվող) և հեռաղեկավարվող: Կարևոր նշանակություն ունի ԱԹՍ-ի օգտագործումը ռազմական նպատակներով: Ղեկավարվող թռչող սարքերը որպես զենքի տեսակներ բազմազան են և տարբերվում են իրենց նախանշանակմամբ:

Ներկայումս ԱԹՍ-ները օգտագործվում են ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական ոլորտի խնդիրների լուծման համար: ԱԹՍ-ները լինում են միանգամյա և բազմակի օգտագործման:

Բացի հրթիռահրետանային համալիրներում օգտագործվող տարբեր բնույթի հրթիռներից՝ բալիստիկական, թևավոր, զենիթային, հրետանային, ավիացիոն և այլն, ԱԹՍ-ները կարող են օգտագործվել սահմանային շրջաններում իրավիճակի վերահսկման, ռազմական հերթապահության երթուղիների և ռազմական օբյեկտների դիտման, ռադիոկապի վերահաղորդման, արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման և ուժերի համապատասխան ուղղորդման համար, գյուղատնտեսության բնագավառում և այլ նպատակներով:

Ելնելով աշխարհում ժամանակակից թռչող սարքերի (անօդաչու ղեկավարվող թռչող սարքերի) արագ տարածման հանգամանքից՝ ԱՄՆ-ի տեղեկատվության պաշտպանության կենտրոնի փորձագետները 21-րդ դարի անվտանգության ռազմավարության վերաբերյալ հայտարարել են, որ կան երկու տեխնոլոգիաներ, որոնք ունեն բազում նոր հնարավորություններ, դրանք են ղեկավարվող թռչող սարքերը և տիեզերական ուղեծրային սարքերը: Հիմնականում հետախուզման և դիտման համար նախատեսված նման թռչող սարքերը կարող են արագ վերափոխվել օդային ռազմական միջոցների:

Թռչող սարքերի ստեղծման և մշակման ժամանակաշրջանում պատրաստվել է տարբեր նախանշանակման և կառուցվածքի շուրջ 300 տեսակի սարք [1]:

Ներկայումս մեր տարածաշրջանում օգտագործվում են անօդաչու ղեկավարվող թռչող սարքեր՝ հակառակորդի պաշտպանության ուսումնասիրության,

[*] Հոդվածում օգտագործված «ղեկավարում» տերմինը համարժեք է պաշտպանական ոլորտում և մեր հանդեսում գործածվող «կառավարում» տերմինին: – *Խմբ.*:

ռազմավարական օբյեկտների հետախուզման համար: Ադրբեջանը ԱԹՍ-ներ ձեռք է բերում Իսրայելից, իսկ Հայաստանն արդեն ստեղծել է անօդաչու ղեկավարվող թռչող սարքերի իր արտադրությունը, որն ունի զարգացման լուրջ հեռանկարներ:

2. Թռչող սարքերի զարգացման հեռանկարը

Տարբեր երկրներում ստեղծված ղեկավարվող թռչող սարքերը տարբերվում են ինչպես իրենց կառուցվածքով, այնպես էլ մարտավարաթռիչքային հնարավորություններով և նախատեսված են հիմնականում ռազմական բնույթի տարբեր խնդիրների լուծման համար:

Ղեկավարվող թռչող սարքերի նոր տեսակների նմուշներն անընդհատ ներկայացվում են ցուցահանդեսներում, հրապարակայնորեն լուսաբանվում են, դրանց մարտավարաթռիչքային բնութագրերի զարգացմանն ուղղված նոր մոտեցումները հաճախակի քննարկվում են միջազգային գիտաժողովներում:

Նշենք, որ 2003 թ. տվյալներով տարբեր պետությունների ՋՈՒ-ի սպառազինության մեջ կային 62 տեսակի ԱԹՍ-ներ [1]:

Միանգամյա օգտագործման ԱԹՍ-ների զարգացման հեռանկարներն են՝ նշանակետի խոցման ճշգրտության և թռիչքի հեռավորության մեծացումը, շարժումը գերձայնային արագությամբ, հակաօդային և հակահրթիռային պաշտպանության համակարգերի մեծ հավանականությամբ հաղթահարման ապահովումը, թռիչքի ընթացքում թռիչքային տվյալների ճշգրտումների հնարավորությունը, թռիչքի ընթացքում հետախուզության կատարումը, և այլն:

Բազմակի օգտագործման ԱԹՍ-ների զարգացման հեռանկարներն են՝ հուսալիության ու դիմացկունության (կենսունակության), թռիչքի հեռավորության մեծացումը, թռիչքատեխնիկական և տնտեսական ցուցանիշների մեծացումը, համալիր հետախուզության կատարումը, իրական ժամանակում տվյալների հաղորդման հնարավորությունը, և այլն:

Հաշվի առնելով անօդաչու թռչող սարքերի նկատմամբ աճող հետաքրքրությունը՝ կարող ենք եզրակացնել, որ դրանք ռազմական շուկայում կունենան մեծ պահանջարկ, որն ըստ էության նոր է սկսել ձևավորվել և ունի ընդլայնման մեծ հեռանկար: Այս առումով Հայաստանն ունի նախադրյալներ, որ նշանակալից դեր ունենա տվյալ ոլորտում:

20-րդ դարի վերջի և 21-րդ դարի սկզբի ռազմական հակամարտություններում տեխնոլոգիապես զարգացած պետությունները պատերազմական գործողությունների հիմնական խնդիրը լուծել են բարձր ճշգրտությամբ զենքի կիրառման միջոցով: Ներկայումս բարձր ճշգրտությամբ զենքը դարձել է սպառազինության զարգացման կարևոր ուղղություններից մեկը: Բարձր ճշգրտությամբ զենքի կիրառման շնորհիվ հակառակորդի կրակային խոցման արդյունավետությունը հասել է մինչև 60-90 %-ի [1]:

Անօդաչու թռչող սարքերը համարվում են բարձր ճշգրտությամբ զենքի տեսակ: Կարելի է պնդել, որ բարձր ճշգրտությամբ զենքին է պատկանելու

գլխավոր դերը 21-րդ դարի սպառազինությունների ռազմական հակամարտություններում:

Պետք է նշել, որ թռչող սարքերը որպես թիրախներ անհրաժեշտ են նաև զինվորական օդաչուների պատրաստելու համար: ԱԹՍ-ներն օգտագործվում են նաև հակառակորդի հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) միջոցների դեմ պայքարելու համար և կոչվում են նաև «ծուղակ-ԱԹՍ-ներ»: Նման ԱԹՍ-ների մի խումբ էլ ստացել է «հակառադիոտեղորոշումային ԱԹՍ-ներ» անվանումը [2]:

Ռազմագիտական և գիտատեխնիկական գրականության մեջ լայնորեն լուսաբանվում են թռչող սարքերի, անօդաչու «ծուղակ-ԱԹՍ-ների», օդային նշանակետերի նմանարկիչների մշակման և օգտագործման հարցերը:

Իհարկե, պատերազմի դաշտում ԱԹՍ-ները չեն կարող լիովին փոխարինել օդաչուի կողմից ղեկավարվող թռչող սարքերը: Սակայն դրանք կարող են օգտագործվել բազմաթիվ խնդիրների լուծման համար, որոնք օդաչուի կյանքի համար վտանգ են ներկայացնում, կամ այն դեպքում, երբ «սև գործի» կատարման համար նպատակահարմար չէ օգտագործել օդաչուի կողմից ղեկավարվող ինքնաթիռներ:

Աշխարհում ԱԹՍ-ների մշակման և արտադրության առաջատարը ԱՄՆ-ն է: Միևնույն ժամանակ, 2012 թ. ամերիկացի գիտնականները (Տեխասի համալսարան) ապացուցել են, որ գործնականում հնարավոր է «կոտրել» հեռաղեկավարվող ԱԹՍ-ների ղեկավարման համակարգը և «տիրանալ» դրան: Սակայն գիտնականները նաև նշել են, որ դա հնարավոր է անել միայն այն սարքերի դեպքում, որոնց ղեկավարման համակարգում օգտագործվում են ոչ ծածկագրված ազդանշաններ:

3. Տրված դինամիկական հատկություններով թռչող սարքի ղեկավարման համակարգի նախագծման խնդիրները

3.1 Թռչող սարքի շարժման ղեկավարման հիմնական սկզբունքները և բաղադրիչները: Մթնոլորտում շարժվող թռչող սարքի վրա ընդհանուր դեպքում ազդում են շարժիչի քարշի, աերոդինամիկական և ծանրության ուժերը: Թռչող սարքի թռիչքի հետագծի վրա ազդելու համար անհրաժեշտ է փոփոխել այդ ուժերի համազորի մեծությունը և ուղղությունը: Գործնականում դա կարելի է անել՝ փոփոխելով քարշի և աերոդինամիկական ուժերի համազորները, որոնք ընդունված է անվանել ղեկավարող ուժեր:

Ղեկավարող ուժը կարելի է տրոհել երկու բաղադրիչի՝ տանգենցիալ՝ ուղղված թռիչքի արագության վեկտորի երկայնքով, և նորմալ, որն ուղղահայաց է այդ վեկտորին: Թռիչքի արագության մեծության վրա ազդելու համար պետք է փոփոխել տանգենցիալ բաղադրիչը՝ փոփոխելով շարժիչի քարշի կամ թռչող սարքի ճակատային դիմադրության ուժը: Թռիչքի ուղղությունը փոփոխելու համար պետք է թռչող սարքի վրա կիրառել նորմալ ղեկավարող ուժ:

Թռչող սարքի շարժման ավտոմատ ղեկավարման համակարգը ընդհանուր

դեպքում բաղկացած է կայունացման, նշանառման և արագության ղեկավարման համակարգերից [3]:

Կայունացման համակարգը թռչող սարքում տեղադրված այն սարքավորանքի (ներառյալ՝ ԹՍ) համախումբն է, որն ապահովում է պահանջվող անկյունային դիրքը կամ ԹՍ շարժումը՝ որոշված անկյունով:

Սովորաբար տարաշարժի հնարավորություն ունեցող ԱԹՍ-ն կայունացվում է կոորդինատային առանցքների երեք ուղղություններով:

Նշանառման համակարգը թռչող սարքի զանգվածների կենտրոնի համար պահանջվող շարժման օրենքն առաջացնող և նորմալ ղեկավարող ԹՍ շարժումն ապահովող սարքավորանքի համախումբն է: Այլ խոսքով՝ նշանառման համակարգը կարելի է սահմանել որպես նորմալ ղեկավարող ուժերի փոփոխմամբ ԹՍ զանգվածների կենտրոնի շարժման ղեկավարման համակարգ:

Նշանառման համակարգը սովորաբար կատարում է հետևյալ գործառույթները.

– ստանում ու մշակում է թռչող սարքի և նշանակետի շարժումների վերաբերյալ տվյալները, ինչի հիման վրա մշակում է նշանառման ազդանշանները,

– նշանառման ազդանշանները հաղորդում է թռչող սարքին (եթե առաջին գործողությունը կատարող սարքերը ԹՍ-ում չեն տեղադրված),

– նշանառման ազդանշանները վերափոխում է նորմալ ղեկավարող ուժերի ազդեցության:

Արագության ղեկավարման համակարգը թռչող սարքի արագության փոփոխման ցանկալի օրենքը (ղեկավարվող տանգենցիալ ուժերի համապատասխան փոփոխությամբ) ապահովող սարքավորումների համախումբն է: Քանի որ շարժվող նշանակետին թռչող սարքի նշանառման մի շարք խնդիրների լուծման համար արագության ղեկավարում չի պահանջվում, ապա այդ համակարգը, որպես կանոն, ներառված չէ թռչող սարքի թռիչքի ղեկավարման համակարգում:

Թռչող սարքի շարժման ղեկավարման համակարգերը սովորաբար դասակարգվում են ըստ նշանառման համակարգերի տեսակների, որոնք իրենց գործունեության սկզբունքով էապես տարբերվում են մեկը մյուսից:

3.2 Թռչող սարքի դինամիկայի և ինքնանշանառման համակարգի առանձնահատկությունները: Թռչող սարքի թռիչքը դիտարկվում է որպես տարածության մեջ պինդ մարմնի շարժում, որն ունի ազատության վեց աստիճան: Այն դեպքում, երբ թռչող սարքի կառուցվածքում անհրաժեշտ է լինում դիտարկել նրա ձևախախտումները, հաշվի են առնվում նաև դրանցով պայմանավորված հատկությունները:

Թռչող սարքի շարժումը նկարագրվում է նրա զանգվածների կենտրոնի շարժման և զանգվածների կենտրոնի նկատմամբ նրա պտտական շարժման (դինամիկական և կինեմատիկական) հավասարումներով [3, 4]: Նշանառման համակարգի առկայության դեպքում նաև ավելանում են նշանակետին նշանառման պայմանները: Այդ հավասարումները հիմնականում ոչ գծային են:

Ղեկավարվող թռիչքի դինամիկայի անմիջական ձևավորումն ու ուսումնասիրումը այդպիսի ոչ գծային հավասարումներով շատ բարդ է և համարվում է ոչ ռացիոնալ: Սովորաբար թռչող սարքի շարժման ուսումնասիրման համար նրա թռիչքը նկարագրող հավասարումները նախապես պարզեցվում են: Ոչ գծային հավասարումների պարզեցման մի ձև է որևէ չգրգռված շարժման շուրջը շարժման պայմանների փոքր շեղումների նկատմամբ գծայնացումը:

Թռչող սարքի՝ շարժվող նշանակետին նշանառման, կամ դրա հետապնդման խնդիրը ունի մի շարք առանձնահատկություններ [3, 4], որոնցից հիմնականներն են.

1) խնդիրը ունի տերմինալ բնույթ, այսինքն՝ վերջավոր ժամանակում պահանջվում է ապահովել վիճակի համար որոշակի պայմաններ, այն է՝ անհրաժեշտ է ժամանակի նույն պահի համար համատեղել թռչող սարքի (հրթիռի) և նշանակետի տարածական կոորդինատները:

2) Խնդիրը կապված է նշանակետի շարժման վարքի մոդելի ձևավորման հետ: Որպես կանոն, նշանառման մեթոդում ընդունվում է, որ նշանակետը տարաշարժուն չէ: Այդ պատճառով տարաշարժի հնարավորության առկայության դեպքում առաջացող հարցերը հետազոտվում են արդեն կառուցված ղեկավարման համակարգի վերլուծության փուլում:

3) Ղեկավարման իներցիալ համակարգի և ինքնանշանառման ավանդական մեթոդների միաժամանակյա կիրառումը հանգեցնում է տարբեր կոորդինատային համակարգերի միաժամանակյա օգտագործման անհրաժեշտության:

4) Անհրաժեշտ է հաշվի առնել ակտիվ նշանակետի կողմից հնարավոր հակազդեցության ինչպես կանխամտածված, այնպես էլ ոչ կանխամտածված դեպքերը:

Այս հարցերը պահանջում են հատուկ քննարկում: Սակայն ղեկավարման համակարգի դինամիկական հատկությունների փոփոխության տեսանկյունից ուշադրություն պետք է դարձնել երկու հիմնական հարցի վրա:

Նախ. անհրաժեշտ է հաշվի առնել, որ նշանառության ընթացքում հնարավոր է կորցնել նշանակետի մասին ստացվող տեղեկությունների մի մասը կամ ամբողջ տեղեկույթը: Երկրորդ. անհրաժեշտ է հաշվի առնել նշանակետի մասին խաբուսիկ (հատուկ նմանարկումային աղմուկների միջոցով ստեղծված) տեղեկությունների առկայության հնարավորությունը, ընդ որում, դրանց հայտնաբերումը է՛լ ավելի բարդ խնդիր է:

Այսպիսով՝ ձևակերպված առանձնահատկությունները հիմք են տալիս եզրակացնելու, որ թռչող սարքերի ինքնանշանառման համակարգի դինամիկ նախագծման խնդիրը անհրաժեշտ է հետազոտել և լուծել ղեկավարման մաթեմատիկական տեսության ժամանակակից մեթոդներով, և այն պետք է հիմնված լինի չափիչ սարքերում տեղեկութային հոսքերի վերլուծության վրա:

3.3 Թռչող սարքի ինքնաճշանառման համակարգի ձևավորումը: Թռչող սարքի ինքնաճշանառման համակարգի նախագծման հիմնական խնդիրը նրա ղեկավարող ազդեցության ֆունկցիայի ստացումն ու ղեկավարման համակարգի ձևավորումն է:

Ինքնաճշանառման ժամանակակից տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս գործնականում իրականացնելու տեղեկույթի մշակման և ղեկավարման ցանկացած բարդ ալգորիթմ:

Դիտարկենք ղեկավարվող թռչող սարքի ինքնաճշանառման ալգորիթմի ձևավորման խնդիրը, երբ պահանջվում է տարածության տրված սկզբնական կետից թռչող սարքը տրված ժամանակահատվածում օպտիմալ ղեկավարմամբ տեղափոխել վերջնական կետ:

Թռչող սարքի օպտիմալ ղեկավարման խնդրի մաթեմատիկական ձևակերպման համար ենթադրվում է, որ՝

1. թռչող սարքի տարածական շարժումը դիտարկվում է որպես նյութական կետի (զանգվածների կենտրոնի) շարժում՝ նրա վրա կիրառված ղեկավարող ազդեցությամբ (արագացմամբ),
2. ղեկավարող ազդեցության վեկտորի մեծության և ուղղության վրա սահմանափակումներ չեն դրված,
3. թռիչքի ղեկավարման ժամանակահատվածը հայտնի է և ֆիքսված,
4. տրված է թռչող սարքի սկզբնական վիճակը,
5. թռչող սարքի վերջնական վիճակը որոշվում է նշանառման վերջնական պահին նշանակետի դիրքով:

Դիտարկենք թռչող սարքի օպտիմալ ղեկավարման խնդիրը ընդհանուր դեպքում:

Դիցուք՝ թռչող սարքի ղեկավարվող շարժումը նկարագրող գծային դիֆերենցիալ հավասարումը հետևյալն է՝

$$\dot{x} = A(t)x + B(t)u, \quad t_0 \le t \le T, \qquad (1)$$

որտեղ x-ը n չափանի ֆազային վեկտորն է, u-ն m-չափանի ղեկավարող ազդեցությունների վեկտորն է, $A(t)$-ն $(n \times n)$, $B(t)$-ն $(n \times m)$-չափանի մատրիցներ են, որոնց տարրերը կտոր առ կտոր անընդհատ ֆունկցիաներ են: $A(t)$ և $B(t)$ մատրիցների տարրերը նկարագրում են, համապատասխանաբար, թռչող սարքի և ղեկավարող սարքի բնութագրերը:

Ենթադրենք, որ (1) համակարգի սկզբնական վիճակն է

$$x(t_0) = x_0,$$

իսկ վերջնական վիճակի վերաբերյալ պահանջը գրենք հետևյալ տեսքով՝

$$y(T) = Sx(T), \qquad (2)$$

որտեղ $x(T)$-ն թռչող սարքի ֆազային վեկտորն է ժամանակի $t=T$ պահին, իսկ $y(T)$-ն, ժամանակի T պահի համար տրված պայմաններով, l-չափանի վեկտորն է ($l<n$), S-ը՝ $(l \times n)$-չափանի հաստատուն մատրից է:

Որպես որակի (օպտիմալության) հայտանիշ վերցնենք

$$J=\frac{1}{2}\int_{t_0}^{t}u^2(\tau)d\tau \qquad (3)$$

ֆունկցիոնալը:

Պահանջվում է գտնել $u(t)$ օպտիմալ ղեկավարումը, որը (1) հավասարման $x(t_0)$ սկզբնական կետից դուրս եկող $x(t)$ լուծումը տեղափոխում է (2) վերջնական դիրք՝ նվազարկելով (3) որակի հայտանիշը:

Դիտարկենք

$$y(t)=SX(T,\ t)x(t), \qquad (4)$$

վեկտորը, որտեղ $X(T,\ t)$-ն (1) համակարգի համասեռ մասի լուծումների ֆունդամենտալ մատրիցն է: Երբ $t=T$, (4)-ը համընկնում է (2)-ի հետ, քանի որ $X(T,\ T)=$E-ն միավոր մատրից է: (4)-ի երկու կողմերը ածանցելով ըստ t-ի և հաշվի առնելով, որ

$$\dot{X}(T,t)=-X(T,t)A(t),$$

կունենանք՝

$$\dot{y}(t)=F(t)u(t), \qquad (5)$$

որտեղ $F(t)=SX(T,\ t)B(t)$:

(5)-ից երևում է, որ $y(T)$ վերջնական վիճակի ապահովումը պետք է իրականացվի $y(t)$-ի ղեկավարման միջոցով:

Այսպիսով՝ պետք է նվազարկել (3) ֆունկցիոնալը՝ բավարարելով (5) պայմանը: Դրա համար կազմենք Համիլտոնի ֆունկցիան [5]՝

$$H(\psi,u,t)=\frac{1}{2}u^2(\tau)+\psi^T F(t)u, \qquad (6)$$

որտեղ ψ-ն համալուծ վեկտոր ֆունկցիան է, որը բավարարում է $\dot{\psi}=\left(\frac{d}{dy}H\right)^T$ պայմանին:

Որոնվող $u(t)$ ղեկավարումների օպտիմալության անհրաժեշտ պայմանը հետևյալն է՝

$$\frac{d}{du}H=0,$$

համաձայն որի՝ օպտիմալ ղեկավարման խնդրի լուծումը հանգեցնում է հետևյալ խնդրի լուծմանը՝

$$\begin{aligned}&\dot{y}=F(t)u,\ y(t_0)=y_0\\&\dot{\psi}=0,\ y(T)=y_T \qquad (7)\\&u=-F^T(t)\psi:\end{aligned}$$

Նշենք, որ $y(t)$-ի համար սկզբնական և վերջնական պայմանները տրված են, իսկ ψ ֆունկցիայի համար այդ պայմանները ազատ են:

Քանի որ $\psi(t) = \psi_0 = const$, ապա դրա որոշումը հետևում է (7)-ի առաջին հավասարման լուծումից: Ընդ որում,

$$y(T) = y(t_0) - \left[\int_{t_0}^{T} F(\tau)F^T(\tau)d\tau\right]\psi_0 :$$

Հետևաբար՝ $\psi_0 = M^{-1}(T,t_0)[y(t_0) - y(T)]$,

որտեղ՝ $M(T,t_0) = \int_{t_0}^{T} F(\tau)F^T(\tau)d\tau :$

Հաշվի առնելով (7)-ը՝ կունենանք

$$u(t) = F^T(t)M^{-1}(T,t_0)[y(T) - y(t_0)]: \qquad (8)$$

Այսպիսով՝ (8)-ը որոնելի օպտիմալ ծրագրային ղեկավարումն է, որը համակարգը տրված $y(t_0)$ սկզբնական վիճակից տեղափոխում է տրված $y(T)$ վերջնական վիճակի՝ ապահովելով որակի (3) հայտանիշի նվազագույն արժեքը:

Հաշվի առնելով ժամանակի t_0 պահի կամայական լինելը և այն ենթադրությունը, որ $y(t_0)$ վիճակը հայտնի է ցանկացած t_0 պահի, ապա (8)-ում t_0-ն փոխարինելով t-ով՝ այն կարելի է մեկնաբանել որպես՝

$$u(y(t)) = F^T(t)M^{-1}(T,t_0)[y(T) - y(t)] \qquad (9)$$

հետադարձ կապով ղեկավարման ծրագիր:

Այստեղից երևում է, որ ֆազային վեկտորի համար պահանջվող վերջնական վիճակի և ընթացիկ պահի համար նրա կանխատեսվող արժեքի տարբերությունը անհամաձայնության ընթացիկ պարամետր է:

Ղեկավարող ազդեցության համար ստացված (9) արտահայտության գոյության անհրաժեշտ և բավարար պայման է $\det M \neq 0$, որը համարժեք է (1) համակարգի լրիվ ղեկավարելիության պայմանին:

Մեր տարածաշրջանի ռելիեֆի բարդ պայմանները թելադրում են, որ ղեկավարվող թռչող սարքի դինամիկայի և ինքնաճշանառման համակարգի նախագծման ընթացքում պետք է հաշվի առնել որոշ կարևոր առանձնահատկություններ: Այդ առանձնահատկությունները մաթեմատիկորեն կարող են ձևակերպվել որպես թռիչքի միջանկյալ պահերին թռչող սարքի ֆազային կոորդինատների մասերի վրա դրված սահմանափակումներ: Միջանկյալ պահերին ֆազային վեկտորի կոորդինատների տարբեր մասերի վրա դրված սահմանափակումներով գծային դինամիկ համակարգերի ղեկավարման և ժամանակի ամբողջ հատվածի վրա դրված որակի հայտանիշով օպտիմալ ղեկավարման խնդիրները ուսումնասիրված են [6]: Ղեկավարման խնդրի համար կառուցված է ղեկավարող ազդեցությունը և առաջարկված է ղեկավարման խնդրի օպտիմալ լուծման եղանակ: Լուծված է տիեզերական ձգողության դաշտում ուղղաձիգ հարթության մեջ նյութական կետի շարժման ղեկավարման կոնկրետ խնդիր:

Ստացված արդյունքները կարող են օգտագործվել թռչող սարքի ինքնաշրանառման համակարգի մշակման համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *М. Павлушенко, Г. Евстафьев, И. Макаренко.* Национальная и глобальная безопасность. Беспилотные летательные аппараты: история, применение, угроза распространения и перспективы развития. М., 2005.
2. *В. Киншин.* Беспилотные камикадзе. «Американский сборник», 1995, № 4.
3. *Е. А. Федосов, В. Т. Бобронников, М. Н. Красильщиков, В. И. Кухтенко и др.* Динамическое проектирование систем управления автоматических маневренных летательных аппаратов. М., 1997.
4. *А. А. Лебедев, Л. С. Чернобровкин.* Динамика полета беспилотных летательных аппаратов. М, 1973.
5. *Л. С. Понтрягин, В. Г. Болтянский, Р. В. Гамкрелидзе, Е. Ф. Мищенко.* Математическая теория оптимальных процессов. М., 1969.
6. *В. Р. Барсегян.* Управление линейными динамическими системами с ограничениями на значения частей координат фазового вектора в промежуточные моменты времени. «Доклады Национальной Академии Наук Армении», 2010, т. 110, № 3 (http://elib.sci.am/2010_3/07_3_2010.pdf).

УПРАВЛЯЕМЫЕ ЛЕТАТЕЛЬНЫЕ АППАРАТЫ И ПРОБЛЕМЫ ДИНАМИЧЕСКОГО ПРОЕКТИРОВАНИЯ СИСТЕМ УПРАВЛЕНИЯ

В. Р. БАРСЕГЯН, доктор физико-математических наук, профессор, начальник отдела Диаспоры Президиума НАН РА, профессор ЕГУ

РЕЗЮМЕ

Важным аспектом обеспечения безопасности и оборонной мощи Республики Армения является развитие военно-промышленного сектора страны, в котором существенную роль имеет производство беспилотных летательных аппаратов.

В статье описаны разновидности беспилотных летательных аппаратов, основные направления их возможного применения и перспективы развития. Изложены основные принципы управления движением летательных аппаратов и компоненты их управления. С учетом особенностей динамики полета и системы управления летательных аппаратов, на основе теории оптимального управления, приведено решение задачи формирования алгоритма самонаведения управляемых летательных аппаратов при заданных условиях, который используется в процессе проектирования систем управления.

GUIDED AIRCRAFT AND PROBLEMS OF DYNAMIC DESIGN OF CONTROL SYSTEMS

V. R. BARSEGHYAN, Doctor of Physical and Mathematical Sciences, Professor, Head of the Diaspora Department of the NAS, RA Presidium, YSU Professor

SUMMARY

An important aspect of ensuring the security and defense power of the Republic of Armenia is the development of the military-industrial sector of the country in which a significant role belongs to the production of unmanned aerial vehicles.

The article describes the types of unmanned aerial vehicles, the main areas of their possible use and development prospects. The basic principles of controlling the motion of aircraft and the components of their control are set forth. Given the nature of the flight dynamics and control system of aircraft, based on the theory of optimal control, the task solution of forming an algorithm for homing guided aircraft under the specified conditions is given which is used in the design process of control systems.

ՀԱԿԱՀՐԹԻՌԱՅԻՆ ԵՎ ՀԱԿԱՀՐԵՏԱՆԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Մ. Վ. ՄԱՐԿՈՍՅԱՆ, տեխնիկական գիտությունների դոկտոր,
«Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ
տնօրեն, ԵրՃՇՊՀ ինֆորմատիկա, հաշվողական տեխնիկա
և կառավարման համակարգեր ամբիոնի վարիչ

Այսօր աշխարհի գրեթե բոլոր բանակներում կիրառվում են ճշգրիտ զենքերի տեսակներ, որոնց թվին են դասվում հեռակառավարվող հրթիռները և «խելացի» արկերը:

Եթե առաջինների վրա տեղադրված կառավարման սարքավորանքը հնարավորություն է տալիս հրթիռը ուղղորդելու դեպի տրված նշանակետը, ապա ականների դեպքում սարքավորանքը կառավարում է պայթյունը՝ պատճառելով ավելի մեծ վնաս:

Ոխստի անհրաժեշտ է ստեղծել և կիրառել հակազդման այնպիսի տեխնիկական միջոցներ, որոնք հնարավորություն տան՝

– հրթիռների դեպքում՝ դրանք ոչ միայն շեղելու նշանակետից, այլև ուղղորդելու այլ նշանակետերի վրա,

– արկերի դեպքում՝ դրանք պայթեցնելու ավելի շուտ կամ ուշ՝ նվազագույնի հասցնելով պատճառած վնասը:

Համապատասխան պաշտպանություն կազմակերպելու համար անհրաժեշտ է հստակ պատկերացում ունենալ կիրառվող զենքի կառավարման եղանակների մասին: Հրթիռների կառավարումը կատարվում է մի քանի եղանակով: Դրանցից մեկը արբանյակային ռադիոուղեվարական համակարգերի (ՋՊՍ, ԳԼՈՆԱՍՍ (*GPS, ГЛОНАСС*)) կիրառումն է: Դրանց միջոցով կառավարման համակարգն ստանում է տվյալ պահին հրթիռի գտնվելու կետի կոորդինատները և համապատասխան ծրագրաապարատային միջոցներով կատարում է նրա թռիչքի ուղղորդում դեպի նշանակետ: Մեկ այլ եղանակ կապված է տեսախցիկների օգտագործման և պատկերների մշակման հետ: Այս դեպքում ստացվող պատկերները մշակվում և համեմատվում են նշանակետի պատկերի հետ, և ըստ այդմ կատարվում է հրթիռի համապատասխան ուղղորդում:


Կան հրթիռներ, որոնց կառավարում են անմիջականորեն արբանյակները: Վերջիններս նշանակետերի վերաբերյալ տեղեկույթն ստանում են հատուկ հեռադիտակների կամ համադրվող բացվածքով ռադարների (ՀԲՌ) միջոցով:

Կիրառվում են նաև հրթիռների կառավարման վերը նշված եղանակների համակցված տարբերակներ:

Ինչպես արդեն նշվել է, կան նաև կառավարվող տեսակի հրետանային արկեր: Դրանցում տեղադրված են ռադիոհեռաչափներ, որոնք գետնից որոշակի հեռավորության վրա պայթեցնում են արկը՝ պատճառելով առավելագույն վնաս: Որպես դրա օրինակ կարելի է հիշատակել ԱՌ-30 տիպի ռադիոպայթուցիչը, որը տեղադրվում է հաուբիցների արկերի վրա:

Հրթիռներից պաշտպանության կազմակերպում: Հայտնի են ՋՊՍ համակարգերի համար տարբեր խանգարիչ սարքեր, որոնք հեռարձակում են արբանյակային ազդանշանը նմանարկող հզոր ազդանշաններ: Դրա հետևանքով հրթիռի վրա տեղակայված ընդունիչը կատարում է սխալ հաշվարկներ և, համապատասխանաբար, տալիս թռիչքի սխալ ծրագիր: Նման խանգարումները պետք է լինեն 3-ից ավելի, որպեսզի որոշակիորեն հավասարակշռեն արբանյակներից ստացվող ազդանշանները: Բայց նման խանգարումների ստեղծումը ամբողջովին չի լուծում պաշտպանության հարցը, քանի որ հրթիռի ուղեվարման խանգարումը կարող է նրան հաղորդել անկանխատեսելի ուղղություն:

Այս առումով հետաքրքրություն է ներկայացնում կառավարելի խանգարիչների կիրառումը, որոնք աշխատում են համատեղ և կարող են ազդանշաններ տալ այնպիսի հաջորդականությամբ, որ հրթիռի ուղեվարման համակարգը կհաշվարկի թռիչքի մեր ցանկացած պլանը:



Նկ. 1. Համակարգի կառուցվածքը

Ինչ վերաբերում է արբանյակներից հրթիռների անմիջական կառավարմանը խոչընդոտելուն, ապա այս դեպքում անհրաժեշտ է խանգարումներ ստեղծել հենց արբանյակի համար: Այդ նպատակով առաջարկվում են հատուկ տեխնիկական միջոցներ (նկ. 1), որոնք հնարավորություն են տալիս նախ հայտնաբերելու ՀԲՌ կրող արբանյակները, ապա նմանարկելու ՀԲՌ ազդանշանները և որոշակի ձևով վերադարձնելու դրանք համապատասխան աղբյուրին: ՀԲՌ-ն, ստանալով խանգարիչի ազդանշանները, ստեղծում է կեղծ քարտեզներ, ինչի հետևանքով կատարվում է հրթիռի սխալ կառավարում:

Առաջարկվող համակարգը պետք է աշխատի հակաուղեվարական համակարգի հետ համաձայնեցված:

Ինչ վերաբերում է արբանյակի վրա տեղադրված օպտիկական հեռադիտակներին և դրանց միջոցով հրթիռների կառավարմանը, ապա դրանք տեսնում են միայն վրագետնյա օբյեկտները և չեն կարող հրթիռներն ուղղորդել դեպի ստորգետնյա կամ քողարկված նշանակետեր:

Պաշտպանության կազմակերպումը «խելացի» արկերից: Նման արկերը, ինչպես արդեն նշել ենք, ունեն ռադիոկառավարվող պայթուցիչներ: Այդ պայթուցիչները դոպլերյան ռադարներ են, որոնք որոշակի հեռավորության վրա հայտնաբերում են համապատասխան պինդ մակերևույթը և, կախված նախօրոք սահմանված չափից, պայթեցնում են արկը:

Այսպիսով՝ եթե կարողանանք ապակողմնորոշել դոպլերյան ռադարին, ապա այն կաշխատեցնի պայթուցիչը ժամանակից շուտ և, ցանկալի է, պայթյունի անվտանգ գոտում:

Առաջարկվում է ռադարի այնպիսի խանգարիչ, որը համապատասխան հաճախականային տիրույթում ճառագայթում է արկի վրա տեղադրված ռադարի արձակած ճառագայթները կրկնող ազդանշաններ: Որպես արդյունք՝ ռադարը խանգարման ազդանշանն ընդունում է որպես «պատասխան»:

Այսպիսով՝ ժամանակակից զինված բախումների փորձը ցույց է տալիս, որ «սրի և վահանի» մրցակցությունը շարունակվում է՝ փոխադրվելով տեղեկատվական տեխնոլոգիաների դաշտ և վերածվելով ռադիոէլեկտրոնային պայքարի, որի արդիական և արդյունավետ միջոցներից են «հակահրթիռային» և «հակահրետանային» արկերից պաշտպանության համակարգերը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Радиовзрыватель АР–30» (http://www.pirotek.info/Vspomogatelnue/vzrivateli/ar30.htm).

2. *Christopher Mims.* How Cruise Missiles Would Beat GPS Jammers in Libya. «MIT Technology Review», March 20, 2011 (http://www.technologyre view.com/view/423363/how-cruise-missiles-would-beat-gps-jammers-in-libya/).

3. «Information About GPS Jamming». «GPS.GOV» (http://www.gps.gov/spectrum/jamming/).

4. «Integrated system of radar (ADMS) protection against antiradiation missiles» (http://www.kbradar.by/text/pages-view-42.html).

5. *Lloyd E. Kinsey, Gregory C. Roush.* Time Delay Computer Using Fuze Doppler for Air-to-Air Missiles. United States Patent N 4135452, 23 Jan 1979 (http://books.google.com.mx/patents/US4135452?printsec=claims#v=onepage&q&f=false).

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ОРГАНИЗАЦИИ ПРОТИВОРАКЕТНОЙ И ПРОТИВОАРТИЛЛЕРИЙСКОЙ ЗАЩИТЫ

М. В. МАРКОСЯН, доктор технических наук, директор ЗАО «Ереванский научно-исследовательский институт средств связи», заведующий кафедрой информатики, вычислительной техники и систем управления ЕГУАС

РЕЗЮМЕ

Анализ современного вооружения показывает, что армиями многих стран в качестве средств нападения активно используются управляемые ракеты (в том числе, крылатые) и артиллерийские снаряды. В этой связи является актуальной организация защиты от указанных средств.

Организация защиты заключается в использовании средств, позволяющих симулировать обстановку и поставить помехи в виде выдвижения ложных целеуказаний для ракет и цели для артиллерийских снарядов.

Предлагаемые средства–помехопостановщики позволяют выводить из строя–обманывать навигационные системы ракет уводя их от цели, искажать спутниковые съемки с помощью САР, этим нарушая карты целей, и обманывать доплеровские радары снарядов, вследствие чего вызвать их досрочный взрыв на удаленных расстояниях от целей.

SOME ISSUES OF THE ORGANIZATION OF ANTI-BALLISTIC AND ANTI-ARTILLERY DEFENSE

M. V. MARKOSYAN, Doctor of Engineering, Head of «Yerevan Telecommunications Research Institute» CJSC, Head of the Chair of Computer Science and Control Systems, YSUAC

SUMMARY

The analysis of contemporary armaments indicates that armies of a considerable number of countries actively exploit guided missiles (including cruise missiles) and bombshells as offensive means. Thereupon, the organization of defense against the specified means becomes of actual importance.

The organization of defense embraces the means for simulating the situation and jamming in the form of false target designation for rockets and targets for artillery shells.

The proposed means–the noise jammers enable to put out of function, i. e., to mislead the missile navigation systems diverting from the target, distort the satellite images using the automatic control systems thus mistracking the target maps and deceive the Doppler missile radars, which causes their pre-term explosion at remote distances from the targets.

ՀԱԿԱՏԱՆԿԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՓՈՐՁԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ

Է. Ա. ԱՊՐԻԱՄՈՎ, գեներալ-լեյտենանտ,
ՀՀ ՋՈՒ-ի ԳՇ պետի առաջին տեղակալ

Հրետանին հնագույն զորատեսակներից է: Այն միշտ համարվել է զորքերի կրակային հարվածի գլխավոր ուժը և ապահովել մարտի հաջողությունները օպերատիվ ու մարտավարական խնդիրների կատարման ժամանակ: Պատահական չէ, որ հրետանին անվանում են «պատերազմի աստված»:

Հրետանու բաղկացուցիչ մասն են կազմում հակատանկային հրետանային զորամասերը (ստորաբաժանումները), որոնք նախատեսված են առաջին մարտաշարակազմում գործող զորամասերի (ստորաբաժանումների) հակատանկային պաշտպանությունը ուժեղացնելու, պաշտպանության խորքը մխրճված տանկային (զրահապատ) խմբավորումները ոչնչացնելու, մարտաշարակազմի թևերի պաշտպանությունն ապահովելու, ինչպես նաև տանկավտանգ ուղղություններում առանձին գործող տանկերի և զրահապատ տեխնիկայի դեմ գործելու համար:

Ղարաբաղյան հակամարտության ամբողջ ընթացքում հակառակորդի հարձակվող տանկերի և այլ զրահատեխնիկայի ոչնչացման գործում մեծ դեր են ունեցել ուղիղ նշանառությամբ կրակ վարելու միջոցները, հատկապես՝ հրետանային հակատանկային միջոցները: Այդ միջոցները կիրառվել են տարաբնույթ բարդ մարտական իրադրության արտակարգ իրավիճակներում և առավելագույնս արդյունավետ կերպով, ինչը պայմանավորված էր կիրառվող հակատանկային միջոցների մարտական հատկությունների լավ իմացությամբ և ռազմադաշտում անձնակազմի՝ առաջադրված մարտական խնդիրները արդյունավետ կերպով կատարելու ձգտմամբ:

Ռազմական գործողությունների ժամանակահատվածում կարևոր նշանակություն ունեցավ հակատանկային հրետանային գնդի կազմավորումը, որը համալրվեց ԽՍՀՄ-ից ժառանգված սպառազինությամբ: Գնդի՝ անձնակազմով համալրումը կատարվեց հիմնականում ռուսական բանակում ծառայած հայ զինծառայողներով: Քանի որ չկային կահավորված զորավարժարաններ, ուսումնական լսարաններ և վարժասարքեր, անձնակազմի պատրաստումը կատարվում էր ինչպես մշտական տեղակայման վայրերում անցկացվող մարտավարական և մասնագիտական պարապմունքների ժամանակ, այնպես էլ մարտի դաշտում:

Թեև այդ ժամանակահատվածում չկային անձնակազմի համակողմանի պատրաստման համար անհրաժեշտ միջոցներ, այդուհանդերձ, մեզ պարտադրված պատերազմում մարտնչելու անհրաժեշտության գիտակցումը ակտուալացրեց անձնակազմի ներքին մղումների համակարգը, շարժառիթավորեց ակտիվ մասնակցությունը բոլոր նախաձեռնություններին:

Պատահական չէին հակառակորդին հակատանկային գնդի հասցրած կո-

րուստները՝ 27 միավոր զրահատեխնիկա, որոնցից 26-ը՝ տանկ: Գնդի անձնակազմի 6 զինծառայողներ պարգևատրվեցին Մարտական խաչի տարբեր աստիճանի շքանշաններով, երկու տասնյակից ավելի զինծառայողներ՝ Արիության ու Մարտական ծառայության մեդալներով և այլ կառավարական պարգևներով:

Այդ ժամանակահատվածում ԼՂՀ զինված ուժերում կազմավորվեցին «Ֆագոտ» համալիրների և S-12 հրանոթների հակատանկային դիվիզիոններ: Տեղի ունեցան նաև կառուցվածքային փոփոխություններ, մասնավորապես՝ համազորային զորամասերի կազմում տարբեր ժամանակաշրջաններում (ըստ սպառազինության ձեռքբերման), կազմավորվեցին հակատանկային ստորաբաժանումներ:

Սկզբնական շրջանում որոշակի բարդություններ էր առաջացնում մասնագետների պակասը: Հարկ է նշել, որ հակատանկային ստորաբաժանումները հիմնականում համալրված էին կամավորներով: Այդ թվակազմի հետ գործնական պարապմունքների համար լայնորեն օգտագործվում էին Ասկերան–Ստեփանակերտ մայրուղով ընթացող մեքենաները՝ որպես նշանառման համար շարժվող օբյեկտ, որոնց օգնությամբ անձնակազմի մեջ ձևավորվում էր շարժվող նշանակետերի ուղեկցման ունակություն, իսկ «հակատանկիստների» հիմնական կոփումը և հմտությունների համակարգի լիարժեք ձևավորումը տեղի էր ունենում մարտի դաշտում:

Պաշտպանության բանակի «Ֆագոտի» կառավարվող հրթիռների հակատանկային դիվիզիոնը սկզբնական շրջանում կազմավորվեց որպես հակատանկային կայանքներ ունեցող գումարտակ: Մասնակցելով մարտական գործողություններին՝ գումարտակը կարճ ժամանակամիջոցում ձեռք բերեց մարտական վարպետություն և, համալրվելով «Կոնկուրս» ու «Շտուրմ-Ս» հակատանկային համակարգերով, վերակազմավորվեց հակատանկային կործանիչ դիվիզիոնի:

Հակատանկային միջոցների մարտական կիրառումը պատերազմական գործողությունների սկզբնական շրջանում կատարվում էր հրետանու մարտական կանոնադրության հիմունքներով, սակայն հակառակորդի մարտավարության վերլուծության արդյունքները հնարավորություն տվեցին վերանայելու մեր հակատանկային միջոցների մարտական կիրառման և մարտավարության հիմնական ձևերը: Խոսքը վերաբերում է կրակային դիրքերի սարքավորմամբ համակարգերի տարանջատված կիրառմանը: Այդ մարտավարության էությունն այն էր, որ համակարգերը հաճախակի տեղափոխվում էին առաջնագծում նախօրոք սարքավորված մի դիրքից մյուսը, որի ուղղությամբ համակարգի հասանելիության գոտում գործում էր հակառակորդի զրահատեխնիկան: Կատարվում էր զրահատեխնիկայի «որսում»:

Այդ տարիներին հակառակորդի ամենալայնածավալ գրոհներին մասնակցած տանկային ստորաբաժանումներն իրենց կազմում ունեին 15-20 տանկ: Երկու տանկի խոցումից հետո հակառակորդը հրաժարվում էր հետագա գրոհներից և նահանջում՝ մարտի դաշտում թողնելով խոցված տանկերը: Մի քանի անհաջող փորձերից հետո հակառակորդը փոխեց իր մարտավարութ-

յունը: Տանկերը օգտագործվում էին դարաններից՝ զույգերով: Առաջին տանկը դուրս էր գալիս թաքստոցից և մի քանի կրակոց արձակելով՝ անցկացնում էր կրակային հետախուզում, իսկ երկրորդը դարանում սպասում էր մեր հակատանկային միջոցների կողմից կրակոցի կամ հակատանկային հրթիռի արձակման, ինչից հետո անմիջապես հետևում էր դարանում գտնվող տանկի կրակոցը մեր հակատանկային միջոցների կրակի ուղղությամբ:

Վերլուծելով հակառակորդի գործողությունները՝ մեր հակատանկային ստորաբաժանումները նույնպես փոխեցին մարտավարությունը, այսինքն՝ հակատանկային ստորաբաժանումների դասական եղանակով կիրառումը հետին պլան մղվեց, և բնագծերում դրանք չբացազատվեցին դիվիզիոնների կամ մարտկոցների կազմով: Մեր ստորաբաժանումները կազմակերպում էին կրակային դարաններ, զբաղեցնում էին առանձին դիրքեր կամ, այլ կերպ ասած, ստեղծում էին հակատանկային պաշտպանության հանգույցներ (օջախներ), ինչն էլ ավելի արդյունավետ միջոց էր հակառակորդի տանկերի դեմ պայքարում: Համատեղվում էր «Շտուրմ-Ս» և «Ֆագոտ» կայանքների կիրառումը, ինչը հնարավորություն էր տալիս խոցելու հակառակորդի զրահատեխնիկան և՛ հեռավոր մատույցներում, և՛ մոտ տարածություններում:

Թաքստոցից կամ դրանից դուրս կրակ էր վարվում նախօրոք հետախուզված նշանակետերի ուղղությամբ: Որպեսզի հակառակորդը ստիպողական կրակ արձակեր, կատարվում էին մի քանի ցուցադրական գործողություններ՝ կապված թաքստոց վերադառնալու և նորից դրանց տեսադաշտում հայտնվելու հետ: Հակառակորդի պատասխան կրակից հետո ճշգրտվում և անմիջապես խոցվում էին առաջնային գծում կամ մոտակա խորությունում գտնվող նշանակետերը:

S-12 համակարգերով սպառազինված ստորաբաժանումների մարտական կիրառման մարտավարության հիմնական ձևը ամբողջ մարտկոցով որևէ ուղղությունում ծածուկ տեղակայված մնալն ու անհրաժեշտության դեպքում հակառակորդի համար անսպասելի կրակ բացելն էր:

Հակատանկային միջոցների կիրառումը հատկապես արդյունավետ էր 1993–1994 թվականներին: Այդ ժամանակահատվածում հակառակորդը մարտի դաշտում թողեց մեծ քանակությամբ խոցված զրահատեխնիկա:

Ներկայումս հակատանկային ստորաբաժանումների անձնակազմի մասնագիտական պատրաստումը կատարվում է համակարգչային «Պանորամա», «Կարատ» և «Շղթա» վարժասարքերի կիրառմամբ, իսկ մասնագիտական հմտությունները կատարելագործվում են մարտավարական զորավարժությունների ընթացքում: Նշված վարժասարքերի կիրառմամբ անձնակազմի մասնագիտական պատրաստումը հնարավորություն է տալիս լսարանային պայմաններում առավելագույնս նմանարկելու մարտական իրավիճակները և ապահովելու հակատանկային միջոցների հաշվարկի հրամանատարների, նշանառուների և հակատանկային կառավարվող հրթիռների համալիրների օպերատորների բարձր մակարդակի մասնագիտական պատրաստություն՝ առանց մարտական արկերի և հրթիռների կիրառման:

Նշենք, որ ՀՀ սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման

պետական ծրագրի համաձայն՝ բոլոր հակատանկային ստորաբաժանումները ներկայումս լրահամալրված են արդիական հակատանկային միջոցներով, ինչը հնարավորություն է տալիս մեծացնելու ՀՀ Զինված ուժերի հակատանկային կարողությունները և սահմանի ամբողջ երկայնքով ապահովելու արդյունավետ հակատանկային պաշտպանություն:

ОПЫТ ПРИМЕНЕНИЯ ПРОТИВОТАНКОВЫХ СРЕДСТВ НА ПРИМЕРЕ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА

Э. А. АПРИАМОВ, генерал-лейтенант,
первый заместитель начальника ГШ ВС РА

РЕЗЮМЕ

В военный период Карабахского конфликта большую роль в деле уничтожения танков и бронетехники противника сыграли артиллерийские противотанковые средства, предназначенные для борьбы с бронетехникой путем стрельбы прямой наводкой. Эти средства обеспечивали эффективное поражение целей в различных экстремальных условиях боевой обстановки, что было обусловлено хорошим знанием личным составом боевых возможностей и тактико-технических характеристик этих средств и высоким боевым духом.

Изначально боевое применение противотанковых средств осуществлялось на основе боевого устава артиллерии, однако по результатам анализа были внесены коррективы в тактику их боевого применения. Благодаря специальным тактическим приемам с отступлением от классических подходов эффективность поражения бронированных целей противника существенно повысилась.

В настоящее время профессиональная подготовка личного состава противотанковых подразделений ВС РА осуществляется с учетом опыта, накопленного во время Карабахской войны, и с применением современных компьютерных тренажерных устройств «Панорама», «Карат», «Цепь», которые обеспечивают полную имитацию боевой обстановки. Система профессиональных навыков личного состава совершенствуется в ходе тактических учений.

Согласно государственной программе РА по развитию Вооружения и военной техники, все противотанковые подразделения ВС РА укомплектованы современными противотанковыми средствами, что позволяет существенно повысить противотанковые возможности ВС и обеспечить противотанковую оборону по всей линии границы.

THE EXPERIENCE OF USING THE ANTI-TANK WARFARE ON THE EXAMPLE OF THE KARABAKH CONFLICT

E. A. APRIAMOV, Lieutenant-General, First Deputy Chief of the RA AF Main Staff

SUMMARY


During the Karabakh war the artillery anti-tank warfare, designed to combat armored vehicles by direct fire, has played a great role in destructing enemy tanks and armored vehicles. These means provided an effective target engagement in various extreme combat situations, which depended on a good awareness of the personnel combat capabilities, the performance characteristics of these means, as well as the high morale.

Initially, the operational use of the anti-tank warfare was carried out upon the artillery field disciplines; however, according to the analysis adjustments were made in the tactics of the anti-tank warfare operational use. Thanks to the special tactical methods of retrieving from the classical approaches the efficiency of the enemy armored target engagement seriously rose.

At this moment the expert training of the anti-tank unit personnel in the RA AF is carried out with the account of the experience gained throughout the Karabakh war and with the use of modern computer simulators, namely «Panorama», «Carat», «Chain», which provide a complete imitation of the combat situation. The system of the personnel professional skills is developed in the course of tactical exercises.

In line with the RA state program on the Development of the Weapons and Military Equipment, all the anti-tank units in the RA AF are supplied with anti-tank weapons, which enables to significantly increase the anti-tank capacities of the AF and ensure the anti-tank defense along the entire border line.

ՌԱԶՄԱԿԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ



ՀՀ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԽՆԴԻՐ

Ս. Մ. ՕՀԱՆՅԱՆ, ՀՀ Պաշտպանության նախարար

Հայաստանի Հանրապետության ռազմական անվտանգության ապահովումը ազգային անվտանգության գերակա խնդիրներից է: Այդ գործում կարևոր դեր ու նշանակություն ունի ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգը (ՌԱՀ): Դրա զարգացումը և կառավարումը պետական քաղաքականության առաջնահերթ ուղղություններից են և ենթադրում են ռազմական արդյունաբերության վերածումը տնտեսության առաջատար ոլորտի: Պետության կողմից համակարգվող, առաջադիմական ծրագրեր իրականացնող և հեռամետ նպատակներ հետապնդող ՌԱՀ-ի զարգացումն զգալի չափով կնպաստի՝

– միջազգային և տարածաշրջանային գործընթացներում պետության կողմից իրականացվող քաղաքականության կշռի և ազդեցության մեծացմանը,

– ժամանակակից գիտելիքահեն արտադրական տեխնոլոգիաների մշակմանը,

– միջազգային և տարածաշրջանային տնտեսական գործընթացներին ինտեգրմանը:

Վերջին երկու տասնամյակում ի հայտ են եկել ռազմական պայքարի նոր միջոցներ, որոնցից են, մասնավորապես, գերճշգրիտ զենքերը: Դրանց և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիական բազայի վրա ստեղծված կառավարման, հետախուզման և նշանառման համակարգերի համատեղ օգտագործումը կտրուկ կերպով փոխում է ռազմական գործողությունների վարման ձևերն ու մեթոդները: Նման պատերազմում չկա դասական իմաստով ռազմաճակատ, կողմերի հպման անընդհատ գիծ: Փաստորեն, մարտական գործողությունները մղվում են հակամարտող կողմերի տարածքի խորքում, և ըստ էության վերաիմաստավորվում է թիկունքի ավանդական դերը:

Այդպիսի պատերազմներում հաղթանակի երաշխիք են հակառակորդի կառավարման տեղեկատվական համակարգերի նկատմամբ առավելություն ունեցող կառավարման բազմաֆունկցիոնալ համակարգերը և գերճշգրիտ զենքերը, որոնք ապահովում են հակառակորդի զորքերի խոցելի տարրերի արագ հայտնաբերումն ու դրանց նկատմամբ խոցող միջոցների անհապաղ կիրառումը: Այլ կերպ ասած՝ մոտ ապագայում պետությունների սպառազինությունների համակարգերի հզորությունը բնութագրվելու է հիմնականում ոչ թե դրանց քանակով, այլ որակական հատկանիշներով:

Մյուս կողմից՝ տեղեկատվական տեխնոլոգիաների այսպիսի արագ տեմպերով զարգացումը յուրօրինակ ազդեցություն է ունենում հանրության վրա: Ապագան «հարձակվում» է նրա վրա շատ արագ, քանի որ տեղի են ունենում արագընթաց փոփոխություններ քաղաքականության, տնտեսության, մշակույթի, սոցիալական բնագավառներում, անհատական և հասարակական հարաբե-

րություններում, ինչպես նաև կացութաճևի մոդելներում և կյանքի ստանդարտների համակարգում: Նման իրավիճակում մարդը ամեն վայրկյան առնչվում է երբեմն անհասկանալի ապագային և իր համար աննկատ կերպով հայտնվում է անհարմար հոգեբանական միջավայրում, ինչը կարող է հոգեկան ցնցումների պատճառ դառնալ:

Այսպիսով՝ համաշխարհային հասարակայնությունը կարող է դառնալ ժամանակակից գիտատեխնիկական հեղափոխության ինչպես կրողը, այնպես էլ զոհը, եթե չկատարվի համապատասխան նախապատրաստում և ընտելացում նոր հետինդուստրիալ միջավայրին: Անգամ հպանցիկ հայացք նետելով աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին՝ կարող ենք նկատել, որ էապես աճել է ինքնասպանությունների, հոգեկան խանգարումների հողի վրա կատարվող սպանությունների, ալկոհոլ և թմրամիջոցներ օգտագործողների, աղանդավորների թիվը և այլն, ինչը հիմնականում իրականությունը չընկալելու և դրան չհարմարվելու արդյունք է:

Արդի մարտահրավերներին դիմակայելու համար անհրաժեշտ է դրանք ավելի ընկալելի դարձնել կրթության ու դաստիարակության միասնական համակարգի բարեփոխման միջոցով. դպրոցական, բուհական կրթությունը պետք է ճկուն ձևով հարմարեցվի ներկայիս մարտահրավերներին, իսկ պետական կառավարման մարմիններում աշխատելու իրավունքը պետք է վերապահվի լիարժեք բարձրագույն կրթությամբ և հաջողությամբ հատուկ դասընթացներ ավարտած անձանց, հակառակ դեպքում հասարակությունը կդառնա թերի զարգացած մարդկանց հավաքածու և անգամ ունակ չի լինի պայքարելու իր գոյության համար: Այդպիսի կրթական համալիրներ են գործում աշխարհի շատ երկրներում: Օրինակ՝ ԱՄՆ-ում գործում է ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանը, որի կազմում են այլ քոլեջների և հետազոտական կենտրոնների հետ մեկտեղ ԱՄՆ-ի ՋՈՒ-ի արդյունաբերական, տեղեկատվական ռեսուրսների մենեջմենտի (կառավարման) քոլեջները, ինչպես նաև Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը, որը պաշտպանական համակարգի գլխամասային գիտահետազոտական կենտրոնն է և գիտական մշակումներ է կատարում միջազգային հարաբերությունների, ռազմական քաղաքականության ու ռազմավարության (տեխնոլոգիաների և ազգային անվտանգության քաղաքականության) բնագավառներում: Այսպիսի օրինակները բազմազան են, կարելի է նշել, որ ԽՍՀՄ-ում էլ կար պետության գերակա շահերն սպասարկող նմանատիպ կրթական համալիր:

Հաշվի առնելով ՀՀ ռազմաարդյունաբերության ներկա հնարավորությունները, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ՀՀ ընկերությունների ներգրավվածության բազմազանությունը, մակարդակը և հաջողությունները, ինչպես նաև ՀՀ պաշտպանական վերանայման արդյունքներով մշակված ՀՀ ՋՈՒ-ի 2011 – 2015 թթ. զարգացման ծրագրի գերակա խնդիրը՝ մարտական առաջադրանքի կատարման ամբողջ ընթացքում զինվորի անհատական պաշտպանվածության և հակառակորդի նկատմամբ ռազմական գերազանցության ապահովումը, ՀՀ-ն իր ռազմական արդյունաբերության զարգացումը տեսնում է

բարձր տեխնոլոգիաների ոլորտում, ինչը անվտանգության լուրջ երաշխիք է խաղաղությանը ձգտող ՀՀ-ի համար՝ որպես հավանական հակառակորդի ռազմավարական զսպման կարևոր միջոց: ՈՒԽտի համակարգի զարգացումը պետք է դառնա ազգային անվտանգության ապահովման գերակայություն:

Սպառազինությամբ, ռազմական տեխնիկայով և ռազմատեխնիկական ունեցվածքով Զինված ուժերի ինքնապահովման աղբյուրը տվյալ պետության ռազմական արդյունաբերությունն է:

ՀՀ ՌԱՀ-ի արագընթաց տեխնոլոգիական զարգացումը անհրաժեշտ նախապայման է պաշտպանական անվտանգության երկարաժամկետ խնդիրների լուծման համար:

Դրա հետ մեկտեղ հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ ՌԱՀ-ը պետք է սպառազինության, ռազմական ու հատուկ տեխնիկայի մշակման և արտադրության հետ միաժամանակ լուծի քաղաքացիական նախանշանակման մրցունակ, գիտատար ու բարձր տեխնոլոգիական ապրանքների ստեղծման և արտադրության ընդլայնման խնդիրը: Այս խնդրի լուծումը տնտեսության տվյալ ոլորտի տեխնոլոգիական զարգացման ուղղությամբ կատարվող ևս մեկ առաջընթաց քայլ է:

ՌԱՀ-ի՝ որպես ռազմական և քաղաքացիական արդյունաբերության բազմամասնագիտական, բարձր տեխնոլոգիական, բազմազանեցված (դիվերսիֆիկացված), տնտեսապես կայուն, ներքին և արտաքին շուկաներում մրցունակ ոլորտի զարգացումը պայմաններ է ստեղծում գիտատեխնիկական առաջընթացի առանցքային ոլորտում միջոցների շարժունակության համար:

Քաղաքացիական ոլորտում ՌԱՀ-ի խնդիրներ պետք է լինեն՝

1. դիմակայումը սոցիալ-տնտեսական և տեխնոլոգիական զարգացման ոլորտում գալիք տասնամյակի ռազմավարական մարտահրավերներին, այդ թվում՝ գլոբալ մրցակցության ուժեղացմանը, որն ընդգրկում է ապրանքների, կապիտալի, տեխնոլոգիաների, աշխատուժի շուկաները և նոր պահանջներ է ներկայացնում մրցունակությանը, նորարարությանը և ներդրումների ներգրավման ունակությանը,

2. արհեստավարժ կադրերի հաշվին (որով էլ որոշվում է մարդկային կապիտալի որակը և նրա հնարավորությունը՝ վերածվելու միջին խավի գերիշխող ուժի) համաշխարհային տնտեսությունում մրցակցային դիրքերի պահպանումը, ինչի համար պահանջվում է աշխատանքի արտադրողականության կայուն աճ, ոլորտի արդիականացում և արագացված զարգացում,

3. գերակայող ուղղություններով բարձր տեխնոլոգիական շուկաներում համընդհանուր մասնագիտացում ապահովող գիտատեխնոլոգիական համալիրի ձևավորումը,

4. տնտեսության կառուցվածքային բազմազանության ապահովումը՝ վերամշակող արդյունաբերության մրցունակության մեծացման հիմքի վրա,

5. առաջնային ռեսուրսների՝ աշխատանքի, էներգակիրների, նյութերի օգտագործման արդյունավետության մեծացումը,

6. բնակչության կյանքի որակի բարձրացումը:



Մի դրվագ ՀՀ-ում գործող տեղեկատվական տեխնոլոգիաների առաջատար ձեռնարկությունների և ՀՀ պաշտպանության նախարարության միջև համագործակցության հեռանկարներին նվիրված քննարկումից.

Ձախից աջ՝ ՀՀ Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Դ. Տոնոյան, ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյան, ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ – ՆՏԱ դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյան, ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի ղեկավար Գ. Հայրապետյան, ԵրՄՄԳՀԻ-ի գլխավոր տնօրեն Ա. Թառոյան

Երևան, ՀՀ պաշտպանության նախարարություն, 2011 թ. ապրիլի 1

ՀՀ ՌԱՀ-ի զարգացման գերակա ուղղությունների ընտրության ժամանակ պետք է հաշվի առնել հետևյալը.

1. ռազմական և քաղաքացիական ոլորտներում Հայաստանի կենսական շահերի ապահովման խնդիրները,

2. առկա և կանխատեսվող սպառնալիքների համակարգում պաշտպանունակության ապահովման անհրաժեշտությունը,

3. էներգետիկ խնդրի լուծման ուղիների որոնումը Հայաստանի բնակլիմայական պայմանների հաշվառմամբ,

4. կապի միջոցների և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների կատարելագործումը՝ որպես ժամանակակից բարձր տեխնոլոգիական արտադրության զարգացման և բնակչության կյանքի որակի ապահովման անհրաժեշտ նախապայմանի,

5. միջավայրի բնապահպանական մաքրության ապահովումը:

ՌԱՀ-ի տեխնոլոգիական զարգացման օպտիմալ տարբերակի հաջող իրականացման հիմնական ցուցանիշներ պետք է լինեն.

1. ՀՀ ՋՈՒ-ի «Սպառազինման ծրագրի» անվերապահ կատարումն ըստ ժամկետների,

2. քաղաքացիական նախանշանակման գիտատար և բարձր տեխնոլոգիական արտադրանքի ծավալների էական աճը:

ՌԱՀ-ի տեխնոլոգիական զարգացման տարբերակը, որը բնութագրվում է նշված ցուցանիշներով, կլինի օպտիմալ, եթե այն առավելագույնս է համապա-

տասխանում գիտական և տեխնոլոգիական զարգացման ազգային առաջնահերթություններին, պաշտպանական անվտանգության ապահովման ոլորտում երկարաժամկետ նպատակներին և պետության իրական ներուժին:

Ոլորտի տեխնոլոգիական զարգացման այս տարբերակի իրականացմանը կարող են էապես խոչընդոտել այնպիսի չլուծված համակարգային խնդիրներ, ինչպիսիք են՝

1. ՌԱՀ-ի չափի և կառուցվածքի անհամապատասխանությունը, ինչպես նաև իր կազմի մեջ մտնող ընկերությունների անբավարար տեխնոլոգիական զարգացածությունը,

2. ՌԱՀ-ի ներուժի օգտագործման անբավարարությունը քաղաքացիական նախանշանակման գիտատար և բարձր տեխնոլոգիական արտադրանքի թողարկման համար,

3. ՌԱՀ-ի ոլորտի համապատասխան կադրերի (միջին մասնագիտական, ինժեներատեխնիկական և գիտական՝ ասպիրանտական) պատրաստման համակարգի թերզարգացածությունը:

ՌԱՀ-ի տեխնոլոգիական զարգացման օպտիմալ տարբերակի իրականացման անհրաժեշտ ընդհանուր պայման է տնտեսության անցումը նորամուծական (ինովացիոն) համակարգի, ինչպես նաև ռազմական արդյունաբերության խորը վերակառուցումը, հայրենական կրթության և գիտության, խառը ոլորտների զարգացման բարձր տեմպերի ապահովումը:

ՌԱՀ-ի տեխնոլոգիական զարգացման վերջնական նպատակներին հասնելու և այդ ոլորտում գոյություն ունեցող համակարգային խնդիրները հաղթահարելու համար պետք է լուծել հետևյալ պրոբլեմները.

1. ինտեգրված կառույցների ձևավորում, ՌԱՀ-ի գիտական և տեխնոլոգիական զարգացման առանցքային ոլորտներում տեխնիկատեխնոլոգիական կենտրոնների ստեղծում,

2. ՌԱՀ-ում և հարակից ոլորտներում ինտեգրված կառույցների կորպորատիվ կառավարման արդյունավետ համակարգի ստեղծում,

3. ՌԱՀ-ի արտադրական հզորությունների օպտիմալացում,

4. ՌԱՀ-ի ընկերությունների արդիականացում, ամբողջական վերակառուցում և տեխնիկական վերազինում,

5. ռազմական և քաղաքացիական նախանշանակման մրցունակ արտադրանքի թողարկման համար անհրաժեշտ սարքավորումների մշակման ու ներմուծման կազմակերպում,

6. ՌԱՀ-ի ընկերությունների բեռնվածության մակարդակի ապահովում,

7. թողարկվող արտադրանքի որակի բարձրացման և ինքնարժեքի նվազեցման ուղղությամբ միջոցառումների ձեռնարկում,

8. ոլորտի ապահովում ներդրումներով, որոնք անհրաժեշտ են ՍՌՏ հեռանկարային նմուշների արտադրության ամբողջ փուլաշրջանի տեխնոլոգիական արդիականացման, ինչպես նաև քաղաքացիական նախանշանակման մրցունակ գիտատար և բարձր տեխնոլոգիական արտադրության համար,

9. առավել կարևոր (կրիտիկական) տեխնոլոգիաների ներդրման ապահո-

վում, ինչն անհրաժեշտ է աշխարհում մրցունակ ռազմական և քաղաքացիական նախանշանակման արտադրության ստեղծման համար,

10. ՍՌՏ և քաղաքացիական նախանշանակման նոր մրցունակ ապրանքների տեսականու ստեղծման հեռանկարային ծրագրերի մշակում և իրականացում,

11. ՌԱՀ-ի զարգացման նորմատիվ-իրավական ապահովում,

12. ՌԱՀ-ի և հարակից ոլորտների համար կադրերի ուսուցման և վերապատրաստման համակարգի զարգացում:

Ըստ այդմ՝ ՀՀ ՌԱՀ-ի 2011–2015 թթ. զարգացման ուղղությունները կողմնորոշված են դեպի հետևյալ տեսակների սպառազինության և ռազմական տեխնիկայի մշակում և արտադրություն `

– խելացի (բանական) զենքեր,

– հեռակառավարման միջոցներ,

– կապի բանականացման (ինտելեկտուալացման) միջոցներ, այդ թվում՝ տեղեկատվահաղորդակցման միջոցների միավորում և ըստ օգտագործման պայմանների դրանց ավտոմատացված ընտրություն,

– տարբեր բնույթի ակտիվ և պասիվ ռադարային միջոցներ,

– տարբեր բնույթի էլեկտրոնային պաշտպանական ու հակապաշտպանական միջոցներ,

– անօդաչու, հեռակառավարմամբ կամ տրված ծրագրով թռչող սարքեր՝ տարբեր կշռով, չափերով և նախանշանակմամբ,

– կրակային միջոցների հզորությունների, պաշտպանվածության, ճկունության, ճշգրտության մեծացման համակարգեր,

– բազմաբնույթ ինժեներական միջոցներ,

– հրամանատարական կազմի վերապատրաստման համար տեսանմանարկումային մոդելավորման ու փորձագիտական համակարգեր:

Անհրաժեշտ է Զինված ուժերի համար ՍՌՏ ռազմական պատվերների բյուջետային հայտերի կազմման նոր մեթոդիկայի մշակում և ներդրում, ընդսմին պետք է հաշվառված լինեն ռազմական գիտության և տնտեսագիտության տեսական հիմունքներն ու գործնական արդյունքները: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է գիտականորեն հիմնավորված միասնական ռազմաֆինանսական քաղաքականության արդյունավետ մոդելի մշակում, մի մոդելի, որում ֆինանսական ռեսուրսների սահմանափակության պայմաններում օբյեկտիվորեն արտացոլված լինեն Զինված ուժերի գերակա պահանջմունքները:

Պետության մասշտաբով ռազմական արդյունաբերության զարգացումը կարող է շահագրգռող հանգամանք լինել նաև մասնավոր սեկտորի համար՝ ոլորտը գործարարության օբյեկտ դարձնելու և այնտեղ ծավալուն ներդրումներ կատարելու առումով:

Այսպիսով՝ ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարությունը ռազմական արդյունաբերության համակարգի զարգացումը դիտում է որպես ոչ միայն ՋՈՒ-ի կարիքների բավարարման գերակա միջոց, այլև պետության ընդհանուր տնտեսական զարգացման արդյունավետ խթանիչ:

РАЗВИТИЕ СИСТЕМЫ ВОЕННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ РА КАК ПРИОРИТЕТНАЯ ЗАДАЧА ОБОРОННЫХ РЕФОРМ

С. М. ОГАНЯН, Министр Обороны РА

РЕЗЮМЕ

Система военной промышленности (СВП) РА является одной из важнейших составляющих обеспечения военной безопасности государства. В связи с этим ее развитие и превращение в одну из ведущих сфер экономики РА являются приоритетной задачей государственной политики. Это позволит:

–повысить роль и влияние политики государства в международных и региональных процессах;

–разрабатывать производственные технологии на основе современных достижений науки;

–интегрироваться в международные и региональные экономические процессы.

При планировании направлений и механизмов развития СВП в РА необходимо учитывать мировые тенденции развития средств вооруженной борьбы и связанные с этим кардинальные изменения в способах ведения боевых действий, в частности–доминирование высокоточного оружия и многофункциональных координирующих информационных средств управления войсками, разведки и наведения и, как следствие, исчезновение таких традиционных понятий, как непрерывная линия соприкосновения с противником (фронт), тыл, суммарное преимущество над противником определяется не как простая сумма преимуществ отдельных единиц боевой техники, а в их интегральной взаимосвязи каждого бойца в ходе боевых действий.

В то же время следует учитывать, что всеускоряющийся технологический прогресс создает определенный психологический дискомфорт для индивидов, оказавшихся в непрерывно изменяющейся среде постиндустриального общества. А это означает, что соответствующим образом должна трансформироваться и система образования и воспитания подрастающих поколений.

Важным условием развития СВП в РА является продуманное совмещение производства товаров военного назначения с товарами гражданского потребления. При этом критериями должны служить:

– неуклонное выполнение в указанные сроки «Программы вооружения» ВС РА;

– существенный рост объемов наукоемкого и высокотехнологического производства продукции гражданского назначения.

Для достижения конечных целей технологической модернизации СВП и решения проблем в данной сфере необходимо:

– сформировать взаимно интегрированные структуры, в ключевых

сферах научно-технологического развития ВПК создать технико-технологические центры;

– создать эффективную систему корпоративного управления интегрированных структур в ВПК и смежных областях;

– оптимизировать производственные мощности ВПК;

– модернизировать, полностью перестроить и перевооружить компании, осуществляющие деятельность в ВПК;

– организовать разработку и внедрение оборудования, необходимого для производства конкурентоспособной продукции военного и гражданского назначения;

– обеспечить ВПК инвестициями, а также необходимый уровень загруженности предприятий;

– обеспечить внедрение критических технологий;

– усовершенствовать систему подготовки кадров для ВПК и т.д.

THE DEVELOPMENT OF THE RA MILITARY INDUSTRY SYSTEM AS A FOREGROUND TASK OF THE DEFENSE REFORMS

S. M. OHANYAN, Minister of Defense of the RA

SUMMARY

The Military Industry System (MIS) of the RA is an essential part of ensuring the military security of the state. In these terms its development and transformation into one of the leading spheres of the RA economy is a foreground task of the public policy. It will help to:

– strengthen the role and influence of the public policy in the international and regional processes;

– develop production technologies based on modern scientific achievements;

– integrate into the international and regional economic processes.

When planning the directions and mechanisms of the MIS in the RA the global trends in the means of warfare and the dramatic changes associated with in the methods of warfare, in particular, the dominance of precision guided weapons and multifunctional coordinating media for troops control, intelligence and guidance must be taken into account, and as a consequence the disappearance of such traditional concepts as a continuous contact line with the enemy (front), rear, total advantage over the enemy is defined not as a simple sum of the benefits of individual pieces of equipment but in their integral correlation of every soldier in combat.

At the same time it must be borne in mind that the accelerating technological progress creates certain psychological discomfort for individuals who find themselves in the constantly changing environment of post-industrial

society. This means that the education system and education of future generations should be transformed properly.

An important condition for developing the MIS in the RA is the planned combination of the production of military goods with the goods of civilian consumption. At the same time the criteria should be:

– the sustained performance within a specified time of the «Armament program» of the RA Armed Forces;

– the substantial growth in the high technology production for civilian use.

To achieve the ultimate goals of the technological upgrading of the MIS and to solve the problems in this field it is necessary to:

– form mutually integrated structures in the key spheres of the scientific and technological development of the MIS, create technical and technological centers;

– establish an effective system of corporate governance of the integrated structures in the MIS and related fields;

– optimize the production capacity of the MIS;

– upgrade, completely redesign and re-equip the companies operating in the MIS;

– organize the development and implementation of equipment needed to produce competitive products for military and civil use;

– ensure that the MIS gets investments as well as the required level of enterprises' utilization;

– ensure the introduction of critical technologies;

– improve the system of training a personnel for the MIS, etc.

ՀՀ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Մ. Ռ. ԻՍԱԽԱՆՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ ռազմաարդյունաբերական վարչության պետ, Ա. Պ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, ՔՀՃ 2-րդ դասի խորհրդական, ՀՀ ՊՆ ՌԱՎ-ի գլխավոր մասնագետ

Չքննարկելով ՀՀ ռազմական արդյունաբերության ոլորտում մինչ այսօր իրականացված պետական քաղաքականության հարցը՝ փորձենք պաշտպանական բարեփոխումների համատեքստում գնահատել ՀՀ-ում առկա ոլորտային ներուժը և հետագա զարգացման հեռանկարները:

Հայտնի է, որ ցանկացած պետությունում ռազմաարդյունաբերության զարգացման՝

– միակ աղբյուրը պետական պատվերն է, իսկ հիմքը՝ տվյալ պետության մեքենաշինական ճյուղի բազմազանությունը և զարգացածության աստիճանը,

– չափանիշը ՌԱՀ-ի ներգրավվածությունն է պետության տնտեսության համակարգում, այսինքն՝ հնարավորինս շատ ոլորտներում ընդգրկվածությունը, քանի որ գիտության և տեխնիկայի նվաճումները նախ օգտագործվում են ռազմաարդյունաբերության ոլորտում, ապա նոր՝ քաղաքացիական արտադրության մեջ:

1991 թ. հետո նորանկախ պետությունները, ունենալով պետական կառավարման նոր մոդելին անցման շրջանին բնորոշ բազում խնդիրներ՝ հաստատուն-տեսական-կառուցվածքային, գործառութային, գաղափարական, կողմնորոշումային և այլ բնույթի, իսկ որոշ դեպքերում էլ նաև զինված հակամարտություններ, սկսեցին ստեղծել իրենց ռազմական կառույցները:

Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ռազմական ոլորտում կատարվող աշխատանքները միայն գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական բնույթի էին, ինչի հետևանքով ստեղծվող փորձանմուշները հիմնականում ընդհանուր պատրաստվածքի բաղկացուցիչ մասեր էին, իսկ ռազմական տեխնիկայի և սպառազինության նորոգման աշխատանքներ ընդհանրապես չէին կատարվում, այսինքն՝ չկային սպառազինության և ռազմական տեխնիկայի սպասարկման ու նորոգման համար անհրաժեշտ պահեստամասեր, ինչպես նաև դրանց արտադրության ու շահագործման համար շահագործողական, կոնստրուկտորական, տեխնոլոգիական և նորմատիվային փաստաթղթեր: Արդյունաբերության 97 %-ն աշխատում էր ներմուծվող հումքով և կիսապատրաստուքներով, որոնք ՀԽՍՀ տարածք էին մտնում հիմնականում երկաթուղով, այն էլ՝ Ադրբեջանի ԽՍՀ տարածքով: Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունում չկար ռազմական նախանշանակման որևէ վերջնական սերիական արտադրություն:

Այս ամենի հետ մեկտեղ նորանկախ Հայաստանի Հանրապետությունը ԽՍՀՄ-ից ստացել էր նաև ավելի ծանր ժառանգություն, այն է՝

– 1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետևանքները, որոնք հանգեցրեցին նաև էներգետիկ ճգնաժամի,

– Լեռնային Ղարաբաղի զինված հակամարտությունը, որը ՀՀ շրջափակման պատճառ դարձավ,

– ԽՍՀՄ 7-րդ բանակի ռազմական տեխնիկան և սպառազինությունը, որոնք այդ ժամանակ արդեն ոչ բարվոք վիճակում էին:

Ելնելով վերը նշվածից՝ կարող ենք ասել, որ անկախ Հայաստանի Հանրապետությունը իր անկախ պետականության կերտումն ու Զինված ուժերի ստեղծումն սկսեց՝ չունենալով ռազմաարդյունաբերության ստեղծման համար որևէ բազա:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում իրականացված տնտեսական վերափոխումների հետևանքով լուրջ կորուստներ կրեց գիտական ներուժը, բարձր որակավորում ունեցող աշխատուժի վարկանիշն իջավ անթույլատրելի ցածր մակարդակի: Տնտեսության բարձր տեխնոլոգիական ոլորտի, մասնավորապես՝ մեքենաշինության, այդ թվում՝ ճշգրիտ մեքենաշինության, քիմիայի, ռադիոէլեկտրոնիկայի և այլ ճյուղերի զարգացման տեմպերն էապես դանդաղեցին:

ՀՀ ռազմաարդյունաբերության ոլորտում մինչև օրս իրականացված գործունեությունը կարելի է համարել միայն ռազմաարդյունաբերության համակարգի զարգացման համար նախադրյալների ստեղծում:

2010–2015 թթ. ՀՀ պաշտպանական բարեփոխումների ծրագրի շրջանակներում իրականացվող ՌԱՀ-ի զարգացման խնդիրների՝ հայեցակարգի և ծրագրի մշակման ժամանակ հաշվի են առնվել հետևյալ գործոնները՝

– ժամանակակից մարտահրավերները,

– Հայաստանի Հանրապետության Զինված ուժերը ժամանակակից սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով ապահովելու հրամայականը,

– ՀՀ-ում տիրող տնտեսական իրավիճակը,

– ՀՀ աշխարհագրական դիրքը և տարածքային առանձնահատկությունները,

– աշխարհաքաղաքական իրավիճակի հնարավոր փոփոխությունները,

– ՀՀ բնական ռեսուրսների կազմը,

– ՀՀ նախկին և ներկա գիտաարտադրական ներուժը:

ՀՀ ՌԱՀ-ի զարգացման պետական քաղաքականության ռազմավարական նպատակն է ՀՀ գիտատեխնիկական և արտադրատեխնոլոգիական ներուժի ձևափոխումը պետական հովանավորությամբ գործող արդյունավետ նորամուծական ռեսուրսի, որը կնպաստի պետության անվտանգության ապահովմանը:

ՀՀ ՌԱՀ-ի զարգացման պետական քաղաքականության միջնաժամկետ՝ 3–5 տարվա, ծրագրերի նպատակը պետք է լինեն ռազմաարդյունաբերական

բազային, գիտական և արտադրական ներուժ ձևավորող կազմակերպությունների պահպանումն ու զարգացման ապահովումը պետական աջակցությամբ՝ անկախ դրանց սեփականության ձևից:

Հայեցակարգով ու ծրագրով խստագույնս առաջնորդվելու և դրանցում նախատեսված միջոցառումներն իրականացնելու շնորհիվ էապես կհամակարգվի ՌԱՀ-ի կառավարումը, ինչն իր հերթին կնպաստի միջազգային շուկայում հայկական արտադրանքի մրցունակության ապահովմանը: Այդ միջոցառումներից են՝

– ՌԱՀ-ի կառավարման կազմակերպական կառուցվածքի նորամուծական կատարելագործումը՝ միջազգային փորձի հաշվառմամբ,

– ռազմական պատվերներ կատարող ընկերությունների համար հարկաբյուջետային ու վարկային քաղաքականության նոր մեխանիզմների մշակումը և ներդրումը,

– ձեռնարկությունների, Գիտությունների ազգային ակադեմիայի, գիտաարտադրական ընկերությունների և գիտաուսումնական հաստատությունների նյութատեխնիկական ու մտավոր կարողությունների կենտրոնացմանն ուղղված միջոցառումների լրամշակումը և իրականացումը՝ արդիական ՍՌՏ և ռազմատեխնիկական գույքի ստեղծման, արտադրության, արդիականացման ու նորոգման (վերականգնման) և, համապատասխանաբար, ռազմական անվտանգության ապահովման խնդիրների լուծման գործում Հայաստանի Հանրապետության արդյունաբերության և գիտության հնարավորությունները առավելագույնս օգտագործելու նպատակով,

– ռազմաարդյունաբերության ոլորտում նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի միասնական բազայի ստեղծումը,

– ՀՀ ԶՈՒ-ի սպառազինման պետական ծրագրի կատարման նպատակով ՀՀ ռազմաարդյունաբերության հնարավորությունների գնահատմամբ համապատասխան ծրագրերի մշակումը և իրագործումը,

– ընկերությունների նորամուծական տեխնոլոգիական զարգացման և տեխնիկական վերազինման ծրագրերի մշակումը, ինչը կնպաստի նաև արտաքին շուկայում հայրենական թողարկման ապրանքների մրցունակության ապահովմանը,

– ընկերություններում ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխանող կառավարման համակարգերի (կառավարիչների հաստատության) ներդրումը,

– տեղական հումք օգտագործող նոր բարձր տեխնոլոգիաների մշակումը և արտադրության մեջ ներդրումը,

– ռազմական պատվերներ կատարող ընկերություններում համախառն արտադրանքի մեջ քաղաքացիական նախանշանակման արտադրանքի տեսակարար կշռի մեծացմանն ուղղված միջոցառումների մշակումը և իրականացումը,

– ընկերությունների միջև արտադրական կոոպերացիայի կազմակերպումը և քարտագրման համակարգերի ներդրումը,

– ՌԱՀ-ի գործունեության իրավական կարգավորման նորմատիվ փաստաթղթերի լրամշակումը և ներդրումը,

– ՀՀ-ում արտադրվող և արտերկրից ձեռքբերվող զինատեսակների, արտադրատեսակների և այլ նյութական արժեքների հարաբերակցության օպտիմալացումը,

– ՌԱՀ-ի ընկերությունների մտավոր ներուժի զարգացումը և կադրերի վերապատրաստումը,

– ՌԱՀ-ի գործառնության տեղեկատվավերլուծական համակարգի զարգացումը և անվտանգության ապահովումը,



Սի դրվագ հայկական և լեհական ռազմաարդյունաբերական ձեռնարկությունների միջև համագործակցության զարգացման հեռանկարներին նվիրված քննարկումից.

Երևան, ՀՀ պաշտպանության նախարարություն, 2011 թ. հուլիսի 6

– խաղաղ և պատերազմական ժամանակ արդյունաբերության մոբիլիզացիոն առաջադրանքների կատարման համար մոբիլիզացիոն նախապատրաստության պլանների լրամշակումը՝ ըստ ռազմաքաղաքական իրավիճակի փոփոխման,

– ռազմաարդյունաբերական և ռազմատեխնիկական համագործակցության բազմազանեցման (դիվերսիֆիկացիա) ապահովումը՝ այլ երկրների հետ ռազմատեխնիկական համագործակցության երկկողմանի ծրագրերի իրականացմամբ՝ այդ ոլորտների միաբևեռայնության և որևէ երկրից կախման աստիճանի նվազեցմամբ,

– ռազմական անվտանգության ապահովման առանցքային խնդիրների լուծման համար հիմնարար գիտահետազոտական աշխատանքների կազմակերպումը,

– պաշտպանական անվտանգության համակարգի գիտատեխնիկական, տեխնոլոգիական և արտադրական հիմքերի պահպանումը, կատարելագոր-

ծումն ու ընդլայնումը, ինչպես նաև նոր սերնդի առավել արդյունավետ պաշտպանական համակարգերի ստեղծումը,

– սահմանված ռազմատեխնիկական քաղաքականությանը համահունչ ծրագրերի մշակումն ու իրականացումը,

– ռազմաարդյունաբերության արդի պահանջներին համապատասխանող գիտական ներդրումային ծրագրերի, ինչպես նաև գիտատեխնիկական կադրերի պատրաստման պետական պատվերի նախագծերի մշակումն ու կենսագործումը,

– ռազմաարդյունաբերության համակարգի համալրումն ըստ ուղղությունների (ոլորտների) գլխավոր պատասխանատու մասնագետներով և այլն:

Ռազմաարդյունաբերության զարգացման միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ՝

1. ռազմաարդյունաբերական ոլորտում զարգացում կարելի է ակնկալել, եթե այն դիտվի նաև որպես գործարարության օբյեկտ, որն ունի իր նպատակները և ուրույն տնտեսական օրենքները,

2. տվյալ ոլորտում երաշխավորված զարգացում ապահովում են այն պետությունները, որտեղ առաջադրվում են հավակնոտ խնդիրներ, որոնց լուծումը կատարվում է կորպորատիվ կառավարում իրականացնող կամ կոնցեսիոն (հավատարմագրային) կառավարմամբ այլ ընկերությանը հանձնված (ինչը պետական սեփականության մասնավորեցման այլընտրանք է) պետական կազմակերպությունների միջոցով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Մ. Ռ. Իսախանյան, Ա. Ռ. Թովմասյան,* Ռազմատնտեսագիտության հասկացությունը և խնդիրները ՀՀ պաշտպանական բարեփոխումների համատեքստում: «ՀՔ», 2010, հմ. 4:

2. *Յու. Գ. Խաչատուրով, Պ. Ա. Շաղյան, Կ. Ա. Դաղալյան,* Ռազմական արդյունաբերությունը և նրա վերակազմավորման խնդիրները: «ՀՔ», 2008, հմ. 1:

3. *В. Иванов.* Заказчики Пентагона довольны своими поставщиками. «Независимое военное обозрение», 27 мая 2011 г.

4. *Б. Н. Кузык.* Военно-промышленный комплекс в экономике и политике России. М., 2004.

5. «Отечественный военно-промышленный комплекс и его историческое развитие», под ред. О. Д. Бакланова, О. К. Рогозина. М., 2005.

6. *Peter W. Singer*. Corporate Warriors: The Rise of the Privatized Military Industry. New York, March 2004.

ОСНОВНЫЕ МЕРОПРИЯТИЯ ПО РАЗВИТИЮ СИСТЕМЫ ВОЕННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ РА В РАМКАХ ОБОРОННЫХ РЕФОРМ

М. Р. ИСАХАНЯН, полковник, начальник военно-промышленного управления МО РА,
А. П. ПЕТРОСЯН, советник 2-ого класса Специальной гражданской службы, главный специалист ВПУ МО РА

РЕЗЮМЕ

В Республике Армения в результате экономических преобразований и ошибочности выбора приоритетов значительные потери понес научный потенциал, упал рейтинг квалифицированной рабочей силы, снизились темпы развития высокотехнологичной сферы экономики, в частности: машиностроения, в том числе – точного машиностроения, химии, радиоэлектроники и т. д.

В настоящее время стратегической целью государственной политики по развитию системы военной промышленности (СВП) РА является трансформация научно-технического и производственно-технологического потенциала в функционирующий при государственной поддержке эффективный инновационный ресурс, необходимый для обеспечения оборонной безопасности государства.

Разработанная концепция и программа развития СВП позволят систематизировать управление СВП обеспечением на международном рынке конкурентоспособности армянской продукции. В связи с этим планируется совершенствование организационной структуры управления СВП; внедрение новых механизмов налогово-бюджетной и кредитной политики для предприятий, выполняющих оборонный заказ, реализация мероприятий по консолидации материально-технических и интеллектуальных возможностей предприятий, НАН РА и научно-учебных учреждений; создание базы нормативно-технической документации в сфере оборонной промышленности; разработка программ инновационного технологического развития и технического переоснащения организаций и внедрение в них систем управления (института управляющих), соответствующих международным стандартам; разработка и внедрение в производство новых высоких технологий, базирующихся на использовании местного сырья; разработка и внедрение мер по увеличению удельного веса продукции гражданского назначения в валовой продукции организаций, выполняющих оборонные заказы; доработка нормативной документации по правовому регулированию деятельности СВП; оптимизация баланса ВВТ, производимых в РА и закупаемых за рубежом; развитие интеллектуального потенциала предприятий СВП и переподготовка кадров; обеспечение диверсификации военно-промышленного и военно-технического сотрудничества; организация целевых фундаментальных научно-исследовательских работ; создание оборонных систем нового поколения; разработка проектов госзаказа на подготовку научно-технических кадров и научных инвестиционных программ, соответствующих требованиям оборонной промышленности, и т. д.

THE MAIN STEPS TO DEVELOP THE RA MILITARY INDUSTRY SYSTEM WITHIN THE FRAMEWORK OF THE DEFENSE REFORMS

M. R. ISAKHANYAN, Colonel, Head of the Military-Industry Department, MOD, RA,
A. P. PETROSYAN, 2nd Class Advisor of the Special Civil Service,
Chief Specialist in the Military-Industry Department, MOD, RA

SUMMARY

As a result of economic reforms and wrong choice of priorities the scientific potential suffered a significant loss, the rating of a skilled workforce dropped, the rate of developing high-tech sectors of the economy decreased in the Republic of Armenia, in particular, mechanical engineering, including precision engineering, chemistry, radioelectronics, etc.

Currently, the strategic goal of the public policy in the development of the RA military industry system (MIS) is the transformation of scientific-technical and industrial-technological potential into an effective innovative resource functioning under the state support which is instrumental in ensuring the defense security of the state.

The elaborated concept and development program of the MIS will help systematize the management of the MIS by ensuring the competitiveness of Armenian the products in the international market. In these terms it is planned to upgrade the organizational structure of the MIS control; introduction of new instruments of fiscal and credit policy for the enterprises meeting the defense demand, implementation of measures to consolidate the material-technical and intellectual capabilities of enterprises of the NAS, RA and academic-educational institutions; establishment of the framework of normative-technical documentation in the defense industry sphere; development of software of innovative technological progress and technical retooling of organizations and introduction of control systems (controllers' institute) in them consistent with the international standards; development and introduction in the industry of new high technologies based on the use of local raw materials; development and implementation of measures to increase the share of civilian products in the gross output of organizations engaged in meeting the defense demand; improvement of normative documents on the legal regulation of the MIS activity; optimization of the balance of weapons and military equipment produced in the RA and procured abroad; development of intellectual potential of the MIS enterprises and retraining of the personnel; ensuring of the diversification of the military-industrial and military-technical cooperation; organization of targeted basic research activities, creation of new-generation defense systems; development of the state-order projects for training of scientific-technical personnel and research investment programs meeting the requirements of the defense industry, etc.

ՀՀ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Ա. Պ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, ՔՀՃ 2-րդ դասի խորհրդական,
ՀՀ ՊՆ ՌԱՎ-ի գլխավոր մասնագետ,
Ա. Ռ. ԹՈՎՄԱՍՅԱՆ, ՔՀՃ 1-ին դասի առաջատար ծառայող,
ՀՀ ՊՆ կենտրոնական զինվորական ներկայացուցչության տնտեսագիտական բաժանմունքի առաջատար մասնագետ

Անկախությունից հետո Հայաստանի Հանրապետությունում ընտրվեց շուկայական տնտեսության անցման արմատական կերպափոխումների ուղին: Ընդսմին ենթադրվում էր մոնետարիստական լծակներով և միջազգային ֆինանսական հաստատությունների օգնությամբ կրճատել արտադրության անկումն ու հասնել մակրոտնտեսական կայունության: Սկսվեց հին կառույցների արագ վերացում և նորերի ստեղծում՝ ազատականացմամբ և մասնավորեցմամբ, համապատասխան հաստատութենական վերափոխումներով:

Պետք էր տարբերել պետության անկախությունը նրա տնտեսության անկախությունից. տնտեսությունը կառավարելու անկախությունը ամենևին էլ չի նշանակում տնտեսության անկախություն:

Տնտեսության ազատականացման ճիշտ ուղու ընտրության համար պահանջվում էր առավելագույնս հաշվի առնել հանրապետությունում ստեղծված առանձնահատուկ իրավիճակը և ազգային յուրահատկությունները, մասնավորապես՝ ազգային մտածելակերպը:

ԱՊՀ բոլոր նորանկախ հանրապետություններում տնտեսական վերափոխումների բնույթը պայմանավորող հիմնական գործոններն էին տնտեսության կառուցվածքը, ռեսուրսապահովվածությունը և նախկին կախումը արդեն գոյություն չունեցող «կենտրոնից»:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը տնտեսական վերափոխումներն սկսեց՝ արտադրության մեջ կտրուկ կերպով նվազեցնելով իր դերը և գերակա դարձնելով մասնավորինը:

Սկզբնական շրջանում՝ մինչև 1993 թվականը, Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ կատարված արմատական վերափոխումները հետագայում դանդաղեցին՝ չստանալով իրենց տրամաբանական զարգացումը: Դրա պատճառն այն էր, որ տնտեսական կարգավորման կառույցների կազմալուծումից հետո առաջացած վակուումը չլցվեց նորաստեղծ հարաբերություններին համապատասխանող տնտեսական կառույցներով և չամրագրվեց իրատեսական ծրագրերով:

Արտադրության միջոցների ապապետականացումը ժամանակային առումով չէր ուղեկցվում ենթակառուցվածքների ներդաշնակ ապապետականացմամբ: Ընկերությունների ապապետականացումից հետո խզվեցին կապերը պետական մատակարարման մարմինների հետ, որոնք դեռ պահպանում էին պետական կարգավիճակը:

Կառավարման ու կառուցվածքային կերպափոխումների ասպարեզում դրսևորվեցին անիրազեկություն ու ծայրահեղականություն, որոնք չէին կարող իրենց զգացնել չտալ և չհանգեցնել հանրապետության տնտեսության փլուզման:

Մասնավորեցման ընթացքում թույլ տրված սխալների պատճառով տնտեսության առաջատար ճյուղերը հայտնվեցին խոր ճգնաժամում: Արդյունաբերության ոլորտում մասնավորեցումը կատարվեց փուլ առ փուլ:

Սկզբում կիրառվեց 20 %-ի չափով անհատույց սեփականաշնորհում՝ փակ և բաց բաժնետիրական ընկերությունների ստեղծմամբ, ընդսմին սեփականատերեր դարձան ձեռնարկության կոլեկտիվի անդամները, ինչը դրական երևույթ էր: Արդյունաբերության նախարարության հաստատած՝ձեռնարկությունների մասնավորեցման մեթոդիկան զերծ չէր մի շարք թերություններից, որոնցից հանգուցայինը նյութական արժեքների գնահատման կարգն էր: Դրանք գնահատվում էին մնացորդային արժեքով՝ կազմելով չնչին գումարներ: Սեփականաշնորհված ձեռնարկությունների սեփականատերերի հիմնական մասի գործունեությունը եղավ արտադրության միջոցների վաճառքով ներդրված կապիտալի վերականգնումը և հետագա կուտակումը, ինչի հետևանքով այդ ձեռնարկությունները փաստացի դադարեցրին տնտեսական գործունեությունը: Շատ սեփականատերեր չէին կողմնորոշվում գործունեության նոր ոլորտի ընտրության հարցում և որոշումներն ընդունում էին ըստ տվյալ պահի իրավիճակի: Հետագայում կուտակված կապիտալը հիմնականում ներդրվեց ոչ արդյունաբերական ոլորտներում:

Վերը նշվածի պատճառները ՀՀ արդյունաբերության ոլորտի զարգացման համապատասխան ծրագրերի իրականացման անարդյունավետությունն ու հիմնականում անհետևողականությունն էին:

Եվ այսպես. ուսումնասիրելով հանրապետությունում կատարված մասնավորեցումը՝ կարող ենք արձանագրել, որ՝

– այն չի հանգեցրել տնտեսության աշխուժացման, արդյունավետության մեծացման, օտարերկրյա կապիտալի մեծ ներդրումների, հսկայական արժեք ունեցող պետական գույքի մասնավորեցման հետևանքով պետական բյուջե կատարված մուտքերը մեծ չէին,

– զանգվածային մասնավորեցումը կատարվեց առանց համապատասխան ներդրումային կառույցների ստեղծման, ինչն զգալի չափով նվազեցրեց բաժնետիրական կառավարման արդյունավետությունը,

– մասնավորեցումը չուղեկցվեց ձեռնարկատիրական գործունեությանը պետական աջակցության քաղաքականությամբ, ձեռնարկատերերն ստիպված եղան մասնավորեցումից հետո միայնակ հաղթահարել շուկայական հարաբերություններին անցման հետ կապված դժվարությունները:

Նման պայմաններում ռազմաարդյունաբերության կայացման գործընթացը չէր կարող դյուրին լինել, հատկապես, որ ժամանակային առումով համընկավ բարդ քաղաքական իրավիճակի և ի վերջո ռազմական բախման վերածված հակամարտության հետ:

Վերլուծելով ՀՀ արդյունաբերության և, մասնավորապես, ռազմաարդյունա-

բերության համակարգի գործունեությունն անցած տարիներին և ներկա վիճակը՝ կարող ենք համոզվել, որ՝

– Հայաստանն իր անկախ պետականության կայացման տարիներին տնտեսության վերակազմավորումն իրականացրել է առանց ռազմաարդյունաբերության գերակա ճյուղերի որոշման և առանց դրանց զարգացման ծրագրերի,

– ռազմական պատվերներ կատարող ընկերությունները, անկախ իրենց սեփականության ձևից, հիմնականում ամբողջությամբ կախված են եղել ՀՀ ՊՆ-ից, ինչը պայմանավորված էր նրանց կողմից զուտ ռազմական պատվերներ կատարելու հանգամանքով, մինչդեռ պաշտպանության նախարարությունը, լուծելով գերատեսչական խնդիրներ, ի դեմս ռազմաարդյունաբերական վարչության հանդես է եկել որպես պատվիրատու՝ միանգամյա գնորդի կարգավիճակով,

– սպառազինության և ռազմական տեխնիկայի նոր նմուշների մշակման և ձեռքբերման ժամանակ չի իրականացվել արտադրատեսակի կյանքի փուլաշրջանի գնահաշվարկ, փոխարենը հաշվարկվել են միայն սկզբնական ձեռքբերման ծախսերը:

Մինչև 2001 թ. ռազմաարդյունաբերության գործունեության քաղաքականությունը իրականացնում էր ՀՀ վարչապետի նախագահությամբ գործող ռազմաարդյունաբերական հանձնաժողովը, որը ձևավորում էր պաշտպանական նշանակություն ունեցող աշխատանքների պետական պատվերները:

2001 թվականից մինչ այժմ պետության ռազմատեխնիկական քաղաքականության իրականացումը վերապահված է ՀՀ պաշտպանության նախարարությանը՝ հանձին պաշտպանության նախարարի: ՀՀ պաշտպանության նախարարը ռազմաարդյունաբերական վարչության միջոցով սկսեց վարել այնպիսի ռազմատեխնիկական քաղաքականություն, որը նպատակաուղղված էր առկա ՍՌՏ-ն հնարավորինս մարտունակ վիճակում պահելուն և հնարավորության դեպքում արդիականացնելուն:

ՀՀ պաշտպանական պետական պատվերներ կատարող ընկերությունները հիմնականում ունեն իրենց կայուն գործունեության ապահովման և զարգացման հետ կապված հետևյալ պրոբլեմները.

– անհրաժեշտ ֆինանսական, արտադրական և աշխատանքային ռեսուրսների անբավարարություն ոչ միայն իրենց զարգացման, այլև շատ դեպքերում՝ նույնիսկ արդյունաբերական ու գիտատեխնիկական ներուժի պահպանման համար,

– աշխատավարձի մակարդակի ոչ մրցունակ լինելը, և, որպես հետևանք, բարձր որակավորում ունեցող կադրերի վերարտադրման փաստացի անբավարարությունը:

Վերը նշվածի հետ մեկտեղ գոյություն ունեն ճգնաժամային իրավիճակի հաղթահարումը ձգձգող մի շարք սուբյեկտիվ գործոններ: Հիմնական գործոններից մեկը այն է, որ չկա «տնտեսվարող մարդու» մոդել, ռացիոնալության վարքագծի հայեցակարգի ստեղծման դաշտ, ինչի հետևանքով չկան ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխանող կառավարիչներ, տեղի են ունենում կազմակերպության ֆինանսական հոսքերի սխալ կառավարում, ոչ

արտադրական ծախսերի ավելորդ աճեցում, աշխատողների թվի անհիմն մեծացում, և այլն:

Արդյունավետության մեծացման, շուկայական կարգավորման մեխանիզմների լայնածավալ կիրառման և արտադրության աճի խթանման հեռանկարներ չլինելու պատճառով ՌԱՀ-ի կառավարման համակարգը դեռ չունի ռեսուրսների կենտրոնացման, պահանջվող ներդրումների ներգրավման հարցերը լուծելու հստակ կարողություն: Պետությունը փաստացի կառավարում է պետական պատվերով արտադրվող ապրանքների թողարկումը, մինչդեռ նպատակաուղղված կառավարչական որոշումների ոլորտից դուրս են մնում նորարարական ներուժի ավելի ամբողջական իրացման, իրացման նոր շուկաներ դուրս գալու, ծախսումների նվազեցման, պետական միջոցների օգտագործման արդյունավետության, ընկերությունների ներդրումային գրավչության մեծացման խնդիրները:

Ընկերությունների մեծ մասում պահանջվում է կառավարման համակարգի արմատական վերակառուցում, քանի որ դրանք չունեն զարգացման տնտեսապես հիմնավորված ռազմավարություն, կիրառում են բիզնեսի, արտադրության, ֆինանսական հոսքերի, մարկետինգի, կադրերի կառավարման հնացած մեխանիզմներ: Նյութական միջոցները ծախսվում են ծայրահեղ անարդյունավետ: Միավոր արտադրանքի արտադրության վրա կատարվող ծախսումները մեծ են, ուստի ինքնարժեքը բարձր է, ինչը շուկայում ապրանքը դարձնում է ոչ մրցունակ: Պետությունից ստացվող ֆինանսական միջոցները ուղղվում են ոչ թե տնտեսական գործունեության արդյունավետության մեծացմանը, այլ չհիմնավորված մեծ ծախսերի փոխհատուցմանը:

ՈՒսումնասիրելով և վերլուծելով ռազմաարդյունաբերության զարգացման միջազգային փորձը՝ կարող ենք փաստել, որ զարգացած ռազմական արդյունաբերություն ունեն այն պետությունները, որոնցում ռազմաարդյունաբերական պատվերները կատարում են կորպորատիվ կառավարմամբ կամ հավատարմագրային կառավարման հանձնված ընկերությունները (ԱՄՆ, ՌԴ, Իսրայել, ՈՒկրաինա և այլն):

Կորպորատիվ կառավարման էությունն այն է, որ ոլորտի միևնույն ճյուղի ընկերությունները, բաժնետիրական ընկերության կամ որևէ ընկերակցության տեսքով, պահպանելով իրենց իրավաբանական անձի կարգավիճակը, ձեռնարկատիրական գործունեությունը համակարգելու նպատակով միավորվում են՝ ստեղծելով կորպորատիվ կառավարմամբ ընկերություն, որի մասնակիցները փոխկապված են մասնակցության համակարգի, արտոնագրային լիցենզիոն համաձայնությունների, ֆինանսավորման, սերտ արտադրական գործակցության միջոցով:

Վերջին քսան տարիներին՝ ԱՄՆ-ի և ԽՍՀՄ-ի միջև Սառը պատերազմի կամ, մասնավորապես, սպառազինությունների մրցավազքի ավարտից հետո, աշխարհում մեծամասշտաբ պատերազմի հավանականությունը նվազել է, և գերտերությունների զինված ուժերի հիմնական խնդիրն է դարձել մասնակցությունը տեղային հակամարտություններում ընթացող մարտական գործողություն-

ներին՝ առանց զանգվածային ոչնչացման զենքի կիրառման: Ինչպես ցույց է տալիս փորձը, տեղային պատերազմներում առավել մեծ դեր ունի գերճշգրիտ, այսպես կոչված՝ «խելացի» զենքը: Դա նշանակում է, որ ռազմական պատվերները կողմնորոշված են դեպի բարձր տեխնոլոգիաների կիրառմամբ թողարկվող ապրանքների արտադրություն, ինչը անխուսափելիորեն հանգեցնում է ռազմական տեխնիկայի թանկացման: ՈՒստի անհրաժեշտաբար հարկ կլինի կրճատել ԶՈՒ-ի անձնակազմի թվաքանակը և, միաժամանակ, բարձրացնել զինծառայողների մասնագիտական որակը (մակարդակը):

Աշխարհում տեղի ունեցող գիտատեխնիկական սրընթաց զարգացումների և դրան ՀՀ անմասն չմնալու հրամայականի բերումով, անհրաժեշտ է ռազմական արդյունաբերության զարգացումն սկսել հիմնարար գիտահետազոտական աշխատանքներից՝ դրանով իսկ խթանելով ԳՀՓԿԱ-ների կատարման արագությունը ու որակը, ինչն էլ համապատասխան ոլորտներում նոր տեխնոլոգիաներով զենքի ստեղծման գրավականն է:

ՌԱՀ-ի զարգացման գործոններից հատուկ տեղ է տրվում տնտեսականին, որը, հատկապես մակրոտնտեսական մակարդակով, պետք է ապահովի ՌԱՀ-ի կայուն զարգացումը և նրա գործունեությունը տեղափոխի արդյունավետության հարթություն: Որպես ՌԱՀ-ի տնտեսական զարգացման ստանդարտներ պետք է դիտվեն ինչպես ռազմական գիտության զարգացման համընդհանուր միտումները, այնպես էլ արտաքին միջավայրի տնտեսաքաղաքական բնութագրերը:

Խոսելով ՌԱՀ-ի զարգացման մասին՝ անհրաժեշտ ենք համարում նշել նաև որոշ հանգամանքներ, որոնք ապագայում կփոխեն ՌԱՀ-ի դերը ինչպես տնտեսության, այնպես էլ քաղաքականության բնագավառներում, և որոնք պետք է հաշվի առնվեն ՀՀ ՌԱՀ-ի զարգացման ծրագրերում: Դրանք են.

– ինչպես վկայում է վիճակագրական վերլուծությունը, պետության տնտեսական զարգացմանը համընթաց կփոխվեն սպառազինության համակարգերին ներկայացվող պահանջները,

– աշխարհի աշխարհաքաղաքական պատկերում տեղի ունեցող փոփոխությունների հետևանքով կկատարվի ռազմական ուժի վերաբաշխում,

– ԶՈՒ-ի առջև ծառացած մարտահրավերների վերանայումը կհանգեցնի ՌԱՀ-ում արտադրվող ապրանքների արտադրության որակական մակարդակի փոփոխման,

– ռազմատնտեսագիտական մշակումների ոլորտում առանձին պետությունների ունեցած համեմատական առավելությունները նոր երանգ կստանան ռազմավարական համամասնության (պարիտետ) առումով, քանի որ սպառազինության որոշ տեսակների գծով առավելությունը ձեռք էր բերվում այլ տեսակների զարգացման հաշվին: Ավելին. սպառազինությունների արտադրության մեկ ոլորտի հետագա զարգացման դեպքում փոքր է դառնում քաղաքացիական շուկայում ձեռք բերված տեխնոլոգիաների իրացման հնարավորությունը:

Ռազմատնտեսագիտական համամասնությունն ապահովում է պետությունների ՌԱՀ-երի համեմատական առավելությունը: Նման մոտեցման դեպքում

համեմատության մեջ են դրվում ոչ միայն սպառազինության համապատասխան տեսակները, այլ առաջին հերթին այն տեխնոլոգիաները, որոնց կիրառմամբ ապահովվում է բավարար քանակությամբ ու որակով ՍՌՏ արտադրությունը: Հետևաբար, հետագայում իմաստ ունի խոսել ոչ թե սպառազինության տեսակների, այլ տեխնոլոգիաների համամասնության մասին: ՌԱՀ-ի համեմատական առավելությունների մրցավազքը կփոխարինվի ռազմաարդյունաբերական տեխնոլոգիաների մրցավազքով: Դա կունենա մի շարք կարևոր հետևանքներ ռազմատեխնիկական քաղաքականության մշակման համար: Առաջին հերթին՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտում առաջընթաց հնարավոր է միայն ծավալուն հիմնարար հետազոտությունների շնորհիվ:

Շուկայական մեխանիզմը խթանում է նոր հեռանկարային տեխնոլոգիաների զարգացումը, դրանք հարմարեցնում է քաղաքացիական ոլորտում օգտագործմանը,

– տեղի կունենա կապիտալի կենտրոնացում և մենաշնորհ ունեցող պետությունների ձևավորում, ինչը կհանգեցնի սպառազինությունների արտադրությունից «ոչ հիմնական» պետությունների դուրսմղմանը (ի դեպ, դա արդեն կատարվում է):

Փաստորեն, այդպիսով կստեղծվեն մի խումբ պետություններ (ԱՄՆ, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Իսրայել, Ռուսաստան, Չինաստան և այլն), որոնք համաշխարհային շուկայում հանդես կգան որպես ՍՌՏ և ՌՏՈՒ արտադրողմատակարարներ: Այդ շուկայում մրցունակության կորուստը գործնականում կնշանակի ընդմիշտ կորցնել շուկան: ՈՒստի անհրաժեշտ է կատարել սպառազինությունների շուկաներում տիրող իրավիճակի մշտազննում և թույլ չտալ, որ հայրենական արտադրողների ապրանքները կորցնեն իրենց մրցունակությունը:

Վերը թվարկած դրույթներից հետևում է, որ մոտ ապագայում պետք է սպասել ռազմական ոլորտի զարգացման որակական նոր փուլ: Այն պայմանավորված կլինի ինչպես ծագած մարտահրավերներով, ՋՈՒ-ին համապատասխանաբար ներկայացվող նոր պահանջներով, այնպես էլ ռազմաարդյունաբերության արտադրական ուժերի շարունակական զարգացմամբ:

ՀՀ-ում պաշտպանական բարեփոխումների ծրագրով հիմք դրվեց ռազմաարդյունաբերության ոլորտում կիրառվող արտադրական տեխնոլոգիաների և դրանց ընդհանուր բնութագրերին ներկայացվող պահանջների փոփոխություններին: Դա առաջին հերթին պայմանավորված է տնտեսական պայմանների փոփոխություններով:

Այս առումով ՌԱՀ-ի տնտեսական բնական զարգացման մասին խոսելիս անհրաժեշտ է տարանջատել այդ բնական զարգացումը ծնող երկու գործոն՝

– տնտեսական, որը հիմնականում մարմնավորում է ինչպես ՌԱՀ-ի, այնպես էլ տվյալ պետության ամբողջ արդյունաբերության ոլորտում իրագործվող բարեփոխումների և զարգացման քաղաքականության ուղղվածության արդյունքը: Գործոնի հաշվառումը կարող է խթանել ընկերություններում տնտեսական տեսանկյունից ավելի արդյունավետ արտադրական ենթակառուցվածքների ստեղծումը:

– քաղաքական, որը, լինելով ռազմական ոլորտի արտադրանքի վրա վերջնական պահանջարկի ազդեցություն, ձևավորվում է ըստ ներքին և արտաքին պահանջարկի: Գործոնը ապագայում կկանխորոշի ՌԱՀ-ի մասնագիտացումը ինչպես ազգային շուկայի շրջանակներում, այնպես էլ սպառազինությունների միջազգային շուկայում:

Եթե վերջնական պահանջարկի կառուցվածքի կանխատեսումը (երկրորդ գործոնը) հայրենական ՌԱՀ-ը աշխատունակ պահելու երաշխիքն է, ինչպես նաև կարող է արագ փոփոխվող աշխարհում հնարավորինս մեծացնել սպառազինությունների շուկայում ՀՀ մասնաբաժինը, ապա առաջին գործոնը կպայմանավորի միջազգային շուկայում ՀՀ ռազմաարդյունաբերության մրցունակությունը և էապես կնպաստի ՀՀ-ում ճկուն արտադրական կառույցների ձևավորմանը՝ միջազգային շուկաներում իրավիճակի կտրուկ վերելքներին ու վայրէջքներին որքան հնարավոր է նվազ կորուստներով հարմարեցված: Ինչպես երևում է, այս երկու գործոնները փոխլրացնող են, թեև որոշիչը տնտեսական գործոնն է:

Պաշտպանական ոլորտում անկայուն տնտեսական ենթակառուցվածքների առկայության դեպքում հնարավոր չէ երկարաժամկետ հեռանկարում պահպանել ձեռք բերված դիրքերը, նույնիսկ եթե սպառազինությունների գծով ինչպես ներքին, այնպես էլ արտաքին օգտագործողների կարիքների կանխատեսումը կատարվի հաջողությամբ: Դա բխում է այն փաստից, որ ոչ զարգացած ենթակառուցվածքի պայմաններում փոփոխվող իրադրություններին հարմարվելը կհանգեցնի այսպես կոչված տրանսակցիոն ծախսերի մեծացմանը (տեղեկատվության ապահովման, որոշումների ընդունման գործընթացի հետ կապված և այլ ծախսեր), ընդսմին դրանք կարող են հասնել զգալի չափերի և երկար ժամկետում առաջ բերել ՌԱՀ-ի հատվածների ապրանքների գների աճում, ինչի հետևանքով կնվազի աշխարհում ՌԱՀ-ի մրցունակությունը:

Այսպիսով՝ կարելի է նշել ՌԱՀ-ի զարգացման հետևյալ նախապայմանները.

– ընկերությունների ու դրանց կառավարման հաստատութենական կառուցվածքի կատարելագործում, «արդյունավետ» սեփականատիրոջ ձևավորման պրոբլեմի լուծում,

– արտադրության ոչ հիմնական ոլորտների զարգացում՝ կադրերի պահպանման և արտադրական միջոցների սառեցումը կանխելու նպատակով (դա կարող է նվազեցնել վերադիր ծախսերը, ուստի և հիմնական արտադրանքի ինքնարժեքը),

– սպառազինությունների արտահանման խթանում, քանի որ դրանցում մարմնավորված են ՌԱՀ-ի մտավոր, մասնագիտական և արտադրական կարողությունները, հատկապես՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Перспективы развития российского оборонно-промышленного комплекса и ВПК». «Федеральный портал PROTOWN.RU» (http://protown.ru/information/hide/4492. html).

2. *В. М. Буренок, Г. В. Бабкин, А. А. Косенко.* Оборонно-промышленный комплекс: состояние и перспективы развития. «Военная мысль», 2005, № 6.

3. *А. Л. Рыбас.* Прорыв на мировой рынок вооружений. «Россия в глобальной политике», март – апрель 2008, № 2.

4. *G. and M. Friedman.* The Future of War. Power, Technology and Armenian World Dominance in the 21st Century. Crown, 1996.

5. *Ismael Hossein-Zadeh.* The Political Economy of US Militarism. New York, 2006.

6. *Seymour Melman.* Pentagon Capitalism. The Political Economy of War. New York, 1970.

ЭКОНОМИЧЕСКИЕ ПРЕДПОСЫЛКИ РАЗВИТИЯ СИСТЕМЫ ВОЕННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ РА

А. П. ПЕТРОСЯН, советник 2-ого класса Специальной гражданской службы, главный специалист ВПУ МО РА, А. Р. ТОВМАСЯН, ведущий служащий 1-ого класса Специальной гражданской службы, ведущий специалист экономического отделения Центрального военного представительства МО РА

РЕЗЮМЕ

Анализ процесса приватизации, осуществленного в РА, позволяет выявить следующие основные упущения, отрицательно повлиявшие на развитие военной промышленности, в частности: не были обеспечены активизация экономики, повышение ее эффективности, крупные зарубежные капиталовложения и т. д., не были созданы соответствующие инвестиционные структуры, в результате чего существенно снизилась эффективность акционерного управления, не было оказано государственнное содействие акционерной деятельности, предприниматели были вынуждены самостоятельно преодолевать трудности, связанные с переходом к рыночным отношениям.

В настоящее время предпринимаются целенаправленные шаги по возрождению в РА системы военной промышленности (СВП). При этом в качестве стандарта экономического развития СВП рассматриваются как глобальные тенденции развития военной науки, так и экономико-политические характеристики внешней среды.

Следует учитывать, что компаративное преимущество СВП государств обеспечивается военно-экономическим паритетом. При таком подходе в сравнение ставятся не только соответствующие виды вооружения, но в первую очередь те технологии, применением которых обеспечивается производство ВВТ в достаточных количествах и с необходимым качеством.

Программа оборонных реформ в РА практически заложила фундамент для системных изменений требований, предъявляемых к применяемым в сфере военной промышленности производственным технологиям и к их общим характеристикам, и обусловленных с изменениями экономических и политических факторов.

С учетом вышеизложенного, в качестве необходимых предпосылок для развития СВП отмечены:

– усовершенствование институциональной структуры предприятий и системы их управления, решение проблемы актуальности формирования «эффективного» собственника,

– развитие не основных сфер производства с целью сохранения кадров и предотвращения замораживания производственных средств,

– стимулирование экспорта военной продукции.

ECONOMIC PRECONDITIONS FOR THE DEVELOPMENT OF THE RA MILITARY INDUSTRY SYSTEM

A. P. PETROSYAN, 2nd Class Advisor of the Special Civil Service,
Chief Specialist in the Military-Industry Department, MOD, RA,
A. R. TOVMASYAN, 1st Class Leading Officer of the Special Civil Service,
Senior Specialist in the Economic Section of the Central Military Mission, MOD, RA

SUMMARY

The analysis of the privatization process implemented in the RA makes it possible to reveal the following major gaps that have negatively affected the development of military industry, in particular: promotion of the economy, increase of its efficiency, large foreign investments, etc. were not provided, relevant investment structures were not established resulting in significant decrease of the corporate governance effectiveness, government promotion of the shareholder activity was not carried out, businesses were forced to overcome on their own the difficulties regarding the transition to market relations.

At present deliberate steps are being taken to revive in the RA the military industry system (MIS). At the same time as a standard of economic development of the MIS are considered both global trends of military science advancement and economic-political characteristics of external environment.

It should be noted that the comparative advantage of the states' MIS is ensured by military-economic parity. With this approach, not only the relevant weapons but also primarily those technologies are compared through application of which the production of arms and military equipment in sufficient quantity and required quality is provided.

The RA defense reforms program practically laid the basis for systemic changes of the requirements imposed for the production technologies applicable in the field of military industry and to their general characteristics, and determined by the shifts of economic and political factors.

Taking into account the aforementioned, the indispensable preconditions for the development of the MIS are the following:

– Improvement of the institutional structure of enterprises and their management systems, solving the problem of relevance of the formation of an «effective» owner,

– Development of non-core areas of production in order to keep the personnel and to prevent freezing of production facilities,

– Encouragement of exports of military products.

ՀՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԻ ՄԱՍԻՆ

Գ. Ժ. ԲԱԴԱԼՅԱՆ, ՀՀ Էկոնոմիկայի փոխնախարար

Խորհրդային Միության փլուզումից հետո նորանկախ պետություններն ստիպված եղան ինքնուրույնաբար լուծելու իրենց տնտեսական և ռազմական անվտանգության ապահովման կարևոր խնդիրը: Հետխորհրդային պետություններում ծանր վիճակում հայտնվեցին արդյունաբերական ձեռնարկությունները և նախկինում պետության կողմից ֆինանսավորվող խոշոր գիտական կազմակերպությունները: Հատկապես ծանր էր խորհրդային ռազմաարդյունաբերական համալիրում ներառված ձեռնարկությունների վիճակը, քանի որ դրանք գրեթե ամբողջովին կորցրին իրենց շուկաները: Եվ քանի որ արդյունաբերության, այդ թվում նաև ռազմաարդյունաբերական համակարգի, ձեռնարկությունների արտադրանքը Խորհրդային Հայաստանի համախառն ներքին արդյունքում ուներ բավական մեծ տեսակարար կշիռ, նորանկախ պետության առջև ծագած կարևորագույն խնդիրներից էր նոր պայմաններում արդյունաբերության վերականգնումը և ռազմաարդյունաբերական համակարգի (ՌԱՀ) ստեղծումը՝ եղած արտադրական բազայի և արտադրության կազմակերպման փորձի օգտագործմամբ:

ՀՀ անկախության տարիներին ռազմաարդյունաբերության զարգացման ուղղությունների վերաբերյալ ընդունվել են մի շարք փաստաթղթեր, կազմվել են բազմաթիվ ծրագրեր, սահմանվել են այդ ծրագրերի կատարման ժամանակացույցներ, սակայն այդ ծրագրերը ուղղված են եղել հիմնականում իրավիճակային խնդիրների լուծմանը:

Ռազմաարդյունաբերական համակարգի՝ որպես պետության ռազմական անվտանգության գերակա օղակներից մեկի զարգացման խնդիրները կարևոր տեղ են զբաղեցնում պետության անվտանգությանը վերաբերող բոլոր ռազմավարական փաստաթղթերում, իսկ վերջերս մշակվեց «Հայաստանի Հանրապետության ռազմական արդյունաբերության համակարգի բարեփոխումների և զարգացման հայեցակարգի» նախագիծը: Այդ աշխատանքներին մասնակցեցին պետական բոլոր շահագրգիռ մարմինների, և առաջին հերթին՝ ՀՀ Անվտանգության խորհրդի քարտուղարության ու պաշտպանության նախարարության մասնագետները:

ՌԱՀ-ի զարգացումը ընդհանուր առմամբ պետք է դիտել երկու ուղղություններով, որոնք արտացոլված են նաև ՌԱՀ-ի զարգացման հայեցակարգի նախագծում: Դրանք են.

- տնտեսության առաջատար ճյուղերի, առաջին հերթին՝ արդյունաբերության զարգացում,
- որպես պետության ռազմական անվտանգությունն ապահովող կա-

րևոր տնտեսական ոլորտի՝ ՌԱՀ-ի զարգացմանը պետության կողմից անհրաժեշտ օժանդակության ապահովում:

ՀՀ Կառավարությունը ձեռնամուխ է եղել տնտեսության բոլոր ճյուղերի համակարգային բարեփոխումների, որոնց հիմնական նպատակը տնտեսության կայուն աճի ապահովումն է: Այս ուղղությամբ կատարվում են հետևողական քայլեր, որոնց նպատակն է.

- տնտեսության և դրա առանձին ճյուղերի զարգացմանը նպաստող օրենսդրական դաշտի կատարելագործումը,
- աջակցությունը բիզնես-միջավայրի բարելավմանը և փոքր ու միջին ձեռնարկատիրության զարգացմանը,
- տնտեսության տարբեր ճյուղերում ներդրումների խթանումը, մրցակցության հավասար պայմանների ստեղծումը,
- հարկաբյուջետային քաղաքականության բարելավումը, միջազգային ստանդարտներին համապատասխանող որակի ենթակառուցվածքների ստեղծումը,
- հակակոռուպցիոն ծրագրերի իրագործումը,
- արտահանման խթանմանն ուղղված տնտեսական քաղաքականության մշակումն ու իրագործումը,
- գիտատար տնտեսության զարգացմանը պետության կողմից օժանդակության մեծացումը,
- գիտության և կրթության բնագավառների հաստատութենական կարողությունների հզորացումը,
- պետական կառավարման ոլորտի բարելավումն ու օպտիմալացումը:

Միևնույն ժամանակ, խնդիր է դրված տնտեսության համընդհանուր բարեփոխումների համատեքստում որպես թիրախային ընտրել տնտեսության, այդ թվում նաև արդյունաբերության, այն ճյուղերը, որոնք առավել մեծ հնարավորություն ունեն արագ զարգանալու և իրենց հերթին նպաստելու տնտեսության հարակից ճյուղերի ու գիտության զարգացմանը: Ե՛վ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի 2008 թ. նախընտրական ծրագրում, և՛ ՀՀ Կառավարության գործունեության միջոցառումների ծրագրերում կարևոր տեղ ունի արդյունաբերության զարգացման ակտիվ քաղաքականության իրականացումը:

Ակնհայտ է, որ արդյունաբերության զարգացումը ՀՀ Կառավարության՝ երկրի տնտեսության զարգացմանն ուղղված բարեփոխումների ծրագրերում պետք է ունենար իր առանձնահատուկ տեղը, պետք է կիրառվեին համակարգին բնորոշ մոտեցումներ՝ երկրի հումքային ռեսուրսների սահմանափակության, բարձր էներգատարություն ունեցող ոչ արդիական տեխնոլոգիաները նորերով փոխարինելու անհրաժեշտության, առավելապես բարձր տեխնոլոգիական և գիտատար ճյուղերի զարգացմանը նպաստող միջոցառումների մշակման պահանջի, արտադրություն–գիտություն–կրթություն կապի ոչ լիարժեքության, այդ ճյուղերում ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված պետական աջակցության միջոցների ոչ բավարար լինելու և այլ հանգամանքների հաշվառմամբ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության մասնագետների կողմից մշակվել են այս խնդիրների լուծմանն ուղղված «Հայաստանի Հանրապետության արդյունաբերության զարգացման հայեցակարգային ուղղությունները» և «Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգ» փաստաթղթերը, որոնք ՀՀ Կառավարության կողմից ընդունվել են, համապատասխանաբար, 2010 թ. հունվարի 11-ին և 2011 թ. փետրվարի 17-ին: Մշակման փուլում է գտնվում «Հայաստանի արտահանմանն ուղղված արդյունաբերական զարգացման ռազմավարության հայեցակարգը»:

Նշված հայեցակարգային փաստաթղթերում ներառված դրույթների և ՌԱՀ-ի զարգացման հայեցակարգում ընդգրկված ուղղությունների համադրման շնորհիվ հնարավորություն է ստեղծվում պատկերացում կազմելու ՌԱՀ-ի՝ որպես և՛ տնտեսության առաջատար ճյուղի, որի զարգացումը կնպաստի տնտեսության այլ ճյուղերի ու գիտության զարգացմանը, և՛ պետության ռազմական անվտանգության համակարգի բաղադրիչներից մեկի դերի մասին: Այդ հայեցակարգներում կատարված է արդյունաբերության հիմնական ճյուղերի ներկայիս վիճակի վերլուծություն, ի հայտ են բերված առկա խնդիրները և նախանշված են դրանց լուծման ուղիները, նկարագրված են արդյունաբերության առաջատար ճյուղերի հեռանկարները, ներկայացված են առաջարկություններ դրանց զարգացման ծրագրային հիմնադրույթների վերաբերյալ, սահմանված են նորամուծական համակարգի ձևավորման դրույթները, մշակված են նորամուծական ազգային համակարգի կազմավորման սկզբունքները և տնտեսության գիտատար ոլորտների զարգացմանն ուղղված միջոցառումների ծրագիրը: Ակնհայտ է, որ մի հոդվածի շրջանակներում հնարավոր չէ ամբողջովին վերլուծել այդ հայեցակարգներում արծարծված խնդիրներն ու դրանց լուծման ուղղությունները, ուստի նպատակահարմար է ներկայացնել արդյունաբերության հիմնական ճյուղերի զարգացմանն ուղղված այն կարևոր խնդիրներն ու առաջարկությունները, որոնք վերաբերում են ՌԱՀ-ի զարգացմանը:

Հանրապետության արդյունաբերության ներկայիս վիճակին բնորոշ են մի շարք խնդիրներ: Դրանցից առանձնացնենք ՌԱՀ-ի ոլորտին վերաբերող հետևյալ խնդիրները՝

- մակրո- և միկրոմակարդակներում հետազոտությունների ու վերլուծությունների պակասը, չկա համընդգրկուն տեղեկատվական բազա,
- չկան ինչպես ճյուղային զարգացման, այնպես էլ ընկերությունների՝ երկարաժամկետ ռազմավարական ծրագրեր,
- ցածր մրցունակությունը,
- արտադրությունը գերազանցապես ներմուծվող հումքի կիրառմամբ,
- մեծ տրանսպորտային և էներգետիկ ծախսերը,
- հարկային ու մաքսային վարչարարության խնդիրները,
- ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխանող կառավարման համակարգեր և կառավարիչներ չունենալը,
- պետական աջակցության մեխանիզմների և գործիքների սահմանափակությունը,

– արտադրություն – գիտություն – կրթություն թույլ կապը,
– վարկային միջոցների դժվարամատչելիությունը,
– սպառման շուկայի սահմանափակությունը:

Այսպիսով՝ հանրապետության արդյունաբերության ճյուղերի զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ է տվյալ խնդիրների հաշվառմամբ իրականացնել համալիր միջոցառումներ, մասնավորապես՝

1. մշակել համապատասխան արդյունաբերական ճյուղերի զարգացման ծրագրեր, այդ նպատակով վերլուծել յուրաքանչյուր ճյուղի առկա վիճակը, այդ թվում՝ կազմակերպությունների մակարդակով, ստեղծել տեղեկութային բազա, որը հնարավորություն տա կատարելու վերլուծություններ և որոշելու ճյուղի զարգացման գլխավոր ուղղությունները: Ճյուղերի զարգացման ներուժն ու միտումները ավելի հստակ պատկերացնելու և զարգացման գերակա ուղղությունները որոշելու համար կազմակերպել քննարկումներ ոլորտի մասնագետների, հետազոտողների և արտադրության ներկայացուցիչների մասնակցությամբ,
2. կատարել շուկայի ուսումնասիրություն, ինչը ճյուղի ձեռնարկություններին հնարավորություն կտա մեծացնելու իրենց արտադրանքի իրացման հնարավորությունները: Շուկաների ձեռքբերման խնդրում կարևոր է միջազգային համագործակցության ընդլայնումը, իսկ ՌԱՀ-ի համար այս խնդրի լուծումը պահանջում է պետական աջակցություն, ինչպես նաև անհրաժեշտ իրավական դաշտի ստեղծում: Պետական աջակցություն է անհրաժեշտ նաև միջազգային ցուցահանդեսներին ՌԱՀ-ի ձեռնարկությունների մասնակցությունն ապահովելու համար,
3. ֆինանսական ռեսուրսների ապահովման խնդիրը լուծել երկու տեսակի գործիքների՝ ֆիսկալ խթանների և ֆինանսավորման այլընտրանքային ձևերի կիրառմամբ: Ֆիսկալ խթաններից են դրամական հատկացումները և հարկային արտոնությունները: Այստեղ կարևոր ենք համարում հետևյալ նկատառումը. Հայաստանի ՌԱՀ-ի ձեռնարկությունները հիմնականում կատարում են պետպատվեր ու ֆինանսավորվում են պետբյուջեից, և ակնհայտ է, որ նման սահմանափակ ֆինանսավորումը չի կարող բավարար լինել նոր արտադրատեսակների ստեղծման, գիտահետազոտական աշխատանքներ կատարելու, արտադրության ծավալը մեծացնելու, միջազգային ծրագրերին մասնակցելու համար: Այս առումով կարևոր է, որ ձեռնարկություններին, ֆիսկալ խթաններից բացի, ընձեռվի ոչ բարձր տոկոսադրույքներով երկարաժամկետ վարկային միջոցներ ստանալու հնարավորություն: ՈՒստի հարկավոր է ոլորտի գերակա ուղղությունները որոշելուց հետո բանկային համակարգի հետ քննարկել այդ ձեռնարկություններին մատչելի տոկոսադրույքներով ֆինանսական միջոցներ տրամադրելու հարցը,
4. արդյունաբերության՝ բարձր մակարդակով տեխնոլոգիական ապահովման համար ընդլայնել միջազգային համագործակցությունը և ապահո-

վել ձեռնարկությունների ընդգրկումը վերազգային կորպորացիաներում: Ըստ այդմ՝ պետք է լուրջ քայլեր ձեռնարկվեն նման ներդրումների համար երկիրը գրավիչ դարձնելու ուղղությամբ, ինչը հնարավոր է ապահովել բարձրակարգ մարդկային կապիտալի և գիտահետազոտական աշխատուժի ուժեղացմամբ, ինչպես նաև ներդրումային միջավայրի գրավչության մեծացմամբ: Վերազգային կորպորացիաներում ՀՀ ՌԱՀ-ի ձեռնարկությունների ներգրավման հարցը, իհարկե, ունի որոշակի առանձնահատկություններ: Մասնավորապես, ինչպես արդեն նշեցինք, անհրաժեշտ է ապահովել համապատասխան իրավական դաշտ, ինչը, մեր կարծիքով, շատ կարևոր է ՌԱՀ-ի զարգացման համար:

Այս բոլոր առաջարկությունները լիովին չեն ընդգրկում այն անհրաժեշտ գործողությունների համալիրը, որոնք կնպաստեն արդյունաբերության տվյալ ճյուղի զարգացմանը, և այդ առումով, ինչպես արդեն նշվեց, հարկավոր է առաջին հերթին կատարել ճյուղի մակրոտնտեսական վերլուծություն և կազմել ճյուղի զարգացման ռազմավարական ծրագիր:

Արդյունաբերության զարգացման խնդիրները լուծելու և գերակա ուղղությունները որոշելու, կառավարման համակարգը բարելավելու, ռազմավարական ծրագրեր մշակելու և դրանց կատարումն ապահովելու համար հայեցակարգերում առաջարկվում է ստեղծել համապատասխան հանձնաժողով կամ խորհուրդ, որում ընդգրկվեն տվյալ ճյուղի պետական կառավարման մարմնի, շահագրգիռ այլ պետական մարմինների, գիտության և արտադրության մասնագետներ: Նման համակարգող մարմնի ստեղծումը մի շարք արդյունաբերական ճյուղերի համար համարում ենք շատ կարևոր, իսկ ՌԱՀ-ի համար՝ անհրաժեշտ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4:

2. «Հայաստանի Հանրապետության արդյունաբերության զարգացման հայեցակարգային ուղղությունները», 2009 թ. (www.mineconomy.am/upload/file/Industry%20Concept.pdf):

3. «Ինովացիոն տնտեսության ձևավորման մեկնարկային ռազմավարության հայեցակարգ», ՀՀ Կառավարության 2011 թ. փետրվարի 17-ի նիստի հմ. 6 արձանագրային որոշման հավելված (www.mineconomy.am/am/81/):

О ПЕРСПЕКТИВАХ РАЗВИТИЯ СИСТЕМЫ ВОЕННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ В КОНТЕКСТЕ РАЗВИТИЯ ПРОМЫШЛЕННОСТИ РА

Г. Ж. БАДАЛЯН, заместитель Министра экономики РА

РЕЗЮМЕ

Развитие системы военной промышленности РА целесообразно рассматривать в двух направлениях: развитие ведущих сфер экономики, в первую очередь – промышленности, и обеспечение необходимого содейст-

вия со стороны государства развитию СВП как важной сферы экономики, обеспечивающей военную безопасность государства.

Правительство РА приступило к реформированию всех отраслей экономики с целью обеспечения ее устойчивого роста. В этом направлении предпринимаются конкретные шаги по: усовершенствованию законодательного поля; улучшению бизнес-среды и развитию малого и среднего предпринимательства; стимулированию инвестиций и созданию равных условий для конкуренции; улучшению налогово-бюджетной политики; созданию соответствующих международным стандартам инфраструктур качества; реализации антикоррупционных программ; разработке и реализации экономической политики, нацеленной на стимулирование экспорта; росту государственной поддержки развитию экономики, основывающейся на новейших достижениях науки; развитию институциональных возможностей науки и образования; оптимизации и совершенствованию сферы государственного управления. В то же время в контексте всеобщих реформ ставится задача выбора в экономике, в том числе и в промышленности, тех целевых отраслей, которые обладают наибольшими возможностями быстрого развития и в свою очередь будут способствовать развитию других отраслей экономики и науки.

Специалистами Министерства экономики РА разработан пакет документов, включающий «Концептуальные направления развития промышленности РА» и «Концепцию стартовой стратегии формирования инновационной экономики». На стадии разработки находится «Концепция стратегии промышленного развития Армении, нацеленного на экспорт».

С учетом нынешнего состояния военной промышленности республики представляются необходимыми: увеличение числа исследований на микроуровне; развитие информационной базы; разработка программ развития сферы; разработка и реализация стратегических программ компаний, вовлеченных в сферу военной промышленности; стимулирование конкуренции производства, использующего внутреннее сырье; снижение транспортных и энергетических расходов; преодоление налоговой и таможенной бюрократических препон; внедрение систем управления и подготовки управляющих кадров, соответствующих современным международным стандартам; развитие инструментов и механизмов государственной поддержки; укрепление связи наука–образование–производство; обеспечение доступности кредитных средств; расширение рынка сбыта.

Для обеспечения развития отраслей промышленности необходимо реализовать комплекс следующих мероприятий: разработка программы развития данной отрасли; изучение отраслевого рынка; применение фискальных стимулов и альтернативных форм финансирования; расширение международного сотрудничества и обеспечение вовлечения отечественных предприятий в транснациональные корпорации.

ON THE DEVELOPMENT PERSPECTIVE OF THE MILITARY INDUSTRY SYSTEM IN THE CONTEXT OF THE RA INDUSTRIAL DEVELOPMENT

G. Zh. BADALYAN, Deputy Economy Minister of the RA

SUMMARY

The RA's military industry development should be viewed in two ways: developing the advanced sectors of economy, in the first place – the industry, and providing the necessary assistance from the state for the MIS development as an important sector of the economy ensuring the state's military security.

The RA Government has launched the reform of all sectors of the economy to ensure its sustainable growth. Concrete steps are taken in this direction to: improve the legislative field, improve the business environment and develop small and medium-sized businesses, encourage investments and create equal conditions for competition, improve fiscal policies, establish quality infrastructures of appropriate international standards, implement anti-corruption programs, develop and implement economic policies aimed at stimulating exports, increase state support to economic development based on the latest scientific achievements, expand institutional capacities of science and education, optimize and improve public administration. At the same time in the context of general reforms the problem of the choice of those targeted sectors in the economy including the industry is put that have greater opportunity of rapid development and, in turn, will contribute to the development of the other sectors of economy and science.

To this end, experts from the RA Ministry of Economy developed a package of documents including «The conceptual directions of the RA's industrial development» and «The concept of starting strategy for innovation economy's formation». «The concept of industrial development strategy of Armenia aimed at export» is under development.

Taking into account the current state of the republic's military industry it is necessary: the increase of investigations' number at the micro level, the development of informational background, the elaboration of the development programs of the sector, the development and implementation of the strategic programs of companies engaged in the sphere of military industry, the encouragement of competition and production that uses internal raw materials, the reduction of transportation and energy costs, the overcoming tax and customs bureaucratic obstacles, the introduction of management systems and executive education in compliance with the modern international standards, the development of tools and mechanisms of state support, the strengthening of the link science-education-production, the ensuring of credit accessibility, the expansion of market.

For ensuring the development of the industrial sectors the set of following activities is to be implemented: the elaboration of development program of this sector, the study of the industry market, the application of fiscal incentives and alternative forms of financing, the expansion of international cooperation and ensuring of the involvement of domestic enterprises in transnational corporations.

ՌԱԶՄԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐԸ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ

Հ. Հ. ՄԱՔԵՎՈՍՅԱՆ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար

Գիտությունը միշտ էլ եղել է պետականության առանցքներից մեկը: Այդ առանցքը կոտրել նշանակում է վերացնել պետությունը: Անշուշտ, գիտությունը հաջողությամբ զարգանում է միայն այն հասարակությունում, որտեղ կա գիտական մշակումների հասարակական պատվեր, որտեղ պահանջված են բարձր որակավորում ունեցող գիտական կադրերը: ԽՍՀՄ-ում գիտության հզոր վերելքը խթանվում էր գիտատար արդյունաբերության շարունակական զարգացմամբ, ընդսմին գիտական հետազոտությունները առաջին հերթին պահանջված էին ռազմաարդյունաբերական համալիրի (ՌԱՀ) կողմից:

ԽՍՀՄ փլուզման հետևանքով պաշտպանական հիմնարար ու որոնողական հետազոտությունների ֆինանսավորման կրճատումից առավելապես տուժեցին ճեղքումնային հեղափոխական աշխատանքները, քանի որ չկա դրանցում հաջողության հասնելու ակնհայտ երաշխիք: Դրանով իսկ ստեղծվում են ռազմական արդյունաբերության հետ մնալու հիմքերը:

Իր կայուն զարգացումը որպես գերակայություն հռչակած պետության գլխավոր առաջնահերթություններից մեկը պետք է լինի պաշտպանական-արդյունաբերական համալիրի արմատական արդիականացումը: Եվ այստեղ վճռորոշը հիմնարար գիտության դերն է: Դա, ըստ էության, մի դրույթ է, որը ապացույցներ չի պահանջում: Բավական է հիշել, որ ԽՍՀՄ միջուկային-հրթիռատիեզերական վահանի ստեղծման գործում ամենակարևոր ներդրումն ունեցան մեր ականավոր գիտնականները՝ Մստիսլավ Կելդիշը, Իգոր Կուրչատովը, Իսահակ Ալիխանովը, Սերգեյ Կովալյովը, Ալեքսանդր Պրոխորովը, Նիկոլայ Բասովը, Սերգեյ Կորոլյովը, Սամվել Քոչարյանցը, Անդրեյ Սախարովը, Նիկոլայ Սեմյոնովը, Իգոր Տամմը, Յակով Զելդովիչը, Յուլի Խարիտոնը և էլի շատ ու շատ հայտնի մասնագետներ, որոնք դարձան մեր գիտության և տեխնիկայի հպարտությունը: Նրանց աշխատանքները ԽՍՀՄ-ը դարձրեցին առաջատար համաշխարհային տերություն:

Կարևոր է շեշտել, որ սկզբնապես զուտ պաշտպանական բնույթի նախագծերը հետագայում հույժ կարևոր դեր խաղացին ամբողջ գիտության և տեխնիկայի զարգացման գործում, զարկ տվեցին ոչ միայն կիրառական, այլև հիմնարար հետազոտություններին ժամանակակից գիտելիքի գործնականում բոլոր բնագավառներում:

1990-ական թվականների ճգնաժամը կտրուկ կերպով փոխեց իրավիճակը: Այսօր մեզ համար ավելի ու ավելի դժվար է դառնում մրցակցել համաշխարհային շուկաներում, քանի որ շատ բաներում մենք հետ ենք մնացել և՛ տեխնիկական, և՛ «մտավոր» առումով: Պատճառները մի քանիսն են: Առաջին հերթին դա պաշտպանական հիմնարար ու որոնողական հետազոտությունների ֆինանսա-

վորման կրճատումն է: Առանձնակի տագնապ է հարուցում այն հանգամանքը, որ, ինչպես նշվեց, առավել մեծ չափով տուժում են ճեղքումնային, սկզբունքորեն նոր աշխատանքները, երբ չկա երաշխիք, որ դրանք արագ կպսակվեն հաջողությամբ. գիտության մեջ առանց ռիսկի ճեղքումներ կատարել հնարավոր չէ: Սակայն հենց դա է ներկայումս տեղի ունենում պաշտպանական արդյունաբերության ոլորտում: Զինվորականները գերադասում են կարճաժամկետ, ընդ որում՝ առավելագույնս կոնկրետ, մշակումները, որոնք հիմնված են լավ հայտնի սկզբունքների վրա: Նման մոտեցման պատճառով սկսում ենք համաշխարհային ստանդարտներից հետ մնալ արդեն պլանավորման փուլում:

Ներկայումս ձևավորվում է մի վտանգավոր իրավիճակ, երբ պաշտպանական հետազոտությունների «ժառանգված» խորհրդային համակարգն արդեն աշխատունակ չէ, իսկ արդիական համակարգը դեռ նոր է ստեղծվում: Շարունակում են չպահանջված մնալ ակադեմիական և ճյուղային գիտական կոլեկտիվների, բարձրագույն դպրոցի հեռանկարային մշակումների արդյունքները: Հիմնարար ու կիրառական հետազոտությունների (ՀԿՀ) անվանացուցակի ու թվաքանակի կրճատման բացասական միտումը անխուսափելիորեն հանգեցնում է ի շահ երկրի պաշտպանության և անվտանգության ապահովման կատարվող հետազոտությունների առանձին գիտատեխնիկական ուղղությունների կորստի, ինչպես նաև հեռանկարային նմուշների ստեղծման փուլերի ժամկետների երկարաձգմանն ու թանկացմանը: Այդ ամենի հետևանքով մենք գիտատեխնոլոգիական առումով էլ ավելի ենք հետ մնում գիտության, տեխնիկայի ու արտադրության բնագավառներում, քայքայվում են այն ակադեմիական, բուհական և ճյուղային գիտական դպրոցները, որոնք ավանդաբար կողմնորոշված էին դեպի պաշտպանական հետազոտություններ: Նվազել է պաշտպանության և անվտանգության համար կատարվող հիմնարար ու որոնողական հետազոտությունների մասնաբաժինը: Լուրջ քննադատության չի դիմանում նաև գործող մրցութային համակարգը, որը պետք է որոշի ՌԱՀ-ի համար հետազոտություններ կատարելու իրավունք ստացողներին. հաղթում է ոչ թե նա, ում նախագիծն ավելի առաջադիմական է և կոլեկտիվն էլ ավելի ուժեղ, այլ նա, ով խոստանում է աշխատանքը կատարել ավելի էժան և արագ: Սակայն ամենատագնապալին այն է, որ այդ դեպքում մենք ստանում ենք «երկրորդ տեսակի» ռազմական տեխնիկա, իսկ առաջնակարգ մշակումները մնում են որպես մեռած տառ:

Փաստորեն բուհերում, ակադեմիական ու ճյուղային հաստատություններում աշխատող գիտնականների և ՌԱՀ-ի միջև սերտ կապերը խզվում են: Որպես հետևանք՝ գիտնականների հեռանկարային մշակումները մնում են չպահանջված, վերանում են պաշտպանական և անվտանգային ոլորտի կարևոր գիտատեխնիկական ուղղությունները: Ընդ որում, անշեղորեն նվազում են իսկապես նշանակալի, «ճեղքումնային» պաշտպանական գիտատեխնիկական նվաճումների հասնելու հնարավորությունները:

Միանգամայն այլ է պատկերը աշխարհի զարգացած երկրներում: Նոր սպառազինության ստեղծման գործում հիմնարար գիտության դերն անընդհատ աճում է: Որպես արդյունք՝ ստեղծվել են սպառազինության սկզբունքորեն նոր

տեսակներ՝ գերճշգրիտ, լազերային, էլեկտրամագնիսական, կենսաբանական, տեղեկութային և մի շարք այլ տեսակների զենքեր, ինչը որակապես փոխում է ժամանակակից բանակների կերպարը: Հատկանշական է, որ առաջավոր պետությունների ղեկավարները որպես պետության ոչ միայն ռազմական, այլև տեխնոլոգիական գերազանցության երաշխիք դիտում են առաջին հերթին պաշտպանական հիմնարար գիտական հետազոտությունները:

ԱՄՆ-ն իր առջև դրել է խիստ հավակնոտ նպատակներ. ոչ թե պարզապես առաջավարել ռազմական ոլորտում, այլ հասնել ճնշող գիտատեխնոլոգիական գերազանցության: Այդ գործում հանգուցային դեր տրվում է Հեռանկարային պաշտպանական հետազոտությունների և մշակումների գործակալությանը (ՀՊՀՄԳ՝ *DARPA*): Դրա տարեկան բյուջեն կազմում է ավելի քան 3,2 միլիարդ դոլար: Ի դեպ, այդ գործակալությունն ստեղծվել է 1958 թվականին՝ ԽՍՀՄ-ում Երկրի առաջին արհեստական արբանյակի արձակումից անմիջապես հետո: Հայտնի է, որ գործակալությունը շատ բաներում պատճենել է ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի կիբռնական հետազոտությունների բաժանմունքի աշխատանքային սկզբունքները: ՀՊՀՄԳ-ում աշխատում են ամենաբարձրակարգ մասնագետները, որոնց տրված են մեծ լիազորություններ: Նրանք պարզում են պաշտպանական որոնողական հետազոտությունների զարգացման գերակայությունները, որոնք կարող են արագ փոփոխել ըստ իրավիճակի, ռեսուրսները կենտրոնացնում են ճեղքումնային ուղղություններում՝ նույնիսկ կոնկրետ ցանկալի արդյունքի չհասնելու մեծ ռիսկի դեպքում, գաղափարների մակարդակում պահպանում են կոշտ մրցակցություն, ապահովում են ԱՄՆ-ի պաշտպանության նախարարության, ՌԱՀ-ի ձեռնարկությունների և հիմնարար գիտության համագործակցությունը: Ելույթ ունենալով Գիտությունների ազգային ակադեմիայում՝ ԱՄՆ-ի Նախագահ Բարակ Օբաման հատկապես կարևորել է ՀՊՀՄԳ դերը ԱՄՆ-ի տեխնոլոգիական գերազանցության հաստատման գործում:

Ամերիկյան փորձագետների կարծիքով՝ ՀՊՀՄԳ-ն այն սակավաթիվ պետական կառույցներից է, որոնք շարունակում են օգտակար և արդյունավետ մնալ իրենց հիմնման պահից առ այսօր: Որպես ՀՊՀՄԳ արգասաբեր գործունեության օրինակներ կարելի է նշել. ՋՊՍ արբանյակային ռադիոուղեվարական համակարգի ստեղծման համար տեխնոլոգիական որոշումների համալիրի ճևավորումը, նկատելիության նվազեցման «Ստելզ» տեխնոլոգիաների ստեղծումը, հաշվողական ցանցերում (Ինտերնետ, արագ Ինտերնետ ցանցեր) տեղեկույթի փոխանակման սկզբունքների և արձանագրությունների մշակումը, փուլավորված ալեհավաքային վանդակով ՌՏԿ-ների ստեղծումը, գիշերային տեսանելիության չսառեցվող սարքերի և շրջանային տեսածրման ԻԿ-համակարգերի ստեղծումը, վրագետնյա, օդային և ստորջրյա բազավորմամբ անանձնակազմ միջոցների (լրիվ ինքնագործ կամ հեռակառավարումային ռոբոտացված համալիրներ) ստեղծումը, նշանակետերի անդրհորիզոնային ռադիոտեղորոշումային հայտնաբերման (անդրհորիզոնային տեղորոշում) տեխնոլոգիաների մշակումը և այլն:

Ընդ որում, ՀՊՀՄԳ-ի կողմից ի սկզբանե ռազմական նպատակներով մշակված մի շարք տեխնոլոգիաներ հետագայում լայնորեն կիրառվեցին քաղա-

քացիական ոլորտներում: Դրա վառ օրինակներից է ՋՊՍ արբանյակային ռադիոուղեվարական համակարգը, որի կիրառումը հանգեցրեց քաղաքացիական ուղեվարական սարքավորանքի մի ամբողջ ինդուստրիայի ստեղծման, ինչն էլ իր հերթին տվեց հսկայական տնտեսական էֆեկտ:

ՀՊՀՄԳ-ին նման կառույցներ ստեղծվել են նաև այլ երկրներում. Գերմանիայում՝ *DRL*, Հնդկաստանում՝ *DRDO* և այլն:

Այսօր պետք է ունենալ նոր արդիական ՌԱՀ, որը թողարկի մրցունակ ռազմական տեխնիկա՝ հիմնված նոր ֆիզիկական սկզբունքների վրա: Սակայն այն չի կարող ստեղծվել հին կազմակերպական եղանակներով: Դրանք պետք է արմատապես փոխվեն: Նման միջոցներից է հեռանկարային պաշտպանական հետազոտությունների և մշակումների գործակալության ստեղծումը, մի կառույցի, որը նման լինի ԱՄՆ-ի ՀՊՀՄԳ-ին: Գործակալությունը պետք է ունենա հետևյալ հիմնական գործառույթները. Ռազմաարդյունաբերական հանձնաժողովի, ուժային գերատեսչությունների գիտական կոմիտեների և ակադեմիայի գիտական բաժանմունքների հետ համատեղ մշակել հեռանկարային պաշտպանական հիմնարար ու կիրառական հետազոտությունների գիտական քաղաքականությունը, թեմատիկան ու ծրագրերը, զբաղվել այն գիտական կոլեկտիվների ակտիվ որոնմամբ, որոնք ունեն ՀԿՀ ծրագրերի թեմատիկային վերաբերող հեռանկարային գիտական ձեռքբերումներ, Գիտությունների ազգային ակադեմիայի գիտական բաժանմունքների հետ համատեղ կազմակերպել ձևավորված ծրագրերի շրջանակներում կատարվելիք պաշտպանական ՀԿՀ-ների մրցույթներ և ընդունված հայտերի փորձաքննություն, ընդ որում, մրցակցային միջավայր ստեղծելու համար նպատակահարմար է մեկ մրցույթում հաղթող ճանաչել մի քանի այլընտրանքային խմբեր՝ ղեկավարվելով ոչ թե մասնակցի առաջարկած ցածր գնով, այլ տվյալ թեմայի վերաբերյալ ունեցած գիտական ձեռքբերումներով, ապահովել պաշտպանական ՀԿՀ-ների գիտատեխնիկական արգասիքների ու բյուջետային միջոցների ծախսման արդյունավետությունը և պատասխանատվություն կրել դրա համար:

Ընդհանրապես գիտության և տեխնիկայի դինամիկ զարգացումն ապահովելու համար խիստ անհրաժեշտ է վերականգնել հիմնարար ու որոնողական հետազոտությունների համապետական համակարգը՝ այն հասցնելով որակապես նոր մակարդակի, ինչով ապահովվի դրա համապատասխանությունը ՍՌՏ բնագավառում տեխնիկական առաջընթացի՝ մոտ ապագայում սպասվող իրողություններին ու մարտահրավերներին:

Մեր կարծիքով՝ նոր ֆիզիկական սկզբունքների կիրառման վրա հիմնվող հեռանկարային մշակումների գծով աշխատանքների զարգացումը պահանջում է դրանց կատարման միանգամայն նոր կազմակերպական սխեմաների ստեղծում: Քանի որ պաշտպանության և անվտանգության համար պատասխանատու են մի քանի գերատեսչություններ, գործակալությունը պետք է լինի միջգերատեսչական և ենթարկվի պետության բարձրագույն ռազմաքաղաքական ղեկավարությանը՝ Գերագույն գլխավոր հրամանատարին: Գործակալության կազմում պետք է գործի բարձրագույն գիտատեխնիկական խորհուրդ, որում

ընդգրկված լինեն հանրապետության առաջատար գիտնականներ: Հենց նրանց կարծիքի վրա հիմնվելով՝ Գերագույն գլխավոր հրամանատարը կկարողանա գործնական աջակցություն ցույց տալ ռազմական տեխնիկայի ստեղծման առավել հեռանկարային ուղղություններին, ուղղակիորեն ֆինանսավորել դրանք՝ շրջանցելով որոշումների ընդունման ներկայիս բյուրոկրատացված սխեման: Գործակալության որոնողական աշխատանքների համար հատկացվող գումարները բյուջեում պետք է նախատեսվեն առանձին տողով:

Հարկ ենք համարում ևս մեկ անգամ շեշտել, որ գիտական ճեղքումները գրեթե միշտ տեղի են ունենում անսպասելի: ՈՒստի ոչ ոք կանխավ չի կարող ասել, թե որտեղ պետք է դրանք ակնկալել: Միայն լայն ճակատով շարժումը հնարավորություն կտա ստեղծելու ժամանակակից մարտահրավերներին համապատասխանող նոր ռազմական տեխնիկա:

Ցավոք, հանրապետությունում գիտելիքի վրա հիմնվող տնտեսությանն անցումը ավելի է դժվարացնում այն հանգամանքը, որ դեռ մշակված չէ երկրի գիտական քաղաքականությունը, չկա պետության զարգացման ռազմավարություն, Անվտանգության խորհուրդը չի վերլուծել որոշ իրավիճակային գործողությունների այն հեռավոր բացասական հետևանքները, որոնք կարող են ի հայտ գալ միայն շատ տարիներ անց, բայց որոնք իրենց ի հայտ գալու պահին արդեն անհնար կլինի վերացնել:

Խոսքը հիմնարար գիտության նկատմամբ եղած վերաբերմունքի մասին է: Վերջերս այդ մասին սկսել են շատ խոսել (բայց ոչ գործել): Մենք ուշադրություն ենք հրավիրում այն առավելագույն չափով սեղմ ժամկետների վրա, որոնք ունենք իրավիճակը շտկելու համար: Հարցը գիտության բյուջեի կամ Գիտությունների ազգային ակադեմիայի կարգավիճակի մասին չէ (ինչպես հաճախ ներկայացվում է): Հիմնարար գիտությունը դեռ չի կորցրել իր ուժը, բայց գնում է դեպի իր վախճանը:

Ժամանակն է թոթափելու այն վտանգավոր գաղափարի կապանքները, թե հնարավոր է ստեղծել ուժեղ պետություն առանց հզոր հիմնարար գիտության վերածննդի: Տվյալ իրավիճակը հիշեցնում է «Տիտանիկի» նավարկությունը, երբ իշխում էր այն առասպելը, թե նա իբր անխորտակելի է, և վտանգը նկատվեց չափազանց ուշ: Մենք արդեն չենք կարող խուսափել կորուստներից, բայց դեռ կարելի է պահպանել «լողունակությունը»:

Ներկայումս շատերը չեն հասկանում հիմնարար գիտության կարևոր դերը, անգամ իշխում է այն կարծիքը, և դա առավել վտանգավոր է, թե նա մեզ ընդհանրապես պետք չէ: Եթե նորամուծական գործընթացը չսնվի թարմ հիմնարար գաղափարներով, ապա արդեն 5-15 տարի հետո գաղափարների սով կզգացվի: Անհրատեսական է այն հույսը, որ տեխնոլոգիական գաղափարները կարելի է քաղել ինտերնետից կամ համաշխարհային գիտական գրականությունից: Քանի դեռ մենք չունենք համաշխարհային մակարդակի բնական գիտություններ, ապա չենք կարող ունենալ նաև նոր տեխնոլոգիաների սաղմեր: Հիմնարար գիտություն չլինելու պարագայում երկիրը դատապարտված կլինի միջազգային հարաբերությունների իրավիճակից իր տնտեսության ու բանակի տեխնիկական

զինվածության խոր կախվածության: Եվ դա կտևի այնքան ժամանակ, քանի դեռ հիմնարար գիտության համակարգը վերականգնված չէ:

Հիմնարար գիտության փրկումը պետք է սկսել հենց այժմ. 4-5 տարի հետո արդեն ուշ կլինի: Գիտությունների դոկտորների միջին տարիքը հասել է 61-ի: Նրանց մեծ մասը չունի փոխարինող, և անհրաժեշտ է մոտ 10 տարի, որպեսզի ընտրվի և հետնորդներին փոխանցվի գիտության աննշմարելի «նոու-հաուն»: Եթե սկսենք անհապաղ, ապա սերունդների փոխարինումը տեղի կունենա այն ժամանակ, երբ ղեկավարների միջին տարիքը կհասնի 71-ի: Եթե 5 տարի էլ հապաղենք, ապա՝ 76-ի: Իրենց աշխատունակությունը պահպանած անճանց մասնաբաժինը տարիքների այդ միջակայքում արագորեն նվազում է: Դեռևս գոյություն ունեցող դպրոցների մի զգալի մասը պահպանելու համար պետք է առաջիկա 1-3 տարիներին ձեռնարկել արտակարգ միջոցներ:

Որքան շուտ սկսվի և ինտենսիվ լինի հիմնարար գիտությանը ցուցաբերվող օժանդակությունը, այնքան նրա ավելի մեծ մասը կհաջողվի փրկել, ուստի այնքան ավելի հզոր կլինի տնտեսությունը, ավելի շուտ մրցունակ կդառնա արդյունաբերությունը, ուժեղ և անկախ՝ ռազմաարդյունաբերական համալիրը, ավելի լավ՝ առողջապահությունը և կենսապայմանները, և ավելի չնչին՝ սոցիալական, ժողովրդագրական և այլ բնույթի հասարակական պրոբլեմները: Կայուն կլինի երկրի մեծ հեղինակությունը:

Անհրաժեշտ են բոլոր հիմնարար գիտությունները: Պետք է փրկել հետազոտությունների բոլոր ուղղությունները: Գիտության և տեխնիկայի պատմությունը վկայում է, որ հիմնարար գիտության զարգացման տրամաբանությունն ինքն է որոշում առավել հեռանկարային ուղղությունները, և դրանցից ժամանակի ընթացքում անպատճառ ծագում են տեխնոլոգիական հավելվածներ: Ավելին. վստահորեն կարելի է պնդել, որ յուրաքանչյուր գիտություն կիրառական է, միայն թե դա ժամանակի խնդիր է:

Միջազգային փորձի և ՀՀ-ում տիրող իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է հիմնարար գիտության կազմակերպական ու տնտեսական ապահովման, կառավարման, կադրերի պատրաստման, միջազգային գործունեության ու գործիքային բազայի արդիականացման ոլորտներում ձեռնարկել հետևյալ միջոցները.

1. *գիտակցել պահի լրջությունը.* մոտակա 2-4 տարիները կվճռեն ՀՀ-ում հիմնարար գիտության ճակատագիրը, ուստի պետք է անհապաղ ձեռնարկվեն հետևյալ կազմակերպական միջոցառումները՝

ա) հիմնարար գիտության ճգնաժամի լուծման ճանապարհների կառուցողական քննարկում և 2 տարուց ոչ ուշ նրա հաղթահարման «Գիտություն – Կրթություն – Լուսավորություն» ամբողջ համալիրն ընդգրկող ծրագրի իրագործում,

բ) Ազգային անվտանգության ռազմավարության լրացում տնտեսական և ռազմական անվտանգության ապահովման ռազմավարական հեռանկարների համար հիմնարար գիտության առանցքային դերի վերաբերյալ հոդվածով,

2. *ներդրումային ապահովման ոլորտում մշակել այնպիսի մեխանիզմ,* որը հնարավորություն տա ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրացման ծավալի 1-1,5 %-ն ուղղել նորամուծությունների և ԳՀՓԿԱ-ների կատարման, այդ թվում՝ հիմնարար գիտության, ֆինանսավորմանը,

3. *սկսել հիմնարար գիտության, կրթության ու լուսավորության կառավարման համակարգերի վերակառուցում*՝ առաջնորդվելով ինքնակազմակերպման, մրցողականության, աշխատանքի հրապարակայնության և թափանցիկության սկզբունքներով, այն է՝ մոտակա տարիներին ստեղծել և անընդհատ ավելացնել գիտական հիմնադրամների ու փոքր նորամուծական նախագծերին աջակցման հիմնադրամների բյուջեն՝ մեծացնելով դրանց թիվն ու լուծվող խնդիրների շրջանը և նպատակային պետծրագրերը, ստեղծել արդյունավետ կերպով գործող ծրագրերի և հիմնադրամների խորհուրդներ՝ դրանք պաշտպանելով Կառավարության ավելորդ միջամտությունից, աշխատանքներում լայնորեն ներգրավել մասնագիտական ընկերակցություններին,

4. *գիտության համար կադրերի պատրաստման գծով*՝

ա) շտապ ուժեղացնել գիտատեխնիկական գիտելիքների քարոզման ու ժողովրդականացման, վաղ մանկությունից անձի մտավոր զարգացման գծով աշխատանքը՝ բացասական ժողովրդագրական միտումները հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի մտածողության ինքնուրույնության, լայնության, ստեղծագործական բնույթի և տրամաբանականության զարգացմամբ,

բ) ամրապնդել ուսուցչական կազմը և արտադպրոցական կրթության համակարգը (նախադպրոցական պատրաստում, խմբակներ, օլիմպիադաներ և այլն),

գ) ընդունել գիտալուսավորչական կենտրոնների ցանցի (ներառյալ՝ երիտասարդության գիտատեխնիկական ստեղծագործության տները) զարգացման ծրագիր, մեծացնել բարձրորակ ու մատչելի գիտալուսավորչական և ուսումնական հրատարակությունների, դիտողական ձեռնարկների (ներառյալ՝ էլեկտրոնային), ռադիո- ու հեռուստատեսային հաղորդումների և ինտերնետում տեղադրվող նյութերի թողարկումը,

դ) պահպանել և ամրապնդել կրթության հիմնարարությունը, սովորողներին (և բնակչությանը) բացատրել հիմնարար գիտության դերը ժամանակակից աշխարհում,

5. *միջազգային գործերում*՝

ա) ընդհանրացնել կրթության և գիտության ոլորտում միջազգային կոոպերացիան ամրապնդելու մասին դրույթները, ընդսմին այդ կոոպերացիան զարգացնել ընդհուպ մինչև բոլոր շահագրգիռ երկրների մասշտաբով համատեղ հաստատությունների, գիտական, կրթական, մշակութային ծրագրերի ստեղծմամբ միասնական գիտակրթական ու մշակութային տարածության ձևավորումը,

բ) գործադրել ջանքեր՝ ուղղված եվրոպական շրջանակային ծրագրերի նախագծերում հայ գիտնականների մասնակցության ընդլայնմանը,

գ) պարզեցնել գիտության, կրթության, լուսավորության գործիչների համատեղ աշխատանքի ու գործնական այցերի ժամանակ թույլտվության ստացման, գրանցումային, մաքսային ռեժիմները,

6. գիտության գործիքային բազայի գծով՝

ա) մեծացնել եզակի գիտական վահանակների ու սարքերի պահպանման ֆինանսավորումը,

բ) 3-4 անգամ մեծացնել «Գիտության գործիքային բազա» ծրագրին հատկացվող միջոցների ծավալը,

գ) գիտությանը պարբերաբար ապահովել նոր սերնդի եզակի գործիքներով:

Այսօր մեր նպատակն է պաշտպանական գիտության հիմքերի պահպանումը, հիմնարար ու կիրառական հետազոտությունների զարգացումը, առանց ինչի անհնար են ՌԱՀ-ի հետագա վերականգնումն ու զարգացումը, ինչպես նաև գիտության զարգացումն ընդհանրապես: ՈՒստի և այդ հիմքում գլխավոր «կրիչ» բլոկներից մեկը պետք է դառնա հեռանկարային պաշտպանական հետազոտությունների և մշակումների գործակալությունը, որի ստեղծումը հնարավորություն կտա սեղմ ժամկետներում կրճատելու ոչ միայն սպառազինության և ռազմական տեխնիկայի ոլորտում, այլև ընդհանուր առմամբ տեխնոլոգիական զարգացման մեջ առաջատար արտասահմանյան երկրների հետ առաջացած գիտատեխնիկական ճեղքվածքը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Հ. Ս. Քոթանջյան,* Հայ գիտության զարգացումը Հայաստանի ազգային անվտանգության ռազմավարության տրամաչափի մեջ (զեկուցում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գիտության և կրթության հանձնաժողովի լսումներում): «ՀՔ», 2008, հմ. 4:

2. *В. Захаров.* Наука в России и современном мире. «Континент», 2010, № 143.

3. «Нобелевский лауреат академик Жорес Алферов о XXI веке» (http://www.nasledie.ru/politvnt/19-20).

4. *Б. Обама.* Выступление на ежегодном собрании Национальной академии США (http://www.rpm-consalt.ru).

5. *Doc Dougherty, David Herrelko, Steven Koonin.* How Does Basic Science Defend America? (http://www.pbs.org/kcet/closertotruth/explore/show_10.html).

ВПК И ФУНДАМЕНТАЛЬНАЯ НАУКА

Г. Г. МАТЕВОСЯН, член-корреспондент НАН РА, академик-секретарь НАН РА

РЕЗЮМЕ

Военная промышленность является важным звеном в обеспечении военной безопасности государства, вследствие чего ее развитие рассматривается как один из главных приоритетов государства. В то же время анализ мировой практики показывает, что в разработке принципиально новых

видов вооружения решающая роль принадлежит фундаментальной науке, которую руководители ведущих стран считают гарантией обеспечения не только военного, но и технологического превосходства своего государства.

Развитие ВПК должно быть нацелено на выпуск конкурентоспособной военной техники с использованием новых физических принципов. Однако создание такого ВПК в старых организационных формах, оставшихся в наследие Армении от советской эпохи, практически не возможно. В этом аспекте предлагается создание специализированного агенства, аналогичного Агенству по перспективным оборонным исследованиям и разработкам *(DARPA)* США, основными функциями которого должны стать: формирование научной политики и соответствующих научных коллективов, организация конкурсов по оборонным фундаментальным и прикладным исследованиям и т. д.

С учетом того, что некогда соответствовавшая мировым стандартам фундаментальная наука в РА в настоящее время находится в критическом состоянии, предлагается:

– осознать серьезность момента: в ближайшие 2-4 года определится судьба фундаментальной науки, начать конструктивное обсуждение путей преодоления ее кризиса и в ближайшие два года развернуть соответствующую программу, охватывающую весь комплекс «наука – образование – просвещение»;

– дополнить Стратегию национальной безопасности РА статьей о ключевой роли фундаментальной науки для стратегических перспектив экономической и военной безопасности;

– разработать механизм, позволяющий направлять 1-1,5 % от объема реализации товаров (работ, услуг) на финансирование инноваций и НИОКР, в том числе – фундаментальной науки;

– начать реорганизацию управления фундаментальной наукой, образованием и просвещением на основе принципов самоорганизации, состязательности, гласности и прозрачности работы, создать и постоянно увеличивать бюджет научных фондов и фондов поддержки малых инновационных проектов, расширяя их число и круг решаемых ими задач и целевые госпрограммы, создать реально действующие Советы фондов и программ, защитив их от излишнего вмешательства Правительства, широко привлекать к работе профессиональные общества;

– срочно усилить работу по пропаганде и популяризации научных знаний, интеллектуальному развитию личности с раннего детства, компенсируя демографический минимум развитием самостоятельности, широты, логичности и творческого характера мышления каждого ребенка;

– укрепить учительский корпус и систему внешкольного образования (дошкольного, а также кружков, олимпиад и т. д.);

– принять программу развития сети научно-просветительских центров,

увеличить выпуск добротных и доступных научно-просветительских и учебных изданий, наглядных пособий (включая электронные), радио- и телепередач, материалов в Интернете;

– сберечь и закрепить фундаментальность образования, объяснять учащимся и населению роль фундаментальных наук в современном мире;

– обобщить тезисы об укреплении международной кооперации в науке и образовании до формирования единого научно-образовательного и культурного пространства в масштабах всех заинтересованных стран на базе создания совместных учреждений, научных, образовательных, культурных программ;

– предпринять усилия к расширению участия армянских ученых в проектах европейских рамочных программ, упростить при деловых визитах и совместных работах деятелей науки, образования и просвещения визовый, регистрационный, таможенный режимы;

– увеличить финансирование на поддержание уникальных научных стендов и установок, в 3-4 раза увеличить объем средств, выделяемых на программу «приборная база науки», постоянно обеспечивать ее новым поколением уникальных приборов.

THE MILITARY INDUSTRY COMPLEX AND FUNDAMENTAL SCIENCE

H. H. MATEVOSYAN, Corresponding Member of the NAS, RA, Academician-Secretary of the NAS, RA

SUMMARY

The military industry is a vital link in ensuring the military security of the state, consequently its development is considered as a top priority of the state. At the same time, the analysis of international practice shows that in the development of essentially new types of arms the decisive role belongs to the fundamental science which the heads of leading countries consider a guarantee of ensuring not only military but also the technological superiority of their state.

The development of the MIC must be designed to produce competitive military equipment using new physical principles. However, the establishment of such MIC in the old organizational forms having remained in the legacy of Armenia from the Soviet era is nearly impossible. In this respect, the establishment of a specialized agency similar to the Defense Advanced Research Projects Agency (DARPA), US, is proposed, the main function of which should be: formulation of academic policy and corresponding academic teams, organization of competitions in fundamental and applied defense studies, etc.

Given the fact that the fundamental science once complying with the world standards in the RA is currently in critical condition, it is proposed to:

– understand the seriousness of the moment: in the next 2-4 years the destiny of the fundamental science will be determined, begin a constructive discussion of the

ways to overcome its crisis, and in the coming two years launch the relevant program covering the full range of «science – education – enlightenment»;

– enhance the RA National Security Strategy with an article about the key role of the fundamental science for strategic perspectives of economic and defense security;

– develop a mechanism allowing to send 1-1,5 % from the sales volume of goods (work, services) to finance innovation, research and development (R and D), including – the fundamental science;

– begin reorganizing the management of the fundamental research, education and enlightenment based on the principles of self-organization, competitiveness, publicity and transparency of work, create and continually increase the budget of research funds and funds to support small innovative projects expanding their number and range of their tasks and targeted state programs, establish actually operating Councils of funds and programs protecting them from the excessive government intervention, widely attract professional communities to work;

– urgently step up efforts to promote and disseminate academic knowledge, intellectual development of personality from early childhood compensating for the demographic minimum with the development of independent, broad, logical and creative thinking of each child;

– strengthen teachers' corps and out-of-school education system (preschool, as well as hobby groups, contests, etc.);

– adopt a program of developing a network of academic and educational centers, increase the issue of quality and available academic and educational and training publications, visual aids (including digital), radio and television programs, content on the Internet;

– protect and consolidate the fundamental nature of education, explain the role of fundamental sciences in the contemporary world to the students and the public;

– summarize the theses on reinforcing international cooperation in science and education before creating a single academic and educational and cultural environment across all the countries concerned on the basis of joint institutions, academic, educational, and cultural programs;

– make efforts to increase participation of Armenian scientists in projects of European framework programs, streamline the visa, registration, customs regimes for business visits and joint work of men of science, education and enlightenment;

– boost the funding to maintain the unique academic desks and facilities, raise 3-4 times the resources allocated to the «instrument base of science» program, constantly provide it with new generation of unique devices.

ՀՀ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հ. Ի. ԳԵՎՈՐԳՅԱՆ, կապիտան, ՀՀ ՊՆ ռազմաարդյունաբերական վարչության ավագ սպա-իրավաբան,
Ա. Ռ. ԹՈՎՄԱՍՅԱՆ, ՔՀՃ 1-ին դասի առաջատար ծառայող, ՀՀ ՊՆ կենտրոնական զինվորական ներկայացուցչության տնտեսագիտական բաժանմունքի առաջատար մասնագետ

Ցանկացած պետության ռազմաարդյունաբերական համակարգի (ՌԱՀ) կարգավիճակը հիմնականում պայմանավորված է տվյալ պետության քաղաքական ու տնտեսական կշռով, արդյունաբերական տեխնոլոգիաների ոլորտի և գիտակրթական բնագավառի զարգացածության աստիճանով:

Աշխարհի զարգացած պետությունների ՌԱՀ-երի գործունեության ուսումնասիրությունը[1] ցույց է տալիս, որ ոլորտի համակարգված գործունեության կենսապահովման և զարգացման համար պարտադիր պայման է նորմատիվ-իրավական ակտերի առկայությունը, ինչով բացառվում են տվյալ ոլորտում սուբյեկտիվիզմի հնարավոր դրսևորումները: Օրինակ՝ ԱՄՆ-ի Կոնգրեսում միայն 2009 թ. ընթացքում քննարկվել է ռազմաարդյունաբերությանն առնչվող շուրջ 10 օրինագիծ:

Տնտեսագիտորեն ՌԱՀ-ի զարգացման հիմնական նպատակն է ՌԱՀ-ի արտադրանքի նկատմամբ պահանջարկի բավարարումն ըստ՝

• սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրի,

• ՀՀ միջազգային պայմանագրերի և ՀՀ ստանձնած պարտավորություններին համապատասխան՝ սպառազինության և ռազմական տեխնիկայի արտահանման ծրագրային մշակումների,

• զորահավաքային պլանի հաշվարկային ցուցանիշների:

2008 թ. Ֆրանսիայում ընդունվել է տնտեսության արդիականացման մասին հատուկ օրենք, որում ընդգրկված են ոչ միայն արդյունաբերությունը, այլև տնտեսության բոլոր ճյուղերը: ԱՄՆ-ում գործում են ոչ միայն ծրագրեր, այլև օրենք-ծրագրեր[2], որոնց հիման վրա կատարվում է գիտատեխնիկական, արդյունաբերական և ռազմատեխնիկական ոլորտներում իրականացվող քա-

[1] Տես, օրինակ, *В. А. Федорович.* США: федеральная контрактная система: механизм регулирования государственного хозяйствования. М., 2010; *И. Д. Иванов.* Военно-промышленный комплекс Европейского Союза. «Перспективы» (www.perspektivy.into/oykumena/europe/voenno_promyshlennyiy_kompleks.htm); «Arm industry» (en.wikipedia.org/wiki/Arms_industry):

[2] Տես *Е. Никитенко.* О нормативно-правовом обеспечении развития системы вооружений. «Вооружение. Политика. Конверсия», 1998, № 3–5:

ղաքականությունների համապետական միջգերատեսչական համադասում[3]:

Այսօր ՀՀ-ում արդյունաբերության զարգացման շատ հարցեր մեր օրենսդրությամբ չեն կարգավորվում: Հայաստանում չկա արդյունաբերության զարգացման ոլորտում պետական քաղաքականությունը սահմանող հիմքային օրենք, ինչպես նաև իրավական ակտ, որով սահմանվեն արդյունաբերական, այդ թվում՝ ռազմաարդյունաբերական, ոլորտի զարգացման պետական համալիր քաղաքականությունը և դրա իրականացման տնտեսական մեխանիզմները: Այդ պատճառով ՀՀ արդյունաբերական քաղաքականությունը կառուցվում է տնտեսության առանձին հատվածներին աջակցման մասնակի ծրագրերի հիման վրա: Նման հատվածայնությունը խոչընդոտում է տնտեսության համալիր, փոխկապված, կայուն զարգացմանը և արդյունաբերության ոլորտում միասնական պետական քաղաքականության ձևավորման ու իրավական ակտերով ամրագրման անհրաժեշտության ակնհայտ վկայությունն է: Այս ուղղությամբ անհրաժեշտ է ստեղծել օրենսդրական բազա, որը հնարավորություն ընձեռի ստեղծելու մրցունակ արդյունաբերական համալիր՝ խարսխված նորամուծական մտքի վրա:

ՀՀ ռազմաարդյունաբերական ոլորտում տիրող իրավիճակի համեմատական վերլուծության արդյունքների հաշվառմամբ կարելի է փաստել, որ ՀՀ-ում անհրաժեշտ է ունենալ.

1. *ռազմաարդյունաբերության մասին օրենք*, որում պետք է հստակորեն ամրագրված լինեն ոլորտի կառուցվածքը, իրավահարաբերությունների ձևավորման ու կարգավորման հիմնական սկզբունքները, ռազմաարդյունաբերության զարգացման քաղաքականության գերակա ուղղությունները, ինչպես նաև ոլորտի անվտանգ գործառման վերաբերյալ հայեցակարգային դրույթները*:

2. *նորմատիվային ակտեր*՝

– որակի կառավարման համակարգի արտոնագրման ստանդարտներ,

– բնապահպանական կամ շրջակա միջավայրի կառավարման համակարգի արտոնագրման ստանդարտներ,

– աշխատանքի պաշտպանության կառավարման համակարգի ստանդարտներ,

– արտադրանքի արտոնագրման ստանդարտներ,

– տեղեկութային անվտանգության կառավարման համակարգի ստանդարտներ,

– անձնակազմի արտոնագրման ստանդարտներ, և այլն,

[3] Տես *Е. Роговский*. Успех–это успеть. 23.12.2010 (www.protiv.tv/publ.materially-budu shhego/darpa/evgenij-rogovskij-uspekh-ehto-uspet/87-1-0-287); *О. А. Городов*. Понятие промышленной собственности и краткая история развития законодательства зарубежных стран в сфере правовой охраны ее объектов. «Юридическая Россия» (www.law.edu.ru/doc/document.asp?docID=1181836):

* Ռազմաարդյունաբերության ոլորտի անվտանգ գործունեություն ասելով հասկանում ենք ռազմաարդյունաբերական օբյեկտների և արտադրանքի արտադրության պաշտպանվածությունն արտաքին ուժերի ներգործությունից, ռազմաարդյունաբերական արտադրանքի նկատմամբ պահանջարկի ապահովումը, ինչպես նաև ոլորտի գործունեության ընթացքում աշխատողների տեխնիկական անվտանգությունն ու բնապահպանական անվտանգությունը:

3. *արդյունաբերության զարգացման պետական համալիր ծրագիր,* որում ներառված լինեն ռազմաարդյունաբերության ոլորտը և տնտեսության մյուս ճյուղերի հետ դրա գործակցությունը: Ծրագրում պետք է նախատեսվեն տնտեսական աճման և պետպատվերի աճման տեմպերը, նշվեն սպառազինության ու ռազմական տեխնիկայի արտադրման առաջնային ուղղությունները՝ ՀՀ «Ազգային անվտանգության ռազմավարությունում» ու «Ռազմական դոկտրինում» ամրագրված ռազմական սպառնալիքների և մի շարք այլ գործոնների հաշվառմամբ, ինչպես նաև համապատասխան օրենսդրական բազայի վերանայումը, կատարելագործումն ու զարգացումը:

ՌԱՀ-ի որոշակի առանձնահատկություններ են՝

• ներքին շուկայում պետության՝ որպես միակ պատվիրատուի գործոնը,

• միջազգային ռազմատեխնիկական համագործակցության կոշտ պետական կարգավորումը,

• ռազմական տեխնիկայի մշակման և հատկապես զորքերում շահագործման ընդունման երկարատևությունը, որը պայմանավորված է կայուն երկարաժամկետ տեխնոլոգիական կոոպերացիաների՝ արտադրատեխնոլոգիական համալիրների ձևավորմամբ, պատվիրատուի ներկայացուցչության (զինվորական ներկայացուցչության) և կոնստրուկտորատեխնոլոգիական փաստաթղթերի վարման համակարգերի անկատարությամբ:

Հարկ է նշել, որ ՀՀ-ն դեռ գտնվում է շուկայական տնտեսությանն անցման ժամանակաշրջանում և չունի բավարար օրենսդրություն, ի տարբերություն անգլոսաքսոնական կամ մայրցամաքային եվրոպական պետություններից, որոնց օրենսդրության մեջ հանգամանալից կերպով կարգավորված են տնտեսական հարաբերությունները, այդ թվում՝ տարբեր տեսակի ինտեգրված կառույցների միջև:

Սակայն ՀՀ գործող օրենսդրությունը չի կարգավորում ռազմաարդյունաբերության ոլորտում այդպիսի կառույցների, մասնավորապես՝ տեխնոլոգիական համալիրների (տեխնոլոգիական կոոպերացիաների) ձևավորմանն ու գործունեությանը վերաբերող հարաբերությունները: Միևչդեռ դրանք (այդ թվում՝ մասնավորեցմամբ ստեղծումը) կարող են արդյունավետ լինել միայն այն դեպքում, երբ համակարգված և համալիր են:

Այժմ արդյունաբերական (ռազմաարդյունաբերական) միջազգային գործարարական ոլորտում իրականացվում է կլանման ճանապարհով ինտենսիվ ինտեգրում՝ օֆշորային կենտրոններում կուտակված միջոցների, հարկերի նվազարկման սխեմաների օգտագործմամբ, կլանվող օբյեկտների կանխամտածված սնանկացմամբ և այլ ճանապարհով:

ՀՀ ՌԱՀ-ում, որը կենտրոնացած է պետական խնդիրների լուծման վրա, ինտեգրման գործարարական սխեմաները կիրառելի չեն, այդ իսկ պատճառով համապատասխան լուծումների նախապատրաստման և ընդունման համար անհրաժեշտ է հստակ իրավական կարգավորում:

Պետական պաշտպանական պատվերն իր նվազ շահավետության (որոշ դեպքերում՝ նաև վնասների) պատճառով չի կարող լինել ինտեգրման արդյունավետ պետական կարգավորիչ:

Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ գործող իրավական ակտերը չեն ապահովում ՌԱՀ-ի կենսագործունեության ամբողջ իրավական դաշտը, իսկ նոր իրավական ակտերի ընդունումը կատարվում է բավական դանդաղ, քանի որ համակարգային մակարդակով չկա համապատասխան նախաձեռնող կառույց:

ՀՀ-ում շուկայական տնտեսությանն անցման ներկա պայմաններում անհրաժեշտ ենք համարում պետության կողմից ՌԱՀ-ի գործունեության պետական կարգավորման ուղղակի և անուղղակի մեթոդների ներդաշնակ կիրառումը[4], ինչի համար անհրաժեշտ է «ՌԱՀ-ին պետական աջակցության մասին» օրենք, որն իր մեջ պետք է ներառի գործող օրենսդրության բոլոր իրավական մեխանիզմները և միևնույն ժամանակ ներմուծի նորերը[5]:

ՀՀ ՌԱՀ-ի զարգացման պետական ծրագրի միջոցառումների իրականացման օրենսդրական ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է լուծել մի շարք խնդիրներ, այդ թվում՝

• պետական պաշտպանական պատվերներ կատարող ընկերությունների համար առանձնահատուկ հարկաբյուջետային և վարկային քաղաքականության մեխանիզմների ներդրում, ինչի համար անհրաժեշտ են փոփոխություններ հարկային, մաքսային օրենսդրություններում և պետական վարկային քաղաքականության դրույթներում,

• պետական պաշտպանական պատվերներ կատարող ընկերությունների կողմից սպառազինության ու ռազմական տեխնիկայի զորահավաքային նախապատրաստման և զորահավաքային առաջադրանքների կատարման համար անհրաժեշտ օրենսդրական բազայի կատարելագործում,

• ՌԱՀ-ի գործունեությունը համակարգող միասնական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի բազայի ստեղծում,

• պետական պաշտպանական պատվերներ կատարող ընկերություններին լիցենզիայի տրման կարգի լրամշակում և համապատասխան թույլտվություն տալու նպատակով ««Լիցենզիայի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակում,

• պետական պաշտպանական պատվերներ կատարող ընկերությունների կառավարման արդյունավետությունը մեծացնելու նպատակով պետության կողմից վերահսկողության ապահովման մեխանիզմների մշակում (օրինակ՝ համապատասխան փոփոխություններ աուդիտի, հաշվապահական հաշվառման և այլ ֆինանսական գործողությունների մասին օրենքներում, ինչպես նաև կառավարության որոշումներում, մասնավորապես՝ պետական բաժնեմաս ունեցող ընկերությունների վերստուգողների վերաբերյալ),

• ՌԱՀ-ի արտադրանքի թողարկման և գնումների՝ ռազմական ու ֆինանսական տեսանկյունից օպտիմալ հաշվեկշռի հաստատում՝ արտաքին շուկա

[4] Տես *Ս. Ս. Ավետիսյան, Ռ. Ա. Թովմասյան,* Տնտեսագիտության տեսություն: ՈՒսումնական ձեռնարկ: Ե., 2010, էջ 284:

[5] Տես *А. Николаев.* Многие наши беды от несовершенства законодательства. «Российская Федерация сегодня», 2002, № 15:

դուրս գալու անհրաժեշտության և սպառազինության ու ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրի դրույթների հաշվառմամբ, որոշ իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների կատարմամբ,

• սպառազինության և ռազմական տեխնիկայի ստեղծման, արտադրության, արդիականացման, նորոգման և արտահանման ոլորտում ՌԱՀ-ի կազմակերպությունների իրավասությունների ընդլայնում կառավարության որոշումներով:

Ամփոփելով հոդվածը՝ նշենք, որ ներկայումս ՀՀ պաշտպանական բարեփոխումների համատեքստում նախատեսված է ՀՀ ՌԱՀ-ի զարգացման հայեցակարգի և ծրագրի ընդունում: Վերջինիս երաշխավորված իրականացման համար, բացի անհրաժեշտ ֆինանսական ու կադրային միջոցներից, պետք է ունենալ լավ մշակված ու համակարգված ամբողջական օրենսդրական բազա:

О ЗАКОНОДАТЕЛЬНЫХ ОСНОВАХ РАЗВИТИЯ СИСТЕМЫ ВОЕННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ РА

А. И. ГЕВОРГЯН, капитан, старший офицер-юрист военно-промышленного управления МО РА, А. Р. ТОВМАСЯН, ведущий служащий 1-ого класса Специальной гражданской службы, ведущий специалист экономического отделения Центрального военного представительства МО РА

РЕЗЮМЕ

Одним из обязательных условий для системного развития и деятельности ВПС является наличие комплекса нормативно-правовых регулятивов и утвержденных ими программных документов.

С учетом результатов анализа существующей в военно-промышленной сфере РА ситуации и ее определенной специфики (фактор государства в качестве единственного заказчика на внутреннем рынке, жесткое государственное регулирование международного военно-технического сотрудничества, длительность процессов разработки военной техники и, в особенности, ее принятия в эксплуатацию в войсках) можно констатировать, что необходимо иметь Закон РА «О военной промышленности», закрепляющий концептуальные основы правового регулирования деятельности и развития данной сферы, нормативные стандарты и комплексную государственную программу развития промышленности, охватывающую ее военный сектор, а также ее взаимодействие с другими отраслями экономики.

В переходный к рыночной экономике период законодательство РА в недостаточной мере регулирует экономические отношения и между различными интегрированными структурами, в частности – касающиеся формирования и деятельности технологических комплексов (технологических корпораций) в военно-промышленной сфере, в то время как они (в том числе – процесс создания в результате приватизации) могут быть эффективными только при условии их системности и комплексности.

Международные бизнес-схемы интеграции (интенсивная интеграция путем поглощения с использованием схем аккумуляции средств в офшорных центрах, минимизации налогов, преднамеренного доведения поглощаемых объектов до банкротства и т. д.) в СВП РА не могут быть применены. В то же время государственный оборонный заказ (ГОЗ) вследствие своей низкой рентабельности (а в некоторых случаях и убыточности) не может служить эффективным государственным регулятором.

В подобных условиях возникает необходимость гармоничного применения прямых и косвенных методов государственного регулирования СВП, для чего необходимо иметь содержащий все действующие и инновационные механизмы Закон РА «О государственной поддержке СВП», а также структуру, координирующую совершенствование законодательной базы в даной сфере.

С точки зрения законодательного обеспечения выполнения государственной программы по развитию СВП РА необходимо решить ряд проблемных вопросов, как то:

• внедрение механизмов специальной налогово-бюджетной и кредитной политики для компаний, выполняющих ГОЗ, усовершенствование процедуры выдачи им лицензий;

• усовершенствование законодательной базы, необходимой для мобилизационной подготовки вооружения и военной техники и осуществления мобилизационных задач компаниями, выполняющими ГОЗ, а также разработка механизмов по обеспечению государственного контроля с нацелом на повышение эффективности их управления;

• создание базы единой нормативно-технической документации по координации деятельности СВП;

• обеспечение оптимального баланса производства и импорта продукции СВП с военной и финансовой точек зрения;

• расширение компетенций организаций СВП в сфере создания, производства, модернизации, ремонта и экспорта ВВТ.

ON THE LEGISLATIVE BASIS FOR THE DEVELOPMENT OF MILITARY INDUSTRY OF THE RA

H. I. GEVORGYAN, Captain, Senior Officer-Jurist of the Military-Industry Department, MOD, RA, A. R. TOVMASYAN, 1st Class Leading Officer of the Special Civil Service, Senior Specialist in the Economic Section of the Central Military Mission, MOD, RA

SUMMARY

One of the prerequisites for systemic development and operation of the MIS is the complex of standard legal norms and policy documents approved by them.

Taking into account the analysis results of the situation existing in military-industry sector of the RA and of its definite specifics (the factor of the state as the only customer in the domestic market, strict government regulation of

the international military-technical cooperation, duration of processes of developing military technology and, in particular, its start-up in the armed forces) we can say that there must be the RA Law «On the Military industry» consolidating the conceptual foundations of the legal regulation of activity and development of this sector, regulatory standards and the comprehensive state program for the development of the industry covering its military sector, as well as its interaction with other economic branches.

In the transition-to-the-market-economy period the RA legislation insufficiently regulates the economic relations between various integrated structures, in particular-regarding the establishment and activity of technological complexes (technology corporations) in the military-industry sector, while they (including the establishment process a result of privatization) can be effective only if they are systematic and all-inclusive.

International integration business–schemes (intensive integration by absorption with the use of funds accumulation schemes in offshore centers, tax minimization, premeditated leading of the absorbed objects to bankruptcy, etc.) can not be applied in the MIS of the RA. At the same time, the state defense order (SDO) due to its low profitability (and in some cases also unprofitability) can not serve as an efficient state regulator.

Under such circumstances it is necessary to the harmoniously use direct and indirect methods of state regulation of the MIS for which we need to have the RA Law containing all active and innovative mechanisms «On State Support to the MIS», as well as a structure coordinating the improvement of the legislative basis in the given field.

In terms of legislative support to the implementation of the state program on the development of the MIS, RA, it is necessary to solve a number of issues such as:

• Introduction of tools of special tax and budgetary and credit policy for companies performing SDO, improvement of their license issuing procedure;

• Enhancement of the legislative framework necessary for preparedness activity of arms and military equipment and for accomplishment of mobilization tasks by companies performing SDO, as well as development of mechanisms to ensure state control with the aim to boost the efficiency of their management;

• Creation of a database of unified normative-technical documentation to coordinate the MIS activity;

• Provision of an optimal balance of production and import of the MIS output from the military and financial point of view;

• Expansion of the MIS organizations' competencies in the sphere of creation, production, modernization, repair and export of the arms and military equipment.

ՀՀ ԶՈՒ-Ի ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ռ. Վ. ԱԹՈՅԱՆ, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, «Երևանի ավտոմատ կառավարման համակարգերի գիտահետազոտական ինստիտուտ» (ԵրԱԿՀԳՀԻ) ՓԲԸ-ի գործադիր տնօրեն, ՅՈՒ. Գ. ՄՈՍԻԿՅԱՆ, տեխնիկական գիտությունների թեկնածու, ԵրԱԿՀԳՀԻ-ի գործադիր տնօրենի տեղակալ գիտության գծով, Հ. Ա. ՄԵԼԻՔՅԱՆ, տեխնիկական գիտությունների թեկնածու, ԵրԱԿՀԳՀԻ-ի համակարգային նախագծման բաժնի պետ, Վ. Ռ. ԲԱՐՍԵՂՅԱՆ, ԵրԱԿՀԳՀԻ-ի կիրառական ծրագրային ապահովման մշակման բաժնի պետ, Լ. Գ. ՄԵԼՔՈՒՄՅԱՆ, ԵրԱԿՀԳՀԻ-ի ցանցային և կիրառական ծրագրային ապահովման մշակման բաժնի պետ

21-րդ դարի սկիզբը բնութագրվում է մարդու կենսագործունեության բոլոր բնագավառներում ավտոմատացման համար անհրաժեշտ տեղեկատվական տեխնոլոգիաների համընդհանուր ներդրմամբ և կիրառմամբ:

Մարդկությունը մեծ արագությամբ շարժվում է դեպի տեղեկութային հասարակություն, և այն երկիրը, որը դա հաշվի չի առնում, կարող է անդառնալիորեն հետ մնալ համընդհանուր առաջընթացից:

Այդ գործընթացներում ամբողջ աշխարհում առաջնահերթ տեղ է հատկացվում պետության և նրա զինված ուժերի կառավարման ավտոմատացման հարցերին:

«Տեղեկութային սպառնալիք», «տեղեկութային զենք» և «տեղեկութային պատերազմ» հասկացություններն արդեն հաստատուն տեղ են զբաղեցրել միջպետական հարաբերությունների բառացանկում: Միջպետական հակամարտություններում, այդ թվում՝ պատերազմներում, մասնակից բոլոր կողմերն էլ աստիճանաբար սկսում են օգտագործել տեղեկատվական դաշտը և նրանով ընձեռվող հնարավորությունները:

Ռազմական կառավարման և կապի այն համակարգերը, որոնցում կիրառվում են ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներ, իրենց նշանակությամբ հավասարեցվում են ամենահզոր տեսակի զենքերին: Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի ԶՈՒ-ի կառավարման ավտոմատացված համակարգի (ԶՈՒԿԱՀ) գործառության ալգորիթմները, խնդիրների դրվածքը և տեղեկութային պարունակությունը մշակվել են ՀՀ ԶՈՒ-ի Գլխավոր շտաբի ղեկավարության, պաշտպանության նախարարության և Գլխավոր շտաբի վարչությունների ու բաժինների սպաների անմիջական մասնակցությամբ: Ընդ որում, շատ կարևոր է այն հանգամանքը, որ այս հարցում ռազմական մասնագետների մասնակցության աստիճանն ու դերը մեծացել են համակարգի զարգացմանը և լուծվող խնդիրների շրջանակի ընդլայնմանը զուգընթաց:

ԶՈՒԿԱՀ-ն ԶՈՒ-ի կազմհաստիքային կառուցվածքին համանման կառուցվածք ունեցող տարածքային աստիճանակարգության բազմաօբյեկտ ավտոմա-

տացված համակարգ է, որի օբյեկտները զինված են համակարգչային ու կապի ժամանակակից միջոցներով և տեղեկույթը փոխանակում են ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկույթի փոխանակման գերատեսչական համալիրի (ՏՓՀ) կապուղիներով:

ԶՈՒԿԱՀ-ի տրամաբանական սխեման ըստ կառավարման 10 աստիճանակարգային մակարդակների բերված է նկ. 1-ում: Այստեղ կատարված են հետևյալ նշագրումները.

– ՀԿ՝ հրամանատարական կետ,

– ԿՀԿ՝ կենտրոնական ՀԿ,

– ԳՀԿ՝ գլխավոր ՀԿ:

ԶՈՒԿԱՀ-ի օբյեկտների համար մշակված են ավտոմատացման միջոցների համալիրներ՝ որպես տեղային հաշվողական ցանցեր, որոնց աշխատանքային տեղերի քանակը կարող է փոփոխվել մի քանի տասնյակից (ԳԾ ԿՀԿ-ի համար) մինչև մեկի (ստորին մակարդակների ՀԿ-ների համար):

ԶՈՒԿԱՀ-ն նախատեսված է ԶՈՒ-ի կառավարման խնդիրների օպերատիվ, հուսալի և գաղտնի ավտոմատացված լուծման համար ինչպես խաղաղ ժամանակ, այնպես էլ պատերազմական շրջանում:

ԶՈՒԿԱՀ-ն կատարում է հետևյալ հիմնական գործառույթները.

– ընթացիկ իրադրության, զինված ուժերի և ռազմական տեխնիկայի ու միջոցների վիճակի, մարտակազմի, տեղաբաշխման, մարտական պատրաստության աստիճանի մասին տեղեկույթի հավաքում, մշակում և արտապատկերում,

– մարտական գործողությունների (զորավարժությունների, վարժանքների) օպերատիվ պլանավորման համար անհրաժեշտ տեղեկույթի նախապատրաստում և պլանի համապատասխան հատվածների հաղորդում համակարգի յուրաքանչյուր օբյեկտին,

– տեղեկույթի տրամադրում համակարգի օպերատիվ անձնակազմին՝ իրադրության վերլուծության և տարբեր իրավիճակներում ԶՈՒ-ի կառավարման համապատասխան որոշումներ կայացնելու համար,

– ԶՈՒ-ի կառավարման ապահովում մարտական կառավարման հրամանների ձևավորման, ենթակա օբյեկտներին ցրման և նրանցից համապատասխան զեկույցների ստացման միջոցով:

Նշված գործառույթներից բացի, ԶՈՒԿԱՀ-ն ապահովում է՝

– համակարգում մշակվող տեղեկույթի (այդ թվում՝ մարտական գործողությունների պլանների և ԶՈՒ-երի իրական կառուցվածքի) պաշտպանությունը և անվտանգությունը, ներառյալ՝ ՏՓՀ կապուղիներով փոխանցվող տվյալների ծածկագրումը,


– տեղեկույթի մշակման, պահպանման, արտապատկերման և փոխանցման համակարգի տեխնիկական առաջադրանքով սահմանվող ժամանակահավանականային պահանջների կատարումը,

– համակարգի կենսունակության և աշխատունակության պահպանումը ԶՈՒ-ի կազմիաստիքային կառուցվածքի, մարտակազմի և տեղաբաշխման փո-

փոխման, ինչպես նաև տարբեր վթարային իրավիճակների ստեղծման դեպքում:

ԶՈՒԿԱՀ-ում շրջանառում և մշակվում են հետևյալ տիպի տվյալները.

– ձևայնացված կարճ հաղորդագրությունները (հրամաններ, հրամանների ստացման հաստատումներ, հրամանների կատարման ընթացքի և արդյունքների մասին զեկույցներ),



Նկ. 1. ԶՈՒԿԱՀ-ի տրամաբանական սխեման

– ձևայնացված երկար զեկույցներ՝ ՀՀ ԶՈՒ-ում ընդունված ձևերով և տրաֆարետներով, որոնք պարունակում են տվյալներ օբյեկտների մարտակազմի, տեղաբաշխման, պատրաստության աստիճանի, օպերատիվ իրավիճակի, հակառակորդի մասին և այլն,

– ազատ բովանդակությամբ և ծավալով չձևայնացված տեղեկույթ (կարգադրություններ, նամակներ, հրահանգներ, զանազան տեքստեր):

Նշված տիպի հաղորդագրություններով ձևավորվում և պահվում են ԶՈՒԿԱՀ-ի օպերատիվ տվյալների բազաները և չձևայնացված տեղեկույթի արխիվներն ու գրանցամատյանները:

ՋՈՒԿԱՀ-ի ելքային տեղեկույթը ներառում է.

– ձևայնացված հաղորդագրությունների համակարգային և ենթահամակարգային ցուցակներ,

– սպառազինության և ռազմական տեխնիկայի (ՍՌՏ) ու ռազմատեխնիկական գույքի (ՌՏԳ) տեսակների դասակարգիչներ,

– համակարգում օգտագործվող տեղեկատվական օբյեկտների և պարամետրների ատրիբուտների պայմանական և իրական անվանումների կոդեր,

– համակարգի օբյեկտները տարբեր աստիճանի մարտական պատրաստության բերման միջոցառումների պլաններ,

– մարտական հերթապահության տեղեկաքարտեր,

– էլեկտրոնային քարտեզներ,

– համակարգի կենսունակությունն ապահովող և այլ տվյալներ պարունակող ենթահամակարգեր:

ՋՈՒԿԱՀ-ի օպերատիվ տվյալների բազաները և ելքային տեղեկութային զանգվածները, այդ թվում՝ համակարգի կազմհաստիքային կառուցվածքը, բաժանվում են երկու հիմնական խմբերի՝ մարտական և վարժական:

Համակարգի ամբողջ տեղեկութային բազան ունի տարածքային բաշխվածություն, ընդ որում, կառավարման միևնույն աստիճանակարգային ճյուղի օբյեկտների բազաները տեղադրված են ներքևից վերև, այսինքն՝ յուրաքանչյուր օբյեկտ պարունակում է իր և իր բոլոր ենթակա օբյեկտների բազաները:

Տեղեկույթի այսպիսի բազմակի կրկնօրինակումը հնարավորություն է տալիս ճիշտ և ժամանակին կատարելու աղավաղված բազաների վերականգնումը հատուկ մշակված ծրագրային մեխանիզմների կիրառմամբ:

ՋՈՒԿԱՀ-ի կառավարումը կարող է իրագործվել երկու եղանակով.

– *կենտրոնացված*՝ կառավարման վերին մակարդակի օբյեկտներից,

– *ապակենտրոնացված*՝ առանձին զորատեսակների (վարչությունների) գլխավոր հրամանատարական կետերից:

ՋՈՒԿԱՀ-ի օբյեկտների միջև տեղեկույթի փոխանակումը կարող է կատարվել հասցեավորման հետևյալ տարբերակներով.

– շրջաբերական,

– ընտրողական,

– ընտրողական-շրջաբերական,

– ըստ ցուցակի,

– բազմահասցեանոց,

– կոնկրետ օբյեկտի՝ առանց նրա վերադաս օբյեկտներին ծանուցելու:

Նշենք ՋՈՒԿԱՀ-ի հրամանների և կարճ զեկույցների կիրառման որոշ առանձնահատկություններ.

1. համակարգում կիրառվող հրամանները ամփոփված են երկու տարբեր ցուցակներում՝

– կենտրոնական հրամաններ,

– ենթահամակարգային հրամաններ:

Ընդ որում, բացի անվանում ունեցող հրամաններից, համակարգում կարող են տրվել նաև համարակալված հրամաններ, ինչը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր ենթահամակարգի համար օպերատիվ կերպով ստեղծելու հրամանների ուրույն ցուցակ,

2. օբյեկտների կողմից տրվող հրամանը հասցեատիրոջը (հասցեատերերին) հասցվում է համաձայն կառավարման այն սկզբունքների, որոնք ընդունված են ԶՈՒ-ում,

3. օբյեկտներից ներկայացվող զեկույցները հասնում են կառավարման օբյեկտներ,

4. կառավարման ճյուղի միջանկյալ օբյեկտները անհրաժեշտության դեպքում կարող են կրկնել վերադաս օբյեկտների կողմից տրված հրամանները,

5. կառավարման ճյուղի ցանկացած օբյեկտ կարող է զեկուցել ենթակա օբյեկտների փոխարեն,

6. համակարգում հնարավորություն կա դադարեցնելու ցանկացած հրամանի կատարումը,

7. համակարգի վերին մակարդակի օբյեկտները կարող են արգելել ենթակա օբյեկտների կառավարումը միջանկյալ օբյեկտների կողմից,

8. համակարգում շրջանառող հաղորդագրությունների միջև կարող են լինել անհամատեղելիության և փոխադարձ բացասման հարաբերություններ, երբ օբյեկտի ստացած նոր հաղորդագրությունը պահանջում է վերացնել որոշ նախկին հաղորդագրություններ: Սույն հանգամանքը հաշվի է առնվում տվյալների բազաների օպերատիվ վարման խնդիրներում:

ԶՈՒԿԱՀ-ի ֆունկցիոնալ կիրառական խնդիրների լուծումը կատարվում է տեղեկույթի մշակման հետևյալ տրակտներում.

1. *հրամանատարական տրակտ՝*

– մարտական կառավարման հրամանների ձևավորում ու հաղորդում ենթակա օբյեկտներին,

– հրամանների ստացման հաստատումների ձևավորում ու հաղորդում վերադաս օբյեկտներին,

– մարտական կառավարման հրամանների կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ զեկույցների ձևավորում ու հաղորդում վերադաս օբյեկտներին,

– մարտական կազմի ու թվաքանակի, տեղաբաշխման, պատրաստության աստիճանի, օպերատիվ և օդային իրավիճակների, հակառակորդի մասին և այլ անհրաժեշտ տվյալներ պարունակող զեկույցների ձևավորում ու հաղորդում վերադաս օբյեկտներին,

– հրամանների, հրամանների հաստատումների ու զեկույցների հաղորդման և ստացման մասին տեղեկանքների ձևավորում,

– հրամանի էլեկտրոնային ստորագրում վերադաս օբյեկտի հրամանատարի կողմից,

2. *տեղեկատվական տրակտ*՝

– օպերատորի հարցմամբ՝ տարբեր տեղեկատվություններին վերաբերող տեղեկույթի ձևավորում և ստանդարտ տեղեկանքների տեսքով արտապատկերում,

– մարտական գործողությունների պլանների և այլ ելքային տեղեկույթի ձևավորում, մուտքագրում, ճշգրտում,

– մարտական պատրաստության մի վիճակից մյուսին համակարգի օբյեկտների տեղափոխման ուղղությամբ միջոցառումների պլանների ձևավորում, մուտքագրում, հաստատում, փոխանցում և անցման խնդրի կատարում ու վերահսկում,

– կիրառական խնդիրների լուծում էլեկտրոնային քարտեզների հենքի վրա,

– մարտական հերթապահության վերաբերյալ տեղեկույթի մուտքագրում, մշակում և արտապատկերում, այդ թվում նաև էլեկտրոնային քարտեզների հենքի վրա,

– մարտական առաջադրանքների և խնդիրների ձևավորում, մուտքագրում, հաստատում, փոխանցում ու կատարման գործընթացի վերահսկում,

– ՋՈՒ-ի ՍՌՏ ու ՌՏԳ դասակարգիչների ստեղծում, մուտքագրում և դրանցից օգտվելու մեխանիզմների ձևավորում,

– հակառակորդի մասին հետախուզական զեկույցների հաղորդում ու մշակում,

3. *փաստաթղթերի փոխանակման տրակտ*՝

– համակարգի օբյեկտների միջև զանազան ձևայնացված և չձևայնացված տեքստերի, ամփոփագրերի, որոշումների, հաշվեցուցակային զեկույցների փոխանակում,

4. *տեղեկույթի պաշտպանության տրակտ*՝

– օպերատորի անձի նույնականացում,

– համակարգի տեղեկույթին և գործառույթներին օպերատորների մուտքի թույլտվության սահմանում, բաշխում ու իրականացում,

– օբյեկտներում պահվող և փոխանակման համալիրի կապուղիներով փոխանցվող տեղեկույթի ծածկագրում ու վերծանում,

5. *տեղեկույթի գրանցման և փաստագրման տրակտ*՝

– օբյեկտում շրջանառող բոլոր հաղորդագրությունների, այդ թվում՝ օպերատորների հարցումների, նրանց չհրահանգավորված և սխալ գործողությունների, ինչպես նաև համակարգի գործառության խախտումների ու խափանումների փաստերի գրանցում՝ ժամանակագրական կարգով,

– գրանցված տեղեկույթի պահոցների ստեղծում ու վարում,

– տպվող տեղեկույթի փաստագրում ու համապատասխան քարտադարանների ստեղծում,

– համակարգում շրջանառող տեղեկույթի երկարատև պահոցների ստեղծում ու վարում:

Մշակված համակարգը, ավտոմատացման միջոցների համալիրների հետ մեկտեղ, ներդրված է բանակի հուսալի կառավարման համար բավարար թվով օբյեկտներում: Քանի որ համակարգը բարդ բազմագործառութային կառույց է, ապա նրա արդյունավետ օգտագործումը պահանջում է բոլոր մակարդակների հրամանատարների

կողմից նրա խորը և հանգամանալից ուսումնասիրում, այդ թվում՝ համակարգիչներով վարժ աշխատելու կարողություն:

Մոտ հեռանկարում անհրաժեշտ է համարվում դիտարկվող համակարգի հետևյալ հնարավորությունների զարգացումը.

1. հրամանատարական կետերից կառավարման համակարգի կատարելագործում,

2. խնդիրների համալիրի ավտոմատացված լուծման, ռազմական գործողությունների արդյունավետ ու հաջող վարման համար օպերացիաների մոդելավորման զարգացում,

3. կապի համակարգի կատարելագործում ու հետագա զարգացում, ինչը կապահովի ժամանակակից չափանիշներին համապատասխանող, մեծ արագագործությամբ ավտոմատացված կապը Զինված ուժերի տեղաբաշխման և հնարավոր ռազմական գործողությունների ամբողջ տարածքում,

4. քարտեզների հենքի վրա լուծվող խնդիրների ծավալների և շրջանի ընդլայնում,

5. ԿԱՀ-ի պաշտպանվածության, կենսունակության և հուսալիության բնութագրերի բարելավում և այլն:

Այսպիսով՝ Զինված ուժերում կառավարման ավտոմատացված համակարգի ճիշտ օգտագործումը, ներկա և ապագա պահանջներին համապատասխան նրա զարգացումն ու կատարելագործումը կնպաստեն ԶՈՒ-ի մարտունակության և գործունեության արդյունավետության մեծացմանը:

ЗНАЧЕНИЕ, СТРУКТУРА И КРАТКОЕ ОПИСАНИЕ РАБОТЫ АВТОМАТИЗИРОВАННОЙ СИСТЕМЫ УПРАВЛЕНИЯ ВС РА

Р. В. АТОЯН, академик НАН РА, Исполнительный директор ЗАО «Ереванский научно-исследовательский институт систем автоматического управления» (ЕрНИИСАУ), Ю. Г. МОСИКЯН, кандидат технических наук, заместитель по науке исполнительного директора ЕрНИИСАУ, Г. А. МЕЛИКЯН, кандидат технических наук, начальник отдела системного планирования ЕрНИИСАУ, В. Р. БАРСЕГЯН, начальник отдела разработки прикладного программного обеспечения ЕрНИИСАУ, Л. Г. МЕЛКУМЯН, начальник отдела разработки сетевого и прикладного программного обеспечения ЕрНИИСАУ

РЕЗЮМЕ

Автоматизированная система управления (АСУ) ВС РА предназначена для оперативного, надежного и засекреченного решения задач управления ВС как в мирное, так и военное время.

Логическая структура АСУ ВС содержит десять ступеней управления, для каждой из которых разработаны комплексы систем автоматизации в виде локальных вычислительных сетей, где количество рабочих мест может изменяться от нескольких десятков (Центральный командный пункт (КП) ГШ) до одного (командные пункты нижних уровней).

Основными функциями АСУ ВС являются: сбор, обработка и отображение информации об обстановке, состоянии личного состава, В и ВТ войск, а также данных, необходимых для планирования военных операций и учений, обеспечение управления ВС посредством надежной закодированной передачи приказов подчиненным объектам и получения соответствующих докладов от них. Кроме того, АСУ ВС также обеспечивает: защищенность информации, в том числе—передаваемой по каналам связи, оперативность обработки и передачи данных, сохранение живучести и работоспособности системы в различных аварийных ситуациях.

Управление АСУ ВС может осуществляться как централизованно, так и с КП отдельных войсковых соединений.

Решение функциональных прикладных задач АСУ ВС происходит в информационном и приказном трактах, а также в трактах обмена и регистрации документации, защиты информации и т. д.

Представляется необходимым в ближайшей перспективе усовершенствовать систему управления с КП, развить систему автоматизированного моделирования боевых действий, усовершенствовать систему связи, расширить круг задач, решаемых на картографической основе, повысить надежность, живучесть и защищенность АСУ.

THE SIGNIFICANCE, STRUCTURE AND CONCISE DESCRIPTION OF FUNCTIONING OF THE AUTOMATED CONTROL SYSTEM OF THE RA ARMED FORCES

R. V. ATOYAN, Full Member of the NAS RA, Executive Director of «Yerevan Automated Control Systems Scientific-Research Institute» (YerACSSRI), CJSC,
Y. G. MOSSIKYAN, Candidate of Technical Sciences, Deputy Executive Director on Science of the YerACSSRI, H. A. MELIKYAN, Candidate of Technical Sciences, Head of the Hardware Design Department of the YerACSSRI, V. R. BARSEGHYAN, Head of the Applied Software Development Department of the YerACSSRI, L. G. MELKUMYAN, Head of the Network and Applied Software Development Department of the YerACSSRI

SUMMARY

The Automated Control System (ACS) of the RA Armed Forces is intended for the operative, reliable and confidential solution to problems concerning the Armed Forces control, both in peace and wartime.

The logical structure of the Armed Forces ACS contains ten steps of controlling, and complexes of automation systems are elaborated for each of them in the form of local computer networks, where the quantity of workplaces can vary from several tens (the Central command post (CP) of the Main (General) Staff) up to one (command posts of the lower levels).

The basic functions of the Armed Forces ACS are: gathering, processing and display of the information on the situation, state of the personnel, Armament and Defense Technology of the troops, as well as the data necessary for planning mil-

itary operations and exercises, ensuring the Armed Forces control through a safe coded transfer of orders to subordinate objects and the reception of relevant reports from them. Besides, the Armed Forces ACS also ensures: information security, including the data transfered through communication channels, efficiency of data processing and transmission, preservation of the persistence and operability of the system in various emergency situations.

The Armed Forces ACS management can be carried out both in a centralized way, and from the Command Posts of separate army units.

The solution to functional applied tasks of the Armed Forces ACS takes place in the informative and order routes, and also in the routes of documents exchange and registration, information protection, etc.

In the nearest perspective it is necessary to improve the control system from the CP, develop the system of automated modelling of combat actions, improve communications system, extend the range of tasks, solved on the cartographic basis, increase reliability, persistence and security of the ACS.

ԵՐԵՎԱՆԻ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Գ. Թ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, «Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի գլխավոր տնօրեն

Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտը (ԵրՄՄԳՀԻ) ստեղծվել է 1956 թ.՝ ԽՄԿԿ ԿԿ և ԽՍՀՄ Նախարարների խորհրդի 1955 թ. նոյեմբերի 11-ի հմ. 897 որոշման և ԽՍՀՄ ավտոմատացման և սարքաշինության նախարարության 1956 թ. օգոստոսի 14-ի հմ. 129 հրամանի համաձայն:

Մինչև 1993 թ. ինստիտուտը կատարում էր գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներ (ԳՀՓԿԱ-ներ) հետևյալ ուղղություններով.

1. համապիտանի և հատուկ նախանշանակման էլեկտրոնային հաշվողական մեքենաների (ԷՀՄ) և ծրագրային ապահովման մշակում ու ներդրում արտադրության մեջ,

2. ԽՍՀՄ պաշտպանության նախարարության պատվերներով հատուկ նախանշանակման ապարատածրագրային համալիրների, կառավարման ավտոմատացված համակարգերի նախագծում՝ դառնալով ԽՍՀՄ-ում այդ բնագավառի գլխամասային ձեռնարկություն,

3. ԷՀՄ-ի օպերատիվ հիշողության սարքերի, սնուցման երկրորդային աղբյուրների և այլ սարքավորանքի մշակում ու արտադրության կազմակերպում:

Ինստիտուտում մշակված սարքերի, համալիրների փորձնական նմուշների և գլխամասային խմբաքանակի արտադրությունն ապահովելու համար 1960 թ. ստեղծվեց ինստիտուտին կից փորձարարական գործարան:

1992 թ. ԵրՄՄԳՀԻ-ի մի քանի ստորաբաժանումների հիմքի վրա ստեղծվեց Երևանի ավտոմատ կառավարման համակարգերի գիտահետազոտական ինստիտուտը (ներկայումս՝ «ԵրԱԿՀԳՀԻ» ՓԲԸ): Նույն թվականին ինստիտուտի փորձարարական գործարանը վերակազմավորվեց առանձին ձեռնարկության (ներկայումս՝ «ԵրՄՄԳ» ՓԲԸ): 2000 թ. ԵրՄՄԳՀԻ-ն վերակազմավորվեց փակ բաժնետիրական ընկերության: Հայաստանի Հանրապետության ու Ռուսաստանի Դաշնության կառավարությունների 2002 թ. հուլիսի 17-ի համաձայնագրի և 2002 թ. նոյեմբերի 5-ի արձանագրության համաձայն՝ «ԵրՄՄԳՀԻ» ՓԲԸ-ի բաժնետոմսերի 100 %-ը հանձնվեց Ռուսաստանի Դաշնությանը:

Ունենալով համապատասխան աշխատանքների կատարման բազմամյա փորձ՝ ինստիտուտը ձեռնամուխ եղավ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության պատվերների կատարմանը, մասնավորապես, նորոգվեցին, վերականգնվեցին և մարտական հերթափոխի դրվեցին հատուկ նախանշանակման կարևոր ռազմատեխնիկական համալիրներ:

Ներկայումս ձեռնարկությունն աշխատանքներ է կատարում ՀՀ պետպատվերով, ինչպես նաև տարբեր նախարարությունների, գերատեսչությունների և իրավաբանական անձանց, այդ թվում՝ արտասահմանյան կազմակերպությունների, պատվերներով: Կատարվող աշխատանքների ոլորտը բազմազան է և ընդգրկում է ինչպես հանրապետության պաշտպանունակության ու անվտանգության ապահովման, այնպես էլ էներգետիկայի, սոցիալական, բանկային և այլ ոլորտներ: Մշակումները ներառում են տեղեկատվական տեխնոլոգիաների գրեթե ամբողջ սպեկտրը: Ինստիտուտի աշխատանքներում լայնորեն կիրառվում են միկրոէլեկտրոնային նորագույն տարրեր, ժամանակակից օպերացիոն միջավայրեր, ծրագրավորման և նախագծման արդյունավետ գործիքային միջոցներ:

Աշխատանքների բարձր մակարդակով կատարմանը մեծապես նպաստում է այն հանգամանքը, որ ձեռնարկությունում գործում են մշակման, արտադրման և շահագործման ուղեկցման համար անհրաժեշտ բոլոր ծառայությունները:

Պաշտպանության նախարարության պատվերներով կատարվող աշխատանքները կազմում են ձեռնարկության գործունեության գերակշիռ մասը և վերահսկվում են զինվորական ներկայացուցչության կողմից: Այդ աշխատանքներն ընթանում են հետևյալ ուղղություններով.

–ռադիոտեխնիկական և ռադիոտեղորոշումային, հրետանու կրակի կառավարման համալիրների կառավարման ավտոմատացված համակարգերի մշակում,

–տիպային ավտոմատացման շարժական և ստացիոնար միջոցների մշակում,

–տեղեկատվական-վերլուծական համակարգերի մշակում,

–հատուկ նախանշանակման սարքերի ու սարքավորանքի մշակում և թողարկում,

–վարժասարքային համալիրների մշակում և թողարկում,

–համապատասխան ռազմական տեխնիկայի արդիականացում:

Այս ուղղություններով ստեղծված և ներդրված հատուկ միջոցներից հարկ է նշել հետևյալ համակարգերը.

–հատուկ նախանշանակման համակարգը, որն ապահովում է տարբեր աղբյուրներից ստացված տեղեկույթի մշակում, դասակարգում և տվյալների շտեմարաններում գրանցում,

–հրետանու կրակի կառավարման ավտոմատացված համալիրը, որը նախատեսված է հրետանային դիվիզիոնի հրամանատարաշտաբային մեքենայի արդիականացման համար՝ հեռակողային կապի ապահովման հնարավորությամբ,

–տեղեկույթի հավաքման և մշակման կառավարման ավտոմատացված համակարգը, որը կատարում է օդային օբյեկտների վերաբերյալ տարածայնորեն բաշխված տարբեր ռադիոտեղորոշումային կայաններից ստացվող տեղեկույթի երկրորդային և երրորդային մշակում, թիրախների հայտնաբերում և ընդհանրացված տեղեկույթի տրամադրում օգտագործողներին,


–ռադիոտեխնիկական կայանների արդիականացված համալիրը, որը նախատեսված է ինքնաթիռների կողային ռադիոտեղորոշումային կայանների հայտնաբերման համար, մշակվել է ժամանակակից տեխնիկական ու ծրագրային միջոցների


կիրառմամբ և զգալիորեն ընդլայնում է այդ կայանների հնարավորությունները,

–կառավարման ավտոմատացված համալիրները, որոնք ապահովում են եթերի անընդմեջ մշտազննում, ստացված տեղեկույթի ավտոմատ մշակում, գրանցում և դասակարգում,

–հաղորդակցային սարքավորանքի համալիրը, որը կազմված է տվյալների հաղորդման բազմակապուղի սարքից և էլեկտրոնային հաշվողական մեքենայից,

–կարճալիք տիրույթում աշխատող ռադիոհաղորդիչների հայտնաբերման և տեղորոշման կայանների արդիականացման համալիրը, որը մշակվել է ժամանա-





Տեղեկույթի ծածկագրային պաշտպանության ապարատածրագրային համալիրներ

կակից տեխնիկական և ծրագրային ապահովման միջոցների կիրառմամբ և զգալիորեն ընդլայնում է կայանների հնարավորությունները,

–տեղեկույթի ծածկագրային պաշտպանության ապարատածրագրային համալիրները, որոնք ապահովում են երաշխավորված կայունություն, հավաստագրված են և լայնորեն օգտագործվում են ՀՀ պետական կառույցներում,

–խոսակցային տեղեկույթի ծածկագրման ապարատների շարքը, որը նախատեսված է երկլար և քառալար կապի գծերով հեռախոսային ցանցերում փոխանակվող տեղեկույթի երաշխավորված պաշտպանության համար՝ բարձր որակի պարզորոշության ապահովմամբ,

–թվային ձայնագրման բազմակապուղի սարքը, որը նախատեսված է հեռախոսագծերից, ռադիո- և ռադիոռելեային կայանների ցածր հաճախականային ելքերից ստացվող ձայնային տեղեկույթի գրանցման համար՝ ապահովելով կապուղիների վիճակի և դրանց ակտիվության օբյեկտիվ վերահսկողությունը,

–վարժասարքային համալիրը, որը նախատեսված է հակատանկային հրթիռային համալիրների արձակման սարքերի օպերատորների պատրաստման համար,

–վարժասարքային համալիրը, որը նախատեսված է զենիթահրթիռային համալիրի հրաձիգների պատրաստման համար,


–վարժասարքային համալիրը, որը նախատեսված է հրաձգային զենքի հրաձիգների պատրաստման համար:

Կատարված աշխատանքները հնարավորություն են ընձեռել լուծելու մի շարք առաջնահերթ խնդիրներ, մասնավորապես՝ ինստիտուտում ստեղծելու ըստ ուղղությունների մասնագիտացված ինժեներատեխնիկական աշխատանքային խմբեր:

Միևնույն ժամանակ մշակվել են նաև մի շարք տեխնոլոգիական, սպասարկող, նմանարկիչ ծրագրեր ու սարքավորանք, որոնք անհրաժեշտ են աշխատանքների հետագա ծավալման համար: Բացի այդ, ընդհանրացվել և ձևավորվել են այն բոլոր խիստ կարևոր հիմնախնդիրները, որոնք բխում են ինչպես կուտակված փորձից, այնպես էլ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների և ռազմական տեխնիկայի զարգացման միտումներից:

Մշակվել է հեռանկարային ծրագիր՝ ուղղված այդ հիմնախնդիրների հետազոտմանը և նոր նախագծերի ստեղծմանը: Այն ներառում է հետևյալ ուղղությունները.





Խոսակցային տեղեկույթի ծածկագրման (ձախից)
և թվային ձայնագրման բազմակապուղի (աջից) սարքեր

1. հատուկ նախանշանակման համակարգերի մշակում ու ներդրում, տեխնիկական և համակարգային միջոցների ստեղծում ու կատարելագործում, այդ թվում՝ տվյալների շտեմարանների կառուցվածքային ընդլայնում, օգտագործողների աշխատանքը բարելավող նոր միջոցների ստեղծում, որոշումների ընդունմանն աջակցող փորձագիտական համակարգի մշակում,

2. ռազմական տեխնիկայի արդիականացում, այդ թվում՝ ալեհավաքային համակարգերում թվային մեթոդների և ազդանշանային պրոցեսորների կիրառմամբ զանազան ռադիոտեխնիկական միջոցների հնարավորությունների ընդլայնում,

3. տեղեկույթի պաշտպանության միջոցների զարգացում, այդ թվում՝ ավելի բարդ ալգորիթմների ու ծրագրային ապահովման մշակում, նոր տիպի ապարատա-ծրագրային սարքերի ստեղծում,

4. վարժասարքային համալիրների ստեղծում և կատարելագործում, այդ թվում՝ ինչպես կառուցվածքային առումով առանձին սարքերի և համալիրների, այնպես էլ գործող համալիրներում ներկառուցվող վարժասարքերի մշակում:

Այլ բնագավառներում կիրառվում են ինստիտուտում մշակված հետևյալ համակարգերը.

–ՀՀ Սոցիալական ապահովագրության հիմնադրամի պատվերով 1998 թ. մշակվել է կենսաթոշակների նշանակման և վճարման «Արաքս» համակարգը, որը գործում է կենտրոնական և բոլոր տարածքային ստորաբաժանումներում, հիմնադրամի պատվերով 2004 թ. մշակվել է նաև անհատական կենսաթոշակային ապահովագրության «Պառնաս» համակարգը,

–1999 թ. մշակվել է անապահովության գնահատման և ընտանեկան նպաստների բաշխման «Փարոս» համակարգը,

–Պետական առողջապահական գործակալության պատվերով 2001 թ. մշակվել և ներդրվել է առողջապահական հիմնարկների տվյալների մշակման և վերլուծության «Միդաս» համակարգը,

–2004 թ. արդարադատության նախարարության պատվերով մշակվել և ներդրվել է Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժինների գործունեությունը կարգավորող տեղեկատվական համակարգը,



Զենիթահրթիռային համակարգի արձակման կայանքի
օպերատորների վարժասարք

–2004–2007 թթ. նախաձեռնության կարգով ստեղծվել է կույրերի հայերեն լեզվով հաղորդակցման «Արև» տեղեկատվական համակարգը, որը մշակվել է «Հայակն» համադրիչի և ինքնատիպ համակարգչային տեխնոլոգիայի կիրառմամբ: Նրա շնորհիվ տեղեկութային հաղորդակցման հնարավորություն են ստացել շուրջ 400 կույրեր: Համակարգը, լինելով ինքնուսուցվող, մի շարք ցուցանիշներով գերազանցում է այսօր գոյություն ունեցող նմանատիպ համակարգերը,

–Հայաստանի Հանրապետության ոստիկանության պատվերով 2006 թ. ստեղծվել է Հայաստանի բնակչության պետական ռեգիստրի համակարգը, իսկ 2007 թ. մշակվել է ընտրողների ռեգիստրը, որն ապահովում է ընտրատարածքներում ընտրացուցակների ճշգրտությունը, իսկ 2006–2007 թթ. ընթացքում նաև համակարգչավորվել են Հայաստանի ոստիկանության տարածքային կենտրոնները և միավորվել են տվյալների տեղեկութային բազաները՝ կազմելով մեկ միասնական համակարգ,

–նախաձեռնության կարգով մշակվել և պիլոտային ծրագրի սահմաններում ներդրվել է էլեկտրաէներգիայի (0,4 կՎ-ից ցածր լարման) հաշվառման, վերահսկման

ու կառավարման տեղեկատվական չափողական համակարգը, որը կարող է կիրառվել նաև գազի ու ջրի ծախսի հաշվառման ավտոմատացման համար,

–մշակվել, պատրաստվել և ներդրվել է բանկային գործառույթների կատարման էլեկտրոնային տվյալների իսկությունն ու հավաստիությունն ապահովող էլեկտրոնային թվային ստորագրության ապարատածրագրային միջոցների համալիրը:

Ձեռնարկության զարգացման ճանապարհին ձեռք բերված հաջողությունների հետ մեկտեղ կան որոշակի դժվարություններ և պրոբլեմներ, որոնք վերաբերում են ընկերության գործունեության տարբեր կողմերին՝ կազմակերպական, գիտատեխնիկական, ֆինանսատնտեսական, կադրային և այլն: Կարևորվում է ձեռնարկության սերնդափոխության՝ երիտասարդ մասնագետների պատրաստման, որակավորման և ինստիտուտի թեմատիկ աշխատանքներում ներգրավման խնդիրը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ՊՆ պատվերներով աշխատող բոլոր կազմակերպությունների համար կարևոր հատկանշական պրոբլեմներից են՝

–մասնագիտական բարձր որակավորում ունեցող կադրերով պատշաճ մակարդակի համալրվածության ապահովումը,

–ժամանակակից տեխնիկական, տեխնոլոգիական ու գործիքային անհրաժեշտ միջոցներով ապահովումը:

Նշված պրոբլեմների լուծման համար առաջարկվում է.

1. պլանավորել աշխատանքները հեռանկարային ծրագրերի շրջանակներում. հեռանկարային ծրագրերից բխող երկարաժամկետ պայմանագրերը կարող են զգալիորեն կրճատել մասնագետների հոսունությունը,

2. պլանավորել պայմանագրային գները՝ հաշվի առնելով նման աշխատանքների համաշխարհային գները,

3. ամեն տարի տրամադրել նպատակային տեղեր՝ ասպիրանտուրայում ուսուցման համար,

4. ստեղծել ռազմագիտական ու ռազմատեխնիկական ուղեկցման հաստատություն, որի խնդիրները պետք է լինեն՝

–գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների կատարման հիմնավորումը, խնդիրների առաջադրումը,

–կիրառման, ներդրման ոլորտների նախանշումը,

–համատեղելիության ապահովումը,

–մարտավարատեխնիկական հիմնական բնութագրերի առաջադրումը,

–մշակման գործընթացի ուղեկցումը,

5. մշակել և ներդրել ձեռնարկությունների ատեստավորման մեխանիզմ՝ սպառազինության ու ռազմական տեխնիկայի նախագծման, արտադրության և նորոգման աշխատանքներ կատարելու թույլտվություն (լիցենզիա) ձևակերպելու նպատակով,

6. լիցենզավորման միջոցով կազմավորել ռազմաարդյունաբերության ոլորտում աշխատող ձեռնարկությունների շրջանը, ստեղծել ՌԱՀ-ի ձեռնարկությունների գործունեությունը համակարգող կառույց:

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ РАБОТ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ЕРЕВАНСКОГО НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО ИНСТИТУТА МАТЕМАТИЧЕСКИХ МАШИН

Г. Т. ОГАНЕСЯН, Генеральный директор ЗАО «Ереванский научно-исследовательский институт математических машин»

РЕЗЮМЕ

ЗАО «Ереванский научно-исследовательский институт математических машин» (ЕрНИИММ), пакет акций которого передан РФ, имеет все необходимые службы для разработки, производства и авторского сопровождения продукции. Большая часть работ выполняется по заказу МО РА и контролируется ее военным представительством. Эти работы ведутся в следующих основных направлениях:

—разработка автоматизированных систем специального назначения,

—разработка информационно-аналитических систем,

—разработка и выпуск спецтехники,

—разработка и производство тренажеров,

—модернизация военной техники,

—разработка передвижных и стационарных средств автоматизации.

Кроме военных разработок, ЕрНИИММ в последние годы выполнял также заказы государственных и общественных организаций и частных лиц, в том числе—зарубежных.

Для успешного развития ЕрНИИММ и отрасли в целом необходимо осуществление ряда мероприятий, в том числе:

—планирование работ в рамках долгосрочных программ,

—обеспечение подготовки профессиональных кадров высокой квалификации,

—создание института военно-научного и военно-технического сопровождения,

—разработка и внедрение механизмов аттестации предприятий, выполняющих военные заказы,

—определение состава предприятий ВПК и создание структуры, координирующей их деятельность.

THE PRINCIPAL DIRECTIONS OF ACTIVITIES AND DEVELOPMENT PERSPECTIVES OF THE YEREVAN COMPUTER RESEARCH AND DEVELOPMENT INSTITUTE

G. T. HOVHANNISSYAN, General Director of «Yerevan Computer Research and Development Institute», CJSC

SUMMARY

The «Yerevan Computer Research and Development Institute» (YCRDI), CJSC, the share portfolio of which has been submitted to the RF, has all the necessary services for the elaboration, production and author's output guiding. The greater part of activities is carried out to the MoD, RA order and is under the control of its military representation. These activities are conducted in the following principal directions:

—elaboration of automated systems of special purpose,

—elaboration of information-analytical systems,

—elaboration and output of special technical equipment,

—elaboration and production of simulators,

—modernization of defense technology,

—elaboration of mobile and stationary means of automation.

Apart from the elaborations in the military sphere, in recent years the YCRDI has been also executing orders of state and non-governmental organizations and private persons, including those from abroad.

For the successful development of the YCRDI and the sphere on the whole it is necessary to put into practice a number of measures, including:

—scheduling the activities in the framework of long-term programs,

—ensuring the training of highly skilled professionals,

—establishing an institution of defense-related scientific and technical guiding,

—elaborating and introducing mechanisms reviewing the enterprises which fulfill military orders,

—determining the composition of enterprises of the Military-Industrial Complex and setting up a structure coordinating their activities.

ՀՀ ԶՈՒ-Ի ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ ԶՐԱՀԱՏԵԽՆԻԿԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Զ. Մ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ, փոխգնդապետ, ՀՀ ՊՆ սպառազինության վարչության զրահատրանսպորտային ծառայության պետի տեղակալ, Ժ. Հ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ, մայոր, ՀՀ ՊՆ միջազգային ռազմական համագործակցության և պաշտպանական ծրագրերի վարչության ավագ սպա, Հ. Հ. ԿՈՍՏԱՆՅԱՆ, կապիտան, ՀՀ ՊՆ ռազմաարդյունաբերական վարչության բաժնի ավագ սպա, Ռ. Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ, տեխնիկական գիտությունների թեկնածու, «65 ռազմական գործարան» ՓԲԸ-ի տնօրեն, Ա. Ա. ԳՅՈՒՋՅԱՆ, «Չարենցավանի հասպրոցաշինական գործարան» ԲԲԸ-ի տեխնիկական ծառայության պետ

Ներկայումս ՀՀ ԶՈՒ-ի սպառազինության մեջ գտնվող զրահատեխնիկան (ԶՏ) մշակվել է ԽՍՀՄ-ում դեռ 1960-1970-ական թվականներին և նախատեսված է եղել սառը պատերազմի տարիներին լայնածավալ ռազմական գործողությունների վարման համար, հիմնականում՝ եվրոպական հարթավայրային թատերաբեմում: Սակայն վերջին ժամանակների տեղային պատերազմների փորձի հաշվառմամբ ճշգրտումներ են մտցվել ԶՏ մարտական կիրառման գործում, հատկապես՝ լեռնաանտառային տեղանքում և բնակավայրերում:

Ելնելով լայնամասշտաբ պատերազմների բռնկման քիչ հավանականությունից՝ բազմաթիվ երկրներ իրենց ԶՏ-ն հարմարեցնում են տեղային պատերազմներում կիրառելու համար: Բացառություն չէ նաև Հայաստանի Հանրապետությունը, որի համար ևս կա հնարավոր տեղային պատերազմի նախապատրաստման խնդիր: Այդ խնդրի լուծման համար պահանջվում է կա՛մ զանգվածային վերազինում, ինչը կապված է հսկայական ֆինանսական ծախսերի հետ, կա՛մ առկա ԶՏ արդիականացում՝ մարտավարատեխնիկական բնութագրերի բարելավմամբ և այդ գործընթացներում հայրենական ձեռնարկությունների հնարավորինս լայն ընդգրկմամբ:

Ավանդաբար ԶՏ հիմնական մարտական հատկանիշներ են համարվում կրակային հզորությունը, պաշտպանվածությունը և տարաշարժունությունը:

Կրակային հզորությունը ԶՏ կարողությունն է ուղիղ նշանառության կրակով ոչնչացնելու հակառակորդի դիմակայող միջոցները: Տեխնիկական տեսանկյունից կրակային հզորությունը հիմնականում բնորոշվում է ԶՏ-ի վրա տեղակայված սպառազինության և այն սպասարկող համակարգերի որակով ու քանակով: Այս ոլորտում արդիականացման աշխատանքները պետք է ուղղված լինեն սպառազինության, զինամթերքի, կրակի կառավարման համակարգերի կատարելագործմանը, ինչպես նաև դիտարկման ու նշանառման պայմանների բարելավմանը:

Պաշտպանվածությունը ԶՏ կարողությունն է հակառակորդի կրակի (հարվածների) տակ պահպանելու մարտունակությունը, այսինքն՝ դիմակայելու խոցման միջոցների ներգործությանը, ինչը ԶՏ միջոցի անձնակազմին հնարավորություն կտա

կատարելու իր մարտական առաջադրանքները: Ներկայումս պաշտպանվածության ապահովման խնդիրը վճռորոշ է դարձել բոլոր տեսակի ՍՌՏ-ների համար: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջին տարիներին զրահապատ օբյեկտների խոցման միջոցները դարձել են բազմազան, կտրուկ աճել են նրանց քանակն ու արդյունավետությունը: ԶՏ-ի դեմ պայքարում կարող են օգտագործվել ոչ միայն հատուկ հակատանկային զենքեր, այլև ընդհանուր նախանշանակման միջոցներ (ավիացիա, հրետանի, ականներ և այլն), որոնք ստացել են ընդգծված զրահահար ուղղվածություն: Այդ պատճառով պաշտպանվածության աստիճանի բարձրացման խնդրի լուծումը որոշակի իմաստով կանխորոշում է ՍՌՏ զարգացման ուղղությունը:

ԶՏ արդիականացման գործում առաջնահերթ խնդիրներից է *դարաշարժունության* ապահովումը, առաջին հերթին՝ մեքենաների դինամիկական հատկությունների բարելավումը և երթային արագության մեծացումը: Պահանջվում են մեծ հզորությամբ շարժիչներ, որոնք ունենան լավ շահագործումային հատկություններ, ապահովեն վառելիքի նվազ տեսակարար ծախս և առանց լրալցավորման մեծ վազք: Ընդ որում, ուժակայանքը պետք է մեքենայում հնարավորինս քիչ տեղ զբաղեցնի: Նշված խնդիրների լուծման պարտադիր նախապայման է ԶՏ-ի մեջ ներկայումս օգտագործվող կարբյուրատորային շարժիչների փոխարինումը դիզելային շարժիչներով:

Այժմ դիտարկենք ՀՀ ԶՈՒ-ի սպառազինության մեջ գտնվող ԶՏ առանձին նմուշների արդիականացման ուղիները վերը նշված մարտական հատկությունների լավացման տեսանկյունից:

Հետևակի մարտական մեքենաներ ԲՄՊ-1, ԲՄՊ-2

Խորհրդային ԲՄՊ-1 և ԲՄՊ-2 մեքենաները մշակվել էին միջուկային զենքի կիրառման պայմաններում մոտոհրաձգային ստորաբաժանումների գործողությունների վարման անհրաժեշտության հաշվառմամբ, ընդսմին կարևոր նշանակություն էր տրվել ջրային արգելքների հաղթահարման պահանջներին: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր աշխարհագրական տեղանքում մեծ ջրային արգելքներ չկան, առավել օպտիմալ է համարվել ջրային արգելքների հաղթահարման ունակությունը պահպանել միայն հետախուզական մեքենաների համար: Դա հնարավորություն կտա ՀՄՄ-ում ապահովելու լրացուցիչ ազատ տեղ:

Ժամանակակից ավանդական ՀՄՄ-ն ունի մի շարք թերություններ, որոնցից առավել էական է ոչ բավարար զրահապաշտպանությունը: ՀՄՄ-ն խոցելի է ոչ միայն ժամանակակից հակատանկային միջոցների ու հիմնական մարտական տանկերի, այլև ուրիշ ՀՄՄ-ների կրակի համար: Զարմանալի չէ, որ ինչպես խորհրդային, այնպես էլ արտասահմանյան ՀՄՄ-ները կիրառելի չեղան ժամանակակից տեղային զինված հակամարտություններում:

Պաշտպանվածությունը կարող է բարելավվել լրացուցիչ զրահապաշտպանիչ միջոցների կիրառմամբ: Մասնավորապես՝ իրանի կողային մասի և աշտարակի խելային (հետևի) մասի վրա տեղադրվում են լրացուցիչ զրահաէկրաններ, որոնք մեքենայի կողային պրոյեկցիան պաշտպանում են 12,7 մմ տրամաչափի զրահահար գնդակից՝ 150 մ հեռավորությունից ցանկացած անկյան տակ գնդակոծման դեպքում,

իսկ հակաականային պաշտպանությունը ուժեղացվում է շարժիչափոխհաղորդային և կառավարման հատվածամասերի հատակները հակաականային տակնոցներով պաշտպանելու միջոցով: Պաշտպանվածության աստիճանի բարձրացմանը կարող է զգալիորեն նպաստել նաև հրդեհի մարման համակարգի տեղակայումը:

Կրակային հզորությունը: Կրակային միջոցների հարցը անկասկած առավել վիճահարույց հարցերից է, որը կապված է նրա հիմնական գործառույթների հետ: Քանի որ մարտադաշտում ՀՄՄ հիմնական խնդիրներն են հետևակի համար ծառայել որպես պաշտպանված տրանսպորտային, ինչպես նաև կրակային աջակցության միջոց, ՀՄՄ սպառազինությունից պահանջվող կարևորագույն գործառույթներն են.

–թաքստոցներից (ապաստարաններից) դուրս կամ ոչ զրահապատ թաքստոցներում (ապաստարաններում) գտնվող հակառակորդի հետևակի կամ հակատանկային միջոցների կրակի ճնշումը,

–ամրացված թաքստոցներում (ապաստարաններում) և խրամատներում գտնվող հակառակորդի հետևակի կամ հակատանկային միջոցների կրակի ճնշումը,

–հակառակորդի ոչ զրահապատ տրանսպորտային միջոցների ու թեթև զրահապատ մեքենաների խոցումը կամ կրակի ճնշումը,

–ինքնապաշտպանությունը տանկերի կրակից:

Նշված խնդիրների առավել արդյունավետ լուծում կարող է լինել արագաձիգ հրանոթի, նրա հետ զույգված գնդացրի, հակատանկային կառավարվող հրթիռային համալիրի (ՀՏԿՀ) և ավտոմատ նռնականետի համակցումը:

Տարաշարժունությունը: ՀՄՄ պաշտպանվածության և կրակային հզորության բարելավումը բնականաբար կհանգեցնի տարաշարժունության նվազմանը, ինչը հնարավոր է հաղթահարել ընթացամասի արդիականացմամբ և ավելի հզոր շարժիչի տեղակայմամբ:

Ներկայումս ԲՄՊ-1 և ԲՄՊ-2 զրահամեքենաների արդիականացման համար միջազգային շուկայում առաջարկվում են մի շարք տարբերակներ:

Մասնավորապես՝ *ԲՄՊ-1-ն արդիականացնելու* համար հնարավոր է երկու տարբերակ.

առաջին՝

–ԱԳ-17 ավտոմատ նռնականետի տեղակայում,

–9Մ133Մ «Կոնկուրս» ՀՏԿՀ տեղակայում,

–ԲՄՊ-2 մեքենայի թրթուրի և քարշանիվների տեղադրում,

երկրորդ՝

–ԲՄՊ-2 մեքենայի մարտական հատվածամասի տեղադրում,

–ԲՄՊ-2 մեքենայի թրթուրի և քարշանիվների տեղադրում,

–ընթացամասի արդիականացում:

ԲՄՊ-2-ն արդիականացնելու համար առաջարկվում է՝

–ԱԳ-17 ավտոմատ նռնականետի տեղակայում,

–նշանառուի՝ լազերային լուսավորիչով ԲՊԿ-3-42 երկօկուլյար շրջադիտակա-

յին համակցված ճշանոցի (ԵՇՀՆ) կամ ջերմադիտման մոդուլով ԲՊԿ-Մ ճշանոցի տեղակայում,

–հրամանատարի դիտման՝ լազերային ակտիվ-իմպուլսային լուսավորմամբ ՏԿՆ-ԱԻ տանկային համակցված գիշերային սարքի (ՏՀԳՍ) տեղակայում,

–մեխանիկ-վարորդի համապիտանի ՊՄՎ սարքի տեղակայում,

–լրացուցիչ սպառազինության կրակի կառավարման համակարգի արդիականացում,

–360 ձիաուժ հզորությամբ ՈՒՏԴ-23 շարժիչի տեղադրում,

–ընթացամասի արդիականացում,

–լրացուցիչ զրահապաշտպանության տեղադրում՝ վերը նշված տարբերակով:

Նկատի ունենալով ԲՄՊ-1 և ԲՄՊ-2 մարտական մեքենաների արդիականացման անհրաժեշտությունը՝ նպատակահարմար է օգտվել «Կուրգանմաշզավոդ» ԲԲԸ-ի՝ որպես ՀՄՄ-ներ արտադրողի կողմից առաջարկվող լուծումների փաթեթից: Դա հնարավորություն կտա խուսափելու մեքենաների արդիականացման հետ կապված հավելյալ ծախսերից: Համալիր արդիականացումից հետո ինչպես ԲՄՊ-1, այնպես էլ ԲՄՊ-2 մեքենաների արդյունավետության և հուսալիության աստիճանը ստանդարտ մեքենաների համեմատությամբ զգալիորեն կբարձրանա: Արդիականացված ՀՄՄ-ն լիովին կհամապատասխանի թեթև զրահապատ մեքենաներին ներկայացվող ժամանակակից պահանջներին և դեռ երկար ժամանակ կկիրառվի բանակում: Կրակային հզորության, պաշտպանվածության և տարաշարժունության զգալի բարելավումը հնարավորություն կտա մարտադաշտում ձեռք բերելու հակառակորդի նկատմամբ որոշակի առավելություն:

ՍԱՈՒ-57Մ ինքնագնաց հրետանային կայանք

ՍԱՈՒ-57Մ ինքնագնաց հրետանային կայանքը կազմված է արդիականացված Ս-60 զենիթային հրանոթից, որը տեղադրված է ՄՏԼԲ քարշակ-փոխադրիչի վրա:

Կայանքը նախատեսված է մոտոհրաձգային ստորաբաժանումների կազմում օգտագործման, կենդանի ուժի, պաշտպանական կառույցների, հրետանային և ականանետային մարտկոցների ոչնչացման, զրահատեխնիկայի գրոհների հետմղման, հարձակման ժամանակ կրակային աջակցության և ցածրաթիռ օբյեկտների խոցման համար:

Կայանքը կարող է կրակ վարել ինչպես սարքավորված դիրքերից, այնպես էլ ընթացքից: Կայանքն ունի մինչև 60 արկ մարտալրակազմ և կարող է վարել միակի ու ավտոմատ կրակ:

Կայանքի հաշվարկը կազմված է 4 մարդուց՝ հրամանատար, ճշանառու-հրաձիգ, լիցքավորող և մեխանիկ-վարորդ: Կայանքն ունի բարձր տարաշարժունություն և մինչև 6 կմ հեռահարությամբ ավտոմատ կրակի վարման հնարավորություն:

57 մմ տրամաչափի հրանոթը տեղադրված է ՄՏԼԲ հարթակի վրա և ունի 360^{o} պտտվելու հնարավորություն, իսկ ուղղահայաց ճշանառության անկյունը $-2 +87^{o}$ է: Հրանոթը ձևափոխված է մեկ մարդու կողմից կրակը կառավարելու համար (ճշանառություն, թեքում, փողի բարձրացում և կրակ):

Մարտալրակազմը տեղադրվում է ՄՏԼԲ-ի բեռնային հատվածամասում. կրակի վարման ժամանակ արկերով պահունակները տեղադրվում են հատուկ հարմարեցված սեղանին, որտեղից լիցքավորողը դրանցով մատակարարում է հրանոթի ընդունիչը: Քարշակի բեռնային հատվածամասում տեղադրվում են դարակաշար՝ մարտալրակազմի տեղադրման համար և նստոցներ՝ հաշվարկի համար: Արկերով տուփերն ամրակներով ամրացվում են դարակաշարերին:

Ցամաքային և օդային նշանակետերին նշանառությունը կատարվում է համապատասխան օպտիկական սարքերի միջոցով:

ՍԱՈՒ-57-ը սարքավորված է արտաքին և ներքին կապի միջոցներով:

ԲՏՌ-60, ԲՏՌ-60 ՊՔ, ԲՏՌ-70 զրահափոխադրիչներ

Խորհրդային Միության փլուզումից հետո ՀՀ Զինված ուժերին բաժին հասած ԲՏՌ-60 և ԲՏՌ-70 զրահափոխադրիչները մշակվել են 1960-ական թվականներին և,



ԲՏՌ-70 զրահափոխադրիչ

ինչպես ՀՄՄ պարագայում, նախատեսված են եղել Եվրոպայում լայնամասշտաբ պատերազմական գործողություններ վարելու համար: Այս մեքենաների հիմնական թերություններն են ցածր տարաշարժունությունն ու կրակային հզորությունը: Երկու կարբյուրատորային շարժիչների կիրառումը հանգեցնում է բենզինի գերածախսի և, դրա հետ կապված, առանց լրալցավորման ընթացապաշարի նվազման: Բացի այդ, պտտող մոմենտի փոքրության պատճառով նվազում է մեքենաների անցունակությունը բարդ ճանապարհային պայմաններում: Ջրային արգելքների հաղթահարման սարքավորանքի առկայությունը ևս կարևոր գործոն չէ, քանի որ, ինչպես վերը նշվեց, ամենևին էլ անհրաժեշտ չէ ՀՀ և սահմանակից երկրներում կիրառելու դեպքում: Նշված սարքավորանքից հրաժարումը հնարավորություն կտա մեքենայում լրացուցիչ տեղ ազատելու և կհեշտացնի դիզելային շարժիչի տեղադրումը:

Նախքան կրակային հզորության հարցը քննարկելը պետք է հասկանալ ԶՓԴ-ների կիրառման հայեցակարգը: Գոյություն ունեն ԶՓԴ-ների մարտական կիրառման նկատմամբ երկու տարբեր մոտեցումներ: ՆԱՏՕ-ի երկրների մոտեցմամբ՝ ԶՓԴ-ն նախատեսված է բացառապես հետևակային ջոկի անձնակազմը ծավալման

շրջաններ (գրոհի բնագծեր) զրահի պաշտպանությամբ տեղափոխելու համար, բայց նախատեսված չէ այլ մարտական զրահամեքենաների հետ մարտի մեջ մտնելու համար, ուստի և նրա սպառազինությունը սահմանափակվում է ծանր գնդացիրներով և (կամ) ավտոմատ նռնականետներով: Մինչդեռ համաձայն նախկին ԽՍՀՄ-ում և ներկայիս ՌԴ-ում ձևավորված հայեցակարգի՝ ԶՓԴ-ները կարող են ոչ միայն հրաձգային ստորաբաժանումներ (դեսանտ) փոխադրել, այլև, ի հաշիվ հզոր սպառազինության, ապահովել մարտական արդյունավետ կրակային աջակցություն հետևակին: Վերլուծելով տեղային պատերազմների փորձը, ԶՓԴ-ների մարտական հնարավորությունները և դրանք համադրելով ՀՀ ու սահմանակից երկրների տեղանքի առանձնահատկությունների հետ՝ հանգում ենք այն եզրակացության, որ ՀՀ ԶՈՒ-ում ԶՓԴ-ներն ավելի հաճախ կարող են կիրառվել որպես կրակային աջակցության միջոց, քան իրենց առաջնային դերում (անձնակազմ տեղափոխել): Դրանով է, մասնավորապես, բացատրվում այն փաստը, որ, օրինակ, 1-ին և 2-րդ չեչենական պատերազմներում դաշնային հետևակայինները գերադասում էին հարձակման (երթերի) ժամանակ գտնվել ոչ թե ԶՓԴ-ների ներսում, այլ դրանց զրահի վրա: ԶՓԴ-ն անձնակազմին իջեցնելուց հետո, օգտագործելով տեղանքի քողարկիչ հնարավորությունները, հարմար դիրք էր զբաղեցնում և կրակային աջակցություն ցուցաբերում գրոհող հետևակին՝ միաժամանակ մնալով ձեռքի հակատանկային զենքերի հեռահարության սահմաններից դուրս: Պաշտպանությունում ԶՓԴ-ն նույնպես կարող է շատ կարևոր դեր խաղալ՝ նպաստելով պաշտպանության կայունությանը և ծառայելով որպես շարժունակ ռեզերվ: Այս ամենը ավելի արդիական է դառնում մեր պայմաններում, քանի որ տեղանքի անհարթությունների հետևանքով կտրուկ նվազում է ՀՏԿՀ-ների և տանկային հրանոթների արդյունավետ հեռահարությունը:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ԶՓԴ-ների կրակային հզորության բարելավումը արդիականացման ամենաավճռորոշ նախապայմաններից է, քանի որ ներկայումս ԲՏՌ-60-ում և ԲՏՌ-70-ում տեղակայված Վլադիմիրովի և Տիխոմիրովի մեծ տրամաչափի գնդացիրները չեն կարող խոցել ՀՄՄ-ների ճակատային զրահը և իրենց թույլ բեկորաֆուգասային գործողության հետևանքով սակավ արդյունավետ են:

ԲՏՌ-60ՊԲ զրահափոխադրիչի արդիականացման ժամանակ կատարվել են հետևյալ աշխատանքները՝

– 180 ձիաուժ հզորությամբ երկու բենզինային շարժիչներից կազմված հին հաստիքային ուժակայանքը փոխարինվել է 260 ձիաուժ հզորությամբ ԿԱՄԱԶ-7403 դիզելային շարժիչով,

– երկու բաշխիչ և երկու փոխանցման տուփերի փոխարեն տեղադրվել է մեկ բազմաֆունկցիոնալ փոխանցման տուփ, որը հնարավորություն է տալիս ստանալու համապատասխան քարշային ճիգեր քարշանիվների և ջրանետ շարժասարքի վրա, ինչպես նաև պտտող մոմենտ հաղորդող քարշակման կարապիկին (լեբյոդկա),

– արգելակման համակարգում հին մեքենայի մեկկոնտուրանի սխեմայի փոխարեն կիրառվել է երկկոնտուրանի սխեմա: Կոնտուրները աշխատում են միաժամա-

նակ, սակայն մեկ կոնտուրի խափանման դեպքում երկրորդը հուսալիորեն արգելակելու հնարավորություն է տալիս,

–ի տարբերություն հին մեքենայից, արդիականացված մեքենայում տեղադրված է հակահետգլորման սարք, որը նախատեսված է 30^{o} զառիվերից մեքենան ցած գլորումից պահպանելու, ինչպես նաև մեքենան տեղից առաջ շարժելու նպատակով վարորդի գործողությունների պարզեցման համար:

Արդիականացման շնորհիվ ստացվել է մի մեքենա, որն իր տեխնիկական բնութագրերով զգալիորեն գերազանցում է ԲՏՌ-60ՊԲ-ը:

ԲՏՌ-70-23Մ զրահափոխադրիչը արդիականացված է այն նույն սկզբունքով, որը կիրառվել է ԲՌԴՄ-2-23Մ զրահապատ հետախուզադետքային մեքենայի համար:

ՋՓԴ-ի միակ մարտական հատկությունը, որի բարելավումը կապված է լուրջ դժվարությունների հետ, նրա պաշտպանվածությունն է: Դժվարությունները պայմանավորված են մեքենայի քաշի ավելացմամբ: Օրինակ՝ ԲՏՌ-80 զրահափոխադրիչի պաշտպանվածության մեծացումը թվում է անհնարին, քանի որ նա այնքան ծանր է իր նախատիպից՝ ԲՏՌ-60Պ-ից (համապատասխանաբար՝ 13,6 և 9,8 տ), որ հեշտությամբ խրվում է փափուկ բնահողերի մեջ: ՈՒստի հիմնականում պետք է ուշադրություն դարձվի հրդեհի մարման սարքավորանքի տեղադրման և հրաձգային զենքերի կրակից ու հակահետևակային ականների պայթյունից անիվների պաշտպանության ապահովման հարցին:

Այժմ դիտարկենք ԲՏՌ-60 և ԲՏՌ-70 զրահափոխադրիչների համալիր արդիականացման հեռանկարները:

Տարաշարժունություն: Ռազմական տեխնիկայի համար բենզինային շարժիչի նկատմամբ դիզելային շարժիչի առավելությունները ակնհայտ են և բոլորին հայտնի: Մեծ հզորության և շահագործման պարզության հետ մեկտեղ դրանք մարտում հրդեհա- և պայթյունաանվտանգ են: Բացի այդ, դիզելային ուժակայանքի կիրառման դեպքում մեքենայի՝ առանց լրալցավորման վազքը 500 կմ-ից աճում է մինչև 800 կմ, բարելավվում են քարշային բնութագրերը փափուկ բնահողերի, լեռնային ճանապարհների վրա և խիստ կտրտված տեղանքում: Տարբեր երկրներում կատարվել են արդիականացման մի շարք աշխատանքներ՝ ուղղված երկու բենզինային շարժիչների փոխարինմանը մեկ դիզելային շարժիչով: Մասնավորապես՝ «Խարկովի մեքենաշինական կոնստրուկտորական բյուրոն» (ԽՄԿԲ) արդիականացրել է ԲՏՌ-70-ը՝ տեղակայելով 6 գլանանոց ՈՒՏԴ-20 շարժիչ: Վառելիքի ծախսի զգալի նվազման հետ մեկտեղ աճել են մեքենայի հզորությունը (230 ձիաուժից հասնելով 300-ի), շարժիչի տեսակարար հզորությունը (20 ձիաուժ/տ-ից՝ 23-ի), առավելագույն պտտող մոմենտը (58 կգ ուժ/մ-ից՝ 100-ի) և ընթացապաշարը (400 (560) կմ-ից՝ 600 (840)-ի), նվազել է վառելիքի տեսակարար ծախսը (252 գ/ձիաուժ•ժամ-ից՝ 175-ի): Միևնույն ժամանակ մեքենայի լրիվ զանգվածը 11,5 տ-ից հասել է 13-ի: Արդիականացված մեքենան անցել է պետական փորձարկումներ, և ՈՒկրաինայի ՊՆ-ի նորոգման գործարաններից մեկում կսկսվի նրա սերիական արտադրությունը:

Արդիականացման իր տարբերակն է առաջարկում ռուսաստանյան ավտոմոբի-

լային «Տեխնոսերվիս» ձեռնարկությունը, որը 90 ձիաուժ հզորությամբ երկու բենզինային շարժիչների փոխարեն տեղադրում է մեկ 180 ձիաուժ հզորությամբ ՅաՄՉ-236Դ շարժիչ: Նոր դիզելային շարժիչի տեղակայման ժամանակ ձեռնարկությունն ստիպված է եղել լուծելու ՋՓԴ-ի վրա դրա տեղադրման հետ կապված պրոբլեմները. ՅաՄՉ-236 ուժակայանքն ավելի բարձր է, քան բենզինային շարժիչները: Նոր շարժիչի տեղակայման համար փոփոխության է ենթարկվել շարժիչային հատվածամասի բացովի կափարիչը: Վերջինս սարքավորված է օդափոխանակման մեխանիզմով, որը փոխառված է ԲՏՌ-80-ից: Տեղադրված է նաև լրացուցիչ բաշխիչ տուփ (ԼԲՏ), որը շարժիչի պտտող մոմենտը վերաբաշխում է երկու հաստիքային բաշխիչ տուփերի միջև. այդ կերպ բազային մեքենայի ուժային փոխանցումը պահպանվում է իր սկզբնական տեսքով: Արդիականացված ՋՓԴ-ի ուժային փոխանցումը կառուցված է ագրեգատային սկզբունքով: ՈՒԺային ագրեգատը (շարժիչ, կցորդիչ, փոխանցումատուփ) և հովացման ագրեգատը (ռադիատոր և կենտրոնախույս օդափոխիչ) տեղակայված են միասնական շրջանակի վրա և ուժային հատվածամասում տեղաբաշխված են հավաքովի տեսքով: ԼԲՏ-ն իրանի մեջ տեղադրվում է իր կախոցով և փոխանցումատուփի ելքային լիսեռի հետ միանում է միջակա կարդանային լիսեռի միջոցով: ՈՒԺային փոխանցման այդպիսի կառուցվածքը հնարավորություն է տվել ոչ միայն առավելագույնս նվազեցնելու իրանի լրամշակումն ու շարժիչային հատվածամասի դասավորվածքի փոփոխությունները, այլև հեշտացնելու շահագործման ժամանակ ուժային բլոկի և դրա առանձին տարրերի փոխարինումը:

Տարաշարժունության բարելավման մեկ այլ տարբերակ իրականացրել է ՋՓԴ-ներ արտադրող «Արզամասի մեքենաշինական գործարան» (ԱՄԳ) ձեռնարկությունը, որը հաղթել է ՌԴ Զինված ուժերի սպառազինության մեջ գտնվող ԲՏՌ-60 և ԲՏՌ-70 զրահափոխադրիչների արդիականացման գծով մրցույթում: Երկու մեքենաներում էլ տեղադրվում է ԿԱՄԱԶ-7403 8 գլանանոց դիզելային շարժիչ, որը րոպեում 2600 պտույտի դեպքում զարգացնում է 260 ձիաուժ հզորություն (նմանատիպ ԿԱՄԱԶ-740 շարժիչ իր արդիականացված ԲՏՌ-70Դ մեքենայում տեղադրում է «Ռեմդիզել» ՓԲԸ-ն): Դա ապահովում է մինչև 100 կմ/ժ առավելագույն արագություն (բազային ԲՏՌ-60/70-ի արագությունը չի գերազանցում 80 կմ/ժ) և 600 կմ վազքատարածություն՝ առանց լրացուցիչ վառելիքաբաքերի (բազային ԲՏՌ-60 և ԲՏՌ-70 ՋՓԴ-ների 500 կմ-ի փոխարեն):

Կրակային հզորություն: Տվյալ մարտական հատկանիշի բարելավմանն ուղղված աշխատանքները կենտրոնանում են ՋՓԴ-ների գլխավոր սպառազինությունը՝ 14,5 մմ-ոց ԿՊՎՏ գնդացիրը, ավելի հզոր զենքերով փոխարինելու վրա: Արդեն հիշատակված ԱՄԳ ձեռնարկությունն իր ԲՏՌ-60-ի արդիականացման փաթեթում ընդգրկել է ԲՏՌ-80-ից փոխառված աշտարակի ԲՊՈՒ-1 համապիտանի նշանոցի տեղադրում (թեպետ նա զինված է նույն ԿՊՎՏ գնդացրով, սակայն հնարավորություն է տալիս կրակ վարելու ուղղաձիգ նշանառության մինչև 60^{o} անկյուններով՝ բազային ԲՏՌ-60-ի 40^{o}-ի փոխարեն): Դրանով ապահովվում է ցածրաթիռ օբյեկտների, ինչպես նաև քաղաքային պայմաններում շենքերի վերևի հարկերում դիրքավորված

հակառակորդի դեմ պայքարի հնարավորությունը: Ինչ վերաբերում է ԲՏՌ-70-ի արդիականացմանը, ապա ձեռնարկությունը նրա վրա տեղադրում է ԲՏՌ-80Ա-ից փոխառված ԲՊՊՈՒ աշտարակը, որը զինված է 30 մմ-ոց 2Ա72 հրանոթով: Հրանոթը տեղակայված է հրետասայլի վրա, որն էլ տեղադրվում է աշտարակում: Այսպիսով՝ հրանոթը և նրա հետ զույգված Կալաշնիկովի ՊԿՏ տանկային գնդացիրը դուրս են բերված անձնակազմով զբաղեցված մասից, ինչը հնարավորություն է տվել ընդարձակելու աշտարակի տակ գտնվող տարածությունը, բարելավելու նշանառուի աշխատանքի հարմարավետությունը և գլխավորը՝ լուծելու կրակի վարման ժամանակ անձնակազմով զբաղեցված մասում աղմուկի և գազերի տարածման խնդիրները: Հրանոթի և ՊԿՏ գնդացրի ուղղաձիգ նշանառության անկյունը –5-ից մինչև +70^{o} է: Ինչպես հրանոթը, այնպես էլ գնդացիրը ունեն պահունակներից ժապավենային լիցքավորում, ընդ որում, հրանոթի լիցքավորումը երկժապավենային է. մի ժապավենը պարունակում է բեկորաֆուգասային և բեկորալուսածրիչ, իսկ մյուսը՝ զրահահարլուսածրիչ արկեր: Լիցքավորման փոխարկումը մեկ ժապավենից մյուսին կատարվում է ակնթարթորեն, ինչը հնարավորություն է տալիս օպերատիվ կերպով խոցելու (ոչնչացնելու) ինչպես հակառակորդի կենդանի ուժը, այնպես էլ զրահապատ նշանակետերն ու կրակակետերը: Հրանոթի մարտալրակազմը 300 կրակոց է, իսկ գնդացրինը՝ 2000: Կրակի կառավարումը կատարվում է 1Պ3-9 ցերեկային և ՏՊՆ-3-42 գիշերային նշանոցների միջոցով: Ինչպես նշում են ձեռնարկության ներկայացուցիչները, արդիականացված ԲՏՌ-60-ը և ԲՏՌ-70-ը իրենց մարտական և տեխնիկական բնութագրերով համեմատելի են ԲՏՌ-80-ի հետ:

Այդուհանդերձ, ԲՏՌ-70-ի արդիականացված տարբերակը ունի մի շատ էական թերություն, այն է՝ հրանոթը տեղակայված է աշտարակից դուրս: Այդպիսի տեղակայումը կարելի է համարել ոչ հուսալի, քանի որ մարտի ժամանակ դա կարող է հանգեցնել հրանոթի խափանմանը՝ անգամ եթե դիպչեն հրաձգային գնդակներ, և առաջ բերել արտաքին ներգործությունների նկատմամբ (ճյուն, անձրև, աղտոտվածություն) հրանոթի զգայունության կտրուկ աճումը:

ՀՀ ԶՈՒ-ի ԶՓԴ-ների հավաքակազմի կրակային հզորության արդիականացման մեկ այլ տարբերակ է դրանց վերազինումը ԶՈՒ-23 հրանոթներով, ինչն առ այսօր արվել է սահմանափակ քանակով: Թեպետ պահանջվում են որոշակի կառուցվածքային լրամշակումներ, և ԶՈՒ-23 հրանոթն զգալիորեն զիջում է 2Ա72 հրանոթին այնպիսի կարևոր հատկանիշներով, ինչպիսիք են արդյունավետ կրակի հեռավորությունը (2Ա72-ի համար՝ 2000 մ (զրահատեխնիկայի դեմ) և 4000 մ (կենդանի ուժի դեմ), ԶՈՒ-23-ի համար՝ 2500 մ) և բեկորաֆուգասային արկում եղած պայթուցիկ նյութի քաշը (համապատասխանաբար՝ 125 և 18 գ), սակայն գերազանցում է այլ կարևոր բնութագրերով, մասնավորապես՝ աշտարակում տեղակայման հնարավորությամբ: Բացի այդ, ԶՈՒ-23-ը թեև փոքր տրամաչափի է, այդուհանդերձ ունի մեծ արդյունավետություն ինչպես հետևակի, այնպես էլ թեթև զրահապատ մեքենաների ոչնչացման առումով և զրահահար-լուսածրիչ արկերով կարող է խոցել ԲՏՌ-80-ի ճակատային զրահը:

Պաշտպանվածություն: ԱՄԳ-ի արդիականացրած ԲՏՌ-60-ը և ԲՏՌ-70-ը պաշտպանվածության առումով համարժեք են ԲՏՌ-80-ին, ինչը ձեռք է բերվել առավել կարևոր մասերի լրացուցիչ զրահապաշտպանության, հակահրդեհային սարքավորանքի և գնդակակայուն անվադողերի կիրառման շնորհիվ: Անվադողերն ունեն անխուց կառուցվածք և օժտված են օդի ճնշման կենտրոնացված կարգավորման համակարգով, ԶՓԴ-ին հնարավորություն են տալիս ինչպես գնդակներից, այնպես էլ հակահետևակային ականների պայթյունից ստացված վնասվածքների դեպքում շարունակելու շարժումը և կատարելու մարտական առաջադրանքը մինչև 20 կմ/ժ արագությամբ ու 200 կմ-ից ոչ պակաս հեռավորության վրա:

Այսպիսով՝ հանգում ենք այն եզրակացության, որ ԲՏՌ-60 և ԲՏՌ-70 ԶՓԴ-ների արդիականացման լավագույն փաթեթ առաջարկում է ռուսաստանյան ԱՄԳ ձեռնարկությունը: Շարժիչի լավագույն տարբերակն է ՅաՄԶ-236-ը, որը հուսալի է և շահագործման մեջ պարզ, իսկ 2Ա72 հրանոթը ամենաարդյունավետ կրակային միջոցն է: Ընդ որում, պետք է վերացնել արդեն իսկ արդիականացված ԲՏՌ-70Դ մեքենաների շահագործման ընթացքում ի հայտ եկած թերությունները և լրամշակել կառուցվածքը: Միևնույն ժամանակ պետք է ուսումնասիրվի կրակային հզորության մեծացման այնպիսի լուծումների կիրառումը, ինչպիսին է, օրինակ, աշտարակում զույգված ԶՈՒ-23 հրանոթների կամ 2Ա72 (2Ա42) հրանոթների տեղակայման հնարավորությունը:

ԲՌԴՄ-2 զրահապատ հետախուզադետքային մեքենա (ԶՀԴՄ)

ԶՀԴՄ-ները խորհրդային սպառազինության մեջ են ընդունվել 1962 թ.: Ի տարբերություն ՀՄՄ-ներից և ԶՓԴ-ներից, ԶՀԴՄ-ին ներկայացվող կարևոր պահանջներից է ջրային արգելքներն ինքնուրույնաբար հաղթահարելու կարողությունը, այդ պատճառով ՀՀ ԶՈՒ-ում առկա ԲՌԴՄ-2 մեքենաների արդիականացման հարցում պարտադիր նախապայման պետք է լինի տվյալ սարքավորանքի պահպանումը:

Ինչ վերաբերում է ԲՌԴՄ-2 մեքենայի մարտական հատկությունների բարելավմանը, ապա նրա ինչպես կրակային հզորությունը (ԲՊՈՒ-1 աշտարակ՝ ԿՊՎՏ և ՊԿՏ գնդացիրներով), այնպես էլ պաշտպանվածությունը (պաշտպանություն գնդակներից) մեքենայի առջև դրվող խնդիրների կատարման համար քիչ թե շատ բավարար են համարվում: ՈՒստի արդիականացման աշխատանքները պետք է ուղղվեն տարաշարժունության բարելավմանը:

Արդեն հիշատակված ԱՄԳ ձեռնարկությունը ԲՌԴՄ-2 մեքենայի արդիականացման իր տարբերակում բազային 140 ձիաուժ հզորությամբ կարբյուրատորային ԳԱԶ-41 շարժիչի փոխարեն տեղադրում է 136 ձիաուժ հզորությամբ դիզելային Դ-2459 շարժիչ, ինչի շնորհիվ աճում են մեքենայի առավելագույն արագությունը և ընթացապաշարը: Արդիականացված մեքենան, որը ՌԴ ԶՈՒ-ում ստացել է ԲՌԴՄ-2Մ անվանումը, ունի նաև նոր գնդակակայուն անվադողեր, լրացուցիչ զրահապաշտպանություն, ցամաքային ուղեվարական «Գամմա-1» կամ «Գամմա-2» համակարգ և Ռ-168-35ՈՒ կամ Ռ-173 ռադիոկայան (բազային Ռ-123-ի փոխարեն): Մեքենայում կարող է տեղադրվել նաև ջրային արգելքների հաղթահարման ԲՏՌ-80-ից փոխառված համակարգը:

ԲՌԴՄ-2-23Մ զրահապատ հետախուզադետեկտային մեքենա

ԲՌԴՄ-2-23Մ մեքենան արդիականացված աշտարակով ՋՀԴՄ է, որում 14,5-մմ ԿՊՎՏ և 7,62-մմ ՊԿՏ գնդացիրների փոխարեն տեղակայված է 23 մմ տրամաչափի 2Ա14 ավտոմատ հրանոթ: Մեքենայի կրակային հզորության աստիճանի բարձրացումը (ուժեղացումը) հնարավորություն է տալիս, բացի հիմնական գործա-

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ

Հ/հ	Անվանումը, չափման միավորը	Բազային ԲՌԴՄ-2	ԽՄԿԲ-ի արդիականացված ԲՌԴՄ-2
1	Շարժիչի անվանումը	ԳԱԶ-41	ՍՄԴ-21-082
2	Շարժիչի տեսակը	կարբյուրատորային	դիզելային
3	Շարժիչի տեսակարար հզորությունը, ձիաուժ	140	145
4	Օգտագործվող վառելիքը	բենզին Ա-76	դիզ. վառելիք
5	Վառելիքի տեսակարար ծախսը, գ/ձիաուժ·ժ	250	165
6	Առավելագույն պտտող մոմենտը, կգ·ուժ/մ	36	60
7	Շարժիչի շահագործման ռեսուրսը, ժամ	4000	6000
8	Առավելագույն արագությունը, կմ/ժ	95	95
9	Լողալու արագությունը, կմ/ժ	10	10
10	Միջին արագությունը, կմ/ժ	55	60
11	Ընթացապաշարը, կմ/ժ	750	1000
12	Լողապաշարը, կմ/ժ	14-16	18-20
13	Շարժիչի տեխսպասարկման պարբերությունը՝ SU-1, ժամ SU-2, ժամ	 20 60	 60 240
14	Մեքենայի երկարությունը, մմ	5750	6100
15	Մեքենայի զանգվածը, կգ	7000	7900

ռույթներից, նաև արդյունավետ կերպով պայքարելու թեթև զրահապատ մարտական տեխնիկայի դեմ, ճնշելու հրետանային և ականանետային մարտկոցները և պաշտպանական կառույցները, խոցելու ցածրաթիռ օբյեկտները մինչև 2500 մ հեռավորության վրա:

Մարտական հատվածամասը զրահապատ աշտարակ է, որի ներսում տեղադրված է 23 մմ տրամաչափի 2Ա14 ավտոմատ հրանոթ: Աշտարակից կախված է կարուսել, որի վրա տեղադրված են 200 փամփուշտով պահատուփ, պարկուճատուփ և նշանառուի նստոցը:

Պահատուփի բկանցքի վրա հավաքակցված է ուղեսարքվածք (տրակտ)՝ լիցքավորված ժապավենի մատուցման համար:

Վառոդային գազերի հեռացման համար աշտարակի վերին մասում տեղակայված է օդափոխիչ:

ՈՒղղահայաց նշանառության անկյունը –5 +35^{o} է, իսկ հորիզոնականը՝ 360^{o}:

Կրակը վարվում է 23 մմ բեկորաֆուգասային հրկիզող, բեկորաֆուգասային հրկիզող-լուսածրիչ և զրահահար հրկիզող-լուսածրիչ արկերով:

ՈՒկրաինական ԽՄԿԲ ձեռնարկությունը նույնպես կատարել է ԲՌԴՄ-2 մեքենայի արդիականացում: Այդ ձեռնարկությունը տեղադրել է ՍՄԴ-21-08 դիզելային շարժիչ, որը հնարավորություն է տվել զգալիորեն բարելավելու մեքենայի տարաշարժունության բնութագրերը, ընդ որում՝

–վառելիքի ծախսի զգալի նվազման հաշվին 25 %-ով ավելացել է մեքենայի ընթացապաշարը՝ առանց վառելիքի ծավալի ավելացման,

–շարժիչի պտտող մոմենտի 1,7 անգամ աճման հաշվին մեծացել է մեքենայի անցունակությունը դժվարանցանելի ճանապարհային պայմաններում,

–1,5 անգամ մեծացել է մեքենայի շարժիչի շահագործման ժամկետը,

–3-4 անգամ մեծացել է ուժակայանքի տեխսպասարկման պարբերությունը:

ПУТИ МОДЕРНИЗАЦИИ БРОНЕТАНКОВОЙ ТЕХНИКИ ВС РА

З. М. ГАБРИЕЛЯН, подполковник, заместитель начальника бронетанковой службы Управления вооружения МО РА, Ж. А. АМИРХАНЯН, майор, старший офицер Управления международного военного сотрудничества и оборонных программ МО РА, О. Г. КОСТАНЯН, капитан, старший офицер отдела Военно-промышленного управления МО РА, Р. Г. ТУМАНЯН, кандидат технических наук, директор ЗАО «Военный завод 65», А. А. ГЮРДЖЯН, начальник технической службы ОАО «Чаренцаванский станкостроительный завод»

РЕЗЮМЕ

Бронетехника, состоящая на вооружении армии РА, в большинстве своем разработана в 60-ые годы и требует усовершенствования ТТХ. Работы по модернизации БМП-1, БМП-2, БТР-60, БТР-70 ведутся в направлении улучшения основных характеристик машин: огневой мощи, защищенности и маневренности.

Основным направлением модернизации бронетехники является замена карбюраторных двигателей дизельными, что позволяет значительно уменьшить расход топлива и увеличить крутящий момент двигателя при сохранении мощности. Некоторое утяжеление машин, связанное с дополнительным бронированием и заменой огневых средств на более мощные, частично компенсируется исключением бортового оборудования, предназначенного для форсирования водных преград, не являющегося необходимым с учетом географических особенностей региона.

THE WAYS TO MODERNIZE THE ARMOURED HARDWARE OF THE RA ARMED FORCES

Z. M. GABRIELYAN, Lieutenant-Colonel, Deputy Chief of the Armoured Service of the Board of Armament of the MoD, RA, Zh. H. AMIRKHANYAN, Major, Senior Officer of the Board of the International Military Cooperation and Defense Programs of the MoD, RA, H. H. KOSTANYAN, Captain, Senior Officer of the Department of the Military-Industrial Board of the MoD, RA, R. H. TUMANYAN, Candidate of Technical Sciences, Director of the CJSC «65 Munitions Factory», A. A. GYURDJYAN, Chief of the Maintenance of the Public Corporation «Charentsavan Machine-Tool Factory»

SUMMARY

The armoured hardware, which is at arming in the RA Armed Forces, is mainly developed in 1960s and its performance characteristics need improvement. The activities on modernizing the IFV-1 (infantry fighting vehicle), IFV-2, APC-60 (armoured personnel carrier), APC-70 are carried on in the direction of improving basic characteristics of vehicles: fire power, protectability and manoeuvrability.

The mainstream of the armoured hardware modernization is the replacement of carburettor engines by diesel ones, which allows to greatly cut down fuel consumption and increase engine rotational moment at power preservation. Some weighting of vehicles, connected with the supplementary armouring and the change of fire means for more high-powered ones, is partially compensated with the elimination of board equipment meant for the forcing of water barriers, which is not necessary if taking into account the geographical peculiarities of the region.

ՌԱԴԻՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ՋԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կ. Ա. ԴԱԴԱԼՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ ռազմաարդյունաբերական վարչության պետի տեղակալ, Ա. Պ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, փոխգնդապետ, ՀՀ ՊՆ ռազմաարդյունաբերական վարչության բաժնի պետ

Պաշտպանական ոլորտում հատուկ գիտահետազոտական ու փորձակոնստրուկտորական աշխատանքների (ԳՀՓԿԱ-ներ) պլանավորման և կատարման ժամանակ առանձնակի ուշադրություն է դարձվել հակաօդային պաշտպանության (ՀՕՊ), հրետանու, հատուկ նախանշանակման ռադիոտեխնիկական համալիրների արդիականացմանն ու նոր նմուշների ստեղծմանը: Այս աշխատանքներն ընդլայնվեցին, երբ, նախ, ՀՀ ձեռնարկությունների կողմից յուրացվեց այս միջոցների նորոգումը և զգացվեց անհրաժեշտ բարձրորակ պահեստամասերի սակավություն, և երկրորդ՝ նորոգման աշխատանքների ընթացքում ձեռնարկությունների ինժեներատեխնիկական անձնակազմն արդեն սկսեց տիրապետել համալիրների ամբողջական կառուցվածքին: Առաջարկներ արվեցին դրանց մարտավարատեխնիկական բնութագրերի բարելավմամբ մասնակի արդիականացման վերաբերյալ:

Որոշակի աշխատանքներ են տարվել ՀՕՊ-ի մի շարք զենիթահրթիռային կայանների և օդային տարածքների հետախուզման ու նշանակետերի հայտնաբերման տարբեր ռադիոտեղորոշումային կայանների արդիականացման ուղղությամբ:

Ռադիոտեղորոշումային կայանների՝ շարժվող նշանակետերի ընտրման համակարգի արդյունավետության ապահովման համար պահանջվում են սպասարկման մեծ ծավալով աշխատանքներ: Այդ համակարգը կառուցված էր էլեկտրավակուումային լամպերի հիմքի վրա, որոնց շահագործման ժամկետը փոքր էր (այդ պատճառով էլ դրանց արտադրությունը դադարեցվել է): Մեր մասնագետները կարողացան սեղմ ժամկետներում մշակել թվային նոր համակարգ, կատարել անհրաժեշտ զորային փորձարկումներ և այդ համակարգերը ներդրել բոլոր տիպի ռադիոտեղորոշումային կայաններում:

Ռադիոտեղորոշումային կայանների արդիականացման հաջորդ փուլը անդրադարձած ազդանշանի ընդունիչի մուտքային ուղու արդիականացումն էր: Այս խնդիրը պետք էր լուծել հատկապես դեցիմետրային տիրույթի ռադիոտեղորոշումային կայաններում՝ դրանց մուտքային ուղիների միօրինակության ապահովմամբ: Այս աշխատանքները կատարվեցին առանց կայանների ու համալիրների կառուցվածքի փոփոխությունների և լրամշակումների:

Որոշակի խնդիրներ առաջացան տարբեր համալիրների էլեկտրասնուցման երկրորդային աղբյուրների լարման կայունարարների արդիականացման ժամանակ. թեև սխեմատեխնիկական և կառուցվածքային լուծումներն առաջին հայացքից պարզ էին թվում, սակայն աշխատանքները բավականին դանդաղ էին ընթանում, և ներկայումս դեռ չի ավարտվել զորային փորձարկումների փուլը: Նոր մշակումներն իրենց բնութագրերով գերազանցում են հաստիքային համակարգերը, միևնույն

ժամանակ չեն պահանջում կառուցվածքային փոփոխություններ ռադիոտեղորոշումային կայանների ներքին կապերում: Այդ մշակումների շնորհիվ բարելավվել են ՀՕՊ-ի միջոցների ընդհանուր մարտավարատեխնիկական բնութագրերը, ընդ որում, նոր համակարգերը գրեթե չեն պահանջում կարգաբերման աշխատանքներ և ունեն շահագործման տասն անգամ ավելի մեծ ժամկետ: Նվազել է նաև սպասարկման աշխատանքների ծավալը:

ՀՕՊ-ի համալիրների էլեկտրասնուցման համար մշակվել և թողարկվում է ժամանակակից պարամետրներով էլեկտրակայան, որն ունի մեծ ՕԳԳ, շահագործման մեջ պարզ է, և կարգավորման աշխատանքները հնարավորինս ավտոմատացված են:

ՀՕՊ-ի միջոցների նորոգման և դրանց բաղկացուցիչ համակարգերի արդիականացման ընթացքում ձեռք բերված փորձը և մի շարք երկրներում նախագծված ժամանակակից ռադիոտեղորոշումային կայանների կառուցվածքի ուսումնասիրությունը հնարավորություն տվեցին ձեռնամուխ լինելու թվային ռադիոտեղորոշումային կայանի ստեղծմանը: Արդիականացված կայանն այսօր արդեն անցնում է զորային փորձարկումներ և իր մարտավարատեխնիկական բնութագրերով գերազանցում է նախկին կայանը: Ի տարբերություն բազայինից՝ նոր կայանը կառուցված է ժամանակակից էլեմենտային հիմքով և ապահովում է՝

– պասիվ խանգարումներից պաշտպանության համակարգի աշխատանքի կայունություն և մեծ արդյունավետություն,

– ակտիվ խանգարումներից պաշտպանության մեծ ճկունություն,

– օդային օբյեկտների թռիչքուղիների նշագծման, ռադիոտեղորոշումային տեղեկույթի գրանցման, հաղորդման և արխիվացման ավտոմատացում,

– կայանի համատեղելիություն կառավարման ավտոմատացված համակարգերի (ԿԱՀ-եր) հետ,

– տեխնիկական սպասարկման սակավ աշխատատարություն և կարճատևություն՝ շնորհիվ թեստավորման և ախտորոշման ներկառուցված համակարգերի,

– աշխատունակության արագ վերականգնում,

– օպերատորի աշխատատեղի հարմարավետություն և աշխատանքի պարզություն, և այլն:

ՀՕՊ-ի տեխնիկական միջոցներից բացի, մշակվել և կիրառվել են նաև ԿԱՀ-ի և կոնկրետ խնդիրների լուծման ծրագրային փաթեթներ: Այս գործում անհրաժեշտ է նշել ՀՕՊ-ի զորքերի սպաների անմիջական մասնակցությունը ոչ միայն խնդիրների հստակ ձևակերպմանը, այլև դրանց լուծման ուղղությունների ու եղանակների ընտրությանը: Այսպես. մշակվել և կիրառության մեջ են դրվել մի շարք ծրագրային փաթեթներ, որոնք ապահովում են ՀՕՊ-ի զորքերի հիմնական կառավարային խնդիրների լուծման ավտոմատացումը և զորավարժությունների անցկացումը՝ առանց հաստիքային տեխնիկական միջոցների կիրառման:

Մշակված ծրագրային փաթեթների տվյալների բազան են կազմում տարածաշրջանի գրաֆիկական քարտեզի տվյալները, որոնք կառավարման էկրանին տարածականորեն տարբերակված են:

Ծրագրային փաթեթները հնարավորություն են տալիս հավաքելու, վերլուծելու և մեքենայի հիշողության մեջ գրանցելու ընդունվող տեղեկույթը, մշակելու պատասխան տեղեկույթը, որն անհրաժեշտության դեպքում կարելի է արտապատկերել էկրաններին՝ ապահովելով հետևյալ խնդիրների լուծումը.

1. իրադրությունների տեղեկութային մոդելի ձևավորում և արտապատկերում, այդ թվում՝

– օդային իրադրության վերաբերյալ տեղեկույթի հավաքում, մշակում և արտապատկերում,



Ռադիոտեղորոշումային կայան

– կառավարվող օբյեկտների դիրքի, վիճակի և աշխատանքային բնութագրերի վերաբերյալ տեղեկույթի հավաքում, մշակում և արտապատկերում,

– կառավարվող օբյեկտների վիճակի վերահսկում,

2. նշանակետերի բաշխում և ցուցում, այդ թվում՝

– հակառակորդի օդային նշանակետերի թվի և հարվածների տևողության ավտոմատ հաշվարկում,

– խոցման գոտուն օդային նշանակետերի մոտենալու հաջորդականության որոշում և ժամանակի հաշվարկում,

– նշանակետերի բաշխում ըստ կրակակետերի,

– ստորաբաժանումների հրթիռների արձակման պահի ու խոցման գոտու ավտոմատ հաշվարկում, նշանակետի և հրթիռի հանդիպման կետի որոշում, և այլն,

3. օդային իրադրության ելակետային տվյալների մուտքագրում, պահպանում և թարմացում, ընդսմին նշվում են՝

– հորիզոնական հարթությունում թռիչքուղիները՝ ըստ հանգուցային կետերի,

– օդային օբյեկտների ուղեգծերը՝ օբյեկտների համարների, նշանակետերի տիպերի, պետական պատկանելության, թվի, հատկանիշների, թռիչքուղու կետերի և տվյալների նշմամբ,

4. զանազան օդային իրադրությունների խաղարկման համար տվյալների ձևավորում, արտապատկերում և հաղորդում հրամանատարական կետեր,

5. հրամանների, հաղորդագրությունների և զեկույցների ձևավորում և փոխանակում կառավարվող օբյեկտների ու հրամանատարական կետերի միջև,

6. ելքային ու մուտքային տեղեկույթի արխիվացում,

7. տեղեկույթի, մասնավորապես, օդային օբյեկտների թռիչքային ուղիների գծապատկերների և բարձրությունների ժամանակային գրաֆիկների, հաշվետվությունների, տեղեկանքների վավերագրում,

8. համակարգում շրջանառող ամբողջ տեղեկույթի արտապատկերում անհատական և կոլեկտիվ օգտագործման ցուցատախտակներին ու մոնիտորներին:

ՀՕՊ-ի միջոցների և ստորաբաժանումների ղեկավարման համար մշակվել և շահագործման է հանձնվել կառավարման կետը, արդիականացվել է հրետանու դիվիզիոնի հրամանատարաշտաբային մեքենան: Երկու դեպքում էլ լայնորեն օգտագործվել են համակարգչային ու ծրագրային ապահովման միջոցներ, որոնք հնարավորություն են տվել ավտոմատացնելու հաշվարկային խնդիրների լուծումները և ապահովելու կառավարման բարձր օպերատիվությունը:

Հրետանու կրակի կառավարման և խնդիրների արագ լուծման համար մշակվել է հրետանային հետախուզության օպտիկաէլեկտրոնային համակարգը, որը հնարավորություն է տալիս՝

– դիտելու տեղանքը, հայտնաբերելու և առանձնացնելու նշանակետերը,

– որոշելու առանձնացված նշանակետերի հեռավորությունը և կոորդինատները,

–հավաքելու, գրանցելու, պահպանելու և արտապատկերելու առանձնացված նշանակետերի տվյալները,

–կատարելու հրետանային խնդիրների լուծման համար անհրաժեշտ հաշվարկումներ:

Հրետանու խնդիրների լուծման ժամանակ օգտագործվող օդերևութաբանական տվյալների ճշգրտությունն ապահովելու համար մշակվել են համապատասխան համալիրներ, որոնց փորձարկումները ավարտական փուլում են: Շուտով փորձարկումների կհանձնվի նաև դյուրակիր դոպլերյան ռադիոտեղորոշումային կայանը, որը կհամալրի հրետանային հետախուզության համակարգը: Այս կայանը, ի տարբերություն գոյություն ունեցող այլ կայաններից, կլինի սակավ էներգատար և ավելի թեթև՝ միևնույն ժամանակ ապահովելով հայտնաբերման մեծ ճշգրտություն և արագությունների չափման լայն տիրույթ (սկսած առանձին մարդկանց տեղաշարժից մինչև արագընթաց տրանսպորտային միջոցներինը):

Նշված աշխատանքները կատարվում են մի շարք մասնագիտացած ձեռնարկություններում, որոնք գործում են խորհրդային ժամանակներից, երբ այս ոլորտը Հայաստանում շատ զարգացած էր: Մասնավորապես՝ «Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ում կատարվում են հատուկ նախանշանակման համալիրների, կայանների, սարքերի և դրանց առանձին հանգույցների, ալեհավաքների, այլ տեխնիկական միջոցների նորոգում, վերականգնում և արդիականացում:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում մարտական հերթապահության

մեջ գտնվող տեխնիկական միջոցների նորոգման և տեխնիկական սպասարկման գործընթացին: Այս ուղղությամբ մի շարք ընկերությունների հատուկ խմբերի կողմից կատարված աշխատանքները համարվում են տեխնիկական միջոցները մարտական վիճակում պահելու գրավականներից մեկը:

Ռադիոտեխնիկական միջոցների արդիականացման և նոր նմուշների ստեղծման ոլորտում հանրապետությունում առկա է գիտատեխնիկական մեծ ներուժ, որի համախմբումը և համադասումը կդառնան աշխատանքների որակական բարելավմանն ուղղված հեռանկարային ծրագրերի իրականացման լավագույն միջոց: Այս առումով ոլորտի հետագա զարգացման համար անհրաժեշտ է՝

– ավարտին հասցնել արդեն սկսված ԳՀՓԿԱ-ների զարգացման միջնաժամկետ հեռանկարային ծրագրերը,

– ԳՀՓԿԱ-ներ կատարող բազային կազմակերպությունների հետ համատեղ վերլուծել անցած տարիների գործունեությունը, քարտացուցակավորել կատարված աշխատանքների արդյունքները, ստեղծել ավարտուն համակարգերի ամփոփ անձնագրեր՝ նպատակ ունենալով նաև նոր ստեղծվող սպառազինության ու ռազմական տեխնիկայի (ՍՌՏ) և համալրող արտադրատեսակների միօրինակացումը,

– ստեղծել համադասող գիտատեխնիկական խորհուրդ և պարբերաբար անցկացնել գիտաժողովներ ու քննարկումներ՝ ԳՀՓԿԱ-ներ կատարող բազային կազմակերպությունների միջև կապերն ամրապնդելու և փոխշահավետ համագործակցություն ապահովելու նպատակով,

– պլանավորված ու նպատակային հիմնարար հետազոտությունների կատարման և երկակի նախանշանակման արտադրանքի մշակման նպատակով համակարգել ԳՀՓԿԱ-ների ոլորտում համագործակցությունը ՀՀ պաշտպանության, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման, ՀՀ գիտության և կրթության նախարարությունների ու ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի միջև, ուսումնասիրել ՀՀ-ում գործող և առայժմ պետական պաշտպանական պատվերներ չկատարող մի շարք կազմակերպությունների գիտատեխնիկական հնարավորությունները,

– ուսումնասիրել բազային կազմակերպությունների ներկա հնարավորությունները և պայմաններ ստեղծել հատկապես գերակա ուղղություններով գիտատեխնիկական ներուժի պահպանման ու զարգացման համար, աջակցել ոլորտի համալրմանը երիտասարդ գիտնականներով և մասնագետներով, ինչի համար բարձրագույն ուսումնական հաստատությունների և ռազմական արդյունաբերության ոլորտի ձեռնարկությունների միջև ստեղծել սերտ համագործակցության հիմքեր՝ ապահովելով այդ կազմակերպություններում ուսանողների պրակտիկայի անցկացումը և հետագա աշխատանքի երաշխավորումը:

Այս ոլորտում արդյունավետ համապետական քաղաքականությունը, մասնավորապես՝ նպատակաուղղված ներքին ռազմատեխնիկական համագործակցության զարգացմանը, կապահովի նոր որակական արդյունքներ՝ հնարավորություն ընձեռելով դուրս գալու արտաքին շուկա, ինչը ոլորտը կդարձնի շահութաբեր և պայմաններ կստեղծի արտաբյուջետային ներդրումների համար:

ПРОЦЕСС МОДЕРНИЗАЦИИ РАДИОТЕХНИЧЕСКИХ СРЕДСТВ И НАПРАВЛЕНИЯ ИХ РАЗВИТИЯ

К. А. ДАДАЛЯН, полковник, заместитель начальника Военно-промышленного управления МО РА, А. П. ПЕТРОСЯН, подполковник, начальник отдела Военно-промышленного управления МО РА

РЕЗЮМЕ

Радиотехнические устройства являются важными составными частями многих ракетных и артиллерийских систем, состоящих на вооружении ВС РА. Работы по восстановлению и ремонту этих изделий послужили основой для ряда НИОКР, нацеленных на улучшение ТТХ устаревших образцов путем замены снятых с производства электровакуумных приборов блоками собственной разработки на базе твердотельных элементов. Параллельно производилась компьютеризация систем, что создало возможности для автоматизации решения ряда расчетных задач и обеспечения высокой оперативности управления.

Для дальнейшего развития НИОКР в данной области необходимы: стандартизация и паспортизация разработанных и разрабатываемых радиотехнических средств, создание координирующего научно-технического совета по НИОКР, а также сохранение и повышение научно-технического потенциала путем подготовки профессиональных кадров высокой квалификации.

THE PROCESS OF MODERNIZATION OF RADIO EQUIPMENTS AND DIRECTIONS OF THEIR DEVELOPMENT

K. A. DADALYAN, Colonel, Deputy Chief of the Military-Industrial Board of the MoD, RA, A. P. PETROSSYAN, Lieutenant-Colonel, Chief of the Department of the Military-Industrial Board of the MoD, RA

SUMMARY

Radiotechnical devices are important components of missile and artillery systems, which are at arming in the RA Armed Forces. Activities on the reconstruction and repair of these articles served as a basis for a number of R&D, targeted at the improvement of performance characteristics of obsolete samples through the change of electrovacuum appliances, gone out of production, for the blocks of their own engineering on the basis of solid-state components. Parallel with it, the computerization of the system was carried out, which gave opportunities for the automated solution to a number of calculation tasks and for ensuring a high control efficiency.

For further progress of the R&D in the given sphere it is necessary to standardize and issue passport system of radio aids both elaborated and in the process of elaboration, create coordinating scientific-technical council on R&D, as well as preserve and increase the scientific-technical potential through training highly qualified professionals.

ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ԿԱՊԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՏԱՐԲԵՐԱԿ

Մ. Վ. ՄԱՐԿՈՍՅԱՆ, տեխնիկական գիտությունների դոկտոր, «Երևանի կապի միջոցների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն, ԵրԾՇՊՀ-ի ինֆորմատիկա, հաշվողական տեխնիկա և կառավարման համակարգեր ամբիոնի վարիչ,
Ֆ. Պ. ՍՈԼՈՄՈՆՅԱՆ, պահեստազորի գնդապետ[*]

Զինված ուժերում կապի կազմակերպումը արտացոլում է նրա աստիճանակարգային կառուցվածքը: Այն ունի իր առանձնահատկությունները, որոնցով էլ հիմնականում պայմանավորված է համապատասխան հատուկ միջոցների օգտագործումը: Այսօր տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը նոր պահանջներ է ներկայացնում տեղեկատվահեռահաղորդակցության կազմակերպմանը: Այդ պահանջներն են. արդիականությունը, հավաստիությունը, հուսալիությունը, գաղտնիությունը (տեղեկատվության անվտանգության ապահովում), մոբիլությունը (կառուցվածքի ճկուն փոփոխություն), արագությունը (համակարգի արագ բացազատում), արագագործությունը (մեծ ծավալներով տեղեկույթի արագ հաղորդում):

Տեղեկատվահեռահաղորդակցության հիմքը կապն է, որի կազմակերպման կառուցվածքը փոփոխվում է ըստ իրավիճակի: Տարբերում ենք երկու իրավիճակ՝ խաղաղ և պատերազմական պայմաններ: Եթե խաղաղ պայմաններում գործ ունենք ֆիքսված կապուղիների և ընթացիկ տեղեկատվական խնդիրների լուծման հետ, ապա պատերազմական իրավիճակում կապի հանգույցների տեղերը փոխվում են, լուծվելիք խնդիրների շարքում ավելանում են հետախուզական և իրավիճակը պարզաբանող մեծաքանակ տվյալների ստացման ու վերլուծման և որոշումների ընդունմանը նպաստող խնդիրները: Իհարկե, որոշ հետախուզական խնդիրներ լուծվում են նաև խաղաղ պայմաններում:

Այսպիսով՝ դիտարկենք կապի կազմակերպումը տարբեր իրավիճակներում:

Տեղեկատվահաղորդակցության կազմակերպումը խաղաղ ժամանակ

Խաղաղ պայմաններում տեղեկատվահեռահաղորդակցությունը կազմակերպելու դեպքում զորքերի կառավարման կետերի, հետևաբար՝ նաև կապի հանգույցների տեղակայման վայրերը հիմնականում լինում են նախապես որոշված: Այստեղ անհրաժեշտ է ունենալ արագագործ կապի՝ տվյալների հաղորդման ցանցեր, որոնք կապահովեն ցանցին նոր օգտագործողների արագ միացում, արտաքին հարձակումներից ցանցերի պաշտպանվածություն:

Խաղաղ ժամանակ հաճախ որպես լրացուցիչ օգտագործվում են քաղաքացիական ֆիքսված և շարժական (մոբիլ) կապի համակարգերն ու միջոցները: Այս առումով առաջարկվում է ունենալ ճկուն համակցման միջոցներ, որոնք

[*] Սույն հոդվածը տպագրման ներկայացնելու պահին Ֆ. Պ. Սոլոմոնյանը զբաղեցրել է ՀՀ ՋՈՒ-ի Կապի և ԱԿՀ վարչության պետի տեղակալի պաշտոնը:

հնարավորություն կտան համատեղելու հատուկ և քաղաքացիական կառույցների ու տեխնիկայի օգտագործումը:

Տարբեր պատկանելության ցանցերի օգտագործումը առաջադրում է նոր խնդիրներ՝ կապված տեղեկատվության անվտանգության ապահովման հետ:

Ջուգահեռաբար գործում են մի քանի տիպի ցանցեր, ընդսմին ամեն մեկը ծառայում է ուրույն նպատակի. մեկը՝ ձայնային կապի համար, մյուսը՝ տվյալների հաղորդման, երրորդը՝ ահազանգման: Որպես կանոն, ամեն մի զորատեսակ ունենում է իր կապի համակարգը, որը այս կամ այն ձևով մտնում է բանակի աստիճանակարգության մեջ: Տեսողական, ձայնային և թվային տեղեկույթի ինտեգրումը այսօրվա հրամայականն է, որը պահանջում է ներդրել արագագործ թվային կապի տեխնոլոգիաներ և ինտեգրված կոմուտացիոն սարքավորանք: Դա հնարավորություն կտա միմյանց միացնելու տարբեր սկզբունքով աշխատող համակարգեր, անհրաժեշտության դեպքում թվայնացնել, ղեկավարել ռադիոկապը, գաղտնագրել, արխիվացնել տվյալների փոխանցումը, իսկ թվային հաղորդման մեջ ինտեգրել տեսաձայնաթվային տվյալներ, ինչպես նաև ՋՍՄ *(GSM)* կապ[1]: Վերջինս պատկերված է նկ. 1-ում:

Իր հատուկ տեղն ու նշանակությունը ունի գաղտնագրման և թաքնագրման տեխնիկայի օգտագործումը: Ընդսմին ոչ ավանդական մեխանիզմների և ծրագրային ապահովման օգտագործումը հնարավորություն է տալիս մեծացնելու դրանց արդյունավետությունը:

Նույնիսկ խաղաղ պայմաններում կապը պետք է հասցվի ամեն մի զինվորի, որին այդ նպատակով տրամադրվում է հատուկ թվային, «անվանական» ցանցային ռադիոհեռախոս: Նոր ցանցային տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն է տալիս դրան հասնելու բավական պարզ ձևերով: Այս եղանակով ոչ միայն կբարձրանա զորամասերի կառավարելիության մակարդակը, այլև հնարավորություն կստեղծվի վերահսկելու ամեն մի զինվորի գտնվելու վայրը և ըստ այդմ ապահովելու ծառայության անվտանգությունը:

Նշված հնարավորությունը կօգտագործվի նաև պատերազմական վիճակում, որը էլ ավելի կարևորված կլինի:

Տեղեկատվահեռահաղորդակցության կազմակերպումը պատերազմական պայմաններում

Ինչպես արդեն վերը նշվել էր՝ պատերազմական պայմանների առանձնահատկությունը իրավիճակի արագ փոփոխումն է, որը հանգեցնում է կառավարման ամբողջ համակարգի կառուցվածքի արագ դինամիկ փոփոխման, իսկ դա իր հերթին հանգեցնում է մի շարք խնդիրների լուծման անհրաժեշտության: Դրանցից են՝

– տվյալների հաղորդման ապահովում կառուցվածքի դինամիկ փոփոխման ընթացքում,


– կապի հանգույցների օպերատիվ բացազատում և հավաքում՝ դինամիկ փոփոխությունների համար անհրաժեշտ ժամանակի կրճատմամբ,

[1] Տես «Yerevan Telecommunication Research Institute» կայքը (www.yetri.am):

– ինտեգրված տվյալների հաղորդման համար անհրաժեշտ արագության ապահովում,

– տեղեկատվության անվտանգության կազմակերպման համար տարբեր մեթոդների կիրառման ապահովում,


– տարբեր տիպի և տարբեր սկզբունքով աշխատող ցանցերի համակցում:



ա)



ԱՀԿ-100



բ)


Նկ. 1. Թվային կապի կազմակերպում

ա) Ինտեգրող կոմուտատորի ֆունկցիոնալ կառուցվածքը. ԻԿՀ՝ ինտեգրող կոմուտացիոն համակարգ (ISC), ՀՕՀՑ՝ հասարակական օգտագործման հեռախոսային ցանց (TFOP), ՀՀԿ՝ համակողմանի հաջորդական կապուղի (USB), ՀՀՑ՝ համընդհանուր հաշվողական ցանց (WAN), ԳԲՀ՝ գերբարձրհաճախականային (VHF), ԳԿԱ՝ գերկարճալիք (UHF)

բ) ԱՀԿ-100-ի արտաքին տեսքը և օգտագործման տարբերակները. ՋՍՄ ԱԿ՝ ՋՍՄ անցման կարգավորիչ, ԱՀ՝ անհատական համակարգիչ, ՏԿ՝ տեղային կառավարում, ՀԿ՝ հեռակառավարում, ԹՀ՝ թվային հեռախոս, SU՝ տերմինալ

Թվային ցանցերում դրանց կառուցվածքի դինամիկ փոփոխությունը հանգեցնում է տվյալների հոսքերի երթուղավորման համապատասխան կազմակերպման անհրաժեշտության:

Նման ցանցերի կառուցվածքը պետք է հնարավորություն տա անկախ ստեղծված իրավիճակից ապահովելու տեղեկույթի տեղափոխումը դեպի պահանջվող կետը[2]: Ջինված ուժերում հիմնականում կիրառվում է նկ. 2ա-ում բերված կառուցվածքը:



Նկ. 2. Ցանցային ռադիոկապի կազմակերպում

ա) Ցանցի աստղաձև կառուցվածքը. ՏՀՑ՝ Տեղային հաշվողական ցանցեր (LAN), ՌՄ՝ ռադիոմոդեմ, ԿԿ՝ կառավարման կետ

բ) «Էթերնետ» ճարտարապետությամբ ռադիոցանցի կառուցվածքը. ԲԿ՝ բաժանորդային կայան


Կարող է օգտագործվել նաև, այսպես կոչված, արագագործ «Էթերնետ» *(Ethernet)* ռադիոցանցը (նկ. 2բ), որի ճիշտ կազմակերպման դեպքում կարելի է հասնել բավականին բարձր ցուցանիշների: Թերությունն այն է, որ մեծ արագություններ ստանալու համար պետք է օգտագործվեն գերկարճալիք (ԳԿԱ) և գերբարձր հաճախականությունների (ԳԲՀ) տիրույթները, ինչի համար պահանջվում է ուղիղ տեսանելիություն, որը լեռնային պայմաններում դժվար է ապահովել:

Ամենատարածված կառուցվածքը, որը հնարավորություն է տալիս ապահովելու մեծ հուսալիություն, երկօղակային կառուցվածքով ցանցն է, որտեղ օղակում գտնվող տեղեկութային կենտրոնները իրենց անմիջական երկու հարևան-

[2] Տես *M. V. Markosyan.* Increasing the defense of C3 systems in based on adaptive structure of range wireless LAN. CSIT Proceedings of the conference «Computer Science and Information Technologies». Yerevan, 2005, PP. 572–574:

ների հետ կապված են տվյալների հաղորդման՝ երկու տարբեր ուղղություն ունեցող կապուղիներով (նկ. 3ա)[3]:

Ընդհանուր կառուցվածքը բերված է նկ. 3բ-ում: Այն հնարավորություն է տալիս ապահովելու ցանցի անխափան աշխատանքը և՛ կապուղիների որոշակի հատվածի, և՛ հանգույցի շարքից դուրս գալու դեպքում (նկ. 3):



ա) բ)

Նկ. 3. Ցանցային կապի կազմակերպում

ա) Երկօղականի ցանցի հուսալիության ապահովման ձևը

բ) Օղակածև ռադիոցանցի կառուցվածքը


Բայց նման ցանցերի ստեղծումը բավական ծախսատար է, և այդ առումով նպատակահարմար է օգտվել տարբեր տիպերի գործող քաղաքացիական ցանցերի ծառայություններից:

Մարտական գործողությունների ժամանակ կա հավանականություն, որ հակառակորդը կփորձի վերացնել բոլոր հանգուցային կետերը: Դրա համար նման կետերը պետք է ունենան իրենց պաշտպանությունը՝ ընդհուպ մինչև հակաօդային:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է ունենալ պահուստային կապի միջոցներ, այդ թվում՝ շարժական: Օրինակ՝ նկ. 4-ում պատկերված է արագ բացազատվող ինտեգրված համակարգ, որը հնարավորություն կտա վերականգնելու կամ ստեղծելու լրացուցիչ մագիստրալային կապուղիներ:

Բացի մագիստրալային կապուղիներից, պակաս դեր չեն խաղում նաև զորամիավորումներում և գնդերում տեղեկույթի փոխանակման միջոցները: Խաղաղ պայմաններում դա կարող է կատարվել լայն կիրառության ստացող օպտիկամանրաթելային մալուխների, իսկ որոշ տեղերում՝ շարժական ռադիոկապի միջոցով: Պատերազմական իրավիճակում կարելի է օգտագործել ճկուն,

[3] Տես *М. В. Маркосян, К. А. Саакян.* Кольцевые сети как основа цифровой сети с интегральным обслуживанием. Тезисы докладов 3-ей международной научно-технической конференции «Микроэлектроника и автоматика». М., 1997, сс. 77–78; *М. В. Маркосян.* Сравнительный анализ возможных структур и организации вычислительных процессов вычислительных сетей на базе радиоканалов связи. «Информационные Технологии и Управление». Сборник статей, т. 2. Е., 1998, сс. 136–140:



Նկ. 4. Արագ բացազատվող ինտեգրված համակարգ

շարժական հեռահաղորդակցական միջոցներով հագեցած հրամանատարական կետեր, որոնք ունեն ցանկացած տիպի կապ ապահովելու կարողություն՝ կատարելով նաև տեղեկութային հոսքերի երթուղավորում (նկ. 5):



Նկ. 5. Շարժական հրամանատվական կետ՝
տեղեկութային հոսքերի երթուղավորման հնարավորությամբ

Այժմ անցնենք կապի մի այլ շատ կարևոր օղակի դիտարկմանը. այն պետք է հնարավորություն ընձեռի ապահովելու կապը մինչև վաշտ, դասակ, ջոկ և յուրաքանչյուր զինվորի հետ:

Այստեղ գործ ունենք և՛ լարային, և՛ ռադիո միջոցների հետ: Այսօր դրանք հիմնականում անալոգային են, չունեն մեծ թողունակություն[4]:

Միանգամից թվայինի անցումը կապված է էական ծախսերի հետ: Այդ առումով լուծում կարող է լինել ինտեգրված դաշտային կոմուտատորների կիրա-


[4] Տես «Yerevan Telecommunication Research Institute» կայքը (www.yetri.am):

ռումը, որոնք հնարավորություն են տալիս օգտագործելու և՛ ինտերնետ, և՛ անալոգային միջոցներ, և՛ դաշտային Այ Փի *(IP)* հեռախոսներ, և՛ համակարգչային տերմինալներ, և՛ թվային ռադիոկայաններ: Հեռախոսները կոմուտատորին են միանում դաշտային լարերով:

Նման կոմուտատորը, բացի «Էթերնետ» մուտքից, պետք է ունենա նաև ռադիոմուտքի կետ *(Access point),* որով այն ստանում է ռադիոկապով ինտերնետին միանալու հնարավորություն: Այդ դեպքում զինված ուժերում կարելի կլինի լայնորեն կիրառել պլանշերային համակարգիչներ՝ դրանց ընձեռած բոլոր հնարավորություններով հանդերձ, այդ թվում՝ քարտեզի, տեղում կողմնորոշվելու միջոցների *(GPS, GLONASS)* օգտագործմամբ:

Դիցուք մարտադաշտի խորությունը չի գերազանցում 30-40 կմ-ը: Դա նշանակում է, որ պետք է ունենալ տվյալների հաղորդման ռադիոցանցային դյուրակիր մոդեմներ և դրանց համապատասխան կրկնիչներ: Նման պայմաններում հնարավոր է օգտագործել Վայ Մաքս (*Wi Max)* ստանդարտը, որը կարող է ապահովել ավելի մեծ ծածկույթ: Կարելի է օգտագործել նաև Վայ Ֆայ (*WiFi*) ստանդարտը՝ էժան կրկնիչների թվի ավելացմամբ, դրանք կարելի կլինի բառիս բուն իմաստով սփռել բավականին մեծ տարածքով և ապահովել համապատասխան ալիքներով լավ ծածկույթ: Կրկնիչներն ունեն սնման աղբյուրներ, որոնք սովորաբար նախատեսված են լինում 24-ժամյա աշխատանքի համար, իսկ որոշ կրկնիչներ կարելի է համալրել արևային մարտկոցներով և համապատասխան լիցքավորման սարքավորանքով՝ վերահաղորդման սպասարկման կետեր կազմակերպելու համար: Ընդսմին պետք չէ վախենալ, որ դրանք կարող են ընկնել հակառակորդի ձեռքը, քանի որ էժան են և չեն կարող օգտագործվել որևէ նպատակով, քանի որ տեղեկատվության անվտանգությունը ապահովվում է ավելի բարձր ցանցային մակարդակով:

Այս դեպքում պետք է լուծվեն նաև դինամիկ երթուղավորման կազմակերպման հարցերը, ինչը հնարավորություն կտա համաձայնեցնելու ընդհանուր ցանցի կառուցվածքի արագ փոփոխումն ըստ իրավիճակի և ապահովելու տվյալների հաղորդման անխափանությունը (նկ. 6):




Նկ. 6. Դաշտային թվային ռադիոցանցի կազմակերպման կառուցվածքը

Պատերազմական գործողությունների կառավարման համար շատ կարևոր է ստանալ նաև տեսողական տեղեկույթ, ինչը հնարավոր է նման ցանցը համապատասխան տեսողական տվիչներով օժտելու դեպքում: Այդպիսի տվիչ կարող է տեղադրված լինել զինվորների հանդերձանքում ներառված համալիր պաշտպանիչ գլխարկին: Դա հնարավորություն կտա տեսողական տեղեկույթը հավաքելու անմիջականորեն տեղերից և համապատասխան սերվերների միջոցով հաղորդելու կառավարման կետեր՝ որոշում ընդունելու համար (նկ. 7):



Նկ. 7. Հաղորդակցման միջոցներով օժտված հանդերձանք

Մարտական գործողությունների արդյունավետ կառավարման համար կարևոր նշանակություն ունի տեղեկույթ հավաքելն ու ժամանակին տեղ հասցնելը: Որպես օրինակ կարող է դիտարկվել տվիչների ցանցը (նկ. 8):



Նկ. 8. Մարտական գործողությունների ղեկավարման տվիչների ինֆորմացիոն ցանցի օրինակ

Նման գործողությունների և ֆունկցիաների ապահովման համար մարտական գործողությունների շրջանում պետք է առկա լինեն հետևյալ գլխավոր բաղադրիչները.

– հրետանի՝ հրամանների կատարման, ղեկավարման, հաղորդակցական և կրակի կառավարման ֆունկցիաներով,

– տվիչներ, ներառված առաջապահ մեխանիզացված դիտորդներ (հետախույզներ՝ ԱՄԴ-),

– հրետանու ուղեցույցներ, երկնազննման առաջապահ ռադարներ, հրետանու տեղորոշման ռադարներ, անօդաչու թռչող ապարատներ և այլն,

– տվիչներից ստացվող տեղեկույթի հիման վրա կրակային աջակցության համադասման կենտրոններ,


– կրակի բաշխման կենտրոններ,

– տարատեսակ զենքեր:

Այստեղ նպատակահարմար է օգտագործել պաշտպանված կապի միջոցներ, օրինակ՝ հաճախականության արագ փոփոխմամբ կամ լայնաշերտ թվային ռադիոկայաններ, որոնցում կապուղիների բաժանումը կոդային է *(CDMA)*, և որոնք հնարավորություն են տալիս ապահովելու հուսալի և խլացումից (գործնականում) ավելի ապահով կապուղիներ[5]:

Որպես օրինակ կարող ենք նշել Ռ-Մ300 մոդեմը (նկ. 9):

Զինվորների տերմինալները պետք է օժտված լինեն, ձայնայինից բացի, նաև տեքստային տեղեկույթ հաղորդելու կարողությամբ:



Նկ. 9. Կապի կազմակերպումը ռադիոմոդեմի միջոցով

Նշված միջոցները չեն բացառում առանձին զորատեսակների համար կիրառվող կապի միջոցների օգտագործումը:

Այսպիսով՝ հարկ է մեկ անգամ ևս շեշտել, որ կապը զորքերի կառավարման «նյարդային» համակարգն է, ուստի այն պետք է լինի հնարավորինս ճկուն և պաշտպանված հակառակորդի ներգործությունից: Իսկ դա նշանակում է, որ անվտանգության ապահովման համար անգամ ստանդարտ (այն էլ՝ օտարերկրյա արտադրության) միջոցների կիրառման դեպքում դրանք պետք է տեղում փոփոխվեն՝ պաշտպանվածության աստիճանը մեծացնելու համար, ինչը միանգամայն հնարավոր է, եթե հաշվի առնենք, որ ՀՀ-ում կա համապատասխան գիտատեխնիկական, ներառյալ՝ կադրային, բազա:

[5] Տես *М. В. Маркосян, Г. В. Бадалян, Г. А. Чаликян.* Широкополосная система связи на базе акустоэлектронного конвольвера. Тезисы докладов 3-ей международной научно-технической конференции «Микроэлектроника и автоматика», сс. 75–76; *М. В. Маркосян, Г. А. Чаликян, Г. В. Бадалян, Г. В. Симонян.* Метод передачи данных. Патент Республики Армения No P20010048, 09.04.2001:

ВОЗМОЖНЫЙ ВАРИАНТ ОРГАНИЗАЦИИ СВЯЗИ В ВООРУЖЕННЫХ СИЛАХ

М. В. МАРКОСЯН, доктор технических наук, директор ЗАО «Ереванский научно-исследовательский институт средств связи», заведующий кафедрой информатики, вычислительной техники и систем управления ЕГАСУ, Ф. П. СОЛОМОНЯН, полковник запаса

РЕЗЮМЕ

Рассмотрены вопросы организации связи, приведены методы, которые позволяют организовать динамическое изменение структуры связи и обеспечивать гибкую реорганизацию средств сбора и передачи интегрированных данных. Предлагается ряд технических решений, обеспечивающих интеграцию различных средств и типов данных. С учетом необходимости обеспечения высокой защищенности средств связи от целенаправленного воздействия противника предлагается соответствующим образом модифицировать стандартные технические устройства, для чего в РА есть научно-техническая, в том числе кадровая, база.

AN OPTION FOR ORGANIZING COMMUNICATION IN THE ARMED FORCES

M. V. MARKOSYAN, Doctor of Engineering, Director of «Yerevan Telecommunication Research Institute» Closed Corporation, Head of the Chair of Informatics, Computer Science and Control Systems, YSUAC, F. P. SOLOMONYAN, Reserve Colonel

SUMMARY

The article addresses the problems of communication organization, puts forward methods making it possible to streamline dynamic changes in the structure of communication and to provide flexible reorganization of the means of collecting and transmitting integrated data. A number of technical means is proposed to ensure the integration of different tools and types of data. Given the need to ensure tight security of communications against the enemy's targeted impact it is suggested appropriately modifying the standard technical devices for which there is a scientific and technical, as well as personnel facilities in the RA.

ՕՊՏԻԿԱԿԱՆ ԵՎ ՕՊՏԻԿԱԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԵՎ ԴՐԱՆՑ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ. Ա. ՇԱԴՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ ռազմաարդյունաբերական վարչության պետ, Ա. Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆ, տեխնիկական գիտությունների թեկնածու, «Երևանի օպտիկաֆիզիկական չափումների գիտահետազոտական ինստիտուտ» ՓԲԸ-ի տնօրեն, Գ. Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ, «Մարտ» ՍՊԸ-ի տնօրեն, Տ. Կ. ԴԱԴԱԼՅԱՆ, «Մարտ» ՍՊԸ-ի կրտսեր ինժեներ

Օպտիկական և օպտիկաէլեկտրոնային համակարգերը (ՕՕԷՀ-ներ)՝ որպես սպառազինության և ռազմական տեխնիկայի (ՍՌՏ) բաղկացուցիչ մաս, լայն կիրառություն ունեն բոլոր զարգացած երկրների բանակներում: Ընդ որում, այդ համակարգերը մշտապես կատարելագործվում են՝ ապահովելով հարձակողական ու պաշտպանական համակարգերի մեծ արդյունավետությունը: Դրանք, մասնավորապես, կիրառվում են հակառակորդի նշանակետերի հայտնաբերման, ելակետային տվյալների ճշտման ու հաղորդման, յուրային խոցիչ միջոցների ուղղորդման, անձնակազմի պաշտպանվածության ապահովման և այլ նպատակներով: Այս ոլորտի հետագա զարգացումը նոր հնարավորություններ է ստեղծում ինչպես գոյություն ունեցող համակարգերի արմատական արդիականացման, այնպես էլ նոր կառուցվածքային մոտեցումների ու սկզբունքների կիրառմամբ համաշխարհային չափանիշներին բավարարող նմուշների մշակման ու արտադրության համար, քանի որ ՕՕԷՀ-ներն իրենց ուրույն տեղն ունեն և՛ որպես ինքնուրույն համալիրներ ու սարքեր, և՛ որպես ՍՌՏ համալրող մասեր:

Հայաստանում անկախության ձեռքբերումից հետո ևս շարունակեցին գործել օպտիկաէլեկտրոնային, մասնավորապես՝ լազերային, ոլորտի մի շարք կազմակերպություններ, որոնք խորհրդային տարիներին հասել էին որոշակի հաջողությունների: Դրանք պահպանել և զարգացնում են արտաքին տնտեսական համագործակցությունը, ինչը նախադրյալներ է ստեղծում, որպեսզի հայրենական ձեռնարկությունները հեռանկարային ծրագրերի մշակման և իրականացման միջոցով հետ չմնան առաջատար երկրներում այդ ոլորտի զարգացման տեմպերից: Այսօր այդ կազմակերպությունների որակյալ ինժեներատեխնիկական աշխատակազմերն իրենց գիտելիքն ու փորձն են փոխանցում երիտասարդ սերունդներին:

Նորանկախ Հայաստանի Զինված ուժերում խորհրդային բանակից մնացած ՕՕԷՀ-ների ու սարքերի նորոգման հետ մեկտեղ ոլորտի ձեռնարկություններն սկսեցին մշակել հայրենական արտադրատեսակներ: Դրանցից առաջինը հրաձգային զենքերի, հրետանու և ռռնականետների համար նախատեսված օպտիկական նշանառության սարքերն էին: Մինչև վերջերս արտադրվում էին նաև ջերմադիտման սարքեր՝ ստեղծված դեռ խորհրդային մշակումների հիման վրա: Սակայն ներկայումս

դրանց թողարկումը դադարեցվել է շուկայում նոր՝ ավելի լավ մարտավարատեխնիկական բնութագրերով, սարքեր հայտնվելու պատճառով:

Հայաստանում մշակվել և արտադրվում են օպտիկաէլեկտրոնային համակարգեր պինդմարմնային լազերների կիրառմամբ, այդ թվում՝

–մինչև 20 կմ հեռավորություն չափող լազերային հեռաչափներ,

–դիտման համակարգեր՝ համալրված գիշերային տեսանելիության սարքով, հեռուստախցիկներով և լազերային հեռաչափով,

–օպտիկական սարքեր՝ ներկառուցված լազերային հեռաչափերով,

–օպտիկական և լազերային համակարգեր ներառող մի շարք վարժասարքեր,

–օպտիկական նշանոցներ, և այլն:

Պաշտպանական ոլորտում ՕՕԷՀ-ների արդիականացումը կատարվում է հետևյալ հիմնական ուղղություններով:

1. Օպտիկական միջոցների ու լազերային ճառագայթման հայտնաբերման, այդ միջոցների և ճառագայթման աղբյուրների ճշգրիտ տեղորոշման, ապակողմնորոշման և նշանացուցման համակարգերի մշակում

Հակառակորդի օպտիկական միջոցների հայտնաբերումը հնարավորություն է տալիս վաղօրոք տեղորոշելու նրա ինչպես կառավարման, այնպես էլ խոցման միջոցների տեղաբաշխման կոորդինատները, քանի որ օպտիկական սարքերն ու բաղադրամասերն առկա են ինչպես ՍՌՏ կազմում, այնպես էլ անձնակազմի հանդերձանքում (հեռադիտակներ, ակնոցներ, գիշերային տեսանելիության ու ջերմադիտման սարքեր, լազերային հեռաչափներ, տարբեր նշանոցներ, լուսարձակներ և այլն): Հայտնաբերումը կատարվում է տեսածրող լազերների և ընդունիչ սարքերի միջոցով. գրանցվում է օպտիկական սարքերից անդրադարձած ճառագայթումը, երբ այն զգալիորեն գերազանցում է շրջակա միջավայրի ֆոնը: Անդրադարձած ճառագայթման գրանցման միջոցով կատարվում է նաև օպտիկական սարքերի գտնվելու վայրի ճշգրիտ տեղորոշում, ինչը հնարավորություն է տալիս անհրաժեշտ պահին խոցելու դրանք:

Լազերային ճառագայթման հայտնաբերումը և տեխնիկական բնութագրերի որոշումը հնարավորություն են տալիս պարզելու հակառակորդի կողմից կիրառվող ՍՌՏ տեսակները, անձնակազմին նախազգուշացնելու իր դեմ կիրառվող զենքերի և արձակված հրթիռների (ռումբերի) մասին և այլն: Լազերային ճառագայթման հայտնաբերման (ԼՃՀ) համակարգերը հիմնականում բաղկացած են ընդունող փոխակերպիչներից և գրանցված ազդանշանների մշակման ու անձնակազմին տեղեկացման համակարգից, ընդսմին փոխակերպիչները կարող են տեղակայվել ինչպես որոշակի անկյունային սեկտորով, այնպես էլ շրջանաձև, ինչով ապահովվում է լազերային ճառագայթման գրանցումը բոլոր հնարավոր ուղղություններով: ԼՃՀ համակարգերը հաճախ համալրվում են ապակողմնորոշման հակազդման կամ պաշտպանական համակարգերով, որոնք գործարկվում են կա՛մ ավտոմատացված եղանակով՝ ըստ ազդանշանների մշակման համակարգի ելքային հրահանգի, կա՛մ անձնակազմի կողմից՝ ըստ իրադրության:

Լազերային նշանացուցման սարքերը նախատեսված են ինքնակառավարվող հրթիռների ու ռումբերի ճշգրիտ ուղղորդման համար և ապահովում են օբյեկտների խոցման մեծ արդյունավետություն: Թռիչքի տարբեր փուլերում այդ հրթիռների ու ռումբերի կառավարումը կարող է իրագործվել ինչպես հեռակառավարման եղանակով, այնպես էլ ծրագրային՝ մինչև խոցվող օբյեկտից անդրադարձած լազերային ազդանշանի ընդունումը: Խոցվող օբյեկտի վրա լազերային ճառագայթը կարող է ուղղվել ոչ միայն հրթիռների արձակման կայանից, այլև օբյեկտի տեսանելիության գոտու ցանկացած կետից:

Լազերային ճառագայթներով հեռակառավարվող հրթիռները հիմնականում կառավարվում են արձակման համալիրներից:

2. Լազերային, հեռուստատեսային և օպտիկական նշանառության համակարգերի արդիականացում, նոր նմուշների ստեղծում

Նշանառության այս համակարգերը հիմնականում լինում են համակցված և լայնորեն կիրառվում են զրահատանկային ու հրետանային միջոցների կրակի կառավարման համար: Ընդ որում, լազերները կիրառվում են ոչ միայն մինչև խոցվող օբյեկտները եղած հեռավորությունը ճշգրտորեն չափելու, այլև դիտման արդյունավետությունը գիշերային տեսանելիության սարքերով մեծացնելու նպատակով: Հեռուստատեսային համակարգերն արդեն կիրառվում են նաև հրաձգային զենքերի նշանառության համակարգերում՝ ապահովելով կրակ վարելու ժամանակ հրաձիգների ազատ գործողությունները:

3. Գիտահետազոտական աշխատանքներ լազերային հակազգայարարական համակարգերի ստեղծման ուղղությամբ, նոր նմուշների մշակում

Հակազգայարարական լազերային համակարգերը (ՀԼՀ-ներ) նախատեսված են հակառակորդի ցամաքային և օդային միջոցների կրակի կառավարման, ուղեվարական համակարգերի, դիտման և այլ օպտիկաէլեկտրոնային սարքերի զգայարանները (ազդանշաններ ընդունող տվիչներն ու փոխակերպիչները) հայտնաբերելու և լազերային ճառագայթման ներգործությամբ շարքից հանելու համար: ՀԼՀ-ները լինում են դյուրակիր անհատական, ինչպես նաև շարժական տեխնիկական միջոցներում կամ նախապես սարքավորված ստացիոնար կետերում տեղակայվող: Համակարգերը հիմնականում բաղկացած են լինում լազերային բլոկից, դիտման և նշանառման սարքից ու տեղադրվում են հորիզոնական և ուղղաձիգ ուղղություններով պտտվող հենքի վրա: Այս համակարգերի ստեղծման ուղղությամբ արտասահմանում կատարվում են լայնածավալ հետազոտություններ. մասնավորապես, ըստ արևմտյան մամուլի հաղորդագրությունների՝ դյուրակիր անհատական լազերային զենքի երկու նմուշ փորձարկվում են ԱՄՆ-ի Թեխաս և Վիրջինիա նահանգների զորակայաններում:

Նոր գիտահետազոտական աշխատանքների ուղղություններից մեկը համաչափ շառավղային բևեռացմամբ ճառագայթում գեներող պինդմարմնային լազերների ստեղծումն է: Ի դեպ, դրա համար անհրաժեշտ է ստանալ ներռեզոնատորային բևեռացում, ինչը պահանջում է օպտիկական տարրերի և ռեզոնատորների պատրաստ-

ման հնարավորությունների ուսումնասիրում: Այս տիպի լազերների ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դրանց ճառագայթման կիրառման դեպքում նյութերի քայքայման շեմը մի քանի անգամ ավելի ցածր է, քան սովորական լազերային ճառագայթման ներգործության ժամանակ: Այս երևույթը նախադրյալներ է ստեղծում ավելի արդյունավետ հակազգայարարական լազերային համակարգերի մշակման համար:



Հետախուզության և կրակի կառավարման օպտիկաէլեկտրոնային համակարգ

Մագնիսամակածային մղմամբ լազերների ստեղծման ուղղությամբ հայ մասնագետների կողմից վերջին տարիներին կատարված ուսումնասիրությունների շնորհիվ այդ լազերներն արդյունավետ կիրառություն ստացան ոչ միայն պաշտպանական բնագավառում, այլև արդյունաբերության զանազան ճյուղերում: Այս տիպի լազերների առավելությունն այն է, որ դրանք չունեն էլեկտրոդներ, օժտված են շահագործման մեծ ռեսուրսով, արագագործությամբ, գեներում են գերկարճ իմպուլսներ և հզոր ճառագայթում՝ ի հաշիվ մեծ ՕԳԳ-ի:

4. Հրետանային խնդիրների լուծման նոր սերնդի ավտոմատացված համակարգերի մշակում

Այս համակարգերը նախատեսված են գործելու ինքնակառավարմամբ և կրակի կառավարման ավտոմատացված համալիրի կազմում: Համակարգերն ունեն հեռակառավարման հնարավորություն և ապահովում են տեղանքի զննում, ցերեկային և թույլ լուսավորության պայմաններում նշանակետերի հայտնաբերում և առանձնացում, ինչպես նաև դրանց հեռավորության և անկյունային կոորդինատների որոշում: Համակարգերում ներառված համակարգչի միջոցով կատարվում են նշանակետերի խոցման համար անհրաժեշտ հաշվարկումներ:

Նոր սերնդի օպտիկաէլեկտրոնային սարքերը ապահովում են հրետանային

զորքերի ստորաբաժանումների կրակի կառավարման և խոցման մեծ արդյունավետություն, արագացնում, պարզեցնում և ավելի նպատակահարմար դարձնում նշանակետերի բաշխումն ըստ ստորաբաժանումների կրակի (խոցման) գոտիների:

Հրետանու տեղակայման և կրակի կառավարման, հետախույզների դիրքերի կոորդինատների որոշման գործում մեծ է հրետանային կողմնացույց-անկյունաչափի (բուսոլ) դերը: Խորհրդային ժամանակներում մշակված և ներկայումս էլ օգտագործվող ՊԱՔ-2Մ կողմնացույց-անկյունաչափի համեմատությամբ Հայաստանում մշակված նոր սարքն ավելի թեթև է (ներառյալ՝ եռոտանու քաշը), անկյունների չափման միջին սխալը մոտ 2 անգամ փոքր է և, ի տարբերություն իր նախորդից, ուղղաձիգ ու հորիզոնական հարթություններում շարժվում է ինչպես էլեկտրամեխանիկական եղանակով՝ էլեկտրաշարժաբերների միջոցով:

5. Թռչող օբյեկտների ուղեկցման պասիվ օպտիկաէլեկտրոնային համակարգերի մշակում

ՀՕՊ-ի զենիթահրթիռային բոլոր կայանները համալրված են հեռուստաօպտիկական սարքով, որը հնարավորություն է ընձեռում ցերեկային պայմաններում կատարելու նշանակետերի ուղեկցում անկյունային կոորդինատներով: Այս սարքի արդիականացումը թույլ լուսավորության պայմաններում կապահովի ավելի բարձր հուսալիություն և պատկերի հստակություն:

Նշանակետերի պասիվ ուղեկցման միջոցներից է նաև ինֆրակարմիր տիրույթում աշխատող համակարգը՝ այսպես կոչված նշանակետի համադասողը, որի հետ համակցված լազերային հեռաչափը հնարավորություն կունենա մինչև 20 կմ հեռավորության վրա իրականացնելու պասիվ ուղեկցում:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի նաև պասիվ ուղեկցման և հակազգայարարական համակարգերի համատեղ կիրառումը, հատկապես՝ ինքնակառավարվող հրթիռների և ռումբերի դեմ պայքարում:

6. Տարածքների և օբյեկտների զննման, սահմանի խախտումների գրանցման ուահազանգման համակարգերի արդիականացում

Սահմանների հսկողության համակարգերի գերակշիռ մասը ներառում է օպտիկաէլեկտրոնային սարքեր, որոնք կարող են, խախտումները գրանցելուց բացի, հակազդող ավտոմատ գործողություններ կատարել սահմանախախտների դեմ:

Այս հեռակառավարվող համակարգերը հիմնականում համակցված են՝ ունեն ցերեկային, գիշերային ու ջերմային տեսախցիկներ և օպերատորի՝ կառավարման վահանակ, որը տեղադրվում է դիտման կետում և մալուխներով միանում տեսախցիկներին: Դիտումը կատարում է օպերատորը, որը հնարավորություն ունի տեսախցիկներն ուղղելու դեպի հետաքրքրող օբյեկտներ, փոխելու տեսանելիության դաշտը, ինչպես նաև համեմատելու օբյեկտների նոր և նախկին պատկերները: Այս ուղղությամբ կատարվող հետազոտությունները հանգեցնում են այսպես կոչված ինտելեկտուալ և հեռակառավարվող համակարգերի ստեղծմանը, համակարգեր, որոնք արգելված գոտիներում օբյեկտներ հայտնվելու դեպքում, համաձայն ծրագրային ապահովման կամ կառավարման կետից լրացուցիչ հրահանգի, կիրառում են ուղղորդված խոցում-

ներ: Որոշ դեպքերում կիրառվում են նաև այնպիսի հակազդող միջոցներ, որոնք սահմանախախտներին ժամանակավորապես թույլ չեն տալիս կողմնորոշվել տարածության մեջ: Այս ոլորտում մեծ կիրառություն ունեն ինֆրակարմիր տիրույթի պասիվ համակարգերը:

7. Ռիսկայնության գործոններ՝ լազերային ռադարների ստեղծման ուղղությամբ

Հայտնաբերման և ուղեկցման ռադիոտեղորոշումային համակարգերին զուգահեռաբար փոքր հեռավորությունների տիրույթում լայնորեն կիրառվում են լազերային ռադարները (լիդարներ):

Լիդարների զարգացումն ընթանում է հիմնականում մի քանի ուղղություններով՝

–միակապուղի հայտնաբերող լիդարներ, որոնց միջոցով կատարվում է օբյեկտների կետային հայտնաբերում և տեղորոշում,

–մեծ թողունակությամբ պատկերային (ռաստրային) լիդարներ, որոնք հնարավորություն են տալիս ձևավորելու օբյեկտների պատկերները և կատարելու դրանց նույնականացում,

–մթնոլորտի հեռավոր զննման լիդարներ, որոնց միջոցով կատարվում է շրջակա միջավայրի վիճակի օպերատիվ հսկողություն և որոշվում է գազերի առկայությունը:

Միանգամայն հասկանալի է, որ ռադիո- և լազերային տեղորոշումային համակարգերը լրացնում են միմյանց, իսկ պատկերային լիդարների զարգացումը բավական հեռանկարային է:

Այս ուղղություններով կատարվող գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների (ԳՀՓԿԱ-ներ) մեծ արդյունավետություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է համադասել ոլորտի մասնագիտացված ձեռնարկությունների սերտ համագործակցությունը: Օպտիկական և օպտիկաէլեկտրոնային ոլորտի ձեռնարկությունների զարգացման համար անհրաժեշտ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել հետևյալ հարցերի լուծմանը.

1. արագացնել ժամանակակից տեխնիկական և տեխնոլոգիական միջոցներով ձեռնարկությունների վերազինման տեմպերը, մասնավորապես, հետևյալ ոլորտներում՝

–օպտիկա, այդ թվում նաև լազերային բաղադրատարրեր,

–ճշգրիտ մեքենաշինություն և էլեկտրամեխանիկա,

–օպտիկաֆիզիկական չափումներ,

–փորձարկումների կազմակերպում,

2. ապահովել ոլորտում երիտասարդ կադրերի որակավորման և մասնագիտացման բարձր մակարդակ, քանի որ այժմ կա միջին տարիքի որակյալ կադրերի պակաս (այդ թվում՝ մասնագետ բանվորների), ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջին տասնհինգ տարիների ընթացքում խորհրդային ժամանակաշրջանում ձևավորված ավագ և այսօրվա երիտասարդ սերունդների միջև խզում է առաջացել,

3. գերակա խնդիրներից մեկը համարելով ոլորտի գիտատեխնիկական մակարդակի պահպանումը և զարգացումը՝ այդ ուղղությամբ մշակել և իրականացնել համակարգված քաղաքականություն՝ շահագրգիռ կառույցների մասնակցությամբ,

4. պայմաններ ստեղծել, որպեսզի ոլորտի ձեռնարկությունները դառնան ներդրումների համար ավելի գրավիչ՝ արտաքին շուկայում մրցունակ հայրենական օպտիկական ու օպտիկաէլեկտրոնային (լազերային) բաղադրատարրերի ու սարքերի արտադրությունը ավելի շահութաբեր դարձնելու համար:

ОПТИЧЕСКИЕ И ОПТОЭЛЕКТРОННЫЕ СИСТЕМЫ В ОБОРОННОЙ СФЕРЕ И ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ ИХ РАЗВИТИЯ

П. А. ШАДЯН, полковник, начальник Военно-промышленного управления МО РА,
А. О. ВАРДАНЯН, кандидат технических наук, директор ЗАО «Ереванский научно-исследовательский институт оптико-физических измерений»,
Г. С. ГЕВОРКЯН, директор ООО «Март»,
Т. К. ДАДАЛЯН, младший инженер ООО «Март»

РЕЗЮМЕ

Оптические и оптоэлектронные системы как составные части В и ВТ, а также в качестве самостоятельных изделий, состоят на вооружении армий всех развитых стран мира.

Параллельно с ремонтом и восстановлением оптических и оптоэлектронных систем советского производства, за годы независимости в Армении производились приборы собственной разработки, в частности, оптические прицелы для стрелкового оружия, артиллерии и гранатометов. На базе твердотельных лазеров собственной разработки в Армении производились: дальномеры; системы наблюдения и разведки, оснащенные приборами ночного видения, телекамерами и лазерными дальномерами; лазерные комплексы для поражения оптических систем противника; различные тренажеры с применением оптических (лазерных) систем.

В настоящее время основными направлениями модернизации оптических и оптоэлектронных систем в оборонной сфере являются: разработка систем обнаружения и определения координат оптических приборов и источников лазерного излучения, систем противодействия оптоэлектронным средствам, нового поколения систем управления артиллерийским огнем, пассивных оптоэлектронных систем сопровождения летающих объектов, лазерных радаров (лидаров) и др.

Для обеспечения высокой эффективности НИОКР в этих направлениях необходимо обеспечить решение таких задач, как: ускорение технического переоснащения предприятий профиля современным оборудованием и контрольно-измерительными приборами, подготовка молодых кадров высокой квалификации и обеспечение естественной смены поколений научно-технических кадров с сохранением существующего с советских времен высокого интеллектуального потенциала, повышение научно-технического уровня работ и создание благоприятных условий для привлечения инвестиций.

Развитие оптической и оптоэлектронной областей, разработка и производство новых систем, улучшающих ТТХ В и ВТ, относятся к ряду приоритетных задач военно-промышленного комплекса РА.

OPTICAL AND OPTOELECTRONIC SYSTEMS IN THE DEFENSE SPHERE AND PRINCIPAL DIRECTIONS OF THEIR DEVELOPMENT

P. A. SHADYAN, Colonel, Chief of the Military-Industrial Board of the MoD, RA,
A. H. VARDANYAN, Candidate of Technical Sciences, Director of «Yerevan Scientific-Research Institute of Opto-Physical Measurements», CJSC,
G. S. GEVORKYAN, Director of «Mart», LLC,
T. K. DADALYAN, Junior Engineer of «Mart», LLC

SUMMARY

Optical and optoelectronic systems as constituents of the Armament and Defense Technology, and as independent products, are at arming of the armed forces of all the world developed countries.

Parallel with the repair and restoration of optical and optoelectronic systems of the Soviet production, devices of internal elaboration, particularly, telescopic sights for small arms, artillery and grenade launchers were manufactured in the years of independence in Armenia. On the basis of solid-state lasers of internal elaboration there were rangefinders; systems of observation and reconnaissance equipped with devices of night vision, television cameras and laser rangefinders; laser complexes for affecting the opponent's optical system; various simulators with the application of optical (laser) systems produced in Armenia.

At present the principal directions of modernizing optical and optoelectronic systems in the defense sphere are: elaboration of systems of coordinates detection and determination of optical devices and sources of laser radiation, systems counteracting the optoelectronic means, new generation systems of gunfire control, passive optoelectronic systems tracking flying objects, laser radars (lidars), etc.

To ensure high efficiency of R&D in these directions it is necessary to guarantee the solution to such problems as: acceleration of technical reequipment of the profile enterprises with modern equipment and gages, training of highly qualified young specialists and ensuring natural change of generations of scientific-technical staff preserving the high intellectual potential, existing from the Soviet times, increase of scientific-technical level of work and creation of favourable conditions to attract investments.

The development of optical and optoelectronic spheres, elaboration and production of new systems, improving performance characteristics of the Armament and Defense Technology, concern a number of priority problems of the RA Military-Industrial Complex.

ՆԱՆՈՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Ս. Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուս-հայկական (Սլավոնական) պետական համալսարանի ֆիզիկատեխնիկական ֆակուլտետի դեկան

Նանոտեխնոլոգիա բառը համեմատաբար նոր է՝ առաջին անգամ այն օգտագործվել է 1974 թ. ճապոնացի գիտնական Տանիգուչիի կողմից[1]: Սակայն այսօր այն ոչ միայն ունի լայն տարածում, այլև տարբեր, հաճախ ոչ ճշգրիտ մեկնաբանումներ: ՈՒստի և նպատակահարմար է սկսել նանոտեխնոլոգիայի սահմանումից:

«Նանո» նախածանցը ընդհանուր առմամբ նշանակում է ինչ-որ մեծության մեկ միլիարդերորդական (10^{-9}) մաս: Նանոտեխնոլոգիաները գործ ունեն նյութի տարաբնույթ կառուցվածքների հետ, որոնց բնութագրական չափերը մետրի միլիարդերորդականի (10^{-9} մ=1 նմ) կարգի են: Նանոտեխնոլոգիան կարելի է սահմանել որպես գիտության մի բնագավառ, որը ներառում է հետևյալ ուղղությունները[2].

– ատոմական, մոլեկուլային կամ մակրոմոլեկուլային մակարդակում (1÷100 նմ չափերի տիրույթում) կատարվող գիտական հետազոտություններ և տեխնոլոգիական մշակումներ,

– նվազագույն չափերի շնորհիվ նոր հատկություններով ու գործառույթներով օժտված կառուցվածքների և սարքերի ստեղծում,

– ատոմական մասշտաբով կառավարում և փոփոխակում:

Առաջին հայացքից կարող է թվալ, թե նանոտեխնոլոգիան նոր գիտություն է, սակայն դա այդպես չէ. նանոմասշտաբային սարքերը, նյութերը և կառուցվածքները ունեն հին պատմություն[3]: Կան տեղեկություններ, որ դեռ 4-րդ դարում հռոմեացի ապակեգործները կարողանում էին ստանալ գունավոր ապակիներ՝ դրանց բաղադրության մեջ ավելացնելով մետաղների փոքրագույն մասնիկներ: Օրինակ՝ նրանք, փոփոխելով ապակու մեջ տարրալուծվող ոսկու փոշեհատիկների չափերը, ստանում էին տարբեր գույներ ու երանգներ: 19-րդ դարում լուսանկարչությունն արդեն համարվում էր լավ զարգացած տեխնոլոգիա: Այն հիմնված էր լույսի ազդեցությամբ լուսազգայուն շերտում արծաթի բրոմիդի քայքայման և մաքուր արծաթի նանոմասնիկների առաջացման երևույթի վրա: Արդեն ավելի քան 100 տարի է, ինչ ածխածնի նանոչափային փոշու կիրառմամբ արտադրվում են ավտոմեքենաների ռետինե դողեր: Բեր-

---

[1] Տես *N. Taniguchi.* On the Basic Concept of Nanotechnology. Tokyo, 1974, Part 2:

[2] Տես *W. H. Hant.* Nanomaterials: Nomenclature, Novelty and Necessity. «JOM», 2004, October, Vol. 56, *նաև՝ R. Jones.* The Future of Nanotechnology. 2004, August (www.nanotechweb.org/articles/feature/3/8/1/1):

[3] Տես «Nanoscience and Nanotechnologies: Opportunities and Uncertainties». «The Royal Society and the Royal Academy of Engineering». 2004, 29 July (www.royalsoc.ac.uk/policy/):

ված օրինակներից երևում է, որ իրականում նանոտեխնոլոգիաները հին պատմություն ունեն, իսկ վերջին տարիներին դրանց լայն, հեղափոխական զարգացումը պարզապես պայմանավորված է նանոնյութերի ու նանոկառուցվածքների ածեցման և հետազոտման մեթոդներում առկա մեծ առաջընթացով:

Նանոտեխնոլոգիաների վերը բերված նկարագրումից հետևում է, որ նանոնյութերի համար կարևոր են չափերը[4]: Բանն այն է, որ սովորական ծավալով նյութերի և մարմինների ուսումնասիրության ժամանակ դրանք կազմող միկրոմասնիկների բնութագրերը միջինացվում են և ի հայտ չեն գալիս: Այդպիսի միջինացված բնութագրերից են, օրինակ, խտությունը և Յունգի մոդուլը՝ մեխանիկայում, էլեկտրական դիմադրությունը և մագնիսացվածությունը՝ էլեկտրամագնիսականության տեսությունում, դիէլեկտրական թափանցելիությունը՝ օպտիկայում, և այլն: Սակայն երբ մարմնի չափերը փոքրանում են մինչև նանոմետրեր, նա ձեռք է բերում նոր հատկություններ, որոնք չունեն նույն նյութի մեծ ծավալ ունեցող նմուշները, և, ինչը առավել կարևոր է, այդ նոր հատկությունները կախված են նմուշի չափերից: Դա վերաբերում է մարմինների էլեկտրական, մագնիսական, օպտիկական, սեգնետաէլեկտրական, մեխանիկական և այլ հատկությունների:

Նանոնյութերի և նանոմասնիկների վարքի այդպիսի փոփոխությունը տեղի է ունենում երկու հիմնական պատճառով[5]:

Առաջինը նանոնյութի մեծ տեսակարար մակերեսն է՝

$$S = A / \rho V,$$

որտեղ՝ A-ն նանոմասնիկի արտաքին մակերեսն է, V-ն՝ ծավալը, իսկ ρ-ն՝ նյութի խտությունը:

Նանոմասնիկի ատոմների մի զգալի մասը գտնվում է նրա մակերևույթին, ինչի հետևանքով էլ նանոմետրական չափերի հատիկներից բաղկացած նյութի տեսակարար (մեկ գրամի հաշվով) մակերեսը կարող է կազմել $100 \div 400$ մ^2: Նշենք, որ այդպիսի մեծ տեսակարար մակերեսները բնութագրական են նաև մեծ քիմիական ակտիվությամբ օժտված կատալիզատորների, զանազան մետաղական և օքսիդային փոշիների համար: Նանոկառուցվածքային նյութերի շատ հատկություններ, օրինակ, էլեկտրադիմադրությունը և քիմիական ակտիվությունը, ևս էապես կախված են նրանց տեսակարար մակերեսից:

Նանոնյութերի մի կարևոր դաս են հատուկ պոլիմերային նանոկոմպոզիտները, որոնցում կավե նանոհատիկները, ներառվելով պոլիմերային մատրիցում, զգալիորեն մեծացնում են նրա կարծրությունը՝ միաժամանակ փոքրացնելով խոնավանցիկությունը:

Բազմաթիվ կիրառություններ ունեն մետաղների և կիսահաղորդիչների նանոհատիկային փոշիները: Օրինակ՝ ցինկի օքսիդի նանոչափային մասնիկներն օգտա-

[4] Տես *Է. Ղազարյան, Ս. Պետրոսյան,* Կիսահաղորդչային նանոէլեկտրոնիկայի ֆիզիկական հիմունքները: Ե., 2005, *նաև՝ H. S. Nalwa.* Handbook of Nanostructured Materials and Nanotechnology. Boston, 2000, Vol. 1–5:

[5] Տես *Ռ. Ջոնս*, նշ. աշխ.:

գործվում են արեգակնային էկրանների ստեղծման, իսկ երկաթի նանոմասնիկները՝ եռաքլորէթիլենով վարակված գրունտային ջրերի մաքրման համար: Հայտնի է նաև, որ նանոկառուցվածքային կերամիկական ծածկույթները ռազմանավերի իրանները դարձնում են ավելի հարվածադիմացկուն և երկարակյաց[6]:

Այսօր նանոմասշտաբային նյութերից առավել մեծ ուշադրություն են գրավում ածխածնային կատարյալ մակրոմոլեկուլային կառուցվածքները՝ ֆուլերենները և նանոխողովակները[7]: Վերջիններս, կախված իրենց ատոմների փոխդասավորությունից, ծառայում են որպես մետաղական կամ կիսահաղորդչային նանոլարեր: Նանոխողովակներն իրենց կատարյալ կառուցվածքի շնորհիվ ունեն մոտ 30 անգամ ավելի մեծ ամրության պաշար, քան նման պողպատե լարերը: Դրանց ջերմահաղորդականությունը 50 %-ով գերազանցում է ադամանդի ջերմահաղորդականությունը: Այդ հատկությունների շնորհիվ նանոխողովակներն ունեն մի շարք կիրառություններ էլեկտրոնիկայում և սպորտում (օրինակ՝ որպես թենիսի բարձրորակ թևճակներ): Ենթադրվում է, որ նանոխողովակները մոտ ապագայում կծառայեն նաև որպես վառելիքային մարտկոցների տարրերի ջերմաէլեկտրական փոխակերպիչների կարևոր բաղադրամասեր, ինչպես նաև՝ որպես հոսանքատարներ:

Նանոկառուցվածքային նյութերի լայն օգտագործման *երկրորդ* պատճառն ավելի կարևոր է. դրա հիմքում այն փաստն է, որ սովորաբար նյութի ամեն մի հատկության հետ կապված է ինչ-որ բնութագրական երկարություն[8]: Օրինակ՝ հայտնի է, որ մետաղների էլեկտրահաղորդականությունը պայմանավորված է ջերմային տատանումներ կատարող ատոմներով էլեկտրոնների ցրմամբ: Տվյալ երևույթը բնութագրվում է այսպես կոչված ազատ վազքի երկարությամբ, այսինքն՝ այն միջին հեռավորությամբ, որը էլեկտրոնն անցնում է երկու իրար հաջորդող ցրումների միջև: Սովորաբար այն մի քանի հարյուր նմ-ի կարգի մեծություն է: Երբ մարմնի չափերը դառնում են ազատ վազքի երկարության հետ համեմատելի, էլեկտրադիմադրությունը կախված է լինում մարմնի չափերից: Իրավիճակը արմատապես փոխվում է, երբ մարմնի չափերն այնքան են փոքրանում, որ համեմատելի են դառնում էլեկտրոնների քվանտային (դը Բրոյլի) ալիքի երկարության հետ, որը, օրինակ, կիսահաղորդիչների դեպքում 10 նմ-ի կարգի է: Նման դեպքերում ի հայտ են գալիս նոր՝ քվանտաչափային, երևույթներ, որոնց հետևանքով փոփոխվում են նանոչափային մարմնի բոլոր ֆիզիկական հատկությունները:

Հասկանալի է, որ նանոէլեկտրոնիկայի զարգացման գործում էական է դառնում նյութերի և տարակառուցվածքների աճեցման տեխնոլոգիաների դերը: Վերջին տաս-

[6] Տես *T. Abraham*. Nanoceramics, Nanotubes and Nanocomposites Paving the Way for Nanotechnology Revolution – a Review of the Industry and Markets; *M. Mukhopadhyay et. al.* Surfaces and Interfaces in Nanostructured Materials and Trends in LIGA, Miniaturization and Nanoscale Materials. «Materials Processing and Manufacturing Division Fifth Global Symposium». Warrendale, 2004, PP. 247 – 269:

[7] Տես *M. H. Dresselhaus, G. Dresselhaus, P. C. Eklund.* Science of Fullerenes and Carbon Nanotubes. San Diego, 1995:

[8] Տես *Է. Ղազարյան, Ս. Պետրոսյան*, նշ. աշխ.:

նամյակներում դրանք նույնպես զգալի զարգացում են ապրել: Նանոկառուցվածքների ստեղծման նորագույն տեխնոլոգիական մեթոդներից են, առաջին հերթին, մոլեկուլային փնջային էպիտաքսիան (MBE) և մետաղ-օրգանական միացություններից գազային էպիտաքսիան (MOCVD): Այս մեթոդները ռեակցիաներ են, որոնք տեղի են ունենում տարբեր միացությունների բարակ շերտերի էպիտաքսային աճման պրոցեսում համապատասխան բաղադրիչների՝ ջերմային եղանակով ստեղծվող մոլեկուլային կամ ատոմային փնջերի և գերբարձր վակուումում գտնվող, համեմատաբար ցածր ջերմաստիճանով տակդիրի միջև:

Բացի բյուրեղների աճեցման մեթոդներից, լայն զարգացում են ստացել նաև խածատման, վիմագրման, իոնային ներկալման, մետաղացման և այլ մեթոդներ, որոնք հնարավորություն են տալիս պրոցեսների ճշտությունը հասցնելու նանոմետրի: Նշված տեխնոլոգիաների կիրառմամբ կարելի է աճեցնել այնպիսի գերբարակ (≤10 նմ) կիսահաղորդչային շերտեր, որոնք օժտված լինեն մեծ համասեռությամբ, բյուրեղական ցանցի բարձր աստիճանի կատարելությամբ և ունենան բաղադրության ու լեգիրման փոփոխման տրված պրոֆիլը[9]: Այդպիսի շերտերի հիմքի վրա հեշտությամբ ստեղծվում են շատ բարակ լարեր (քվանտային լարեր) և նանոբյուրեղիկներ (քվանտային կետեր):

Բարձրահաճախական էլեկտրոնիկայի և օպտոէլեկտրոնիկայի համար վերը նշված տեխնոլոգիական եղանակներով գալիումի արսենիդի, ինդիումի արսենիդի, գալիումի նիտրիդի և A_3B_5 ու A_2B_6 տիպի այլ միացությունների հիմքի վրա արդեն ստեղծվել են տարբեր նանոկառուցվածքներ, որոնք որակական նոր հնարավորություններ են ընձեռում գերարագագործ սարքերի, լազերների, ֆոտոդետեկտորների և այլ սարքերի մշակման համար: Նշված կառուցվածքների հիմքի վրա ներկայումս ստեղծված են 50 պիկովայրկյան ($50 \cdot 10^{-12}$ վրկ) փոխարկման ժամանակով և 20 ԳՀց ($20 \cdot 10^9$ Հց) առավելագույն աշխատանքային հաճախականությամբ տրանզիստորներ, նաև պարզվել է, որ կան ավելի լավ բնութագրերով տրանզիստորների ստեղծման հնարավորություններ[10]:

Օպտոէլեկտրոնիկայի բնագավառում նույնպես ստեղծված են այնպիսի սարքեր, որոնք իրենց բնութագրերով զգալիորեն գերազանցում են նմանատիպ ավանդական սարքերը[11]: Դրանցից են՝ քվանտային փոսերով ներարկումային (ինժեկցիոն) և կասկադային հետերոլազերները, լայնական $p-n$ անցումներով շերտավոր հետերոլազերների հիմքի վրա ստեղծված բազմաալիքային ճառագայթիչները, սպեկտրի կապույտ-կանաչ տիրույթում գործող հետերոլազերները և ֆոտոդիոդները, գերցանցերի, քվանտային փոսերի և քվանտային կետերի կիրառման վրա հիմնված հեղեղային շեմային ֆոտոընդունիչները, վարիզոնային կառուցվածքների հիմքի վրա ստեղծված հեղեղային ֆոտոընդունիչները, ֆոտոտրանզիստորները և այլն: Քվանտային կետե-

[9] Տես *Х. Кейси, М. Паниш.* Лазеры на гетероструктурах. М., 1981, тт. 1, 2:

[10] Տես *Ю. Пожела.* Физика быстродействующих транзисторов. Вильнюс, 1989:

[11] Տես *D. Bimberg, M. Grundman, N. Ledentsov.* Quantum Dot Heterostructures. Berlin, 1999:

րով հետերոլազերներում հոսանքի շեմային խտությունը հաջողվել է նվազեցնել մինչև 100 Ա/սմ^2, որը ներարկումային լազերների համար ձեռք բերված ամենափոքր հնարավոր արժեքն է: Այդ լազերները ներկայումս լայնորեն օգտագործվում են խտասկավառակների ընթերցման և գրառման համար:

Կիսահաղորդչային բազմաշերտ նանոկառուցվածքների ֆիզիկայի նվաճումները մեծ հեռանկար ունեն նաև արևային էներգիայի արդյունավետ փոխակերպիչների ստեղծման առումով: Երկանցում նանոկառուցվածքներով արևային տարրերի ՕԳԳ-ն ներկայումս արդեն հասցված է ավելի քան 30 %-ի[12]:

Հաջողությամբ շարունակվում են քվանտային կետերի կիրառմամբ փոխակերպիչների և նոր սերնդի համակարգիչների տարրային հենք կազմող տրամաբանական տարրերի ստեղծման աշխատանքները: Քվանտային կետերի գերբարձր խտությունը և դրանցում տեղայնացման մեծ էներգիաները հնարավորություն են տալիս ստեղծելու նոր սերնդի հիշողության տարրեր, որոնք հիմնված են մեկ էլեկտրոնի տեղափոխության վրա: Նման սարքերում ավանդական էլեկտրական լիցքերի հոսանքի փոխարեն հաճախ օգտագործվում է սպինային հոսանքը, ինչը հնարավորություն է տալիս ստեղծելու սպինային տրանզիստորներ և դրանց կիրառմամբ ստանալու տեղեկույթի փոքրագույն միավորը՝ քվանտային բիտը: Նոր զարգացող այս բնագավառը կրում է «սպինտրոնիկա» անվանումը[13]:

Գալիումի և ինդիումի նիտրիդների տիպի նյութերի հիմքի վրա վերջին երկուերեք տարվա ընթացքում ստեղծվել են կապույտ-կանաչ և մանուշակագույն լույսի ոչ կոհերենտ և կոհերենտ աղբյուրներ[14]: Դրանց լայնածավալ արտադրությունը հնարավորություն կտա լուծելու ժամանակակից էլեկտրոնիկայի երկու շատ կարևոր խնդիրներ. առաջինը՝ ժամանակակից հաշվողական մեքենաների՝ տեղեկույթի գրանցման և ընթերցման հանգույցներում կարմիր լազերների փոխարինումն է կապույտ լազերներով, ինչի շնորհիվ ավելի քան չորս անգամ կմեծանա տեղեկույթի գրանցման խտությունը, երկրորդը՝ սպիտակ լույսի արդյունավետ կիսահաղորդչային աղբյուրների ստեղծումը:

Նանոտեխնոլոգիաները լայնորեն կկիրառվեն նաև ռազմական ոլորտում[15]: Դա առաջին հերթին վերաբերում է դրանց միջոցով զանգվածային ոչնչացման զենքից բնակչության պաշտպանության համակարգերի ստեղծմանը[16]: Այդ նպատակին են ծառայելու նանոնյութերի կիրառմամբ ստեղծված տարբեր տիպի կոլեկտորները և

[12] Տես *T. Takamoto, E. Ikeda, H. Kurita and M. Ohmori.* Applied Physics Letters. 1997 (http://eu.wiley.com/Wiley CDA/WileyTitle/productCd-0471973882.html):

[13] Տես *D. Awschalom et. al.* Semiconductor Spintronics and Quantum Computation. 2002 (http://www.springer.com/materials/nanotechnology/book/978-3-540-42176-4):

[14] Տես *Hideki Hirayama.* Quaternary InAlGaN-based High-Efficiency Ultraviolet Light-Emitting Diodes. «Journal of Applied Physics», 2005, Vol. 97:

[15] Տես *Roncone Kelly.* Nanotechnology: What Next-Generation Warriors Will Wear. «JOM», 2004, Vol. 56(1), *նաև՝ J. G. Reynolds, B. R. Hart.* Nanomaterials and Their Application to Defence and Homeland Security. «JOM», 2004, Vol. 56(1):

[16] Տես *Ջ. Գ. Ռեյնոլդս, Բ. Ռ. Հարթ*, նշ. աշխ.:


դետեկտորները, որոնք կարող են ոչ միայն կլանել և կուտակել քիմիական կամ կենսաբանական զենքերում օգտագործվող թունավոր նյութերը (զարին, V-x, անտրա-x, տետրադոտոկսիններ և այլն), այլև որոշել, թե ինչ թունանյութ է օգտագործվել: Նման կոլեկտորների և դետեկտորների հիմքն են սիլիցիումային ՄԴԿ (մետաղ-դիէլեկտրիկ-կիսահաղորդիչ) կառուցվածքները, ծակոտկեն սիլիցիումային էլեկտրոդները, թունավոր նյութի մոլեկուլներով նախանշված օրգանական պոլիմերները և այլն:



ա)



բ)



գ)

Նանոտեխնոլոգիաների կիրառման օրինակներ.
ա) քամելեոնային արտահագուստ, բ) մանրագործվածքում ներկառուցված ստեղնաշար,
գ) համազգեստի թևքում ներկառուցված ղեկավարման վահանակ

Նանոտեխնոլոգիաները մեծ հեռանկարներ են բացում նաև սկզբունքորեն նոր տիպի զինվորական հանդերձանքի ստեղծման համար[17]: Սպասվում է, որ մոտ ապագայում զինվորական համազգեստը կդադարի պարզապես հագուստ լինելուց: Նախ՝ այն կլինի շատ թեթև և կունենա մի շարք նոր հատկություններ, ինչպիսիք են զինվորի պաշտպանությունը բեկորներից և գնդակներից, ճառագայթումից, բարձր և ցածր ջերմաստիճաններից, խոնավությունից, քիմիական ու կենսաբանական զենքերից, զինվորին կօժտի գերմարդկային ուժով, կվերահսկի նրա առողջական վիճակը, ինչպես նաև որոշակի հեռավորության վրա կապահովի հրամանատարի և զինվորների միջև ակնթարթային կապ: Այդ նպատակով, օրինակ, ամերիկյան բանակի պատվերով ծավալուն գիտահետազոտական աշխատանքներ են սկսվել Մասաչուսետսի տեխնոլոգիական ինստիտուտում (ԱՄՆ): Եվ պատահական չէ, որ որպես նման բարդ խնդրի լուծման բանալի են ընտրված նանոնյութերն ու նանոսարքերը: Այս բնագավառում կատարվող աշխատանքները կարելի է բաժանել հետևյալ ուղղությունների[18]:

[17] Տես *Ռ. Կեյլի*, նշ. աշխ.:

[18] Տես նույն տեղում:

1. Դյուրաթեք և թեթև զրահահանդերձի ստեղծում: Այդ զրահով կարելի կլինի պաշտպանել ոչ միայն զինվորի իրանը, այլև նրա ձեռքերն ու ոտքերը: Զրահահանդերձը պետք է կազմված լինի նանոմասնիկներից բաղկացած մոլեկուլային շղթաներով հյուսվածքներից, որոնք այնքան բարակ ու դյուրաթեք լինեն, որ հնարավորություն տան ծածկելու վերջույթները, և այնքան ամուր, որ զրահաբաճկոնի նման կարողանան պաշտպանել զինվորի իրանը: Այդ ուղղությամբ կատարվող աշխատանքների նպատակն է արհեստական պոլիմերների ու պոլիմերային նանոթելիքների միջոցով վերականգնել սարդոստայնի թելի յուրօրինակ կառուցվածքը, որը, ինչպես հայտնի է, պոլիմեր է և բաղկացած է միմյանց հաջորդող փափուկ (առաձգական) և կոշտ (բյուրեղական) հատվածներից: Այդ նպատակով հետազոտողներն ուսումնասիրում են նաև այնպիսի բնական պաշտպանական վահանների կառուցվածքը, ինչպիսիք են միջատների արտաքին զրահածածկույթը և կրիաների վահանը:

2. Նանոմկանների ստեղծում: Նանոմկանները նախատեսվում է ներառել զինվորական համազգեստի արտաքին և ներքին շերտերում: Նանոմկանը, մարդու մկանի նմանությամբ, հյուսվելու է հատուկ մանրաթելերից, որոնք իրենց հերթին հագեցած են լինելու տարբեր տեսակի նանոնյութերով ու նանոսարքերով: Հիմնական գաղափարն այն է, որ նանոմկանը, արձագանքելով արտաքին էլեկտրական գրգռիչներին, կարող է իրական մկանի նման կծկվել կամ թուլանալ՝ զինվորին տալով լրացուցիչ մեծ ուժ գործադրելու հնարավորություն: Համազգեստի ներքին շերտում տեղադրված նանոմկանները, ձգվելով, կարող են լրացուցիչ ամրություն հաղորդել զինվորի իրանին՝ օգնելով, որ նա առանց հոգնելու կրի ծանր բեռներ և զինամթերք: Աշխատանքներ են տարվում նաև զինվորական համազգեստի փափուկ և դյուրաթեք գործվածքը անհրաժեշտության դեպքում նանոմկանային խթանիչների միջոցով դարձնելու օժանդակող կոշտ կաղապար, օրինակ՝ ջարդված ոտքի կամ ձեռքի համար:

3. Զինվորական համազգեստի համալրումը քիմիական և կենսաբանական զգայարարներով: Ինչպես արդեն նշվել է, ապագայի զինվորական համազգեստը պետք է ծառայի նաև որպես քիմիական և կենսաբանական թունավոր նյութերից պաշտպանող շերտ: Հեռանկարում այն պետք է ունակ լինի գրանցելու օդում վտանգավոր նյութերի առկայությունը և ապահովելու զինվորի պաշտպանությունը՝ նրան հնարավորություն տալով կենտրոնանալու այլ խնդիրների վրա և ազատելով ավելորդ ծանր պաշտպանական հանդերձանք կրելու անհրաժեշտությունից: Այս խնդիրների լուծման համար համազգեստը, բացի տարբեր տեսակի զգայարարներից, պետք է ունենա նաև պաշտպանիչ թելեր և հյուսվածքներ, որոնք, արձագանքելով վտանգի առկայությանը, ի վիճակի լինեն փակելու զինվորի օրգանիզմ վարակիչ մանրէների և թունավոր նյութերի ներթափանցման ճանապարհը: Օրինակ՝ որոշ հետազոտողներ փորձում են համազգեստի նյութի մեջ ստեղծել զգայուն նանոծակոտիներ, որոնք կփակվեն, երբ զգայարարները գրանցեն օդում կամ շրջապատում թունավոր նյութերի առկայությունը:

4. Քամելեոնային արտահագուստի ստեղծում: Այդպիսի արտահագուստը, կախված զինվորի գտնվելու տեղանքից, ընդունում է այս կամ այն գույնը կամ նախ-

շանկարը: Նման փոփոխությունները կատարվում են զինվորի վրա ամրացված անձնական մանրահամակարգչի հրահանգով՝ ըստ նախապես մշակված ծրագրի: Այս դեպքում զինվորներն ազատվում են իրենց հետ տարբեր տեսակի արտահագուստներ տանելու անհրաժեշտությունից:

5. Ֆիզիոլոգիական իրավիճակի մշտազննում: Այս նպատակով զինվորի արտահագուստը պետք է ունենա մշտազննման մի այնպիսի լրացուցիչ համակարգ, որը չափի նրա արյան ճնշումը, մարմնի կամ մաշկի ջերմաստիճանը, սրտի զարկերի քիվը և այլ ֆիզիոլոգիական պարամետրներ: Դրանք կողային համակարգչի և կապի միջոցների կիրառմամբ կհաղորդվեն զինվորի առողջությանը մշտապես հետևող բժիշկներին: Նման ձևով հրամանատարին և բժշկին տեղեկույթ կհաղորդվի ռազմադաշտում զինվորների ստացած վնասվածքների մասին, ինչի հիման վրա էլ արագ որոշում կկայացվի անհրաժեշտ բժշկական օգնություն ցույց տալու վերաբերյալ:

6. Էլեկտրոնային մանրագործվածքների ստեղծում: Դրանք հատուկ գործվածքներ են, որոնց վրա արտատպված են բարակ մետաղական լարեր և շղթաներ: Ներկայումս զինվորի հանդերձանքի կշռի զգալի մասն են կազմում զանազան էլեկտրական լարերը և մալուխները, որոնցով իրար են միացված նրա վրա գտնվող էլեկտրոնային սարքերը: Եթե այսպիսի լարերի և մալուխների փոխարեն միացումները կատարվեն այսպես կոչված էլեկտրոնային մանրագործվածքի միջոցով, ապա հնարավոր կլինի զգալիորեն փոքրացնել զինվորի ուղեբեռը:

Նախատեսվում է, որ վերը նշված նանոտեխնոլոգիական մշակումների մեծ մասը մինչև 2015–2020 թթ. կկիրառվի նորագույն զինվորական համազգեստներում և հանդերձանքում:

Վերջում նշենք, որ 21-րդ դարում հասարակության զարգացման վրա նանոտեխնոլոգիաների գործած ազդեցությունը կարող է նույնքան վճռորոշ լինել, որքան ջերմային շարժիչինը՝ 19-րդ դարում, կամ էլեկտրականությանը՝ 20-րդ դարում[19]: Բացի ռազմական բնագավառից, էլեկտրոնիկայից, կապի և հաշվողական համակարգերից, նանոտեխնոլոգիաները արմատապես կվերափոխեն մարդու կենսագործունեության համար անհրաժեշտ բազմաթիվ ծառայություններն ու սարքավորանքը, այդ թվում՝ վառելիքային մարտկոցների ունակությունը, արեգակնային մարտկոցների ՕԳԳ-ն, սննդամթերքի վերամշակումը, ջրի մաքրումն ու վնասազերծումը, դեղանյութերի ներմուծումը մարդու օրգանիզմ, կոսմետիկական քսուքները և այլն: Եվ զարմանալի չէ, որ այժմ տարբեր երկրների կառավարություններ և մասնավոր ձեռնարկություններ նանոտեխնոլոգիաների զարգացման համար մեծ ներդրումներ են կատարում: Այսպես. միայն 2005–2008 թթ. ԱՄՆ-ում այդ նպատակով նախատեսվում է ծախսել 3,7 մլրդ ԱՄՆ-ի դոլար, իսկ Ճապոնիայում՝ մոտ 3 մլրդ: Եվրոպական Միությունը իր գիտահետազոտական մշակումների 7-րդ շրջանակային ծրագրով նախատեսում է նանոգիտության վրա 2007–2013 թթ. ծախսել

[19] Տես *М. К. Роко, Р. С. Уильямс и П. Аливисатос.* Нанотехнологии в ближайшем десятилетии. М., 2002:

մոտ 7,5 մլրդ ԱՄՆ-ի դոլար[20]: Նման աննախադեպ ֆինանսական ներդրումների համար կարևոր պատճառ են նաև կանխատեսվող մեծ շահույթները: ԱՄՆ-ի Ազգային գիտական հիմնադրամի գնահատականներով այս տասնամյակի վերջում համաշխարհային շուկայում նանոտեխնոլոգիաների բաժնի ծավալը կկազմի մոտ 1 տրիլիոն ԱՄՆ-ի դոլար: Սակայն սպասվելիք բոլոր շահույթներից, մեր կարծիքով, ամենակարևորը կլինի 21-րդ դարում գիտության և տեխնիկայի համընդհանուր զարգացման որակական նոր աստիճանի նվաճումը:

Հայաստանում, սկսած անցյալ դարի 70-ական թվականներից, նույնպես ձևավորվել են նանոկառուցվածքների և նանոնյութերի ուսումնասիրման գիտական դպրոցներ: Ուսումնասիրվել են տարբեր տիպի ցածր չափայնության համակարգերի (գերբարակ թաղանթներ, քվանտային լարեր, քվանտային կետեր, գերցանցեր և այլն) էլեկտրոնային, օպտիկական և կինետիկական հատկությունները: Վերջին տարիներին այդ աշխատանքները հաջողությամբ շարունակվել են «Կիսահաղորդչային նանոէլեկտրոնիկա» հանրապետական նպատակային ծրագրի շրջանակներում: Ներկայումս նանոէլեկտրոնիկայի և նանոտեխնոլոգիաների բնագավառում աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար խիստ անհրաժեշտ է ստեղծել «Նանոտեխնոլոգիաների հանրապետական կենտրոն», որի նպատակները պետք է լինեն՝

– հանրապետության տարբեր կազմակերպություններում նանոհամակարգերի ֆիզիկական, քիմիական, կենսաբանական և մեխանիկական հատկությունների ուսումնասիրման ուղղությամբ կատարվող գիտական հետազոտությունների զարգացումը և համադասումը,

– օժանդակումը այս բնագավառի կազմակերպությունների նորարարական գործունեությանը,

– ժամանակակից չափանիշներին համապատասխան գիտատեխնիկական, ենթակառուցվածքային և մեթոդական օգնությունը,

– օժանդակումը համաշխարհային ստանդարտներին համապատասխանող նոր գիտատար արտադրանքի մշակմանը, դրա մանրսերիական արտադրության կազմակերպմանը և շուկայում փորձարկմանը,

– օգնությունը հեռանկարային գիտահետազոտական խմբերին նոր գիտական գաղափարների ու մշակումների համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսների հայթայթման գործում,

– երիտասարդ կադրերի պատրաստման նպատակով օժանդակումը նանոտեխնոլոգիաների բնագավառում կատարված հիմնարար և կիրառական հետազոտությունների արդյունքների ներդրմանը բուհերի ուսումնական գործընթացում:

---

[20] Տես *M. C. Roco.* Government Nanotechnology Funding: An International Outlook (www.nano.gov/html/res/Intlfunding/Roco.htm):

НАНОТЕХНОЛОГИИ И ИХ ПЕРСПЕКТИВЫ

С. Г. ПЕТРОСЯН, доктор физико-математических наук, профессор,
декан физико-технического факультета Российско-армянского (Славянского)
государственного университета

РЕЗЮМЕ

Нанотехнологии позволяют на базе использования уникальных свойств веществ с размерами порядка 10^{-9} м разрабатывать материалы и изделия, по своим основным эксплуатационным характеристикам значительно превосходящие существующие. Наряду с широким спектром научных и гражданских применений, нанотехнологии предоставляют широкие возможности для новейших разработок в военной сфере, таких, как создание: легкой, эластичной бронеодежды; работающих по команде наномышц; химических и биологических сенсоров, интегрированных в обмундирование и защищающих от поражающих факторов химического и биологического оружия; меняющей маскировочную окраску одежды типа «хамелеон»; датчиков мониторинга физиологического состояния военнослужащего; тканей с интегрированными тоководами, электрическими цепями и т. д.

В Армении нанотехнологии пока находятся в стадии освоения, однако научно и экономически обоснованная целенаправленная деятельность властей позволит использовать имеющийся в республике научный потенциал для обеспечения их быстрого развития.

NANOTECHNOLOGIES AND THEIR PERSPECTIVES

S. G. PETROSSYAN, Doctor of Physical-Mathematical Sciences, Professor,
Dean of the Faculty of Physics and Engineering
of the Russian-Armenian (Slavonic) State University

SUMMARY

Nanotechnologies, on the basis of applying unique properties of the substances of 10^{-9} m size, allow to elaborate materials and articles, considerably surpassing the existing ones by their basic exploitational characteristics. Together with a wide spectrum of scientific and civil applications, nanotechnologies open up wide opportunities for the recent developments in the military sphere such as making of light, elastic armoured clothing; nanomuscles, operating at the command; chemical and biological sensors, integrated into the military uniform and protecting from the effects of the chemical and biological weapons; clothing of «chameleon»-type, changing its camouflage colouring; detectors monitoring serviceman's physiological state; fabrics with integrated current distributors, electric circuits, etc.

Nanotechnologies are still at the stage of assimilation in Armenia, however, the authorities' scientifically and economically grounded purposeful activity will allow to use the scientific potential, existing in the republic, to ensure their rapid development.



ՌԱԶՄԱԿԱՆ

ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԶՈՒ-Ի ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԱՐՑԵՐ

Ա. Մ. ՓԱՐՍԱԴԱՆՅԱՆ, բ/ծ գնդապետ, ՀՀ ԶՈՒ-ի ռազմաբժշկական վարչության պետ, բժշկական գիտությունների դոկտոր

Ներկայումս երկրագնդի տարբեր հատվածներում նկատվում է զինված բախումների ու տեղային պատերազմների, բնական ու մարդածին աղետների և արհավիրքների թվի աճում: Նման պայմաններում զգալիորեն բարդանում են ռազմական բժշկության առջև դրվող խնդիրները, քանի որ դրա համակարգը՝ որպես զինված ուժերի բաղկացուցիչ մաս, օժտված լինելով որոշակի առանձնահատկություններով (շարժունություն, արագ արձագանքելու և հրատապ խնդիրների լուծման համար համախումբ ջանքերն արագ կենտրոնացնելու կարողություն և այլն) ոչ միայն լուծում է ռազմական գործողությունների հետևանքով առաջացող առողջական պրոբլեմները, այլև ակտիվորեն մասնակցում է արտակարգ իրավիճակների ժամանակ ծագող բուժհետևանքների վերացմանը[1]: Խոսքը վերաբերում է հատկապես այդ համակարգի կազմակերպական գործունեությանը:

Այդուհանդերձ, ռազմական բժշկության հիմնական խնդիրը ԶՈՒ-ի բուժապահովումն է, որը զինված ուժերի անձնակազմի առողջության պահպանման, ամրապնդման, վիրավորների և հիվանդների պատեհաժամ բուժօգնության ցուցաբերման, նրանց մարտունակության (աշխատունակության) վերականգնման միջոցառումների համալիր է: Այն զորքերի (ուժերի) գործողությունների ապահովման տեսակ է, որը կազմակերպվում և իրականացվում է ռազմաբժշկական ծառայության միջոցով:

Անկախության հռչակումից հետո պետականության կառուցմանը զուգընթաց հիմք դրվեց ազգային բանակի ստեղծմանը: ՀՀ ԶՈՒ-ի շինարարությունը, այդ թվում՝ ռազմաբժշկական ծառայության ձևավորումը, տեղի ունեցավ պարտադրված պատերազմի բարդ պայմաններում: ԶՈՒ-ի անձնակազմի բուժապահովման կազմակերպման խնդիրն էլ՛ ավելի էր բարդանում այն պատճառով, որ չկային բուժծառայության հստակ կազմակերպական կառուցվածք և պատերազմի ժամանակ ԶՈՒ-ի բժշկական ապահովման փորձ[2], գիտական գրականության մեջ տվյալ պրոբլեմն ուսումնասիրված էր գերազանցապես մեծ պետությունների օրինակով, ուստի այդ դրույթները հնարավոր չէր առանց վերահմաստավորման կիրառել սահմանափակ մարդկային և նյութական ռեսուրսներ ունեցող փոքր պետությունների համար:

Տվյալ ծանր պայմաններում նման բարդ խնդիրների հաջող լուծման գրավականներն էին ինչպես հանրապետությունում բարձրացած հայրենասիրական

---

[1] Տես *И. М. Чиж, Е. Г. Жиляев, Л. Л. Галин, В. В. Белозеров.* Военно-медицинская доктрина – научная основа медицинского обеспечения Вооруженных сил. «ВМЖ», 1995, № 12:

[2] Տես *Բ. Ն. Հարությունյան,* Նոր մոտեցումներ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի բժշկական ապահովման գործում: «ՀԲ», 1995, հմ. 2–3:

պոռթկումն ու գործին նվիրումը, այնպես էլ հայ բժշկագիտության ու առողջապահական համակարգի ավանդապես բարձր մակարդակը: Բժշկությունը Հայաստանում պատմականորեն ունեցել է լայն տարածում և գտնվել է զարգացման բարձր մակադակի վրա[3]: Զարգացմանը նպաստել է նաև տարբեր դեղաբույսերի և հանածոների առկայությունը: Ըստ Ղազար Փարպեցու՝ Այրարատ նահանգում գտել են տարբեր բույսերի արմատներ, որոնք հայ բժիշկները օգտագործել են որպես հիվանդությունները բուժող սպեղանիներ[4]: Բազմաթիվ հանքային աղբյուրները նույնպես օգտագործվել են տարբեր հիվանդությունների բուժման համար: Հանածոներից որպես բուժիչ միջոց օգտագործվել է մասնավորապես կավը, որը հայ ժողովրդական բժշկության մեջ կիրառվում է մինչ օրս: Հայաստանում բժշկությամբ զբաղվել են հեքիմ բուժակները և բժշկող վանականները: Աչքի են ընկել հատկապես պալատական բժիշկները, որոնք տիրապետել են թունաբանությանը, բնական ծագման դեղերի պատրաստման արվեստին, բժշկության տարբեր բնագավառների:

Հայաստանում բժշկությունը հատկապես մեծ վերելք է ապրել 12–15-րդ դարերում: Այդ շրջանում մեծ համբավ են վայելել Մխիթար Հերացին (12-րդ դար), Աբու-Սահդը (12-րդ դար), Գրիգորիսը (12–13-րդ դար) և Ամիրդովլաթ Ամասիացին (15-րդ դար): Նրանք, ընդհանրացնելով իրենց փորձը և օգտվելով հույն ու արաբ բժշկապետների գործերից, ստեղծել են ինքնուրույն աշխատություններ, որոնք դարերի ընթացքում ընդօրինակվել և որպես ուղեցույց կիրառվել են բժշկության մեջ:

Այսպիսով՝ ՀՀ ԶՈՒ-ի ռազմաբժշկական ծառայության համակարգի ձևավորումն սկսվեց ռազմական բժշկության մեջ ընդունված սկզբունքների հաստատումից վերանայմամբ: Ըստ այդմ ՀՀ ԶՈՒ-ում որպես ռազմաբժշկական համակարգի զարգացման հիմնական ուղղություններ ընտրվեցին կազմակերպման կառուցվածքի և ղեկավարման համակարգի կատարելագործումը, ռազմաբժշկական ոլորտի համար որակյալ կադրերի պատրաստումը, ռազմաբժշկական ծառայության տեխնիկական վերազինումը, գիտագործնական աշխատանքների կազմակերպումը և միջազգային առաջադիմական փորձի ներբերումը, գործընկեր պետությունների համապատասխան ծառայությունների հետ համագործակցությունը, և այլն[5]:

Այդ ճանապարհին հաջողությամբ լուծվեցին մի շարք հայեցակարգային պրոբլեմներ, մասնավորապես ստեղծվեց կենտրոնական ու կայազորային հոսպիտալներ, պոլիկլինիկա, զորամասային բուժկետեր ընդգրկող համակարգված ցանց, որի յուրաքանչյուր օղակ ունակ է իր պատասխանատվության շրջանակներում գործելու միանգամայն ինքնուրույնաբար, ԵՊԲՀ կազմում հիմնադրվեց ռազմաբժշկական ֆակուլտետ, պատրաստվեցին գիտական ու պրակտիկ գոր-

[3] Տես *Լ. Ա. Օганесян.* История медицины Армении. Т. 1. Е., 1948:

[4] Տես «Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան», աշխատութեամբ Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Մալխասեան: Տփղիս, 1904, էջ 9–10:

[5] Տես *Ա. Մ. Փարսադանյան,* ՀՀ ԶՈՒ-ի բուժծառայության զարգացման հիմնական ուղղությունները: «ՀԲ», 2006, հմ. 1:

ծունեությամբ զբաղվող որակյալ կադրեր, ստեղծվեց մշտապես թարմացվող արդիական նյութատեխնիկական բազա, սերտ համագործակցային կապեր հաստատվեցին մի շարք գործընկեր պետությունների ռազմաբժշկական ծառայությունների հետ, և այլն:

Ներկայումս ՀՀ ԶՈՒ-ի ռազմաբժշկական ծառայությունը կայացած կառույց է՝ իր հոսպիտալներով, ամբուլատորիաներով, համաճարակային անվտանգության ծառայություններով, ռազմաբժշկական ֆակուլտետով և բազաներով հանդերձ: Այն իր հնարավորություններով հետ չի մնում զարգացած երկրների նմանատիպ ծառայություններից: Ռազմաբժշկական ծառայության կենտրոնական մարմինը ՀՀ ԶՈՒ-ի ռազմաբժշկական վարչությունն է:

ՀՀ ԶՈՒ-ի ռազմաբժշկական ծառայության համակարգի զարգացումը պայմանականորեն կարելի է բաժանել հետևյալ չորս փուլերի:

Առաջին փուլն ընդգրկում է ազատագրական պայքարի սկիզբը և ընթացքը մինչև 1991–1992 թթ.: Այդ ժամանակ բուժսպասարկումը հիմնված էր կամավոր բժիշկների ու միջին բուժանձնակազմի, այդ թվում՝ հանրապետությունում աշխատող քաղաքացիական բժիշկների, խորհրդային բանակում ծառայած և ծառայող մասնագետների, բուժակների, հաճախ նաև բժշկական ինստիտուտի ուսանողների, ծառայությունների վրա: Նրանք հիմնականում գործում էին ջոկատների կազմում կամ ինքնուրույնաբար: Իրենց աշխատանքում օգտագործում էին վրանները, գյուղական ամբուլատորիաները, շրջանային ու տեղամասային հիվանդանոցները և այլն: Տվյալ շրջանը կարելի է անվանել *պարերային զարգացման շրջան*:

Երկրորդ փուլը ինքնաբերական զարգացման և ռազմաբժշկական ծառայության կազմավորման շրջանն է: Սկիզբը կարելի է համարել 1992 թվականի հունվարի 28-ը, երբ Պաշտպանության նախարարի հրամանով ստեղծվեց Զինված ուժերի ռազմաբժշկական վարչությունը (ՌԲՎ), իսկ ավարտը՝ 2005 թվականը: Ռազմաբժշկական վարչության գոյությունն իսկ նշանակում էր որոշակի կազմակերպվածքի, կառույցի առկայություն, Զինված ուժերի բուժապահովման խնդիրները ՌԲՎ-ն սկզբնական շրջանում իրականացնում էր՝ հենվելով քաղաքացիական բուժհիմնարկների վրա, դրանց բժիշկներին ընդգրկելով ԶՈՒ-ի շարքերում, այնուհետև ստեղծելով հոսպիտալներ և իր հիմնական աշխատանքները ծավալելով դրանց բազայի վրա: Սկզբնական շրջանում բուժծառայությունը գերազանցապես խարսխվում էր անհատ բժիշկների նվիրվածության ու եռանդի վրա, գործունեությունը դեռ համակարգված ու փոխհամաձայնեցված չէր, բուժծառայության ապահովումը կրում էր տարերային բնույթ, կանոնավորող և կանոնակարգող հրամաններն ու օրենքները դեռ մշակման փուլում էին: Այս փուլը համընկնում է սահմանային զինված ընդհարումների, լայնամասշտաբ պատերազմական գործողությունների շրջանին: Ձևավորվեցին առաջին հոսպիտալները: Զորամասերի կազմավորմանը զուգընթաց ստեղծվում էին դրանց բուժծառայությունները և բուժկետերը, որոնք համալրվում էին զինվորական բժիշկներով: Այս շրջանում ձևավորվեցին առաջին դաշտային հոսպիտալները և 1992 թ.

Երևանի կայազորային զինվորական հոսպիտալը: 1994 – 1995 թթ. սկսվում են բուժծառայության կանոնակարգման հիմնական աշխատանքները:

Երրորդ փուլի սկիզբ կարելի է համարել 2005 թ. երկրորդ կեսը, ավարտը՝ 2009 թ. վերջը: 2005 թ. վերջերին Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանին ներկայացվեց ռազմաբժշկական ծառայության զարգացման համալիր պլանը, որն արժանացավ նրա հավանությանը և դրվեց գործողության մեջ: Այն ներառում էր հետևյալ մասշտաբային միջոցառումները.

ա) բուժծառայության շենքային պայմանների բարելավում: Այս ուղղությամբ կատարվեց հատկապես մեծ աշխատանք. վերանորոգվեցին զորամասերի այն բոլոր բուժկետերը, որոնք ունեին դրա կարիքը, կառուցվեցին նոր բուժկետեր: Այս աշխատանքները կատարվեցին բարձր մակարդակով: Զորամասերի շուրջ 65 – 70 %-ը ներկայումս ունեն կա՛մ նոր, կա՛մ եվրանորոգված բուժկետեր: Բայց այս հարցում շատ անելիքներ ունենք:

Այս շրջանում սկսվեց և հաջորդ փուլի սկզբին ավարտին հասցվեց 4 հոսպիտալների կապիտալ նորոգումը: Զորամիավորումներից մեկում կառուցվեց տարածաշրջանում նմանը չունեցող մի հոսպիտալ, որը կարող է մեծ արդյունավետությամբ աշխատել և՛ խաղաղ, և՛ պատերազմական պայմաններում,

բ) բուժծառայության տեխնիկական վերազինման ծրագրում ընդգրկվեցին և՛ զորամասային օղակը, և՛ հոսպիտալներն ու պոլիկլինիկան: Զորամասերի շուրջ 80 %-ի բուժկետերն ստացան արտասահմանյան արտադրության նորագույն ատամնաբուժական կաբինետներ, ընդ որում, առաջնահերթությունը տրվեց մարտական հերթափոխի զորամասերին: Տեխնիկայով ու կահույքով հագեցվեցին նաև վիրակապարանները, հիվանդասենյակները և այլ ծառայություններ:

Տեխնիկապես լավ հագեցած են Կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալը (ԿԿԶՀ) և զինհոսպիտալը՝ իրենց ախտորոշման կենտրոններով, բուժախտորոշիչ բաժանմունքներով, ժամանակակից տեխնիկայով հագեցված վիրահատարաններով ու վերակենդանացման բաժանմունքներով և այլ ծառայություններով հանդերձ: Ժամանակակից վիրահատական, վերակենդանացման և այլ սարքավորանքով հագեցված են նաև մյուս բոլոր հոսպիտալներն ու ամբուլատորիաները:

Ձեռք բերված շարժական ֆլյուորոգրաֆները հնարավորություն տվեցին կատարելու ԶՈՒ-ի ամբողջ անձնակազմի պլանային ու արտապլանային ֆլյուորոգրաֆիկ հետազոտությունները և դրանով իսկ անձնակազմի շրջանում նվազագույնի հասցնելու պալարախտի և թոքային այլ ախտաբանությունների դեպքերը՝ անգամ միջազգային ստանդարտներից էլ ցածր ցուցանիշների:

Այդ փուլում ռեանիմոբիլների ու լավ կահավորված սանիտարական ուղղաթիռի հիմքերի վրա նաև ստեղծվեց կայուն կերպով գործող սանավիացիոն ծառայություն, ինչը հնարավորություն տվեց այդ տարիներին փրկելու 100-ից ավելի երիտասարդների կյանքը,

գ) բուժծառայության կադրային քաղաքականության վերափոխում: Շեշտը դրվեց ինչպես անհրաժեշտ ռազմաբժշկական կադրերի պատրաստման, այն-

պես էլ եղած կադրերի որակավորման բարձրացման վրա,

դ) բուժծառայության կառուցվածքային փոփոխություններ՝ կրծքային վիրաբուժության բաժանմունքի, ակնաբուժական ու միկրովիրաբուժական ծառայությունների ստեղծմամբ, ՌԲՎ կազմում երկու նոր բաժինների ձևավորմամբ և այլ նախաձեռնություններով հանդերձ,

ե) բուժկանխարգելիչ և բուժառողջացուցիչ միջոցառումներ: Այս միջոցառումներն սկսվում են դեռ հանրապետական հավաքակայանում՝ 11 կառավարելի վարակների դեմ զորակոչիկների պատվաստմամբ: Դրա շնորհիվ ԶՈՒ-ում ընդհանուր հիվանդացությունը նվազել է ըստ առանձին հիվանդությունների՝ 10-ից մինչև տասնյակ հարյուրավոր անգամ, դիտվում են դրանց պատահական դեպքեր, որոնք էլ հաջողությամբ բուժվում են:

Այս շրջանի մեր կարևոր նվաճումներից է ամբողջ աշխարհին սարսափեցնող ատիպիկ թոքաբորբերի բուժման եղանակի ու միջոցների հայտնաբերումը: Ավելի ուշ ձեռնարկվեց հատուկ պատվաստանյութով այդ հիվանդության կանխարգելումը, ինչի շնորհիվ կանխվեցին այդ հիվանդությամբ հիվանդացությունը և մահացու ելքերը,

զ) գիտապրակտիկ աշխատանքներ: Ռազմաբժշկական ծառայության շրջանակում կատարվեցին տարբեր գիտահետազոտական աշխատանքներ, որոնց հեղինակները, ամփոփելով իրենց գործնական փորձն ու գիտական հետազոտության արդյունքները, պաշտպանեցին դոկտորական ու թեկնածուական ատենախոսություններ: Կարևորն այն է, որ այդ աշխատանքների գերակշռող մասն ուներ ոչ միայն գիտական, այլև գործնական նշանակություն: Մասնավորապես՝ մշակվեց փուլային տարահանման մեր պայմաններին հարմարեցված համակարգ[6]:

Այս շրջանում նախանշված գրեթե բոլոր խնդիրները հաջողությամբ լուծվեցին, ինչը հնարավորություն տվեց անցնելու զարգացման հաջորդ փուլ:

Չորրորդ փուլը, որն սկսվել է 2010 թ. և շարունակվում է մինչև օրս, որակական փոփոխությունների շրջան է: Այն միտված է դեպի երկարաժամկետ հեռանկար: Ներկա փուլում հատկապես կարևորվում է ՀՀ ԶՈՒ-ի համար հզոր ռազմաբժշկական-հոսպիտալային համալիրի շինարարությունը: Այդ համալիրը հնարավորություն կտա ապահովելու միանգամայն նոր որակի բուժապահովում՝ ներառելով ախտորոշման, բուժական, գիտաուսումնական, պահեստավորման, բուժկանխարգելման հզոր ներուժ: Նման ժամանակակից կառույցը հնարավորություն կտա միջազգային ասպարեզում պահպանելու մեր հեղինակությունն ու մրցունակությունը: Ավարտին է հասցվում այլ ռազմաբժշկական օբյեկտների շինարարությունը:

Ներկայիս փուլում նախատեսվում է նաև սրտաբանական, սրտավիրաբուժության, ընդերադիտական (էնդոսկոպիկ), անոթային վիրաբուժության և այլ ուղղությունների զարգացումը:

[6] Տես *Վ. Պ. Այվազյան, Ս. Գ. Գալստյան, Մ. Գ. Մարգարյան, Մ. Է. Մկրտչյան,* Տեղային պատերազմների ժամանակ նախահոսպիտալային փուլում վիրավորների բուժտարահանումային ապահովման հարցեր: «ՀԲ», 1999, հմ. 2:

Կադրային համալրման բազան կարելի է համարել բավարար: Կադրերի նոր որակների ապահովման նպատակով լայն կապեր են հաստատված Հունաստանի հետ, որտեղ ռազմաբժշկական ակադեմիայում և Արիստոտելի անվան բժշկական համալսարանում դիպլոմային կրթություն են ստանում շուրջ մեկ տասնյակ հայ զինծառայողներ, Գերմանիայում, Չինաստանում, Ամերիկայի Միացյալ Նահանգներում, ՌԴ-ում ուսանում են մեծ թվով հայ բժիշկներ: Շուտով ուսուցանվողներ կունենանք Հունգարիայի դաշտային բժշկական կենտրոնում:

Առաջիկա ամիսներին նախատեսվում է համագործակցության սկիզբ դնել Լեհաստանի, Իսրայելի, ՈՒկրաինայի և Բելառուսի ռազմաբժշկական կառույցների հետ: Միջազգային հարաբերություններում առանձնանում է համագործակցությունը Գերմանիայի հետ, որը զարգանում է՝ շնորհիվ Բունդեսվերի բուժծառայության նախկին պետ գեներալ-լեյտենանտ Կ. Բ. Նակատի: Այս կապը հնարավորություն տվեց ձեռք բերելու դաշտային հոսպիտալ:

Ներկայումս ՀՀ ՋՈՒ-ի ռազմաբժշկական ծառայության վարկանիշը միջազգային ասպարեզում բավականին բարձր է: Շատ զարգացած երկրների հետ փոխհարաբերություններում մենք հանդես ենք գալիս ինչպես հավասարը հավասարի հետ: Հայ զինվորական բժիշկները իրենց պարտքը պատվով են կատարել Իրաքում, այժմ էլ՝ Աֆղանստանում: Եվ ամենուրեք նրանց մասին գովեստով են խոսում: Շնորհիվ հայ բժիշկների աշխատանքի՝ Աֆղանստանում գերմանական հոսպիտալի վրա ծածանվում է նաև ՀՀ պետական դրոշը:

Բուժկանխարգելիչ աշխատանքներում հաջողությունների ձեռքբերմանն էապես նպաստում են զինվորական բժիշկների նորարարությունները ու նորամուծությունները: Նորարարություններից արդեն ճանաչում է ստացել որդաբուժության միջոցով մարտական վերքերի բարդությունների կանխման, դժվար լավացող ու ծանր թարախանեկրոտիկ վերքերի ապաքինման մեթոդիկան, որն առաջարկել է ԿԿՋՀ բուժմասի պետ, բժշկական գիտությունների դոկտոր, բ/ծ փոխգնդապետ Աշոտ Զոհրաբյանը: Մեթոդն արդեն լայն կիրառում է ստացել ռազմադաշտային վիրաբուժության մեջ: Նախատեսվում է ստեղծել որդերով բուժման նոր տարատեսակված լաբորատորիա և դուրս գալ միջազգային ասպարեզ: Երիտասարդ նյարդավիրաբույժ, բժշկական գիտությունների դոկտոր, բ/ծ կապիտան Արման Հակոբյանի նախաձեռնությամբ ԿԿՋՀ-ում ներդրվել է կենտրոնական նյարդային համակարգի ընդերաղիտական վիրաբուժության մեթոդիկան, և տարածաշրջանում դեռ միակ ապարատուրայի ձեռքբերման շնորհիվ այդ եղանակով կատարվում են բազմաթիվ վիրահատություններ: 2011 թ. հաջողությամբ ներդրվել է նաև անդարձելի ախտահարված հոդերի փոխարինումը տարբեր տեսակի կառուցվածքներով:

Ներկայումս ՀՀ ՋՈՒ-ի ՌՔ ծառայությունը ռազմադաշտային աշխատանքները խաղաղ և պատերազմական պայմաններում ապահովելու համար ունի անհրաժեշտ միջոցներ՝ վիրավորների տարահանման դաշտային կառույցներ, հզոր հոսպիտալներ, շարժական էլեկտրակայաններ և այլն:

2011 թ. սեպտեմբերի 5-ից 10-ը անցկացվեց ՀՀ ՋՈՒ-ի ռազմաբժշկական

ծառայության և Գերմանիայի Բունդեսվերի բժշկական ծառայության համատեղ մարտավարամասնագիտական զորավարժությունը՝ առաջին բուժօգնությունից մինչև մասնագիտացված բուժօգնության փուլ, որին հայկական կողմից մասնակցեցին ԿԿՋՀ-ն և Երևանում գտնվող կլինիկաները: Զորավարժության նպատակն էր մարտական պայմաններում առաջին բուժօգնության, առաջին մինչբժշկական, առաջին բժշկական, որակավոր և մասնագիտացված բուժօգնության ցուցաբերումը, ճիշտ և նպատակային տարահանումը կազմակերպելու հմտությունների ձևավորումը:

ՀՀ-ում նման մասշտաբով զորավարժություն անցկացվում էր առաջին անգամ. առաջին անգամ գերմանական կողմի հետ բացազատվեց գնդի ուժեղացված բուժկետ, առաջին անգամ ճշգրիտ կերպով խաղարկվեց վիրավորների տարահանման ժամանակ տարբեր զորատեսակների համագործակցության կազմակերպումը: Զորավարժությունում ներգրավվել էին նաև պահեստազորի մի քանի տասնյակ բժիշկ սպաներ, որոնք գերազանց դրսևորեցին իրենց:

Զորավարժությունը ցույց տվեց, որ ՀՀ ՋՈՒ-ի ռազմաբժշկական ծառայությունը անհրաժեշտության դեպքում կարող է հաջողությամբ համագործակցել համապատասխան օտարերկրյա ծառայությունների հետ:

ՀՀ ՋՈՒ-ի ռազմաբժշկական ծառայության զարգացման կարևոր խնդիրներից կարելի է նշել՝

– կառուցվածքի և աշխատանքի կազմակերպման, ղեկավարման համակարգի մշտական կատարելագործում՝ հայրենական և լավագույն միջազգային փորձի, ինչպես նաև տարածաշրջանում ռազմաքաղաքական իրադրության փոփոխման, հանրապետությունում ընդհանուր առողջապահական իրավիճակի զարգացման հաշվառմամբ,

– զանազան հիվանդությունների բուժման արդյունավետության մեծացումը նոր, այդ թվում՝ մեր ծառայության մասնագետների մշակած, բուժմեթոդիկաների ներդրմամբ,

– կանխարգելիչ միջոցառումների արդյունավետության մեծացում, դրանցով ընդգրկվող թվակազմի ընդլայնում ինչպես արդիական կանխարգելիչ միջոցների և տեխնոլոգիաների կիրառմամբ, այնպես էլ ռազմաբժշկական ցանցի ընդարձակման ու գործունեության ավելի բարձր մակարդակի համադասվածության միջոցով,

– կադրային ներուժի ամրապնդում՝ մասնագետների գիտելիքների ու գործնական հմտությունների որակական մակարդակի բարձրացմամբ,

– բուժմիջոցների ու բժշկական տեխնիկայի մշտական արդիականացում, ավելի կատարյալ դեղամիջոցների կիրառում, նյութատեխնիկական բազայի, այդ թվում՝ շինությունների, կատարելագործում և ընդլայնում,

– ռազմաբժշկական ծառայության համար հուսալի ռեզերվի ստեղծում, մասնավորապես՝ պահեստազորի սպա բժիշկների պարբերական գործնական (վարժանքային) ու տեսական (դասընթացային) հավաքների միջոցով:

НЕКОТОРЫЕ КОНЦЕПТУАЛЬНЫЕ ВОПРОСЫ РАЗВИТИЯ ВОЕННО-МЕДИЦИНСКОЙ СЛУЖБЫ ВС РА

А. М. ПАРСАДАНЯН, полковник м/с, Начальник военно-медицинского управления ВС РА, доктор медицинских наук

РЕЗЮМЕ

Формирование военно-медицинской службы (ВМС) ВС РА началось в сложных условиях навязанной Азербайджаном войны. Однако традиционные для Армении высокий уровень медицинской науки и развитая система здравоохранения позволили успешно решить сложные концептуальные вопросы организации в ВС РА системы военно-медицинского обеспечения.

В развитии системы ВМС ВС РА можно условно выделить следующие четыре этапа:

I этап (1991–1992 гг.)– период стихийного развития с осуществлением медобслуживания за счет добровольного участия гражданских врачей и среднего медперсонала, служивших в Советской армии военврачей и фельдшеров, а также студентов медицинского института;

II этап (1992–2005 гг.)– период формирования военно-медицинской службы с использованием в основном потенциала гражданских медучреждений, вовлечением их врачебного персонала в деятельность ВМС и созданием на их базе госпиталей; внедрение системы подготовки военно-врачебных кадров;

III этап (вторая половина 2005 г.– конец 2009 г.)– разработка комплексного плана развития системы военно-медицинской службы с осуществлением: технического перевооружения медицинской службы как в войсковом, так и госпитально-поликлиническом звеньях; пересмотра кадровой политики с нацелом на подготовку собственных военно-медицинских кадров и повышения квалификации имеющихся кадров; структурных изменений в системе медслужбы; широкомасштабных медицинско-профилактических и медицинско-оздоровительных мероприятий, и т. д.;

IV этап (с 2010 г.– по сей день) – период качественных изменений, нацеленных на долгосрочную перспективу. На данном этапе особую важность представляет строительство мощного военно-медицинского госпитального комплекса, что позволит обеспечить медобслуживание на совершенно новом качественном уровне с задействованием эффективного диагностического, лечебно-профилактического, научно-образовательного потенциала.

Достижению успехов в лечебно-профилактических работах на данном этапе в значительной мере способствует новаторская и инновационная деятельность военных врачей ВМС ВС РА.

На повышение качества организации работ ВМС ВС РА нацелено международное сотрудничество с соответствующими службами дружественных стран, проведение совместных с ними тактических специализированных учений.

Важными задачами дальнейшего развития системы военно-медицинской службы ВС РА являются: постоянное совершенствование структуры и организации работ, системы руководства с учетом отечественного и международного опыта; повышение эффективности лечения различных болезней посредством внедрения новых лечебных методик, в том числе – разработанных специалистами ВМС ВС РА; повышение эффективности профилактических мероприятий, расширение круга охватываемых ими лиц путем применения современных профилактических средств и технологий, а также расширения военно-медицинской сети и обеспечения более высокого уровня координированности деятельности; укрепление кадрового потенциала путем повышения уровня знаний и практических навыков специалистов; постоянная модернизация медицинских средств и техники, применение более совершенных медикаментных средств, совершенствование и обогащение материально-технической базы, в том числе сооружений; создание надежного кадрового резерва для военно-медицинской службы посредством переподготовки врачей – офицеров запаса на периодических практических и теоретических (учебных) сборах, и т. д.

SOME CONCEPTUAL ISSUES OF DEVELOPING THE MILITARY MEDICAL SERVICE OF THE RA ARMED FORCES

A. M. PARSADANYAN, Colonel of Medical Service, Head of the Military Medical Directorate of the RA Armed Forces, MD

SUMMARY

The formation of the military medical service (MMS) of the RA Armed Forces began in the difficult conditions of the war imposed by Azerbaijan. However, the traditional high level of Armenia's medical science and developed health system enabled the successful solution of complex conceptual problems of organizating the military medical care system in the RA.

The development of the military medical service of the RA Armed Forces can be divided into four stages:

Stage I (1991–1992) – Spontaneous development period with the conduct of medical service through the voluntary participation of civilian doctors and nurses, military medical doctors and medical assistants served in the Soviet Army, and students from the medical institute;

Stage II (1992–2005)– Period of the formation of the military medical service mainly with the use of the capacity of civil medical institutions by the involvement of their medical staff in the activities of the MMS and by the creation of hospitals on their basis;

Stage III (the second half of 2005–end of 2009) – The elaboration of the comprehensive plan for the development of the military medical service system

with the implementation of: technical re-equipment of the medical service both in the troop and hospital-polyclinic links, the personnel policy review aimed at the training of military medical personnel and the professional development of the existing one, the structural changes in medical service, large-scale medical care and medical sanitary measures, etc.;

Stage IV (from 2010 to present) – The period of qualitative changes targeted at long term perspective. At this stage the construction of a powerful military medical hospital complex is of particular importance that will provide medical care at an absolutely new level of quality applying the powerful diagnostic, therapeutic and preventive, and scientific educational potential.

The innovative activities of the military doctors of the RA Armed Forces to a large degree promotes the achievement of the success in medioprophilactic works.

The collaboration with the appropriate agencies of the friendly countries promotes the quality of the works of the RA Armed Forces and the conduct of the joint special tactical exercises.

The important tasks for the further development of the military medical service of the RA Armed Forces are: the continuous improvement of the structure and the organization of work and of the management system, taking into account the domestic and international experience; the increase of the treatment effectiveness of various diseases through the introduction of new therapeutic techniques, including those developed by the professionals of the military medical service of the RA Armed Forces; the increase of preventive measures' effectiveness and the extension of the range of individuals included, by the application of modern tools and technologies, as well as the expansion of military medical network and the provision of a coordination; the strengthening of the human potential by enhancing professionals' knowledge and practical skills; the constant upgrading of medical facilities and equipment, the application of better medicaments, the improvement and enrichment of the material and technical basis, including the facilities; the creation of reliable personnel reserve for the military medical services through the periodic practical and theoretical (academic) fees of the medical reserve officers, etc.

ՌԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Հ. Մ. ԴԱՐԲԻՆՅԱՆ, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ

Մասնագետների ընդհանուր կարծիքն այն է, որ պատերազմների սանիտարական հետևանքներն արտահայտվում են բնակչության առողջական վիճակի վատթարացմամբ և ազդում են ամբողջ առողջապահության համակարգի վրա՝ կախված ռազմական գործողությունների բնույթից և մասշտաբներից: Պատերազմի ժամանակ խիստ վատանում են բնակչության կենցաղային պայմանները, ինչը հանգեցնում է վարակիչ և այլ հիվանդությունների (դիստրոֆիա, հիպովիտամինոզ և այլն) տարածմանը: Մասնագետները նշում են նաև, որ պատերազմի ժամանակ դիտվում են մարդաչափական տվյալների, հաշմանդամության, ժողովրդագրական ու մանկական առողջության հետ կապված ցուցանիշների, ինչպես նաև պալարախտի, վեներական, սրտանոթային, ուռուցքաբանական, նյարդահոգեկան, մանկական և մի շարք այլ հիվանդությունների ընթացքի փոփոխություններ:

Պատերազմներում սանիտարական հետևանքների ուսումնասիրության համար խիստ կարևոր է կողմերի ելքային վիճակի հաշվառումը:

Օրինակ՝ Արցախյան պատերազմի սանիտարական հետևանքները քննարկելու համար պետք է հաշվի առնել, մասնավորապես, տվյալ ժամանակահատվածին բնորոշ առանձնահատկությունները, որոնք ունեին ինչպես բացասական, այնպես էլ դրական ուղղվածություն:

Հարկ է նշել, որ հակամարտության սկզբնական փուլում ռազմական բժշկության կազմակերպման գործում ոչ բավարար հայրենական փորձը, այդ թվում՝ տեսական մակարդակով, բանակը համապատասխան կադրերով համալրելու դժվարությունը որոշակի բացասական ազդեցություն գործեցին հայկական ռազմական բժշկության զարգացման վրա, թեև պետք է շեշտել, որ հենց այդ շրջանում ձեռնարկվեցին մի շարք ողջամիտ քայլեր, որոնք նախադրյալներ ստեղծեցին հետագայում վիճակը շտկելու և Զինված ուժերի բուժապահովման համակարգը համապատասխանեցնելու արդիական միջազգային ստանդարտներին:

Այսպես. Ղարաբաղյան հակամարտության տարիներին, հատկապես՝ սկզբնական ժամանակահատվածում, վիրավորների բուժապահովումն ամբողջությամբ դրվեց քաղաքացիական առողջապահության համակարգի վրա, թեև այն ընդհանուր առմամբ պատրաստ չէր նման առաքելության: Իհարկե, նման քայլը նորություն չէ: Գրականության տվյալների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ շատ երկրներ ռազմական ընդհարումների ժամանակ, բացի ռազմաբժշկական ծառայության ուժերից, մեծ չափով օգտագործում են նաև քաղաքացիական առողջապահության բուժհաստատությունների ներուժը: Ընդ որում, գոյություն ունեցող միջոցների արդյունավետ օգտագործման համար ընդհան-

րապես առաջարկվում է ռազմական ընդհարումների ժամանակ կազմակերպել քաղաքացիական առողջապահության և ռազմաբժշկական ծառայության ուժերի սերտ համագործակցություն:

Այսպես. Կորեայի պատերազմի ժամանակ օգտագործվել են քաղաքացիական բուժհիմնարկներ, որոնք սկզբում ծավալվել են 60 մահճակալի, հետագայում՝ 200 մահճակալի չափով: 1986 թ. Լիբանանի դեմ պատերազմում Իսրայելի սահմանամերձ քաղաքացիական հիվանդանոցները վերածվել էին հոսպիտալների: Զինվորական բժշկական անձնակազմով ուժեղացված բուժհիմնարկներում ծավալվել էին բժշկական տեսակավորման, վերակենդանացման, անհետաձգելի բուժօգնության, վիրաբուժական և արյան բանկի բաժանմունքները: Յուրաքանչյուր հոսպիտալ օրական վիրաբուժական օգնություն էր ցույց տալիս 300 վիրավորի:

ԱՄՆ-ի բանակի ռազմաբժշկական ծառայության մշակած ծրագրի համաձայն նախատեսվում է վիրավորների և հիվանդների տարահանում ինչպես ռազմաբժշկական կենտրոններ, այնպես էլ քաղաքացիական բուժհիմնարկներ ու պատերազմի վետերանների հոսպիտալներ: Մասնավորապես՝ ԱՄՆ-ը Մեծ Բրիտանիայում ստեղծել է 15 ռազմական հոսպիտալ, իսկ անգլիական կողմն անհրաժեշտության դեպքում պետք է իր քաղաքացիական բուժհիմնարկներից տրամադրի 40000 մահճակալ:

Ներկայումս, երբ ՀՀ-ում քաղաքացիական առողջապահության հնարավորություններն զգալիորեն մեծացել են, և բավականին բարձրացել է ընդհանուր բժշկագիտության զարգացման մակարդակը, նման համագործակցությունը, անշուշտ, դրական ազդեցություն է գործում ռազմական բժշկության զարգացման որակական պարամետրների վրա: Քանի որ ռազմական բժշկության հիմնական տարբերակիչ հատկանիշն այն է, որ նա գործ ունի մարտական գործողությունների հետևանքների հետ, հարկ ենք համարում ռազմական բժշկության և քաղաքացիական առողջապահության ոլորտների համագործակցության պրոբլեմը ավելի հանգամանորեն ներկայացնել տեղային պատերազմների ժամանակ:

Մի շարք հեղինակների կարծիքով տեղային պատերազմը սահմանափակ ռազմական ընդհարում է, որին որպես կանոն մասնակցում են խաղաղ ժամանակի զինված ուժերի խմբավորումները:

Ըստ այդմ որպես տեղային պատերազմների և զինված ընդհարումների բժշկական ապահովման կազմակերպման առանձնահատկություններ կարելի է նշել հետևյալ հանգամանքները.

- մարտական գործողությունների մասշտաբի ընդլայնման հնարավորությունը, երկրի ամբողջ տարածքում մարտական հարվածներ հասցնելու և դիվերսիոն գործողություններ ծավալելու վտանգը,
- մարտական գործողությունների տևողության լայն տատանումները՝ մի քանի օրից մինչև մի քանի տարի,
- մարտական գործողությունների փուլայնությունը՝ ինտենսիվության կտրուկ փոփոխմամբ, ինչի հետևանքով պատերազմի տարբեր շրջաններում սանիտա-

րական կորուստների կառուցվածքում վիրավորների և հիվանդների քանակական հարաբերակցության փոփոխումները,

• քիմիական և միջուկային արդյունաբերության կամ նման նյութեր օգտագործող ձեռնարկությունների, ինչպես նաև թունավոր քիմիական նյութերի պահեստների և տրանսպորտային տարողությունների ավերման վտանգը,

• մարտական գործողություններին տարբեր նախարարությունների ու գերատեսչությունների ենթակա զորային խմբավորումների համատեղ մասնակցությունը, ինչը պահանջում է դրանց համապատասխան բուժապահովում,

• մարդկային կորուստների նկատմամբ հակամարտող կողմերի առանձնակի զգացմունքայնությունը:

Տեղային պատերազմներում և ռազմական ընդհարումներում զորքերի բուժապահովումը հիմնվում է ըստ նախանշանակման փուլային տարահանման և բուժման համակարգի վրա, ինչը պահանջում է.

• առաջադրված խնդիրներին համապատասխան պատեհաժամորեն նախապատրաստել բուժծառայության տարածքային համակարգ,

• սահմանամերձ շրջաններում զորքերի բուժապահովման խնդիրների լուծման համար, հատկապես՝ մարտական գործողությունների սկզբնական փուլում, ստեղծել ռազմաբժշկական ենթակառուցվածքներ,

• ստեղծել տարբեր նախարարությունների և գերատեսչությունների զորային խմբավորումների բուժապահովումն իրականացնող բժշկական ծառայությունների միասնական համակարգ,

• սահմանամերձ շրջաններում և զինված հակամարտության տարածքում հանկարծակի ծագող խնդիրների լուծման, բժշկական ծառայության խմբավորումների համալրման համար նախատեսել բարձր աստիճանի պատրաստությամբ շարժունակ բուժկազմավորում (առանձին բժշկական ջոկատ (ԱԲՋ), համալրման խմբեր կամ ջոկատներ),

• ապահովել բոլոր տեսակների բուժօգնության առավելագույն մոտեցումը ախտահարվածին (վիրավորին, հիվանդին),

• շարակարգել բուժծառայության ուժերն ու միջոցները՝ մարտական գործողությունների ժամանակ մարտակարգի խորության մեծացմանը անկորուստ և արագ արձագանքելու համար,

• զինված պայքարի տարաշարժային ձևերի կիրառման դեպքում ապահովել առանձին ուղղություններով մարտական գործողություններ վարող փոքր խմբերը համապատասխան բժշկական ուժերով (բժիշկներ, միջին բուժանձնակազմ), գույքով և տրանսպորտային միջոցներով համալրելու հնարավորությունը:

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ ընդհանուր առմամբ փոքր պետությունների զինված ուժերի անձնակազմին բուժօգնության ցուցաբերման կազմակերպումը դեռ գտնվում է ուսումնասիրման փուլում, քանի որ համապատասխան հետազոտությունների ճնշող մեծամասնությունը կատարվում է մեծ պետություններում և ըստ այդմ՝ վերաբերում է գերազանցապես նրանց:

Համարվում է, որ տեղային պատերազմներում բուժապահովման կազմակերպման տեսակետից կարևոր գործոններ են.

• քաղաքացիական առողջապահության համակարգի վիճակը, իր վրա դրված խնդիրների կատարմանը նրա պատրաստության աստիճանը,

• ՋՈՒ-ի անհրաժեշտ ռազմաբժշկական ենթակառուցվածքների առկայությունը,

• միջգերատեսչական և տարբեր զորատեսակների բուժծառայությունների միավորված բժշկական կազմավորումների գոյությունը,

• բարձր աստիճանի պատրաստությամբ շարժունակ բժշկական ստորաբաժանումների և զորամասերի առկայությունը (ԱԲՋ-ներ, բժշկական ուժեղացված խմբեր կամ ջոկատներ), կազմավորումներ, որոնք նախատեսված են զինված հակամարտության տարածքում անսպասելիորեն առաջացած խնդիրների լուծման, ինչպես նաև բժշկական ծառայությունների խմբավորումների համալրման համար,

• բուժծառայության ուժերի և միջոցների շարակարգվածությունը:

Ընդսմին շարակարգները լինում են մի քանիսը և լուծում են հետևյալ խնդիրները.

• առաջին շարակարգը՝ առաջին օգնությունից մինչև առաջին բժշկական օգնության միջոցառումներ, որոնք ապահովվում են բրիգադների, գնդերի բժշկական ծառայությունների կողմից,

• երկրորդ շարակարգը՝ որակավոր բժշկական օգնության միջոցառումներ, որոնք իրականացվում են ԱԲՋ-ներում, կայազորային հոսպիտալներում և սահմանամերձ քաղաքացիական բուժհիմնարկներում,

• երրորդ շարակարգը՝ մասնագիտացված բժշկական օգնության միջոցառումներ, որոնք իրականացվում են մասամբ ԱԲՋ-ներում, կայազորային հոսպիտալներում և սահմանամերձ քաղաքացիական բուժհիմնարկներում (համալրող խմբերի առկայության դեպքում), իսկ հիմնականում՝ կենտրոնի բազային հոսպիտալներում:

Համարվում է, որ բուժտարահանման միջոցառումների կազմակերպման ժամանակ պարտադիր չէ ախտահարվածների և հիվանդների անցումը բոլոր երեք շարակարգներով, այլ գերադասելի է առաջին շարակարգից սեղմ ժամկետներում ավիացիոն տրանսպորտով տեղափոխել մասնագիտացված բուժհիմնարկներ, որտեղ նրանք կստանան լիարժեք բժշկական օգնություն: Սակայն իրականում որակավոր բժշկական փուլը հաճախ լինում է անհրաժեշտ:

Տարբեր հեղինակների տվյալներով՝ ԱՄՆ-ի ռազմաբժշկական ծախսերում նախատեսվում է մինչև 45 %-ը հատկացնել երկրի սահմաններից դուրս գտնվող հոսպիտալների արդիականացման և նորերի ստեղծման համար: Ջանգվածային աղետների ժամանակ նման համալիրները կարող են ծավալվել մասնագիտացված բուժօգնություն ցույց տվող բուժհաստատություններում՝ վիրավորներին անմիջականորեն ընդունելով տեսակավորող բաժանմունքներից:

Ֆրանսիայում 1980 թ. ռազմաբժշկական ծառայության շրջանակներում ստեղծվել է արտակարգ իրավիճակներում արագ արձագանքման անհետաձգելի բուժօգնության ծառայություն՝ ՖԱՀ-ՄԻՌ *(FAH-MIR),* իսկ ԱՄՆ-ում 1983 թվականից գործում է արտակարգ իրավիճակների ժամանակ քաղաքացիական սեկտորի

կառավարման համազգային կենտրոն *(NEMS)*: Վերջինիս բաղկացուցիչ մասն է աղետների բժշկական ազգային համակարգը *(NDMS),* որը 71 մեծ քաղաքներում իր տրամադրության տակ ունի ավելի քան 100000 մահճակալ: Յուրաքանչյուր տարի բանակի պահեստային բժշկական անձնակազմի համար անցկացվում են երեքշաբաթյա դասընթացներ, որոնց մասնակցում են մինչև 8000 մարդ:

Ամփոփելով վերը շարադրվածը և հաշվի առնելով մեր տարածաշրջանում սանիտարական կորուստների կառուցվածքը՝ նպատակահարմար ենք համարում ՀՀ կենտրոնական բժշկական հաստատություններից ձևավորել ժամանակակից սարքավորանքով և դեղորայքով հագեցված, բարձր որակավորում ունեցող մասնագետներից կազմված համալրման խմբեր (հատուկ նախանշանակման բժշկական ջոկատ կամ խումբ) ըստ հետևյալ ուղղությունների՝ էնդոսկոպիա, ուլտրաձայնային ախտորոշում, լաբորատոր գործ, ճառագայթաբանություն, թունաբանություն, հիպերբարիկ թթվածնայնացում, էքստրակորպորալ դետոքսիկացիա:

Ընդ որում, ՀՀ առողջապահության համակարգի ու ռազմաբժշկական ծառայության համագործակցության շրջանակներում և այդ հարաբերությունների հետագա զարգացման հեռանկարային պլանում նպատակահարմար է.

- պլանավորել առկա մահճակալային ֆոնդի օգտագործումը, մասնավորապես՝ ռազմական գործողությունների վերսկսման պայմաններում դրա բաշխումը՝ հաշվի առնելով բուժտարահանման արդեն մշակված սկզբունքները, տրանսպորտային ապահովումը և այլն,
- վերլուծել և գնահատել ՀՀ առողջապահության համակարգի և ՊՆ ռազմաբժշկական ծառայության համագործակցության ձևաչափն ու տեսակները թիկունքային հոսպիտալային բազա ձևավորելու տեսակետից՝ որպես դրա հաստատություններ օգտագործելով մեծ բազմապրոֆիլ հիվանդանոցները,
- պլանավորել հրամանատարաշտաբային զորավարժությունների, այդ թվում՝ զորքերի ներգրավմամբ, պարբերական կազմակերպումը՝ տարերային բնական ու մարդածին աղետների մոդելավորմամբ, ԶՈՒ-ի ռազմաբժշկական ծառայության և ԱԻՆ-ի առողջապահության համակարգի համագործակցությամբ,
- պլանավորել պատերազմական պայմանների համար առողջապահության նախարարության համակարգում համապատասխան թվակազմի և անվանացանկի բժշկական ռեզերվի պատրաստում,
- իրականացնել արական սեռի դպրոցականների ֆիզիկական ու հոգեկան վիճակի մշտազննում, որի ընթացքում կատարել կանխարգելիչ և առողջացուցիչ միջոցառումներ,
- պլանավորել առողջապահական բարձր տեխնոլոգիաներով և համապատասխան որակավորման մասնագետների ներգրավմամբ ՀՀ ԱՆ-ի և ՊՆ՝ նեղ մասնագիտացված միասնական կենտրոնների համատեղ ստեղծում և մարտական գործողությունների վերսկսման պարագայում դրանց շահագործում:

Հարկ է նշել, որ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության» իրականացմանն ուղղված գերատեսչական ծրագրով նախատեսվում է ստեղծել առողջապահության ավելի արդյունավետ համակարգ:

Ի կատարումն այդ պահանջի՝ մշակվում է առողջապահության բնագավառի համար գիտականորեն հիմնավորված և սոցիալապես կողմնորոշված կադրային քաղաքականություն, որը էապես կնպաստի համակարգի գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացմանը:

Ըստ այդ ծրագրի՝

- գիտական ուսումնասիրությունների հիման վրա կորոշվի տարբեր մակարդակի ու կատեգորիաների բուժաշխատողների պահանջարկը (այդ թվում նաև ռազմաբժշկական համակարգի համար), հանրապետությունում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական ու ժողովրդագրական փոփոխությունների բնույթի և բնակչության հիվանդացության կառուցվածքի հաշվառմամբ կկազմվի ու կներկայացվի հանրապետական պատվեր՝ համապատասխան կրթօջախներում բժիշկների, միջին բուժանձնակազմի և այդ կատեգորիայի աշխատողների պատրաստման համար,
- կապահովվի բժիշկների և միջին բուժանձնակազմի ճիշտ թվային հարաբերակցությունը՝ առողջապահության համակարգում նախատեսվող կառուցվածքային փոփոխություններին համապատասխան, և կներկայացվի հանրապետական պատվեր բժիշկների և բուժանձնակազմի վերապատրաստման համար,
- հնարավորություն կստեղծվի առողջապահության բնագավառի վարչական կազմի կադրերի, բժիշկների և միջին բուժանձնակազմի վերապատրաստման ու կատարելագործման համար,
- պայմաններ կստեղծվեն բժիշկների, միջին բուժանձնակազմի և առողջապահության համակարգի կառավարման օղակների աշխատողների պատրաստման բնագավառում զարգացնելու և ավելի նպատակային դարձնելու համար միջազգային համագործակցությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007:

2. *Ս. Գ. Գալստյան, Մ. Գ. Մարգարյան, Հ. Ա. Գոգինյան,* Զինված ուժերի ռազմաբժշկական ապահովման պրոբլեմները տեղային բնույթ կրող պատերազմների ժամանակ: Ե., 1998:

3. *Հ.. Մ. Դարբինյան*, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության հիմնադրույթներն առողջապահության ոլորտում: «ՀՔ», 2007, հմ. 2–3:

4. *Ք. Ն. Հարությունյան,* Նոր մոտեցումներ Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի բժշկական ապահովման գործում: «ՀՔ», 1995, հմ. 2–3:

5. «Военная медицина–вчера, сегодня, завтра». Главное военно-медицинское управление МО РФ (army.lv/ru/Voennaya-meditsina–vchera–segodnya–zavtra/2631/4236):

6. *А. М. Минасян, А. А. Агабекян, Г А. Агаян, Д. Л. Мелконян.* Военная и гражданская медицина–пути дальнейшей интеграции. «Գիտական աշխատությունների ժողովածու (Համաբանակային ռազմաբժշկական առաջին գիտագործնական կոնֆերանս)», հ. 2: Ե., 2001:

7. *И. М. Чиж, Е. Г. Жиляев, Л. Л. Галин, В. В. Белозеров.* Военно-медицинская доктрина–научная основа медицинского обеспечения Вооруженных сил. «ВМЖ», 1995, № 12.

8. «Энциклопедический словарь военной медицины», тт. 3, 4. М., 1948.

9. «Emergency care on the battlefield» (www.nhs.uk/Livewell/militarymedicine/Pages/Survivingbattlefield.aspx).

ВОЕННАЯ МЕДИЦИНА В СИСТЕМЕ ЗДРАВООХРАНЕНИЯ РЕСПУБЛИКИ

А. М. ДАРБИНЯН, кандидат медицинских наук, доцент,
Первый заместитель Министра здравоохранения РА

РЕЗЮМЕ

Практика современных локальных войн и вооруженных конфликтов показывает, что для обеспечения высокоэффективного медобслуживания войск необходимо взвешенное сотрудничество военно-медицинской службы ВС и учреждений гражданского здравоохранения, предусматривающее: своевременную подготовку территориальной системы медицинской службы, создание военно-медицинской инфраструктуры для решения задач медобеспечения войск в приграничных районах, в особенности, на начальном этапе боевых действий; создание единой системы медицинских служб, осуществляющих медобеспечение войсковых группировок разных министерств и ведомств; обеспечение максимального приближения всех видов медицинской помощи к раненым и больным; эшелонирование сил и средств медицинской службы в целях предотвращения потерь и быстрого реагирования при возрастании глубины боевого порядка в процессе боевых действий, обеспечение возможности укомплектования маленьких групп, автономно ведущих боевые действия на отдельных направлениях, соответствующим медперсоналом, инвентарем и транспортными средствами.

С учетом структуры санитарных потерь в нашем регионе целесообразно из центральных медицинских учреждений РА сформировать группы комплектования, оснащенные современным оборудованием и медикаментами с вовлечением в них специалистов высокой квалификации по следующим направлениям: эндоскопия, ультразвуковая диагностика, лабораторное дело, рентгенология, токсикология, гипербарическая оксигенация, экстракорпоральная детоксикация.

MILITARY MEDICINE IN THE HEALTHCARE SYSTEM OF THE REPUBLIC

H. M. DARBINYAN, PhD in Medicine, Associate Professor,
First Deputy Minister of the RA Healthcare

SUMMARY

The practice of modern local wars and armed conflicts shows that for ensuring the high-performance medical care of troops a balanced cooperation of the Armed Forces' military medical service with the civilian healthcare agencies is needed, providing: the timely preparation of the medical service's territorial system; the establishment of the military medical infrastructure to meet the challenges of the medical provision of the troops in border areas,

especially, at the initial stage of hostilities; the creation of a unified healthcare service system, the implementation of the medical provision of the military factions from different ministries and agencies; the maximization of the approximation of medical care of all types to the wounded and sick; the separation of forces and means of medical service in order to prevent losses and quickly respond in case of the increase of the fighting depth in hostilities; the possibility to recruit small groups independently leading fighting in certain areas with the relevant medical personnel, inventory and vehicles.

Taking into account the structure of the sanitary losses in our region it is appropriate to form recruitment groups from the RA central medical institutions furnished with modern equipment and medical supplies, involving in these highly qualified professionals in the following areas: endoscopy, ultrasound diagnostics, laboratory work, radiology, toxicology, hyperbaric oxygenation, extracorporeal detoxication.

ՌԱԶՄԱԲԺՇԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԼՈՆՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԾՐԱԶԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Դ. Հ. ԴՈՒՄԱՆՅԱՆ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊԲՀ ռեկտոր, Ս. Գ. ԳԱԼՍՏՅԱՆ, բ/ծ գնդապետ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի պետ

Ռազմաբժշկական ծառայությունն իրականացնում է յուրահատուկ համալիր միջոցառումներ՝ ուղղված զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների առողջության պահպանման, զորքերի սոցիալ-բժշկական ապահովման, սանիտարահամաճարակաբանական և բնապահպանական հսկողության, վիրավորներին և հիվանդներին բուժօգնության ցուցաբերման հիմնախնդիրների լուծմանը: Ըստ այդմ՝ ռազմաբժշկական համակարգն ունի կադրերի պատրաստման և օգտագործման իր առանձնահատկությունները:

Միանգամայն հասկանալի է, որ ռազմաբժշկական կրթության ոլորտի կատարելագործումը զինված ուժերի բուժապահովման գերակա խնդիրներից է, քանի որ կադրերի պատրաստման համակարգի անկատարությունն անմիջականորեն ազդում է մասնագետների որակավորման և բուժծառայության գործունեության որակական ցուցանիշների վրա: Դրա հետ մեկտեղ ռազմաբժշկական կրթությունը ռազմական կրթության բաղկացուցիչ մասն է, որն ընդհանուր օրինաչափություններով հանդերձ ունի նաև իր ուրույն առանձնահատկությունները: Այսպես. ռազմաբժշկական կրթական համակարգը մի փակ շղթա է, որը ներառում է ղեկավարող օրգան և ռազմաուսումնական հաստատություն, որտեղ պատրաստվում են կադրեր՝ ըստ հաստատված ուսումնական ծրագրերի և պլանի:

Ռազմաբժշկական կրթության համակարգն ընդգրկում է *առաջնային ռազմաբժշկական կրթությունը*, որն ստանում են ընդհանուր բժշկական կրթության (բարձրագույն, միջին և ցածր) հետ միաժամանակ, և որով ապահովվում է ռազմաբժշկական կազմի տարբեր կատեգորիաների սկզբնական ձևավորումը, և *բժշկական կազմի կատարելագործմամբ իրականացվող ռազմաբժշկական կրթությունը*, որի նպատակն է նրա մասնագիտական պատրաստականության **ու ռազմաբժշկական որակավորման մակարդակի բարձրացումը**[1]**:**

Առաջնային ռազմաբժշկական կրթությունը լինում է 3 տեսակի:

1-ին տեսակի ռազմաբժշկական կրթությունն օրգանապես զուգակցվում է ընդհանուր բժշկական կրթության հետ, իրականացվում է կրթության ամբողջ ընթացքում համապատասխան ռազմաբժշկական կրթական հիմնարկներում (ռազմաբժշկական ակադեմիաներ, ինստիտուտներ, ֆակուլտետներ, ուսումնարաններ): Այս դեպքում իրականացվող ռազմաբժշկական կրթությունն առավել

[1] Տես «Военно-медицинское образование». «Медицинская энциклопедия» (www.medical-enc.ru/m/12/voenno-meditsinskoe-obrazovanie,shtml):

կուռ է, տրամաբանորեն հետևողական, նպատակային ու հստակ, բոլոր կուրսերում ներառում է ռազմական դաստիարակության տարրեր: Նման տեսակ գործում է Ռուսաստանում (Ս. Մ. Կիրովի անվան ռազմաբժշկական ակադեմիա), Լեհաստանում, ԱՄՆ-ում, Չինաստանում, Ֆրանսիայում, Իտալիայում, Ճապոնիայում, Հայաստանում:

Օրինակ՝ ԱՄՆ-ի Բեթեսդա քաղաքում (Մերիլենդի նահանգ) գործում է ռազմաբժշկական համալսարան, որտեղ ընդունվում են արական սեռի 18-28 տարեկան անձինք, որոնք նախապես ավարտել են քոլեջ՝ անցնելով անգլերեն, մաթեմատիկա, ֆիզիկա, կենսաբանություն, օրգանական և անօրգանական քիմիա: ՈՒսման տևողությունը 4 տարի է: Ավարտելուց հետո շնորհվում է առաջին սպայական կոչումը՝ լեյտենանտ: Պարտադիր ծառայության ժամկետը 7 տարի է: Ամեն տարի ավարտում է 170 մարդ: Չինաստանում ռազմաբժշկական համալսարանը Սիան քաղաքում է: ՈՒսուցումը 6-7 տարի է, տարեկան ավարտում են 250 բժիշկ և 50 ատամնաբույժ: Համալսարանն ունի 65 ամբիոն, 100 գիտահետազոտական լաբորատորիա, 3600 դասախոս (այդ թվում՝ 700 պրոֆեսոր և ադյունկտ): Համալսարանին կից գործում են նաև 2 գիտահետազոտական ինստիտուտ, 2 հոսպիտալ, 5 բժշկական կենտրոն: Ֆրանսիայի Լիոն քաղաքում գործում է ցամաքային զորքերի, իսկ Բորդոյում՝ ռազմածովային նավատորմի բժշկական դպրոց: ՈՒսման տևողությունը 6 տարի է՝ գումարած ստաժավորումը: Զորքերում պարտադիր ծառայությունից հետո շրջանավարտները կարող են սովորել ինտերնատուրայում կամ մասնագիտական դասընթացներում, ինչից հետո՝ հոսպիտալում զբաղեցնել բժշկի ասիստենտի պաշտոն: Ճապոնիայի ռազմաբժշկական ակադեմիան գտնվում է Տոկիոյում: Այնտեղ տարեկան ընդունվում է 80 հոգի: Շրջանավարտներն ստանում են ֆելդֆեբելի կոչում և բաշխվում են սպայական թեկնածուական դպրոցներում ըստ զորատեսակների, որտեղ անցնում են 25-շաբաթյա լրացուցիչ պատրաստում: Դպրոցն ավարտելուց հետո ստանում են լեյտենանտի կոչում: Պարտավոր են զորքերում ծառայել 9 տարի:

2-րդ տեսակի դեպքում մասնագետի պատրաստումը կատարվում է առաջնային բժշկական կրթություն ստանալուց հետո, որը լրացվում է բժշկական անձնակազմը զորակոչելով՝ նրան տալով լրացուցիչ ռազմական և ռազմաբժշկական կրթություն հատուկ ռազմաբժշկական հաստատություններում: Կրթության տևողությունը մի քանի ամսից մինչև 1-1,5 տարի է: Նման համակարգ գործում է մի շարք երկրներում՝ Բուլղարիայում, Հունգարիայում, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, Շվեյցարիայում, Պորտուգալիայում և այլ պետություններում:

3-րդ տեսակի համակարգում ռազմաբժշկական և ընդհանուր բժշկական կրթությունները համատեղվում են ավարտական կուրսերում: Նման կարգ գործում է ՌԴ ռազմաբժշկական ակադեմիայի՝ Սամարայի, Սարատովի, Տոմսկի մասնաճյուղերում, Բելառուսում, ՈՒկրաինայում:

Հարկ է նշել, որ ռազմաբժշկական կրթության համակարգի ընտրությունը պայմանավորված է տվյալ պետությունում ռազմաբժշկական կրթության ընդունված համակարգով, զինված ուժերի կազմակերպվածքով և նրա բուժծառա-

յության համալրման կարգով, տնտեսական հնարավորություններով[2]: Ի դեպ, միևնույն պետությունում կարող են միաժամանակ կիրառվել ռազմաբժշկական կրթության տարբեր տեսակի համակարգեր:

Միջազգային փորձի, ինչպես նաև ՀՀ ՋՈՒ-ի պահանջարկի և ռազմական ու ռազմաբժշկական կրթության առանձնահատկությունների հաշվառմամբ ՀՀ Կառավարության 1994 թ. մայիսի 19-ի հմ. 232 որոշմամբ[3] Երևանի պետական բժշկական ինստիտուտի բուժծառայության կազմակերպման և էքստրեմալ բժշկության ամբիոնի հիմքի վրա ստեղծվեց ռազմաբժշկական ֆակուլտետ:

Համաձայն ՀՀ Կառավարության 2005 թ. սեպտեմբերի 15-ի հմ. 1716-Ն որոշման՝ «Ռազմաբժշկական ֆակուլտետը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի համար պատրաստում է ռազմաբժշկական բարձրագույն կրթությամբ սպաներ, կազմակերպում հետբուհական և հետդիպլոմային մասնագիտական կրթությունը, պատրաստում ֆակուլտետի համար գիտամանկավարժական կադրեր և կազմակերպում գիտահետազոտական աշխատանքները»[4]: Ֆակուլտետում բացվեցին ամբիոններ և այլ ստորաբաժանումներ, լաբորատորիաներ, ստեղծվեց ֆակուլտետի կառավարման մարմինը՝ դեկանատը:

1994–1995 թթ. ռազմաբժշկական ֆակուլտետ ընդունելությունը կազմակերպվեց ԵՊԲՀ բուժական, մանկաբուժական և սանիտարահիգիենիկ ֆակուլտետների 5-րդ կուրսերի ուսանողների հավաքագրմամբ, իսկ 1996 թ.՝ արդեն առաջին կուրսից: Առ այսօր ֆակուլտետը տվել է 425 շրջանավարտ, որոնցից 30-ն ավարտել են գերազանցության դիպլոմով: Շրջանավարտների մեծ մասը ներկայումս ծառայում է ՀՀ սահմանամերձ զորամասերում, կենտրոնական կլինիկական զինվորական և կայազորային հոսպիտալներում, ՀՀ ՋՈՒ-ի ռազմաբժշկական վարչություններում, ինչպես նաև ռազմաբժշկական ֆակուլտետում:

Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ ֆակուլտետում ուսուցման ձևերն ու մեթոդները 1994 թվականից մինչև օրս գրեթե փոփոխությունների չեն ենթարկվել և դարձյալ հենվում են ռազմաբժշկական կադրերի պատրաստման՝ Խորհրդային բանակում կիրառված ուսումնական ծրագրերի ու պլանների վրա, որոնք որոշ չափով տեղայնացված են:

Դրան գումարվում է այն, որ ռազմաբժշկական ֆակուլտետը բազմակի ենթակայության է, չունի քանակապես ու որակապես բավարար կադրային ներուժ և մասնագիտացված կրթական համալիր, ըստ էության դուրս է մնացել ռազ-

[2] Տես նույն տեղում:

[3] Տես ՀՀ Կառավարության 1994 թ. մայիսի 19-ի «Հայաստանի Հանրապետության պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների՝ պահեստազորի սպաների ծրագրով ռազմական պատրաստության հիմնադրույթները և այդ բուհերի ցանկը հաստատելու մասին» հմ. 232 որոշումը («Հայաստանի իրավական տեղեկատվության համակարգ» կայք (http://www.arlis.am/)):

[4] ՀՀ Կառավարության 2005 թ. սեպտեմբերի 15-ի ««Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հունիսի 3-ի հմ. 681-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հմ. 1716-Ն որոշումը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2005, հմ. 71 (443)):

մական համակարգից և ՋՈՒ-ի ռազմաբժշկական ու կադրերի և ռազմական կրթության վարչությունները լիարժեք կերպով չեն ներգրավված ռազմաբժշկական կադրերի պատրաստման գործում:

Մեր կարծիքով՝ նշված թերությունները պետք է վերացնել հանրապետության ընդհանուր կրթական համակարգի՝ Բոլոնիայի գործընթացով[5] պայմանավորված բարեփոխումների շրջանակներում: Դրա համար անհրաժեշտ է իմաստավորել անցած ուղին, Զինված ուժերի համար որոշել ռազմաբժշկական կրթության համակարգի զարգացման ռազմավարությունն ու մարտավարությունը՝ գոյություն ունեցող կառուցվածքային ու գործառութային սկզբունքների, պետության տնտեսական ու ֆինանսական հնարավորությունների հաշվառմամբ:

Բարձրագույն բժշկական կրթության ոլորտում Բոլոնյան հռչակագիրը միանշանակ չի գնահատվում: Մի շարք կազմակերպություններ (Միջազգային առողջապահական կազմակերպություն, Միջազգային բժշկական միություն և այլն) ու երկրներ (Ռուսաստանի Դաշնություն, Ֆինլանդիա, Շվեդիա, Դանիա, Լեհաստան) որոշել են բժշկական կրթությունն իրականացնել նախկին ձևով:

Բոլոնյան հռչակագրի որոշ դրույթներ, մասնավորապես՝ բժշկական կրթության երկաստիճան համակարգը, որոշակի դժվարություններ է առաջացնում, քանի որ միայն բակալավրիատն ավարտած անձը ՀՀ-ում պրակտիկ առողջապահությունում կդժվարանա աշխատանք գտնել:

Նման պարագայում բժշկական կրթության մեջ վերը նշված հակասությունը հնարավոր է հաղթահարել՝ անցնելով ինտեգրացված կրթական համակարգի, սահուն անցում կատարելով բակալավրիատից մագիստրատուրա՝ որպես միմյանց հաջորդող պարտադիր կրթական փուլեր, պահպանելով կրթության 6 տարին ընդհանուր բժշկության և 5 տարին՝ ստոմատոլոգիական ու դեղագիտական ֆակուլտետների համար: Այս դեպքում միանգամայն իրատեսական են 1 տարի տևողությամբ հետբուհական կրթական համակարգի ինտերնատուրան, որից հետո՝ նեղ մասնագիտական կլինիկական օրդինատուրան կամ ռեզիդենտուրան:

Հայաստանի Հանրապետությունում ռազմաբժշկական կրթությունը հետապնդում է մի շարք նպատակներ.

- ՋՈՒ-ի զարգացման, մարտունակության պահպանման կոնկրետ ժամանակահատվածում ապահովել բարձր որակավորմամբ կադրերի և պահեստազորի ռազմական բժիշկների պատրաստումը, վերապատրաստումն ու որակավորման բարձրացումը,
- մշակել ռազմաբժշկական կրթական համակարգի զարգացման մոտակա, միջանկյալ և հեռակա քաղաքականությունը՝ ելնելով ռազմական կրթության զարգացման ընդհանուր ուղղվածությունից,
- նախանշել ռազմաբժշկական գիտամանկավարժական կադրերի պատրաստմանն ուղղված խիստ որոշակիացված նպատակներ, խնդիրներ և դրանց

[5] Տես «Եվրոպայի կրթության նախարարների համատեղ հռչակագիր»: Բոլոնիա, 19 հունիսի 1999 թ. (www.edu.am/index.php?id=-941&topMenu=17&menu1=-1&menu2=17&arch=0), *նաև*՝ «Եվրոպական երկրների կրթության նախարարների խորհրդաժողովի կոմյունիկե»: Բերգեն, 19–20 մայիսի 2005 թ. (www.edu.am/index.php?id=-1521&topMenu=17&menu1=-1&menu2=17&arch=0):

լուծելու համար հնարավորինս ճիշտ հաշվարկված ուղղություններն ու մեթոդները:

Հարկ է նշել, որ ՀՀ-ում բարձրագույն բժշկական կրթական համակարգի կազմում են Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանը և ոչ պետական հավատարմագրված ինստիտուտները:

ԵՊԲՀ-ն արդեն անցել է բարձրագույն բժշկական կրթության երկաստիճան՝ բակալավրական ու մագիստրոսական համակարգի, մինչդեռ բժշկական պրակտիկայում ևս համապատասխան օրենքով որոշակիացված չեն բակալավրի և մագիստրոսի գործառույթները, ինչը կարող է խոչընդոտել ՀՀ Զինված ուժերում նրանց արդյունավետ գործունեությանը:

Մեր կարծիքով՝ որպես ռազմաբժշկական կրթության նպատակ պետք է սահմանվի այնպիսի ռազմաբժշկական կադրերի պատրաստումը, որոնք իրենց գիտելիքներով ու հմտություններով նպաստեն ԶՈՒ-ի ապահովման այլ ոլորտների հետ ռազմական բժշկության համահունչ զարգացմանը՝ որպես ԶՈՒ-ի մարտունակության, զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, այսինքն՝ ընդհանուր բնակչության մի պատկառելի զանգվածի, առողջության պահպանման կարևոր գրավականի:

Ըստ այդմ՝ որպես առաջնային խնդիրներ պետք է ձևակերպվեն.

- բարձր որակավորում ունեցող ռազմաբժշկական կադրերի, այդ թվում՝ պահեստազորում ընդգրկված մասնագետների և գիտամանկավարժական կադրերի պատրաստումը և վերապատրաստումը՝ կադրերի վերարտադրելիության ապահովմամբ,
- ըստ ռազմական կրթության զարգացման ընդհանուր ուղղվածության՝ ռազմաբժշկական կրթական համակարգի զարգացման քաղաքականության և կարճաժամկետ, միջնաժամկետ ու երկարաժամկետ ծրագրերի մշակումը:

Ըստ մեզ՝ ռազմաբժշկական կրթական համակարգի հետագա զարգացման համար անհրաժեշտ է՝

- հաստատել, որ այն կարող է լինել կենտրոնացված՝ միայն ԵՊԲՀ-ում,
- ընդունելով, որ ռազմաբժշկական կրթությունը ԵՊԲՀ իրավասությունն է, ՀՀ Կառավարության համապատասխան որոշման դեպքում հավատարմագրված ոչ պետական բուհերում իրականացնել բակալավրիատի համար նախատեսված ծրագրին համապատասխան ռազմաբժշկական կրթություն՝ հաշվի առնելով, որ դրանց շրջանավարտների մի մասը, հնարավոր է, ընդունվի ԵՊԲՀ-ի մագիստրատուրա, որտեղ նրանք կշարունակեն իրենց ռազմաբժշկական կրթությունը հետագայում պահեստազորի սպայի կոչում ստանալու նպատակով,
- ռազմաբժշկական կրթության համակարգը Զինված ուժերի կադրային ապահովման տեսակետից դարձնել ճկուն, մշակել այդ կրթության ձևերը, տեսակներն ու գործընթացը,
- հստակ կերպով տարանջատել ռազմաբժշկական կրթական ծրագրերը բուհական (բակալավրիատ ու մագիստրատուրա) և հետբուհական (ինտերնատուրա, կլինիկական օրդինատուրա - ռեզիդենտուրա և հետազոտող)՝ ապահովելով կրթության շարունակականությունը:

Միջազգային և հայրենական փորձի հաշվառմամբ առաջարկում ենք ռազմաբժշկական կրթական համակարգի զարգացումը ծրագրելիս առաջնորդվել հետևյալ հայեցակարգային մոտեցումներով.

– ռազմաբժշկական կրթական համակարգը պետք է լինի խիստ կենտրոնացված և կատարի զինված ուժերի կոնկրետ պատվերը,

– ռազմաբժշկական կադրերի պատրաստման գործընթացը պետք է կազմակերպվի Բոլոնյան գործընթացի անշրջելիության, մեր հանրապետության մարդկային, նյութական, ֆինանսական հնարավորությունների հաշվառմամբ:

СТРАТЕГИЯ И ТАКТИКА РЕФОРМ СФЕРЫ ВОЕННО-МЕДИЦИНСКОГО ОБРАЗОВАНИЯ В РАМКАХ БОЛОНСКОГО ПРОЦЕССА

Д. Г. ДУМАНЯН, доктор медицинских наук, профессор, ректор ЕГМУ,
С. Г. ГАЛСТЯН, полковник м/с, доктор медицинских наук, профессор,
начальник военно-медицинского факультета ЕГМУ

РЕЗЮМЕ

Совершенствование сферы военно-медицинского образования считается одной из приоритетных задач медобеспечения. В состав системы высшего медицинского образования РА входят Ереванский государственный медицинский университет имени М. Гераци и негосударственные аккредитованные институты. Подготовку офицеров с высшим военно-медицинским образованием для ВС РА осуществляет Военно-медицинский факультет, созданный в 1994 г. в ЕГМУ на базе кафедры «Организация медслужбы и экстремальная медицина».

В качестве первичных задач целесообразно с учетом необратимости Болонского процесса рассматривать:

• организацию подготовки и переподготовки военно-медицинских кадров с высокой квалификацией, в том числе специалистов, находящихся в запасе, и научно-педагогических кадров с обеспечением возобновляемости кадров;

• разработку политики совершенствования системы военно-медицинского образования в контексте общей направленности развития военного образования и краткосрочной, среднесрочной и долгосрочной программ с учетом финансово-экономических возможностей республики.

Для решения данных задач предлагается:

• четко дифференцировать вузовское (бакалавриат и магистратура) и послевузовское (клиническая ординатура-резидентура и исследователь) военно-медицинские образования,

• всем выпускникам негосударственных медицинских вузов, имеющим диплом государственного образца, дать возможность продолжить свое военно-медицинское образование в магистратуре или в клинической ординатуре ЕГМУ.

STRATEGY AND TACTICS OF MILITARY MEDICAL EDUCATION REFORMS WITHIN THE SCOPE OF THE BOLOGNA PROCESS

D. H. DUMANYAN, MD, Professor, Rector of the Yerevan State Medical University,
S. G. GALSTYAN, Colonel of Medical Service, MD, Professor,
Head of the Military Medical Department of the YSMU

SUMMARY

The improvement of the military medical education sphere is one of the foreground tasks of the medical service. The system of the RA higher medical education includes the Yerevan State Medical University after M. Heratsi (YSMU) and the private accredited institutions. The training of the officers with higher military medical education for the RA Armed Forces is carried out by the Department of Military Medicine established in 1994 at the YSMU on the basis of the department «Medical Service Organization and Contingency Medicine».

Taking into account the irreversibility of the Bologna Process it is appropriate to consider as primary tasks the following objectives:

• the organization of training and retraining of the military medical personnel with high qualification, including specialists in reserve, and of the teaching staff with providing the renewability of personnel,

• the improvement policy development for the military medical education system in the context of the overall orientation of the military education's and the short, medium, and long-term programs' development taking into account the financial and economic capacities of the country.

To solve these problems it is proposed:

• to clearly differentiate between undergraduate (Bachelor's and Master's Degrees) and postgraduate (Residency and Researcher) military medical education.

• to give an opportunity to all the graduates of the private medical IHEs that have diploma of state pattern to continue their military medical education of Master course or clinical residency in the YSMU.

ՀՀ ՋՈՒ-ՈՒՄ ՎԵՐՋՈՒՅԹՆԵՐԻ ՎԻՐԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Վ. Պ. ԱՅՎԱԶՅԱՆ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԱՆ Վնասվածքաբանության և օրթոպեդիայի գիտական կենտրոնի տնօրեն, Ա. Ս. ԳԱԼՍՏՅԱՆ, բ/ծ կապիտան, ՀՀ ՊՆ ԿԿԶՀ վնասվածքաբանական բաժանմունքի բժիշկ-օրդինատոր

Վիրաբուժության պատմության մեջ ամենաբարդ հիմնախնդիրներից մեկը եղել և մնում է պայքարը վարակի դեմ: Նման երևույթներից է հրազենային օստեոմիելիտը: Դա ոսկրի հրազենային վնասման շրջանում ընթացող թարախակալման պրոցես է, որն ուղեկցվում է սեքվեստրների առաջացմամբ ու հյուսվածքների վերականգնմամբ և հաճախ ավարտվում է ոսկրային բեկորների կոնսոլիդացմամբ:

Վերջին տասնամյակներին զգալիորեն աճել է բաց վնասվածքների թիվը, ընդսմին տարբեր ծանրությամբ և տեղադրմամբ բաց կոտրվածքների ժամանակ 10–50 % դեպքերում զարգանում են թարախային բարդություններ: Յու. Շապոշնիկովի և Վ. Մասլովի կարծիքով՝ թարախակալումների մակարդակը ներկայումս մոտենում է այն մակարդակին, որը դիտվում էր մինչհակաբիոտիկային ժամանակաշրջանում՝ 8–12 %, և չունի նվազման միտում:

Թարախային բարդությունների կանխարգելման և բուժման անարդյունավետությունը մի շարք դեպքերում պայմանավորված է լինում ինչպես արտաքին միջավայրի գործոնների նկատմամբ մանրէների աճող կայունությամբ, այնպես էլ օրգանիզմի հակազդականության (ռեակտիվականության) փոփոխությամբ: Այդ փոփոխությունների հիմնական պատճառը հակաբիոտիկների ոչ ռացիոնալ նշանակումն է, ինչը հանգեցնում է հակաբիոտիկակայուն, անգամ՝ հակաբիոտիկակախյալ մանրէային շտամների առաջացման:

Ռազմադաշտային վիրաբուժությունում ընդունված է, որ բոլոր հրազենային վիրավորումներն ի սկզբանե ունեն մանրէային աղտոտվածություն, հետևաբար դրանց թարախակալման հավանականությունը մեծ է, իսկ կանխարգելումն ունի կարևոր նշանակություն:

Վերը նշվածը բավական լուրջ փաստարկ է՝ ուսումնասիրելու վիրավորումների հիմնախնդիրն ըստ ՀՀ ՊՆ ԿԿԶՀ-ի տվյալների, քանի որ.

- սկսած 1994 թվականից գրեթե բոլոր վիրավորներն ի վերջո տարահանվել են ՀՀ ՊՆ ԿԿԶՀ,
- արդյունքները կարող են հիմք դառնալ մարտական գործողությունների հնարավոր վերսկսման դեպքում վիրավորումների ծավալների և կառուցվածքի կանխատեսման համար:

Հաշվի առնելով պրոբլեմի կարևորությունն ու արդիականությունը, մասնավորապես՝ Ղարաբաղյան պատերազմում վիրավորումների կառուցվածքում դրա զգալի տեսակարար կշիռը, մենք կատարել ենք վերջույթների մարտական վիրավորումների ծավալային և պատճառական ուսումնասիրություն,

որի ժամանակ կիրառվել են համակարգչային վերլուծությամբ վիճակագրական մեթոդներ: Դիտարկումների վերլուծության համար նախապես կազմվել են համապատասխան ծրագրեր ու պլան: Որպես դիտարկման միավոր ընդունվել է վիրավորների հիվանդության պատմությունը: Վիճակագրական վերլուծության համար օգտագործել ենք համակարգչային «M. Excel X.O.» ծրագրային փաթեթը: Վիճակագրական մեթոդներով որոշվել են վիրավորումների ինտենսիվ ցուցանիշները (P) 1000 զինծառայողի հաշվով և միջին սխալը (m): Ստացված տվյալների հավաստիությունը գնահատվել է Ստյուդենտի գործակցով:

ՈՒսումնասիրվել է վնասվածքների ու վիրավորումների 1621 դեպք:

Վիրավորումներն ու ջերմային ախտահարումները խմբավորվել են հնչպես ըստ տեղադրման՝ գլուխ, ողնաշար, կրծքավանդակ, որովայն (նաև՝ կոնք և կոնքի օրգաններ, քանի որ դրանց վիրավորումների թիվը փոքր էր), ստորին և վերին վերջույթներ, այնպես էլ այրվածքներ, ցրտահարություններ, համակցված, ականապայթյունային վնասվածքներ:

Վիրավորումների և ջերմային ախտահարումների վերլուծությունը ցույց է տալիս, որ իրենց տեսակարար կշռով առաջին տեղում են հրաձգային վիրավորումները՝ 64,7 %, երկրորդ տեղում են՝ ականապայթյունային վնասվածքները (ԱՊՎ)՝ 23,4 %, իսկ երրորդ-չորրորդ տեղերում՝ համապատասխանաբար, ցրտահարությունները (7 %) և այրվածքները (4,9 %):

Փաստացի հրազենային (հրաձգային՝ գնդակով, և ԱՊՎ՝ բեկորային) վիրավորումները կազմում են 88,1 %, այսինքն՝ հենց դրանցով են պայմանավորված մարտական վնասվածքները, ուստի և դրանց ուսումնասիրությամբ հնարավոր է տալ մարտական վիրավորումների տեսակետից ՀՀ Զինված ուժերում տիրող իրավիճակի ամբողջական պատկերը (տես *աղ. 1*):

Վերլուծությունը ցույց է տալիս, որ 1994 թ. տվյալների համեմատությամբ.

- հրաձգային վիրավորումների առումով 1995 թվականից դիտվում է ինտենսիվ ցուցանիշի հավաստի նվազում, ընդ որում, 2003 թվականից այդ նվազումը եղել է կտրուկ,
- ԱՊՎ պարագայում ինտենսիվ ցուցանիշն ունի աճման միտում 1995 և 1998 թթ., հավաստի աճ՝ 1996 և 1997 թթ., նվազման միտում՝ 1999 թ., իսկ 2000 թվականից դիտվում է ցուցանիշի հավաստի նվազում,
- այրվածքների ինտենսիվ ցուցանիշի արժեքը ցածր է, և տատանումներն ունեն միայն միտման բնույթ,
- ցրտահարությունների պարագայում 1995 և 1997 թթ. ինտենսիվ ցուցանիշն ունի նվազման միտում, իսկ մնացած տարիներին այն վիճակագրորեն հավաստի նվազում է:

Ընդհանուր առմամբ, պարզ երևում է, որ գործնականում հրազենային վնասվածքների համեմատությամբ այլ գործոններից առաջացած մարտական վնասվածքները մեր կողմից անցկացված հետազոտության բոլոր տարիների կտրվածքով եղել են վիճակագրորեն հավաստի ցածր:

Աղյուսակ 1

1994–2008 ԹԹ. ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՆ ԸՍՏ ԴՐԱՆՔ ԱՌԱՋԱՑՆՈՂ ԳՈՐԾՈՆԻ՝ ՀՀ ՊՆ ԿԿՋՀ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ
(1000 մարդու հաշվով)

Տարիներ	Ցուցանիշ	Վնասվածք առաջացնող գործոններ					Ընդա-մենը
		Հրազենային, այդ թվում՝			Այրվածք-ներ	Ցրտահարութ-յուններ	
		Ընդամենը	Հրաձգային	ԱՊՎ			
1994	բ.թ.	269	239	30	8	22	299
	P±m	4,48±0,27	3,98±0,26	0,50±0,09	0,13±0,05(**)	0,37±0,08(**)	
1995	բ.թ.	228	183	45	7	18	253
	P±m	3,80±0,25	3,05±0,23*	0,75±0,11	0,12±0,04(**)	0,30±0,07(**)	
1996	բ.թ.	185	126	59	4	5	194
	P±m	3,08±0,06	2,10±0,19*	0,98±0,13*	0,07±0,03(**)	0,08±0,04*(**)	
1997	բ.թ.	166	67	99	5	16	187
	P±m	2,77±0,21	1,12±0,14*	1,65±0,17*	0,08±0,04(**)	0,27±0,07(**)	
1998	բ.թ.	132	88	44	6	5	143
	P±m	2,20±0,19	1,47±0,16*	0,73±0,11	0,10±0,04(**)	0,08±0,04*(**)	
1999	բ.թ.	83	57	26	4	5	92
	P±m	1,38±0,15	0,95±0,13*	0,43±0,08	0,07±0,03(**)	0,08±0,04*(**)	
2000	բ.թ.	82	70	12	3	9	94
	P±m	1,37±0,15	1,17±0,14*	0,20±0,06*	0,05±0,03(**)	0,15±0,05*(**)	
2001	բ.թ.	69	54	15	9	7	85
	P±m	1,15±0,14	0,90±0,12*	0,25±0,06*	0,15±0,05(**)	0,12±0,04*(**)	
2002	բ.թ.	49	42	7	8	5	62
	P±m	0,82±0,12	0,70±0,11*	0,12±0,04*	0,13±0,05(**)	0,08±0,04*(**)	
2003	բ.թ.	42	33	9	6	5	53
	P±m	0,70±0,11	0,55±0,10*	0,15±0,05*	0,10±0,04(**)	0,08±0,04*(**)	
2004	բ.թ.	37	27	10	7	3	47
	P±m	0,62±0,10	0,45±0,09*	0,17±0,05*	0,12±0,04(**)	0,05±0,03*(**)	
2005	բ.թ.	29	21	8	4	6	39
	P±m	0,48±0,09	0,35±0,08*	0,13±0,05*	0,07±0,03(**)	0,10±0,04*(**)	
2006	բ.թ.	26	20	6	3	4	33
	P±m	0,43±0,08	0,33±0,07*	0,10±0,04*	0,05±0,03(**)	0,07±0,03*(**)	
2007	բ.թ.	18	13	5	4	1	23
	P±m	0,30±0,07	0,22±0,06*	0,08±0,04*	0,07±0,03(**)	0,02±0,02*(**)	
2008	բ.թ.	12	8	4	2	3	17
	P±m	0,20±0,06	0,13±0,05*	0,07±0,03*	0,03±0,02(**)	0,05±0,03*(**)	
Ընդամենը		1427	1048	379	80	114	1621

Ծանոթագրություն.

* 1994 թ. տվյալների համեմատությամբ շեղումները հավաստի են

(**) հրազենային վիրավորումների համեմատությամբ շեղումները հավաստի են

1994–2008 թթ. ժամանակահատվածում առանձին տարիների կտրվածքով վնասվածքների կառուցվածքի վերլուծությունն ըստ դրանք առաջացնող գործոնի (ՀՀ ՊՆ ԿԿԶՀ տվյալների համաձայն) ցույց է տալիս, որ՝

- հետազոտության բոլոր տարիներին միշտ էլ գերակշռել են հրազենային վիրավորումները. տեսակարար կշիռը տատանվել է 70,6–92,3 % սահմաններում,
- լայնամասշտաբ մարտական գործողությունների ավարտից հետո դիտվում է ԱՊՎ որոշակի աճ, ապա՝ կայունացում,
- մարտական վնասվածքների ձևավորման հարցում ցրտահարությունները ու այրվածքներն էական նշանակություն ու դերակատարում չունեն, ըստ այդմ էլ մեր հետագա քննարկումներում որպես հիմք ընդունվել են միայն հրաձգային և ականապայթյունային վնասվածքները:

Մենք հետազոտել ենք նաև վիրավորումների պատկերն ըստ դրանց տեղադրման (տես *աղ. 2*):

Աղյուսակ 2

1994–2008 ԹԹ. ՎԻՐԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՊԱՏԿԵՐՆ ԸՍՏ ԴՐԱՆՑ ՏԵՂԱԴՐՄԱՆ՝ ՀՀ ՊՆ ԿԿԶՀ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ (1000 մարդու հաշվով)

Տարիներ	Ցուցանիշներ	Տեղադրում					
		Գլուխ, պարանոց	Ողնաշար	Կրծքավանդակ	Որովայն, կոնք	Վերին վերջույթներ	Ստորին վերջույթներ
1994 թ.	բ.թ.	34	0	17	35	56	127
	P±m	0,57±0,1	0,0±0,0 (*)	0,28±0,07(*)	0,58±0,10	0,93±0,12(*)	2,12±0,19(*)
1995 թ.	բ.թ.	13	5	22	45	38	105
	P±m	0,22±0,06*	0,08±0,04*	0,37±0,08	0,75±0,11(*)	0,63±0,1(*)	1,75±0,17*(*)
1996 թ.	բ.թ.	15	5	12	23	33	97
	P±m	0,25±0,06*	0,08±0,04*(*)	0,2±0,06	0,38±0,08	0,55±0,1*(*)	1,62±0,16* (*)
1997 թ.	բ.թ.	8	12	12	52	14	68
	P±m	0,13±0,05*	0,2±0,06*	0,2±0,06	0,87±0,12(*)	0,23±0,06*	1,13±0,14*(*)
1998 թ.	բ.թ.	10	3	16	34	6	63
	P±m	0,17±0,05*	0,05±0,03	0,27±0,07	0,57±0,10(*)	0,10±0,04*	1,05±0,13*(*)
1999 թ.	բ.թ.	0	3	18	23	2	37
	P±m	0,0±0,0*	0,05±0,03	0,3±0,07(*)	0,38±0,08(*)	0,03±0,02*	0,62±0,1*(*)
2000 թ.	բ.թ.	5	0	4	33	8	32
	P±m	0,08±0,04*	0,0±0,0(*)	0,07±0,03*	0,55±0,1(*)	0,13±0,05*	0,53±0,09*(*)
2001 թ.	բ.թ.	1	2	0	32	9	25
	P±m	0,02±0,02*	0,03±0,02	0,0±0,0*	0,53±0,09(*)	0,2±0,05*(*)	0,42±0,1*(*)
2002 թ.	բ.թ.	2	2	9	11	4	21
	P±m	0,03±0,02*	0,03±0,02	0,15±0,05(*)	0,2±0,06*(*)	0,07±0,03*	0,55±0,1*(*)
2003 թ.	բ.թ.	3	1	10	9	3	16
	P±m	0,05±0,03*	0,02±0,02	0,17±0,05	0,15±0,05*	0,1±0,03*	0,27±0,07*(*)
2004 թ.	բ.թ.	4	2	6	4	2	19
	P±m	0,07±0,03*	0,03±0,02	0,1±0,04*	0,07±0,03*	0,03±0,02*	0,32±0,1*(*)
2005 թ.	բ.թ.	6	0	4	5	1	13
	P±m	0,10±0,04*	0,0±0,0(*)	0,07±0,03*	0,08±0,04*	0,02±0,02*	0,22±0,06*

2006 թ.	բ.թ.	2	2	4	6	2	10
	P±m	0,0±0,02*	0,03±0,02	0,07±0,03*	0,10±0,04*	0,03±0,02*	0,17±0,05*(*)
2007 թ.	բ.թ.	3	0	2	3	2	8
	P±m	0,05±0,03*	0,0±0,0	0,03±0,02*	0,05±0,03*	0,0±0,02*	0,13±0,05*
2008 թ.	բ.թ.	2	0	2	2	1	5
	P±m	0,03±0,02*	0,0±0,0	0,03±0,02*	0,03±0,02*	0,02±0,02*	0,1±0,04*
Ընդամենը	բ.թ.	108	37	138	317	181	646
	P±m	1,80±0,17	0,62±0,10(*)	2,30±0,20	5,28±0,30(*)	3,02±0,22(*)	10,77±0,42(*)

Ծանոթագրություն.

* 1994 թ. տվյալների համեմատությամբ շեղումները հավաստի են

(*) «գլուխ, պարանոց» խմբի հետ շեղումները հավաստի են

Վերլուծությունը ցույց է տալիս, որ 1994 թ. տվյալների համեմատությամբ՝

- սկսած 1995 թվականից դիտվում է գլխի, պարանոցի վիրավորումների ինտենսիվ ցուցանիշի հավաստի նվազում, 2004 թվականից իրավիճակը կայունանում է, ինչը պահպանվում է մինչև հետազոտության ավարտը,
- ողնաշարի վիրավորումների ցուցանիշները հավաստի աճում են միայն 1995–1997 և 2006 թթ., իսկ մնացած տարիներին կամ ունեն աճման միտում (1998–1999, 2001–2005 և 2007–2008 թթ.), կամ մնում են նույն մակարդակի վրա (2000 թ.),
- կրծքավանդակի վիրավորումների դեպքում ինտենսիվ ցուցանիշի հավաստի նվազում է արձանագրվում միայն 2000–2001 թթ., իսկ մնացած տարիներին այն մնում է գրեթե նույն մակարդակի, տատանումները եզակի դեպքերում ունեն ինչպես աճման (1995, 1999 թթ.), այնպես էլ՝ մեծ մասամբ, նվազման միտում (1996–1998, 2002–2008 թթ.),
- որովայնի, կոնքի վիրավորումների ինտենսիվ ցուցանիշը հավաստի նվազում է 2002–2008 թթ., իսկ մինչ այդ եղել է կայուն,
- վերին վերջույթների վիրավորումների 1995 թ. ինտենսիվ ցուցանիշն ունի նվազման միտում, իսկ հետագայում այն եղել է կայուն,
- ստորին վերջույթների վիրավորումների ինտենսիվ ցուցանիշը 1995–1998 թթ. էապես նվազում է, իսկ 1999 թվականից նվազումը ոչ միայն վիճակագրորեն հավաստի է, այլև շեշտակի, ընդ որում՝ 2000–2008 թթ. ցուցանիշի արժեքը կայուն է:

Ամփոփելով տվյալ դիտարկումները՝ կարող ենք հանգել հետևյալ եզրակացությունների.

- տարբեր տեղադրումներով վիրավորումների ինտենսիվ ցուցանիշների տատանումները եղել են տարաբնույթ,
- ընդհանուր առմամբ, վիրավորումների բոլոր տեղադրումների դեպքում էլ դրանց ինտենսիվ ցուցանիշների արժեքները տարբեր տարիներից սկսած վիճակագրորեն հավաստի նվազում են, այնուհետև մակարդակները, որոշ բացառությամբ, մասնավորապես՝ ողնաշարի վիրավորումների, կայունանում են:

ՀՀ ՊՆ ԿԿՋՀ տվյալների համաձայն՝ 1994–2008 թթ. ժամանակահատվա-

ծում վիրավորումների կառուցվածքի վերլուծությունն ըստ դրանց տեղադրման ցույց է տալիս, որ՝

- բոլոր տարիներին գերակշռել են ստորին վերջույթների վիրավորումները՝ տեսակարար կշիռը տատանվել է 36,2 % (2001 թ.) – 52,4 % (1996 թ.) սահմաններում,
- երկրորդ տեղում են որովայնի, կոնքի վիրավորումները. տատանումները՝ 12,4 % (1996 թ.) – 46,4 % (2001 թ.),
- երրորդ - չորրորդ տեղերում տարբեր տարիներին եղել են կա՛մ կրծքավանդակի, կա՛մ վերին վերջույթների վիրավորումները:

Այսպիսով՝ կարելի է եզրակացնել, որ ստորին վերջույթների վիրավորումների ուսումնասիրությունը հայկական ռազմական բժշկության կարևորագույն խնդիրներից մեկն է, և դրանց նկատմամբ ախտորոշիչ-բուժական միջոցառումների իրականացումը հնարավորություն կտա լուծելու վիրավորներին արագ շարք վերադարձնելու, վաղաժամկետ զորացրումները նվազեցնելու, հիվանդությունների զարգացման մեխանիզմներ պարզելու, դրանց կանխարգելման միջոցառումներ մշակելու և բազմաթիվ այլ հիմնախնդիրներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ա. Մ. Հարությունյան,* Սանիտարական վիճակագրություն: Ե., 2000:

2. *Ա. Վ. Ղազարյան, Ս. Ս. Ամիրյան, Մ. Գ. Մարգարյան, Ս. Գ. Գալստյան,* Անհետաձգելի բուժօգնության կազմակերպումը մարտական գործողությունների ժամանակ: Ե., 1997:

3. *Ա. Մ. Փարսադանյան, Մ. Գ. Մարգարյան, Ս. Գ. Գալստյան,* Ռազմադաշտային վիրաբուժական օգնության կազմակերպման հիմունքները գործող բանակում: Ե., 2005:

4. *В. П. Айвазян, Г. Г. Вардеванян, М. М. Манасян, Г. А. Тумян и др.* Концептуальные вопросы лечения больных с огнестрельными ранениями конечностей при локальных военных действиях (опыт ЦТОР). «Գիտական աշխատությունների ժողովածու (Համաբանակային ռազմաբժշկական առաջին գիտագործնական կոնֆերանս)», h. 1: Ե., 2001:

5. *Т. Я. Арьев.* Хронический огнестрельный остеомиелит (патанатомия, патогенез, клиника и лечение). Дис. док. мед. наук. Л., 1948.

6. *В. Д. Бадиков.* Микробиология боевой хирургической травмы. Автореф. дис. док. мед. наук. СПб., 2000.

7. *Е. К. Гуманенко.* Военно-полевая хирургия. СПб., 2004.

8. *В. А. Миняев, Н. Н. Вишняков, В. К. Юрьев.* Социальная медицина и организация здравоохранения, т. 1. СПБ., 1997.

9. *А. Г. Овденко.* Огнестрельные ранения и огнестрельный остеомиелит конечностей. СПб., 2010.

10. «Раны и раневая инфекция». Под ред. М. И. Кузина, Б. М. Костюченок. М., 1981.

11. *В. М. Шаповалов, А. Г. Овденко.* Огнестрельный остеомиелит. СПб., 2000.

12. *Ю. Г. Шапошников, В. И. Маслов.* Военно-полевая хирургия. М., 1995.

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ РАНЕНИЙ КОНЕЧНОСТЕЙ В ВС РА

В. П. АЙВАЗЯН, доктор медицинских наук, профессор, директор Научного центра травматологии и ортопедии Министерства здравоохранения РА,
А. С. ГАЛСТЯН, капитан м/с, врач-ординатор травматологического отделения ЦКВГ МО РА

РЕЗЮМЕ

За последние десять лет число открытых ран существенно возросло. Учитывая важность и актуальность проблемы, в частности, существенный удельный вес гнойных осложнений в структуре ранений во время Карабахской войны, осуществлены статистические исследования боевых ранений по их распределенности по годам и местоположению и факторам, обусловившим их возникновение.

Анализ ранений и тепловых поражений показывает, что наибольший удельный вес имеют пулевые ранения – 64,7 %, затем следуют осколочные минно-взрывные ранения – 23,4 %, обморожения – 7 % и ожоги – 4,9 %.

По результатам анализа исследований можно прийти к следующим выводам: колебания интенсивных показателей ранений в зависимости от их распределения – различны; значения интенсивных показателей ранений статистически достоверно снижаются, затем уровни ранений, за исключением ранений позвоночника, стабилизируются.

Изучение ранений нижних конечностей является одной из главных задач армянской военной медицины и осуществление диагностико-лечебных и профилактических мероприятий, разработанных на основе полученных результатов, позволит в короткие сроки возвращать раненых в строй, сократить преждевременную досрочную демобилизацию, уяснить механизмы развития соответствующих болезней.

SOME ISSUES ON THE WOUNDS OF EXTREMITIES IN THE RA ARMED FORCES

V. P. AYVAZYAN, MD, Professor, Director of the Traumatological and Orthopedic Scientific Center, MOH, RA, A. S. GALSTYAN, Captain of Medical Service, Medical Resident at the Traumatological Branch of the Central Clinical Military Hospital, MOD, RA

SUMMARY

Over the last decade the number of open wounds has significantly increased. Given the importance and urgency of the problem, in particular, the substantial proportion of purulent complications in the structure of wounds during the Karabakh war, statistical studies of battle wounds has been carried out according to their distribution by years and location, and the factors contributing to their occurrence.

The analysis of wounds and thermal injuries shows that the bullet wounds are of the largest proportion – 64,7 %, followed by the shrapnel mine blast injuries – 23,4 %, the frostbites – 7 % and the burns – 4,9 %.

According to the result of the analysis the following inferences can be made: the oscillations of wounds' intensive indicators depending on their distribution are different; the values of wounds' intensive indicators by statistic reliability decrease, then the levels of wounds, except for spine ones, stabilize.

The study of the wounds of lower extremities is one of the main tasks of the Armenian military medicine and the implementation of diagnostical and therapeutic, as well as of preventive measures developed on the basis of the results, will enable to return the wounded to their service in a short term, to reduce untimely early demobilization, to clarify the mechanisms of the development of the relevant diseases.

ՀՀ ԶՈՒ-ՈՒՄ ԹԵՐԱՊԵՎՏԻԿ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Ս. Գ. ԳԱԼՍՏՅԱՆ, բ/ծ գնդապետ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի պետ,
Մ. Վ. ՍԱՐԳՍՅԱՆ, բ/ծ կապիտան, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ՊՆ ԿԿԶՀ թերապևտիկ բաժանմունքի պետ,
Ա. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, բ/ծ փոխգնդապետ, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի արտակարգ իրավիճակների ցիկլի պետ

Ներկայումս՝ ՀՀ Զինված ուժերի բուժծառայության զարգացման նոր և խիստ կարևոր փուլում, առաջադրվող խնդիրների լուծումը պետք է լինի գիտականորեն հիմնավորված, ձեռնարկվող քայլերը՝ ճշգրիտ հաշվարկված ու մոդելավորված: Հատկապես կարևոր են այն միջոցառումները, որոնցով նախատեսվում է զինծառայողների թերապևտիկ պրոֆիլի հիվանդությունների ուսումնասիրություն՝ զորքերի տեղակայման կլիմայական-աշխարհագրական պայմանների, 1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժի, ՀՀ-ում առաջացած սոցիալ-տնտեսական իրավիճակի, միգրացիոն պրոցեսների, բուն առողջապահության ոլորտի բարեփոխումների, ինչպես նաև ժողովրդագրական մի շարք ցուցանիշների հնարավոր ազդեցության հաշվառմամբ:

Հանրապետության փոքր տարածքի և Զինված ուժերի փոքրաթվության հաշվառմամբ կարելի է եզրակացնել, որ անձնակազմի մարտունակության պահպանման, ֆինանսական միջոցների տնտեսման, մահճակալային ֆոնդի ծանրաբեռնվածության ու շրջապտույտի կարգավորման հարցում իր ուրույն դերն ու նշանակությունն ունի սոմատիկ հիվանդներին ցուցաբերվող մասնագիտացված բուժօգնության կազմակերպումը:

ՀՀ ԶՈՒ-ի թերապևտիկ ծառայությունը խաղաղ պայմաններում ոչ միայն զբաղվում է համապատասխան հիվանդների բուժմամբ, այլև ուսումնասիրում է անձնակազմի ներքին օրգանների հիվանդությունների պատճառագիտությունը, ախտածագումը, կլինիկական պատկերը, կանխարգելումն ու բուժումը, մշակում է թերապևտիկ օգնության ցուցաբերման կազմակերպական ձևերը:

Ըստ այդմ՝ թերապևտիկ ծառայության հիմնական խնդիրներն են.

- զինծառայողների ներքին օրգանների հիվանդությունների առաջացման, կլինիկական ընթացքի, բուժման առանձնահատկությունների ուսումնասիրությունը, հիվանդացության վերլուծությունը և համալիր միջոցառումների մշակումը՝ ուղղված հիվանդացության մակարդակի նվազեցմանն ու անձնակազմի առողջության ամրապնդմանը,
- զինծառայողների օրգանիզմի վրա զորամասերի տեղակայման աշխարհագրական գործոնների, մասնավորապես՝ էլեկտրամագնիսական դաշտի, իոնացնող ճառագայթման ու կենցաղային պայմանների, թունավոր, տեխնիկական և «ագրեսիվ» հեղուկների ազդեցության հետ կապված հիվանդությունների

ախտածագման, կլինիկայի, ախտորոշման, բուժման ուսումնասիրությունը և կանխարգելման մեթոդների մշակումը,

• թերապևտիկ հիվանդների ռազմաբժշկական փորձաքննության և վերականգնման խնդիրների ուսումնասիրությունը:

Այդ ուղղություններով կատարվող հետազոտությունների նպատակն է մշակել տվյալ քանակակազմի հիվանդներին թերապևտիկ բուժօգնության ցուցաբերման կազմակերպման մոդել:

Այդ նպատակով ուսումնասիրվել են՝

• ՀՀ ՊՆ ԿԿՋՀ թերապևտիկ բաժանմունքում 1994–2006 թթ. ժամանակահատվածում հետազոտված և բուժված զինծառայողների հիվանդությունների պատմությունները,

• նույն ժամանակահատվածում ՀՀ ՊՆ Կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովում ռազմաբժշկական փորձաքննություն անցած զինծառայողների հիվանդությունների վկայականները:

Տվյալ ուսումնասիրության արդյունքներով մշակվել է ՀՀ ՊՆ ԿԿՋՀ-ում հետազոտված և բուժված հիվանդ զինծառայողներին վերաբերող տեղեկութային բանկ: Թերապևտիկ բուժօգնության կազմակերպման ուսումնասիրման համար որպես ելակետային հիմք ընդունվել է «Հիվանդությունների, վնասվածքների և մահվան դեպքերի» միջազգային դասակարգման X վերանայման տարբերակը (1992 թ.):

ՈՒսումնասիրության ժամանակ կիրառվել են սոցիալ-հիգիենիկ վիճակագրական մեթոդներ: Կատարվել է բազմագործոնային համակարգային վերլուծություն՝ մաթեմատիկական մոդելավորմամբ:

Որպես դիտարկման միավոր վերցվել է հիվանդության պատմությունը: Դիտարկումների համար կազմվել են աղյուսակներ (խմբային ու համակցված), գրաֆիկներ (գծային ու շրջանակածև) և մանրակերտներ:

Հետազոտության ընթացքում որոշվել են ինտենսիվ ցուցանիշները (P) 1000 զինծառայողի հաշվով և միջին սխալը (m):

Ստացված արդյունքների հավաստիությունը գնահատվել է ըստ Ստյուդենտի գործակցի:

Տվյալների վերլուծությունը կատարվել է հետևյալ սխեմայով.

1. ուսումնասիրվել է ՀՀ ՊՆ ԿԿՋՀ գործունեությունը թերապևտիկ հիվանդներին մասնագիտացված բուժօգնության ցուցաբերման տեսակետից ըստ հետազոտության տարիների՝ զինծառայողի նախկին բնակության վայրի, զորակոչման ժամանակի և զորամասի տեղաբաշխման վայրի հաշվառմամբ,

2. հետազոտվել է ՀՀ ՊՆ ԿԿՋՀ գործունեությունը՝ ուղղված տվյալ քանակակազմի հիվանդների բուժմանը՝ որպես հիմք ընդունելով բուժման ժամկետը, հիվանդության ելքը և ռազմաբժշկական փորձաքննության արդյունքները,

3. կատարվել է ՀՀ ՊՆ ԿԿՋՀ-ում ցուցաբերված մասնագիտացված թերապևտիկ բուժօգնության համակարգային բազմագործոն վերլուծություն, մշակվել են համապատասխան մոդելներ, որոնք առաջարկվել ու լրամշակվել են, ամբողջական պատկերացում է կազմվել հիվանդների բուժապահովման որակի ու մա-

կարդակի մասին, պարզվել են դրանց վրա ազդող առանձին գործոնների դերն ու նշանակությունը:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ներկայումս ՀՀ Զինված ուժերում խիստ արդիական է ու բացառիկ կարևոր նշանակություն ունի ցուցաբերվող մասնագիտացված թերապևտիկ օգնության կազմակերպման հիմնախնդիրը, ինչը պայմանավորված է թերապևտիկ հիվանդությունների պատճառով զինծառայողների երկարատև անաշխատունակությամբ, ինչպես նաև զինծառայությանը նրանց պիտանիության կարգի զգալի փոփոխություններով, մասնավորապես՝ վաղաժամկետ զորացրումների բարձր մակարդակով և «պիտանի է ոչ շարային ծառայությանը» եզրակացությունների թվի անընդհատ աճմամբ:

Ցուցաբերված մասնագիտացված թերապևտիկ բուժօգնության վերլուծությունն ինչպես ըստ զորակոչման ժամանակի, այնպես էլ ըստ մարզերի ցույց է տալիս, որ թերապևտիկ հիվանդությունները թեև տարբեր տարիների եղել են որոշ չափով տարաբնույթ, սակայն չունեն խիստ արտահայտված ու բնորոշ առանձնահատկություններ կամ օրինաչափություններ: Ընդհանուր առմամբ, մասնագիտացված թերապևտիկ բուժօգնության ցուցաբերման ցուցանիշների տատանումները հետազոտության տարիների կտրվածքով եղել են տարբեր. առկա են ինչպես հավաստի նվազման, այնպես էլ աճման միտումներ: Այդ երևույթները դժվար է գնահատել, հատկապես եթե հաշվի առնենք հիվանդացության վրա ազդող գործոնների բազմազանությունը: Այդ երևույթը, մի կողմից, դժվարացնում է թերապևտիկ ուղղվածության բուժօգնության կազմակերպական միջոցառումների անվանացանկի ու բովանդակության մասին պատկերացում կազմելը, սակայն, մյուս կողմից, ավելի է շեշտում դրանց վրա հիմնվող ընդհանրացված եզրակացությունների կարևորությունը:

Ըստ վերլուծության՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ հայտնաբերված երևույթները ամենայն հավանականությամբ պայմանավորված են ինչպես տվյալ զորամասի տեղաբաշխման վայրի աշխարհագրական գործոնների ազդեցությամբ, այնպես էլ հիվանդների օրգանիզմում տեղի ունեցող փոփոխություններով:

Պակաս կարևոր նշանակություն չունի նաև այն փաստը, որ հետազոտության ժամանակահատվածում վաղաժամկետ զորացրումների թիվը կազմել է 11,7–17,3 %, իսկ «պիտանի է ոչ շարային ծառայության» եզրակացությամբ հիվանդների թիվը՝ 10,0–25,6 %: Իսկ դա նշանակում է, որ ՀՀ Զինված ուժերի թերապևտիկ ծառայությունը դեռ ունի լուրջ անելիքներ:

Թերապևտիկ պրոֆիլի հիվանդացության վերլուծությունն ըստ «Հիվանդությունների, վնասվածքների և մահվան դեպքերի» միջազգային դասակարգման X վերանայման տարբերակի ցույց է տալիս, որ հիվանդացությունների մակարդակի տատանումները ընդհանուր առմամբ պայմանավորված են եղել շնչառական օրգանների ու միզասեռական համակարգի, մասամբ՝ մարսողական օրգանների ու ոսկրամկանային համակարգի և շարակցական հյուսվածքի հիվանդությունների մակարդակների տատանումներով:


Հետաքրքրական է հիվանդացության սեզոնային տատանումների ուսում-

նասիրությունը: Այն ցույց է տալիս, որ դրանք հիվանդությունների սեզոնային սրացումների տեսակետից դուրս են գալիս սովորական պատկերացումների շրջանակներից: Չի բացառվում, որ նման երևույթը պայմանավորված է ինչպես զինծառայողների շրջանում դրանց ընթացքի առանձնահատկություններով, այնպես էլ մարդու օրգանիզմի վրա ռազմական գործի ազդեցությամբ:

Ռազմաբժշկական փորձաքննության տեսակետից հիվանդությունների բուժման ժամանակի և ելքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պատկերը բավականին խառն է և հակասական, օրինաչափություններ և առանձնահատկություններ հայտնաբերելը գրեթե անհնար է, ուստի և ընդհանրացված եզրակացություններ կատարելը՝ բավական դժվար: Սակայն հարկ է նշել, որ առանձին տարիների կտրվածքով, մասնավորապես, երկարատև բուժում պահանջող հիվանդությունների շարքում և վաղաժամկետ զորացրումներում կայուն տեղ են զբաղեցնում արյան շրջանառության, շնչառական օրգանների, ոսկրամկանային ու միզասեռական համակարգերի և շարակցական հյուսվածքի հիվանդությունները:

ՀՀ Զինված ուժերի անձնակազմին մասնագիտացված թերապևտիկ բուժօգնության ցուցաբերման հիմնախնդրին վերաբերող տվյալների ընդհանրացմամբ մշակվել են հնարավոր մաթեմատիկական մոդելներն ու ստացվել դրանց գրաֆիկական պատկերները:


Սկզբնական շրջանում ստացել ենք 2 կարգի մոդել, որոնցում ներառվել են ուսումնասիրված բոլոր ծավալային ցուցանիշները և հիվանդությունների դասերը *(նկ. 1)*: Մոդելների բաղդատման ժամանակ Պիրսոնի գործակիցը եղել է հավասար 0,77-ի, այսինքն՝ ներկայացված մոդելների միջև համահարաբերակցական կապը բավականին ուժեղ է:



ա) բ)


Նկ. 1. ՀՀ Զինված ուժերի անձնակազմին մասնագիտացված թերապևտիկ բուժօգնության ցուցաբերման մաթեմատիկական մոդել.
ա) ծավալային ցուցանիշների, բ) հիվանդությունների դասերի

Այդ մոդելների լրամշակման համար քայլ առ քայլ բացառվել են համակարգային բազմագործոնային վերլուծության ժամանակ ընդգրկված հետևյալ գործոնները. բանակային կորպուսները *(նկ. 2)*, զորակոչի մարզերը *(նկ. 3)*, բանակային կորպուսներն ու զորակոչի մարզերը միաժամանակ *(նկ. 4)*, հիվանդների զինվորական կազմը *(նկ. 5)*: Յուրաքանչյուր դեպքում ստացել ենք երկու գրաֆիկական պատկեր, որոնք արտացոլում են ծավալային ցուցանիշները և հիվանդությունների դասերը:




ա) բ)

Նկ. 2. ՀՀ Զինված ուժերի անձնակազմին մասնագիտացված թերապևտիկ բուժօգնության ցուցաբերման մաթեմատիկական մոդել՝ առանց բանակային կորպուսների.
ա) ծավալային ցուցանիշների, բ) հիվանդությունների դասերի




ա) բ)

Նկ. 3. ՀՀ Զինված ուժերի անձնակազմին մասնագիտացված թերապևտիկ բուժօգնության ցուցաբերման մաթեմատիկական մոդել՝ առանց մարզերից զորակոչի.
ա) ծավալային ցուցանիշների, բ) հիվանդությունների դասերի



ա) բ)

Նկ. 4. ՀՀ Զինված ուժերի անձնակազմին մասնագիտացված թերապևտիկ բուժօգնության ցուցաբերման մաթեմատիկական մոդել՝ առանց բանակային կորպուսների և մարզերից զորակոչի.
ա) ծավալային ցուցանիշների, բ) հիվանդությունների դասերի



ա) բ)

Նկ. 5. ՀՀ Զինված ուժերի անձնակազմին մասնագիտացված թերապևտիկ բուժօգնության ցուցաբերման մաթեմատիկական մոդել՝ առանց հիվանդների զինվորական կազմի.
ա) ծավալային ցուցանիշների, բ) հիվանդությունների դասերի

Աղյուսակ

ՊԻՐՍՈՆԻ ԳՈՐԾԱԿՑԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ ՄՈԴԵԼՆԵՐԻ ԱՌԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Մոդելների անվանումը	Պիրսոնի գործակիցը
Մոդել ըստ ծավալային ցուցանիշների	0,77
Մոդել ըստ հիվանդությունների դասերի	
Մոդել ըստ ծավալային ցուցանիշների՝ առանց ԲԿ	0,66
Մոդել ըստ հիվանդությունների դասերի՝ առանց ԲԿ	
Մոդել ըստ ծավալային ցուցանիշների՝ առանց մարզերից զորակոչի	0,74
Մոդել ըստ հիվանդությունների դասերի՝ առանց մարզերից զորակոչի	
Մոդել ըստ ծավալային ցուցանիշների՝ առանց մարզերից զորակոչի և ԲԿ	0,23
Մոդել ըստ հիվանդությունների դասերի՝ առանց մարզերից զորակոչի և ԲԿ	
Մոդել ըստ ծավալային ցուցանիշների՝ առանց հիվանդների զինվորական կազմի	0,73
Մոդել ըստ հիվանդությունների դասերի՝ առանց հիվանդների զինվորական կազմի	

Ստացված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ՝

• մոդելավորման ժամանակ զորամասերի բնակայման գոտիների և մարզերից զորակոչի գործոնների միաժամանակյա բացառումը հանգեցնում է այն բանին, որ Պիրսոնի գործակցի արժեքը հավասարվում է 0,23: Նման երևույթը վկայում է, որ բանակի համալրման ձևի փոփոխման դեպքում (օրինակ՝ պայմանագրային ծառայության կիրառումը) հնարավորություն է ստեղծվում նվազեցնելու ՀՀ ԶՈՒ-ի մասնագիտացված բուժում պահանջող թերապևտիկ պրոֆիլի հիվանդացությունը,

• մնացած բոլոր դեպքերում մոդելների միջև համահարաբերակցական կապը բավական ուժեղ է, այսինքն՝ այդ գործոնները էապես չեն ազդում ուսումնասիրվող երևույթի վրա,

• ԲԿ գործոնի բացառման դեպքում համահարաբերակցական կապը թեև առկա է, սակայն դիտվում է դրա շեշտակի անկում:

Ըստ հետազոտության տվյալների և կատարված վերլուծության, ՀՀ ԶՈՒ-ի թերապևտիկ ծառայությունը կարող է դիտվել որպես մեկ ամբողջական համակարգ, որը ներառում է որակավոր և մասնագիտացված բուժօգնությունները:

Եվ այսպես. 1994–2006 թթ. տվյալների համակարգային վերլուծությունը և դրա հիման վրա մշակված մոդելները ստեղծում են լուրջ գիտական հիմք, որի վրա պետք է խարսխվի ՀՀ ՊՆ ԿԿԶՀ թերապևտիկ բաժանմունքի հետագա գործունեության և զարգացման պլանավորումը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Ա. Մ. Հարությունյան,* Սանիտարական վիճակագրություն: Ե., 2000:
2. «Внутренние болезни: Военно-полевая терапия». Под. ред. А. Л. Ракова и А. Е. Сосюкина. СПб., 2003.
3. «Военно-медицинская подготовка». Под. ред. Ф. И. Комарова. М., 1984.
4. «Военно-полевая терапия». Под. ред. Б. Д. Ивановского. Л., 1958.

5. «Военно-полевая терапия». Под. ред. Н. С. Молчанова и Е. В. Гембицкого. Л., 1973.
6. *Е. В. Гембицкий, Ф. И. Комаров.* Военно-полевая терапия. М., 1983.
7. *С. Гланц.* Медико-биологическая статистика. М., 1998.
8. *В. А. Миняев, Н. Н. Вишняков, В. К. Юрьев, В. С. Лучкевич.* Социальная медицина и организация здравоохранения. Т. 1. СПб., 1997.
9. *Б. А. Углов, М. В. Углова и др.* Применение методов морфометрии и статистического анализа в морфологических исследованиях. Куйбышев, 1982.
10. *Б. А. Углов, М. В. Углова, В. В. Сергеев, Б. В. Андреев.* Корреляционный анализ и многофакторные корреляционные методы в нейроморфологических исследованиях. «Новые методы изучения нервной системы и микроциркуляции сердца и легких в норме и патологии». Куйбышев, 1979.

К ВОПРОСУ ОРГАНИЗАЦИИ ТЕРАПЕВТИЧЕСКОЙ ПОМОЩИ В ВС РА

С. Г. ГАЛСТЯН, полковник м/с, доктор медицинских наук, профессор, начальник военно-медицинского факультета ЕГМУ,
М. В. САРГСЯН, капитан м/с, кандидат медицинских наук, доцент, начальник терапевтического отделения ЦКВГ МО РА,
А. А. ХАЧАТРЯН, подполковник м/с, кандидат медицинских наук, доцент, начальник цикла чрезвычайных ситуаций военно-медицинского факультета ЕГМУ

РЕЗЮМЕ

Основными задачами военно-медицинской терапевтической службы в мирное время являются как лечение и профилактика соответствующих болезней, так и изучение причин их возникновения, в частности: изучение особенностей возникновения, клинического течения и лечения болезней внутренних органов; анализ заболевания и разработка комплекса мероприятий, направленных на снижение их уровня и укрепление здоровья личного состава; изучение патогенеза, клиники, диагностики, а также разработка методов профилактики болезней, связанных с географическими факторами районов дислокации воинских частей; изучение задач, связанных с военно-медицинской экспертизой и реабилитацией терапевтических больных.

Исходя из этого, терапевтическое отделение ЦКВГ провело исследование в каждом из указанных направлений в целях разработки и внедрения модели организации терапевтической медпомощи для данного контингента больных. Анализ результатов исследования показывает, что на сегодняшний день насущной является проблема организации специализированной терапевтической помощи военнослужащим.

Подчеркивается, что осуществленный системный анализ данных за 1994–2006 гг. и разработанные на его основе модели являются серьезной научной основой, на которой должны строиться дальнейшая деятельность и плановое развитие терапевтического отделения ЦКВГ МО РА.

ON THE ISSUE OF THERAPEUTIC AID ORGANIZATION IN THE RA ARMED FORCES

S. G. GALSTYAN, Colonel of Medical Service, MD, Professor, Head of the Military Medical Department, Yerevan State Medical University,
M. V. SARGSYAN, Captain of Medical Service, PhD in Medicine, Associate Professor, Head of the Therapeutic Department of the Central Clinical Military Hospital, MOD, RA,
A. A. KHACHATRYAN, Lieutenant colonel of Medical Service, PhD in Medicine, Associate Professor, Head of the Emergency Cycle of the Military Medical Department of the YSMU

SUMMARY

The main tasks of the military medical therapeutic service in peacetime are both the treatment and the prevention of diseases and the study of their causes, in particular: the examination of emergence characteristics, the clinical course and the treatment of viscera diseases; the analysis of the disease and the development of the set of measures aimed at reducing their level and improving the health of the personnel; the study of pathogenesis, clinical picture, diagnosis, as well as the development of preventive methods associated with the geographical factors of the military units' deployment areas, the study of the problems connected with the military medical examination and the rehabilitation of the therapeutic patients.

Accordingly, the Therapeutic Department of the CCMH conducted research in each of these areas in order to develop and implement a model of the organization of therapeutic aid for this group of patients. The analysis of the results shows that today the rendering of the special therapeutic aid to the military is an urgent problem.

It is emphasized that the analysis carried out sistematically of the data for 1994–2006 and the developed models on its basis are serious scientific basis upon which the future activities and the planned development of the Therapeutic Department of the CCMH, MOD, RA are to be built.

ՋԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՌՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Կ. Ս. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ «Լեռնային Հայաստան» հանգստյան տուն-առողջարանի պետ,
Ա. Վ. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ, բ/ծ կապիտան, «Լեռնային Հայաստան» հանգստյան տուն-առողջարանի պետի տեղակալ, բուժական մասի պետ,
Կ. Լ. ՎԱՀԱՆՅԱՆ, բ/ծ մայոր, բժիշկ-ֆիզիոթերապևտ

ՀՀ ԶՈՒ-ի անձնակազմի առողջական վիճակի պահպանումը պայմանավորված է ինչպես ռազմաբժշկական ծառայության, այնպես էլ առողջարանային սպասարկման համակարգերի արդյունավետ գործունեությամբ: Այս տեսակետից առանձնահատուկ կարևորություն են ստանում տվյալ բնագավառում՝ ՀՀ ԶՈՒ-ի զարգացման պլանին համահունչ հեռանկարային ծրագրերի մշակումը և իրագործումը:

Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների առողջական վիճակի պահպանման և հանգստի կազմակերպման գործում իր ուրույն դերն ունի ՀՀ ՊՆ «Լեռնային Հայաստան» հանգստյան տուն-առողջարանը, որն իր առաքելության շրջանակներում իրականացնում է՝

– առողջության պահպանմանն ուղղված առաջնային ախտականխություն,

– շնչառական օրգանների, սիրտ-անոթային համակարգի, աղեստամոքսային ուղու, նյարդային համակարգի, հենաշարժական համակարգի հիվանդություններով տառապող հիվանդների և վերականգնողական բուժման կարիք ունեցողների համար բուժական համալիր միջոցառումների կազմակերպում,

– հանգստի, ժամանցի, մարզաառողջարանային և զբոսաշրջային միջոցառումների կազմակերպում:

ՀՀ ՊՆ «Լեռնային Հայաստան» հանգստյան տուն-առողջարանը այդ ռազմավարական նպատակին հասնելու համար նախատեսում է՝

- նորմատիվային չափանիշներին համապատասխան որակյալ բժշկական ծառայությունների մատուցում,
- հիմնական միջոցների ընթացիկ վերանորոգում, բարեկարգում, կահավորում,
- ժամանակակից սարքավորանքի ձեռքբերում,
- առողջարանի բուժանձնակազմի աշխատանքի գիտամեթոդական մշակումների, ինչպես նաև հանգստի կազմակերպման հետ կապված տվյալների բազաների ներդրման աշխատանքների կատարում,
- ժամանակակից համակարգերի և թվային տեխնոլոգիաների ներդրում, մասնագետների վերապատրաստում, սեմինարների կազմակերպում:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի առողջարանային սպասարկման համակարգում ընդգրկված է միայն «Լեռնային Հայաստան» առողջարանը Դիլիջանում՝ որպես ընդհանուր պրոֆիլի առողջարան: Այստեղ ընդունվում են հիվանդներ տարբեր հիվանդաբանություններով, սակայն

հիմնական ուղղվածություններն են շնչառական, հենաշարժական և նյարդաբանական ախտաբանությունները:

1997 թվականից առ այսօր առողջարանը գործում է Զինված ուժերի կազմում, առողջարանում կուտակված փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Զինված ուժերում, բացի վերը նշված օրգան-համակարգերի հիվանդություններից, մշտական բնույթ են կրում սիրտ-անոթային և միզասեռական համակարգերի հիվանդությունները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույնիսկ ծանրաբեռնված հոսքերի պարագայում առողջարանը չի կարող սպասարկել Զինված ուժերի ամբողջ անձնակազմին, հեռանկարում պետք է մտածել հանրապետության այլ առողջարանային գոտիներում զինծառայողների բուժման և հանգստի կազմակերպման մասին. սիրտ-անոթային և մարսողական համակարգերի ախտաբանությունների համար՝ Արզնիում, միզասեռական համակարգի ախտաբանությունների համար՝ Հանքավանում, աղեստամոքսային և ներզատիչ (էնդոկրին) համակարգերի ախտաբանությունների համար՝ Ջերմուկում: Հայաստանի Հանրապետության բնակլիմայական պայմանները հնարավորություն են տալիս կազմակերպելու առողջարանային պրոֆիլային բուժում: ՈՒստի նպատակահարմար է մշակել այդ առողջարանների հետ պայմանագրային հիմունքներով համագործակցության ծրագրեր:

Գործող կարգի համաձայն՝ առողջարանային սպասարկումից օգտվում են սպաները, ենթասպաները, պայմանագրային զինծառայողները, նրանց ընտանիքների անդամները և զոհված ազատամարտիկների ընտանիքների անդամները, հաշմանդամ ազատամարտիկները և պատերազմական գործողությունների մասնակիցները: Սակայն համաշխարհային փորձը, ինչպես նաև մեզանում առկա իրողությունները վկայում են, որ ժամկետային պարտադիր զինծառայողները նույնպես կարիք ունեն առողջարանային բուժսպասարկման: Նախկինում Խորհրդային Միության, իսկ ներկայումս ՌԴ և զարգացած արևմտյան պետությունների ռազմաբժշկական պրակտիկան ապացուցել է ժամկետային պարտադիր զինծառայողների առողջարանային բուժսպասարկման անհրաժեշտությունը: ՈՒստի նպատակահարմար է մշակել այդ խնդիրների լուծմանն ուղղված ծրագիր: Ընդ որում, առաջարկում ենք մշակել մեխանիզմ, ըստ որի զինծառայողները առողջարանային ծառայություններից օգտվեն ոչ միայն արձակուրդի ժամանակ, այլև հետվնասվածքային և այլ հիվանդությունների հետբուժական փուլում:

Առողջարանային բուժումը նախատեսված չէ միայն հիվանդ զինծառայողների համար: Այս ծառայությունից պետք է տարին մեկ անգամ օգտվեն ՀՀ ՊՆ և ԶՈՒ-ի բոլոր ծառայողները և աշխատողները, ինչը հնարավորություն կտա առողջարանային ծրագրով նախատեսված միջոցառումների շրջանակներում կատարել աշխատանքներ՝ ուղղված անձնակազմի էներգետիկ ռեսուրսների վերականգնմանը, ինչն էլ իր հերթին կհանգեցնի աշխատունակության և ընդհանուր առմամբ Զինված ուժերի մարտունակության մակարդակի բարձրացմանը: Այս մոտեցումը ենթադրում է առողջարանային բազայի թեկուզ և սեզոնային ընդլայնում:

Քանի որ առողջարանը ծառայում է նաև որպես հանգստյան տուն, բուժվողների և հանգստացողների առողջ ապրելակերպի և ժամանցի լիարժեք կազմակերպման համար անհրաժեշտ է նախատեսել հետևյալ միջոցառումները.

- մարզական և սպորտային գույքի ձեռքբերում, մարզական միջոցառումների կազմակերպում,
- մանկական խաղասենյակի, ինտերնետ ակումբի, կինոդահլիճի և պարահրապարակի կահավորում, կինոդիտումների և մշակութային միջոցառումների կազմակերպում,
- ցուցադրվող հեռուստաալիքների թվի մեծացում, որակի բարելավում, ներքին մալուխային ցանցի նորոգում,
- գրադարանային ֆոնդի թարմացում, թերթերի և հանդեսների բաժանորդագրություն:

Առողջարանային սպասարկման համակարգի կատարելագործման համար անհրաժեշտ ենք համարում պատրաստել և վերապատրաստել համապատասխան բուժական կադրերի: Պատահական չէ, որ ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանը իր աշխատություններից մեկում նշել է, որ պաշտպանական բարեփոխումներն իրականացվում են նաև այնպիսի ուղղություններով, ինչպիսիք են.

«նոր պահանջներին համապատասխան ուսուցման և դաստիարակության կազմակերպում, կադրային ճիշտ քաղաքականություն, ուսումնանյութական բազայի կատարելագործում,

...հայ զինվորի, սպայի, հրամանատարի ու նաև ողջ հասարակության շրջանում գաղափարականության, գիտակցական վերաբերմունքի ձևավորում»[1]:

Բուժական կադրերի պատրաստման և վերապատրաստման անհրաժեշտության հաշվառմամբ «Լեռնային Հայաստան» առողջարանում նպատակահարմար է ստեղծել առողջարանային ուսումնական բազա, որը կարող է կազմակերպել ուսումնական գործընթացը:

«Լեռնային Հայաստան» առողջարանի հեռանկարային խնդիրներից է մշտական բժշկական հանձնաժողովի ստեղծումը, որը իր ենթակայության տակ ունենա յուրաքանչյուր բանակային կորպուսում գործող ծառայություններ: Նման հանձնաժողովի առկայության պարագայում կբացառվեն տարբեր հակացուցումներ ունեցող զինծառայողների առողջարանային բուժման դեպքերը:

Մոտ ապագայում նախատեսվում է շահագործման հանձնել «Լեռնային Հայաստան» առողջարանի ցեխաբուժարանը: Դա հնարավորություն կտա կազմակերպելու ցեխի լոգանքներ, ապլիկացիաներ: Նպատակահարմար է նաև ծրագրով նախատեսել ժամանակակից ֆիզիոթերապևտիկ սարքավորանքի ձեռքբերումը: Այն կարելի կլինի օգտագործել ինչպես առանձին, այնպես էլ ցեխաբուժությանը զուգահեռաբար՝ էլեկտրատորֆի, ցեխի մագնիսաֆորեզի և լազերաֆորեզի հետ: Արդիականացված սարքավորանքի համակցված կիրառումը առավելագույնս կմեծացնի բուժական ներգործության

[1] *Ս. Ս. Օհանյան,* XXI դարի բանակը: Ե., 2007, էջ 30:

արդյունավետությունը: Հարկ է նշել, որ բուժական աշխատանքների արդյունավետության մեծացման համար կարևոր խնդիր է նաև արտերկրում այլ բաղադրության ցեխերի ձեռքբերումը: Այս համատեքստում ոչ պակաս կարևորություն ունի նաև Հայաստանի Հանրապետության Ֆիզիկական բժշկության և կուրորտաբանության ինստիտուտի կողմից փորձարկված հայկական կավի կիրառումը:

Առողջարանային սպասարկումը լիարժեք կերպով կազմակերպելու, բուժման արդյունավետությունը մեծացնելու և ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ ենք համարում ընդլայնել առողջարանի ախտորոշիչ բազան, որը կարող է հետագայում հիմք դառնալ գիտական աշխատանքների և ծրագրերի իրականացման համար:

Նպատակահարմար է նաև ծավալել համագործակցություն այլ երկրների, մասնավորապես՝ Ռուսաստանի Դաշնության, առողջարանների հետ՝ փորձի փոխանակման, կադրերի վերապատրաստման կազմակերպման նպատակով: Այս առումով կարելի է երկարաժամկետ ծրագրերի շրջանակներում մեր սպաների առողջարանային բուժումը կազմակերպել համագործակցող երկրների զինվորական առողջարաններում, փոխարենը՝ մեր առողջարաններում այդ երկրների զինծառայողների թվակազմի ընդունմամբ:

Ամփոփելով՝ նշենք, որ ՀՀ ԶՈՒ-ում զինծառայողների, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամների առողջարանային սպասարկման համակարգի կատարելագործման համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է.

- կատարելագործել տվյալ ոլորտում հարաբերությունները կարգավորող նորմատիվ-իրավական բազան և կառավարման մեխանիզմները,
- մշակել զինծառայողների առողջարանային ապահովման բարելավմանն ուղղված միջոցառումների հեռանկարային ծրագիր,
- մշակել այլ հայրենական և արտասահմանյան առողջարանների հետ համագործակցության հեռանկարային ծրագրեր,
- օպտիմալացնել առողջարանային բուժման (միայն բժշկական ցուցումներով) և կազմակերպված հանգստի ժամկետներն ու թվակազմը,
- բարելավել գիտական, մեթոդական, տեղեկութային ապահովումը,
- ներդրել նորամուծական բժշկական և առողջարանային սպասարկման համակարգի կառավարման առաջավոր տեղեկատվական տեխնոլոգիաներ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «ՀՀ Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի զեկուցումը ՀՀ Զինված ուժերում պաշտպանական բարեփոխումների իրականացման վերաբերյալ»: «ՀԲ», 2007, հմ. 1:

2. *Ս. Մ. Ohանյան,* Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումները. երկրորդ փուլ: «ՀԲ», 2008, հմ. 2–3:

3. «Стратегический план развития медицинского и санаторно-курортного обеспечения Вооруженных Сил Российской Федерации на период до 2020 года». М., 2009 (http://62.141.124.158:8380/militarydev/social/health/progress.htm).

ПЕРСПЕКТИВЫ УСОВЕРШЕНСТВОВАНИЯ СИСТЕМЫ САНАТОРНОГО ОБСЛУЖИВАНИЯ ВОЕННОСЛУЖАЩИХ

К. С. ЕГИАЗАРЯН, полковник, начальник санатория «Горная Армения» МО РА,
А. В. АРЗУМАНЯН, капитан м/с, заместитель начальника санатория «Горная Армения», начальник лечебной части, К. Л. ВААНЯН, майор м/с, врач-физиотерапевт

РЕЗЮМЕ

Санаторий «Горная Армения» является единственной структурой системы санаторного и реабилитационного обслуживания военнослужащих МО РА.

В контексте оборонных реформ РА приоритетными являются профилактика здоровья военнослужащих и членов их семей, организация их отдыха, что напрямую связано с боеспособностью личного состава Вооруженных сил РА.

В целях обеспечения полноценного санаторно-оздоровительного обслуживания военнослужащих ВС РА целесообразно: увеличить число санаториев и домов отдыха для военнослужащих путем расширения сотрудничества с другими санаториями и ДО РА и дружественных государств; обеспечить соответствие профилей санаториев и нозологии отдыхающих; повысить уровень материально-технической оснащенности санатория, повысить квалификацию медперсонала и вовлечь его в научную деятельность с обеспечением участия в научных конференциях; расширить контингент лиц, имеющих право пользоваться услугами санаториев, за счет включения в него и военнослужащих обязательной срочной службы.

THE PERSPECTIVES OF THE MILITARY'S SANATORIUM SERVICES IMPROVEMENT

K. S. YEGHIAZARYAN, Colonel, Head of the Sanatorium «Mountainous Armenia», MOD, RA,
A. V. ARZUMANYAN, Captain of Medical Service, Deputy Head of the Sanatorium «Mountainous Armenia», Head of the Medical Department,
K. L. VAHANYAN, Major of Medical Service, Physician Physiotherapist

SUMMARY

The Sanatorium «Mountainous Armenia» is the only structure of sanatorium and rehabilitation services for the military of the MoD of the Republic Armenia.

In the context of the RA defense reforms the preventive measures for maintaining the health of the military and their family members and the organization of their leisure, which is directly related to the fighting efficiency of the RA Armed Forces' personnel, are of higher-priority. In order to ensure the full sanatorium services of the RA Armed Forces' personnel it is expedient: to increase the number of sanatoriums and rest homes for the military by promoting collaboration with other sanatoriums and RHs of the RA and the friendly countries; to ensure the profile correspondence between sanatorium and nosology of those having rest; to increase the level of logistical equipment of the operating sanatorium; improve the skills of health personnel; to attract health workers to the scientific activities ensuring their participation in scientific conferences and seminars; to expand the contingent of people having the right to enjoy sanatorium services, at the expense of the inclusion in it also the servicemen of compulsory military service.

ՁԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ



ՋԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ՝ ՈՐՊԵՍ ՀՀ ՋՈՒ-Ի ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐ

Մ. Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ Զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչության պետ

«Հայաստանի Հանրապետությունը կարևորում է ժողովրդի սոցիալական պաշտպանվածության ռազմավարությունը՝ որպես պետության անվտանգության քաղաքացու նվիրվածության էական գործոն»[1]: Սոցիալական պաշտպանվածությունը մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների համակարգի ապահովումն է: Այն ապահովվում է սոցիալական պաշտպանության միջոցով, որը մարդու իրավունքների և ազատությունների իրացմանն ուղղված գործունեությունն է: Օրինակ՝ աշխատանքի սահմանադրական իրավունքը չի կարող իրացված լինել, եթե չկան աշխատանքային հարաբերությունները կանոնակարգող օրենքներ, բայց միևնույն ժամանակ անհրաժեշտ է նաև ունենալ այն պետական ու հասարակական հաստատությունների համակարգը, որոնք ապահովեն այդ օրենքների գործողությունը:

Համաշխարհային պրակտիկայում ձևավորվել են բնակչության սոցիալական պաշտպանության տարբեր մոդելներ: Զարգացած արևմտյան պետություններում սոցիալական պաշտպանության խնդրի լուծման համար մշակվել են գործուն մեխանիզմներ: Բարձր մակարդակի սոցիալական պաշտպանությունը բազմապիսի գործոնների փոխազդեցության արդյունք է: Այդ գործոններից գլխավորներն են. շուկայական մեխանիզմով գործող տնտեսությունը, երկրում մշտապես իրականացվող արդյունավետ օրինաստեղծ գործունեությունը, կառավարության՝ ընդունված օրենսդրական ակտերի գործառման ապահովմանը նպատակաուղղված գործունեությունը, սոցիալ-տնտեսական պրոբլեմների լուծման գործում ձեռնարկատերերի և արհմիությունների համագործակցությունը:

Մեկ այլ մոտեցում կար նախկին սոցիալիստական պետություններում: Թեև սոցիալական պաշտպանության պրոբլեմը դիտվում էր որպես օբյեկտիվ իրականություն, սակայն գաղափարական ու քաղաքական պատճառներով լռության էր մատնվում, քանի որ համարվում էր, թե կոմունիզմ կառուցող հասարակությունում բոլոր սոցիալ-տնտեսական պրոբլեմները լուծվում են ինքնաբերաբար՝ սոցիալիզմի կառուցմանը համընթաց: Դրա հետ մեկտեղ սոցիալիստական ճամբարի պետություններում ապահովվում էր մասնագիտական զբաղվածությանն ուղեկցող սոցիալական դերակատարումը, գործում էին անվճար առողջապահության, կրթության ու բնակարանների հատկացման համակարգերը, առկա էին էժան

[1] «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության նախագիծ»: «Հայկական բանակ», 2006, հմ. 2, էջ 42:

սնունդ և հագուստեղեն, ցածր կոմունալ վճարումներ: Սակայն պետական մենաշնորհի համընդգրկունությունն ու ամենակարողությունը պետությանը հնարավորություն էին տալիս սահմանելու աշխատուժի ձևավորման և օգտագործման մասնագիտական, աշխարհագրական և այլ համամասնություններ, աշխատանքի վարձատրման չափերը, ինչպես նաև նոր ստեղծված արդյունքի այն չափը, որը պետությունը վերցնում էր: Այսպիսով՝ «սոցիալիզմի» ժամանակ մարդիկ պաշտպանված էին նվազագույն ապրուստի ապահովման սկզբունքով, համահավասարեցման գաղափարախոսությամբ, աշխատանքային ռեսուրսների համար ընթացող պայքարում պետական ձեռնարկությունների սահմանափակ մրցակցությամբ, սակայն բոլորովին պաշտպանված չէին պաշտոնական քաղաքականությունից և ապրուստի նվազությունից, այսինքն՝ չկար ո՛չ ծայրագույն աղքատություն, ո՛չ էլ մեծ ծախսեր կատարելու ազատություն:

Հասարակական արտադրության մեջ կատարվող աշխատանքային ներդրման տեսանկյունից սոցիալական պաշտպանությունը լինում է երկու տեսակի՝ սահմանափակ և բացարձակ: Սահմանափակ սոցիալական պաշտպանությունը հասարակության բոլոր անդամների երաշխավորված նվազագույն կենսամակարդակի ապահովումն է, այսինքն՝ սննդի, հագուստի ու կացարանի այն սահմանված նվազագույն չափն է, որն անհրաժեշտ է առողջության և աշխատունակության պահպանման համար: Դա հասանելի է բոլորի համար և չպետք է դիտվի որպես արտոնություն: Բացարձակ սոցիալական պաշտպանությունը որոշակի անձի կամ որոշակի կատեգորիայի քաղաքացիների համար պետության կողմից երաշխավորված հարաբերական բարեկեցության ապահովումն է, այսինքն՝ «արդար» վարձատրման ապահովումը, երբ վարձատրությունը հարաբերվում է ոչ թե աշխատանքի օբյեկտիվ արդյունքի, այլ տվյալ անձի սուբյեկտիվ արժանիքների հետ[2]:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունը, ձերբազատվելով սոցիալիստական գաղափարախոսությունից, ձևավորվում է որպես իրավական սոցիալական պետություն, որում ազգային անվտանգության հիմնարար արժեքներից մեկը բարեկեցությունն է[3]: Այդ նպատակով ՀՀ-ում իրականացվում են համապարփակ բարեփոխումներ[4]:

Սոցիալական պաշտպանության հարցը կարևորել է նաև ՀՀ Նախագահ Ս. Սարգսյանը՝ իր նախընտրական ծրագրում նշելով, որ՝ «Այսօր դժվարին պայմաններում հայտնված հաշմանդամները, ծնողազուրկ երեխաները, պատերազմի վետերանները, զոհված ազատամարտիկների ընտանիքները, փախստականները

[2] Տես *В. Г. Кожухарь.* Социальная защищенность: проблема социальной защиты военнослужащих. М., 1996:

[3] Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 14:

[4] Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության նախագիծ»:

առանց պետության հոգածության չեն կարող լուծել իրենց առջև ծառացած խնդիրները»[5]:

ՀՀ-ում իրականացվող պաշտպանական բարեփոխումների շրջանակներում հատուկ ուշադրություն է դարձվում զինծառայողների սոցիալական պաշտպանվածության մակարդակի բարձրացմանը: Ընդսմին հաշվի է առնվում, որ հասարակություն—բանակ կապը երկկողմանի է. եթե բանակում հստակ կերպով արտացոլվում են հասարակության մեջ տիրող բարքերը, ապա բանակն էլ, լինելով պետության կարևոր ատրիբուտներից մեկը, զգալի չափով ազդում է պետության նկատմամբ ձևավորված հասարակական վերաբերմունքի վրա: Զինծառայողները կատարում են պետության և հասարակության համար կենսական կարևորություն ունեցող սոցիալապես պատասխանատու գործառույթներ և, ինչպես բոլոր քաղաքացիները, ունեն սպառման ապրանքների, մատուցվող ծառայությունների, բնակարանների և այլ պարագաների կարիք, ուստի ռազմական կազմակերպվածքի արդյունավետությունն զգալի չափով պայմանավորված է այն հանգամանքով, թե որքանով է պետությունը կատարում իր պարտականությունները՝ կապված զինծառայողների նյութական և սոցիալական ապահովման երաշխիքների, սպայի մասնագիտության և Հայրենիքի պաշտպանի հեղինակության մակարդակի բարձրացման, պահեստազոր արձակվածներին քաղաքացիական պայմաններում աշխատանքին հարմարմանը նպաստելու հետ: Այս առումով ՀՀ ՊՆ զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչությունը, ղեկավարվելով «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի պահանջներով, ՀՀ Կառավարության որոշումներով, ՀՀ պաշտպանության նախարարի հրամաններով և ՊՆ ԶՄՊ վարչության կանոնադրության պահանջներով, պլանաչափ աշխատանք է կատարում զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանության ուղղությամբ:

Նշենք, որ զինվորական միջավայրում սոցիալական աշխատանքն ունի որոշակի առանձնահատկություններ: Զինծառայողը բացի գիտական, ստեղծագործական և մանկավարժական գործունեությունից չունի իր բարեկեցության մակարդակը բարձրացնելու նպատակով լրացուցիչ աշխատանք կատարելու հնարավորություն: Իսկ դա նշանակում է, որ զինվորական-սոցիալական աշխատանքի օբյեկտ պետք է լինեն նաև նրա ընտանիքի անդամները:

Պատմության և ներկայիս հասարակական-քաղաքական ու սոցիալական իրավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ սոցիալ-տնտեսական ու մի շարք այլ վերափոխումներ առավելագույնս ազդում են բնակչության այն խավերի կենսամակարդակի վրա, որոնք ապրում են պետականորեն սահմանված եկամուտներով, մասնավորապես՝ աշխատավարձով, թոշակով և նպաստներով: Հենց այդ կատեգորիային են պատկանում զինծառայողները և նրանց ընտանիքների անդամները:

[5] «ՀՀ Նախագահ Ս. Ա. Սարգսյանի նախընտրական ծրագիր» (http://www.president.am/president/biography/arm/):

Մեր դիտարկումների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ, ընդհանուր առմամբ, ներկայումս զինծառայողների սոցիալական պաշտպանվածության մակարդակը բավարար չէ, ինչը հետևանք է հրատապ լուծում պահանջող հետևյալ խնդիրների.

–համապատասխան իրավական բազայի անկատարություն և հատվածայնություն,

– բնակարանային հիմնախնդիր,

– զինվորական ծառայության ոչ բավարար վարձատրություն, որը չի համապատասխանում միջազգայնորեն ընդունված սոցիալ-տնտեսական ստանդարտներին ու պահանջմունքներին,

– զինվորական ծառայության ոչ պատշաճ սոցիալ-տնտեսական շարժառիթավորում, և այլն:

Ըստ մի շարք մասնագետների՝ ոչ բավարար սոցիալական պաշտպանվածությունը կարող է հանգեցնել բանակի վերածմանը բարձր սոցիալական ռիսկի հաստատության, ինչն իր հերթին կարող է բացասաբար ազդել զինծառայության նկատմամբ տրամադրվածության ընդհանուր ֆոնի վրա[6]: Այս տեսանկյունից զորքերի մարտական պատրաստության և մարտունակության պահպանմանն ուղղված գործունեության մեջ առաջին պլան է մղվում զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական և իրավական պաշտպանությունը:

Սոցիալական պետությունների (ԱՄՆ, Գերմանիա, Մեծ Բրիտանիա, Շվեդիա և այլն) փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այնտեղ գոյություն ունի զինծառայողներին արտոնությունների տրամադրման գործուն համակարգ: Մասնավորապես՝ նրանց վարձատրությունը չի զիջում մասնավոր հատվածում ծառայող համապատասխան մասնագետների վարձատրությանը, նրանց զորացրումից հետո տրվում է արտոնյալ կարգավիճակ առողջապահական, կրթական, բնակարանային ապահովման և այլ համակարգերում[7]:

ՀՀ ՊՆ ԶՍՊ վարչության գործունեությունը բազմապլան և բազմավեկտոր է: Վարչության գործունեությունը հիմնականում ուղղված է. զինծառայողների բնակարանային ապահովվածության, պարտադիր ժամկետային զինծառայողների զորանոցային, սոցիալ-կենցաղային պայմանների ապահովվածության, դրամական բավարարման, բժշկական սպասարկման, արձակուրդների տրամադրման, հանգստի կազմակերպման ու սոցիալական բնույթի այլ պայմանների ուսումնասիրությանը և բարելավման առումով կոնկրետ առաջարկությունների մշակմանը: Սոցիալական աշխատանքի շրջանակներում վարչությունը զորամասերում պարբերաբար կազմակերպում է հանդիպումներ սպայական, ենթա-

[6] Տես *И. Г. Зайнышева.* Взаимосвязь социальной политики и социальной работы. М., 1994:

[7] Տես, օրինակ, *А. Трусцов, С. Шатров.* Финансово-экономическое обеспечение и социальная защита американских военнослужащих. «Зарубежное военное обозрение», 2002, № 12:

սպայական ու շարքային կազմերի զինծառայողների հետ՝ դիմումների, բողոքների, առաջարկությունների քննարկման նպատակով, պարզաբանումներ է տալիս զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին իրավական ակտերի վերաբերյալ՝ ստուգելով դրանց կատարման ընթացքը, առաջարկություններ է ներկայացնում զինծառայողների (նրանց հավասարեցված անձանց) և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ, ՀՀ Կառավարության 2007 թ. մարտի 7-ի հմ. 384-Ն որոշման համաձայն կազմակերպում է կարիքավոր զինծառայողներին բնակարանային հաշվառման վերցնելու, բնակարանով ապահովելու և բնակարանները մասնավորեցնելու վերաբերյալ զինծառայողների զեկուցագրերը ՊՆ կենտրոնական բնակկենցաղային հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու գործընթացը, ՀՀ Կառավարության 2005 թ. հուլիսի 16-ի հմ. 947-Ն որոշման համաձայն կազմակերպում է բնակարանի և բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող զոհված (մահացած) կամ հաշմանդամ դարձած զինծառայողների (ազատամարտիկների) ընտանիքներին անհատույց պետական ֆինանսական աջակցության գործը, ինչպես նաև կատարում է այլ սոցիալական աշխատանք:

Պաշտպանական բարեփոխումների շրջանակներում կատարվող զինվորական-սոցիալական աշխատանքի ոլորտում առաջնային պլան են մղվում հետևյալ միջոցառումները.

1. Զինված ուժերում սոցիալական աշխատանքի առաջավոր համակարգի ներդրում,

2. զինվորական կոլեկտիվներում և զորամասերի տեղաբաշխման շրջաններում սոցիալական գործընթացների ուսումնասիրում և զարգացման միտումների կանխատեսում,

3. զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանության ուղղված կառավարչական որոշումների մշակում, ընդունում և կատարում,

4. զինծառայողների սոցիալ-իրավական դաստիարակության կազմակերպում, տարբեր կատեգորիաների զինծառայողներին անհատական իրավաբանական օգնության ցուցաբերում՝ կոնկրետ սոցիալ-իրավական խնդիրների լուծման նպատակով,

5. ենթակաների սոցիալական պաշտպանության նպատակով հրամանատարական կազմի և այլ պաշտոնատար անձանց՝ զինվորական սոցիալական ոլորտի իրավական պահանջների ուսուցում,

6. զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների դիմումների ուսումնասիրում և հնարավորության սահմաններում դրանց պատեհաժամ լուծում,

7. պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համագործակցության համադասում:

Սոցիալական աշխատանքով զբաղվող զինվորական կառույցների գոր-

ծուներության միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ դրանց գործառույթներում կարևոր տեղ ունի սոցիալ-հոգեբանական աշխատանքների կազմակերպումը: Մասնավորապես՝ նրանք համադասում են մարտական գործողություններին մասնակցած զինծառայողների հոգեբանական վերականգնման, զորացրված զինծառայողների՝ քաղաքացիական պայմաններին հոգեբանական հարմարման ու վերամասնագիտացման ուղղությամբ տարվող աշխատանքները:

Հաշվի առնելով հանրապետության նյութական ու ֆինանսական ռեսուրսների սղությունը, զինվորական ծառայության առանձնահատկությունները, պետության անվտանգության ապահովման գործում ՋՈՒ-ի ունեցած կարևոր դերը՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է բարեփոխումների համատեքստում մշակել սոցիալական աշխատանքի ավելի արդյունավետ ձևեր ու մեթոդներ, որոնք հնարավորություն կտան պարզելու և ճիշտ կողմնորոշվելու զինծառայողին և նրա ընտանիքի անդամներին սոցիալական օգնություն ցույց տալու գործում՝ ապահովելով սոցիալական ոլորտին հատկացվող միջոցների ավելի նպատակային ու արդյունավետ օգտագործումը: Մասնավորապես՝ նպատակահարմար է վերլուծել Հայաստանի Հանրապետության սոցիալական բնագավառում տիրող իրավիճակը և հիմնական ջանքերն ուղղել հետևյալ խնդիրների լուծմանը.

1. տնտեսական ռեսուրսի բաշխման համապատասխանեցում զինծառայողների սոցիալական կարիքները լիարժեք կերպով հոգալու պահանջին,
2. սոցիալական կարիքները հոգալու մշակույթի արմատավորում,
3. բանակ–հասարակություն, զինվորական-քաղաքացիական հարաբերությունների ու մշակույթի պատշաճ մակարդակի ապահովում,
4. բանակում զինծառայողների սոցիալական պրոբլեմներով մասնագիտորեն զբաղվող սոցիոլոգների, հոգեբանների ու սոցիալական աշխատողների հաստատության ամրապնդում,
5. զինծառայողների, հատկապես՝ շարքային կազմի իրավական պատրաստության բավարար մակարդակի ապահովում:

Կարծում ենք, որ այս խնդիրների լուծումը էապես կնպաստի այնպիսի պայմանների ստեղծմանը, որոնց շնորհիվ զինծառայողն առավել ակտիվ և արդյունավետ կերպով կկատարի իր ծառայողական պարտականությունները՝ դրանով իսկ երաշխավորված կերպով ապահովելով պետության ու բնակչության անվտանգությունը:

УЛУЧШЕНИЕ СОЦИАЛЬНОГО СОСТОЯНИЯ ВОЕННОСЛУЖАЩИХ КАК ПРИОРИТЕТНАЯ ЗАДАЧА ВС РА

С. А. АРУТЮНЯН, полковник, Начальник управления социальной защиты военнослужащих МО РА

РЕЗЮМЕ

Социальная защищенность — это обеспечение конституционных прав и свобод человека, осуществляемое посредством социальной защиты.

Военнослужащие, обеспечивая военную безопасность государства, выполняют одну из ключевых социальных ролей в обществе и государстве. Исходя из этого, государство осуществляет комплекс экономических, социальных, правовых и организационных мероприятий по улучшению социального состояния военнослужащих, в том числе — путем предоставления дополнительных льгот.

Для обеспечения требуемого уровня социальной защищенности военнослужащих необходимо улучшение базовых социально-экономических и культурных показателей общества и государства, в частности — путем повышения уровня социальной культуры во взаимоотношениях в армии и в обществе в целом, совершенствования в армии института социальных работников и психологов, профессионально занимающихся решением социальных проблем военнослужащих и членов их семей, а также повышения уровня правовой подготовки военнослужащих всех категорий.

IMPROVEMENT OF SERVICEMEN'S SOCIAL STATE AS A PRIORITY TASK OF THE RA ARMED FORCES

S. A. HARUTYUNYAN, Colonel, Head of the Servicemen's Social Protection Board of the MOD, RA

SUMMARY

Social security is guaranteeing constitutional rights and freedoms of the individual being implemented by means of social protection.

Ensuring the state's military security servicemen perform one of the key social roles in the society and state. In these terms the state takes a complex of economic, social, legal and organizational measures on improving servicemen's social state, as well as by offering fringe benefits.

For ensuring the required level of servicemen's social security it is necessary to ameliorate the basic social-economic and cultural indexes of the society and state, particularly through increasing the level of social culture in the relationship in the Army and society on the whole, enhancing the institution of social workers and psychologists in the Army, who are professionally engaged in the solution of servicemen's and their family members' social problems, as well as increasing the level of legal training of servicemen of all the categories.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ա. Ջ. ԱՍԱՏՐՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու,
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

Սոցիալական ոլորտը պետության կենսագործունեության ռազմավարական ուղղություններից մեկն է, ուստի պետության սոցիալական զարգացման մոդելը անհրաժեշտ է մշակել պետության զարգացման ընդհանուր ռազմավարության հիման վրա և դրա շրջանակներում: Հաշվի առնելով ժամանակակից սոցիալական պետություններում կիրառվող մոդելների դրական փորձը և քաղաքական, տնտեսական, սոցիալական, իրավական ու մշակութային առումներով Հայաստանի Հանրապետության և այդ պետությունների մակրոչափանիշային համատեղելիությունը՝ կարող ենք ասել, որ նպատակահարմար է ընտրել այդ մոդելներից մեկը կամ դրանց համադրմամբ ստեղծել մի նոր մոդել*:

Միայն դրանից հետո հնարավոր է մշակել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի կայուն զարգացման ռազմավարությունը (այսուհետև՝ ռազմավարություն), որում սահմանված լինեն այդ ոլորտում պետության հեռանկարային քաղաքականության հիմնադրույթները:

Առհասարակ սոցիալական ոլորտում «ռազմավարություն» հասկացությունը մեկնաբանվում է տարբեր կերպ.

–որպես պետության զարգացման կոնկրետ պատմական ժամանակահատվածում նրա սոցիալական հիմնահարցերի համակարգի գլխավոր լուծում,

–որպես բնակչության կենսամակարդակի և կյանքի որակի ոլորտում հասարակության զարգացման երկարաժամկետ ու միջնաժամկետ նպատակների ամբողջություն,

---

* Սոցիալական պետության սկզբունքները սահմանված են մի շարք միջազգային փաստաթղթերում և իրավական ակտերում, որոնց մասնակցում է Հայաստանի Հանրապետությունը (դրանցից կարելի է նշել ՄԱԿ-ի 1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, ժամանակակից սոցիալական պետության ստեղծման համար սկզբունքային նշանակություն ունեցող՝ 1992 թ. ՄԱԿ-ի անդամ պետությունների Ռիո դե Ժանեյրոյի խորհրդաժողովում ընդունված «Կայուն զարգացման հայեցակարգը», Սոցիալական զարգացման մասին 1995 թ. կոպենհագենյան հռչակագիրն ու գործողությունների ծրագիրը, Աշխատանքի միջազգային կազմակերպության 1998 թ. Կոնվենցիան: Սոցիալական պետության կառուցումը որպես համազգային նպատակ նախատեսված է ՀՀ Սահմանադրությամբ, որի 1-ին հոդվածով Հայաստանի Հանրապետությունը հռչակվում է որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական, պետություն, իսկ ցանկացած ռազմավարություն պետք է նպաստի սահմանադրական կարգի պահպանմանն ու ամրապնդմանը:

–որպես «Ազգի քաղաքական, տնտեսական, հոգեբանական և ռազմական ուժերի զարգացման և օգտագործման արվեստ և գիտություն՝ խաղաղության և պատերազմի ժամանակ ազգային քաղաքականությանն առավելագույնս օգնելու համար»[1]:

Մեր կարծիքով՝ ռազմավարությունը *գործող օրենսդրության շրջանակներում գործադիր իշխանության մարմինների վարած սոցիալ-տնտեսական քաղաքականության համար անհրաժեշտ քաղաքական, տնտեսական, սոցիալական, կազմակերպական, կառավարչական, տեխնոլոգիական և հոգեբանական գործողությունների համակարգված օգտագործմանն ուղղված, հայեցակարգային առումով փոխկապված երկարաժամկետ որոշումների համալիրի մշակման ու իրականացման գիտություն և արվեստ է:*

Ռազմավարությունը պետք է նախանշի.

– մեր հասարակության հետագա սոցիալական զարգացման ուղղությունները և կոնկրետ նպատակները՝ կարևորելով հասարակական բոլոր խմբերի համար **սոցիալական պետությանը** բնորոշ պայմանների ապահովումը,

–նախանշված նպատակներին հասնելու եղանակները՝ կարևորելով ժողովրդավարական, իրավական պետությանը բնորոշ կառավարման, ինչպես նաև հասարակական համագործակցության մեխանիզմների ապահովումը,

– այն չափանիշները, որոնցով հնարավոր է գնահատել ինչպես նախանշված նպատակին հասնելու աստիճանը, այնպես էլ դրա համար անհրաժեշտ միջոցների ու եղանակների համապատասխանությունը ժողովրդավարական արժեքներին և իրավական պետությանը ներկայացվող պահանջներին:

Աշխարհում պատմականորեն ձևավորվել են ռազմավարության մշակման և իրականացման նկատմամբ երկու հիմնական մոտեցումներ:

Ամբողջատիրական հասարակություններում ռազմավարությունը մշակում ու իրականացնում է ղեկավարող և ուղղորդող կենտրոնը, որին նաև պատկանում է իշխանության իրականացման մենաշնորհը: Ընդսմին այս դեպքում կարող է անգամ ռազմավարություն չլինել, եթե սոցիալական հիմնախնդիրների լուծումը չի համարվում առաջնահերթություն:

Ժողովրդավարական (քաղաքացիական) հասարակություններում սոցիալական քաղաքականության սուբյեկտների և գաղափարախոսությունների բազմապիսությունը առաջ է բերում ռազմավարությունների բազմազանություն: Այս դեպքում յուրաքանչյուր ռազմավարություն դառնում է հասարակության զարգացման՝ տվյալ գաղափարախոսության հիման վրա մշակված ծրագրի բաղկացուցիչ մաս: Պետությունը՝ որպես սոցիալական քաղաքականության ամենակարևոր սուբյեկտներից մեկը, իր ռազմավարությունը մշակելիս պետք է հաշվի առնի սոցիալական քաղաքականության մյուս սուբյեկտների ռազմավարական ծրագրերը, ինչպես նաև պայմաններ ստեղծի դրանց արդյունավետ իրականացման համար:

[1] Տես *Г. Э. Слезингер.* Социология экономики (учебник). М., 2001, с. 71:

Անկախության ձեռքբերումից մինչ օրս ՀՀ աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացված քաղաքականությունը բազմաթիվ օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով այդպես էլ չի կողմնորոշվել դեպի հայտնի հայեցակարգային ուղղություններից որևէ մեկը, այլ էկլեկտիկ է և գլխավորապես միտված է մարտավարական բնույթի հրատապ խնդիրների լուծմանը՝ հատկապես անկախության առաջին տարիներին որպես միակ սոցիալական գերակայություն սահմանելով բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի հետագա վատթարացման կանխումը:

Այդ պայմաններում, օբյեկտիվորեն, ռազմավարական մակարդակով առաջնահերթ լուծման առարկա չդարձան համազգային նշանակություն ունեցող այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են աղաղակող սոցիալական անարդարության հաղթահարումը և նոր ժողովրդավարական գաղափարախոսությունների անցնելուն զուգընթաց՝ վեհ մարդասիրական արժեքների արմատավորումը:

Սոցիալական խնդիրները առաջադիմական քաղաքակրթական արժեքներին համահունչ և լիարժեքորեն լուծելու միակ գործիքը **սոցիալական պետությունն է,** որի գաղափարը ենթադրում է՝

– հասարակության կյանքի քաղաքական և իրավական կարգավորում մարդասիրության սկզբունքների հիման վրա,

– բնակչության համալիր սոցիալական պաշտպանության գործառույթների կատարում,

– քաղաքացիական հասարակության զարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում,

– հասարակական կյանքի բոլոր բնագավառներում որոշումների կայացման բազմասուբյեկտության ապահովում:

Թեև զարգացած հասարակությունում սոցիալական քաղաքականության կենտրոնական սուբյեկտը պետությունն է, բայց՝ ոչ միակը, քանի որ սոցիալական պաշտպանության մեծ թվով գործառույթներ տրվում են այլ սուբյեկտների:

Սոցիալական քաղաքականության **առաջնահերթ նպատակներն են.**

– ստեղծել սոցիալական պաշտպանվածության ժողովրդավարական համակարգ՝ մարդու և քաղաքացու սոցիալական իրավունքների ապահովման՝ պետության սահմանադրական պարտականության իրականացման միջոցով,

– ստեղծել պայմաններ քաղաքացիների հասարակայնորեն արդյունավետ և օգտակար տնտեսական ակտիվության աճման համար,

– ապահովել ժողովրդի բնապահպանական անվտանգությունը և առողջությունը՝ ժամանակակից պահանջների մակարդակով,

– արդիականացնել սոցիալական ենթակառուցվածքները, խթանել սոցիալական սպասարկման ոլորտների զարգացումը,

– բարելավել եկամուտների քաղաքականությունը, հասարակության բոլոր շերտերի համար առնվազն ապահովել նվազագույն սոցիալական ստանդարտներին համապատասխան եկամուտ ունենալու հնարավորությունը,

– ապահովել առաջընթաց բնակչության կենսագործունեության բոլոր ոլորտներում,

– ներդաշնակեցնել սոցիալական քաղաքականությունը համապետական, տարածքային և համայնքային մակարդակներում,

– զարգացման հեռանկար ապահովել հասարակության յուրաքանչյուր սոցիալական խմբի համար, և այլն:

Այս դրույթների հիման վրա մշակված ռազմավարությունը պետք է նպատակաուղղված լինի՝

ա) պետության փաստացի անկախության պահպանմանը,

բ) ամբողջատիրական համակարգին վերադարձի բացառմանը,

գ) պետության կառավարման դիկտատորական մեթոդների բացառմանը,

դ) բնակչության սոցիալական դեգրադացիայի կանխմանը:

Ըստ էության, սոցիալական պետությունը մի պետական-հասարակական մոդել է, որին բնորոշ են՝

- ժողովրդավարությունը,
- կենսագործունեության բոլոր ոլորտներում անձի ազատությունը (առանց մյուսների ազատության սահմանափակման),
- քաղաքական բազմակարծությունը, հրաժարումը բռնի, հեղափոխական ճանապարհով մասնավոր սեփականության, ազատ ձեռներեցության հաստատությունների կազմալուծման, «շահագործող դասակարգի» վերացման և հեղափոխական դիկտատուրայի հաստատման գաղափարներից,
- ազատ շուկայական օրենքների վրա հիմնվող տնտեսության ազատ գործառությունը, մասնավոր ձեռնարկատիրական գործունեության ազատությունը, պետության կարգավորիչ դերի շրջանակի հստակ որոշումը,
- սոցիալական քաղաքականության իրականացումը հասարակական հարստության վերաբաշխման պետական գործուն մեխանիզմների կիրառմամբ, սոցիալական ծրագրերի ընդլայնումը, ինչն ուղեկցվում է այդ նպատակով հատկացվող միջոցների անընդհատ ավելացմամբ:

Համընդհանուր բարեկեցության պետությունը՝ որպես սոցիալական պետության ժամանակակից մոդել

Ազատականության սոցիալական-ժողովրդավարական վերափոխման բնորոշ օրինակներ դարձան ԱՄՆ-ի, ինչպես նաև հետպատերազմյան Գերմանիայի ժողովրդավարական հասարակական-տնտեսական կառուցվածքները: Դրանց հիմնադիրները (Ջ. Մ. Քեյնս, Լ. Էրհարդ և ուրիշներ) այն անվանեցին ***սոցիալ-շուկայական տնտեսություն:*** Տվյալ հայեցակարգի առանցքային գաղափարը պետության շեշտված միջամտությունն է համընդհանուր բարեկեցության հաստատման և լրիվ զբաղվածության ապահովման նպատակով[2]:

Համընդհանուր բարեկեցության պետությունը *(welfare state)* պատասխա-

[2] Տես *С. Н. Смирнов, Т. Ю. Сидорина.* Социальная политика (учебное пособие для вузов). М., 2004, сс. 156–160; «Социальная политика (энциклопедия)». Под ред. *Н. А. Волгина и Т. С. Сулемовой.* М., 2006, с. 160:

նատվություն է կրում քաղաքացիների բարեկեցության համար, և այն չի կարող դրված լինել ո՛չ իր իսկ անհատի, ո՛չ էլ մասնավոր ընկերության կամ տեղական իշխանության վրա: Այդ պատասխանատվությունը պետք է պայմանավորված լինի հասարակության կայունությամբ և առաջընթաց զարգացման քաղաքականությամբ՝ հասարակության բոլոր անդամների համար ապահովելով հավասար պայմաններ, միևնույն ժամանակ՝ հոգատարությամբ միայն այն մարդկանց նկատմամբ, որոնք ի վիճակի չեն (անկարող են) բավարարելու իրենց նվազագույն սոցիալական պահանջմունքները: Պետությունը լուծում է սոցիալական ապահովման պրոբլեմները, հատկապես՝ առողջապահության, կրթության, սոցիալական բնակֆոնդի ձևավորման ու կարիքավորներին համապատասխան կացարաններով ապահովման, ինչպես նաև գործազրկության, անապահով ընտանիքներին տրամադրվող նպաստների, տարիքի և այլ պատճառներով աշխատունակությունը կամ եկամուտը կորցրած անձանց կենսաթոշակների տրամադրման, նվազագույն աշխատավարձի սահմանման և այլ ձևերով եկամուտների ապահովման միջոցով: Այս ծախսերի ֆինանսավորումը կատարվում է պետական սոցիալական պաշտպանության ծրագրերի շրջանակում՝ ռեսուրսների վերաբաշխման միջոցով:

Համընդհանուր բարեկեցության պետության առաջին ծրագիր համարվում է 1880-ական թվականներին Գերմանիայում Բիսմարկի ներդրած ազգային սոցիալական ապահովման համակարգը: Այժմ նման համակարգը արդիական հասարակությունների բնութագիրն է և հիմնվում է ինքնուրույնության, մրցունակության, շուկայական ու մասնավոր ձեռնարկչության սկզբունքների վրա: Սոցիալապես զարգացած պետություններում տեղի է ունենում «կազմակերպված» պետության կողմից կարգավորվող մենաշնորհային կապիտալիզմից դեպի դրա «ապակազմակերպված», ավելի մեծ մրցակցությամբ ու սակավ կարգավորվող ձևերը[3]:

Սոցիալական պաշտպանության հիմնարար սոցիալական պարտականություններից մեկը քաղաքացիական հասարակության ձևավորումն է, այսինքն՝ հասարակությունում և տնտեսությունում բազմաթիվ պետական և ոչ պետական սուբյեկտների ստեղծումը: Սա թելադրվում է սոցիալական պաշտպանության բնույթով, որի հիմնարար սկզբունքներն են.

- մարդու իրավունքների ու նրա հիմնարար ազատությունների գերակայությունը,
- հասարակության տարբեր խմբերի միջև համերաշխությունը,
- հասարակական համախմբերին (ընկերակցություններ, միություններ, ընկերություններ և այլն) արդյունավետ աջակցությունը (սուբսիդավորում), որը, ինչպես ցույց է տվել փորձը, քաղաքացիների հիմնախնդիրների լուծման ավելի արդյունավետ ձև է, քան դրանց լուծումը պետական մարմինների կողմից:

Այսօր ժողովրդավարական սոցիալական պետության հայեցակարգը փոխել է տնտեսության մեջ պետության դերի մասին ավանդականորեն ձևավորված

[3] Տես «Словарь терминов. Социология» (http://www.chem.msu.su/rus/teaching/sociology/dic.html):

պատկերացումները և պետության վրա դրել է գլխավորապես արբիտրաժային և քաղաքակրթական գործառույթներ, իսկ պետության և ձեռնարկչության նկատմամբ վերահսկողության գործառույթները դրել է քաղաքացիական հասարակության վրա:

Սոցիալական համերաշխության հիմքը փոխզիջումն է, այսինքն՝ սոցիալական պայմանագրի բոլոր մասնակիցների կարողությունը իրենց շահերի մի մասը զոհելու հանուն այդ նույն շահերի հիմնական մասի բանական իրացման և հանուն հասարակական բարիքի: Այն ներառում է՝ ժողովրդավարական և մարդասիրական արժեքների պաշտպանությունը, իրավունքների ու ազատությունների զարգացումը, տնտեսական աճը, բարենպաստ գործարար և բարոյական մթնոլորտը, բոլոր քաղաքացիների բարեկեցության մակարդակի բարձրացումը, սոցիալական արդարությունը, սոցիալական մասնակցությունը, մշակութային և հոգևոր զարգացումը:

Փոխզիջումը ենթադրում է համընդհանուր համաձայնության հասարակություն կառուցելու համար պետական իշխանության որոշ գործառույթների հանձնում հասարակական կազմակերպություններին և այդ գործընթացի շրջանակներում նրանց համագործակցություն, ինչպես նաև արհմիությունների և գործատուների կառուցողական գործակցությունը աշխատուժի առավելագույն զբաղվածության և աշխատանքի արդարացի վարձատրության բանական հաշվեկշիռ ապահովելու համար:

Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի կայուն զարգացման ռազմավարությունը մշակելիս հարկ է հաշվի առնել վերը նշված գաղափարաքաղաքական հիմքերը, որոնց առարկայական իրացումը հնարավորություն կտա ձևավորելու մեր պետության սոցիալական պաշտպանության մոդելը և հետևողականորեն ապահովելու դրա իրականացումը:

ИДЕОЛОГИЧЕСКИЕ И ПОЛИТИЧЕСКИЕ ОСНОВЫ СТРАТЕГИИ УСТОЙЧИВОГО РАЗВИТИЯ СФЕРЫ ТРУДА И СОЦИАЛЬНОЙ ЗАЩИТЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

А. ДЖ. АСАТРЯН, кандидат экономических наук,
заместитель Министра труда и социальных вопросов РА

РЕЗЮМЕ

Социальная сфера является одним из стратегических направлений жизнедеятельности государства, поэтому модель социального развития государства должна соответствовать общей стратегии развития государства. Учитывая положительный опыт используемых в развитых социальных государствах моделей, а также макропараметрическую сопоставимость РА с этими государствами по политическим, экономическим, социальным, правовым и культурным аспектам, целесообразно или выбрать одну из этих

моделей, или создать новую на основе осмысленного синтеза уже существующих моделей. Только после этого станет возможной разработка Стратегии устойчивого развития сферы труда и социальной защиты РА.

Поэтому необходимо отказаться от действующей эклектической, нацеленной на решение сиюминутных тактических задач системы социальной защиты и с учетом требований Конституции РА и международных актов, а также современных идеологических и политических разработок в данной сфере приступить к построению социального государства в целях становления РА как государства всеобщего благоденствия.

IDEOLOGICAL AND POLITICAL PRINCIPLES OF THE SUSTAINABLE DEVELOPMENT STRATEGY OF THE LABOR AND SOCIAL PROTECTION SPHERE OF THE REPUBLIC OF ARMENIA

A. J. ASATRYAN, Candidate of Economic Sciences,
Deputy Minister of the RA Labor and Social Affairs

SUMMARY

Social sphere is one of the strategic directions of the state's activity, therefore the model of the state's social development should conform with the state's general strategy of development. Taking into consideration the positive experience of the models being used in the developed social states, as well as the macroparametric comparability of the RA with these states in political, economic, social, legal and cultural aspects, it is expedient either to choose one of these models or to create a new one upon the basis of the sensible synthesis of the existing models. Only after that it will be possible to elaborate the sustainable development strategy of the RA labor and social protection sphere.

Thus, it is necessary to abandon the acting eclectic system of social protection, targeted at the solution of momentary tactical tasks, and in terms of the RA Constitution requirements and international acts, as well as contemporary ideological and political elaborations in the given sphere to start building a social state for the RA to become a welfare state.

ՌԱԶՄԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՈՐՈՇ ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ա. Կ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ Սոցիալական աշխատանքի և սոցիալական տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ, Տ. Ռ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, կապիտան, պաշտմական գիտությունների թեկնածու, «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի ավագ սպա-մասնագետ

1. Անվտանգությունը ռազմասոցիալական ոլորտում

ՀՀ պաշտպանական ոլորտում իրականացվող բարեփոխումները նպատակաուղղված են առաջին հերթին մեր բանակի մարտունակության մակարդակի համապատասխանեցմանը 21-րդ դարի մարտահրավերներին ու սպառնալիքներին[1]: Այդ առումով կարևորվում է «անձնակազմի պաշտոնեական առաջխաղացման, վարձատրման, սոցիալական ապահովման, զորացրման հստակ մեխանիզմների սահմանումը՝ միասնական և թափանցիկ համակարգի ստեղծմամբ»[2]:

Ինչպես տեսնում ենք, Զինված ուժերի առաքելության, նպատակների, խնդիրների և գործառույթների համատեքստում սոցիալական անվտանգության[3] ու ռազմական անվտանգության ապահովումները փոխպայմանավորված են և տրամախաչվում են ռազմասոցիալական ոլորտում: Ռազմասոցիալական ոլորտի անվտանգային խնդիրների լուծման տեսանկյունից առաջնային է զինված ուժերի մարտունակության մակարդակի բարձրացումը զինծառայողների բարեկեցության և սոցիալական արդարության ապահովման միջոցով: Բարեկեցության և սոցիալական արդարության ապահովման առաջնային նախադրյալը սոցիալական անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների չեզոքացումն է, ինչն էլ իր հերթին ռազմասոցիալական ոլորտում անվտանգության ապահովման հիմնարար նպատակ է:

Այդ նպատակի իրականացման ուղղությամբ պետության համակարգված գործունեությունը ամփոփվում է ռազմասոցիալական քաղաքականության ձևով: Այն պետության սոցիալական քաղաքականության ու ռազմական քաղաքակա-

---

[1] Տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 24–25:

[2] «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4, էջ 53:

[3] Սոցիալական անվտանգությունը ազգային անվտանգության այն բաղադրիչն է, որը բնութագրում է մարդու և քաղաքացու սոցիալական իրավունքների ու ազատությունների երաշխավորված ապահովումը (տես «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության նախագիծ. հիմնական տերմիններ և հասկացություններ»: «ՀԲ», 2006, հմ. 2):

նության հարաբերականորեն ինքնուրույն մասն է և միտված է պետության ռազմական անվտանգության ապահովման համակարգի սոցիալական մասի զարգացմանը, զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների նյութական և մշակութային պահանջմունքների բավարարմանը՝ դրա հիման վրա նրանց բարոյահոգեբանական ու ֆիզիոլոգիական ներուժի ապահովմամբ, ռազմական անվտանգության ապահովման համակարգի ներքին կայունության, կենսագործունեության ու սոցիալական անվտանգության պահպանմանը[4]:

2. Ռազմասոցիալական քաղաքականության միջազգային փորձը

Գրեթե բոլոր պետություններում մեծ ուշադրություն է դարձվում զինծառայողների սոցիալական պաշտպանվածության խնդրի և երիտասարդության մեջ զինվորական ծառայության նկատմամբ շահագրգռվածության արմատավորման վրա: Նման մոտեցումը պայմանավորված է մեր դարաշրջանում զինված ուժերը լավ պատրաստված և որակյալ կադրերով համալրելու դժվարություններով:

Ըստ մի շարք մասնագետների՝ իրական սոցիալական երաշխիքներ չլինելն զգալիորեն նվազեցնում է ոչ միայն զինծառայության համբավն ու վարկը, այլև ուղղակիորեն բանակից վանում է բանիմաց, կրթված մասնագետներին: Այս երևույթը ժամանակակից տեխնոլոգիական դարաշրջանում բացասաբար է ազդում զինված ուժերի անձնակազմի բարոյահոգեբանական վիճակի և զորքերի մարտունակության վրա: Դրանով է պայմանավորված մի շարք պետություններում զինծառայողների սոցիալական կարգավիճակի բարձրացման ու սոցիալական պաշտպանվածության ծրագրերի մշակումն ու ընդունումը[5]: Այդ ծրագրերը հիմնականում իրականացվում են ապահովագրական և վարկավորման մեխանիզմների ներդրման ու կիրառման միջոցով:

Պետությունը զինծառայողի ընտանիքին «անվճար» սոցիալական ծառայություններ մատուցելու փոխարեն (ինչպես ցույց է տվել խորհրդային փորձը, դա միջոցների անարդյունավետ կառավարման ձև է) առաջարկում է ապահովագրական մեխանիզմ և մուծում ապահովագրական վճարները: Այդ մեխանիզմի շնորհիվ զինծառայողը կարող է ստանալ որակյալ վճարովի բժշկական կամ այլ բնույթի սոցիալական ծառայություններ, իսկ պետությունը զերծ է մնում բանակում սոցիալական ապահովման համակարգային մեծ կառույցներ պահելու անհրաժեշտությունից: Այսպիսով՝ օպտիմալացվում են պետության ծախսերը, զարգանում է ապահովագրական շուկան, բարձրանում զինծառայողի և նրա ընտանիքի սոցիալական պաշտպանվածության մակարդակը, հետևաբար նաև ռազմական գործի վարկը: Այս համակարգի կիրառմամբ շեշտակի կրճատվում են չարաշահումների հնարավորությունները, ինչի շնորհիվ տնտեսվում են հսկայական միջոցներ:

Աշխարհում լայնորեն տարածված սոցիալական ապահովման ձևերից է

[4] Տես *В. М. Корякин.* Военно-социальная политика: к определению понятия. «Военная мысль», 2003, № 2:

[5] Տես, օրինակ, *В. Горадзе.* О социальной защищенности военнослужащих Латвии и Эстонии. М., «Зарубежное военное обозрение» («ЗВО»), 2004, № 12:

զինծառայողին բնակարան հատկացնելու երևույթը: Պետությունը ֆինանսական հաստատություններից վերցնում է համապատասխան երկարաժամկետ հիպոտեկային վարկեր, վճարում է շինարարական ընկերությանը, իսկ վերջինս կառուցում է բնակարաններ[6]: Պետությունը որոշակի ժամկետով (օրինակ՝ տասը տարով) այդ բնակարանը հանձնում է զինծառայողին՝ օգտագործման իրավունքով, իսկ այդ ժամկետը լրանալուց հետո, որպես նրա ծառայությունների գնահատում, հանձնում է զինծառայողին սեփականության իրավունքով:

ԱՄՆ-ը հայրենիքի նկատմամբ իրենց պարտքը կատարած զինծառայողներին ու զոհվածների ընտանիքներին օգնելու համար օրենքներ է ընդունել աշխատանքի տեղավորման (մասնավորապես՝ պետական մարմիններում) ու կրթության հարցերում նրանց առաջնային իրավունքների վերաբերյալ: Դրանցից կարելի է առանձնացնել «Վետերանների գերակա իրավունքների մասին» (1944 թ.), «Վետերաններին աշխատանքի տեղավորման ու կրթության հարցերում օգնության վերաբերյալ» (1976 թ.), «Քաղաքացիական ծառայության վերափոխման մասին» (1978 թ.) օրենքները[7]:

Իսրայելում ընդհանրապես բացառվում է, որ բանակում չծառայած որևէ քաղաքացի զբաղեցնի պետական պաշտոն: Ավելին. այդ պետության գրեթե բոլոր ղեկավարները բանակում աչքի ընկած նախկին բարձրաստիճան զինվորականներ են: Նման ճանապարհով այդ երկրում բարձրացվում են բանակի վարկն ու կշիռը, ինչպես նաև հնարավորություն է ստեղծվում զինծառայողին քաղաքացիական հասարակության մեջ սահուն կերպով ինտեգրելու համար: Դա նաև նպաստում է հասարակություն–բանակ սերտ հոգևոր կապի ամրապնդմանը:

Այսպիսով՝ կարելի է պնդել, որ ժամանակակից պահանջներին համապատասխանող ռազմասոցիալական քաղաքականությունը շատ կարևոր է պետության անկախության, պետության ու ժողովրդի պաշտպանվածության և բնակչության բարեկեցության ապահովման գործում:

3. Սոցիալական աշխատանքը և զինծառայողների, նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանությունը

Ռազմասոցիալական քաղաքականությունը տարբեր իրավական ակտերի միջոցով նախատեսում է զինծառայողներին ու նրանց ընտանիքների անդամներին որոշակի բարիքների և ծառայությունների տրամադրում՝ որպես ծառայության ընթացքում կրած զրկանքների և կորուստների փոխհատուցում: Սակայն ռազմասոցիալական քաղաքականությունը կարող է նախատեսել զինծառայողի և նրա ընտանիքի անդամների սոցիալական պաշտպանության իրավունքներ ու երաշխիքներ միայն որոշակի դեպքերի համար, ինչպես, օրինակ, առողջության

[6] Օրինակ՝ Ֆրանսիայում 2002 թ. զինծառայողներին բնակարաններ տրամադրելու գործին աջակցելու նպատակով հատկացվել է 202 մլն եվրո (տես *А. Долматов.* Финансово-экономическое обеспечение военнослужащих Франции. «ЗВО», 2004, № 4):

[7] Տես *А. Трусцов, С. Шатров.* Финансово-экономическое обеспечение и социальная защита американских военнослужащих. «ЗВО», 2002, № 12:

կորստի, հաշմանդամության, բնակարանի կարիքի, աշխատանքով ապահովման, կրթությանը օժանդակության, անձի սոցիալական ու հոգեբանական վերականգնման և այլ նման խնդիրների պարագայում: Սակայն պետք է նկատի ունենալ, որ յուրաքանչյուր զինծառայողի ու նրա ընտանիքի անհատական և միջավայրային առանձնահատկությունները կարող են ոչ միայն առանձնահատուկ դարձնել նրանց սոցիալական խնդիրները, այլև ծնել յուրահատուկ ռիսկային իրավիճակներ: Նման դեպքերում պահանջվում է անհատական մոտեցում, որի միջոցով ցուցաբերվող սոցիալական աջակցությունը կարող է հասցեական լինել և լիարժեք կերպով ծառայել նպատակին: Համաշխարհային պրակտիկայում այդպիսի դեպքերում կիրառվում է «սոցիալական աշխատանք» մասնագիտությունը, որը մարդկանց սոցիալական խնդիրները դիտում է ֆիզիկական ու սոցիալական միջավայրերի համատեքստում և նրանց սոցիալական պաշտպանությունը կազմակերպելիս աշխատում է հաշվի առնել յուրաքանչյուր դեպքի առանձնահատկությունները: Շահառուների կյանքին (անհատ, խումբ, համայնք, հասարակություն) սոցիալական աշխատողի միջամտությունը նպաստում է նրանց ֆունկցիոնալ հնարավորությունների մեծացմանը: Միջամտությունը կատարվում է իրազեկման, խորհրդատվության, ուսուցման, միջնորդության և այլ ձևերով: Զինված ուժերում սոցիալական աշխատանքն առաջին անգամ կիրառվել է 1943 թվականին ԱՄՆ-ում: Այսօր ԱՄՆ-ի բանակը օգտվում է մոտավորապես 1500 սոցիալական աշխատողների ծառայություններից: Վերջիններս զբաղվում են զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների առողջության պահպանման, բնակարանային, աշխատանքի տեղավորման, սոցիալ-հոգեբանական վերականգնման, համայնքի մեջ ինտեգրման և այլ նմանատիպ խնդիրների լուծմամբ: Նրանք նաև փորձում են ազդել պետության վարած ռազմասոցիալական քաղաքականության վրա և այն ավելի մեծ չափով համապատասխանեցնել զինծառայողների ու նրանց ընտանիքների կարիքներին[8]:

ՀՀ մի շարք սոցիալական հաստատություններում արդեն ներդրվել է «սոցիալական աշխատանք» մասնագիտությունը: Բանակը թերևս այն եզակի հաստատություններից է, որտեղ դեռ չկան սոցիալական աշխատողներ: Մասնագետներ չլինելու պատճառով զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների շատ սոցիալական խնդիրներ դեռևս մնում են չլուծված: Այդ խնդիրներից են՝ նորակոչիկների հարմարումը զինվորական միջավայրին և զորացրումից հետո վերաինտեգրումը քաղաքացիական կյանքին, զինծառայողների ու նրանց ընտանիքների անդամների առողջության պահպանումը, միջանձնային ու միջխմբային բախումները, բնակարանի, աշխատանքի ու հանգստի, սոցիալ-հոգեբանական վերականգնման հետ կապված խնդիրները, իրավունքների պաշտպանությունը և այլն: Զորամասում սոցիալական աշխատողի մշտական ներկայությունը հնարավորություն է տալիս զինծառայողին և նրա ընտանիքի անդամներին անհրաժեշտ սոցիալական աջակցություն ցուցաբերելու բոլոր այն դեպքերում, երբ

[8] Տես «Encyclopedia of Social Work», 19th Edition. Washington, 1995, PP. 1726–1735:

պաշտպանության ընդհանուր ու ստանդարտ արարողակարգերը բավարար չեն դժվարությունները հաղթահարելու համար:

Սոցիալական աշխատողի մուտքը ՀՀ Զինված ուժեր կարող է տեղի ունենալ աստիճանաբար: Սկզբում կարելի է սոցիալական աշխատանքի կատարման լիազորություններ վերապահել այն պաշտոնատար անձանց, որոնց գործառույթներն արդեն պարունակում են սոցիալական աշխատանքի տարրեր՝ նախապես վերապատրաստելով նրանց: Հաջորդ քայլը պետք է լինի Զինված ուժերում սոցիալական աշխատանքի հաստատության ձևավորումը և բանակային սոցիալական աշխատողի կարգավիճակի իրավական ամրագրումը, ինչպես նաև բանակի կարիքների հաշվառմամբ սոցիալական աշխատողների պատրաստման կրթական ծրագրերի փոփոխումը:

Այսպիսով՝ հայրենիքին անմնացորդ նվիրված, իր ամբողջ էությամբ երկրի պաշտպանությանը տրված զինծառայող ունենալու համար պետությունը պետք է հնարավորինս ազատի նրան սոցիալ-տնտեսական պրոբլեմների բեռից, բարձրացնի նրա սոցիալական կարգավիճակն ու պաշտպանվածության աստիճանը: Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ դա է ճիշտ ուղին, ուստի և, մեր կարծիքով, դա պետք է լինի ռազմասոցիալական ոլորտում իրականացվող պաշտպանական բարեփոխումների գերակա նպատակներից մեկը:

НЕКОТОРЫЕ ТЕОРЕТИЧЕСКИЕ И ПРАКТИЧЕСКИЕ ВОПРОСЫ ОБЕСПЕЧЕНИЯ БЕЗОПАСНОСТИ РА В ВОЕННО-СОЦИАЛЬНОЙ СФЕРЕ

А. К. ХАЧАТРЯН, кандидат философских наук, доцент, заведующий кафедрой Социальной работы и социальных технологий ЕГУ,
Т. Р. МАРТИРОСЯН, капитан, кандидат исторических наук, старший офицер-специалист военно-научного журнала «Айкакан банак»

РЕЗЮМЕ

Оборонные реформы в РА нацелены, в первую очередь, на обеспечение высокого уровня боеспособности ВС, одним из составляющих которой является социальная защищенность военнослужащих, лиц, уволенных в запас, и членов их семей.

Многие государства с развитой системой социальной защиты (например, США, Израиль) в своей военно-социальной политике вместо устаревших методов обеспечения социальной защиты военнослужащих применяют возможности страховой системы и ипотечного кредитования.

В ходе оборонных реформ в РА целесообразно модернизировать военно-социальную политику РА с учетом передового мирового опыта, в том числе внедрить недостающее звено этой политики — систему социальной работы в армии.

SOME THEORETICAL AND PRACTICAL ISSUES OF ENSURING THE RA SECURITY IN THE MILITARY-SOCIAL SPHERE

A. K. KHACHATRYAN, Candidate of Philosophy, Docent,
Head of the Chair of Social Work and Social Technologies, YSU,
T. R. MARTIROSYAN, Captain, Candidate of Historical Sciences,
Senior Officer-Specialist of the Defense-Academic Journal «Haikakan Banak»

SUMMARY

The RA defense reforms are targeted firstly at ensuring the high level of fighting efficiency of the Armed Forces, one of the constituents of which is the social security of servicemen, persons transfered to the reserve, and their family members.

Many states with the developed system of social protection (for example, USA, Israel) use the possibilities of the insurance system and mortgage lending in their military-social policy instead of the outdated methods of ensuring servicemen's social protection.

In the course of the RA defense reforms it is expedient to modernize the RA military-social policy taking into account the leading world experience, as well as to introduce the missing link of that policy−the system of social work in the Army.

ՉԻՆՎՈՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ՝ ՈՐՊԵՍ ՉԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲԱՐՈՅԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ

Ա. Ն. ՍԱՐԳՍՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ Զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչության պետի տեղակալ

Զինվորական-սոցիալական աշխատանքը որպես զինվորական կառավարման մարմինների գործունեության ոլորտ ձևավորվել է 20-րդ դարի 90-ական թվականներին: «Զինվորական-սոցիալական աշխատանքի գլխավոր նպատակն է ստեղծել նորմալ սոցիալական պայմաններ, որոնցում զինծառայողները, քաղաքացիական անձնակազմը կկարողանան արդյունավետ կերպով կատարել իրենց պարտականությունները»[1]: ՈՒստի դա իրավական ակտերով սահմանված այն քաղաքական, իրավական, տնտեսական, դաստիարակչական, կրթական, հոգեբանական և այլ միջոցառումների համակարգն է, որոնք ուղղված են զինծառայողների, զինվորական ծառայությունից արձակված անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալ-տնտեսական իրավունքների ու երաշխիքների իրականացման, նրանց սոցիալական պաշտպանության ապահովմանը: Զինվորական-սոցիալական աշխատանքը ՋՈՒ-ի բարոյահոգեբանական ապահովման համակարգի կարևոր բաղադրիչներից մեկն է[2], քանի որ զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական խնդիրների լուծումը նրանց արժանապատիվ կեցության ապահովման էական պայմանն է, որն էլ իր հերթին հիմքային նախադրյալ է կյանքի համար հավանական մեծ վտանգ պարունակող զինվորական ծառայության բարոյական և հոգեբանական շարժառիթավորման:

Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական պաշտպանության համակարգի իրավական հիմքը ՀՀ Սահմանադրությունն է, որի դրույթներից բխում է, որ մարդու արժանապատիվ կյանքն ու ազատ զարգացումն ապահովող պայմանների ստեղծումը միայն քաղաքացու անձնական գործը չէ, այլ համապետական խնդիր է:

Զինվորական-սոցիալական աշխատանքը իրականացվում է ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմի ժամանակ: Այն կատարում են պետական իշխանության ու զինվորական կառավարման մարմինները, հրամանատարները, զինված ուժերի սոցիալական կառույցները, հասարակական կազմակերպությունները:

Զինծառայողը քաղաքացիական հասարակության լիարժեք անդամ է և ունի

---

[1] «Настольная книга войскового психолога, офицера по организации общественно-государственной подготовки и военно-социальной работы». М., 2004, с. 235.

[2] Տես «ՀՀ Պաշտպանության նախարարի 2004 թ. սեպտեմբերի 17-ի հմ. 907 հրամանը»:

բոլորին հավասար իրավունքներ: Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան սահմանափակվում են նրա միայն այն իրավունքները, որոնց իրացումը կարող է սպառնալ պետության անվտանգությանը: Փոխարենը՝ զինծառայողների վրա դրված հատուկ պարտականությունների հաշվառմամբ, օրենքով սահմանված կարգով նրանց վերապահվում են լրացուցիչ սոցիալական իրավունքներ ու երաշխիքներ:

Այսպիսով՝ զինվորական-սոցիալական աշխատանքը տարածվում է զինծառայողների կենսագործունեության բոլոր ոլորտների վրա և ներառում է.

– զինծառայողների գործառութային պարտականությունների կատարման համար անհրաժեշտ սոցիալ-տնտեսական և իրավական պայմանների ստեղծումը,

– զինծառայողների, զինծառայությունից արձակված անձանց և նրանց ընտանիքների անդամների սոցիալ-տնտեսական խնդիրների լուծումը,

– բոլոր կատեգորիաների զինծառայողների իրավական դաստիարակությունը:

Զինվորական-սոցիալական աշխատանքի կատարումն անհնար է առանց զինվորական կոլեկտիվներում և զորամասերի տեղակայման վայրերում սոցիալական իրավիճակի ուսումնասիրության և դրա զարգացման կանխատեսման, ինչպես նաև զինծառայողների սոցիալական պաշտպանվածության ռեալ մակարդակի որոշման: Զինվորական կառավարման մարմինները պետք է մշտապես ունենան օբյեկտիվ տեղեկություններ զինվորական կոլեկտիվի սոցիալական խնդիրների մասին: Դրանք հարկավոր են ձեռնարկվող միջոցառումների արդյունավետությունը գնահատելու, սոցիալական լարվածության աճմանը նպաստող գործոնները վաղ փուլերում բացահայտելու և հնարավորինս չեզոքացնելու համար: Ավելին. ռեալ սոցիալական վիճակի ուսումնասիրությունը ոլորտի կատարելագործման հիմքն է: Փորձը ցույց է տալիս, որ սոցիալական խնդիրների մեծ մասը կարող է լուծվել անմիջապես տեղում՝ զորամասում, ստորաբաժանումում, անհրաժեշտ է միայն ժամանակին բացահայտել դրանք և ճիշտ գնահատել ստեղծված իրավիճակը:

Այս առումով ՀՀ ՋՈՒ-ի արդիական խնդիրներից է սոցիալական իրավիճակի մասին տվյալների բազայի ստեղծումը: Ընդ որում, նպատակահարմար է ստեղծել տվյալների երկու բազա, որոնցում, համապատասխանաբար, ներառված լինեն՝

1. զինծառայողների սոցիալական պաշտպանվածության ռեալ մակարդակը բնութագրող տվյալները և այդ ոլորտում առկա հիմնախնդիրները,

2. զինծառայողների, զինծառայությունից արձակված անձանց ու նրանց ընտանիքների անդամների սոցիալական վերականգնմամբ և ինտեգրմամբ, սոցիալական պաշտպանության այլ խնդիրներով զբաղվող կազմակերպությունների վերաբերյալ տվյալները:

Զինվորական-սոցիալական աշխատանքի կարևոր խնդիրներից է համագործակցությունը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ:

Զինծառայողների սոցիալական պաշտպանության գործում մեծ է նաև հասարակական կազմակերպությունների դերը, հատկապես՝ տեղեկատվության և վերահսկողության առումներով:

Զինվորական-սոցիալական աշխատանքում բացառիկ կարևորություն ունի զինծառայողների իրավական դաստիարակությունը: Իրավական դաստիարակությունը նպատակաուղղված է մարդկանց մեջ խոր և հաստատուն իրավական գիտելիքների, բարձր իրավական կուլտուրայի, սովորույթների և հմտությունների, բարձր մակարդակի իրավագիտակցության և օրինապահ վարքի անհրաժեշտության գիտակցման ձևավորմանը:

Զինվորական-սոցիալական աշխատանքի շրջանակներում իրավական դաստիարակության անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ զինծառայողների սոցիալական պաշտպանության ոլորտում գլխավոր և առավել բարդ խնդիրը ոչ այնքան նրանց իրավունքների օրենսդրական ապահովումն է, որքան իրավական ակտերի համապատասխան ընկալումը՝ կախված զինծառայողների իրավական պատրաստության, իրավական գիտակցության և իրավական կուլտուրայի մակարդակից: Հարկ է նշել, որ անձնակազմի իրավական իրազեկման արդյունավետությունն էապես մեծանում է այն դեպքում, երբ այդ աշխատանքում ներգրավվում են իրավաբանական կրթություն ունեցող զինվորականներ, իրավապաշտպան մարմինների աշխատողներ: Զինծառայողներին և համակարգում ընդգրկված քաղաքացիական անձանց՝ իրենց իրավունքների, պարտականությունների վերաբերյալ անհատական կամ խմբային իրավաբանական խորհրդատվություն տրամադրելու նպատակով անհրաժեշտ է զորամասերում ստեղծել տեղեկատվական-խորհրդատվական կետեր: ՌԴ Զինված ուժերում այդ պրակտիկան արդեն գործում է: Պատերազմական պայմաններում տեղեկատվական-խորհրդատվական կետերի հաստիքացուցակում նախատեսված է 3 հաստիքային միավոր. կետի պետ (սպա), խորհրդատու (սպա), մասնագետ (քաղաքա- ցիական անձ): Տեղեկատվական-խորհրդատվական կետի ընդհանուր ղեկավարումը դրված է զորամասի հրամանատարի դաստիարակչական աշխատանքի գծով տեղակալի վրա[3]: Նմանատիպ կետեր կան նաև տարածքային զինկոմիսարիատներում՝ զորացրվածներին, վետերաններին սպասարկելու նպատակով:

Որպես գործունեության տեսակ՝ զինվորական-սոցիալական աշխատանքը բաղկացած է երեք փուլից.

1. զինվորական-սոցիալական աշխատանքի նպատակների և առաջադրանքների հստակ ձևակերպման փուլ: Զինվորական կառավարման մարմինների գործունեության այդ փուլն սկսվում է զինվորական-սոցիալական աշխատանքի ղեկավար փաստաթղթերի, ինչպես նաև զինծառայողների սոցիալական պաշտպանության նորմատիվ-իրավական ակտերի ուսումնասիրությամբ: Բացի այդ,

[3] Տես «Настольная книга войскового психолога, офицера по организации общественно-государственной подготовки и военно-социальной работы». М., 2004, с. 244:

ուսումնասիրվում են նաև զորամասի ռեալ իրավիճակը, զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների, զորամասի տեղակայման շրջանի բնակչության սոցիալական պաշտպանվածության առկա մակարդակը, հիմնախնդիրները: Գնահատվում են նաև զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների խնդիրները լուծելու համար տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ու հիմնարկների հնարավորությունները,

2. զինվորական-սոցիալական աշխատանքի ոլորտի մասնագիտական գիտելիքների արմատավորման և հմտությունների ձևավորման փուլ: Այս փուլում կատարվում են հրահանգչամեթոդական աշխատանքներ, ուսումնասիրվում է զինվորական-սոցիալական աշխատանքի առաջավոր փորձը (ներառյալ՝ միջազգային), ստեղծվում է ուսումնանյութական բազա, զինվորական-սոցիալական աշխատանքի կազմակերպիչներն ապահովվում են անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտերով, տեղեկատվական ու մեթոդական գրականությամբ,

3. զինվորական-սոցիալական աշխատանքի պլանավորման և կատարման փուլ: Այս փուլում պլանավորվում են զինվորական-սոցիալական աշխատանքի հեռանկարային և մեկամսյա կտրվածքով ընթացիկ համալիր միջոցառումները՝ կորպուսի, բրիգադի, գնդի մակարդակով: Գումարտակում (դիվիզիոնում) հեռանկարային և մեկամսյա զինվորական-սոցիալական աշխատանքը պլանավորվում է առանձին միջոցառումների ձևով: Վաշտերում կազմակերպվում են զինծառայողների, համակարգում ընդգրկված քաղաքացիական անձանց իրավունքների, պարտականությունների և արտոնությունների գծով պարապմունքներ: Տվյալ փուլը ներառում է նաև այս կամ այն միջոցառման կատարողների ընտրություն և ժամկետների սահմանում: Այս փուլի անբաժանելի մասն է կազմում նաև աշխատանքի արդյունքների նկատմամբ վերահսկողությունը:

Պատերազմի ժամանակ զինվորական սոցիալական աշխատանքն ունի որոշակի առանձնահատկություններ: Բացի զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալ-տնտեսական իրավունքներն ու երաշխիքներն ապահովելուց, այն ներառում է անհրաժեշտ սոցիալ-հոգեբանական օգնություն նաև մարտական գործողությունների գոտիներում խաղաղ բնակչության, ստեսային իրավիճակներում հայտնված, վիրավոր և հոգեխոցված զինծառայողներին, ինչպես նաև հակառակորդի՝ գերի ընկած զինծառայողներին և բնակչությանը:

ВОЕННО-СОЦИАЛЬНАЯ РАБОТА КАК СОСТАВЛЯЮЩАЯ МОРАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ ВООРУЖЕННЫХ СИЛ

А. Н. САРГСЯН, полковник, Заместитель начальника управления социальной защиты военнослужащих МО РА

РЕЗЮМЕ

Главная цель военно-социальной работы — создание нормальных социальных условий, при которых военнослужащие и гражданский персонал смогут эффективно выполнять свои обязанности. Военно-социальная работа — это система определенных правовыми актами политических, правовых, экономических, образовательных, воспитательных, психологических и других мероприятий, осуществляемых в целях обеспечения реализации социально-экономических прав и гарантий военнослужащих и лиц, уволенных с военной службы, членов их семей, а также их социальной защиты.

Военно-социальная работа является важным компонентом системы морально-психилогической работы, поскольку решение социальных проблем военнослужащих и членов их семей является существенным условием обеспечения их достойной жизни, что в свою очередь является базовой предпосылкой для моральной и психологической мотивации воинской службы и правомерного поведения.

Военно-социальная работа проводится с учетом особенностей как в мирное, так и в военное время в три этапа — формулировка целей и задач, укоренение профессиональных знаний и навыков, планирование и выполнение.

MILITARY-SOCIAL WORK AS A CONSTITUENT OF MORAL-PSYCHOLOGICAL SECURITY OF THE ARMED FORCES

A. N. SARGSYAN, Colonel, Deputy Head of the Servicemen's Social Protection Board of the MOD, RA

SUMMARY

The ultimate goal of military-social work is the creation of normal social conditions under which servicemen and civil personnel will be able to efficiently perform their duties. Military-social work is a system of political, legal, economic, educational, training, psychological and other measures determined by legal acts and being implemented to ensure the fulfilment of social-economic rights and guarantees of servicemen and persons discharged from military service, their family members, as well as their social protection.

Military-social work is an important constituent of the moral-psychological work system as the solution of social problems of servicemen and their family members is an essential condition to provide life of dignity, which in its turn is a basic premise for moral and psychological motivation of military service and good behavior.

Military-social work is carried out taking into account the peculiarities both in peace and wartime in three stages — statement of goals and problems, consolidation of professional knowledge and skills, planning and implementation.

ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ



ՀՀ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

Ա. Ս. ՆԱԶԱՐՅԱՆ, ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ

Ժողովրդավարական իրավական պետության ռազմական անվտանգության համակարգում կարևոր դերակատարություն ունի զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության ապահովումը:

ՀՀ Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների ներդրման ու զարգացման անհրաժեշտությունն ամրագրված է ՀՀ գործող մի շարք իրավական ակտերում:

Այսպես. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 8.2-րդ հոդվածը սահմանում է, որ «ՀՀ Զինված ուժերն ապահովում են ՀՀ անվտանգությունը, պաշտպանությունը և տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը: Զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո»[1]:

Սահմանադրաիրավական այս նորմի շրջանակներում «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածը սահմանում է. «Հայաստանի Հանրապետության պաշտպանությունը կազմակերպվում և իրականացվում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, հասարակության և քաղաքացիների ընդգրկվածության, օրինականության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հարգման, Զինված ուժերի գործունեության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքների հիման վրա»[2]:

ՀՀ Նախագահի 2007 թվականի փետրվարի 7-ի «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» հմ. ՆՀ-37-Ն հրամանագրի 2-րդ բաժնի 2-րդ ենթաբաժնում ամրագրված է, որ Հայաստանի Հանրապետությունը հետևողական է Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության և ռազմական բյուջեի պլանավորման հիմնարար ժողովրդավարական սկզբունքների ապահովման խնդրում[3]:

Ըստ ՀՀ «Ռազմական դոկտրինի» 46-րդ կետի՝ «ռազմական անվտանգության համակարգի բարեփոխումների նպատակը քաղաքացիական վերահսկման

[1] «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն»: Ե., 2005:

[2] «Պաշտպանության մասին» ՀՀ 2008 թ. նոյեմբերի 27-ի հմ. ՀՕ-198-Ն օրենքը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2008 թ., հմ. 73 (663)):

[3] Տես Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թ. փետրվարի 7-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատելու մասին» հմ. ՆՀ-37-Ն հրամանագիրը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2007 թ., հմ. 11 (535)):

և պաշտպանական պլանավորման ու կառավարման ժողովրդավարական հիմնարար սկզբունքների վրա հիմնված, արդիական ռազմական պահանջներին համապատասխանող, առավել ճկուն և ժամանակակից ռազմական անվտանգության համակարգի ստեղծումն է, որն ի զորու կլինի արդյունավետորեն ապահովելու ՀՀ ռազմական անվտանգությունը, պաշտպանելու ազգային անվտանգության հիմնարար արժեքներն ու ապահովելու ՀՀ միջազգային պարտավորությունների կատարումը»[4]:

Նույն փաստաթղթի 51-րդ կետի I ենթակետով ռազմական անվտանգության համակարգի ղեկավարման ոլորտի բարեփոխումների շրջանակներում նախատեսվում է նաև ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում քաղաքացիական ծառայության՝ որպես ՀՀ Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության բաղկացուցիչ մասի ներդրումը:

Բացի այդ, Հայաստան–ՆԱՏՕ «Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի» շրջանակներում Հայաստանի Հանրապետությունը պարտավորվել է զարգացնել և ամրապնդել Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության մեխանիզմները, նպաստել պաշտպանական և անվտանգային քաղաքականության մշակման գործում քաղաքացիական մասնագետների և հասարակական շրջանների ներգրավմանը:

Վերը նշվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների ներդրումն ու դրանց զարգացումը որդեգրվել է որպես ՀՀ պաշտպանական քաղաքականության հիմնական և կարևոր ուղղություններից մեկը:

ՀՀ Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության համակարգում առկա մեխանիզմների վերլուծությունից առաջ անհրաժեշտ է պարզաբանել զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության բովանդակությունը:

Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողությունը, ըստ էության, ոչ զինվորական բնույթի հսկողություն է, որը նպատակաուղղված է համապատասխան պետական զինվորական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից գործող զինվորական օրենսդրության անշեղ իրականացման ապահովմանը[5]:

Այլ կերպ ասած՝ Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողությունը ՀՀ Սահմանադրության և օրենքներին համապատասխան իրավական, կազմակերպական և տեղեկատվական միջոցառում-

[4] Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թ. դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը հաստատելու մասին» հմ. ՆՀ-308-Ն հրամանագիրը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2008 թ., հմ. 1 (591)):

[5] Տես *В. М. Анисимов.* Гражданский контроль за военными структурами (http://www.polistudies.ru/N2004fulltext/1995/4114.htm):

ների մի ամբողջություն է, որն ուղղված է զինվորական կառավարման մարմինների գործունեության օրինականության ու թափանցիկության ապահովմանը:

Հաճախ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողությունը նույնացվում է պետական-քաղաքական վերահսկողության հետ, որն իրականացնում են քաղաքացիական պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք (Նախագահ, վարչապետ, ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, պաշտպանության նախարար և այլն): Իրականում դա ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության տարրերից մեկն է: Նշված հանգամանքը պայմանավորված է նրանով, որ, բացի պետական մարմիններից, ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողություն իրականացնում են նաև հասարակական, իրավապաշտպան կազմակերպությունները, զանգվածային լրատվության միջոցները և հենց իրենք՝ քաղաքացիները[6]: Հետևաբար, հռչակելով ՀՀ Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության իրականացման կարևորությունը, չպետք է սահմանափակվել միայն պետական պաշտոններում քաղաքացիական պետական պաշտոնյաների նշանակմամբ: Անհրաժեշտ են համալիր միջոցառումներ, որոնք ուղղված լինեն ոչ միայն ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության առանձին տարրերի, այլև դրա համալիր մեխանիզմների ներդրմանը:

Հայաստանի Հանրապետությունում Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական ժողովրդավարական վերահսկողության համակարգը ներառում է՝

1. ՀՀ Նախագահի կողմից իրականացվող վերահսկողությունը,
2. ՀՀ Ազգային ժողովի կողմից իրականացվող վերահսկողությունը,
3. ՀՀ Կառավարության կողմից իրականացվող վերահսկողությունը,
4. ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացվող վերահսկողությունը,
5. հասարակական վերահսկողությունը (ՋԼՄ-ներ, հասարակական կազմակերպություններ և այլն):

ՀՀ Նախագահի կողմից իրականացվող վերահսկողության առանցքն են ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 12-րդ կետով նախատեսված լիազորությունները: Ըստ այդ հոդվածի՝ ՀՀ Նախագահը՝ որպես ՀՀ Զինված ուժերի Գերագույն գլխավոր հրամանատար, համակարգում է պետական մարմինների գործունեությունը պաշտպանության բնագավառում, ինչպես նաև նշանակում և ազատում է Զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը: Այստեղ, մեր կարծիքով, առավել քան կարևոր է ՀՀ Նախագահի կողմից պաշտպանության բնագավառում ուղենշվող կադրային քաղաքականությունը, քանի որ հենց կադրերի մարդկային, բարոյական հատկանիշներից և մասնագիտական գիտելիքներից է մեծապես կախված ոլորտի վերահսկելիության, օրինականության և թափանցիկության ապահովման մակարդակը:

[6] Տես *М. Гацко.* Гражданский контроль над вооруженными силами России. «Обозреватель», 2007, № 1:

ՀՀ Զինված ուժերի նկատմամբ Ազգային ժողովի կողմից իրականացվող քաղաքացիական ժողովրդավարական վերահսկողության հիմնական օրենսդրական մեխանիզմը ՀՀ պետական բյուջեով նախատեսված պաշտպանական ծախսերի նկատմամբ վերահսկողությունն է: ՀՀ Սահմանադրության 76-րդ և 77-րդ հոդվածների համաձայն՝ Ազգային ժողովը կառավարության ներկայացմամբ հաստատում է պետական բյուջեն, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման նկատմամբ: Ազգային ժողովի կողմից իրականացվող ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության միջնորդավորված մեխանիզմ կարելի է համարել նաև Զինված ուժերի նկատմամբ վերահսկողությունը ՀՀ Վերահսկիչ պալատի միջոցով, քանի որ նրա գործունեության ծրագիրը հաստատում է Ազգային ժողովը: ՀՀ Սահմանադրության 83.4-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ Վերահսկիչ պալատն անկախ մարմին է, որը վերահսկողություն է իրականացնում բյուջետային միջոցների և պետական ու համայնքային սեփականության օգտագործման նկատմամբ: Նման մեխանիզմ կարելի է համարել նաև ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի կողմից իրականացվող վերահսկողությունը:

Ընդհանրապես, խորհրդարանական վերահսկողությունը համարվում է ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության կարևորագույն բաղադրիչը: Այդ է վկայում նաև ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի կողմից 2001 թ. նոյեմբերի 24-ի որոշմամբ հաստատված «Պետության ռազմական կազմավորման նկատմամբ խորհրդարանական վերահսկողության մասին» մոդելային օրենքը[7], որը առաջարկվել է օգտագործել ԱՊՀ անդամ պետությունների օրենսդրություններում: Ըստ այդ օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի՝ զինված ուժերի նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության կենտրոնական տարրն է, որը ենթադրում է խորհրդարանի կողմից համարժեք իրավական և վարչական միջոցների կիրառում՝ ուղղված զինված ուժերի արդյունավետ ղեկավարման, զինված ուժերի քաղաքական չեզոքության և ապաքաղաքականացման, զինծառայողների իրավունքների և օրինական շահերի պաշտպանության, զինված ուժերի գործունեության թափանցիկության ապահովմանն ու զինված ուժերի՝ որպես իրավական պետության անբաժանելի տարրի կայացմանը:

Հարկ է նշել, որ ԱՊՀ անդամ պետություններից զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ապահովման որոշակի փորձ ունի Ուկրաինան: ԱՊՀ շրջանակներում այն միակ պետությունն է, որն ունի պետության ուժային կառույցների նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերա-

[7] Տես «Постановление Межпарламентской Ассамблеи государств—участников Содружества Независимых Государств от 24 ноября 2001 г. № 18-13 о модельном законе «О парламентском контроле над военной организацией государства» (http://docs.cntd.ru/document/901813101):

հսկողության հարաբերությունները կարգավորող առանձին օրենք: Մասնավորապես՝ 2008 թ. մարտի 19-ին ընդունված «Պետության ռազմական կառույցի և իրավապահ մարմինների նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության մասին» ՈՒկրաինայի օրենքով սահմանվել են զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության հիմնական խնդիրները, սկզբունքները, կանոնակարգվել են զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության իրականացման ոլորտում խորհրդարանի, նախագահի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները և այլն[8]:

ԱՊՀ մյուս պետություններում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում, դեռևս փորձ չի արվել պաշտպանական համակարգում քաղաքացիական վերահսկողության հետ կապված հարաբերությունները կարգավորելու օրենքի մակարդակով:

ՀՀ Կառավարության կողմից իրականացվող վերահսկողության բովանդակությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանության, ազգային անվտանգության և արտաքին քաղաքականության իրականացման ապահովումն է:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի կողմից իրականացվող վերահսկողության էությունն ամրագրված է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքում[9]: Այս օրենքի համաձայն՝ Մարդու իրավունքների պաշտպանը անկախ և անփոփոխելի պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Մարդու իրավունքների պաշտպանը քննարկում է պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց կողմից Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, ինչպես նաև միջազգային իրավունքի սկզբունքներով ու նորմերով նախատեսված՝ մարդու, և այդ թվում նաև քաղաքացու, իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման վերաբերյալ բողոքները:

ՀՀ Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության կարևոր տարրերից է նաև հասարակական վերահսկողությունը, որն իրականացվում է հասարակական կազմակերպությունների, Զինված ուժերում քաղաքացիական բաղադրիչի, ինչպես նաև հասարակական բնույթ ունեցող խորհրդակցական մարմինների միջոցով:

Ներկայումս ՀՀ պաշտպանական ոլորտում իրականացվող բարեփոխում-

[8] Տես «Закон Украины от 19 июня 2003 г. № 975-IV «О демократическом гражданском контроле над военной организацией и правоохранительными органами государства»»:

[9] Տես «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ 2003 թ. հոկտեմբերի 21-ի հմ. ՀՕ-23-Ն օրենքը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2003 թ., հմ. 58 (293)):

ներն անվերապահորեն ուղղված են նաև ՀՀ Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների ներդրմանն ու ամրապնդմանը:

Այդ է վկայում ՀՀ պաշտպանական համակարգում քաղաքացիական հատուկ ծառայության բաղադրիչի ներդրումը, որի նպատակն է՝ պաշտպանության նախարարության համակարգում կանոնակարգել և արդյունավետ դարձնել ոչ զինվորական բնույթի խնդիրների համար պատասխանատու մասնագետների ծառայության կազմակերպումը, ապահովել անհրաժեշտ ոչ զինվորական լավագույն մասնագետների հոսքը դեպի համակարգ, կիրառել քաղաքացիական վերահսկողության որոշ մեխանիզմներ, ինչպես նաև նպաստել ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի կառավարման ոլորտի թափանցիկության ապահովմանը:

ՀՀ Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության տարրերից է նաև ՀՀ պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհուրդը[10]: Հասարակական խորհուրդը խորհրդակցական մարմին է, որը պաշտպանության բնագավառում պետական քաղաքականության ձևավորման և իրականացման ընթացքում ապահովում է ՀՀ քաղաքացիների, հասարակական կազմակերպությունների և ՀՀ պաշտպանության նախարարության համագործակցությունը, ինչպես նաև նախարարության գործունեության նկատմամբ հասարակական վերահսկողության իրականացումը: Հասարակական խորհրդի հիմնական նպատակը Զինված ուժերում մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության, ինչպես նաև Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ապահովումն է:

Հասարակական վերահսկողության մեխանիզմներից է նաև Զինված ուժերի գործունեության վերաբերյալ հասարակության իրազեկման ապահովումը: Այդ նպատակով ՀՀ պաշտպանության նախարարի 2007 թ. նոյեմբերի 13-ի հրամանով հաստատվել է «ՀՀ պաշտպանության նախարարության հանրային իրազեկման հայեցակարգը»[11]:

«Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հանրային իրազեկման հայեցակարգը» հիմնականում միտված է սահմանելու պաշտպանության բնագավառի կատարելագործմանն ու արդիականացմանն ուղղված ծրագրերի վերաբերյալ հանրային իրազեկման քաղաքականության առաջնահերթությունները ու նպատակները, ինչպես նաև դրանց իրագործման վերաբերյալ հանրային իրազեկման ապահովման մեթոդներն ու միջոցները՝ նպաստելով պաշտպանության բնագավառի ընթացիկ ու ծրագրվող բարեփո-

[10] Տես Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2009 թ. մայիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի կանոնադրությունը հաստատելու մասին» հմ. 594 հրամանը:

[11] Տես «ՀՀ ՊՆ հանրային իրազեկման հայեցակարգ» (http://www.mil.am/arm/index.php?page=111):

խումների վերաբերյալ տեղեկացված լինելու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների սահմանադրական իրավունքի իրացմանը:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետության Զինված ուժերը գտնվում են ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների ներդրման և կայացման փուլում:

Այսօր Հայաստանի Հանրապետությունը Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության զարգացումը կարևորում է որպես պաշտպանական բարեփոխումների առանցքային խնդիր և հաստատուն քայլեր է կատարում՝ ուղղված այդ խնդրի լուծմանը:

ЗАКОНОДАТЕЛЬНЫЕ МЕХАНИЗМЫ ОБЕСПЕЧЕНИЯ ДЕМОКРАТИЧЕСКОГО ГРАЖДАНСКОГО КОНТРОЛЯ НАД ВООРУЖЕННЫМИ СИЛАМИ РА

А. С. НАЗАРЯН, Заместитель Министра обороны РА

РЕЗЮМЕ

В системе военной безопасности демократического правового государства важнейшее значение имеет обеспечение законности и транспарентности в сфере обороны путем внедрения системы демократического гражданского контроля над вооруженными силами. Данное положение в РА зафиксировано на уровне Конституции (Статья 8.2): «Вооруженные силы соблюдают нейтралитет в политических вопросах и находятся под гражданским контролем». Соответствующие обязательства РА приняла также в рамках «Программы действий индивидуального партнерства Армения—НАТО».

Развитие демократического гражданского контроля над Вооруженными силами является одним из основных направлений оборонной политики РА и расценивается как одна из стержневых задач оборонной реформы. Данный факт отражен в законодательных и политических документах, таких, как законы РА «Об обороне», «Об особой гражданской службе», «Стратегия национальной безопасности» и «Военная доктрина» РА.

Принятыми в РА формами демократического гражданского контроля над ВС являются контроль со стороны Президента РА в качестве Верховного Главнокомандующего, парламентский контроль путем принятия законов, регулирующих отношения в данной сфере, и утверждения военного бюджета, контроль со стороны СМИ и общественных организаций. В целях обеспечения прав и свобод человека в ВС создан институт советника Омбудсмена по вопросам военнослужащих, а также общественный совет при Министре обороны РА.

THE LEGISLATIVE MECHANISMS OF ENSURING DEMOCRATIC CIVILIAN CONTROL OVER THE ARMED FORCES OF THE REPUBLIC OF ARMENIA

A. S. NAZARYAN, Deputy Minister of Defense of the Republic of Armenia

SUMMARY

Ensuring lawfulness and transparency in the defense sphere through introduction of the system of democratic civilian control over the Armed Forces is of paramount significance in the system of military security of a democratic legal state. This provision is fixed at the level of the Constitution (Article 8.2): «The Armed Forces shall maintain the neutrality in political matters and remain under civilian control». The Republic of Armenia has also assumed corresponding commitments in the framework of Armenia—NATO Individual Partnership Action Plan Program.

The development of democratic civilian control over the Armed Forces is one of the main directions in the RA defense policy. It is regarded as one of the pivotal issues of defense reforming. This fact is reflected in legislative and political documents such as the RA Laws «On Defense», «On Special Civil Service», «National Security Strategy of the Republic of Armenia» and «The Military Doctrine of the Republic of Armenia».

The manifestations of democratic civilian control over the Armed Forces, adopted in the RA, are the following: the control by the RA President as the Supreme Commander; parliamentary control through the adoption of laws regulating relations in this sphere and passing the military budget; control by the mass media and non-governmental organizations. For ensuring the protection of individual rights and freedoms Institute of Advisor to Ombudsman on servicemen's affairs, as well as a Public Council under the RA Minister of Defense have been established in the Armed Forces.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՔ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՏԻՊԵՐԸ ԵՎ ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԵՋՈՔՈՒԹՅԱՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ

Ա. Գ. ՎԱՂԱՐՇՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ

Հայաստանի սահմանադրական օրենսդրության զարգացման պատմությունն սկսվել է 20-րդ դարի սկզբին հայոց պետականության վերածնունդով և շարունակվում է մինչև մեր օրերը: Այդ ընթացքում սահմանադրաիրավական կարգավորումը անցել է երեք պատմական փուլ, որոնցից յուրաքանչյուրին հատուկ է սահմանադրական իրավունքի իր ուրույն տիպը:

Դրանցից առաջինը Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918–1920 թթ.) սահմանադրաիրավական կարգավորումն էր, որն արտացոլում է շուրջ 600 տարի անկախությունը կորցրած հայ ժողովրդի պետականության վերածնունդը՝ խորհրդարանական հանրապետության ձևով: 1918 թ. մայիսի 28-ին հռչակվեց Հայաստանի անկախությունը: Թիֆլիսի Հայոց ազգային խորհրդի Անկախության հռչակագիրը սահմանադրական իրավական ակտ էր, որում ասված էր. *«Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն... Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար»*[1]:

Հայոց ազգային խորհուրդն իր գործունեությունն սկսեց ծանր արտաքին քաղաքական, տնտեսական և սոցիալական իրադրությունում: Իրավիճակը բարդանում էր նաև այն հանգամանքով, որ այդ մարմինը կոչված էր պետական կառավարում իրականացնելու նորանկախ պետությունում պետական ապարատի ձևավորման պայմաններում: Այս բացառիկ պայմաններն էլ կանխորոշում էին կառավարության գլխավոր խնդիրը՝ «կասեցնել քայքայման գործընթացը, հանել երկիրն անիշխանության վիճակից ու պայմաններ ստեղծել պետական շինարարության համար .... Անձև քաոսի և ավերակների կույտից նա պետք է ստեղծի կենսունակ և աշխատող մի մարմին»[2]:

---

[1] *Ս. Վրացյան*, Հայաստանի Հանրապետություն: Փարիզ, 1928, էջ 131–132:

[2] «Հ. Քաջազնունու կառավարության հայտարարությունը 1918 թ. օգոստոսի 3-ին»: «Ձանգ», 1918 թ. օգոստոս, հմ. 43:

1918 թ. օգոստոսի 3-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի խորհրդի հաստատմանը ներկայացրեց իր հայտարարությունը, որի դրույթների մեծ մասը վերաբերում էր առօրյա հիմնախնդիրներին ներքին գործերի, ֆինանսների, արդարադատության, պաշտպանության, արտաքին գործերի ոլորտներում: Այն հեռանկարային ծրագրեր չէր պարունակում, սահմանադրական բնույթի ակտ չէր, այլ միայն նախատեսում էր գումարել Հայաստանի Սահմանադիր ժողովը, որն էլ պետք է մշակեր և ընդուներ Հայաստանի Սահմանադրությունը: Սահմանադրության հարցում և՛ հանրապետության քաղաքական ղեկավարության, և՛ օրենսդիր մարմնի, և՛ ընդդիմադիր քաղաքական որոշ ուժերի դիրքորոշումը եղել է հետևյալը. «ՀՀ Սահմանադրությունը կընդունվի ապագայում խաղաղություն հաստատվելուց և ՀՀ տարածքային սահմանների հարցի վերջնական լուծումից հետո՝ Սահմանադիր ժողովի կողմից»[3]:

Այսպիսով՝ Հայաստանի առաջին Հանրապետության իրավական համակարգը, որը գոյատևեց ընդամենը երկու և կես տարի, չհասցրեց ունենալ իր սահմանադրությունը*: Սակայն հանրապետությունում ընդունվել և գործել են հիմնադիր, սահմանադիր բնույթի նորմատիվ իրավական ակտեր, որոնց սահմանադրական-իրավական բովանդակությունը պայմանավորված էր այն հանգամանքով, որ դրանք՝ կարգավորում էին պետության և անհատի փոխհարաբերությունները, պետական իշխանության կառույցների ստեղծման և գործունեության հարաբերությունները: Նման ակտերից էին հանրապետության կառավարության հայտարարագրերը (հռչակագրերը) և տարբեր ժամանակներում ընդունված օրենքները՝ Հայաստանի խորհրդի հրահանգը (1918 թ. օգոստոս), որը ժամանակակից նորմատիվ կարգավորման համակարգում համապատասխանում է խորհրդարանի կանոնակարգին, Հայաստանի խորհրդարանի ընտրությունների մասին օրենքը (1919 թ. ապրիլ), Հպատակության (քաղաքացիության) մասին օրենքը (1920 թ. մայիս): ՀՀ-ում գործել են նաև բազմաթիվ այլ

[3] Նույն տեղում:

* ՀՀ արդարադատության նախարարությունում 1920 թ. սկզբներին՝ նախարար Ա. Չիլինգարյանի պաշտոնավարության օրոք, հավանաբար հանրապետության քաղաքական ղեկավարության համաձայնությամբ, աշխատանքներ են տարվել նաև ՀՀ Սահմանադրության նախագծի մշակման ուղղությամբ: Հանրապետության քաղաքական ղեկավարության հանձնարարությամբ Ա. Չիլինգարյանը 1920 թ. ապրիլի 14-ի նամակով Ս. Տիգրանյանին և Հ. Մանանդյանին (որոնք այդ ժամանակ աշխատում էին Ալեքսանդրապոլում որպես համալսարանի դասախոսներ) առաջարկում է մեկ ամսվա ընթացքում կազմել ՀՀ Սահմանադրության նախագիծը: Մայիսյան իրադարձությունները և հանրապետության քաղաքական կյանքի հետագա դեպքերը ընդհատեցին այս ուղղությամբ կատարվող աշխատանքները: ՀՀ Սահմանադրության մշակման խնդիրներով զբաղվել է նաև «Հայաստանի իրավաբանական ընկերություն» հասարակական կազմակերպությունը, որի հիմնադիր ժողովը տեղի է ունեցել 1919 թ. ապրիլի 26-ին: Նույն թվականի մայիսի 7-ին Շրջանային դատարանը հաստատել և ցուցակագրել է «Հայաստանի իրավաբանական ընկերության» կանոնադրությունը: Այնուհետև ընկերությունը, անցնելով գործի, հիմնել է դատավարության և դատարանակազմության, նյութական իրավունքի, հայկական իրավունքի, մահմեդական իրավունքի, Հայաստանի Սահմանադրության հարցերը ուսումնասիրելու և մշակելու հանձնաժողովներ:

օրենքներ՝ ընդունված օրենսդիր մարմինների և օրենսդիր լիազորություններով օժտված կառավարության կողմից: Այդ օրենքները կարգավորում էին կառավարության և խորհրդարանի փոխհարաբերությունները, պետական իշխանության համակարգի կազմակերպման ու գործունեության հարաբերությունները[*]:

Առաջին հանրապետության կարևորագույն գործառույթներից էր երկրի պաշտպանությունը, որը իրականացվում էր հատուկ պետահիրավական հաստատությունների համակարգի միջոցով: Այդ գործառույթը ենթադրում էր երկրի պաշտպանական համակարգի ձևավորում և կառավարում, նպատակամղված էր հատուկ կառուցվածքային կազմավորման՝ հայկական բանակի կայացմանը: Պաշտպանական համակարգը գործում էր ռուսաստանյան և հանրապետական իրավական ակտերի հիման վրա, որոնց հետազոտությունը հնարավորություն է ընձեռում եզրակացնելու, որ Առաջին հանրապետության պետական կառուցակարգում օրենսդիր մարմիններն ունեցել են հետևյալ լիազորությունները. պաշտպանական բյուջեի հաստատման միջոցով բանակի ֆինանսատնտեսական ապահովման հիմքերի ստեղծում, պաշտպանական ոլորտի օրենքների ընդունում, պատերազմի և խաղաղության հարցերով որոշումների ընդունում, քաղաքական հսկողություն Զինված ուժերի գործունեության նկատմամբ՝ խորհրդարանական լիազորությունների և ընթացակարգերի միջոցով: Պաշտպանական համակարգի կառավարման ենթադրվող լիազորությունների և պատասխանատվության մեծ մասը կենտրոնացված էր գործադիր իշխանության համակարգում՝ ի դեմս կառավարության, զինվորական (ռազմական) նախարարության և այլ մարմինների: Կառավարությունն իրականացնում էր երկրի պաշտպանության իրավական ու կազմակերպական միջոցառումները և պատասխանատվություն էր կրում Զինված ուժերի վիճակի և ապահովման համար: Այդ խնդրի կենսագործման համար նա օժտված էր համապատասխան գործադիր լիազորություններով[4]:

Հայաստանի խորհուրդը (1918–1919 թթ. միակ օրենսդիր մարմինը[**]) 1919 թ.

[*] Առաջին հանրապետության պետական շինարարության և իրավական համակարգի առանձնահատկություններից էր այն, որ Հայաստանի խորհուրդը 1918 թ. դեկտեմբերի 6-ին օրենսդիր հանձնաժողովի առաջարկությամբ ընդունել էր «Նախկին Ռուսական Կայսրության օրենքները ՀՀ տարածքի վրա գործադրման մասին» օրենք, համաձայն որի՝ ՀՀ տարածքում ժամանակավորապես գործադրվելու էին նախկին Ռուսական Կայսրության օրենքները՝ ժամանակավոր կառավարության, Անդրկովկասյան կոմիսարիատի, Սեյմի, Հայաստանի խորհրդի փոփոխություններով ու լրացումներով: Այդ քայլը, որը հետագայում խորհրդահայ իրավագիտությունը որակել է որպես հետադիմական, ժամանակավոր ստիպողական միջոցառում էր, քանի որ իրավական համակարգը միանգամից ստեղծել հնարավոր չէր: Մյուս կողմից՝ ռուսական օրենսդրությունը փետրվարյան հեղափոխությունից հետո կրած փոփոխությունների շնորհիվ գրեթե կորցրել էր իր հակաժողովրդավարական բնույթը:

[4] Այդ մասին ավելի մանրամասն տես *Ա. Գ. Վաղարշյան,* Հայաստանի առաջին Հանրապետության կառավարության լիազորությունները և իրավական գործունեությունը երկրի պաշտպանության ոլորտում: «ՀՔ», 2008, հմ. 2–3:

[**] 1919 թ. ապրիլի 27-ից մինչև օգոստոսի մեկը և 1920 թ. մայիսի 4-ից մինչև Հանրապետության անկումը Կառավարությունը խորհրդարանի հատուկ օրենքներով օժտված էր նաև օրենսդրական լիազորություններով:

մարտի 31-ին ընդունել է «Հայաստանի Պառլամենտի ընտրությունների մասին» օրենքը, որը ուժի մեջ է մտել 1919 թ. ապրիլի 1-ին: Համաձայն այդ օրենքի՝ քսան տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի, առանց սեռի, կրոնի և ազգության խտրության, իրավունք ուներ մասնակցելու ընտրություններին: Ընտրությունը պիտի կատարվեր ընդհանուր, գաղտնի, հավասար և ուղղակի քվեարկությամբ: Այդ օրենքի հիման վրա հետագայում կազմակերպվեցին Հայաստանի խորհրդարանի ընտրությունները: Խորհրդարանն սկսեց գործել 1919 թ. օգոստոսի 1-ին: «Հայաստանի Պառլամենտի ընտրությունների մասին» օրենքն ամրագրում էր ընտրական իրավունքի այնպիսի սկզբունքներ, որոնք մեզ հիմք են տալիս ասելու, որ ընտրական համակարգն իր ձևակազմական հատկանիշներով ուներ ժողովրդավարական բնույթ: Մեզ հետաքրքրող հիմնահարցի տեսանկյունից ուշագրավ է այն փաստը, որ ակտիվ ընտրական իրավունքից զրկվող մի շարք կատեգորիաների քաղաքացիների մեջ մտնում էին նաև «իսկական զինվորական ծառայության մեջ գտնվող անձինք»[*]: Առաջին հանրապետությունում պասիվ ընտրական իրավունք (ընտրվելու) ունեին ակտիվ ընտրական իրավունքով (ընտրելու) օժտված բոլոր քաղաքացիները: Այդ մոտեցումը որդեգրվեց նաև հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների ընտրական գործընթացների օրենսդրական կարգավորման գործում:

Այսպիսով՝ Առաջին հանրապետության օրենսդրությունը որպես ՋՈՒ-ի քաղաքական չեզոքության և ապաքաղաքականացվածության երաշխիք «իսկական զինվորական ծառայության մեջ գտնվող անձանց» զրկում էր և՛ խորհրդարանական, և՛ տեղական ինքնակառավարման մարմինների ակտիվ ու պասիվ ընտրական իրավունքից:

ՋՈՒ-ի նախանշանակումն ու գործառույթները չունեին հստակ իրավաօրենսդրական ամրագրում: Սակայն Առաջին հանրապետության օրենսդրական նյութի և կառավարական ակտերի մանրազնին հետազոտությունը ցույց է տալիս, որ բանակի առաքելությունը երկրի անվտանգության և պաշտպանության ապահովումն էր: Այսպես. Ս. Վրացյանի կառավարության հայտարարագիրը, որը, ցավոք, մնաց չիրագործված, ազդարարում էր. «Այսուհանդերձ մենք գիտակցում ենք, որ հասարակական ներկա կարգերում տարաբախտաբար իշխողը դեռ ոչ թե արդարությունն է, այլ ուժը: Եվ պետական ամեն մի կազմավորում իր գոյությունը և արդար իրավունքները ապահովելու համար ստիպված է ունենալ կազմակերպված համառ ռազմական ուժ: ՈՒստի և կառավարության գլխա-

[*] Ընտրական իրավունքից զրկված քաղաքացիների մնացած կատեգորիաներն էին՝ ա) օրինական կարգով «խենթ կամ խելագար» ճանաչված անձինք, բ) խուլ ու համրերը, որոնք ենթակա էին խնամակալության, գ) օրենքում թվարկված մի շարք քրեական հանցագործությունների համար դատապարտված անձինք, եթե նրանց իրավունքները չէին վերականգնվել, դ) մեղադրյալները, եթե նրանց նկատմամբ որպես խափանման միջոց էր կիրառվել «պահակի հսկողությամբ պահելը», ե) դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով ընտրական իրավունքից զրկված անձինք (ընտրական իրավունքից զրկելը քրեական պատժատեսակներից էր), զ) դատարանի դատավճռով որպես «չարամիտ սնանկ» ճանաչված անձինք, եթե այդ ճանաչումից երեք տարի չէր անցել:

վոր հոգսերից մեկը պիտի լինի երկրի ուժերի հավաքումը և ժողովրդական կուռ բանակի կազմակերպումը»[5]:

Այսպիսով՝ Առաջին հանրապետության իրավական շինարարության պատմությունը հետազոտելիս մենք նկատում ենք, որ որդեգրված էր ԶՈՒ-ի կարգավիճակի, դրա նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ազատական մոդելը, որը խարսխված էր իշխանությունների տարանջատման և քաղաքական համակարգի սուբյեկտների ու ԶՈՒ-ի լիազորությունների սահմանազատման վրա: Սակայն այդ մոդելը չուներ սահմանադրական կարգավորում, այլ միայն ընթացիկ օրենսդրական էր: ԶՈՒ-ի քաղաքական չեզոքության և ԶՈՒ-ի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքները ուղղակիորեն, բառացիորեն ամրագրված չէին օրենսդրության մեջ, սակայն, այնուամենայնիվ, ենթադրվում էին և ըստ էության կենսագործված էին իրավական կարգավորման մեխանիզմում: Ընդ որում՝ հատուկ օրենսդրական կարգավորում էր ստացել ԶՈՒ-ի քաղաքական չեզոքության սկզբունքը՝ զինվորականների ընտրական իրավունքների սահմանափակման տեսանկյունից, ինչը նույնիսկ մեր օրերի համար բավականին «կոշտ» մոտեցում է և երաշխիք է զինված ուժերի քաղաքական չեզոքության իրավական կարգավորման հարցում:

Հայաստանի առաջին Հանրապետության գոյության դժվարին պայմաններում նոր ձևավորված հանրապետական կարգերը, խորհրդարանականությունը չունեցան իրենց բնականոն պատմական զարգացումը, որովհետև ընդհատվեցին բոլշևիկյան ամբողջատիրության և դրան համապատասխանող սահմանադրական իրավական կարգավորման հաստատմամբ: Այս շրջանում բուն Հայաստանում սահմանադրական-իրավական կարգավորման մասին կարելի է խոսել միայն մինչև ԽՍՀՄ կազմի մեջ ՀԽՍՀ մտնելը: Դրանից հետո Հայաստանը փաստորեն կառավարվում էր Անդրֆեդերացիայի, իսկ այնուհետև՝ ԽՍՀ Միության օրենքների և մարմինների միջոցով, իսկ ՀԽՍՀ սահմանադրություններն արտացոլում էին ԽՍՀՄ սահմանադրությունների սկզբունքները: Թեև դրանք ՀԽՍՀ-ն հայտարարում էին ինքնիշխան պետություն, բայց իրականում հանրապետության պետական մարմինները և իրավական համակարգը խստորեն ենթարկված էին միութենական պետության կենտրոնացված իշխանության համակարգին: Ամբողջատիրական սահմանադրական իրավունքի, սոցիալիստական սահմանադրությունների ելակետային սկզբունքները և պատմական զարգացումը պայմանավորված էին մարքս-լենինյան ուսմունքով, որը պետությունը դիտում էր որպես կոմունիզմի կառուցման նպատակով բոլոր հասարակական հարաբերությունների վերակառուցման գլխավոր գործիք:

Հայաստանի երկրորդ Հանրապետության սահմանադրական զարգացումը (1920–1990 թթ.) արտացոլում է բոլշևիզմի հաղթանակի հետևանքով Հայաստանում ամբողջատիրական սահմանադրական իրավական կարգավորման հաս-

[5] «Ս. Վրացյանի կառավարության 1920 թ. նոյեմբերի դեկլարացիան»: ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 487, թ. 121:

տատումը և տարբեր տարատեսակներով դրա գոյատևումը մինչև Երրորդ հանրապետության հռչակումը: Քաղաքական իշխանությունն անբաժանելիորեն գտնվում էր կոմկուսի ձեռքում, իսկ տարբեր տեսակի պետական կառույցները (խորհուրդներ, գործադիր և դատական մարմիններ), ինչպես նաև ՋՈՒ-ն լրիվ կախված էին կուսակցական որոշումներից:

Պրոլետարիատի դիկտատուրայի համակարգում կոմկուսի ղեկավար դերը բացառում էր իշխանությունների բաժանման հնարավորությունը: Պրոլետարիատի դիկտատուրան՝ իր հակախորհրդարանականությամբ, իշխանությունների տարանջատման և մարդու իրավունքների մերժմամբ, ուժային նորմերի գերիշխանությամբ և այլն, ըստ մարքսիզմի, պետք է պահպանվեր մինչև «լրիվ կոմունիզմ»: Այդ դոկտրինը սոցիալիզմի համար այլ պետություն, բացի կուսակցական դասակարգային դիկտատուրայից, չէր նախատեսում: Նման պայմաններում ՋՈՒ-ի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը և դրանց քաղաքական չեզոքությունը սահմանադրական-իրավական հիմնախնդիր չէին: Ավելին. ՋՈՒ-ն քաղաքականապես չեզոք չէին, որովհետև դրանցում գործում էին կոմկուսի սկզբնական կուսակցական կազմակերպությունները:

Եվրոպական սահմանադրական իրավունքի մասին գիտության համար նշված հիմնահարցերը իրական սահմանադրական հիմնախնդիրներ էին, հետևաբար այն ձգտում էր դրանց տալ արդյունավետ սահմանադրական կամ օրենսդրական կարգավորում, հատկապես այն երկրներում, որտեղ զինված ուժերի նկատմամբ վերահսկողության հիմնահարցը և դրանց քաղաքական չեզոքության սկզբունքը սրված էին: Խորհրդային պետութենագիտության համար ՋՈՒ-ի նկատմամբ քաղաքացիական վերահսկողությունը և դրանց քաղաքական չեզոքությունը կառուցված էին հակառակ մեկնակետի վրա, այսինքն՝ ՋՈՒ-ն չեն կարող լինել քաղաքականապես չեզոք, որովհետև դրանք կուսակցության՝ քաղաքական համակարգի միջուկի, հասարակության ղեկավար և ուղղորդող ուժի «զինված պահապաններն էին»: Այդ մոտեցման իրավական հետևանքն այն էր, որ ՋՈՒ-ի առաքելությունը, կազմակերպումն ու գործունեությունը սահմանադրորեն չէին կարգավորվում: Ո՛չ ՀԽՍՀ 1922 թ. Սահմանադրությունը, ո՛չ էլ 1937 թ. Սահմանադրությունը որևէ կերպ չեն անդրադառնում այդ հիմնահարցի կարգավորմանը:

1960-ական թվականների սկզբներին կոմկուսն առաջ քաշեց պրոլետարիատի դիկտատուրայից համաժողովրդական պետության անցնելու վերաբերյալ դրույթ: Սակայն ինչպես այդ դրույթը, այնպես էլ դրա ամրագրումը բրեժնևյան 1977 թ. Սահմանադրության մեջ կրում էին հայտարարական բնույթ, քանի որ, ըստ էության, անձեռնմխելի էին մնում պրոլետարիատի դիկտատուրայի բոլոր նախկին հիմքային և վերնաշենքային կառույցները՝ ԽՄԿԿ մենաշնորհային կառավարմամբ: ԽՍՀՄ 1977 թ. և ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրությունները ՋՈՒ-ի կարգավիճակի հարցում մի քայլ առաջ անցան նախորդ սահմանադրություններից: ՀԽՍՀ 1978 թ. Սահմանադրության 1-ին՝ ՀԽՍՀ հասարակարգի և քաղա-

քականության հիմունքները, բաժնի 4-րդ գլուխը կարգավորում էր արտաքին քաղաքական գործունեության և սոցիալիստական հայրենիքի պաշտպանության հիմունքները: Սահմանադրության 29-րդ և 30-րդ հոդվածները սահմանում էին, որ՝

1) հայրենիքի պաշտպանությունը պետության կարևորագույն գործառույթներից է և ամբողջ ժողովրդի գործը, պետությունը պարտավոր է ապահովել երկրի անվտանգությունը և պաշտպանունակությունը, հանդերձել ՋՈՒ-ն,

2) ՋՈՒ-ի ստեղծման համար սահմանվում է ընդհանուր զինապարտություն,

3) ՋՈՒ-ի սահմանադրական գործառույթներն են՝ սոցիալիստական նվաճումների, խորհրդային ժողովրդի խաղաղ աշխատանքի, պետության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության պաշտպանությունը,

4) երկրի անվտանգության ապահովման և պաշտպանունակության ամրապնդման ոլորտի իրավական կարգավորումը հայտարարվում է ԽՍՀ Միության բացառիկ իրավասությունը:

Այսպիսով՝ 1970-ական թվականների սահմանադրական բարեփոխումների շնորհիվ սահմանադրական կարգավորման ենթարկվեցին խորհրդային ՋՈՒ-ի նախանշանակումը և դրան առնչվող մի շարք հիմնահարցեր: Սակայն ՋՈՒ-ի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության և դրանց քաղաքական չեզոքության սկզբունքները չունեին սահմանադրական ամրագրում, որովհետև համաժողովրդական սոցիալիստական պետության սահմանադրական կարգավորումը չէր հրաժարվել այդ սկզբունքների նկատմամբ «պրոլետարիատի դիկտատուրայի պետության» մոտեցումից: Նշված սկզբունքների նկատմամբ հայեցակարգային մոտեցումները պահպանեցին իրենց ուժը և դիրքերը նաև վերակառուցման տարիներին, երբ խորհրդային ղեկավարությունն ստիպված եղավ գնալու որոշ զիջումների. հարաբերականորեն ազատ և այլընտրանքային ընտրություններ, բարձրագույն ներկայացուցչական և գործադիր մարմինների մասնակի բարեփոխում, ԽՍՀՄ մշտապես գործող Գերագույն խորհրդի կազմավորում, ԽՍՀՄ պրեզիդենտի հաստատության ներքերում, ԽՄԿԿ ղեկավար և ուղղորդող դերի վերաբերյալ սահմանադրական նորմի վերացում[6]: Թերևս սոցիալիստական իրավական պետության հայեցակարգի կենսագործումը խորհրդային պետութենագիտությունը կհանգեցներ նշված սկզբունքների իմաստավորմանը և դրանց սահմանադրական ամրագրման անհրաժեշտության ճանաչմանը, սակայն հետագա քաղաքական իրադարձությունները դադարեցրեցին այդ գործընթացների զարգացումը:

Երրորդ հայկական հանրապետության սահմանադրական զարգացումը (1990 թ. մինչև մեր օրերը) նպատակաուղղված է նոր՝ ժամանակակից տիպի սահմանադրաիրավական կարգավորման ձևավորմանը և արտացոլում է

[6] 1988 թ. ԽՄԿԿ համամիութենական 19-րդ խորհրդաժողովը հռչակեց, որ սկզբունքորեն կարևոր նշանակության գործ է համարվում սոցիալիստական իրավական պետության՝ որպես սոցիալիզմի գաղափարներին լիովին համապատասխանող քաղաքական իշխանության կազմակերպվածքի կերտումը (տես «Материалы XIX Всесоюзной конференции КПСС». М., 1988, с. 122):

ամբողջատիրությունից քաղաքացիական հասարակությանն ու ինքնիշխան, իրավական, ժողովրդավարական պետությանն անցումը:

Դիտարկելով պատմական այն աստիճանները, որոնցով անցել է Հայաստանի սահմանադրական զարգացումը, կարելի է նկատել, որ այդ զարգացման մեջ չկա պատմական հաջորդականություն: Դրանց միջև կապ չլինելու հանգամանքը հնարավորություն չի տալիս Հայաստանի սահմանադրական զարգացումը դիտելու միասնական պատմական գործընթացի շրջանակներում, քանի որ պատմաքաղաքական և գաղափարախոսական հանգամանքների բերումով դրանում յուրաքանչյուր նոր աստիճան սկզբունքորեն բացասում է նախորդը:

Արդի ժողովրդավարական սահմանադրահիրավական կարգավորումը «սկզբունքորեն բացասում է ամբողջատիրական տիպը, սակայն «բացասման բացասման» միջոցով այն, կարծես թե, պետությունը վերադարձնում է բոլշևիկյան հեղափոխությամբ ընդհատված զարգացման փուլին: Այդուհանդերձ, դա ոչ թե պարզ վերադարձ է, այլ ավելի շատ համաշխարհային քաղաքակրթության մշակած ժողովրդավարական սկզբունքների ընկալում»[7]: Այսպիսով՝ Երրորդ հանրապետության նոր Սահմանադրությունը, մի կողմից, վերականգնում է ժամանակների կապը (Հայաստանի առաջին Հանրապետության հետ), իսկ մյուս կողմից՝ նոր պատմական հիմքի վրա վերածնում է հայոց պետականությունը:

1995 թ. հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրությունը ուղղակիորեն չէր կարգավորում ո՛չ ԶՈՒ-ի առաքելությունը, ո՛չ էլ դրանց կազմակերպման ու գործունեության սկզբունքները: Սակայն Սահմանադրության որդեգրած հայեցակարգները ենթադրում էին դրանց ազատական մոդելի վրա կառուցված կարգավորում, որն իրականացվում էր ընթացիկ օրենսդրության միջոցով: 2005 թ. Սահմանադրության «Սահմանադրական կարգի հիմունքները» առաջին գլխի 8.2-րդ հոդվածում կարգավորվում են ՀՀ Զինված ուժերի սահմանադրական նախանշանակումն ու գործառույթները, և դրանց կազմակերպման ու գործունեության երկու կարևոր սկզբունքները: Համաձայն Սահմանադրության այդ հոդվածի՝ «Հայաստանի Հանրապետության զինված ուժերն ապահովում են Հայաստանի Հանրապետության անվտանգությունը, պաշտպանությունը և տարածքային ամբողջականությունը, նրա սահմանների անձեռնմխելիությունը: Զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո»:

Սահմանադրության նշված հոդվածը պարունակում է երեք առանձին հիմնադրույթներ.

ա) Զինված ուժերի սահմանադրական գործառույթները,

բ) Զինված ուժերի քաղաքական չեզոքության սկզբունքը,

գ) Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքը:

ՀՀ ԶՈՒ-ի սահմանադրական գործառույթներն են՝ Հայաստանի Հանրապե-

[7] *М. В. Баглай, Б. Н. Габричидзе.* Конституционное право РФ. М., 1996, с. 42.

տության անվտանգության, պաշտպանության և տարածքային ամբողջականության, նրա սահմանների անձեռնմխելիության ապահովումը: Սահմանադրական այս դրույթի նշանակությունն այն է, որ Զինված ուժերը չեն կարող կիրառվել ուրիշ նպատակով: Դրան համապատասխան՝ մի շարք սահմանադրական այլ հոդվածներ կարգավորում են զինված ուժերի կառավարման և կիրառման հարաբերությունները: Այսպիսով՝ Սահմանադրությունը երկրի պաշտպանությունն անուղղակիորեն ճանաչում է որպես պետության կարևորագույն արտաքին գործառույթ: Այդ գործառույթը քաղաքական, դիվանագիտական, տնտեսական, ռազմական, սոցիալական, իրավական և այլ միջոցների համակարգ է, որի նպատակն է պատրաստել պետությունը պաշտպանությանը, ինչպես նաև պետության, նրա տարածքային ամբողջականության ու անձեռնմխելիության զինված պաշտպանությունը (ներառյալ՝ բուն ռազմական գործողությունները): Պաշտպանական համակարգի ձևավորման ու կայացման գործում էական դեր է խաղում պետական իշխանության ամբողջ համակարգը: Սակայն այդ համակարգում գլխավորը Զինված ուժերն են:

Սահմանադրությունը ամրագրում է Զինված ուժերի քաղաքական չեզոքության սկզբունքը: Սահմանադրական այս սկզբունքի համաձայն Զինված ուժերի պարտականությունն է՝ չմասնակցել ներքին քաղաքական պայքարին, չմիջամտել քաղաքական գործընթացներին: Միևնույն ժամանակ, պետական համապատասխան մարմինները և քաղաքական համակարգի սուբյեկտները պարտավոր են Զինված ուժերը չներքաշել քաղաքական գործընթացների մեջ: Զինված ուժերի չեզոքության սկզբունքի երաշխիքը դրանց ապաքաղաքականացումն է: Ապաքաղաքականացումը գործընթաց է և ձեռքբերում, որի նպատակն է Զինված ուժերը դուրս բերել քաղաքականության ակտիվ ներգործության շրջանակից և, ամենից առաջ, այս կամ այն կուսակցության քաղաքական ազդեցությունից: Բացի այդ, պետք է արգելվի քաղաքական կազմակերպությունների գործունեությունը և դրանց կառույցների ստեղծումը Զինված ուժերում: Զինված ուժերում և այլ զինված կազմակերպություններում պետք է արգելվի ցանկացած քաղաքական քարոզչություն, այդ թվում՝ ընտրական: Այս դրույթի երաշխիքը Սահմանադրության 28-րդ հոդվածն է, որն ամրագրում է միավորումներ կազմելու սահմանադրական իրավունքի սահմանափակման հիմքերը. «Կուսակցություններ և արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամագրվելու իրավունքներն օրենքով սահմանված կարգով կարող են սահմանափակվել զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, ինչպես նաև դատավորների և սահմանադրական դատարանի անդամի նկատմամբ»[*]: «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի

[*] Սահմանադրության 28-րդ հոդվածի 3-րդ մասը օգտագործում է «օրենքով սահմանված կարգով կարող են սահմանափակվել» արտահայտությունը. ինչը սակայն չի նշանակում, թե դա օրենսդրի հայեցողական լիազորությունն է: Սահմանադրության 28-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով միավորումներ կազմելու կամ դրանց անդամագրվելու իրավունքների սահմանափակման ոլորտների մեծ

10-րդ հոդվածի 2-րդ մասով կուսակցության անդամ չեն կարող լինել նաև ՀՀ ԶՈՒ-ի և այլ զորքերի ծառայողները[8]: Համապատասխանաբար՝ «Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքը սահմանափակում է արհեստակցական միություններին Զինված ուժերի և իրավապահ մարմինների ծառայողների՝ անդամակցելու իրավունքները: ԶՈՒ-ի քաղաքական չեզոքության սկզբունքի երաշխիք է նաև Սահմանադրության 29-րդ հոդվածի 2-րդ մասը. «Զինված ուժերում, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատախազության մարմիններում ծառայողների, ինչպես նաև դատավորների և սահմանադրական դատարանի անդամների կողմից այդ իրավունքների իրականացման սահմանափակումներ կարող են նախատեսվել միայն օրենքով»: Սահմանադրական նման կարգավորման պայմաններում ընթացիկ օրենքները զինծառայողներին արգելում են կազմակերպել հավաքներ կամ մասնակցել դրանց:

Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքը շատ կարևոր նշանակություն ունի ժողովրդավարության կայացման համար: Զինված ուժերը պետական ծառայողների՝ փակ, ստորակարգությամբ կազմակերպված և զինված ամբողջություն են: Պատմական փորձը վկայում է, որ զինված ուժերը կարիք ունեն քաղաքացիական վերահսկողության, քանի որ դրանք զենքը կարող են օգտագործել իշխանությունը նվաճելու կամ որոշակի քաղաքական ուժերի աջակցելու նպատակով:

Այսպիսով՝ արդի աշխարհում գործում է զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ազատական մոդելը, որը խարսխված է քաղաքական համակարգի սուբյեկտների և զինված ուժերի լիազորությունների խստիվ սահմանազատման վրա: Հասարակության մեջ հաստատված է փոխհամաձայնություն, ըստ որի՝ քաղաքականությունը զինվորականության զբաղմունքը չէ:

ՀՀ բարեփոխված Սահմանադրությունը, ի տարբերություն սահմանադրական կարգավորման նախորդ երկու տիպերից, հստակ և ուղղակի կերպով ամրագրում է թե՛ ԶՈՒ-ի սահմանադրական նախանշանակումը և գործառույթները, թե՛ դրանց կազմակերպման ու գործունեության երկու կարևորագույն՝ ԶՈՒ-ի քաղաքական չեզոքության ու ԶՈՒ-ի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության ժողովրդավարական սկզբունքները, ինչպես նաև դրանց բազմաթիվ երաշխիքներ՝ հանձինս մարդու իրավունքների ու ազատությունների, պաշտպանական ոլորտում պետական իշխանության մարմինների լիազորությունների:

մասը սահմանադրական անհրաժեշտություն է, որը բխում է Սահմանադրության 8.2-րդ հոդվածից (Զինված ուժերի չեզոքության սկզբունքը), իշխանությունների տարանջատման սկզբունքի անձնական առումից (տես Սահմանադրության 5-րդ հոդվածի մեկնաբանությունը (http://www.concourt.am/armenian/library/cclibrary/2010/sahmanadrakan2010.pdf)), դատախազության և դատական իշխանության անկախության սկզբունքներից և այլն:

[8] Տես «Կուսակցությունների մասին» ՀՀ 2002 թվականի հուլիսի 3-ի հմ. ՀՕ-410-Ն օրենքը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2002 թ., հմ. 34 (209)):

ТИПЫ КОНСТИТУЦИОННОГО РЕГУЛИРОВАНИЯ И КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОЕ ЗАКРЕПЛЕНИЕ ПРИНЦИПОВ ПОЛИТИЧЕСКОГО НЕЙТРАЛИТЕТА ВООРУЖЕННЫХ СИЛ И ГРАЖДАНСКОГО КОНТРОЛЯ НАД НИМИ В ТРЕХ РЕСПУБЛИКАХ АРМЕНИЯ

А. Г. ВАГАРШЯН, кандидат юридических наук, доцент, заведующий кафедрой теории и истории государства и права юридического факультета ЕГУ

РЕЗЮМЕ

В Первой Республике была установлена либеральная модель статуса ВС и гражданского контроля над ними. Но эта модель имела не конституционное, а только текущее законодательное регулирование. Принципы политического нейтралитета ВС и гражданского контроля над ними не имели прямого законодательного закрепления, однако они были претворены в механизме правового регулирования. Особо и довольно жестко была закреплена одна из гарантий политического нейтралитета ВС: военнослужащие были лишены избирательных прав.

Конституционное развитие Второй Республики отражает установление тоталитарного конституционно-правового регулирования и его существование в разных модификациях. В системе диктатуры пролетариата руководящая роль партии исключала разделение властей. Для советской доктрины политический нейтралитет ВС и гражданский контроль над ними не являлись конституционно-правовой проблемой. В этой системе ВС не могли быть политически нейтральными, поскольку они выполняли роль «вооруженной охраны» партии—руководящей и направляющей силы общества. Правовым последствием такого подхода было отсутствие конституционного регулирования статуса ВС, их назначения, принципов организации и деятельности. Советские конституции третьего поколения (1970-ые годы) закрепили назначение ВС и соответствующие им некоторые нормы, однако и на этом этапе принципы политического нейтралитета ВС и гражданского контроля над ними не стали предметом конституционного регулирования, поскольку сохранился подход к этим принципам с «позиций диктатуры пролетариата».

Конституция Третьей Республики 1995 г. хотя прямым образом не регулировала назначение ВС, принципы их организации и деятельности, однако заложенные в основу Конституции концепты подразумевали их регулирование на основе либеральной модели, что осуществлялось текущим законодательством. Реформированная в 2005 г. Конституция уже прямо и четко закрепила назначение ВС (посредством указания их функций) и два важных принципа организации и деятельности ВС: политический нейтралитет и гражданский контроль, а также многие гарантии этих принципов, среди которых важное значение имеют права и свободы личности и полномочия органов государственной власти в области обороны.

THE TYPES OF CONSTITUTIONAL REGULATION AND CONSTITUTIONAL LEGITIMATION OF THE PRINCIPLES OF POLITICAL NEUTRALITY OF THE ARMED FORCES AND CIVILIAN CONTROL OVER THEM IN THE THREE REPUBLICS OF ARMENIA

A. G. VAGHARSHYAN, PhD in Law, Associate Professor, Head of the Chair of Theory and History of State and Law of the Faculty of Law, YSU

SUMMARY

The liberal model of the status of the Armed Forces and civilian control over them was established in the First Republic. However, this mode had not constitutional but merely current legislative regulation. The principles of political neutrality of the Armed Forces and civilian control over them didn't have direct legislative consolidation, however, they were implemented in the mechanism of legal regulation. One of the guarantees of political neutrality of the Armed Forces was specially and rather toughly consolidated: servicemen were disfranchised.

Constitutional development of the Second Republic reflects the establishment of totalitarian constitutional-legal regulation and its existence in different modifications. The leading role of the Party ruled out the separation of powers in the system of the dictatorship of the proletariat. The political neutrality of the Armed Forces and civilian control over them were not a constitutional-legal problem for the Soviet Doctrine. In this system the Armed Forces could not be politically neutral as they served as the «armed escort» of the Party—leading and guiding the power of society. The lack of constitutional regulation of the status of the Armed Forces, their purpose, the principles of organization and activity was the legal consequence of such an approach. The Soviet Constitutions of the third generation (the 1970s) consolidated the purpose of the Armed Forces and some norms compliant with them, but the principles of political neutrality of the Armed Forces and civilian control over them didn't become a matter of constitutional regulation at that stage. This was accounted for by the fact that the approach to those principles from «the positions of the dictatorship of the proletariat» had been preserved.

Though the Constitution of the Third Republic of 1995 didn't directly regulate the purpose of the Armed Forces, the principles of their organization and activity, the concepts underlying the Constitution assumed their regulation on the basis of the liberal model. That was implemented by the current legislation. The Constitution reformed in 2005 directly and explicitly fixed the purpose of the Armed Forces (through indicating their functions) and two important principles of organization and activity of the Armed Forces: the political neutrality and civilian control, as well as many guarantees of these principles. Among them the rights and freedoms of an individual and the authority of the state bodies in the defense sphere have an important significance.

ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՈՒՄԸ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վ. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ, ՀՀ ՊՆ պաշտպանական քաղաքականության վարչության միջազգային պայմանագրահիրավական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ

Հանրային կառավարման ոլորտի[*] ցանկացած ճյուղում օրինականության ապահովման կարևորագույն երաշխիքներից է վերահսկողությունը:

Ի տարբերություն հսկողությունից, որն իրականացվում է անմիջականորեն կառավարման գործընթացում և, որպես կանոն, հենց կառավարման համակարգի ներսում, վերահսկողությունը օրինականության արտաքին ապահովման համակարգ է:

Վերահսկողության համակարգի արդյունավետ գործունեության կարևոր նախապայմաններն են հանրային կառավարման համակարգում երկու հիմնարար՝ թափանցիկության և հաշվետու լինելու սկզբունքների ամրագրումը:

Ամենաարդիական ձևով թափանցիկությունը բնութագրվում է որպես մի իրավիճակ, երբ քաղաքացին, հասարակական կազմակերպությունները և քաղաքացիական հասարակության այլ հաստատություններ կարող են անհրաժեշտ տեղեկությունն ստանալ այն անմիջականորեն տնօրինող մարմնից՝ առանց որևէ այլ միջոցի դիմելու[1]:

Հաշվետու լինելը բնութագրվում է այնպիսի հասկացություններով, ինչպիսիք են պատասխանատվությունը, մեղադրանք ներկայացնելը և այլն:

Հանրային կառավարման ոլորտում թափանցիկության և հաշվետու լինելու սկզբունքների նպատակային շահառուն ի վերջո ժողովուրդն է: Այդ երկու սկզբունքներն ըստ էության կոչված են ապահովելու ժողովրդի, նրա յուրաքանչյուր ներկայացուցչի մասնակցությունը հանրային կառավարման գործընթացին:

Հանրային կառավարման ցանկացած փուլում թափանցիկությունը և հաշվետու լինելը զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության անհրաժեշտ նախադրյալներ են:

Ժողովրդավարական վերահսկողությունը՝ որպես զինված ուժերում օրինականության ապահովման միջոց, էականորեն տարբերվում է վարչական հսկողությունից և պետական վերահսկողությունից:

[*] Հանրային կառավարումը ներառում է պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման ոլորտները:

[1] Տես «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի և դրան կից արձանագրությունների մեկնաբանություն»: Ե., 2003, էջ 158:

Վարչական հսկողությունը[2] հանրային կառավարման մի մասն է և կոչված է ապահովելու կառավարման իրականացումը: Այդ է պատճառը, որ հսկողություն իրականացնող մարմինները գործում են հանրային կառավարման մարմնի համակարգում: Մինչդեռ պետական վերահսկողությունը դուրս է պետական կառավարման կոնկրետ մարմնի համակարգից և իրականացվում է անկախ պետական մարմինների կողմից:

Խորհրդային Միությունում իրականացվող պետական վերահսկողությունը բնույթով ժողովրդավարական չէր, քանի որ այն իրականացնում էին իշխող կուսակցական մարմինները, ինչը բացառում էր որևէ ժողովրդավարական տարրի առկայությունը: Այդ վերահսկողությունն իրականացվում էր հասարակության լայն շերտերի ճնշման ներգրավմամբ, սակայն դրա իրական նպատակը կուսակցության կամքի կատարման ստուգումն էր:

Խորհրդային Միության փլուզումից հետո հետխորհրդային պետությունները, բռնելով ժողովրդավարացման ուղին, կանգնեցին նաև զինված ուժերի նկատմամբ անհրաժեշտ ժողովրդավարական վերահսկողության մեխանիզմ ստեղծելու հրամայականի առջև: Պետք է նշել, որ խորհրդային պետությունում ևս գոյություն ուներ Զինված ուժերի նկատմամբ վերահսկողության համակարգ, որը գործում էր բավականին արդյունավետ կերպով: Վերահսկողության սուբյեկտը կոմունիստական կուսակցությունն էր, որն ապահովում էր զինված ուժերի կողմից կուսակցության կամքի կատարումը: Այդ վերահսկողությունը բնույթով քաղաքացիական էր, սակայն ժողովրդավարական չէր, քանի որ կոմունիստական ամբողջատիրական վարչակարգում թափանցիկության ու հասարակությանը հաշվետու լինելու սկզբունքներն զգալի չափով ձևական բնույթ էին կրում:

Այդ համակարգի փլուզումից հետո փաստորեն ստեղծվեց մի իրավիճակ, երբ նախկին խորհրդային հասարակարգի բաղկացուցիչ մաս կազմող ամբողջական կուսակցական վերահսկողության վերացումից հետո չստեղծվեց ժողովրդավարական վերահսկողության հաստատությունների արդյունավետ գործունեությունն ապահովող համակարգ: Ընդ որում, պրոբլեմը հնարավոր չէ լուծել միայն որոշակի օրենքների ընդունմամբ կամ որոշակի հաստատությունների ստեղծմամբ: Անհրաժեշտ են համակարգային մոտեցում և դրան համապատասխան՝ օրենսդրական միջոցառումների և կոնկրետ գործողությունների համալիր իրականացում:

Ընդհանուր առմամբ կարող ենք ասել, որ նախկին սոցիալիստական ճամբարի բոլոր պետություններում առկա դժվարությունները գրեթե նույնաբնույթ են: Դրանցում զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության կայացմանը խոչընդոտում են՝

– պաշտպանական գործընթացների պատշաճ լուսաբանում և դրանց մասնագիտական վերլուծություններ չլինելը,

[2] Կառավարման տեսության մեջ հսկողությունը բնութագրվում է որպես կառավարման գործառույթ, կառավարման գործընթացի բաղկացուցիչ մաս (տես *Г. В. Атаманчук.* Теория государственного управления. М., 2004, сс. 57—63):

– քաղաքացիական հասարակության հաստատությունների (հասարակական կազմակերպություններ, ԶԼՄ-ներ) ոչ ակտիվ ներգրավվածությունը զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության գործում,

– բնակչության իրավագիտակցության ոչ պատշաճ մակարդակը:

Կարող ենք վստահորեն ասել, որ այդ պետություններում ժողովրդավարական վերահսկողության արդյունավետ համակարգի ստեղծումը առաջին հերթին պայմանավորված է վերը նշված խնդիրների լուծմամբ:

Չմանրամասնելով այլ պետություններում ժողովրդավարական վերահսկողության համակարգի կայացման գործընթացները՝ արձանագրենք, որ հետխորհրդային պետությունների շարքում զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության օրենսդրական կարգավորման առումով նշանակալի առաջընթաց է դիտվում ՈՒկրաինայում: ՈՒկրաինայի Գերագույն ռադան 2003 թ. ընդունել է «Պետության ռազմական կառույցի և իրավապահ մարմինների նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության մասին» օրենք, որով համակարգված կերպով կարգավորվում են ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության հարաբերությունները[3]:

Նման օրենքի ընդունման փորձ երկու անգամ արվել է նաև Ռուսաստանի Դաշնությունում, սակայն օրինագծի թերությունների, մեծ թվով չհիմնավորված դրույթների նախատեսման, ինչպես նաև Դաշնային Ժողովի ու Դաշնային կառավարության բացասական վերաբերմունքի պատճառով այդ օրինագծի ընդունման գործընթացը կասեցվել է[*]:

Հայաստանի Հանրապետությունում Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության տարրերի օրենսդրական պրոբլեմների մասին խոսելուց առաջ նպատակահարմար է պարզաբանել «զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողություն» հասկացությունը:

Ըստ ընդունված տեսակետի՝ զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությունը այնպիսի վիճակ է, որի պարագայում քաղաքացիական հասարակության գրեթե բոլոր տարրերը (հասարակական կազմակերպություններ, լրատվամիջոցներ, կուսակցություններ, արհմիություններ և այլն), ինչպես նաև ժողովրդավարական ճանապարհով ձևավորված այլ հաստատություններ (պետության խորհրդարանը, մարդու իրավունքների պաշտպանը և այլն) կարող են ցանկացած պահի տեղեկանալ զինված ուժերի գործունեության տարբեր ոլորտներում տիրող իրավիճակի մասին, ինչպես նաև, անհրաժեշտության դեպ-

[3] Տես «Закон Украины от 19 июля 2003 г. № 975-IV «О демократическом гражданском контроле над военной организацией и правоохранительными органами государства»»:

[*] Մեր կարծիքով՝ զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության ոլորտը կարգավորելու նպատակով առանձին օրենքի ընդունումը նպատակահարմար չէ և՛ տեսական, և՛ գործնական առումներով, քանի որ այն պարունակելու է տարբեր ոլորտների ու տարբեր բնույթի՝ ինչպես նյութական, այնպես էլ ընթացակարգային, հարաբերություններ կարգավորող նորմեր:

քում, պետական մարմինների ուշադրությունը հրավիրել այդ ոլորտներում առկա բացասական երևույթների վրա:

Ժողովրդավարական վերահսկողության գործընթացում ընդգրկվում են ոչ միայն հանրային կառավարման մարմինները, այլև քաղաքացիական հասարակության բոլոր տարրերը: Ընդ որում, փորձը ցույց է տալիս, որ քաղաքացիական հասարակության տարրերի ակտիվ ներգրավումն է ապահովում ժողովրդավարական վերահսկողության արդյունավետությունը:

Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության համակարգի իրավական ամրագրումը, ըստ էության, հանգում է այդ վերահսկողության համար անհրաժեշտ տարրերը օրենսդրական համակարգում ամրագրելուն, ինչը ներառում է՝

– թափանցիկության և հաշվետու լինելու սկզբունքների, ինչպես նաև դրանց գործնական կիրառման համար անհրաժեշտ այլ նորմերի օրենսդրական ամրագրումը,

– քաղաքացիական հասարակության տարրերի ակտիվ ներգրավվածությունն ապահովող նորմերի օրենսդրական ամրագրումը,

– հանրային կառավարման մարմինների գործուն լիազորությունների օրենսդրական ամրագրումը:

Հայաստանի Հանրապետությունում Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության համակարգի ստեղծումն անցել է զարգացման որոշակի ուղի: Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ ժողովրդավարական վերահսկողությանը վերաբերող առաջին նորմերի կարելի է հանդիպել դեռ «ՀՀ Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագրքում», որտեղ, մասնավորապես, սահմանվում է, որ հրամանատարը պարտավոր է կատարելագործել իր անձնական մասնագիտական պատրաստությունը և զորամասի ղեկավարման մեթոդները, իրեն տրված իրավունքների սահմաններում գործել ինքնուրույնաբար, միևնույն ժամանակ՝ պետական իշխանության և կառավարման մարմինների, հասարակական միավորումների, ձեռնարկությունների և կոլեկտիվների, պատերազմի և զինված ուժերի վետերանների հետ սերտ կապի մեջ, ինչպես նաև ամեն կերպ ամրապնդել միանձնյա ղեկավարությունը՝ հենվելով սպայական ժողովի, զորամասի հասարակական կազմակերպությունների վրա, նրանց հետ համագործակցությամբ անձնակազմի ջանքերն ուղղել առաջադրված խնդիրների ակտիվ ու ստեղծագործական լուծմանը[4]: Մի շարք այլ դրույթներ հրամանատարներին պարտավորեցնում են զորամասի ղեկավարման ժամանակ հաշվի առնել հասարակական կազմակերպությունների կարծիքը, ապահովել զինծառայողների շփումն իրենց ընտանիքների անդամների և հասարակական կազմակերպությունների հետ և այլն:

Դրա հետ մեկտեղ, հարկ է նշել, որ մեր իրականության մեջ այս նորմերը ոչ

[4] Տես «ՀՀ Զինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ 1996 թվականի դեկտեմբերի 3-ի հմ. ՀՕ-99 օրենք, 89-րդ հոդված («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 1997 թ., հմ. 1):

միշտ են իրականացվում լիարժեք կերպով: Մասնավորապես՝ «ՀՀ ՁՈՒ կարգապահական կանոնադրությամբ» նախատեսված քաղաքացիական ժողովրդավարական վերահսկողության մեկ այլ հնարավորություն՝ պետական մարմինների կամ հրամանատարի գործողությունները դատական կարգով բողոքարկելու զինծառայողի իրավունքը, գործնականում չի կիրառվել. այն ընդամենը նշված է Կանոնադրության հինգերորդ գլխում: Կանոնադրությունն այդ իրավունքի իրականացման որևէ մեխանիզմ չի բովանդակում:

Բացի նշվածներից, Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության տարրեր կարելի է համարել Խորհրդարանի կողմից բյուջեի հաստատումը, ռազմական բնույթի միջազգային պայմանագրերի վավերացումը և այլն:

Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողություն սահմանելու առաջին քայլը պաշտպանության նախարարի պաշտոնը քաղաքական պաշտոնների ցանկում ընդգրկելն էր, ինչի հետևանքով պաշտպանության նախարար նշանակվեց արդեն քաղաքացիական անձ:

Այս ուղղությամբ հաջորդ կարևորագույն քայլը ՀՀ Սահմանադրության 8.2-րդ հոդվածն էր, համաձայն որի՝ Զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության[*] ներքո: Այս դրույթը թերևս պետք է հիմք դառնա պետությունում Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության ամբողջ համակարգի կառուցման համար:

Պետք է նշել, սակայն, որ այս սահմանադրական նորմը ամբողջությամբ չի արտացոլում զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությանը ներկայացվող բոլոր պահանջները: Մեր կարծիքով՝ այստեղ ամենավիճահարույց հարցն այն է, թե ի՛նչ պետք է հասկանալ «զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն» ասելով: Ամբողջ աշխարհում այսօր կիրառվում է «զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողություն» ձևակերպումը: Օրինակ կարող է ծառայել ԽՍՀՄ-ը, որտեղ իրականացվող վերահսկողությունը թեև քաղաքացիական էր, սակայն ժողովրդավարական չէր:

Զինված ուժերի գործունեության նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքն ամրագրվեց նաև 2008 թվականին ընդունված «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածում: Զինված ուժերի գործունեության նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությանը վերաբերող նորմեր են պարունակում մի շարք այլ իրավական ակտեր ևս: Դրանցից են ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգը, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը և այլն:

Այդուհանդերձ, գործող օրենսդրությունը դեռևս ոչ բավարար չափով է զարգացած Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության ամ-

[*] Ինչպես արդեն նշվեց, Սահմանադրությունում միայն «քաղաքացիական վերահսկողություն» տերմինի օգտագործումն այնքան էլ ճիշտ չէ, քանի որ քաղաքացիական վերահսկողությունն առանց ժողովրդավարական վերահսկողության թերի է:

բողջականությունը լիարժեք կերպով ապահովելու համար: Հատկապես ակներև են Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտի որոշ պրոբլեմներ: Որպես օրինակ՝ ՀՀ Կառավարության 1996 թվականի օգոստոսի 12-ի հմ. 247 որոշմամբ հաստատված ՀՀ ԶՈՒ-ի կարգապահական կանոնադրության կիրառելիության իրավաչափության պրոբլեմը դիտարկենք Սահմանադրության պահանջների և մարդու իրավունքների ու ազատությունների վերաբերյալ միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի հետ համապատասխանության տեսակետից:

Ընդ որում, պրոբլեմն ունի երկու կողմ: Առաջինը ՀՀ ԶՈՒ-ի կարգապահական կանոնադրությունը որպես իրավական ակտ ճանաչելու հարցն է, երկրորդը՝ դրանով սահմանված կարգով որոշ կատեգորիայի զինծառայողներին հրամանատարների իշխանությամբ կարգապահական մեկուսարանում մեկուսացնելու և պահելու ձևով տույժ նախատեսող նորմերի կիրառելիության իրավաչափությունն է:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային (այսուհետև՝ Կոնվենցիա) միանալիս Հայաստանի Հանրապետությունն արել է հետևյալ վերապահումը.

«Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 3-րդ կետի դրույթները չեն ազդում Հայաստանի Հանրապետության Կառավարության 1996 թվականի օգոստոսի 12-ի թիվ 247 որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կարգապահական կանոնադրության գործողության վրա, համաձայն որի՝ մեկուսացումը և պահումը կարգապահական մեկուսարանում որպես կարգապահական տույժ կարող է կիրառվել.

– ժամկետային ծառայության զինվորների և սերժանտների նկատմամբ՝ մինչև 10 օր ժամկետով (համապատասխանաբար 54-րդ կետի «ե» ենթակետ և 55-րդ կետի «դ» ենթակետ).

– պայմանագրով զինվորական ծառայության ընդունված զինվորների և սերժանտների նկատմամբ՝ մինչև 7 օր ժամկետով (համապատասխանաբար 54-րդ կետի «ե» և 56-րդ կետի «գ» ենթակետ).

– ենթասպաների նկատմամբ՝ մինչև 7 օր ժամկետով (60-րդ կետի «գ» ենթակետ).

– սպաների նկատմամբ՝ մինչև 5 օր ժամկետով (74-րդ կետի «գ» ենթակետ)»[5]:

2007 թ. սահմանադրական բարեփոխումներով ՀՀ Սահմանադրության մեջ նախատեսվեց նոր բովանդակությամբ հոդված, համաձայն որի՝ բացառապես ՀՀ օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրա-

[5] ««Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան, դրան կից 1952 թվականի մարտի 20-ին Փարիզ քաղաքում ստորագրված արձանագրությունը, 1963 թվականի սեպտեմբերի 16-ին Ստրասբուրգ քաղաքում ստորագրված թիվ 4 արձանագրությունը և 1984 թվականի նոյեմբերի 22-ին Ստրասբուրգ քաղաքում ստորագրված թիվ 7 արձանագրությունը վավերացնելու մասին» ՀՀ Ազգային ժողովի 2002 թ. մարտի 20-ի հմ. Ն-264-2 որոշումը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2002 թ., հմ. 12 (187)):

վունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ինչպես նաև պատասխանատվության տեսակները, չափերը, պատասխանատվության ենթարկելու կարգը, հարկադրանքի միջոցներն ու դրանք կիրառելու կարգը[6]: Մինչդեռ ՀՀ ԶՈՒ-ի կարգապահական կանոնադրությունը հաստատվել է ՀՀ Կառավարության որոշմամբ:

Սահմանադրական բարեփոխումներից հետո, երբ Կոնվենցիայի 5-րդ հոդվածը ամբողջությամբ արտացոլվեց Սահմանադրության մեջ, ըստ որի՝ պատասխանատվության միջոցների սահմանումը հնարավոր է բացառապես օրենքով, կարգապահական կանոնադրության համապատասխանեցումը Սահմանադրությանն արդեն դարձավ հրատապ խնդիր: Այդ նպատակով ՀՀ պաշտպանության նախարարությունը ներկայումս մշակել և շրջանառության մեջ է դրել ՀՀ Զինված ուժերի կարգապահական ոլորտը կանոնակարգող օրենքի նախագիծ:

ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Օրենքը կարող է նախատեսել ազատությունից զրկում միայն Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում:

Դեպքերի վերլուծությունից պարզ է դառնում, որ ազատությունից զրկելը (որպես պատիժ) կարող է կիրառել միայն դատարանը: Բոլոր մնացած դեպքերում նպատակը պետք է լինի դատարանի կողմից պատժի նշանակման կամ հարկադրանքի այլ միջոցի կիրառման ապահովումը:

Պետք է նշել, որ զինծառայողներին հրամանատարների իշխանությամբ կարգապահական վարույթի կարգով ազատությունից զրկելու դեպքերին վերաբերող գործեր գոյություն ունեն նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների եվրոպական դատարանի պրակտիկայում: Մասնավորապես՝ «Էնգելը և այլոք ընդդեմ Նիդեռլանդների» գործով դիմող Էնգելը, Վան դեր Վիելը, Յան դը Վիտը, Յոհաննես Դոնը և Վիլհելմ Շուլը պնդում էին, որ կարգապահական պատիժը և իրենց նկատմամբ կիրառված հարկադրական միջոցը հակասում են Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետին:

Այդ գործով վճռի մեջ նշվում է, որ Կոնվենցիայի նախապատրաստման և ընդունման ժամանակ մասնակից պետությունների մեծամասնությունն իրենց զինված ուժերի համակարգում ունեին համապատասխան զինվորական կարգապահական գումարտակներ, որտեղ կարող էին զինծառայողների որոշ իրավունքներ և ազատություններ սահմանափակվել, ինչը չէր կարող կիրառվել քաղաքացիական անձանց նկատմամբ: Հետևաբար, այդպիսի համակարգի առկայությունը ինքնըստինքյան չէր հակասում նրանց պարտավորություններին:

Քննության առարկա գործով Դատարանը վճռեց.

– զինվորական կարգապահությունը, այդուհանդերձ, 5-րդ հոդվածի 1-ին կետի կիրառման ոլորտից դուրս չէ: Այդ տեքստը պետք է դիտվի Կոնվենցիայի 1-ին

[6] Տես «ՀՀ Սահմանադրություն», 83.5-րդ հոդված: Ե., 2005:

և 14-րդ հոդվածների լույսի ներքո, դրանում նշված ազատությունից զրկելու դեպքերի ցանկն սպառիչ է: Հետևաբար, կարգապահական պատիժը կամ միջոցը կարող է համարվել 5-րդ հոդվածի 1-ին կետի խախտում,

– որոշելու համար, թե արդյոք որևէ մեկը 5-րդ հոդվածի իմաստով «զրկվել է ազատությունից», մեկնակետ պետք է լինի կոնկրետ իրադրությունը: Զինվորական ծառայությունն այն տեսքով, որը գոյություն ունի մասնակից պետություններում, ոչ մի դեպքում Կոնվենցիայի իմաստով ազատությունից զրկում չէ, և դա հատուկ նշված է 4. 3 բ) կետում: Զինծառայողների տեղաշարժի ազատության իրավունքի բավականին լայն սահմանափակումները պայմանավորված են զինվորական ծառայության հատուկ պահանջներով. դրան ուղեկցող մյուս սահմանափակումների վրա 5-րդ հոդվածի գործողությունը չի տարածվում,

– յուրաքանչյուր մասնակից պետություն լիազորված է սահմանելու զինվորական կարգապահության իր համակարգը և այդ հարցում օգտվում է հայեցողական ազատությունից: Շրջանակները, որոնցից մասնակից պետությունը չի կարող դուրս գալ, ինչպես այդ պահանջում է Կոնվենցիայի 5-րդ հոդվածը, զինծառայողների և քաղաքացիական անձանց համար միատեսակ չեն: Կարգապահական պատիժը կամ միջոցը, որոնք կարող են համարվել ազատությունից զրկում, քաղաքացիական անձի նկատմամբ կիրառելու դեպքում կարող են չունենալ նույն բնույթը, ինչն ունեն զինծառայողի նկատմամբ կիրառելիս: Այդուհանդերձ, վերջին դեպքում նույնպես 5-րդ հոդվածը կարող է կիրառվել, երբ դրանք վերածվում են այնպիսի սահմանափակումների, որոնք ակնհայտորեն շեղվում են մասնակից պետություններում զինված ուժերի սովորական կենսապայմաններից: Դատարանի մոտեցմամբ, որպեսզի որոշվի, թե արդյոք դա իսկապես այդպես է, անհրաժեշտ է ուշադրություն դարձնել գործոնների մի ամբողջ շարքի վրա, ինչպիսիք են տվյալ պատժի կամ կարգապահական միջոցի բնույթը, երկարատևությունը, հետևանքները և ազատազրկման եղանակը:

Այսպիսով՝ միայն դատարանը կարող է անձի նկատմամբ ազատազրկման ձևով պատիժ նշանակել ու կիրառել, մինչդեռ ՀՀ ԶՈՒ-ի կարգապահական կանոնադրության համաձայն՝ դա արվում է հրամանատարների իշխանությամբ:

Հրամանատարի կողմից անձի ազատության սահմանափակումը հակասում է նաև ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածին, որի համաձայն՝ պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությամբ նախատեսված մարմինների միջոցով: Որևէ կասկած չկա, որ անձին ազատությունից զրկելը պետական իշխանության իրականացման ձև է: Ուստի դա պետք է արվի միայն Սահմանադրությամբ նախատեսված մարմինների, տվյալ դեպքում՝ դատարանի միջոցով:

Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ միայն կարգապահական նոր կանոնադրության ընդունմամբ չի լուծվի ժողովրդավարական վերահսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ իրավական բազայի ապահովման խնդիրը: Փոփոխություններ են պահանջվում բազմաթիվ այլ օրենքներում, որոնք թեև չեն պարունակում մարդու իրավունքների ոտնահարման անմիջական հնարավո-

րություն նախատեսող նորմեր, սակայն չունեն նաև այդ իրավունքների պաշտպանության և Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության իրականացման բավարար մեխանիզմներ: Այդպիսիք են, մասնավորապես, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքը, դատավարական օրենսգրքերը և այլն:

Փաստորեն, ժողովրդավարական վերահսկողության ոլորտը պետք է կարգավորվի դրան վերաբերող բոլոր իրավական ակտերի զուգահեռ բարեփոխման միջոցով:

ПРАВОВОЕ ЗАКРЕПЛЕНИЕ ДЕМОКРАТИЧЕСКОГО КОНТРОЛЯ НАД ВООРУЖЕННЫМИ СИЛАМИ В ЗАКОНОДАТЕЛЬСТВЕ РА

В. А. ХАЧАТРЯН, соискатель кафедры конституционного права юридического факультета ЕГУ, главный специалист отдела международного договорно-правового обеспечения Управления оборонной политики МО РА

РЕЗЮМЕ

В статье анализируются особенности контроля как внешней функции в системе государственного управления и местного самоуправления (в отличие от надзора, который является внутренней функцией управления).

Результаты исследования проблем в области контроля над вооруженными силами в постсоциалистических государствах позволяют сделать вывод о том, что практически во всех этих государствах проблемы в данной сфере имеют одинаковые по характеру причины. Автор в качестве решения указанных проблем считает правовое закрепление в законодательстве РА системы демократического контроля над вооруженными силами с соблюдением принципов транспарентности и отчетности, а также необходимых для их осуществления норм, в том числе норм, обеспечивающих активное участие элементов гражданского общества в процессе контроля.

В контексте вышеуказанного проводится исторический, компаративный и практический анализ становления и развития законодательной базы демократического контроля над Вооруженными силами в РА.

THE LEGITIMATION OF THE DEMOCRATIC CONTROL OVER THE ARMED FORCES IN THE RA LEGISLATION

V. A. KHACHATRYAN, Applicant at the Chair of Constitutional Law of the Faculty of Law, YSU, Senior Specialist of the Treaty Legal Support Desk at the Defense Policy Department of the MOD, RA

SUMMARY

The article analyzes the features of control as an external function in the system of public administration and local self-government (as opposed to the supervision which is an internal management function).

The results of studying the problems in the field of control over the Armed Forces in post-socialist countries enable us to draw the conclusion that the problems in this sphere have the same causes in nature virtually in all these states. The author regards the legitimation of the system of democratic control over the Armed Forces in the RA legistation as the solution to the mentioned problems. He finds it possible with adherence to the principles of transparency and accountability, as well as to the norms necessary for implementing them, including those ensuring an active participation of elements of civil society in the process of control.

The historical, comparative and practical analysis of the establishment and development of the legislative basis of democratic control over the Armed Forces in the Republic of Armenia is being conducted in the context of the above mentioned.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Հ. Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, մանկավարժական գիտությունների թեկնածու, ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահ

Ժողովրդավարական իրավական պետություններում կարևոր տեղ է գրավում զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական, այդ թվում՝ խորհրդարանական, վերահսկողությունը: Այն բխում է նաև վավերացված միջազգային պայմանագրերի շրջանակներում Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորություններից: Խորհրդարանական վերահսկողության ոլորտում կարևոր դերակատարություն ունեն Հայաստան–ՆԱՏՕ հարաբերությունների շրջանակներում ՀՀ ստանձնած պարտավորությունները: Հայաստանը որդեգրել է եվրոպական զարգացման ուղին, ուստի Եվրոպայի անվտանգությունն ապահովող հիմնական կառույցներից մեկի՝ ՆԱՏՕ-ի հետ հարաբերությունների զարգացումը և ամրապնդումը հետապնդում են ոչ թե որոշակի քաղաքական նպատակներ, այլ ձևավորվում են բնականորեն՝ եվրոպական ինտեգրային գործընթացներին զուգընթաց: ՀՀ–ՆԱՏՕ Անհատական գործընկերության գործողությունների ծրագիրը (ԱԳԳԾ) ընդունվել է 2005 թ. և մինչև 2015 թ. լինելու է մեր հարաբերությունների զարգացման ուղեցույցը: Այդ հարաբերությունների նորմալ ընթացքը և մեզ վրա վերցված պարտավորությունների կատարումը հնարավորություն են ընձեռում, որ մենք մեր պաշտպանության և անվտանգության համակարգերում կատարենք լուրջ բարեփոխումներ:

Հայաստան–ՆԱՏՕ ԱԳԳԾ շրջանակներում Հայաստանի Հանրապետության պարտավորություններից է ընդլայնել հասարակության իրազեկումը պաշտպանական անվտանգության համակարգերում իրականացվող բարեփոխումների վերաբերյալ: Դրա վառ ապացույցներից է նաև այդ շրջանակներում գործող ՀՀ միջգերատեսչական հանձնաժողովի կողմից մշակված և ՀՀ Նախագահի հրամանագրով 2007 թ. հաստատված «Ազգային անվտանգության ռազմավարությունը», մի փաստաթուղթ, որը բազմիցս ներկայացվել է քաղաքացիական հասարակության լայն շրջաններին, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողովի աշխատանքային քննարկմանը*: Ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները քննարկվել և մեծ մասամբ ընդունվել են միջգերատեսչական հանձնաժողովի կողմից:

---

* Հեղինակը, լինելով ՀՀ ԱԺ-ի պատգամավոր, ներգրավված է եղել այդ հանձնաժողովի կազմում:

Պաշտպանական անվտանգության առնչվող օրինագծերը ԱԳԳԾ շրջանակներում աշխատանքային քննարկումների փուլում են կամ արդեն ընդունվել են: Դրանցից հատկապես կարելի է նշել Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողությանը վերաբերող՝ «Քաղաքացիական ծառայողի ինստիտուտի ներդրումը պաշտպանական ոլորտում» և «Պաշտպանության ոլորտում մարդու իրավունքների պաշտպանի գործառույթները» թեմաներով քննարկումները: Բնականաբար, այս ոլորտին առնչվող օրինագծերի ընդունման հետ կապված՝ հանճնաժողովը աշխատանքային քննարկումներ է կազմակերպում պաշտպանության նախարարության ներկայացուցիչների և մասնագետների հետ:

Կցանկանայի նշել, որ ԱՊՀ մասնակից պետությունների համար ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի 18-րդ նստաշրջանում որպես կողմնորոշիչ փաստաթուղթ ընդունվել է «Զինվորական կազմակերպությունների նպատմամբ խորհրդարանական վերահսկողության մասին» մոդելային օրենքի նախագիծը:

Պաշտպանության ոլորտի արդյունավետ խորհրդարանական վերահսկողության պայմանները հետևյալն են.

- հստակ ձևակերպված սահմանադրաիրավական լիազորություններ,
- սովորույթներ,
- ռեսուրսներ, գիտելիքներ և փորձ,
- քաղաքական կամք:

Ընդհանրապես, պաշտպանության ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողությունը միջազգային փորձի առումով կարելի է բաժանել երկու մասի՝ անմիջական (Սահմանադրությամբ և օրենքներով հստակորեն սահմանված վերահսկողական լիազորություններ, պաշտպանական ոլորտի խորհրդարանական հատուկ հետաքննություն, զինված ուժերում նշանակումների կատարում և այլն) և միջնորդավորված (օրենքների ընդունում, միջազգային պայմանագրերի վավերացում և այլն): Հայաստանի Հանրապետությունում պաշտպանության ոլորտի նկատմամբ խորհրդարանի լիազորություններն զգալի չափով սահմանափակված են:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 62-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ նրա մարմինների ձևավորման և գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքով:

ՀՀ Սահմանադրության 77-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովը վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացվող փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ: Ազգային ժողովը Վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ քննարկում և հաստատում է պետական բյուջեի կատարման մասին տարեկան հաշվետվությունը:

Հայաստանի Հանրապետությունում պաշտպանության ոլորտի նկատմամբ վերահսկողությունը դրսևորվում է հետևյալ գործառույթներով:

Օրենքների ընդունում, օրենսդրական նախաձեռնությունների ներկայացում: Ազգային ժողովն օրենքների ընդունմամբ սահմանում է համապատասխան ոլորտների կառավարման հիմնարար սկզբունքները՝ դրանով իսկ կանխորոշելով դրանց զարգացումը, ապահովում է տվյալ բնագավառում տարբեր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, քաղաքացիների ու կազմակերպությունների գործունեության համակարգվածությունը:

Խորհրդարանը, օրենքներ ընդունելու միջոցով կանոնակարգելով Զինված ուժերի գործունեությունը, միջնորդավորված ձևով ազդում է ոչ միայն Զինված ուժերի կառավարման կազմակերպման, այլև դրանց ամենօրյա ծառայության գործընթացի վրա:

Միջազգային պայմանագրերի վավերացում: ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովը Հայաստանի Հանրապետության Նախագահի առաջարկությամբ վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում ՀՀ միջազգային պայմանագրերը: Ազգային ժողովի վավերացմանը ենթակա միջազգային ակտերի շարքում թվարկված են նաև քաղաքական կամ ռազմական բնույթ ունեցող միջազգային պայմանագրերը:

Պետական բյուջեի և դրա կատարման վերաբերյալ հաշվետվության հաստատում: Բյուջեի նախագծի նախնական քննարկումները տեղի են ունենում առանձին մշտական հանձնաժողովների և դրանց համատեղ նիստերում, որոնց սահմանված կարգով մասնակցում են նաև վարչապետի լիազորած անձինք: Բյուջեի նախագծի՝ պետական և ծառայողական գաղտնիք պարունակող ծախսային հոդվածներին վերաբերող օրենսդրությամբ նախատեսված փակ ծրարի նյութերը քննարկվում են պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի ու ֆինանսավարկային, բյուջետային և տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ դռնփակ նիստում: Ազգային ժողովը բյուջեի կատարման նկատմամբ իր վերահսկողությունն իրականացնում է Վերահսկիչ պալատի միջոցով:

Հարցեր և հարցապնդումներ: Հարցերի և հարցապնդումների սահմանակարգը (ինստիտուտ) Հայաստանի Հանրապետությունում խորհրդարանական վերահսկողության կարևոր լիազորություններից և ամենաճանաչված ընթացակարգերից է: Դա պաշտպանության ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության բավականին ազդեցիկ միջոց է և կարող է լուրջ նշանակություն ունենալ այդ ոլորտի վրա ազդելու կամ այն կողմնորոշելու հարցում, քանի որ խորհրդարանում հնչած հարցերը չեն սահմանափակվում միայն խորհրդարանի լսարանով, այլ ընդգրկում են շատ ավելի լայն շրջան՝ լրատվամիջոցներ, հասարակական կազմակերպություններ և քաղաքացիական հասարակություն:

Խնդրո առարկայի վերաբերյալ ուսումնասիրությունների նպատակով անհրաժեշտության դեպքում համագործակցություն հասարակական և միջազգային կազմակերպությունների հետ: Հայաստանի Հանրապետության Ազգային

ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովը իր աշխատանքային գործունեության ընթացքում արդյունավետորեն համագործակցել և համագործակցում է մի շարք միջազգային, հասարակական և այլ կազմակերպությունների հետ:

Մասնավորապես՝ մեր հանձնաժողովը մի շարք նախաձեռնություններով արդյունավետորեն համագործակցում է Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) հետ:

Մեր հանձնաժողովը և ԵԱՀԿ Երևանյան գրասենյակը ստորագրել են փոխըմբռնման հուշագիր ՀՀ Ազգային ժողովի պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովին Զինված ուժերի նկատմամբ արդյունավետ խորհրդարանական վերահսկողություն իրականացնելուն աջակցելու մասին:

Մեր հանձնաժողովը համագործակցում է Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության ժնևյան կենտրոնի հետ, ինչի շնորհիվ հանձնաժողովի փորձագետները մասնակցել են զինված ուժերի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության վերաբերյալ մի շարք եվրոպական երկրների խորհրդարանների փորձի փոխանակմանը: Նշված համագործակցության շրջանակներում հայերեն են թարգմանվել համապատասխան ուսումնական ձեռնարկներ:

Մեր հանձնաժողովի անդամ պատգամավորներ ընդգրկված են ԱՊՀ երկրների միջխորհրդարանական վեհաժողովի պաշտպանության և ազգային անվտանգության հանձնաժողովում, ինչի շնորհիվ մեր հանձնաժողովին է տրամադրվում վեհաժողովում քննարկվող մոդելային օրենքների մասին տեղեկատվություն: Շատ դեպքերում դրանք տեղայնացվում և ընդգրկվում են ազգային օրենսդրության մեջ:

Մեր հանձնաժողովի ևս երկու պատգամավոր ընդգրկված են Կոլեկտիվ անվտանգության խորհրդարանական վեհաժողովում:

Կարևորում ենք նաև հանձնաժողովի և ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովի հարաբերությունները: Որպես այդ համագործակցության արդյունք՝ ՆԱՏՕ-ի խորհրդարանական վեհաժողովը մեր հանձնաժողովի անդամ պատգամավորների և փորձագետների համար կազմակերպել է հատուկ ուսումնական ծրագիր:

Հանձնաժողովը ակտիվ կերպով համագործակցում է պաշտպանության և ոստիկանության ոլորտներին առնչվող գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպությունների հետ: Օրինագծերի աշխատանքային քննարկումների ժամանակ առաջարկություններով և դիտողություններով պարբերաբար իրենց ակտիվ մասնակցությունն են ունենում նաև հանձնաժողովի կողմից հրավիրված հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները: Պետք է նշել, որ հասարակական կազմակերպությունների կողմից ներկայացված մի շարք առաջարկություններ մեր հանձնաժողովի անդամ պատ-

գամավորների կողմից վերածվել են օրենսդրական նախաձեռնությունների:

Մեր հանճնաժողովը մշտապես համագործակցում է պաշտպանության ոլորտի բարձրաստիճան ղեկավարների և մասնագետների հետ: Հանճնաժողովի ու Ազգային ժողովի նիստերի և մեր հանճնաժողովի կողմից կազմակերպված խորհրդարանական լսումների ժամանակ օրինագծերի ներկայացման և առանձին հարցերի վերաբերյալ նրանց կողմից մեր հանճնաժողովին և խորհրդարանին տրվում են պարզաբանումներ:

Պաշտպանական հարցերով որոշումներ ընդունելու համար հանճնաժողովը օգտագործում է նաև հարցերի, օրինագծերի և իրադարձությունների աշխատանքային քննարկումների, խորհրդարանական լսումների և մեկնաբանությունների համակարգը:

Կարևորում ենք նաև պաշտպանության ոլորտին խորհրդարանականների մոտիկից ծանոթանալը, քանի որ պաշտպանության ոլորտի խնդիրները ավելի լավ հասկանալու համար անհրաժեշտ է տեսական գիտելիքները հարստացնել գործնական գիտելիքներով: Այս տեսանկյունից կարևորում ենք մեր հանճնաժողովի այցելությունները պաշտպանության ոլորտի օբյեկտներ՝ տեղում գործընթացներին ծանոթանալու, շարքային և հրամանատարական կազմի հետ զրուցելու, օրենքների կիրառման ընթացքում ծագած խնդիրներին իրազեկ լինելու և նրանց առաջարկությունները լսելու և հաշվի առնելու առումով:

Նշեմ, որ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանճնաժողովը լրատվամիջոցների և հասարակական կազմակերպությունների հետ պարբերաբար իրականացնում է այցելություններ պաշտպանության ոլորտի օբյեկտներ: Նման այցելությունները ցույց են տալիս նաև, որ քաղաքական ղեկավարությունը ուշադիր և հետևողական է պաշտպանության ոլորտի և զինծառայողների խնդիրների նկատմամբ:

Չբավարարվելով այս ամենով՝ մենք արտասահմանյան առաջավոր փորձի հաշվառմամբ ձգտում ենք օրենքի և մեր իրավասությունների սահմաններում կատարելագործելու Զինված ուժերի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության ասպարեզում մեր ծավալած գործունեությունը՝ այն ևպատակաուղղելով Հայաստանի Հանրապետության պաշտպանունակության հարաճուն բարելավմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ Սահմանադրություն: Ե., 2005:

2. «ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ 2002 թ. փետրվարի 20-ի հմ. ՀՕ-308 օրենքը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2002 թ., հմ. 12 (187)) :

3. *Hari Bucur-Marcu Philipp Fluri Todor Tagarev (Eds.).* Defence management. An Introduction. Geneva, 2009.

4. «Անվտանգության վերահսկողության ոլորտի խորհրդարանական վերահսկողություն: Սկզբունքներ, լծակներ և գործունեություն»: Խորհրդարանականների ձեռնարկ հմ. 5: Լոզան, 2003:

5. «Զինվորական կազմակերպությունների նկատմամբ խորհրդարանական վերահսկողության մասին» ԱՊՀ մոդելային օրենք:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПАРЛАМЕНТСКОГО КОНТРОЛЯ НАД СФЕРОЙ ОБОРОНЫ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Г. К. КАРАПЕТЯН, кандидат педагогических наук,
Председатель Постоянной комиссии Национального собрания РА
по обороне, национальной безопасности и внутренним делам

РЕЗЮМЕ

В мировой практике демократических государств парламентский контроль над сферой обороны включает: непосредственный контроль (соответствующие конституционные полномочия, депутатские запросы, парламентское расследование, утверждение назначений в Вооруженных силах и т. д.) и опосредованный (принятие законов, регулирующих отношения в данной области, ратификация международных договоров в сфере военной политики, утверждение бюджета и т. д.). Эффективность парламентского контроля в данной сфере обусловлена закрепленными в конституции полномочиями, обычаями, наличием соответствующих ресурсов, знаниями и опытом, а также политической волей.

Следует отметить, что в РА конституционные полномочия парламента по непосредственному контролю над сферой обороны существенно ограничены и, в основном, сводятся к формам опосредованного контроля (принятие законов, ратификация международных договоров, утверждение бюджета и т. д.). Несмотря на это, Постоянная комиссия по обороне, национальной безопасности и внутренним делам Национального собрания РА в сотрудничестве с такими международными и общественными организациями, как, в частности, ОБСЕ, а также заинтересованными государственными структурами РА, проводит многоплановую работу по совершенствованию своей деятельности в сфере контроля над ВС. Например, депутаты выезжают в воинские части, знакомятся с положением дел на местах, с нуждами военнослужащих, в рамках своих полномочий обеспечивая транспарентность в жизнедеятельности ВС.

SOME ISSUES OF THE PARLIAMENTARY CONTROL OVER THE DEFENSE SPHERE IN THE REPUBLIC OF ARMENIA

H. K. KARAPETYAN, PhD in Pedagogical Sciences, Chairman of the NA
Standing Committee on Defense, National Security and Internal Affairs
of the Republic of Armenia

SUMMARY

In international practice the parliamentary control over the defense sphere in democratic states icludes: the direct control (corresponding constitutional powers, interpellations, parliamentary investigation, final appointment in the Armed Forces, etc.) and the indirect one (adopting the laws regulating rela-

tions in this field, ratifying international treaties in the sphere of military policy, passing the budget, etc.). The efficiency of the parliamentary control in this sphere is conditioned by the powers, as well as practices fixed in the Constitution, availability of the corresponding resources, knowledge and experience, as well as political will.

It should be noted that the constitutional power of the Parliament to direct control over the defense sphere in the RA are considerably limited and mainly take the shape of indirect control (adopting laws, ratifying international treaties, passing the budget, etc.). Despite this, the Standing Committee on Defense, National Security and Internal Affairs of the RA National Assembly, in cooperation with international and non-governmental organizations such as, particularly, the OSCE, as well as the RA state stakeholders, conducts multidimensional work on improving its activities in the sphere of control over the Armed Forces. For instance, the National Assembly Members visit the military units, familiarize themselves in loco with the state of things, servicemen's needs, ensuring the transparency in the vital activity of the Armed Forces in the framework of their powers.

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՏԵՂԸ ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Գ. Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՀՀ Պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի նախագահ, Պաշտպանության նախարարի խորհրդական

Պետության և նրա առանձին կառույցների գործունեությանը անհրաժեշտ չափով իրազեկ լինելու և այն վերահսկելու հասարակության իրավունքը ժողովրդավարական նորմ է, որը բխում է ժամանակակից պետության հիմքում դրված ժողովրդաիշխանության սկզբունքից: Վերջինիս ճանաչումն ու օրենսդրական ամրագրումը, սակայն, ինքնաբերաբար չեն լուծում պետության և հասարակության հարաբերությունների հիմնահարցերը: Պետության և հասարակության շահերի ներդաշնակ զուգակցումը գործնականում շատ ավելի բարդ ու դժվարին խնդիր է, որի լուծումը կախված է հասարակության ժողովրդավարական հասունության մակարդակից: Այս հարցում վճռորոշ նշանակություն ունեն ինչպես պետական մարմիններում տիրապետող մտածողությունն ու արժեքային կողմնորոշումները, այնպես էլ հասարակության ինքնակազմակերպման ունակությունը, հասարակական-պետական կարևոր խնդիրներին հետամուտ լինելու կարողությունը:

Ընդհանուր այս համատեքստում, որպես հասարակական կարևոր գործառույթ, իր նշանակությամբ առանձնանում է զինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողության խնդիրը: Դա պայմանավորված է ինչպես զինված ուժերին վերապահված դերակատարությամբ, այնպես էլ կառույցի առանձնահատկություններով: Հասարակությունը զինված ուժերին է հանձնարարել արտաքին ոտնձգություններից պետության ու ժողովրդի պաշտպանությունը և կենսականորեն շահագրգռված է, որ զինված ուժերը գտնվեն իրենց կոչման բարձրության վրա: ՈՒստի հասարակությունը ձգտում է իր շահերին համապատասխան ներգործել պաշտպանական ոլորտում իրականացվող քաղաքականության և զինված ուժերում տիրող իրավիճակի վրա: Պետական շահագրգիռ մոտեցումը պահանջում է ընդառաջ գնալ հասարակության օրինաչափ ձգտումներին, չպատնեշվել հասարակությունից, թույլ չտալ, որպեսզի գերատեսչական, խմբակային և այլ շահեր վեր դասվեն համապետական և համահասարակական շահերից:

ՀՀ Զինված ուժերում այսօր իրականացվում են բարեփոխումներ, որոնք ուղղված են արդի պահանջներին համապատասխանող ռազմապաշտպանական համակարգի ձևավորմանը: Ներդրվել է նաև հատուկ քաղաքացիական ծառա-

յության ինստիտուտը (հաստատությունը), ինչը նպաստում է Զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության հիմքերի ամրապնդմանը: Սրան զուգահեռ նորովի է կարևորվում պաշտպանական ոլորտի հիմնահարցերի լուծման գործում հասարակության ներգրավվածության, Զինված ուժեր–հասարակություն կապերի սերտացման խնդիրը: Այդ նպատակին ուղղված քայլերի շարքում ուրույն տեղ ունի Պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի ստեղծումը: Այն պետք է կամրջող դեր խաղա և նպաստի Զինված ուժերի ու հասարակության միջև համագործակցության հետագա զարգացմանն ու ընդլայնմանը:

Խորհրդի ստեղծման փաստը և նրան վերապահված լայն իրավասությունները խոսում են պաշտպանության նախարարի կողմից Զինված ուժերի առաջընթացի հարցում հասարակության դերը լուրջ կերպով արժեքավորելու մասին: Դա իր առարկայական դրսևորումն է ստանում խորհրդի նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքում: Խորհրդի կարծիքներն ու տեսակետները պատշաճ ուշադրության են արժանանում, հանգամանք, որը արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ նախադրյալների շարքում ամենաէականներից է: Հարկ է նշել, որ խորհրդի ստեղծումն ամենևին էլ նպատակ չուներ Զինված ուժերը պատնեշել հասարակական մյուս կառույցներից: Հասարակության հետ Զինված ուժերի համագործակցությունը զարգանում է տարբեր եղանակներով: ՈՒստի և խորհրդի կարևոր խնդիրներից է գործնական կապերի հաստատումը հասարակական կազմակերպությունների և հասարակության տարբեր շերտերի հետ: Միայն այդ ճանապարհով է հնարավոր իրագործել այն նպատակները, որոնք դրված են խորհրդի առջև: Իր կարգավիճակի և խնդիրների բերումով խորհուրդը հավակնում է դառնալու Զինված ուժերին առնչվող և նրա նկատմամբ վերահսկողություն իրականացնող առավել մասնագիտացված և գործուն հասարակական մարմիններից մեկը:

Խորհրդի հիմնական գործառույթների թվում է Զինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողության իրականացումը: Այս առումով խորհուրդը լրացնում է ԶԼՄ-ների, հասարակական կազմակերպությունների, Մարդու իրավունքների պաշտպանի՝ որպես Զինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողության հնստիտուտների շարքը: Վերջիններիս համեմատությամբ խորհուրդն ունի որոշակի յուրահատկություն՝ կապված խորհրդի կարգավիճակի հետ: Խորհուրդն ստեղծվել և գործում է պաշտպանության նախարարին առընթեր և փաստորեն օժտված է կրկնակի լիազորությամբ՝ հանդես գալու և՛ հասարակության, և՛ պաշտպանության նախարարի անունից: Այս հանգամանքն ընդլայնում է խորհրդի ինչպես իրավասությունների, այնպես էլ պատասխանատվության շրջանակները: Խորհուրդը կարող է անարգել կերպով ստուգումներ և ուսումնասիրություններ կատարել զորքերում, արդյունքները ներկայացնել անմիջապես պաշտպանության նախարարին, հետևել իր կողմից բարձրացված հարցերի լուծման ընթացքին: Միևնույն ժամանակ, խորհրդի անդամները պետք է

պահպանեն որոշակի վարքականոններ, օրինակ, ռազմական և ծառայողական գաղտնիքի պահպանման, հրամանատարական և սպայական կազմի հետ հարաբերությունների հարցերում և այլն:

Զինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողության կարևորագույն հարցերից մեկն այն է, թե ի՛նչ բովանդակություն է հաղորդվում տվյալ գործառույթին, և ի՛նչ սկզբունքների ու մոտեցումների հիման վրա է այն կառուցվում: Այս հարցում դրսևորած մոտեցումից է կախված, թե ինչ հունի մեջ կդրվեն Զինված ուժեր–հասարակություն փոխհարաբերությունները, կունենան արդյոք դրանք վստահության և թափանցիկության բավարար մակարդակ, կգտնվեն արդյոք շահագրգռությունների հարթության վրա, թե՝ ոչ: Զինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողությունը ոչ մի դեպքում չպետք է դառնա ինքնանպատակ և տարբեր գործոնների ու շահերի թելադրանքով շեղվի իր ռացիոնալ նպատակներից: Հասարակական վերահսկողության գլխավոր նպատակը պետք է լինի հզոր և մարտունակ Զինված ուժեր ունենալը: Առաջին հայացքից կարող է թվալ, թե նման հարցադրումը ընդհանուր է և վերացական հարթություն է տեղափոխում հասարակական վերահսկողության գործառույթը: Իրականում, սակայն, տեղի է ունենում ճիշտ հակառակը: Գլխավոր այս նպատակից ածանցվելով՝ հասարակական վերահսկողության դաշտում են հայտնվում և նրա առարկան են դառնում բանակային կոնկրետ հիմնահարցեր ու գործընթացներ, որոնք իրենց հարաբերական ինքնուրույնությամբ հանդերձ սերտորեն փոխկապված են և, ինչպես առանձին վերցրած, այնպես էլ ամբողջության մեջ, ազդում են Զինված ուժերի մարտունակության ու պատրաստականության վրա:

Հասարակական վերահսկողությունը առաջին հերթին պետք է մեկնաբանվի որպես Զինված ուժերին օժանդակելու գործառույթ, և այն իրականացնող մարմինը չպետք է հանդես գա «վերակացուի» կամ անհաղորդ քննադատի դերում, այլ պետք է հաղորդակից լինի Զինված ուժերի հոգսերին ու դժվարություններին: Այս առումով բավականին տարածված է նաև այն սխալ մտայնությունը, թե Զինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողությունը կոչված է միայն մատնացույց անելու խնդրահարույց հարցերն ու թերացումները: Նման մոտեցումը նույնպես չի կարող լիարժեք համարվել և վերջիվերջո կհանգեցնի հասարակական վերահսկողության գործառույթի էության թյուրըմբռնմանը:

Հասարակությունը չի կարող անտարբեր լինել ոչ միայն մտահոգիչ և բացասական երևույթների, այլև Զինված ուժերի առաջընթացի նկատմամբ: Հաջողություններն ու ձեռքբերումները նույնպես պետք է նկատվեն, ներկայացվեն և խրախուսվեն: Տվյալ հանգամանքը նույնքան կարևոր է, որքան բացթողումների և թերացումների վերհանումն ու արծարծումը: Եվ իրոք, միանգամայն անբնական կլիներ, եթե հասարակությունը աչքաթող աներ Զինված ուժերում արձանագրվող դրական տեղաշարժերը, չքաջալերեր և չխթաներ այդ ուղղությամբ գործադրվող ջանքերը: Միայն ամբողջական, համակողմանի մոտեցմամբ է հնարավոր ապահովել Զինված ուժերի և հասարակության միասնությունը, ստեղծել փոխադարձ

վստահության բարենպաստ մթնոլորտ, ճանապարհ բացել առկա խնդիրների անկաշկանդ քննարկման համար:

Հարկ է նշել ևս մեկ կարևոր նկատառում: Հասարակական վերահսկողությունը առավել արդյունավետ է դառնում այն դեպքում, երբ չի սահմանափակվում միայն իրերի դրության փաստմամբ, այլ գտնում ու առաջարկում է լուծումներ և զարգացման ծրագրեր:

Ներկայացված սկզբունքներն ու մոտեցումները դրված են Պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի գործունեության հիմքում:

Հասարակական խորհրդի նախաձեռնությամբ անցկացված հասարակական կարծիքի սոցիոլոգիական հետազոտությամբ* պարզվել է, որ Զինված ուժերի նկատմամբ հասարակության վերաբերմունքը դրական է: Հասարակության 51,5 %-ը լիովին վստահում է Զինված ուժերին, 38 %-ը ավելի շուտ վստահում է, քան՝ ոչ: Կարելի է համոզված պնդել, որ առաջիկայում էլ Զինված ուժերը կշարունակեն վայելել հասարակության դրական վերաբերմունքը, քանի որ հասարակության ավելի քան 2/3-ի (71,2 %) կարծիքով Զինված ուժերում տեղի են ունենում դրական փոփոխություններ, իսկ բացասական երևույթները գնալով նվազում են: Այս պատկերն իր համարժեք արտացոլումն ունի նաև զգայական հարթությունում: Այն հարցին, թե ինչ զգացումներ եք ունենում Զինված ուժերի մասին մտածելիս, հարցվածների 45,8 %-ը նշել է հայրենասիրությունը, 23,3 %-ը՝ հպարտությունը, 17,2 %-ը՝ ապահովությունը: Հետազոտությամբ նաև պարզվել է, որ հասարակությունը չի խուսափում պատասխանատվությունից Զինված ուժերում առկա մտահոգիչ երևույթների համար և գրեթե հավասար չափով կիսում է այդ պատասխանատվությունը պետական կառավարման մարմնի հետ (համապատասխանաբար՝ 23,8 % և 26,6 %):

Այս ամենը միասին վերցրած վկայում է հասարակության հետ վստահելի հարաբերություններ կառուցելու, անհարկի խոչընդոտներն ու սահմանափակումները վերացնելու անհրաժեշտության մասին: Հետազոտական տվյալները փաստում են նաև Զինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողության դաշտի ընդլայնմանն ուղղված՝ պաշտպանության նախարարի որդեգրած քաղաքականության ճշմարտացիությունն ու հիմնավորվածությունը: Պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհուրդը, լինելով այդ ուղեգծի սպասարկմանը կոչված կառույց, ձգտելու է հնարավորինս լիարժեք կերպով իրականացնելու իր առաքելությունը:

* Հետազոտությունն անցկացվել է 2010 թ. հունվար–փետրվար ամիսներին ՄԵԴԻԱ-ՄՈԴԵԼ ընկերության ՎԱՐԿԱՆԻՇ հետազոտավերլուծական խմբի կողմից: Հարցումն անցկացվել է 1000 մարդու շրջանում, դրանցից՝ 450-ը Երևանում, 550-ը՝ հանրապետության բոլոր մարզերում: Հարցվողների ընտրությունը կատարվել է պատահական ընտրանքի սկզբունքով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն»: Ե., 2005:
2. «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007:
3. «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4:
4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի 2009 թ. մայիսի 29-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի կանոնադրությունը հաստատելու մասին» հմ. 594 հրաման:

МЕСТО ОБЩЕСТВЕННОГО СОВЕТА ПРИ МИНИСТРЕ ОБОРОНЫ РА В ДЕЛЕ ОБЩЕСТВЕННОГО КОНТРОЛЯ НАД ВООРУЖЕННЫМИ СИЛАМИ

Г. Б. АРУТЮНЯН, Председатель Общественного совета при Министре обороны РА, советник Министра обороны

РЕЗЮМЕ

В контексте проводимых в настоящее время в РА оборонных реформ особое значение приобретает создание надлежащих механизмов общественного контроля над Вооруженными силами. С целью его более эффективного и целенаправленного осуществления создан Общественный совет при Министре обороны РА в качестве координирующего и связующего звена между оборонными структурами и общественностью.

Особый статус и полномочия Совета в качестве действующей при Министре обороны общественной структуры дают ему широкие возможности для осуществления деятельности как в государственном, так и в общественном измерениях.

Оптимально используя эти возможности, Совет в координации с государственными и общественными организациями (в том числе с Институтом Защитника прав человека, СМИ и т. д.) осуществляет проверки состояния службы в войсках, в том числе в сфере защиты прав, свобод и интересов военнослужащих, а по результатам анализа выявленных проблем выступает с инициативами перед компетентными в данной сфере государственными структурами, в первую очередь, перед Министром обороны РА.

Совет неуклонно придерживается курса повышения ответственности государственных органов и должностных лиц, а также оптимальной и конструктивной вовлеченности общества в обеспечение демократического контроля над Вооруженными силами.

THE PLACE OF THE PUBLIC COUNCIL UNDER THE RA MINISTER OF DEFENSE IN THE PUBLIC CONTROL OVER THE ARMED FORCES

G. B. HARUTYUNYAN, Chairman of the Public Council under the RA Minister of Defense, Advisor to the Defense Minister

SUMMARY

The formation of appropriate mechanisms of public control over the Armed Forces takes on special significance in the context of the ongoing defense reforms in the Republic of Armenia. The Public Council under the RA Minister of Defense has been established as a coordinating and bridging unibetween the defense structures and the public aimed at more effective and purposeful implementation of that control.

The special status and credentials of the Council as a social structure acting under the Defense Minister give broad opportunities for implementing its activities both in state and public dimensions.

Optimally using these opportunities, in coordination with state and nongovernmental organizations (including the Ombudsman Institute, mass media, etc.) the Council reviews the troops service, including the sphere of servicemen's rights, freedoms and interests protection. According to the results of analysis of the revealed problems the Council comes out with initiatives to the state structures competent in this sphere, primarily, to the Defense Minister.

The Council has consistently taken the line of increasing the responsibilities of state bodies and officials, as well as the optimal and constructive engagement of the society in ensuring democratic control over the Armed Forces.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՋԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ռ. Ջ. ՄԱԽՄՈՒԴՅԱՆ, իրավաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի ռազմական
և զինծառայողների հարցերով խորհրդական

1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում և մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները որպես գերակա արժեքներ սահմանող հետագայում ընդունված այլ միջազգային իրավական ակտերում ամրագրված սկզբունքներն ու նորմերը արտացոլվեցին նաև նորանկախ Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում: ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածով մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները սահմանվում են որպես բարձրագույն և անօտարելի արժեք: Միևնույն ժամանակ նախատեսվում է դրանցով սահմանափակված լինելու և դրանց պաշտպանությունն ապահովելու պետության պարտականությունը, որի կատարումը լիարժեք կերպով ապահովելու նպատակով ներմուծվեց օմբուդսմենի՝ Մարդու իրավունքների պաշտպանի (այսուհետև՝ Պաշտպան) հաստատությունը: Ի դեպ, որոշ զարգացած երկրներում այն հայտնի է շուրջ երկու հարյուրամյակ[*]:

Տվյալ հաստատության նպատակը մարդու իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն է պետական մարմինների և պաշտոնատար անձանց կամայականություններից ու չարաշահումներից: Այն ոչ թե հակակշռում, այլ համագործակցում է պետական համակարգի մյուս հաստատությունների հետ և հանդես գալիս որպես ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխիք ու մեխանիզմ:

Պաշտպանի լիազորությունները տարբեր պետություններում կարող են տարբեր լինել՝ կախված պետության իրավական և պետական կառավարման համակարգերի առանձնահատկություններից[1]: ՀՀ-ում Պաշտպանի իրավասությունն ընդգրկում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների բավականին լայն շրջան[**]:

---

[*] Խոսքը վերաբերում է սկանդինավյան պետություններում գործող օմբուդսմենի հաստատությանը:

[1] Տես «Национальные омбудсмены: свод правовых положений/по состоянию на 01.01.1998». Варшава, Представитель по правам граждан Республики Польша; Biuro Rzecznika Praw Obywatelskich. Варшава, 1999, сс. 160–173:

[**] Շատ պետություններում այդ վերահսկողական հաստատության իրավասությունից դուրս է գործադիր իշխանության գլուխը՝ պետության նախագահը (կառավարությունը):

ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իր իրավունքների ու ազատությունների պաշտպանության համար օրենքով սահմանված հիմքերով և կարգով կարող է ստանալ Մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը:

Կարծում ենք, որ սահմանադրական այս երաշխիքի լիարժեք ապահովման համար Պաշտպանին դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների ցանկը նախատեսող «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 8-րդ հոդվածում, մեր իրականության առանձնահատկությունների հաշվառմամբ, անհրաժեշտ է այլ անձանց իրավունքների պաշտպանության նպատակով Պաշտպանին դիմելու դեպքերի մասով նախատեսել որոշ կատեգորիաների, այդ թվում՝ զինծառայողների, վերաբերյալ բացառություններ՝ դիմումի քննումը թողնելով Պաշտպանի հայեցողությանը[*]:

Պաշտպանի՝ Օրենքով սահմանված լիազորությունները կարելի է դասել 2 խմբի՝ հիմնական և լրացուցիչ:

Հիմնական են համարվում դիմում-բողոքների քննարկումը, մարդու իրավունքների վերականգնմանն ուղղված գործունեությունը, այդ թվում՝ ներգործության միջոցների կիրառումը, և Պաշտպանի տարեկան գործունեության վերաբերյալ զեկույցի կազմումը:

Լրացուցիչ են հիմնական լիազորություններից ածանցված լիազորությունները, որոնց նպատակը դրանց իրականացման լիարժեք ապահովումն է: Այդպիսիք են, օրինակ, արագ արձագանքումը, այցելությունները Օրենքով նախատեսված կազմակերպություններ, օրենսդրության բարելավմանն ուղղված գործունեությունը, տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի զարգացումը, միջազգային համագործակցությունը և այլն[2]:

Հաշվի առնելով Պաշտպանի լիազորությունների, գործառույթների և խնդիրների մեծ ծավալը՝ սույն հոդվածում կքննարկենք դրանց այն մասը, որը վերաբերում է ՀՀ Զինված ուժերի գործունեության ոլորտին:

ՀՀ Սահմանադրության 8.2-րդ հոդվածի համաձայն՝ «Զինված ուժերը քաղաքական հարցերում պահպանում են չեզոքություն և գտնվում են քաղաքացիական վերահսկողության ներքո»[3]:

Ասվածն ուղղակիորեն կապված է Պաշտպանի իրավական կարգավիճակի հետ, քանի որ այս հաստատության մանդատի հրամայականը ևս ապաքաղա-

[*] Զինծառայողների իրավունքների պաշտպանությանը վերաբերող դիմում-բողոքների շուրջ 70 %-ն ուղարկում են զինծառայողների ընտանիքների անդամները կամ հարազատները: Դրանք, մասնավորապես, վերաբերում են զորամասի հրամանատարների կողմից անհիմն կերպով կարգապահական կալանքներ նշանակելուն, ռազմական ոստիկանության կայազորային բաժնում զինծառայողին օրենսդրության պահանջների խախտմամբ անհիմն պահելուն, սպայական կազմին բնակարանային պայմաններով չապահովելուն և այլն:

[2] Տես «ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի 2006 թ. տարեկան զեկույցը»: Ե., 2007, էջ 7:

[3] «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն»: Ե., 2005:

քականացված լինելն է: ՈՒստի Պաշտպանը, չլինելով այս կամ այն քաղաքական ուժի ներկայացուցիչ, ավելի մեծ հնարավորություն ունի օբյեկտիվորեն քննարկման առարկա դարձնելու զինծառայողների, այդ թվում՝ սպաների ու ենթասպաների, իրավունքների պաշտպանության բոլոր պրոբլեմները:

ՀՀ-ում Մարդու իրավունքների պաշտպանի շուրջ 6,5 տարվա գործունեությունը ապացուցեց, որ մեր Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունը բարդ, բազմակողմանի և որոշակի առանձնահատկություններ ունեցող գործընթաց է, որում պետք է ներգրավվեն նաև ՀՀ Զինված ուժերի բարձրագույն հրամանատարական կազմը, զորամասերի հրամանատարները, ամբողջ հասարակությունը և պետությունը՝ ի դեմս իր բոլոր հաստատությունների: Այս գործընթացի մասնագիտական և արդյունավետ իրականացման նպատակով Պաշտպանի և ՀՀ պաշտպանության նախարարության համատեղ ջանքերի շնորհիվ ՀՀ–ՆԱՏՕ «Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի» շրջանակներում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում 2007 թ. ստեղծվել է ռազմական և զինծառայողների հարցերով խորհրդականի հաստիք[*]:

Պաշտպանն իր լիազորությունների շրջանակներում զինծառայողների իրավունքների պաշտպանությունն իրականացնում է հետևյալ եղանակներով՝

1) զինծառայողների իրավունքների խախտման փաստերի վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմ ներկայացված դիմում-բողոքների քննարկում,

2) զինծառայողների իրավունքների խախտման փաստերին տեղեկանալու դեպքում (ԶԼՄ-ների, այլ անձանց ահազանգերի միջոցով և այլն) դրանց արագ արձագանքում և Պաշտպանի նախաձեռնությամբ գործի քննության անցկացում,

3) զինծառայողների խախտված իրավունքների վերականգնում,

4) պարբերական այցելություններ զորամասեր՝ զինծառայողների իրավունքների հնարավոր խախտումները կանխելու, առկա խնդիրները վերհանելու և իրավասու մարմինների ուշադրությունը դրանց լուծման վրա կենտրոնացնելու նպատակով,

5) համագործակցություն զինծառայողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ,

6) համագործակցություն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց հետ:

2009 թվականից Պաշտպանն էապես փոխել է իր աշխատաոճը և այն ավելի համակարգված ու հնարավորինս թափանցիկ դարձնելու նպատակով ձեռնամուխ է եղել նաև զինծառայողների իրավունքներին վերաբերող ՀՀ օրենսդրությունն ուսումնասիրելու և դրա կատարելագործման նպատակով կոնկրետ առա-

[*] Սկզբում միտում է եղել ստեղծելու առանձին զինվորական օմբուդսմենի հաստատություն, սակայն, հաշվի առնելով, որ ՀՀ Սահմանադրությամբ, ի տարբերություն որոշ պետություններից (Լեհաստան, Լիտվա և այլն), մասնագիտացված օմբուդսմենի հաստատություն չի նախատեսվում, ստեղծվել է նշված խորհրդականի հաստիքը:

ջարկություններ մշակելու ու ներկայացնելու գործին: Որպես ուսումնասիրության արդյունք 2009 թ. հրապարակվել է ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի «Մարդու իրավունքների պաշտպանությունը ՀՀ Զինված ուժերում կարգապահական քաղաքականություն իրականացնելիս» արտահերթ հրապարակային զեկույցը, որը պատրաստել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի և ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից համատեղ ստեղծված աշխատանքային խումբը:

1) Զինծառայողների իրավունքների խախտման* փաստերի վերաբերյալ Պաշտպանի աշխատակազմ ներկայացված դիմում-բողոքների քննարկում: Այս խմբում ընդգրկված են նաև զորակոչիկները, որոնք նույնպես կարող են դիմել Պաշտպանին: Դիմում-բողոքները դասակարգվում են ըստ հետևյալ խմբերի՝

– դիմում-բողոքներ, որոնք ստացվել են գրավոր ձևով,

– դիմում-բողոքներ, որոնք ստացվել են բանավոր՝ քաղաքացիների՝ Պաշտպանի աշխատակազմ այցելելու ժամանակ: Ընդ որում, բանավոր դիմում-բողոքները գրի են առնվում համապատասխան մասնագետների կողմից,

– դիմում-բողոքներ, որոնք Պաշտպանին կամ նրա ներկայացուցիչներին են տրվում Զինված ուժերում կայացած հանդիպումների ժամանակ:

Դիմումի բովանդակությունը որոշում կայացնելու համար բավարար չլինելու պարագայում աշխատակազմը ձգտում է քաղաքացու հետ անմիջական շփմամբ ստանալու լրացուցիչ փաստեր կամ դրանք հիմնավորող փաստաթղթեր:

Համաձայն Օրենքի 11-րդ հոդվածի՝ Պաշտպանը, բողոք ստանալով, պարտադիր կարգով ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը. ա) բողոքը քննարկման ընդունելու մասին, բ) դիմողին իր իրավունքների և ազատությունների պաշտպանության հնարավորությունները ներկայացնելու մասին, գ) բողոք ներկայացնողի համաձայնությամբ բողոքն այն պետական մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմին կամ դրա պաշտոնատար անձին փոխանցելու մասին, որի իրավասությանն է պատկանում բողոքի ըստ էության լուծումը, դ) բողոքը չքննարկելու մասին:

Պաշտպանն ընդունված որոշման պատճենը ուղարկում է դիմողին հնարավորինս շուտ, բայց ոչ ուշ, քան բողոքն ստանալու օրվանից 30 օրվա ընթացքում:

Որոշում կայացնելուց հետո Պաշտպանն իրավասու է դիմելու համապատասխան պետական մարմիններին կամ պաշտոնատար անձանց, որ նրանք նպաստեն բացահայտման ենթակա հանգամանքների ուսումնասիրմանը:

Միևնույն ժամանակ, հարկ ենք համարում նշել, որ Օրենքի՝ դիմում-բողոքների քննարկման գործընթացում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց վերաբերող երկու նորմեր իրար հակա-

* Իհարկե, «խախտում» տերմինն օգտագործելիս հեղինակը նկատի է ունեցել ենթադրյալ խախտման փաստը: Իրավակիրառական պրակտիկան ցույց է տալիս, որ իրավունքների խախտում պարունակող դիմումներից շուրջ 50 %-ում հետագա ուսումնասիրությամբ որևէ խախտում չի հայտնաբերվում:

սում են: 11-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ բողոքում նշված հարցերի ուսումնասիրումը չի կարող կատարել այն պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը կամ պաշտոնատար անձը, որի որոշումները կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվում են, մինչդեռ 13-րդ հոդվածի 1-ին մասը Պաշտպանին պարտավորեցնում է բողոքներն ուսումնասիրելիս հնարավորություն տալ այն պետական մարմնին, տեղական ինքնակառավարման մարմնին կամ պաշտոնատար անձին, որի որոշումները կամ գործողությունները (անգործությունը) բողոքարկվում են, պարզաբանումներ տալ բողոքի և կատարված ուսումնասիրությունների արդյունքների վերաբերյալ, ինչպես նաև հիմնավորել իր դիրքորոշումն ամբողջությամբ: Մեր կարծիքով՝ նպատակահարմար է փոփոխության ենթարկել 11-րդ հոդվածի 6-րդ մասը և համապատասխանեցնել 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Բողոքում բարձրացված հարցերի ուսումնասիրման նպատակով Պաշտպանը, իսկ Պաշտպանի գրավոր որոշմամբ՝ Օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված որոշ լիազորությունների մասով նաև նրա աշխատակազմի աշխատողները, իրավասու են՝

– անարգել կերպով այցելելու ցանկացած պետական հիմնարկ կամ կազմակերպություն, ներառյալ՝ զորամիավորումներ, անձանց հարկադրական պահման, այդ թվում՝ նաև նախնական կալանքի և ազատազրկման վայրեր, անհրաժեշտության դեպքում առանձնազրույց ունենալով զինծառայողների և հարկադրական պահման վայրերում գտնվող անձանց հետ (այս լիազորությունների արդյունավետության ապահովման նպատակով Օրենքը սահմանում է, որ նշված առանձնազրույցները ենթակա չեն միջամտության և գաղտնալսման),

– ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրանց պաշտոնատար անձանցից պահանջելու և ստանալու բողոքին առնչվող անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր,

– պետական մարմիններից կամ պաշտոնատար անձանցից ստանալու բողոքի ուսումնասիրման ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ պարզաբանումներ,

– իրավասու պետական մարմիններին հանձնարարելու բողոքի ուսումնասիրության ընթացքում ծագած և պարզաբանման ենթակա հարցերի վերաբերյալ անցկացնել փորձագիտական հետազոտություններ և ըստ այդմ պատրաստել եզրակացություններ,

– ծանոթանալու վարչական, կարգապահական և այլ իրավախախտումների վերաբերող այն գործերին, որոնց վերաբերյալ դատավճիռները, վճիռները, որոշումներն օրինական ուժի մեջ են մտել,

– ծանոթանալու բողոքին առնչվող ցանկացած նյութի և փաստաթղթի:

2) Զինծառայողների իրավունքների խախտման փաստերի վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում արագ արձագանքելու և Պաշտպանի նախաձեռնությամբ անցկացնելու գործի քննություն: Պաշտպանն իրավասու է

նաև իր նախաձեռնությամբ սկսելու հարցի քննությունը, հատկապես այն դեպքերում, երբ տեղեկություն կա մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների զանգվածային խախտումների մասին, կամ դա կապված է այնպիսի անճանց շահերի պաշտպանության անհրաժեշտության հետ, որոնք ի վիճակի չեն ինքնուրույն օգտագործելու իրենց պաշտպանության իրավական միջոցները: 2004 թվականից մինչև 2010 թվականի առաջին եռամսյակը եղել է երեք հարյուրից ավելի նման դեպք: Անհրաժեշտ է նշել, որ Պաշտպանի նախաձեռնությամբ սկսված քննարկումների մասին իրազեկվում են ինչպես «տուժող» անձը, այնպես էլ հասարակությունը՝ մամուլի միջոցով[4]:

Նման դեպքերում պաշտպանն արձագանքում է նախ մամուլում՝ հրապարակումների միջոցով, դատապարտում է երևույթը, ինչը նաև նրա ներգործության միջոցներից մեկն է: Արագ արձագանքման անհրաժեշտության դեպքում Պաշտպանը կամ նրա ներկայացուցիչներն այցելում են իրավախախտման վայր, այդ թվում՝ զորամասեր: Ըստ ուսումնասիրությունների արդյունքների՝ Պաշտպանը կարող է պաշտոնական գրությամբ դիմել համապատասխան իրավասու մարմիններին՝ առաջարկելով ինչպես կատարվածի վերաբերյալ տալ պարզաբանումներ, այնպես էլ անցկացնել համապատասխան քննություն՝ մեղավորներին հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու համար:

3) Ձինծառայողների խախտված իրավունքների վերականգնում *: Պաշտպանի ներգործության հիմնական միջոցը խորհրդատվական բնույթի գրավոր որոշում կայացնելն է: Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Պաշտպանը պարտավոր է կայացնելու հետևյալ որոշումներից մեկը.

ա) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնին կամ դրա պաշտոնատար այն անձին, որի որոշումների կամ գործողությունների (անգործության) մեջ տեսնում է մարդու իրավունքների և ազատությունների խախտում, առաջարկել վերացնել թույլ տրված խախտումները՝ նշելով մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերականգնման համար անհրաժեշտ և կատարման ենթակա հնարավոր միջոցառումները[**],

բ) մարդու իրավունքների և ազատությունների խախտման բացակայության մասին, եթե բողոքի քննարկման ընթացքում չի բացահայտվել պետական մարմնի կամ դրա պաշտոնատար անձի կողմից մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտում,

---

[4] Տես «Վթարային շենքը վտանգ է ներկայացնում»: «Հայաստանի Հանրապետություն», 2004 թ. հոկտեմբերի 23, «Օմբուդսմենը պահանջում է պատժել»: «Առավոտ», 2004 թ. մայիսի 7, «Омбудсмен подаст в суд». «Голос Армении», 2 октября 2004 г., «Գավառի ՔՊՎ-ում Պաշտպանի գրասենյակը խախտումներ է հայտնաբերել» (http://www.panorama.am/am/law/2007/11/16/mip/):

* Շատ պետություններում Պաշտպանի և նրա ներկայացուցիչների այն գործունեությունը, որը նպատակաուղղված է մարդու իրավունքների վերականգնմանը, կոչվում է «հետաքննություն»:

** Նման բնույթի որոշումների անվանումը համառոտելու նպատակով Պաշտպանի աշխատակազմում դրանք ձևակերպում են որպես «խախտում հայտնաբերելու և այն կատարած պաշտոնատար անձին պատասխանատվության ենթարկելու առաջարկ ներկայացնելու մասին» որոշում:

գ) բողոքի քննարկումը օրենքով նախատեսված հիմքերով դադարեցնելու մասին, եթե բողոքի քննարկման ընթացքում բացահայտվել են բողոքը չքննարկելու կամ քննարկումը դադարեցնելու հիմքեր և այլն:

4) Պարբերաբար զորամասեր կատարվող այցելություններ՝ զինծառայողների իրավունքների հնարավոր խախտումները կանխելու և դրանք վերականգնելու նպատակով: Պաշտպանի հանձնարարությամբ ստեղծված աշխատանքային խմբերը նախապես հաստատված ժամանակացույցի համաձայն այցելում են զորամասեր: Այցերի նպատակը ինչպես տեղում դիմում-բողոքների պարզաբանումն է, այնպես էլ Պաշտպանի նախաձեռնությամբ մարդու իրավունքների պաշտպանվածության ուսումնասիրումը, մասնավորապես՝ կենցաղային և սանիտարահիգիենիկ պայմաններին ծանոթանալը, զինծառայողների հետ իրենց իրավունքների շուրջ առանձնազրույցներ ունենալն ու հետաքրքրող հարցերի վերաբերյալ իրավաբանական խորհրդատվություն տրամադրելը, իրավահավասարության խախտման, խտրականության դրսևորման և նման բնույթի այլ խախտումներ բացահայտելն ու կանխելը[*]: ՈՒսումնասիրության արդյունքները ամփոփ կերպով գրավոր ներկայացվում են Պաշտպանին:

5) Համագործակցություն զինծառայողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ: Պաշտպանի գործունեության արդյունավետությունը պայմանավորված է իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների հետ նրա սերտ համագործակցությամբ, քանի որ այդ կազմակերպություններն ավելի մոտ են բնակչությանը, ուստի ունեն մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, հետևաբար և Պաշտպանին փոխանցելու ավելի մեծ հնարավորություն: Այդ նպատակով Պաշտպանը սերտորեն համագործակցում է նաև զինծառայողների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպությունների հետ:

6) Համագործակցություն պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց հետ: ՀՀ-ում, մասնավորապես՝ Պաշտպանի և ՀՀ ՋՈՒ-ի ղեկավար կազմի արդյունավետ համագործակցության շնորհիվ, իրավասու մարմինների կողմից իրավունքի պաշտպանությանը վերաբերող ցանկացած հարց դառնում է պատշաճ ուշադրության և քննարկման առարկա:

Պաշտպանն Օրենքով իրեն վերապահված լիազորություններն իրականացնում է հետևյալ ակտերն ընդունելու միջոցով.

Որոշումները վերաբերում են դիմում-բողոքները քննարկման ընդունելուն կամ չընդունելուն:

Առաջարկությունները կատարվում են մարդու իրավունքների և ազատությունների մասին տեղեկատվության արդյունքների ամփոփման հիման վրա՝

[*] Հարկ է նշել, որ այցելությունների ընթացքում վերհանված խնդիրների մասին բարձրաձայնում են ինչպես պարտադիր ժամկետային ծառայություն անցնող զինծառայողները, այնպես էլ սպաները: Նման այցելությունների ժամանակ բացահայտվել են բազմաթիվ տարաբնույթ խախտումներ:

պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց ներկայացնելու ձևով:

Զեկույցները երկրում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների խախտման ուսումնասիրությունների, ինչպես նաև Պաշտպանի գործունեության արդյունքների ամփոփում են: Զեկույցները լինում են տարեկան (պարտադիր) և արտահերթ հրապարակային:

Տարեկան զեկույցը Պաշտպանը յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակի ընթացքում ներկայացնում է պետական իշխանության՝ օրենքով սահմանված մարմիններին, իսկ գարնանային նստաշրջանի ընթացքում՝ ՀՀ Ազգային ժողովի նիստին:

Պաշտպանը կարող է արտահերթ հրապարակային, կամ հատուկ, զեկույցներով հանդես գալ հասարակական հնչողություն ունեցող առանձին հարցերի կամ մարդու իրավունքների կոպիտ խախտումների, ինչպես նաև զանգվածային խախտումները չվերացնելու դեպքերում[5]:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ Պաշտպանի ակտերի միջև հստակ տարանջատում գոյություն չունի, քանի որ դրանք բոլորն էլ կրում են խորհրդատվական բնույթ:

Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Պաշտպանը կարող է զանգվածային լրատվության միջոցներով հրապարակել իր միջնորդությանը չպատասխանած, միջնորդության պահանջները չկատարած կամ անբավարար կատարած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնատար անձի վերաբերյալ հատուկ տեղեկություն՝ կցելով Պաշտպանի որոշման և միջնորդության վերաբերյալ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրանց պաշտոնատար անձանց պատասխանները, եթե սպառվել են պետական մարմիններում հարցը լուծելու համար Պաշտպանի բոլոր հնարավորությունները:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ Պաշտպանի հաստատությունը մարդու իրավունքների պետական պաշտպանության համակարգում ոչ թե լրացուցիչ, այլ այլընտրանքային միջոց է[6]: ՈՒստի, մեր կարծիքով, նպատակահարմար կլինի Օրենքում կատարել Պաշտպանի իրավական կարգավիճակի ինքնուրույնությունը և իշխանության մյուս թևերից անկախ լինելու հանգամանքն արտացոլող լրացում հետևյալ բովանդակությամբ. «*Պաշտպանի գործունեությունը լրացնում է քաղաքացիների իրավունքների և ազատությունների պաշտպանության առկա միջոցները, չի վերացնում դրանք և չի հանգեցնում խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ապահովող*

[5] Տես «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ 2003 թ. հոկտեմբերի 21-ի հմ. ՀՕ-23-Ն օրենքի 17-րդ հոդված («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 2003 թ., հմ. 58 (293)):

[6] Այդ մասին տես, նաև, *Н. Ю. Хаманаева.* Специфика правового статуса Уполномоченного по правам человека в Российской Федерации и проблемы законодательного регулирования его деятельности. «Государство и право», 2007, № 9, с. 22:

և դրանք վերականգնող պետական մարմինների իրավասության վերացմանը»[7]:

Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ հասարակությունը կվստահի Պաշտպանին միայն նրա աշխատանքի բարձր որակի դեպքում, ինչը ենթադրում է՝ դիմում-բողոքների արագ և որակյալ քննություն, պատճառաբանված որոշումների կայացում, հիմնավորված զեկույցների ներկայացում և, վերջապես, այդ պաշտոնը զբաղեցնող անձի ողջամտություն, օբյեկտիվություն և անաչառություն:

[7] Տես, օրինակ, ՈՒկրաինայի Գերագույն ռադայի «Մարդու իրավունքների լիազորի մասին» օրենքի 4-րդ հոդվածը, նաև՝ «Федеральный Конституционный закон от 26.02.97, И1-ФКЗ «Об Уполномоченном по правам человека в Российской Федерации»». «Собрание законодательства РФ», 1997, № 9, с. 1011; «Российская газета», 1997, № 43, с. 44:

РОЛЬ ИНСТИТУТА ЗАЩИТНИКА ПРАВ ЧЕЛОВЕКА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ В ДЕЛЕ ЗАЩИТЫ ПРАВ ЧЕЛОВЕКА В ВООРУЖЕННЫХ СИЛАХ

Р. Дж. МАХМУДЯН, кандидат юридических наук, Советник Защитника прав человека РА по военным вопросам и вопросам военнослужащих

РЕЗЮМЕ

В деле защиты прав человека в Вооруженных силах РА институт Защитника прав человека, кроме своей традиционной миссии, выполняет также очень важную и специфичную роль автономного механизма демократического гражданского контроля над Вооруженными силами. В целях обеспечения эффективности деятельности в данной сфере в 2007 г. была учреждена должность Советника по военным вопросам и вопросам военнослужащих Омбудсмена. В своей деятельности аппарат Омбудсмена активно сотрудничает с государственными структурами и общественными организациями. Особенно тесные связи, основанные на взаимопонимании и взаимном уважении, налажены с руководством МО РА.

Параллельно с основной функцией—рассмотрением жалоб и принятием определенных законом мер—Защитник или его представители систематически выезжают в войсковые части, ведут нацеленную на повышение уровня правосознания у военнослужащих и членов их семей разъяснительную работу, изучают состояние защищенности прав военнослужащих на месте, а также анализируют законодательство и законопроекты с целью представления предложений по улучшению законодательства РА в плане обеспечения прав военнослужащих.

В этом контексте делается ряд предложений по совершенствованию законодательства, в частности, о внесении с учетом национальных особенностей и особенностей военной службы изменений в статью 8 Закона РА

«О Защитнике прав человека» в целях расширения круга лиц, имеющих право обратиться к Защитнику по вопросам защиты прав другого лица, в том числе и военнослужащего.

THE ROLE OF THE OMBUDSMAN INSTITUTE OF THE REPUBLIC OF ARMENIA IN THE HUMAN RIGHTS PROTECTION IN THE ARMED FORCES

R. J. MAKHMUDYAN, PhD in Law, Advisor to the Human Rights Defender of the RA on Military and Military Servicemen's Issues

SUMMARY

The Institute of the Human Rights Defender in addition to its traditional mission also performs a very important and specific role of autonomous mechanism of democratic civil control over the Armed Forces in protecting human rights. To ensure the efficiency of the activities in this sphere a position of the Advisor to the Human Rights Defender on Military and Military Servicemen's Issues was established in 2007. The Ombudsman's staff in its activities actively cooperates with state structures and NGOs. Particularly, close links based on mutual understanding and respect have been established with the leadership of the MOD, RA.

In parallel with the main function—administrating the complaints and taking Legal Remedies—the Ombudsman and his representatives regularly go to the military units, conduct an explanatory work targeted at increasing the level of legal awareness among servicemen and their family members. They also study in loco the state of servicemen's rights protectability, as well as review the legislation and the bills for tendering the offers on enhancement of the RA Legislation in terms of ensuring the servicemen's rights.

In this context the author makes a number of proposals on improving the legislation, particularly, on making amendments to the Article 8 of the RA Law «On the Human Rights Defender» regarding the national peculiarities and those of military service. It is done for extending the circle of the persons having the right to apply to the Ombudsman on the rights protection of another person, including the serviceman's.

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Գ. Ե. ՄԽՐՋՈՅԱՆ, մանկավարժական գիտությունների թեկնածու, «Զինվորի մայր» ՀԿ նախագահ, Ա. Է. ՀՈՎՆԱՆՅԱՆ, «Զինվորի մայր» հասարակական կազմակերպության ծրագրերի համակարգող

«Զինվորի մայր» հասարակական կազմակերպությունը իր բազմաբնույթ և բազմազան գործունեության շուրջ 20 տարիների ընթացքում աջակցել է Հայաստանում քաղաքացիական հասարակության կայացմանը՝ անմիջական մասնակցություն ցուցաբերելով բանակի ձևավորման և կայունացման գործընթացին, վերհանելով ազգային բանակում տեղ գտած բացասական երևույթները:

Կազմակերպությունը ելնում է այն դրույթից, որ ազգային բանակում զինվորական ծառայության հեղինակության բարձրացման և զինվորական ծառայության նկատմամբ ամբողջ հասարակության դրական վերաբերմունքի պահպանման կարևոր պայման է զինվորական կոմիսարիատների ու զորակոչային հանձնաժողովների աշխատողների կողմից զորակոչի ընթացքում օրենսդրական նորմերի, քաղաքացու իրավունքների և ազատությունների անվերապահ ապահովումը:

ՀՀ Սահմանադրության մեջ նշվում է, որ յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է օրենքով սահմանված կարգով մասնակցել Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը: Տվյալ սահմանադրական նորմը նշանակում է, որ և՛ զորակոչի կազմակերպումը, և՛ զինվորական ծառայությունը պետք է ընթանան օրենքով սահմանված կարգին համապատասխան: Տվյալ կարգից շեղումը, այդ թվում՝ զորակոչի ընթացքում, դառնում է մարդու իրավունքների խախտման պատճառ, որը անհամատեղելի է զինծառայողի՝ որպես Հայրենիքի պաշտպանի բարձր կոչման հետ:

Առողջական վիճակի պատճառով ոչ պիտանի, ինչպես նաև տարկետման կամ ազատման իրավունք ունեցող քաղաքացիների զորակոչումը, զորակոչիկների մարդկային արժանապատվության, նրանց իրավունքների և ազատությունների խախտումը ապակայունացնում են ինչպես հասարակությունը, այնպես էլ բանակը:

Ինչպես հայտնի է, նույնիսկ իրավական բարձր ցուցանիշ ունեցող երկրներում հնարավոր չէ լիովին բացառել օրինախախտումները, սակայն անհրաժեշտ է մշակել համընդհանուր և ընդունելի երաշխիքներ ու մեխանիզմներ, որոնք ուղղված լինեն մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների պաշտպանությանը: Այդպիսի մեխանիզմներից է հասարակական վերահսկողության հաստատությունը, որը ներառում է նաև ոլորտում գործող ՀԿ-ները: Հայաստանի «Զին-

վորի մայր» հասարակական կազմակերպությունը լուրջ աշխատանք է կատարում բնակչությանը իրազեկելու, սոցիալական հարցումներ և մշտազննում իրագործելու, իրավական ուսուցում կազմակերպելու, մեթոդական գրականություն հրատարակելու և տարածելու ուղղությամբ: Հասարակության համար պետք է թափանցիկ լինեն պետական գործունեության բոլոր ոլորտները, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք պարունակում են պետական կամ օրենքով պաշտպանվող գաղտնիք: Առաջին հերթին դա վերաբերում է այն պետական կառույցներին, որոնք իրենց գործունեության բերումով անմիջականորեն առնչվում են մարդու իրավունքներին և ազատություններին, այդ թվում՝ զորակոչով զբաղվող մարմինները:

Օրենսդրության պահպանման գործում պատասխանատվություն առաջին հերթին կրում են պետական մարմինները: Ազգային բանակի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության ոլորտներում իրականացվող բարեփոխումների շնորհիվ հնարավոր դարձավ հստակ սահմանել բանակում տեղի ունեցող իրավախախտումների բացահայտման գործում զինվորական գերատեսչությունների և հասարակական հաստատությունների պատասխանատվության աստիճանը: Այստեղ նկատելի է նաև ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ցուցաբերված էական հետաքրքրությունը անցկացվող մշտազննման նկատմամբ, ինչը հանգեցրեց հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության սերտացմանը:

2009 թ. փետրվարի 1-ից նոյեմբերի 30-ը «Զինվորի մայր» ՀԿ-ն անցկացրել է մշտազննում՝ զորակոչի ընթացքում քաղաքացիների իրավունքների խախտումները բացահայտելու նպատակով:

Ներկայացվող վերլուծության համար տեղեկատվության աղբյուր են ծառայել հետևյալ խմբերի 3600 շահառուների՝ զորակոչիկների, զինվորների մայրերի, զորացրվածների, ինչպես նաև զինկոմիսարիատների, դպրոցների, հիվանդանոցների, պոլիկլինիկաների և պետական ինքնակառավարման մարմինների ներկայացուցիչների շրջանում կատարված հարցումները:

Մշտազննումն անցկացվել է Երևանում և ՀՀ որոշ մարզերում: Ներկայացնում ենք հետազոտության միայն այն արդյունքները, որոնք վերաբերում են զորակոչի ժամանակ քաղաքացիների իրավունքների խախտման դեպքերին:

Եվ այսպես. ընդհանուր խախտումների թվից առավել զանգվածային բնույթ են կրում, բժշկական հետազոտության ընթացքում քաղաքացիների իրավունքների խախտման դեպքերը (46,2 %):

Այլ տիպի խախտումներ հանդիպել են հետևյալ հաճախականությամբ.

– զորահավաքի ժամանակ զորակոչիկներին իրենց իրավունքների և ընթացակարգի մասին ոչ բավարար իրազեկում՝ 27,57 %,

– զինկոմիսարիատներ կանչելու սահմանված կարգի խախտումներ՝ 11,66 %,

– ներկայացվող փաստաթղթերի ընդունումից հրաժարվելու հետ կապված խախտումներ՝ 6,24 %:

Զորակոչիկների իրավունքների խախտումների հիմնական պատճառներից մեկն է զորակոչիկների և նրանց ընտանիքի անդամների ցածր իրավական մշակույթը և իրավագիտակցությունը:

Հարցված զորակոչիկների միայն 9,7 %-ն է նշել, որ զորակոչի կարգի վերաբերյալ տեղեկություններ ստացել է դպրոցում: Սակայն զինկոմիսարիատի պատասխանատուների պատասխանները վկայում են, որ զորակոչի կարգի վերաբերյալ դպրոցում տարվում են բացատրական աշխատանքներ, մասնավորապես, «Իրավունքի հիմունքներ»՝ 42,8 %, և «Զինվորական պատրաստություն»՝ 35,7 %, առարկայական դասերի ժամանակ:

Զինվորների մայրերի 63,2 %-ի կարծիքով, իրենք տեղյակ են, թե որ դեպքերում զորակոչիկը կարող է օգտվել բնակավայրին մոտիկ ծառայելու, զինվորական ծառայությունից ազատվելու, տարկետում ստանալու կամ այլընտրանքային ծառայություն անցնելու իրավունքից, սակայն 36,38 %-ը այդ տեղեկություններին չի տիրապետում:

Մշտազննման արդյունքներով պարզ դարձավ, որ զորակոչիկները և նրանց ծնողները շատ քիչ են օգտվում զորակոչային հանձնաժողովի որոշումները բողոքարկելու իրավունքից: Այն հարցին, թե՝ ներկայացվել են արդյոք զորակոչի ընթացքի վերաբերյալ բողոքներ որևէ պատկան մարմին, մայրերի միայն 4,6 %-ն է տվել դրական, իսկ 3,1 %-ը՝ բացասական պատասխան: Զորացրվածներն այդ հարցին պատասխանել են ձևականորեն, իսկ 59,8 %-ը հրաժարվել է պատասխանելուց: Բողոքարկումների պասիվության պատճառներին վերաբերող 5 հարցերին ընդհանուր առմամբ պատասխանել է մի քանի մարդ՝ հարցվածների 0,3 %-ը:

Կազմակերպության բազմամյա աշխատանքը ցույց է տալիս, որ զորակոչի ընթացքում տեղ գտած իրավախախտումների ոլորտում առկա են դրական տեղաշարժեր, որոնք պայմանավորված են զինկոմիսարիատների աշխատանքային ոճի փոփոխությամբ, զորահավաքի ընթացքի նկատմամբ վերահսկողության ուժեղացմամբ և այդ գործում ՀԿ-ների ներգրավմամբ: Սակայն իրավիճակը դեռ հեռու է իղեալականից:

Ինչպես ցույց են տալիս մեր դիտարկումները, զորակոչիկների և նրանց ընտանիքների իրավունքների մասին տեղեկացումն ու ուսուցումը կտրուկ նվազեցնում են զորակոչման ժամանակ ապակողմնորոշման ռիսկերը:

Քաղաքացիների իրավունքների խախտումները բժշկական զննման ընթացքում ամենատարածվածն են և հղի են բացասական հետևանքներով: Նման խախտումները, որոնց համար քաղաքացիները դիմում են իրավապաշտպան կազմակերպությունների օգնությանը, առավել զանգվածայինն են և կազմում են բոլոր խախտումների մոտ 46,2 %-ը:

Մշտազննումը հերթական անգամ ապացուցեց, որ թեև զորակոչիկներին իրենց իրավունքների մասին իրազեկման ուղղությամբ կազմակերպությունը հանրապետության ամբողջ տարածքում կատարել է մեծ աշխատանք (սեմինար-

ներ, հանդիպումներ, օրենքների տեքստերի և մեր կազմակերպության տեղեկատվական հրատարակումների տարածում և այլն), քաղաքացիները տեղյակ չեն բժշկական հիմունքներով տարկետման իրավունքների մասին, չգիտեն, թե որ փաստաթղթում են դրանք ամրագրված, ինչպես կարելի է դրանց ծանոթանալ: Բացի այդ, ընտանիքներում հաճախ կան լիարժեք հետազոտության և բուժման համար ֆինանսական խնդիրներ: Ոչ պակաս դեր են խաղում նաև գյուղերում բժշկական հաստատություններ չլինելու և հիվանդանոցների հեռու գտնվելու հանգամանքները:

Վերջին տարիներին, կապված սոցիալ-տնտեսական իրավիճակի հետ, նկատվում է զորակոչային տարիքի երեխաների առողջության որոշ վատթարացում:

Ինչպես հայտնաբերվել է մշտազննման ենթարկված գրեթե բոլոր մարզերում, բժշկական նորմերով զինծառայության պիտանելիության կատեգորիաների որոշումը հաճախ կատարվում է առանց անհրաժեշտ մանրամասնությունները հաշվի առնելու, առանց զորակոչիկի առողջական վիճակը արտացոլող բժշկական փաստաթղթերի:

Հայտնաբերվել են նաև այնպիսի խախտումներ, որոնք վերաբերում են բժշկական քննման ընթացակարգին, մասնավորապես՝ բժշկական հաստատություններ կլինիկական հետազոտման ուղարկված զորակոչիկների 40,1 %-ը ոչ մի փոխհատուցում չի ստացել, և ճանապարհածախսը, օրական ծախսերը կատարվել են ընտանիքի միջոցներով, իսկ 4,6 %-ին օգնել են բարեկամներն ու ծանոթները, և զորակոչիկների միայն 9,3 %-ն է ստացել դրամական փոխհատուցում՝ հիվանդանոց հասնելու կամ քաղաքում գիշերելու համար: Մայրերի 77,1 %-ը գումարային փոխհատուցման վերաբերյալ հարցին անգամ չի պատասխանել:

Ընդհանուր առմամբ, զորակոչիկներին՝ հատուկ սահմանված բժշկական հաստատություններ հետազոտման ուղարկելու պրակտիկան վերանայման կարիք ունի:

Բուժհիմնարկները, տարեցտարի մասնակցելով զորակոչային միջոցառումներին, ձևավորում են զինկոմիսարիատների հետ կայուն կապեր և շահագրգռված են հետազոտություն անցկացնելու համար բյուջեից գումարներ ստանալու մեջ: Ոխստի կարելի է ենթադրել, որ այդ շահագրգռվածությունը կարող է ազդել նրանց եզրահանգումների վրա: Ի հավաստումն ասվածի՝ տարեցտարի աճում է իրավապաշտպան կազմակերպություններ ուղղված այն դիմումների թիվը, որոնք վերաբերում են անկախ բուժհաստատությունների և զինկոմիսարիատների ուղեգրերի հիման վրա բուժհաստատությունների տված ախտորոշումների զգալի անհամապատասխանությանը:

Նշված խնդիրները ի վերջո կարող են հանգեցնել այն բանին, որ ՀՀ Զինված ուժերը համալրվեն զինծառայողներով, որոնք ի վիճակի չլինեն ծառայության ընթացքում լիարժեք կերպով կատարելու զինվորական պարտականությունները:

Հետևություններ և առաջարկներ: Կատարված մշտազննման արդյունքները վկայում են, որ զինվորական ծառայությանը զորակոչման ոլորտում քաղաքացիների իրավունքների խախտման հիմնական պատճառներն են ինչպես իշխանության մարմինների պաշտոնատար անձանց կողմից իրավական նորմերի խախտումը, այնպես էլ քաղաքացիական բնակչության անտեղյակությունը, իրավական անպատրաստությունն ու անտարբերությունը:

Մշտազննման ընթացքում պարզ դարձավ նաև, որ ՀՀ ՊՆ համակարգը օգտագործում է իր ներուժը՝ զորակոչային գործընթացի վերահսկողությունը բարելավելու ուղղությամբ: Այս առումով պետք է նշել թեժ գծի ստեղծումը, դիտողական քարոզչության ձևերի կիրառումը, միջազգային և շահագրգիռ ոչ կառավարական կազմակերպությունների հետ համագործակցության ակտիվացումը:

Սակայն ծրագրի իրագործման ժամանակահատվածում կատարված հարցումները ցույց տվեցին, որ առավել հաճախ տեղի ունեցող իրավախախտումները դիտվում են զորակոչիկների բուժզննման, ուղեգրված բժշկական հետազոտության և զինվորական ծառայությանը պիտանելիության աստիճանի որոշման ժամանակ (46,2 %): Մեր դիտարկումների արդյունքներով մենք մշակել ենք հետևյալ առաջարկությունները:

1. Բուժզննման համար սահմանված կարգի համաձայն՝ զորակոչիկն իր հիվանդությունը հիմնավորելու համար ներկայումս չի կարող օգտվել տարիների ընթացքում իր առողջական վիճակը վերահսկող բուժող բժշկի, ինչպես նաև այլ բժիշկների մասնագիտական եզրակացությունից: Այդ կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում կատարել համապատասխան կանոնակարգային փոփոխություններ և ռազմաբժշկական հանձնաժողովների համար սահմանել օրինական հիմքեր՝ քննության առնելու համար զորակոչիկի հիվանդության վերաբերյալ հիմնավորված այլընտրանքային բժշկական եզրակացությունը:

2. Ռազմաբժշկական հանձնաժողովների անդամ բժիշկները շահագրգռված չեն զորակոչիկի հիվանդության հետագա ընթացքը և զինվորական ծառայության ընթացքում դրա զարգացումները կանխորոշելու մեջ, քանի որ հիվանդ զորակոչիկի հետագա առողջական վիճակի համար պատասխանատվություն չեն կրում: Նպատակահարմար ենք համարում մշակել հստակ համակարգ՝ իրենց պարտականությունների կատարման մեջ թերացած բժիշկներին վարչական և նյութական պատասխանատվության ենթարկելու համար:

3. Զորակոչիկներն ու նրանց ընտանիքների անդամները ոչ բավարար չափով են իրազեկված իրենց իրավունքների մասին: Ոհստի նպատակահարմար ենք համարում ՀՀ ՊՆ համապատասխան ստորաբաժանումների և ՀԿ-ների համատեղ ջանքերով մշակել երկարաժամկետ գործողությունների պլան՝ զորակոչի ոլորտում բնակչության իրազեկման և տեղեկացվածության մակարդակի բարձրացման նպատակով: Մասնավորապես՝ զինկոմիսարիատներում, պոլիկլինիկաներում, տեղական ինքնակառավարման մարմինների գրասենյակներում կազմակերպել զորակոչիկների և նրանց ընտանիքների անդամների

իրազեկվածությանը նպաստող միջոցառումներ՝ օգտագործելով քարոզչության համապատասխան միջոցներ (պաստառներ, տեղեկատու թերթիկներ, հայտարարություններ և այլն):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տես «Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն», 46 հոդված: Ե., 2005:

2. «Զինապարտության մասին» ՀՀ 1998 թ. սեպտեմբերի 16-ի հմ. ՀՕ–250 օրենքը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 1998 թ., հմ. 26 (59)):

3. «Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մասին» ՀՀ 1999 թ. մարտի 3-ի հմ. ՀՕ–289 օրենքը («ՀՀ Պաշտոնական տեղեկագիր», 1999 թ., հմ. 8 (74)):

4. *Գ. Ե. Միրզոյան, Ա. Է. Հովհաննյան*, Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական խնդիրները հասարակական կազմակերպության տեսանկյունից: «ՀԲ», 2009, հմ. 4:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ЗАЩИТЫ ПРАВ ПРИЗЫВНИКОВ СО СТОРОНЫ ОБЩЕСТВЕННОЙ ОРГАНИЗАЦИИ

Г. Е. МИРЗОЯН, кандидат педагогических наук, Председатель Общественной организации «Зинвори майр», А. Э. ОВНАНЯН, координатор программ Общественной организации «Зинвори майр»

РЕЗЮМЕ

Строгое соблюдение установленного законодательством порядка призыва, в частности, по защите прав и свобод призывников, является необходимым условием повышения авторитета воинской службы и формирования у населения положительной мотивации к ней.

В данном аспекте существенное значение имеет действенный контроль над всем процессом призыва со стороны общественных организаций.

Общественная организация «Зинвори майр» («Мать солдата») в течение 20 лет осуществляет многоплановую инициативную деятельность по всем параметрам призыва. Недавно проведенный мониторинг показал, что основными причинами нарушения прав граждан в сфере призыва являются: нарушение установленного порядка призыва и прав призывников, преимущественно в процессе медицинского обследования, низкий уровень правовой культуры и правосознания у призывников и членов их семей.

В связи с этим в организации «Зинвори майр» разработаны конкретные предложения по повышению правосознания и осведомленности населения, установлению четкого правового порядка военно-медицинского обследования, гарантирующего его оптимальность и прозрачность, а также ответственность врачей.

SOME PROBLEMS OF THE CONSCRIPTS' RIGHTS PROTECTION BY THE NON-GOVERNMENTAL ORGANIZATION

G. Ye. MIRZOYAN, PhD in Pedagogical Sciences, Chairman of «Zinvori Mair» Non-Governmental Organization, A. E. HOVNANYAN, Program Coordinator of «Zinvori Mair» Non-Governmental Organization

SUMMARY

The strict adherence to the military draft procedure set by the legislation, particularly, on the conscripts' rights and freedoms protection is a necessary condition for enhancing the prestige of the military service and forming the population's positive attitude towards it.

In this aspect the efficient control over the whole draft process, made by non-governmental organizations, is of essential significance.

It has been 20 years the «Zinvori Mair» («Soldier's Mother») NGO has been implementing multifaceted initiatives at all parameters of the draft. A recent monitoring has shown that the main causes of the citizens' rights violation in the conscription sphere are the following: breach of the established draft procedure and the conscripts' rights violation, mostly in the process of medical examination, as well as the low level of legal culture and legal consciousness among the conscripts and their families.

In these terms concrete proposals have been elaborated by «Zinvori Mair» NGO. They namely refer to the increase of legal consciousness and public awareness, establishment of precise legal order of the medical examination ensuring its optimality and transparency, as well as doctors' responsibility.

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ



ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Վ. Ն. ԱՎԵՏԻՍՅԱՆ, ՔՀՇ 2-րդ դասի պետական խորհրդական, ՀՀ ՊՆ Ֆինանսաբյուջետային և պլանավորման վարչության պետ

Ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում պետական ծախսերի կառավարումը պետության ֆիսկալ քաղաքականության կարևոր բաղադրիչն է, իսկ դրա արդյունավետության մեծացումը՝ կառավարության գլխավոր խնդիրներից մեկը: Այս հանգամանքը պայմանավորված է, մի կողմից, տնտեսական ռեսուրսների սահմանափակության պայմաններում պետության սոցիալական, տնտեսական, պաշտպանական և այլ գործառույթների առավելագույնս արդյունավետ իրականացման, մյուս կողմից՝ տնտեսական երևույթների վրա պետության ազդեցության լծակների արդյունավետ ու տեղին կիրառման անհրաժեշտությամբ:

Միջազգային փորձը վկայում է, որ հնարավոր չէ պետական ծախսերի արդյունավետությունը մեծացնել միայն կառավարչական տեխնոլոգիաների կատարելագործմամբ: Անհրաժեշտ է բյուջետային գործընթացի համակարգային բարեփոխում: Պետական ծախսերի կառավարման լավագույն փորձի վերլուծությամբ առաջ է քաշվել ծրագրային բյուջետավորման, կամ արդյունքի հիման վրա բյուջետավորման, գաղափարը[1]:

Ծրագրային բյուջետավորման էությունը կատարված ծախսերի և այդ ծախսերի կատարումից սպասվող արդյունքների փոխկապվածությունն է[2]: Ծրագրային բյուջետավորման հիմնական հատկանիշներն են մատուցվող ծառայությունների և արդյունքների թափանցիկությունն ու հաշվետվականությունը, որոնց դեպքում պետական բյուջեի միջոցների հաշվին մատուցվող ծառայությունների, ինչպես նաև պետական մարմինների գործունեության ոչ ֆինանսական արդյունքների ցուցանիշները համարվում են նույնքան կարևոր, որքան ֆինանսական ցուցանիշները: Դա նշանակում է, որ պետական մարմինների ղեկավար պաշտոնյաները բյուջետային ռեսուրսների օգտագործման համար հաշվետու են ոչ միայն ֆինանսական արդյունքների, այլև տվյալ պետական մարմնի կողմից մատուցվող կամ գնվող ծառայությունների և ոչ ֆինանսական արդյունքների համար՝ դրանց պլանավորման, հաշվետվության և մշտադնման (մոնիտորինգ) միջոցով: Միևնույն ժամանակ, ոչ ֆինանսական արդյունքների մասին տեղե-

[1] Տես «Обзор международного опыта внедрения бюджетирования, ориентированного на результат» (http://www.rostu-comp.ru/content/view/143/):

[2] Տես *Լ. Բաղանյան, Կ. Աբգարյան, Ա. Սալնազարյան և ուրիշներ,* Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ: Դասագիրք: Ե., 2007, էջ 202–203:

կությունները հաշվի են առնվում բյուջետային հատկացումների վերաբերյալ որոշումների կայացման ժամանակ[3]: ՈՒստի բյուջետային ծրագիրը չի մնում որպես փաստաթուղթ միայն ֆինանսիստների համար, այլ դառնում է կարևոր գործիք որոշում կայացնողների համար և բնութագրում տարաբնույթ հարաբերությունների համակարգը:

Կարևորելով վերոգրյալը՝ ՀՀ-ն նույնպես ձեռնամուխ է եղել բյուջետային բարեփոխումների՝ ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման ճանապարհով: Այդ նպատակով պետությունը համագործակցում է Գերմանիայի Տեխնիկական համագործակցության ընկերության հետ: 2008 թ. ՀՀ կառավարությունն ընդունել է «ՀՀ պետական ծախսերի ծրագրավորման գործընթացի բարեփոխումների զարգացման» հայեցակարգ, որով նախատեսվում է այս գործընթացում ներգրավել հանրապետության բոլոր գործադիր մարմինները[4]: Բնականաբար, պաշտպանության նախարարությունը ևս անմասն չէ այդ գործընթացին:

Վերջին երկու տարվա ընթացքում պաշտպանական բարեփոխումների շրջանակներում նախապատրաստական աշխատանքներ են տարվում ծրագրային բյուջետավորման բարեփոխումների, այդ թվում՝ պլանավորման և բյուջետավորման գործընթացների կատարելագործման, միջոցով պաշտպանական ծախսերի կառավարման արդյունավետությունը մեծացնելու ուղղությամբ, ինչը ռեսուրսների օպտիմալ կառավարման շնորհիվ կնպաստի պաշտպանական բարեփոխումների համար ավելի հաստատուն ֆինանսատնտեսական հիմքերի ստեղծմանը: Պաշտպանության նախարարության համակարգում ծրագրային բյուջետավորմանը նպատակաուղղված բարեփոխումների կարևորությունը շեշտելու համար հարկ ենք համարում նշել դրանց երկու էական առանձնահատկությունները.

– ՀՀ պաշտպանական ծախսերը մեծ տեսակարար կշիռ ունեն ՀՀ պետական բյուջեի ծախսային մասում[5],

– պաշտպանական ծախսերի մեծ մասը ներկայումս գաղտնի է և չի վերահսկվում հասարակության կողմից:

Միևնույն ժամանակ, ՊՆ համակարգում ծրագրային բյուջետավորման ներդրումը դեռևս գտնվում է սաղմնային վիճակում: ՈՒստի մենք նպատակ


[3] Տես «Կառավարությանը փոխանցվող փաստաթղթերի փաթեթ: Փաստաթուղթ 2.8: Ծրագրերի և քաղաքականության միջոցառումների ձևակերպման ձեռնարկ» (ՄՋՆ ծրագիր. «Աջակցություն Հայաստանում ծրագրային բյուջետավորման ընդլայնմանը») (http://minfin.am/up/prdas/Paper%202.8_How%20to%20define%20P&P%20Action_arm.pdf):

[4] Տես «ՀՀ կառավարության 2008 թ. նոյեմբերի 27-ի նիստի «Հայաստանի Հանրապետության պետական ծախսերի ծրագրավորման գործընթացի բարեփոխումների զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» հմ. 48 արձանագրությունից քաղվածք» (http://minfin.am/up/prborenq/28380002.pdf):

[5] Տես, օրինակ, «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի բյուջեի մասին» ՀՀ 2010 թ. դեկտեմբերի 9-ի հմ. ՀՕ-176-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2010, հմ. 65 (799)):

ունենք վերլուծելու տվյալ գործընթացի հիմնական փուլերը և ուղղությունները՝ նշելով առկա հնարավորություններն ու հիմնական խոչընդոտները և ներկայացնելով վերջիններիս վերացման վերաբերյալ առաջարկություններ:

Ծրագրային բյուջետավորման փուլերը սերտորեն փոխկապված են և ունեն փուլաշրջանային բնույթ (տես նկ. 1):



Նկ. 1. Բյուջետային ծրագրման փուլերը

Ռազմավարական պլանավորման փուլում ըստ պաշտպանական համակարգի սահմանված առաքելությունների կատարվում են կանխատեսումներ և մշակվում է համապատասխան ռազմավարություն՝ զարգացման գերակայությունների, հիմնական նպատակների, դրանց հասնելու համար ռեսուրսների բաշխման հիմնական ուղղությունների նախանշմամբ[6]: Հաշվի առնելով մասնագիտական գրականության մեջ ներկայացված հիմնական մոտեցումը[7]՝ կարող ենք առանձնացնել պաշտպանական համակարգի ռազմավարական պլանավորման հետևյալ մակարդակները. «Ազգային անվտանգության ռազմավարություն»–«Ռազմական դոկտրին»–պաշտպանական համակարգի նպատակների և գերակայությունների սահմանում–պաշտպանության նախարարության նպատակների սահմանում–այդ նպատակներին հասնելու համար ռեսուրսների բաշխման հիմնական ուղղություններ, ընդսմին այդ ուղղությունները սահմանվում են միջնաժամկետ ծախսերի ծրագրով (ՄԺԾԾ): Ռազմավարական պլանավորումը կատարվում է պետական կառավարման համապատասխան մակարդակներում, և պաշտպանության նախարարությունը հիմնականում պատասխանատու է վերջին երկու ռազմավարությունների մշակման համար: Այս գործըն-

[6] Տես «Մենեջմենտ», դասագիրք, հրատ. 2: Յու. Մ. Սուվարյանի ընդհանուր ղեկավարությամբ և խմբագրությամբ: Ե., 2002, էջ 89–92:

[7] Տես *Б. Н. Кузык, В. И. Кушлин, Ю. В. Яковец.* Прогнозирование, стратегическое планирование и национальное программирование. Учебник, изд. 2. М., 2008, сс. 289—298:

թացն իրականացվում է պաշտպանության նախարար–ոլորտները համակարգող փոխնախարարներ–ոլորտների համար պատասխանատու ստորաբաժանումներ շղթայով՝ վերից վար և հակառակը:

Քանի որ ծրագրային բյուջետավորման հիմքում դրված է նախանշված արդյունքներին հասնելու պայմանը, այս փուլում կարևոր է պաշտպանության նախարարության համակարգի «նպատակների ծառի» ճիշտ կառուցումը: Այս տեսակետից անհրաժեշտ է ապահովել[*]՝

• ստորաբաժանումների կողմից մշակվող ոլորտային ռազմավարությունների համապատասխանությունը պաշտպանության նախարարության ընդհանուր ռազմավարությանը,

• ռազմավարական պլանավորում իրականացնող պաշտոնատար անձանց պատասխանատվության մակարդակի խստիվ սահմանումը,

• ստորաբաժանումներում գործառույթների հստակ տարանջատումը,

• պաշտպանական ռազմավարության համատեքստում ոլորտային ռազմավարությունների գերակայությունների համակարգային համաձայնեցումն ու դրանց առաջնահերթությունների ճշգրիտ որոշումը, հակառակ դեպքում դա կարող է հանգեցնել ՄԺԾԾ մակարդակում ռեսուրսների բաշխման ուղղությունների ոչ ճիշտ համամասնության սահմանմանը:

Բյուջեի պլանավորման փուլում կատարվում է ռազմավարական պլանավորման ժամանակ սահմանված նպատակների հստակեցում, նախանշվում են այդ նպատակներից բխող ենթանպատակները, դրանց հասնելու համար անհրաժեշտ միջոցառումները և վերջիններիս իրականացման համար պահանջվող ռեսուրսները: Այս գործընթացը կարելի է ներկայացնել հետևյալ շղթայի տեսքով՝ ծառայություններ–քաղաքականության միջոցառումներ–ծրագրեր → վերջնական արդյունքներ[**]:

Տվյալ համատեքստում բյուջեի մշակման ռազմավարությունը ներառում է հետևյալ տարրերը[8].

➢ *գերակա վերջնական արդյունքների սահմանում և համաձայնեցում,*

➢ *քաղաքականության միջոցառումների այլընտրանքային քննարկում:*

Գերակա արդյունքների ուրվագծման գործընթացը քննարկվել է ռազմավարական պլանավորման փուլում:

---

[*] Ստորաբաժանումների կարողությունների մասին եզրակացությունները արված են ծրագրային բյուջետավորման համատեքստում:

[**] Պարզության համար նշված են միայն ծառայությունները, թեև, ինչպես կերևա հետագա շարադրանքից, այս մակարդակում, բացի ծառայություններից, կան նաև այլ միջոցառումներ:

[8] Տես «Կառավարությանը փոխանցվող փաստաթղթերի փաթեթ: Փաստաթուղթ 1.1: ՀՀ Կառավարության ծրագրային բյուջեի ձևաչափ: Բյուջետավորման համակարգի առաջարկվող մոտեցման և ծրագրային նոր փաստաթղթերի նկարագրությունը» (ՄՋՆ ծրագիր. «Աջակցություն Հայաստանում ծրագրային բյուջետավորման ընդլայնմանը») (http://minfin.am/up/prdas/Paper%201.1%20Revised%20Budget%20DesignV2_arm.pdf):

Քաղաքականության միջոցառումները ներառում են նախարարությունների կամ պետական այլ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններ, տրանսֆերտներ, ֆինանսավորման ծախսեր, ոչ ֆինանսական ակտիվներին առնչվող (կապիտալ) ծախսեր: Պաշտպանության նախարարության համակարգում քաղաքականության միջոցառումների այլընտրանքների քննարկումն ու համաձայնեցումը կատարվում են պաշտպանության նախարարի մակարդակով՝ յուրաքանչյուր տարվա սկզբին ստորաբաժանումների գործունեության պլանների հաստատմամբ, թեև բյուջեն պլանավորվում է նախորդ տարվա ընթացքում[9]:

Քաղաքականության՝ միմյանց առնչվող միջոցառումները խմբավորվում են մեկ ծրագրում, ինչը միտված է սահմանված վերջնական արդյունքի, կամ նպատակի, ապահովմանը: ՈՒստի կարևորվում է ոչ ֆինանսական ցուցանիշների ճիշտ պլանավորումը, որոնք և դրված են վերջնական արդյունքներին հասնելու աստիճանի որոշման հիմքում: Ծառայությունների և քաղաքականության մյուս միջոցառումների պլանավորմանը ենթակա ոչ ֆինանսական ցուցանիշներն են[10՝]

• քանակական ցուցանիշները, որոնք կանխորոշում են քանակը կամ ծավալը,

• որակական ցուցանիշները, որոնք ցույց են տալիս համապատասխանությունը որոշակի ստանդարտին,

• ժամկետայնության ցուցանիշները, որոնք բնորոշում են մատուցվող ծառայությունների շահառուների կարիքներին արագ և ժամանակին արձագանքելու աստիճանը:

Այս առումով խիստ կարևոր են՝

– ոչ ֆինանսական ցուցանիշների իրատեսական և օպտիմալ պլանավորումը,

– ծառայությունների և քաղաքականության մյուս միջոցառումների այն ցուցանիշների մշակումը, որոնք ցույց կտան նշվածների ուղղակի կամ անուղղակի կապը վերջնական արդյունքների հետ և կհիմնավորեն դրանց իրականացման անհրաժեշտությունը,

– առաջադրված նպատակները բնութագրող մշակված և սահմանված ցուցանիշներին չհասնելու հետ կապված ռիսկերի կանխատեսումը և դրանց կանխարգելման գործիքարանի նկարագրությունը[11],

[9] Տես «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ 1997 թ. հունիսի 24-ի հմ. ՀՕ-197 օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 1997, հմ. 18):

[10] Տես «Գերատեսչության տարեկան բյուջետային ծրագրերի (Գիրք 3-ի) լրացման մեթոդական ձեռնարկ» (http://minfin.am/up/prdas/Paper%202.7%20Doc%203%20manual_final_Arm.pdf):

[11] Ռիսկերի գնահատման որոշ տարրեր ներդրված են արդեն ՄԺԾԾ մակարդակում (տես «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների, Հայաստանի Հանրապետության դատախազության, Հայաստանի Հանրապետության օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների կողմից 2012–2014 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի հայտերի և 2012 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման և դրանք

➢ *այն ֆինանսական պարամետրերի սահմանումը, որոնց շրջանակում պետք է ֆինանսավորվեն քաղաքականության միջոցառումները:*

Ծրագրային բյուջետավորման ներդրման դեպքում հատկացումները պետք է հաստատվեն քաղաքականության միջոցառումների մակարդակում[12], ինչի շնորհիվ բյուջեի պլանավորումը և ծախսերի կառավարումը դառնում են ավելի ճկուն: Այս իմաստով կարևորվում է այն հանգամանքը, որ բյուջեի պլանավորումը իրականացվելու է վերից վար, այսինքն՝ Կառավարության կողմից սահմանվելու են ագրեգացված ցուցանիշներ՝ սահմանաչափեր, իսկ գերատեսչությունները հարաբերական ինքնուրույնություն են ունենալու այդ որոշված սահմանաչափերի շրջանակում[13]: ՈՒստի մեծ նշանակություն է ստանում ՄԺԾԾ-ն, որը հանդես է գալիս որպես ռազմավարական պլանավորման գործիք: Այս մակարդակում ՄԺԾԾ-ն պետք է կենտրոնացած լինի գերակայությունների և ըստ դրանց՝ ռեսուրսների ընդհանուր բաշխման վրա: Այստեղ կարևորն այն է, որ ստորաբաժանման ղեկավարները դառնում են «պատվիրատու» և «կառավարիչ», այսինքն՝ նրանք, մի կողմից, ձգտում են գնումներն իրականացնելու հնարավորինս նվազագույն գներով, մյուս կողմից՝ ցանկանում են պլանավորման գործընթացում իրենց ստորաբաժանման գործառույթների իրականացման համար ապահովել ռեսուրսների ձեռքբերման հիմքերը: ՈՒստի անհրաժեշտ են ճիշտ կանխատեսում և գնագոյացման հաշվարկման մեթոդների ճիշտ ընտրություն:

Վերը շարադրվածից հետևում է, որ բյուջեի պլանավորման փուլում կարող են ի հայտ գալ հետևյալ հիմնական խոչընդոտները.

• քաղաքականության միջոցառումների ու ծառայությունների համաձայնեցման և հաստատման գործընթացը ժամանակային առումով չի համընկնում բյուջեի պլանավորման հետ,

• օպտիմալ ոչ ֆինանսական ցուցանիշների մշակման փորձը բավարար չէ,

• չկան համապատասխան որակական ստանդարտներ,

• մշակված չէ վերջնական արդյունքների հետ ծառայությունների ու քաղաքականության մյուս միջոցառումների համահարաբերակցական կապը արտահայտող ցուցանիշների համակարգը,

• ռիսկերի կանխատեսման և դասակարգման փորձը բավարար չէ,

• չկա գնագոյացման բազմագործոն համակարգ:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացման մեթոդական ցուցումներ» (http://minfin.am/up/mtefg/2.Metwdcu.pdf)):

[12] Տես «Կառավարությանը փոխանցվող փաստաթղթերի փաթեթ: Փաստաթուղթ 2.8: Ծրագրերի և քաղաքականության միջոցառումների ձևակերպման ձեռնարկ» (http://minfin.am/up/prdas/Paper%202.8_How%20to%20define%20P&P%20Action_arm.pdf):

[13] Տես «Базовая модель программного бюджетирования и классификация программ». М., май 2010 г. (http://info.minfin.ru/files/%C3%CF/%C0%ED%E0%EB%E8%F2%E8%F7%E5%F1%EA%E8%E5%20%EC%E0%F2%E5%F0%E8%E0%EB%FB/%CA%EB%E0%F1%F1%E8%F4%E8%EA%E0%F6%E8%FF%20%EF%F0%EE%E3%F0%E0%EC%EC%20%E8%20%EA%EE%ED%F6%E5%EF%F6%E8%E8%20%EC%EE%E4%E5%EB%E8.pdf):

Բյուջեի մասին օրենքի ընդունման փուլի հիմնական առանձնահատկություններն են՝ բյուջեի հաստատումն ըստ քաղաքականության միջոցառումների և ծրագրերի միասնական դասակարգումը[14]: Այս փուլն իրականացվում է ԱԺ–Կառավարություն մակարդակում:

Բյուջեի կատարման փուլը կարելի է բաժանել միմյանց հետ սերտորեն կապված փոխլրացնող երկու՝ բյուջետային հատկացումների և բյուջեով նախատեսված միջոցառումների կատարման ենթափուլերի: Հարկ է նշել, որ ծրագրային բյուջետավորման ներդրման դեպքում էլ կատարման նկատմամբ ընդհանուր մոտեցումը չի փոխվի[15]: Բյուջետային հատկացումները կատարվում են հաստատված բյուջեներին համապատասխան՝ սահմանված համամասնություններով[16]:

Բյուջեով նախատեսված միջոցառումների կատարումը ներառում է[17].

• *սահմանված ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ռեսուրսների որոշարկում, այնուհետև այդ ռեսուրսների ֆեոքքերում գնումների վերաբերյալ Կառավարության քաղաքականությանը և անչնակազմին համապատասխան:* ՀՀ-ում գնումների քաղաքականության մեջ տեղի են ունեցել սկզբունքային դրական փոփոխություններ, մասնավորապես՝ պատվիրատուն, եթե չի կարողանում հստակ կերպով կանխորոշել ֆինանսական ռեսուրսների չափերը, կարող է նախքան ֆինանսական միջոցների նախատեսումը կնքել պայմանագիր, և, ռազմական բնույթի կամ ուղղակիորեն դրան վերաբերող ռեսուրսներից բացի, այլ ռեսուրսների ձեռքբերումը պետք է կատարվի բաց մրցույթով (բաց ընթացակարգով)[18],

• *ծառայությունների «արտադրության» համար անհրաժեշտ գործընթացների ներքին կամ/և վերաներքին՝ «արտադրական» արդյունավետությունը առավելագույնի հասցնելու նպատակով:* Ենթադրվում է պատասխանատուների սահմանում ըստ մատուցվող ծառայությունների: Ինչպես վկայում է միջազգային փորձը, ծրագրային բյուջետավորման ներդրման դեպքում նպա-

[14] Տես «Պետական բյուջեի մասին օրենքի նոր ձևաչափի (Գիրք 1-ի) լրացման մեթոդական ձեռնարկ» (http://minfin.am/up/prdas/Paper%202.5%20Doc%201%20manual_revised_final_Arm.pdf):

[15] Տես «Կառավարությանը փոխանցվող փաստաթղթերի փաթեթ: Փաստաթուղթ 1.1: ՀՀ Կառավարության ծրագրային բյուջեի ձևաչափ: …» (http://minfin.am/up/prdas/Paper%201.1%20Revised%20Budget%20DesignV2_arm.pdf):

[16] Տես ՀՀ կառավարության 2002 թ. հունվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» հմ. 48 որոշումը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2002, հմ. 6 (181)):

[17] Տես «Կառավարությանը փոխանցվող փաստաթղթերի փաթեթ: Փաստաթուղթ 1.1: ՀՀ Կառավարության ծրագրային բյուջեի ձևաչափ: …» (http://minfin.am/up/prdas/Paper%201.1%20Revised%20Budget%20DesignV2_arm.pdf):

[18] Տես «Գնումների մասին» ՀՀ 2010 թ. դեկտեմբերի 22-ի հմ. ՀՕ-206-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2010, հմ. 69 (803)):

տակահարմար է ծառայությունների, քաղաքականության միջոցառումների և ծրագրերի համար սահմանել կոնկրետ պատասխանատու պաշտոնյաների[19]:

• *Ծառայությունների մատուցման («արտադրության») կառավարում (մուտքերի և արտադրական գործընթացների օգտագործում սահմանված ծառայությունների «արտադրության» համար):* Տվյալ գործընթացի արդյունավետ կառավարումն իրականացվում է ֆինանսական տեղեկատվության ճիշտ խմբավորման, դասակարգման և ձևակերպման միջոցով: Տեղեկույթի բազմազանության պարագայում ծրագրային բյուջետավորման համակարգը ենթադրում է ավտոմատացված համակարգերի ներդրում՝ կառավարման համակարգի արդյունավետության մեծացման նպատակով:

• *Ծառայությունների մատուցման գործընթացի մշտադիտարկում՝ համոզվելու համար, որ սահմանված ծառայությունները մատուցվում («արտադրվում») են ժամանակին, անհրաժեշտ որակով ու գումարով և մատուցվում են նախատեսված շահառուին*:

Ըստ այդմ՝ պաշտպանության նախարարության բյուջեի կատարման փուլում արդյունավետության մեծացմանը կարող են էապես նպաստել՝

• ծրագրեր – քաղաքականության միջոցառումներ – ծառայություններ շղթաներում կոնկրետ պատասխանատու պաշտոնյաների սահմանումը[20],

• հաշվապահական հաշվառման արդի համակարգի ձևավորումը,

• ռեսուրսների կառավարման ավտոմատացված համակարգերի ներդրումը:

Մշտադիտարկման փուլ: Մշտադիտարկման նպատակն է օբյեկտի ընթացիկ վիճակի և շեղումների վերաբերյալ տեղեկույթի անընդհատ մատակարարումը[21]: Պաշտպանության նախարարության բյուջեի մշտադիտարկումը պետք է ներառի ռեսուրսների օգտագործման և նախանշված արդյունքների կատարողականի վերաբերյալ նորմատիվային, պլանային, հաշվապահական ու վերլուծական բնույթի տեղեկատվություն, ինչպես նաև հայտնաբերված շեղումների օպերատիվ վերացման հնարավորություն:

Մշտադիտարկման արդյունավետության ապահովման հիմնական երաշխիքներն են՝

[19] Տես «Программный бюджет: цели, классификация и принципы построения» (http://www.nifi-abik.ru/nifi/info/p701_018.pdf):

[20] Նման գործառույթներ սահմանվում են պետական հիմնարկի կանոնադրությամբ (տես ՀՀ Կառավարության 2008 թ. դեկտեմբերի 25-ի «ՀՀ Պաշտպանության նախարարության, ՀՀ Զինված ուժերի Գլխավոր շտաբի, ՀՀ Պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի և ՀՀ Պաշտպանության նախարարության քննչական ծառայության կանոնադրություններն ու կառուցվածքները հաստատելու, ինչպես նաև «ՀՀ Պաշտպանության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ, ՀՀ Պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտ և ՀՀ Պաշտպանության նախարարության քննչական ծառայություն ստեղծելու մասին» հմ. 1554-Ն որոշում, հոդ. 29 («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2009, հմ. 2 (668)):

[21] Տես «Современный экономический словарь», под ред. Б. А. Райзберга, изд. 6. М., 2008, с. 244:

• բոլոր ստորաբաժանումների համար համապատասխան գործառույթի նախատեսումը,

• մշտազննման համակարգի ձևավորումն ու մեթոդների մշակումը:

Հաշվետվության և աուդիտի փուլում իրականացվում են գործունեության ցուցանիշների ներկայացում ու վերլուծություն, շեղումների հայտնաբերում և դրանց առաջացման պատճառների պարզում: Ստացվող տվյալները հիմք են ծառայում ռազմավարության մեջ համապատասխան ճշգրտումներ կատարելու համար: Ընդհանուր առմամբ, պաշտպանական ծախսերի վերլուծությունը հնարավորություն կտա եզրակացություններ անելու իրականացվող քաղաքականության ուղղությունների, այլ պետական մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերությունների վերաբերյալ[22]:

Հաշվետվությունը որոշակի հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական վիճակի նկարագիրն է[23]: Ծրագրային բյուջետավորման ճևաչափը ինքնին պարտադրում է արդյունավետության մակարդակի որոշման համար վերլուծություններ: Ծրագրային բյուջետավորման համակարգը ենթադրում է արդյունավետության գնահատում ըստ երեք հիմնական պարամետրերի՝ տեխնիկական, որը ներկայացնում է ուղղակի արդյունքների և մուտքերի հարաբերակցությունը, նպատակային, որը բնորոշում է, թե ուղղակի արդյունքների տրամադրման միջոցով որքանով են իրագործվել ցանկալի վերջնական արդյունքները, կամ նպատակները, և ֆինանսական, որը ցույց է տալիս, թե որքանով են ծախսերը փոխակերպվում ցանկալի արդյունքների[24]: Վերլուծությունները կարևոր են այն առումով, որ առանց ճշգրիտ պատկեր ունենալու հնարավոր չէ կատարել համապատասխան կանխատեսումներ և մշակել ռազմավարություն[25]:

Ընթացիկ վերլուծություններին հաջորդում է վերջնական վերահսկողությունը, որի կարևոր գործիքն է աուդիտը: Կատարվում է ծախսերի օրինականության ստուգելու, կատարված վերլուծությունների մեթոդաբանությունը գնահատելու և ռեսուրսների արդյունավետ օգտագործման հնարավորությունները պարզելու նպատակով[26]:

Հաշվետվության և աուդիտի ասպարեզում պաշտպանության նախարարության հիմնական խնդիրներն են՝

• կատարելագործել հաշվետվականության գործող համակարգը, որը ներ-

[22] Տես «Анализ экономики», под ред. В. Е. Рыбалкина. М., 1999, сс. 58—61:

[23] Տես *К. К. Арабян.* Анализ бухгалтерской (финансовой) отчетности внешними пользователями. М., 2008, сс. 16—18:

[24] Տես «Ոչ ֆինանսական արդյունքների ցուցանիշների սահմանումը»: ՈՒղեցույց-ձեռնարկ ծրագրային բյուջետավորման փորձարարական պետական մարմինների համար (ՄԶՆ ծրագիր. «Աջակցություն Հայաստանում ծրագրային բյուջետավորման ընդլայնմանը»), 2007 թ. ապրիլ:

[25] Տես *Роберт Грант.* Современный стратегический анализ. М., 2008, сс. 64—66:

[26] Տես *В. П. Суйц, В. А. Ситникова.* Аудит. М., 2008, сс. 8—10:

կայումս հիմնականում նկարագրական բնույթի է, իսկ դրա վերլուծական մասում կիրառվում են համեմատման պարզ մեթոդներ[27],

• բարձրացնել անձնակազմի վերլուծական, մասնագիտական կարողությունների մակարդակը,

• ընդլայնել առաքիտի գործառույթները, որոնք այժմ սահմանափակվում են միայն միջոցների ծախսման օրինականության ստուգմամբ:

ՀՀ պաշտպանության նախարարությունում ծրագրային բյուջետավորման ներդրման նպատակով Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարի 2010 թ. մայիսի 4-ի հմ. 442 հրամանով հաստատվել է «ՀՀ ՊՆ համակարգում ծրագրային պլանավորման և բյուջետավորման գործընթացի ներդրման» հայեցակարգը, որի հիմքում դրված է փուլային մոտեցումը*: Հայեցակարգում սահմանվել են մի շարք թիրախներ[28].

• հաստատութենական շրջանակի համապատասխանեցում ծրագրային բյուջետավորման համակարգի պահանջներին, մասնավորապես՝ ՀՀ ՊՆ և ՋՈՒ-ի ԳԾ ստորաբաժանումների լիազորությունների մասով,

• պաշտպանության բնագավառի ծրագրերի և համապատասխան միջոցառումների ձևակերպում, մշակում, հաստատում, մասնավորապես՝ այս գործընթացում որոշ մոտեցումների մշակում,

• բյուջեների պլանավորման գործում ներգրավված անձնակազմի կարողությունների զարգացում, մասնավորապես՝ վերապատրաստման դասընթացներ:

Կարծում ենք՝ ծրագրային բյուջետավորման ներդրման նախնական փուլում Հայեցակարգի թիրախների իրականացումը բավարար հիմքեր կստեղծի այս գործընթացի հետագա խորացման համար: Սակայն միայն Հայեցակարգով ակնկալվող արդյունքները բավարար չեն լինի ծրագրային բյուջետավորման գործում և արդյունավետ համակարգ ձևավորելու համար, քանի որ, ինչպես ցույց է տալիս սույն հոդվածում կատարված վերլուծությունը, ծրագրային բյուջետավորման ներդրմանը խոչընդոտող խնդիրները տարաբնույթ են՝ հաստատութենա-

[27] Տես ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2008 թ. փետրվարի 4-ի «Բյուջեների կատարման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց ենթակա հիմնարկների ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունների կազմման, ներկայացման, ամփոփման ընդհանուր պայմանները, հաշվետվությունների առանձին տեսակների կազմման ու ներկայացման առանձնահատկությունների մասին հրահանգը հաստատելու և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 930-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հմ. 80-Ն հրամանը («ՀՀ գերատեսչական տեղեկագիր», 2008, հմ. 8 (282)):

* Բարեփոխումների սկզբնական փուլում աշխատանքներ են կատարվում ՀՀ Զինված ուժերի ռազմաառողջապահական, կրթական և սոցիալական ապահովության ոլորտներում:

[28] Հայեցակարգով նախատեսվող միջոցառումների մասին ավելի հանգամանորեն տես ՀՀ Պաշտպանության նախարարի 2010 թ. մայիսի 4-ի «ՀՀ ՊՆ համակարգում ծրագրային պլանավորման և բյուջետավորման գործընթացի ներդրման հայեցակարգը հաստատելու մասին» հմ. 442 հրամանը:

կան, մեթոդաբանական, տեխնիկական և մասնագիտական[*]: ՈՒստի **առաջարկում ենք**.

հասարակութենական խնդիրների լուծման նպատակով՝

• նորմատիվային ակտերով սահմանել ծրագրերի և ենթածրագրերի պատասխանատուների,

• պաշտպանության նախարարության առաքելությունների և հիմնական նպատակների համատեքստում գերակայությունների և ծրագրերի համաձայնեցման նպատակով ստեղծել գերատեսչական խորհուրդ,

• հստակ կերպով սահմանել ըստ ծրագրերի արդյունքների պատասխանատվության և խրախուսման համակարգը:

մեթոդաբանական խնդիրների լուծման նպատակով՝

• մշակել ոչ ֆինանսական ցուցանիշների արդյունավետ և օպտիմալ համակարգ,

• մշակել ստանդարտների համակարգ և այն ենթարկել դինամիկ փորձաքննության,

• մշակել առանձին ծառայությունից կամ քաղաքականության այլ միջոցառումից մինչև պաշտպանության նախարարության ընդհանուր աշխատանքների արդյունավետության գնահատման համընդգրկուն և մասնավոր ցուցանիշներ: Նման ցուցանիշների համակարգի մշակումը և կիրառումը լայն տարածում ունեն զարգացած պետություններում[29],

• մշակել ծրագրերի ռիսկերի գնահատման համակարգ, ինչը հնարավորություն կտա, մի կողմից, գնահատելու ծրագրի ակնկալվող արդյունքների ռեալությունը, մյուս կողմից՝ մշակելու կանխարգելման միջոցառումներ,

• մշակել հաշվապահական հաշվառման համակարգ, մասնավորապես՝ հրահանգագրեր, ձևաթղթեր և այլն, ներդրել հաշվապահական հաշվառման ստանդարտներ,

• մշակել մշտադնման վերաբերյալ հաշվետվության ձևեր և արդյունավետ մշտադնման մեթոդներ,

• ծրագրային բյուջետավորման արդյունավետությունը մեծացնելու նպատակով սահմանել պատասխանատու անձանց տրամադրվող տեղեկույթի բնույթն ու ծավալը: Փորձը ցույց է տալիս, որ ինչպես անբավարար, այնպես էլ ավելորդ քանակությամբ և ոչ էական տեղեկությունների հաղորդումը հանգեցնում է ժամանակի կորստի և ոչ օպտիմալ որոշումների կայացման[30],

---

[*] Ծրագրային բյուջետավորումը ենթադրում է նաև օրենսդրական համապատասխան փոփոխություններ, սակայն այս խնդիրը համապետական է և դուրս է սույն հոդվածի ուսումնասիրության շրջանակից:

[29] Տես *В. М. Ржехин, Д. А. Алеканд, Н. В. Коваленко.* Разработка показателей эффективности подразделений, отделов, персонала. Пошаговая инструкция. М., СПб., 2008, сс. 44—76:

[30] Տես «Финансовый менеджмент». Учебник. Под ред. Г. Б. Поляка, изд. 2. М., 2008, сс. 34—38:

• մշակել հաշվետվության վերլուծական ձևեր, որոնք, նկարագրական բնույթից զատ, կունենան հիմնավոր վերլուծական բաժին: Այսպիսի հաշվետվությունները իրատեսորեն են արտացոլում իրավիճակը և պարունակում են ռազմավարական կողմնորոշման համար անհրաժեշտ տարրեր[31],

• մշակել աուդիտի իրականացման կարգ և ներդրել համապատասխան ստանդարտներ,

տեխնիկական բնույթի խնդիրների լուծման ուղղությամբ՝

• ներդրել համակարգչային ծրագրեր՝ անհրաժեշտության դեպքում հատուկ ՊՆ-ի համար պատվեր կատարելու ճանապարհով,

• ստեղծել միասնական տեղային ցանց, ինչը համապատասխան պաշտպանվածության դեպքում անհամեմատ կբարձրացնի աշխատանքների օպերատիվության մակարդակը,

մասնագիտական բնույթի խնդիրների լուծման ուղղությամբ՝

• ծրագրային բյուջետավորման գործընթացում ներգրավված անձնակազմի համար կազմակերպել սեմինարներ, քննարկումներ, ծանոթացնել կատարված սկզբունքային փոփոխություններին,

• սահմանել մասնագիտական որակավորման քննություններ*:

Ե՛վ հայեցակարգային, և՛ առաջարկվող հեռանկարային բարեփոխումների շնորհիվ պաշտպանության նախարարության համակարգում ծախսերի կառավարման արդյունավետությունն զգալիորեն կմեծանա՝ նպաստելով պաշտպանական բարեփոխումների համալիր իրականացմանը, հետևաբար՝ նաև պետության ազգային անվտանգության ապահովմանը:

[31] Տես *Г. В. Савицкая.* Анализ эффективности и рисков предпринимательской деятельности: методологические аспекты. М., 2008, сс. 225—242:

* Խոսքը չի վերաբերում հատուկ քաղաքացիական ծառայողներին, որոնք օրենքով սահմանված կարգով պարբերաբար հանձնում են նմանաբնույթ քննություններ:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ВНЕДРЕНИЯ И РАЗВИТИЯ СИСТЕМЫ ПРОГРАММНОГО БЮДЖЕТИРОВАНИЯ В МИНИСТЕРСТВЕ ОБОРОНЫ РА

В. Н. АВЕТИСЯН, Государственный советник 2-го класса СГС, начальник Финансово-бюджетного и планового управления МО РА

РЕЗЮМЕ

В условиях современной рыночной экономики важной составляющей фискальной политики государства является управление государственными затратами, повышение эффективности которого одна из главных задач правительства. Анализ международного опыта в данной сфере показывает, что наиболее успешным средством решения этой задачи является внедрение системы программного планирования и бюджетиро-

вания, суть которой заключается во взаимосвязи произведенных расходов и ожидаемых от них результатов. При программном бюджетировании, обеспечивающем транспарентность и отчетность оказываемых услуг и их результатов, нефинансовые показатели результатов услуг за счет госбюджета и деятельности государственных органов оказываются такими же важными, как финансовые.

В статье анализируются основные этапы и направления процесса внедрения программного бюджетирования с указанием наличествующих реальных возможностей и главных препятствий, приводятся предложения по преодолению последних.

Основными этапами программного бюджетирования являются стратегическое планирование, планирование бюджета, принятие закона о бюджете, исполнение бюджета, мониторинг, отчет и аудит, которые тесно взаимосвязаны и имеют циклический характер.

Основными направлениями внедрения в МО РА системы программного бюджетирования, указанными в утвержденной Министром Обороны РА Концепции внедрения в системе МО РА процесса программного планирования и бюджетирования, являются институциональное (приведение институциональных рамок в соответствие с требованиями системы программного бюджетирования), методологическое (формулировка, разработка и утверждение программ и соответствующих мероприятий в сфере обороны), профессиональное (развитие возможностей личного состава, вовлеченного в процесс планирования бюджета). В статье предлагается комплекс этих направлений дополнить задачами технического характера, а также даются конкретные предложения по каждому направлению.

SOME ISSUES OF IMPLEMENTING AND DEVELOPING THE PROGRAM BUDGETING SYSTEM IN THE RA MINISTRY OF DEFENSE

V. N. AVETISYAN, Second-Class State Adviser of the Special Civil Service, Head of the Financial-Budgeting and Planning Board of the MOD, RA

SUMMARY

An important component of the state's fiscal policy under conditions of the contemporary market economy is the state expenses management. The increase of its efficiency is one of the main priorities of the Government. The analysis of international experience in this sphere shows that the most effective tool of solving this problem is the implementation of the program planning and budgeting system. Its kernel lies in the interrelation between the incurred expenses and their presumable results. The nonfinancial performance measures at the expense of the state budget and the state bodies' activities prove to be just as important as financial ones at the program budgeting ensuring transparency and reporting of the services being rendered and their results.

Basic stages and directions of the process of implementing the program budgeting highlighting the existing real possibilities and main handicaps are analyzed in the article. The proposals on overcoming these handicaps are given as well.

The basic stages of the program budgeting are strategic planning, budget planning, adoption of a law on the budget, budget execution, monitoring, report and audit. They are closely interrelated and are of a cyclical character.

The basic directions of implementing the program budgeting system in the MOD, RA, stated in the Concept of implementing the program planning and budgeting process in the system of the MOD, RA, which was approved by the RA Defense Minister, are: institutional (conforming the institutional frameworks with the requirements of the program budgeting system), methodological (drafting, elaborating and approving the programs and relevant measures in the defense sphere), professional (developing the scopes of the staff involved in the budget planning process). A complex of these directions is proposed to be supplemented with the tasks of a technical character in this article. Concrete proposals on each direction are given as well.

ՀՀ-ՈՒՄ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Ա. Ռ. ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՀՀ Էկոնոմիկայի նախարարի գլխավոր խորհրդական

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում մշակվել և ընդունվել են պետության կենսունակության ապահովմանն ուղղված երկու հույժ կարևոր փաստաթուղթ՝ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը» և «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը»: Դրանցով սահմանվում են պետության համար առկա և հնարավոր սպառնալիքներն ու դրանց չեզոքացմանն ուղղված պետական գործունեությունը, Հայաստանի Հանրապետության կայուն և անվտանգ զարգացման ուղիները, ինչպես նաև նախանշվում են Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի բարեփոխումների ու արդիականացման ուղղությունները՝ կարճաժամկետ ու միջնաժամկետ հեռանկարով պետության պաշտպանական ռազմավարության ու ռազմական շինարարության ձևավորմամբ:

Այսպես. «Ռազմական դոկտրինում» հստակ կերպով սահմանվում են ռազմական անվտանգության համակարգի բարեփոխումների նպատակները և խնդիրները, որոնց իրականացումը պետք է, ի թիվս այլ գործոնների, հիմնված լինի ռազմական անվտանգության համակարգի արդյունավետ ռազմատնտեսական ու ռազմատեխնիկական ապահովման վրա:

Հայաստանի պաշտպանական անվտանգության ապահովմանն ուղղված և «Ռազմական դոկտրինի» շրջանակներում նախանշված պաշտպանական բարեփոխումների իրագործման երաշխիքը համապատասխան տնտեսական հիմքերի ամրապնդումն է: Հետևաբար, հեռանկարային տնտեսական զարգացման ռազմավարությունը պետք է հնարավորություն տա արդյունավետ կերպով լուծելու դրված խնդիրը, ուղղված լինի կայուն և արագ տեմպերով տնտեսական աճի ապահովմանը: Այդ առումով ՀՀ տնտեսական զարգացման հիմնական ռազմավարական ուղղություններն են.

• *ՀՀ տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացումը*, որը մեծապես պայմանավորված է արտադրողականության աճի և միավոր աշխատանքի արժեքի մրցունակ մակարդակի ապահովմամբ, բարձր ավելացված արժեք ձևավորող աշխատատեղերի առկայությամբ և այլ գործոններով: Հայաստանի տնտեսության մրցունակությունը կախված է իրական հատվածում արդիականացման և նորարարությունների ներդրման հնարավորությունից: Այս առումով Հայաստանը պետք է առկա համեմատական առավելությունների հիման վրա ձևավորի մրցակցային առավելություններ,

• *արդյունաբերական քաղաքականության իրականացումը,* որը Հայաստանում ենթադրում է տեխնոլոգիական համալիրների ներմուծման խրախուսում, ՀՀ տնտեսություն վերազգային կորպորացիաների մուտք գործելու համար ան-

հրաժեշտ պայմանների ստեղծում, գոյություն ունեցող հեռանկարային արտադրական համալիրների արդիականացում և տնտեսության իրական հատվածում պետության ակտիվ աջակցություն: Հայաստանի արդյունաբերական քաղաքականությունը ուղղվելու է տնտեսության բազմազանեցմանը (դիվերսիֆիկացիա) և արտահանման հատվածի ընդլայնմանը: Վերջինս լինելու է երկրի համաշխարհային մրցունակության մակարդակի բարձրացման գործառական նպատակը, ուստի և որոշակի ժամանակահատվածում արդյունաբերական քաղաքականությունը հիմնականում, եթե ոչ ամբողջովին, կուղղվի այդ նպատակի իրագործմանը,

• *ՀՀ տնտեսության բացության աստիճանի մեծացումը՝ համաշխարհային տնտեսությանը ինտեգրման խորացմամբ:* Համաշխարհային տնտեսությանը ինտեգրումը առաջին հերթին ենթադրում է արտահանման ծավալների մեծացում՝ արտաքին առևտրի պայմանների դյուրինացման, միջազգային ստանդարտների ներդրման և այլ եղանակներով արտահանումը խթանելու միջոցով: Այժմ Հայաստանի Հանրապետությունը Եվրամիության հետ բանակցություններ է վարում ազատ առևտրի համաձայնագրի կնքման վերաբերյալ, ինչը ենթադրում է լուրջ և հետևողական հաստատութենական բարեփոխումներ մի շարք ոլորտներում (ոչ տարիֆային կարգավորման ընթացակարգեր, ստանդարտացման և սերտիֆիկացման համակարգեր, հավատարմագրում, հեղինակային իրավունքներ, մրցակցություն, պետական գնումներ և ֆիտոսանիտարական համակարգեր և այլն): Դա ոչ միայն հնարավորություն կտա բարելավելու գործարարության ընթացակարգերը և սպառողների շահերի պաշտպանությունը, այլև իրական հիմքեր կստեղծի արտահանման ընդլայնման համար,

• *գիտելիքի վրա հիմնված տնտեսության հիմնական հաստատությունների ստեղծումն ու զարգացումը*, ինչը ենթադրում է գիտության՝ որպես ՀՀ տնտեսական ռազմավարության կարևոր հենակետի զարգացման արդյունավետ պետական քաղաքականություն՝ ուղղված գիտական ներուժի նպատակային վերարտադրության ապահովմանը, գիտական և գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներդրման գործուն համակարգի կազմակերպմանը, գիտության և կրթության ինտեգրմանը և այլ նմանատիպ ձեռնարկումների: Այս իմաստով առաջընթացի առանցքային շեշտը դրվում է Հայաստանում մարդկային կապիտալի զարգացման վրա, ինչի շնորհիվ մրցակցությունն առավելապես հիմնված կլինի արդիական տեխնոլոգիաների ներդրման կարողությունների վրա: Դա իր հերթին կհանգեցնի առանձին բնական ռեսուրսների ռազմավարական դերի նվազեցմանը և, միևնույն ժամանակ, տնտեսական առավել արդյունավետ գործունեության ծավալմանը՝ նոր արժեքների ստեղծման գործում մարդկային գործոնի դերի մեծացմամբ,

• *տնտեսական գործունեության համար հավասար պայմանների ստեղծումը* ենթադրում է ազատ տնտեսական մրցակցության ապահովման և մենաշնորհների սահմանափակման քաղաքականություն՝ նպատակաուղղված բոլոր

տնտեսավարող սուբյեկտների համար հավասար մրցակցային դաշտի ձևավորմանը: Հայաստանում գործարար միջավայրի բարելավման ծրագիրը ներառում է բարեփոխումներ հարկային և մաքսային վարչարարության, տեխնիկական և նորմատիվային կանոնակարգման, ներդրողների պաշտպանության և աշխատանքային հարաբերությունների կարգավորման բնագավառներում: Միևնույն ժամանակ, տնտեսության իրական հատվածում կապիտալ ներդրումների ապահովմամբ արդիականացման գործընթացները խթանելու նպատակով դրվում է ներդրումային միջավայրի շարունակական բարելավման խնդիրը: Դա վերաբերում է ՀՀ-ում գործարարության իրականացման և ներդրումների կատարման հիմնական արգելքների վերացման, ենթակառուցվածքների որակի բարձրացման, կորպորատիվ կառավարման մշակույթի զարգացման ու սկզբունքների ներդրման, մակրոտնտեսական կայունության ապահովման և այլ հիմնահարցերի,

• *տարածքային համաչափ զարգացման ապահովումը*, ինչի համար անհրաժեշտ է ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունների համահարթեցում՝ մարզերում պետական ներդրումային ծրագրերի իրականացմամբ, տարածքային զարգացման պետական ֆինանսավորման համակարգի մշակմամբ և ներդրմամբ, տեղական ինքնակառավարման որակի բարձրացմամբ և այլ միջոցառումների իրագործմամբ: Այս ուղղությամբ վարվող քաղաքականությունը կոչված է ապահովելու հավասար կենսամակարդակ և տնտեսավարման հնարավորություններ ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ հանրապետության մարզերում: Խնդիրը անմիջականորեն կապված է երկրի ժողովրդագրական վիճակի հետ, որի բարելավման համար առաջնահերթ հարց է դրվում մարզերում ապահովելու պատշաճ մակարդակի զբաղվածություն և ստեղծելու աշխատատեղեր,

• *պետական կառավարման որակի բարձրացումը*, ինչը մեծապես պայմանավորված է կոռուպցիայի կրճատմանն ուղղված միջոցառումների իրականացմամբ, որոշումների կայացման գործում հանրային մասնակցության աստիճանի, ինչպես նաև այդ որոշումների կայացման թափանցիկության մակարդակի բարձրացմամբ:

Ելնելով վերոշարադրյալից՝ կարող ենք ձևակերպել պաշտպանական բարեփոխումների տնտեսական ապահովման հետևյալ հիմնական սկզբունքներն ու միջոցառումները՝

– երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մակրոտնտեսական կանխատեսման ցուցանիշների վրա հիմնվող ծրագրային-նպատակային մեթոդների կիրառմամբ պետության ռազմական կարիքների պլանավորման, ֆինանսավորման ու գնահատման համակարգի ձևավորում,

– պետության ռազմական կազմակերպվածքի ֆինանսական ու նյութական ապահովման մակարդակի և պետության տնտեսական հնարավորությունների ու ռազմական անվտանգության իրական պահանջների առավելագույն համարժեքություն,

– շուկայական մեխանիզմների օգտագործմամբ ռազմատնտեսական գործընթացների կենտրոնացված պետական կառավարում,

– ռազմական անվտանգության հանգուցային խնդիրների լուծման գործում ֆինանսական, նյութատեխնիկական և մտավոր ռեսուրսների համախմբում,

– պետության ռազմական անվտանգության կարիքների համար մրցունակ և ներմուծմանը փոխարինող, առավելապես երկակի նախանշանակման տեխնոլոգիաների և արտադրության արագընթաց զարգացում,

– Հայաստանի Հանրապետության ռազմատնտեսական բնագավառը կարգավորող օրենսդրական դաշտի մշակում և կատարելագործում, պետության ռազմական անվտանգության ապահովման խնդիրների լուծման գործում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև այլ պետական կազմակերպությունների գործառույթների հստակ բաշխվածություն և համաձայնեցվածություն,

– պետական զորահավաքային պատվերի համակարգի հնարավորությունների արդյունավետ օգտագործում՝ շուկայական մեխանիզմների հաշվառմամբ,

– տնտեսության գիտատեխնիկական և արտադրական ներուժի ռացիոնալ օգտագործում, հետագա կատարելագործում և պետական աջակցություն:

Բնականաբար, կարիք է առաջանում լուրջ միջոցառումներ իրականացնելու նաև այսպես կոչված միկրոտնտեսական, կամ առանձին ձեռնարկությունների, մակարդակով՝ դրանց ցուցաբերվող պետական աջակցության և խթանման կոնկրետ ծրագրերի իրականացմամբ:

Պետական աջակցության առավել փորձված եղանակներն ու ձևերն են ռազմական նախանշանակման արտադրանք թողարկող և զորահավաքային նախապատրաստության միջոցառումներին մասնակցող ձեռնարկություններին կատարված ծախսումների ուղղակի փոխհատուցումը պետական բյուջեի միջոցներից ու հարկային արտոնությունների և արտոնյալ վարկերի տրամադրումը, դրանց ֆինանսատնտեսական վիճակի ամրապնդումը ռազմական նախանշանակման արտադրության խթանման, բազմազանեցման և վերակազմակերպման միջոցով, զորահավաքային առաջադրանքների կատարման համար նախատեսված արտադրական հզորությունների վերակառուցման և զարգացման հետ կապված կապիտալ ներդրումների, այդ թվում՝ ոչ պետական, խրախուսումը և այլն: Պարտադիր պայմաններից մեկը զորահավաքային առաջադրանք ունեցող կազմակերպությունների արտադրական գործունեության համար նյութատեխնիկական ապահովման համակարգի ներդրումն է՝ նոր տնտեսական հարաբերությունների ու կազմակերպական կառուցվածքների հաշվառմամբ:

Տնտեսական զարգացման արդի վիճակում հույժ կարևոր է բյուջետային ծախսերի առավել արդյունավետ օգտագործումը: Դրան կարելի է հասնել գործող արտադրության մեջ հիմնական ֆոնդերի ռացիոնալ օգտագործմամբ, «երկակի նախանշանակման» հիմնական սարքավորանքի արդիականացմամբ, առավել

արդյունավետ և կիրառման լայն շրջաններ ունեցող արտադրական միջոցներով ձեռնարկությունների ապահովմամբ և այլ միջոցներով:

Եվ այսպես. որպես ամփոփում՝ մեկ անգամ ևս ամրագրենք այն իրողությունը, որ կայուն տնտեսական զարգացումը ազգային անվտանգության կարևորագույն երաշխիքներից մեկն է: Հայաստանը կարող է համաշխարհային զարգացումներին համահունչ տնտեսություն ունենալ միայն այդ խնդրի հստակ գիտակցման հիման վրա կառուցված տնտեսական քաղաքականության անշեղ և հետևողական իրագործման պարագայում: Դա կարող է ստեղծել արդեն գործնական հենք ազգային, այդ թվում՝ պաշտպանական, անվտանգության ապահովման և ազգային շահերի հուսալի պաշտպանության համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում: Ե., 2007:

2. «ՀՀ ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4:

3. «Научные проблемы военно-экономических исследований в переходный период». М., 2008.

4. М. А. Бендиков. Экономическая безопасность промышленного предприятия в условиях кризисного развития. «Менеджмент в России и за рубежом», 2000, № 2.

ЭКОНОМИЧЕСКИЕ ПРЕДПОСЫЛКИ ОБОРОННЫХ РЕФОРМ В РА

А. Р. ГЕВОРКЯН, главный советник Министра экономики РА

РЕЗЮМЕ

Гарантией реализации оборонных реформ в РА является укрепление их экономической базы на основе стратегии перспективного экономического развития, нацеленной на обеспечение устойчивого и высокого темпа экономического роста. Приоритетными стратегическими направлениями развития экономики РА являются: повышение уровня конкурентоспособности; реализация промышленной политики, нацеленной на стимулирование внедрения технологических комплексов, привлечение транснациональных корпораций, модернизацию существующих перспективных промышленных комплексов; повышение уровня открытости экономики с углублением интегрированности в мировую экономику; создание и развитие основных институтов наукоемкой экономики с нацелом на обеспечение целевого воспроизведения научного потенциала; создание равных условий для экономической деятельности хозяйствующих субъектов с обеспечением их экономической конкуренции и ограничения монопольности; обеспечение симметричного регионального развития; повышение качества государственного управления с нацелом на борьбу с коррупцией с вовлечением гражданского общества.

Основными принципами и мероприятиями экономического обеспечения оборонных реформ являются: формирование эффективной системы планирования, финансирования и оценки военных потребностей страны; соответствие уровня финансового и материального обеспечения военной организации и экономических возможностей страны; централизованное государственное управление военно-экономическими процессами с применением рыночных механизмов; консолидация финансовых, материально-технических и интеллектуальных ресурсов для решения приоритетных задач военной безопасности; ускоренное развитие и внедрение технологий и производства преимущественно двойного предназначения; разработка и совершенствование законодательства РА, регулирующего отношения в военно-экономической сфере.

THE ECONOMIC PREMISES FOR THE DEFENSE REFORMS IN THE REPUBLIC OF ARMENIA

A. R. GEVORKYAN, Chief Advisor to the RA Minister of Economy

SUMMARY

The guarantee of implementing defense reforms in the RA is reinforcement of their economic base through the strategy of perspective economic development aimed at ensuring sustainable and high rate of economic growth. The strategic priority directions of the RA economy development are: increasing the competitiveness level; implementing industrial policy targeted at the promotion of technological complexes, involvement of transnational corporations, modernization of the existing perspective industrial complexes; raising the economic transparency with the deepening of integration into the global economy; establishing and developing basic institutions of science-intensive economy to ensure targeted reproduction of academic potential; creating equal conditions for economic activities of entities through ensuring their economic competition and restricting the monopoly; ensuring symmetric regional development; improving the quality of public administration to struggle against corruption involving civil society.

The main principles and measures in economic support of the defense reforms are: formation of an efficient system of planning, financing and assessing the country's military needs; conformity of the financial and material support level of the military organization with the country's economic opportunities; centralized public administration of military-economic processes using market mechanisms; consolidation of financial, material and technical and intellectual resources to solve the priority tasks of military security; accelerated development and introduction of technologies and production mainly of dual purpose; elaboration and amendment of the RA legislation regulating relations in the military-economic sphere.

ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Մ. Ա. ՓԱՐՎԱՆՅԱՆ, կապիտան, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի հայցորդ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի ֆինանսական մասի պետ, ՀՊՏՀ կառավարման ամբիոնի դասախոս

Ներկայումս ՀՀ-ում իրականացվող պաշտպանական բարեփոխումները ներառում են պաշտպանական համակարգն ամբողջությամբ: Ոխստի և կարևոր է ընդհանրապես պաշտպանական համակարգի և, մասնավորապես, պաշտպանական բարեփոխումների տնտեսական ապահովումը, որը համակարգի կենսագործունեության հիմքերից մեկն է:

Հարկ է նշել, որ պետության մասնակցությունը տնտեսությանը ունի երկակի բնույթ. մի կողմից՝ պետությունը տնտեսության և տնտեսական գործընթացների սուբյեկտ է, մյուս կողմից՝ այդ գործընթացները պետության կառավարման օբյեկտներ են: Այս իմաստով պետությունը կատարում է կարգավորիչ դեր, որի ներգործության չափը և բովանդակությունը կապված են տվյալ պետության կառավարման ձևի հետ[1]:

Տնտեսության պետական կարգավորման կարևոր գործիքներից են համապատասխան իրավական տեխնոլոգիաները: Ընդսմին վերջիններս պետք է բխեն քաղաքական նպատակադրումից, որի էական փոփոխությունը կհանգեցնի իրավական համակարգի վերանայման:

Պաշտպանական համակարգի տնտեսական ապահովման իրավական հիմքերը բնութագրելու համար նախ փորձենք ներկայացնել պաշտպանական համակարգի էությունը: Համաձայն «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝ «պաշտպանությունը ռազմական անվտանգության համակարգը, Հայաստանի Հանրապետության տարածքը, հասարակությունն ու տնտեսությունը պաշտպանության նախապատրաստելու և Հայաստանի Հանրապետության անկախությունը, տարածքային ամբողջականությունը, պետական սահմանի անձեռնմխելիությունն ու անվտանգությունը պաշտպանելու՝ ռազմական, քաղաքական, տնտեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և այլ միջոցների ու միջոցառումների, ինչպես նաև ռազմական անվտանգության միջազգային երաշխիքների ապահովման մեխանիզմների կիրառման համալիր գործունեության համակարգ է»[2]: Ոխստի պաշտպանական համակարգը ՀՀ Սահմանադրությամբ և համապատասխան օրենքներով սահմանված՝ պաշտպանության գործառույթ իրականացնող մարմինների և դրանց հարաբերությունների ամ-

[1] Տես *М. Н. Марченко*. Теория государства и права. Учебник. М., 2005, сс. 394—395:

[2] «Պաշտպանության մասին» ՀՀ 2008 թ. նոյեմբերի 27-ի հմ. ՀՕ-198-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2008, հմ. 73 (663)):

բողջությունն է: Հետևաբար, պաշտպանական համակարգի տնտեսական ապահովումը կարող ենք ձևակերպել որպես ՀՀ Սահմանադրությամբ և համապատասխան օրենքներով սահմանված՝ պաշտպանության գործառույթ իրականացնող մարմինների ապահովում՝ անհրաժեշտ ֆինանսական, նյութատեխնիկական և ոչ նյութական ակտիվներով, իսկ պաշտպանական համակարգի տնտեսական ապահովման իրավական հիմքերը կարող ենք բնութագրել որպես նշված գործընթացի իրականացման համար իրավանորմատիվային բազա:

Հայտնի է, որ ժամանակակից ժողովրդավարական պետություններում օրենքի գերակայությունը և դրական (պոզիտիվ) օրենսդրության զարգացումը հասարակական կյանքի բոլոր ոլորտների, մասնավորապես՝ տնտեսական ոլորտի բնականոն կենսագործունեության ապահովման կարևոր տարրն են[3], սակայն պետական տնտեսական գործունեության ոլորտում դրանց նշանակությունը ավելի է շեշտադրվում: Պետական տնտեսական գործունեության, այդ թվում՝ պաշտպանական համակարգի տնտեսական ապահովման, իրավական հիմքերի կարևորությունը պայմանավորված է մի քանի առանձնահատկություններով, որոնք են՝

• իրավական հիմքերը պետք է սահմանեն պետության՝ որպես տնտեսության «կառավարչի» և միաժամանակ որպես տնտեսվարող սուբյեկտի դերը, դրանից բխող գործառույթները և դրանց իրականացման գործիքարանը,

• եթե մասնավոր տնտեսվարող սուբյեկտների համար իրավական նորմերը սահմանում են, թե «ի՛նչ չի կարելի անել», ապա պետական մարմինների համար սահմանում են «ի՛նչ կարելի է անել»՝ դրանց վերապահվող լիազորությունների ձևով:

Բացի այդ, կարևոր առանձնահատկություն է նաև պաշտպանության ապահովման սկզբունքորեն տարբեր երկու փուլերի առկայությունը, քանի որ պաշտպանական համակարգը պետք է գործի երկու տարբեր իրավիճակներում՝ խաղաղ և պատերազմական պայմաններում[4]: Իսկ դա նշանակում է, որ տվյալ ռազմաքաղաքական իրավիճակներում պաշտպանական համակարգի տնտեսական ապահովումը ենթադրում է տարբերակված մոտեցումներ:

Եվ այսպես. հաշվի առնելով պաշտպանական համակարգի տնտեսական ապահովման իրավական հիմքերի առանձնահատկությունները՝ կարող ենք առանձնացնել այն հիմնական իրավական բաղադրիչները, որոնք անհրաժեշտ են տնտեսական ապահովման արդյունավետ իրականացման համար[*]:

---

[3] Տես «Европейское право», учебник. Отв. ред. Л. М. Энтин. М., 2007, сс. 569—572:

[4] Տես *Վ. Պ. Ավետիսյան,* Պետությունը պաշտպանությանը պատրաստելու իրավական հիմքերի կատարելագործումը պաշտպանական բարեփոխումների համատեքստում: «ՀՔ», 2009, հմ. 3:

[*] Սույն հոդվածում կխոսվի միայն պաշտպանական գերատեսչության (պաշտպանության նախարարության) մասին, այն հիմնավորմամբ, որ պաշտպանական համակարգի տարրերից միայն պաշտպանության նախարարության տնտեսական գործունեությունն է բացառապես ուղղված պաշտպանական համակարգի տնտեսական ապահովմանը:

Դրանք են՝

• պաշտպանական գերատեսչության կարգավիճակի և կառուցվածքի իրավական ամրագրումը,

• ֆինանսական, նյութատեխնիկական և ոչ նյութական ակտիվներով պաշտպանական գերատեսչության ապահովման գործիքարանի իրավական ամրագրումը,

• այլ պետական մարմինների և այլ կազմակերպությունների հետ պաշտպանական գերատեսչության փոխհարաբերությունների համակարգի իրավական ամրագրումը:

Պաշտպանական համակարգի արդյունավետ տնտեսական ապահովման համատեքստում հարկ է մանրամասնորեն վերլուծել նշված բաղադրիչները:

Պաշտպանական գերատեսչության կարգավիճակի և կառուցվածքի իրավական ամրագրումը:

Ինչպես հայտնի է, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը հանրապետական գործադիր մարմին է, որը մշակում և իրականացնում է պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը: Նախարարությունը կազմված է ՀՀ ՊՆ աշխատակազմից, աշխատակազմից դուրս առանձնացված ստորաբաժանումներից, աշխատակազմից դուրս կառուցվածքային ստորաբաժանումներից, ՀՀ ՊՆ կառավարման ոլորտում գործող պետական մարմին՝ ՀՀ ԶՈՒ-ի Գլխավոր շտաբից[5]: Տնտեսական ապահովման առումով պաշտպանության նախարարությունը և զորամասերը հանդես են գալիս որպես տնտեսական գործարքի կողմ, կնքում են պայմանագրեր, վճարում են հարկեր: ՈՒստի դրանք պետք է ունենան քաղաքացիահիրավական հարաբերությունների սուբյեկտներին բնորոշ հատկանիշներ: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի երկրորդ բաժինը սահմանում է քաղաքացիական իրավունքի սուբյեկտներին, որոնք են՝ քաղաքացիները, իրավաբանական անձինք, վերջիններիս ստեղծած մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները, հիմնարկները, ինչպես նաև պետական մարմիններն ու համայնքները[6]: Այս առումով զորամասերն ունեն համապատասխան հատկանիշների սահմանման խնդիր:

Նշենք կարգավիճակի հետ կապված մի շարք պրոբլեմներ:

1. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հարկ վճարող են համարվում

[5] Տես ՀՀ կառավարության 2008 թ. դեկտեմբերի 25-ի «ՀՀ Պաշտպանության նախարարության, ՀՀ Զինված ուժերի Գլխավոր շտաբի, ՀՀ Պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի և ՀՀ Պաշտպանության նախարարության քննչական ծառայության կանոնադրություններն ու կառուցվածքները հաստատելու, ինչպես նաև «ՀՀ Պաշտպանության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ, ՀՀ Պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտ և ՀՀ Պաշտպանության նախարարության քննչական ծառայություն ստեղծելու մասին» հմ. 1554-Ն որոշումը, հոդ. 29 («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2009, հմ. 2 (668)):

[6] Տես «ՀՀ քաղաքացիական օրենսգիրք» ՀՀ 1998 թ. մայիսի 5-ի հմ. ՀՕ-239 օրենսգիրք («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 1998, հմ. 17 (50)):

ֆիզիկական և իրավաբանական անձինք (այդ թվում՝ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, օտարերկրյա իրավաբանական անձանց հիմնարկները, օտարերկրյա իրավաբանական անձանց մասնաճյուղերը, ներկայացուցչությունները), հիմնարկները, տեղական ինքնակառավարման մարմինները[7], սակայն նշված ստորաբաժանումները, ըստ օրենքի չլինելով հարկ վճարողներ, վճարում են համապատասխան հարկեր և ունեն հարկ վճարողի հաշվառման համարներ, ինչը հակասում է գործող օրենսդրությանը[8]:

2. Ինչպես հայտնի է, զորամասերը ՀՀ զանձապետարանում ունեն բացված հաշիվներ, որոնց միջոցով իրենց իրավասության շրջանակում իրականացնում են գործարքներ, սակայն «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքը որպես գանձապետական համակարգի մասնակիցներ նշում է միայն պետական հիմնարկները[9]: Մինչդեռ զորամասերը չեն համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված «հիմնարկ» կարգավիճակին, բացի այդ օրենսդիրը սահմանել է միայն «Պետական կառավարչական հիմնարկ» կարգավիճակը[10]:

3. Վարձու աշխատողներ աշխատանքի ընդունելիս «ՀՀ աշխատանքային օրենսգրքով» մի կողմը՝ գործատուն, սահմանվում է որպես աշխատանքային իրավունակություն և գործունակություն ունեցող իրավաբանական անձ՝ անկախ նրա կազմակերպական-իրավական և սեփականության ձևից, գործունեության բնույթից ու տեսակից[11]: Սակայն, ինչպես արդեն նշվեց, զորամասերը չունեն իրավաբանական անձի հատկանիշներ: Հետևաբար վարձու աշխատողների հետ աշխատանքային պայմանագրերի կնքումը նույնպես զուրկ է իրավական հիմքերից:

Նշված պրոբլեմների շարքը կարելի է շարունակել, քանի որ խնդիրը ոչ թե առանձին օրենքների կամ իրավական նորմերի թերի լինելն է, այլ այն հանգամանքը, որ զորամասերը դուրս են մնացել իրավունքի նորմերով սահմանված տնտեսական համակարգից:

Ֆինանսական, նյութապետիվիկական և ոչ նյութական ակտիվներով պաշտպանական գերատեսչության ապահովման գործիքարանի իրավական ամրագրումը:

[7] Տես «Հարկերի մասին» ՀՀ 1997 թ. ապրիլի 14-ի հմ. ՀՕ-107 օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 1997, հմ. 11):

[8] Տես «Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» ՀՀ 2007 թ. հոկտեմբերի 11-ի հմ. ՀՕ-215-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2007, հմ. 54 (578):

[9] Տես «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ 2001 թ. հուլիսի 27-ի ՀՕ-211-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2001, հմ. 29 (161)):

[10] Տես «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ 2001 թ. հոկտեմբերի 23-ի հմ. ՀՕ-247 օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2001, հմ. 37 (169)):

[11] Տես «ՀՀ աշխատանքային օրենսգիրք» ՀՀ 2004 թ. նոյեմբերի 9-ի հմ. ՀՕ-124-Ն օրենսգիրք («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2004, հմ. 69 (368)):

Պաշտպանական համակարգի տնտեսական ապահովման գործիքարանը փոխհարաբերությունների, տարաբնույթ գործողությունների և մեխանիզմների բարդ տնտեսական համակարգ է, որը ենթարկվում է տնտեսագիտական օրինաչափություններին և տնտեսական երևույթների ու գործընթացների ներքին տրամաբանությանը: Այս համակարգի իրավական կարգավորման հիմքում տնտեսական իրավունքի հանրահայտ՝ սեփականության, ձեռնարկատիրական գործունեության իրականացման հնարավորության, աշխատանքի և այլ, նորմերն են, որոնք սահմանված են ՀՀ Սահմանադրությամբ[12]: Հարկ է նշել, որ տնտեսական նորմերի իրականացումը, ի տարբերություն մյուս հիմնարար իրավունքներից, պարտադրում է դրական օրենսդրության լայնածավալ մշակում՝ կապված տնտեսագիտական օրինաչափություններից բխող կանոնների սահմանման հետ[13]: ՈՒստի տնտեսական ապահովման գործիքարանի իրավական հիմքերը կազմում են տնտեսագիտական օրինաչափություններին համապատասխանող փոխկապված և փոխլրացնող իրավական դրույթների, սկզբունքների ու լիազորությունների մի համակարգ: Այս համատեքստում կարևորվում է տնտեսական ապահովման ձևերի՝ ֆինանսական, նյութատեխնիկական և ոչ նյութական ակտիվներով ապահովման գործիքարանների իրավական հիմքերի առանձին ուսումնասիրությունը:

Ֆինանսական ռեսուրսներով պաշտպանական գերատեսչության ապահովումը այդ ռեսուրսների ձևավորումը, բաշխումն ու օգտագործումն է: Հետևաբար, նշված գործընթացների իրականացման գործիքարանի իրավական հիմքերը ներառում են այն նորմերը, որոնք կարգավորում են նշված գործընթացների մեխանիզմները և դրանցում ներգրավված կողմերի փոխհարաբերությունները[14]: ՀՀ-ում ֆինանսական ռեսուրսներով պետական մարմինների, այդ թվում՝ պաշտպանական գերատեսչության, ապահովումը սահմանվում է «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով[15]: Այն սահմանում է բյուջետային հարաբերությունները և բյուջետային գործընթացը: Այս երկու կատեգորիաների իրավական սահմանումն ըստ էության վերը նշված գործիքարանի իրավական հիմքն է: Մասնավորապես՝ Օրենքը բյուջետային հարաբերությունների կարգավորումը բնութագրում է որպես բյուջետային համակարգի կազմակերպման, դրա կառուցվածքի սահմանման, բյուջեների միջև եկամուտների բաշխման, բյուջեների կատարման, հաշվետվությունների և հսկողության, բյուջետային դասակարգման և բյուջեներում փոփոխությունների ու (կամ) լրացումների կատարման ուղղությամբ իրավասու մարմինների գործունեություն, որն իրականացվում է օրենքով

[12] Տես «ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով)» («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», հատուկ թողարկում, 2005, հոդ. 1426):

[13] Տես «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ», դասագիրք: Խմբ. Ա. Էյդե, Կ. Կրաուզ, Ա. Լոզաս: Ե., 2009, էջ 88–94:

[14] Տես «Финансовое право», отв. ред. Н. И. Химичева. М., 2008, сс. 21–27:

[15] Տես «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ 1997 թ. հունիսի 24-ի հմ. ՀՕ-197 օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 1997, հմ. 18):

իրենց վերապահված լիազորությունների սահմաններում: Ընդ որում, բյուջետային հարաբերությունների հիմքում դրված են որոշակի սկզբունքներ, որոնք են՝ բյուջետային համակարգի միասնականությունը, բյուջետային համակարգի մեջ մտնող տարբեր մակարդակների բյուջեների համար բյուջետային մուտքերի և ելքերի տարանջատումը, բյուջեների ինքնուրույնությունը, բյուջեների մուտքերի և ելքերի արտացոլման լրիվությունը, բյուջեների հաշվեկշռվածությունը, բյուջետային ելքերի ամբողջական (համախառն) ծածկվածությունը, բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետությունը, բյուջեների հրապարակայնությունը, բյուջետային միջոցների հասցեագրվածությունը և նպատակայնությունը, բյուջեների իրատեսականությունը: Այս ամենը կազմում է միջբյուջետային հարաբերությունների հիմքը, ընդսմին դրանք կարևորվում են որպես բյուջետային համակարգի տարրերը կապակցող գործընթացներ[16]: Այս հարաբերությունների իրավական կարգավորման խնդիրը ՀՀ-ում լուծված է: Մասնավորապես՝ օրենքով սահմանված են սուբսիդիաները, սուբվենցիաները, տրանսֆերտները և այլն, ինչպես նաև դրանց իրականացման կարգը և իրականացնողների լիազորությունները:

Նշված օրենքով բյուջետային գործընթացը ներկայացվում է որպես յուրաքանչյուր բյուջետային տարվա բյուջեները կազմելու, քննարկելու, հաստատելու և կատարելու, դրանց տարեկան հաշվետվությունը հաստատելու ուղղությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով կանոնակարգված գործունեություն: Իրավական նորմերով հստակ սահմանված են նշված գործընթացների կատարման մեխանիզմները և կարգը, ներգրավված մարմինները և դրանց լիազորությունները: Ըստ էության, կարող ենք փաստել, որ օրենսդիրը ֆինանսական ռեսուրսներով ապահովման մեխանիզմների իրավական հիմքերը սահմանել է ամբողջությամբ: Սակայն հարկ ենք համարում նշել, որ ՀՀ-ում ծրագրային բյուջետավորմանն անցնելու հետ կապված՝ ոլորտի կարգավորման իրավական հիմքերը վերանայման կարիք կունենան[17]:

Նյութատեխնիկական և ոչ նյութական ակտիվներով ապահովման գործիքարանի իրավական հիմքերը սահմանված են «Գնումների մասին» ՀՀ օրենքով[18], որը հստակեցնում է գնումների իրականացման կարգը, ձևերը, մասնակիցներին ներկայացվող պահանջները, պատվիրատուի լիազորությունները: Ընդհանուր առմամբ, պետք է նշել, որ օրենքը մանրամասնում է ապահովման գործիքարանը: Սակայն, կարծում ենք, որ այդ գործիքարանի իրավական հիմքերի խնդիրը պետք է դիտարկվի նաև երկու ուղղությամբ՝ պետական գնումների

[16] Տես «Бюджетное право», под. ред. Г. Б. Полякa, П. И. Кононова. М., 2008, сс. 145—147:

[17] Տես *Վ. Ն. Ավետիսյան,* ՀՀ պաշտպանության նախարարությունում ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման և զարգացման որոշ հարցեր: «ՀԲ», 2010, հմ. 4:

[18] Տես «Գնումների մասին» ՀՀ 2010 թ. դեկտեմբերի 22-ի հմ. ՀՕ-206-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2010, հմ. 69 (803)):

միջոցով տնտեսության աշխուժացման հնարավորություն և պետական գնումների արդյունավետության մեծացման նախադրյալներ:

Այս առումով կարևորվում է պետության դերը տնտեսության զարգացման գործում: ՀՀ-ի համար ներկայումս գերակա խնդիր է տնտեսության մեջ ազատ մրցակցության ձևավորումը, մենաշնորհների վերացումը, դրանց իրականացման համար անհրաժեշտ իրավական հիմքերի զարգացումը[19]: Ընդ որում, ազատ մրցակցության ձևավորումը և շուկայում մրցակցության սրումը, մի կողմից, նպաստում են տնտեսության ընդհանուր զարգացմանը, նոր տեխնոլոգիաների ներդրմանը և այլ դրական տեղաշարժերի, մյուս կողմից՝ առողջ մրցակցության շնորհիվ պետական, այդ թվում՝ պաշտպանական, կարիքների բավարարմանը ավելի որակյալ ու մատչելի ապրանքներով, ծառայություններով և աշխատանքներով: Այդ նկատառումով միջազգային պրակտիկայում պետությունները որոշ մատակարար տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառում են տարբեր արտոնություններ՝ նպատակաուղղված ինքնարժեքը նվազեցնելուն կամ տվյալ սուբյեկտի ռեսուրսների սղությունը մեղմելուն[20]: Այս համատեքստում պետք է փաստել, որ ՀՀ-ում գնումների մասին օրենսդրությունը ոչ միայն չի սահմանում պետական գնումների տեսակետից նման արտոնությունների հնարավորություն, այլև հենց ինքն է հնարավոր գործընկերների միջև սահմանում որոշակի աստիճանակարգություն: Բացի այն է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքը, բացի ոչ բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների թվի կրճատմանն ուղղված սահմանափակումներից, նախատեսում է նաև այլ սահմանափակումներ: Մասնավորապես՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին, պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական ու ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ: Փաստորեն, այս պահանջները տնտեսվարող սուբյեկտներին դասակարգում են ըստ ռեսուրսներով ապահովվածության, փորձառության և այլ չափանիշների: Մեր կարծիքով՝ նման մոտեցումը խոչընդոտում է ոլորտներում նոր կայացող կազմակերպությունների զարգացմանը՝ խաթարելով ազատ մրցակցության ճանապարհով պաշտպանական կարիքների բավարարման համար որակյալ ու մատչելի նյութատեխնիկական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումը:

Այլ պետական մարմինների և այլ կազմակերպությունների հետ պաշտպանական գերատեսչության փոխհարաբերությունների համակարգի իրավական ամրագրումը:

[19] Տես *Ա. Մարկոսյան, Մ. Մկրտումյան,* Քնական մենաշնորհների պետական կարգավորումը: Ե., 2002, էջ 90–91:

[20] Տես «Прогнозирование и планирование в условиях рынка», под ред. А. В. Пикулькина. М., 2001, сс. 223—224:

Պաշտպանական գերատեսչությունն իր տնտեսական գործունեության ընթացքում փոխհարաբերվում է տարաբնույթ մարմինների հետ, որոնք կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

• պետական կառավարման այլ մարմիններ,

• պաշտպանական գերատեսչությանը ենթակա առանձին մարմիններ, օրինակ՝ ՊՈԱԿ-ներ,

• մասնավոր կազմակերպություններ:

Տնտեսական ապահովման համատեքստում այլ մարմինների հետ պաշտպանական գերատեսչության փոխհարաբերությունները ձևավորվում են ֆինանսական, նյութատեխնիկական և ոչ նյութական ակտիվներով ապահովման ընթացքում, իսկ դրանց բնույթը և բովանդակությունը կապված են պաշտպանական գերատեսչության ու նրա ստորաբաժանումների կարգավիճակի հետ (ինչի մասին մենք արդեն խոսել ենք):

Ինչպես նշվել է, պաշտպանական համակարգի առանձնահատկություններից մեկը նրա գործելն է տարբեր՝ խաղաղ և պատերազմական պայմաններում: Այս հանգամանքն իր արտացոլումն է ստանում տնտեսական գործունեության ընթացքում այլ մարմինների հետ փոխհարաբերություններում: Եթե խաղաղ պայմաններում պաշտպանական գերատեսչության տնտեսական գործունեության բովանդակությունը գրեթե չի տարբերվում այլ մարմինների գործունեությունից, ապա ռազմական դրության ժամանակ այն թե՛ բովանդակային, թե՛ ձևական առումով ենթարկվում է սկզբունքային կերպափոխման: Մասնավորապես՝ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է հանրապետության տարածքում գործող իրավաբանական ու ֆիզիկական անձանց համար (այդ թվում՝ տնտեսվարող սուբյեկտների) որոշակի սահմանափակումներ և լրացուցիչ պարտականություններ, որոնք պետք է համապատասխանեն հայտարարված ռազմական դրության համար հիմք ծառայած հանգամանքներին[21]: Նշենք, որ իրավական նորմերով կարգավորված չեն ռազմական դրության ժամանակ տնտեսական ապահովման գործիքարանը, պաշտպանական գերատեսչության և այլ մարմինների փոխհարաբերությունները, ինչպես նաև տնտեսական ապահովման գործընթացում այլ կազմակերպությունների ներգրավվածության չափը և ձևը: Այս փաստը, մեր կարծիքով, լուրջ պրոբլեմ է, առանց որի լուծման ռազմական դրության դեպքում կարող է ուղղակիորեն խաթարվել տնտեսական ապահովման գործընթացը:

Ամփոփելով սույն հոդվածում կատարված վերլուծությունը՝ կարող ենք առանձնացնել հետևյալ հիմնական դրույթները.

• պետության, այդ թվում՝ նրա պաշտպանական համակարգի, տնտեսական գործունեության տնտեսական ապահովման իրավական հիմքերի կարևորությունը պայմանավորված է տնտեսական գործունեության ոլորտում պետության

[21] Տես «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ 2008 թ. նոյեմբերի 27-ի հմ. ՀՕ-198-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2008, հմ. 73 (663):

դերի, դրանից բխող գործառույթների, լիազորությունների, իսկ պաշտպանական համակարգի համար նաև երկու տարբեր իրավիճակներում՝ խաղաղ և պատերազմական պայմաններում, տնտեսական ապահովման մանրամասն իրավական ամրագրման անհրաժեշտությամբ,

• արդյունավետ տնտեսական ապահովման հիմնական իրավական բաղադրիչներն են պաշտպանական գերատեսչության կարգավիճակի և կառուցվածքի, նրա տնտեսական ապահովման գործիքարանի, ինչպես նաև այլ պետական մարմինների և այլ կազմակերպությունների հետ նրա փոխհարաբերությունների համակարգի իրավական ամրագրումները,

• կարգավիճակի առումով զորամասերը դուրս են մնում իրավական նորմերով սահմանված տնտեսական համակարգից, նրանք չունեն քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտներին բնորոշ հատկանիշներ,

• ընդհանուր առմամբ, օրենսդիրը տնտեսական ապահովման գործիքարանի առումով ստեղծել է բավարար իրավական հիմքեր, սակայն խնդիրը պետք է դիտարկել նաև պետական գնումների միջոցով տնտեսության աշխուժացման հնարավորության և պետական գնումների արդյունավետության մեծացման նախադրյալների համատեքստում: Մասնավորապես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսվող որոշ սահմանափակումներ խոչընդոտում են ազատ մրցակցության ճանապարհով պաշտպանական կարիքների արդյունավետ բավարարմանը,

• չկա ռազմական դրության ժամանակ տնտեսական ապահովման գործիքարանի, պաշտպանական գերատեսչության փոխհարաբերությունների, ինչպես նաև տնտեսական ապահովման գործընթացում այլ կազմակերպությունների ներգրավվածության չափի ու ձևի իրավական սահմանումը, ինչը կարող է հանգեցնել այդ պայմաններում տնտեսական ապահովման խաթարմանը:

Նկատի ունենալով վերը շարադրվածը՝ *առաջարկում ենք.*

1. ռազմական դրության ժամանակ տնտեսական ապահովման իրավական հիմքերի մշակման նպատակով ձևավորել միջգերատեսչական աշխատանքային խումբ՝ կազմված ուժային, տնտեսական և արդարադատության կառույցների համապատասխան պաշտոնյաներից ու մասնագետներից,

2. ստեղծել պետական գնումներին ավելի լայն շրջանով մասնակիցների ներգրավման իրավական հիմքեր՝ որպես թիրախ ունենալով կազմակերպություններին ներկայացվող պահանջների մեղմումը, ինչպես նաև ցածր շահութաբերությամբ գնման առարկայի համար արտոնությունների տրամադրումը,

3. ՀՀ պաշտպանության նախարարությունում ստեղծել տնտեսագետներից և իրավաբաններից կազմված ժամանակավոր աշխատանքային խումբ, որն զբաղվի զորամասերը քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտներին բնորոշ հատկանիշներով օժտելու խնդրով՝ մշակելով համապատասխան օրենքի նախագիծ:

ПРАВОВЫЕ ОСНОВЫ ЭКОНОМИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ ОБОРОННОЙ СИСТЕМЫ РА

М. А. ПАРВАНЯН, капитан, соискатель ИНСИ МО РА,
начальник финансовой части ИНСИ МО РА, лектор кафедры управления ГЭУА

РЕЗЮМЕ

Важное значение правовых основ экономического обеспечения оборонной системы обусловлено необходимостью детального правового закрепления роли государства и вытекающих из нее функций и полномочий в сфере экономической деятельности, а также процесса обеспечения в мирное и военное время.

В статье анализируются основные правовые составляющие эффективного осуществления экономического обеспечения—статус и структура оборонного ведомства, инструментарий экономического обеспечения, а также взаимоотношения с другими государственными органами и иными организациями, выявляются существующие проблемы и даются конкретные предложения по их решению.

THE LEGAL BASES OF ECONOMIC SUPPORT OF THE RA DEFENSE SYSTEM

M. A. PARVANYAN, Captain, Graduate Student, INSS, MOD, RA,
Head of the Financial Department, INSS, MOD, RA,
Lecturer of the Chair of Management, SEUA

SUMMARY

A vital importance of the legal bases of economic support of the defense system is stipulated by the necessity of the detailed legal consolidation of the state's role and the functions and powers resulting from it in the sphere of economic activity, as well as the support process both in peacetime and wartime.

The basic legal components of the efficient implementation of economic support, such as the status and structure of the defense agency, economic support tools, as well as mutual relations with other state bodies and diverse organizations are analyzed in the article. The existing problems are revealed and concrete proposals on their solution are given as well.

ՌԱԶՄԱՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Մ. Ռ. ԻՍԱԽԱՆՅԱՆ, գնդապետ, ՀՀ ՊՆ Ռազմաարդյունաբերական վարչության պետ,
Ա. Ռ. ԹՈՎՄԱՍՅԱՆ, ավագ լեյտենանտ, ՀՀ ՊՆ Կենտրոնական զինվորական ներկայացուցչության սպա

ՀՀ-ում շուկայական տնտեսավարմանն անցնելու շրջանում իրականացվող բանակաշինության արդի փուլը բնութագրվում է ինտենսիվ բարեփոխումներով: ՈՒստի, տնտեսական ու ֆինանսական ռեսուրսների սղության հաշվառմամբ, առաջնային նշանակություն է ստանում ռազմական նպատակների համար նախատեսվող տնտեսական միջոցների արդյունավետ օգտագործումը, ինչը ենթադրում է բանակաշինության ոլորտում գիտականորեն հիմնավորված որոշումների ընդունում՝ դրանց համապատասխանեցմամբ բյուջեի հնարավորություններին:

Հաշվի առնելով ռազմական ոլորտի տնտեսական ապահովման էական առանձնահատկությունները՝ մենք առաջարկում ենք մտցնել «ռազմատնտեսագիտություն» հասկացությունը: Ռազմատնտեսագիտությունը բանակաշինության, պետության պաշտպանունակության ամրապնդման և պատերազմի վարման տնտեսական հիմքերի մասին գիտելիքների համակարգ է: Դա տնտեսագիտության ճյուղ է, որն ուսումնասիրում է ռազմական նախանշանակման ապրանքների արտադրության, բաշխման, փոխանակման (շրջանառության) և սպառման հետ կապված հասարակական-տնտեսական հարաբերությունները*: Կարծում ենք, որ այդ գիտաճյուղի զարգացման շնորհիվ կստեղծվեն նպաստավոր պայմաններ «Ռազմական դոկտրինի» պահանջներին համապատասխանությամբ բանակաշինության, զինված ուժերի գործունեության և պետության պաշտպանունակության ապահովման տնտեսական հիմքերի ստեղծման ու զարգացման համար:

Այսպիսով՝ ռազմատնտեսագիտության հետազոտության օբյեկտ են զինված ուժերի և ռազմական նախանշանակման ապրանքների արտադրության, պաշտպանական համակարգի համար այլ անհրաժեշտ նյութական ռեսուրսների ձեռքբերման ոլորտները և դրանք կարգավորող հարաբերությունները:

Ռազմատնտեսագիտության ուսումնասիրության հիմնական ոլորտներից է ռազմաարդյունաբերությունը: Վերջինս բավարարում է ՋՈՒ-ի ռազմական կարիքները ոչ միայն ուղղակիորեն, այլև անուղղակի կերպով՝ միջանկյալ ռազմական ապրանքների (ռազմական արտադրության միջոցների ու ռազմական արտադրության աշխատողների համար սպառման ապրանքների) ձևով:

Աշխարհում տեղի է ունենում սպառազինության որակական պարամետրերի անընդհատ բարելավում: Այն կատարվում է տարբեր եղանակներով,

* Տվյալ սահմանումը ձևակերպված է ընդունված տնտեսագիտական սահմանումների հաշվառմամբ:

այդ թվում՝ սպառազինության միավորների մի քանի գործառույթների համատեղմամբ, ինչը հանգեցնում է սպառազինության արտադրատեսակների քանակի կրճատմանը (օրինակ՝ հրետանային կողմնացույց-անկյունաչափի (բուսոլ) և հեռաչափի փոխարեն կարելի է արտադրել սպառազինության մեկ միասնական արտադրատեսակ, որում միավորված լինեն այդ երկու գործիքի գործառույթները): Այս հանգամանքը ռազմատնտեսագիտության առջև դնում է միանգամայն նոր ու խիստ պահանջներ, այն է՝ խորքային ուսումնասիրություններ, նոր մոտեցումների և տեխնոլոգիական առաջարկությունների մշակումներ՝ գիտատեխնիկական նորամուծությունների հաշվառմամբ:

Կան մի շարք պրոբլեմներ, որոնց անտեսումը կարող է բացասաբար ազդել գիտաճյուղի հեռանկարային զարգացման վրա: Գիտաճյուղի հեռանկարային զարգացման համար կարող են պրոբլեմներ ծագել, եթե՝

• հատկացվող բյուջետային միջոցները չհամապատասխանեն զինված ուժերի պահանջմունքներին (ոչ բավարար լինեն),

• թերի լինեն զինված ուժերի կառավարման, սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով ապահովման, ռազմական կրթության համակարգերը,

• բանակաշինության տեսակետից տնտեսության գիտական վերլուծությունը լինի ոչ բավարար համակարգված և ընդհատ բնույթի,

• կան ռազմատնտեսագիտության մեթոդաբանական թերություններ, այդ թվում՝ մշակված չեն ռազմատնտեսագիտական ներկայիս պայմաններին համարժեք մոդելներ, որոնք պետք է ունենան ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն,

• կայացած չէ ռազմատնտեսագիտական բնույթի հետազոտությունների կատարման համար կադրերի պատրաստման համապատասխան համակարգը:

Ռազմատնտեսագիտության գերակա խնդիրն է մշակել արդյունավետ մոդել, որում հաշվառված լինեն ռազմական, տնտեսական, բարոյահոգեբանական, կադրային, ինչպես նաև այլ պետությունների հետ ունեցած քաղաքական, ռազմական, տնտեսական կապերն ու մի շարք այլ գործոններ: Մոդելը պետք է լինի տնտեսական ծախսումների առումով օպտիմալ և իր մասով ապահովի համապետական մի շարք խնդիրների լուծում: Այդ խնդիրներից են՝

– ռազմական սպառնալիքների չեզոքացումը կամ հավանական պատերազմի արդյունավետ ընթացքի ու ելքի ապահովումը,

– պետության պաշտպանունակության ապահովումը,

– անձնակազմի հայրենասիրության ու բարոյական ոգու և մարտունակության անհրաժեշտ մակարդակի ապահովումը,

– Զինված ուժերի մարտական պատրաստության ապահովումը, և այլն:

ՀՀ պաշտպանական բարեփոխումների շրջանակներում ռազմատնտեսագիտության խնդիրների լուծման համար անհրաժեշտ են հետևյալ միջոցառումները.

• ռազմատնտեսական հարաբերությունների ուսումնասիրում և ռազմատնտեսական քաղաքականության գիտական հիմքերի մշակում,

• բոլոր ուժային կառույցների համար ռազմասոցիալական քաղաքականության միասնական հայեցակարգի ստեղծում, մի հայեցակարգի, որում պետք է որպես մեկ ընդհանուր համակարգ դիտվի և ուսումնասիրվի զինծառայողների «կյանքի փուլաշրջանը»,

• ուժային կառույցներում հաշվապահական հաշվառման տեսական և գործնական հանճնարարականների մշակում ու ներդրում,

• ռեսուրսապահովվածության խնդիրների և խնայողության ռեժիմի կիրառական մշակում:

Բոլոր ուժային մարմինների համար ֆինանսատնտեսական գործունեության միասնական համակարգ ներդրելու անհրաժեշտությունից ելնելով՝ նպատակահարմար ենք համարում դրանց համար մշակել ընդունելի բյուջետային հայտերի կազմման նոր մեթոդիկա, որում հաշվի առնված լինեն ռազմատնտեսական ցուցանիշների հաշվառման և վերլուծության տեսական ու գործնական արդյունքները, և որով իրականացվի ֆինանսական գործունեության վերահսկողության ապահովումը, իր մասով բանակի կազմակերպական կառուցվածքի բարելավումը և անճնակազմի թվաքանակի օպտիմալացումը, ինչպես նաև կառավարման համակարգերի, անճնակազմի վերապատրաստման, դաստիարակման, մարտական և օպերատիվ պատրաստության մակարդակի բարձրացման և տեղեկույթի հավաքման ու դասակարգման մեթոդների բարելավման տնտեսական հիմքերի մշակումը, և այլն:

Վերը նշված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ է մշակել գիտականորեն հիմնավորված միասնական ռազմաֆինանսական քաղաքականություն և, առաջին հերթին, այնպիսի ռազմաբյուջետային քաղաքականություն, որում ֆինանսական ռեսուրսների սահմանափակության պայմաններում օբյեկտիվորեն արտացոլված լինեն Զինված ուժերի գերակա պահանջները:

Ռազմատնտեսագիտական արդյունավետ մոդելների մշակման ու դրանց կիրառման պարագայում անհրաժեշտ է հաշվի առնել պետության ռազմական կառույցի համար անհրաժեշտ բոլոր ծախսերը: Այդ ծախսերից նշենք մի քանիսը.

– Զինված ուժերի և այլ զորքերի, զորամիավորումների պահպանման ծախսերը,

– սպառազինության և ռազմական տեխնիկայի ձեռքբերման, գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներին ուղղված ծախսերը,

– կապիտալ շինարարության ոլորտում նախատեսվող ծախսերը,

– զորահավաքային հզորությունների, զորահավաքային պահուստների պահպանման և զորահավաքային պատրաստման հետ կապված ծախսերը,

– ռազմաարդյունաբերական ոլորտի ընկերություններին աջակցության, դրանց անխափան աշխատանքի ապահովման ծախսերը,

– զինծառայողների դրամական բավարարման և թոշակով ապահովման ծախսերը:

Ռազմական համակարգի տարեկան ծախսերը որոշելիս պետք է հաշվի առ-

նել՝ սպառնալիքների ու վտանգների աստիճանը, Զինված ուժերի և այլ զորքերի վիճակն ու զարգացման կանխատեսումը, պետության ընթացիկ տարվա սոցիալ-տնտեսական զարգացման և ռազմաարդյունաբերական համակարգի վերաբերյալ տվյալների վերլուծության արդյունքները:

Գումարների չափի մեծությունը պետք է որոշվի հետազոտությունների միջոցով: Նման դեպքում անհրաժեշտ է հիմք ընդունել բյուջեի ծախսային հոդվածների դասակարգումը և այդ դժվարին խնդրի լուծման փուլայնության պահպանումը, ինչն ունի ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական նշանակություն:

Չբացառելով հիմնականում տնտեսագիտության ու ռազմական գիտության փոխգործությամբ ռազմատնտեսագիտության խնդիրների հետագա մշակման անհրաժեշտությունը՝ կարող ենք պնդել, որ ակտիվ ռազմատնտեսագիտական ուսումնասիրությունը պետք է լինի մասնագիտական մարմինների ուշադրության կենտրոնում՝ որպես ազգի ու պետության անվտանգ զարգացման երաշխիք և տնտեսագիտության զարգացման հեռանկարային ուղղություն: Նման մոտեցումը հատկապես կարևոր է այնպիսի գործընթացների ուսումնասիրության և օպտիմալացման ժամանակ, ինչպիսիք են պաշտպանական բարեփոխումները:

Այս համատեքստում անհրաժեշտ է նաև մշակել **միասնական ռազմատնտեսական քաղաքականություն**: Խոսքը վերաբերում է միջգերատեսչական կապերին, ռազմական կառույցի զարգացմանը՝ որպես մեկ միասնական օրգանիզմի: Դա իր հերթին ենթադրում է ռազմաֆինանսական, ռազմասոցիալական, ռազմաարդյունաբերական ու ռազմատեխնիկական միասնական քաղաքականության մշակում և իրականացում, կադրերի պատրաստման միասնական համակարգի ստեղծում, նյութատեխնիկական ու տեխնիկական աջակցություն և այլն:

Ռազմատնտեսագիտության զարգացման հիմնական ուղղություններից մեկը պաշտպանական բարեփոխումների ծրագիրն է, որի շրջանակներում անհրաժեշտ է մշակել ուժային նախարարությունների և գերատեսչությունների զարգացման ծրագրերը, այդ թվում նաև ռազմական և հատուկ նախանշանակման տեխնիկայի զարգացման, սպասարկման ծառայությունների զարգացման, զինծառայողների սոցիալական ապահովության ծրագրերը: Որպեսզի պաշտպանական ոլորտի պատվերները լինեն իրատեսական և գիտականորեն հիմնավորված, անհրաժեշտ է դրա բոլոր տարրերի օպտիմալացում:

Ակնհայտ է, որ ռազմական կառույցի ծրագրերի կազմման համար անհրաժեշտ է ստեղծել գիտամեթոդաբանական ստորաբաժանում, որն զբաղվի ռազմատնտեսագիտության հետևյալ հիմնական ուղղություններով՝

1) շուկայական հարաբերությունների պայմաններում ռազմական ոլորտում գործող տնտեսական օրենքների ուսումնասիրություն և դրա կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակում,

2) ռազմատնտեսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության ուսումնասիրություն մակրո- և միկրոմակարդակներում (այսինքն՝ ամբողջ Զին-

ված ուժերի և առանձին զորամասերի մակարդակներով),

3) շուկայական հարաբերությունների պայմաններում ռազմատնտեսական պահանջմունքների և դրանց բավարարման ուղիների վերլուծություն, ռազմատնտեսական կառավարման հիմնական ուղղությունների կատարելագործում,

4) գիտատեխնիկական ներուժի ներդրման ուղիների մշակում,

5) Զինված ուժերի և շրջակա միջավայրի փոխգործության ուսումնասիրում (բնապահպանական ուղղություն), և այլն:

Այսպիսով՝ մեր պետության համար, որը գտնվում է ո՛չ պատերազմի և ո՛չ էլ խաղաղության պայմաններում, ինչպես նաև կիսաշրջափակման մեջ, անհրաժեշտ է պաշտպանությանը հատկացված ֆինանսական միջոցները ծախսել ռացիոնալ՝ ապավինելով ռազմատնտեսագիտական տեսությանը, որը ռազմական դոկտրինին համահունչ իր խնդիրներով, գործառույթներով, վերլուծություններով և ընդհանրացումներով, անընդհատ փոփոխվող աշխարհաքաղաքական իրավիճակի հաշվառմամբ, իր մասով կնպաստի ՀՀ ԶՈՒ-ի զարգացման նոր ուղղությունների և հեռանկարների մշակմանը, ինչն էլ իր հերթին ավելի կբարձրացնի պետության պաշտպանունակության մակարդակը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4:

2. *Ս. Ս. Ավետիսյան, Ռ. Ա. Թովմասյան,* Տնտեսագիտության տեսություն. ուսումնական ձեռնարկ: Ե., 2010:

3. *В. В. Баскаков, Д. В. Гордиенко, А. С. Мошкин.* Военно-экономическая составляющая безопасности страны. Монография. М., 2008.

4. *Д. В. Гордиенко, А. С. Хохлов.* Военно-экономическая безопасность государства. М., 2008.

ПОНЯТИЕ И ЗАДАЧИ ВОЕННО-ЭКОНОМИЧЕСКОЙ НАУКИ В КОНТЕКСТЕ ОБОРОННЫХ РЕФОРМ РА

М. Р. ИСАХАНЯН, полковник, начальник Военно-промышленного управления МО РА, А. Р. ТОВМАСЯН, старший лейтенант, офицер Центрального военного представительства МО РА

РЕЗЮМЕ

Строительство ВС РА на нынешнем этапе характеризуется интенсивностью процессов реформирования, осуществляемых в условиях перехода к рыночной экономике. В данных обстоятельствах, с учетом ограниченности финансово-экономических ресурсов государства, первоочередной становится задача рационального использования экономических средств, выделяемых на военные нужды. Для решения этой задачи оптимизации необходим строго обоснованный научный подход, который может быть обеспечен в рамках военно-экономической науки, представляющей со-

бой систему знаний об экономической базе подготовки государства и его ВС к обороне и ведения войны. Военно-экономическая наука является разделом экономической науки, изучающим общественно-экономические отношения в процессе производства, распределения, обмена (товарооборота) и сбыта товаров военного назначения.

Основными задачами военно-экономической науки являются разработка экономической политики государства в оборонной сфере и создание модели перспективного развития военной экономики, в частности, решение проблем несоответствия выделенных бюджетных средств потребностям ВС, несовершенства систем управления ВС, обеспечения ВВТ и военного образования, обеспечения системного подхода к анализу экономики с точки зрения строительства ВС с учетом военных, экономических, морально-психологических, кадровых и других факторов.

THE NOTION AND TASKS OF THE WAR ECONOMY SCIENCE IN THE CONTEXT OF THE RA DEFENSE REFORMS

M. R. ISAKHANYAN, Colonel, Head of the Military-Industrial Directorate, MOD, RA,
A. R. TOVMASYAN, Senior Lieutenant, Officer of the Central Military Mission, MOD, RA

SUMMARY

The formation of the RA Armed Forces at the current stage is characterized by the intensity of reforming processes being implemented in conditions of the switch to the market economy. In these circumstances, taking into account the state's limited financial and economic resources, the problem of rational use of economic means allocated to the military needs becomes urgent. For solving this optimization problem a rigorously substantiated academic approach is needed. This approach can be provided within the framework of war economy science which is a system of knowledge about the economic base to prepare the state and its Armed Forces for defense and to wage war. War economy science is a branch of economics studying the socio-economic relations in the process of production, distribution, exchange (commodity turnover) and sales of military goods.

The main tasks of war economy science is to elaborate the state's economic policy in the defense sector and create a model of perspective development of war economy science, particularly: solution of the problems of incompatibility of the allocated budget means with the Armed Forces needs; imperfections of the Armed Forces systems of control, of supply with armament and military equipment and of military education; ensuring a systemic approach to the analysis of economy in terms of the Armed Forces formation taking into account military, economic, moral and psychological, staffing and other factors.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՌՈՒՄՆԵՐ

Ա. Ս. Նազարյան, Հայաստանի Հանրապետության պաշտպանական ոլորտի օրենսդրական բարեփոխումների հիմնական ուղղությունները բանակաշինության արդի փուլում 5

Ս. Գ. Սեդրակյան, Պաշտպանական բարեփոխումների իրավաբանական ապահովումը բանակաշինության համատեքստում 15

Ս. Օ. Աբրահամյան, Անվտանգության և պաշտպանության հարցերի իրավական ամրագրման որոշ առումներ 27

Տ. Տ. Քոչարյան, Հայաստանի Հանրապետությունում զինվորական ծառայության կազմակերպաիրավական ապահովումը 36

Հ. Ի. Գևորգյան, ՀՀ Զինված ուժերում բնակարանային ապահովման կուտակային-հիպոտեկային համակարգի ներդրման հեռանկարները 45

ՀՐԵՏԱՆԻ ԵՎ ՀՐԹԻՌԱՅԻՆ ԶՈՐՔԵՐ

Յու. Գ. Խաչատրով, ՀՀ ԶՈՒ-ի հրթիռային զորքերի և հրետանու զարգացման հիմնական ուղղությունները պաշտպանական բարեփոխումների համատեքստում՝ համաշխարհային միտումների հաշվառմամբ 57

Ա. Գ. Մարդոյան, Գ. Գ. Ասրյան, Հրետանու հրամանատարի ուսումնավարժվածության մակարդակի ազդեցությունը հրետանային ստորաբաժանումների կողմից կրակային խնդրի կատարման արդյունավետության վրա 67

Ա. Ե. Բաղդասարյան, Գ. Ա. Կարապետյան, Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում հրետանային մասնագիտական պատրաստման համակարգի արդիականացման հիմնական միտումները 75

Ա. Հ. Եսայան, Բ. Վ. Ոսկանյան, ՀՀ ռազմական արդյունաբերության համալիրի դերը հրթիռային զորքերի և հրետանու տեխնիկական զարգացման գործում 82

Մ. Օ. Բաբաջանյան, 9Կ72 «Էլբրուս» («Scud-B») օպերատիվ մարտավարական հրթիռային համալիրի կիրառումը ժամանակակից տեխնոլոգիաների օգտագործմամբ 89

Վ. Ռ. Բարսեղյան, Ղեկավարվող թռչող սարքեր և դրանց ղեկավարման համակարգերի դինամիկ նախագծման հիմնահարցեր 92

Մ. Վ. Մարկոսյան, Հակահրթիռային և հակահրետանային պաշտպանության կազմակերպման որոշ հարցեր 102

Է. Ա. Ապրիամով, Հակատանկային միջոցների կիրառման փորձը ղարաբաղյան հակամարտության օրինակով 106

ՌԱԶՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Ս. Մ. Օհանյան, ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացումը որպես պաշտպանական բարեփոխումների առաջնային խնդիր 113

Մ. Ռ. Իսահակյան, Ա. Պ. Պետրոսյան, ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացմանն ուղղված հիմնական միջոցառումները պաշտպանական բարեփոխումների շրջանակներում 122

Ա. Պ. Պետրոսյան, Ա. Ռ. Թովմասյան, ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացման տնտեսական նախադրյալները 129

Գ. Ժ. Բադալյան, ՀՀ արդյունաբերության զարգացման համատեքստում ռազմաարդյունաբերական համակարգի զարգացման հեռանկարի մասին 139

Հ. Հ. Մաթևոսյան, Ռազմաարդյունաբերական համալիրը և հիմնարար գիտությունը 147

Հ. Խ. Գևորգյան, Ա. Ռ. Թովմասյան, ՀՀ ռազմական արդյունաբերության համակարգի զարգացման օրենսդրական հիմքերի հարցի շուրջ 158

Ռ. Վ. Աբոյան, Յու. Գ. Մոսիկյան, Հ. Ա. Մելիքյան, Վ. Ռ. Բարսեղյան, Լ. Գ. Մելքումյան, ՀՀ ՋՈՒ-ի կառավարման ավտոմատացված համակարգի նշանակությունը, կառուցվածքը և աշխատանքի համառոտ նկարագրությունը 165

Գ. Թ. Հովհաննիսյան, Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի աշխատանքների հիմնական ուղղությունները և զարգացման հեռանկարները 174

Զ. Մ. Գաբրիելյան, Ժ. Հ. Ամիրխանյան, Հ. Հ. Կոստանյան, Ռ. Հ. Թումանյան, Ա. Ա. Գյուրջյան, ՀՀ ՋՈՒ-ի սպառազինության մեջ գտնվող զրահատեխնիկայի արդիականացման ուղիները 182

Կ. Ա. Դադալյան, Ա. Պ. Պետրոսյան, Ռադիոտեխնիկական միջոցների արդիականացման գործընթացը և զարգացման ուղղությունները 195

Մ. Վ. Մարկոսյան, Ֆ. Պ. Սոլոմոնյան, Զինված ուժերում կապի կազմակերպման հնարավոր տարբերակ 201

Պ. Ա. Շադյան, Ա. Հ. Վարդանյան, Գ. Ս. Գևորգյան, Տ. Կ. Դադալյան, Օպտիկական և օպտիկաէլեկտրոնային համակարգերը պաշտպանական ոլորտում և դրանց զարգացման հիմնական ուղղությունները 211

Ս. Գ. Պետրոսյան, Նանոտեխնոլոգիաները և դրանց հեռանկարները 219

ՌԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Ա. Մ. Փարսադանյան, ՀՀ ԶՈՒ-ի ռազմաբժշկական ծառայության զարգացման որոշ հայեցակարգային հարցեր 231

Հ. Մ. Դարբինյան, Ռազմական բժշկությունը հանրապետության առողջապահական համակարգում 241

Դ. Հ. Դումանյան, Ս. Գ. Գալստյան, Ռազմաբժշկական կրթության ոլորտի բարեփոխումների ռազմավարությունն ու մարտավարությունը Բոլոնյան գործընթացի շրջանակներում 249

Վ. Պ. Այվազյան, Ա. Ս. Գալստյան, ՀՀ ԶՈՒ-ում վերջույթների վիրավորումների որոշ հարցեր 256

Ս. Գ. Գալստյան, Մ. Վ. Սարգսյան, Ա. Ա. Խաչատրյան, ՀՀ ԶՈՒ-ում թերապևտիկ օգնության կազմակերպման հարցի շուրջ 264

Կ. Ս. Եղիազարյան, Ա. Վ. Արզումանյան, Կ. Լ. Վահանյան, Զինծառայողների առողջարանային սպասարկման համակարգի կատարելագործման հեռանկարները 272

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Ս. Ա. Հարությունյան, Զինծառայողների սոցիալական վիճակի բարելավումը՝ որպես ՀՀ ԶՈՒ-ի գերակա խնդիր 279

Ա. Ջ. Ասատրյան, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական պաշտպանության ոլորտի կայուն զարգացման ռազմավարության գաղափարաքաղաքական հիմքերը 286

Ա. Կ. Խաչատրյան, Տ. Ռ. Մարտիրոսյան, Ռազմասոցիալական ոլորտում անվտանգության ապահովման որոշ տեսական և կիրառական հարցեր 293

Ա. Ն. Սարգսյան, Զինվորական սոցիալական աշխատանքը՝ որպես զինված ուժերի գործունեության բարոյահոգեբանական ապահովման բաղադրիչ 299

ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ա. Ս. Նազարյան, ՀՀ Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական քաղաքացիական վերահսկողության ապահովման օրենսդրական մեխանիզմները 307

Ա. Գ. Վաղարշյան, Հայաստանի երեք հանրապետություններում սահմանադրական կարգավորման տիպերը և Զինված ուժերի քաղաքական չեզոքության ու դրանց նկատմամբ քաղաքացիական վերահսկողության սկզբունքների սահմանադրաիրավական ամրագրումը 315

Վ. Ա. Խաչատրյան, Զինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության իրավական ամրագրումը ՀՀ օրենսդրության մեջ 327

Հ. Կ. Կարապետյան, Հայաստանի Հանրապետությունում պաշտպանության ոլորտի նկատմամբ խորհրդարանական վերահսկողության որոշ հարցեր 337

Գ. Բ. Հարությունյան, ՀՀ Պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի տեղը Զինված ուժերի նկատմամբ հասարակական վերահսկողության գործում 344

Ռ. Ջ. Մախմուդյան, Հայաստանի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի հաստատության դերը Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության գործում 350

Գ. Ե. Միրզոյան, Ա. Է. Հովհաննյան, Հասարակական կազմակերպության կողմից զորակոչիկների իրավունքների պաշտպանության որոշ հարցեր 360

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Վ. Ն. Ավետիսյան, ՀՀ պաշտպանության նախարարությունում ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման և զարգացման որոշ հարցեր 369

Ա. Ռ. Գևորգյան, ՀՀ-ում պաշտպանական բարեփոխումների տնտեսական նախադրյալները 383

Մ. Ա. Փարվանյան, ՀՀ պաշտպանական համակարգի տնտեսական ապահովման իրավական հիմքերը 389

Մ. Ռ. Խաչիանյան, Ա. Ռ. Թովմասյան, Ռազմատնտեսագիտության հասկացությունը և խնդիրները ՀՀ պաշտպանական բարեփոխումների համատեքստում 399

СОДЕРЖАНИЕ

ПРАВОВЫЕ АСПЕКТЫ ОБОРОННЫХ РЕФОРМ

А. С. Назарян. Основные направления законодательных реформ в оборонной сфере РА на современном этапе строительства Вооруженных сил . . . . . 5 (13)*

С. Г. Седракян. Юридическое обеспечение оборонных реформ в контексте строительства Вооруженных сил РА 15 (26)

С. О. Абрамян. Некоторые аспекты правового закрепления вопросов безопасности и обороны 27 (34)

Т. Т. Кочарян. Организационно-правовое обеспечение военной службы в Республике Армения 36 (43)

А. И. Геворкян. Перспективы внедрения в Вооруженных силах РА накопительно-ипотечной системы обеспечения жильем 45 (54)

РАКЕТНЫЕ ВОЙСКА И АРТИЛЛЕРИЯ

Ю. Г. Хачатуров. Основные направления развития ракетных войск и артиллерии ВС РА в контексте оборонных реформ с учетом мировых тенденций 57 (63)

А. Г. Мардоян, Г. Г. Асрян. Влияние уровня обученности артиллерийского командира на эффективность выполнения огневой задачи подразделениями артиллерии 67 (73)

А. Е. Багдасарян, Г. А. Карапетян. Основные тенденции модернизации системы професиональной артиллерийской подготовки в Вооруженных силах Республики Армения 75 (80)

А. А. Есаян, Б. В. Восканян. Роль военно-промышленного комплекса РА в деле технического развития ракетных войск и артиллерии 82 (87)

М. О. Бабаджанян. Применение оперативно-тактического ракетного комплекса 9К72 «Эльбрус» («Scud-B») с использованием современных технологий 89 (90)

В. Р. Барсегян. Управляемые летательные аппараты и проблемы динамического проектирования систем управления 92 (100)

М. В. Маркосян. Некоторые вопросы организации противоракетной и противоартиллерийской защиты 102 (104)

Э. А. Априамов. Опыт применения противотанковых средств на примере Карабахского конфликта 106 (109)

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

ВОЕННАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ

С. М. Оганян. Развитие системы военной промышленности РА как приоритетная задача оборонных реформ 113 (119)

М. Р. Исаханян, А. П. Петросян. Основные мероприятия по развитию системы военной промышленности РА в рамках оборонных реформ 122 (127)

А. П. Петросян, А. Р. Товмасян. Экономические предпосылки развития системы военной промышленности РА 129 (136)

Г. Ж. Бадалян. О перспективах развития системы военной промышленности в контексте развития промышленности РА 139 (143)

Г. Г. Матевосян. ВПК и фундаментальная наука 147 (154)

А. И. Геворгян, А. Р. Товмасян. О законодательных основах развития системы военной промышленности РА 158 (162)

Р. В. Атоян, Ю. Г. Мосикян, Г. А. Меликян, В. Р. Барсегян, Л. Г. Мелкумян. Значение, структура и краткое описание работы автоматизированной системы управления ВС РА 165 (171)

Г. Т. Оганесян. Основные направления работ и перспективы развития Ереванского научно-исследовательского института математических машин 174 (180)

З. М. Габриелян, Ж. А. Амирханян, О. Г. Костанян, Р. Г. Туманян, А. А. Гюрджян. Пути модернизации бронетанковой техники ВС РА 182 (193)

К. А. Дадалян, А. П. Петросян. Процесс модернизации радиотехнических средств и направления их развития 195 (200)

М. В. Маркосян, Ф. П. Соломонян. Возможный вариант организации связи в вооруженных силах 201 (210)

П. А. Шадян, А. О. Варданян, Г. С. Геворкян, Т. К. Дадалян. Оптические и оптоэлектронные системы в оборонной сфере и основные направления их развития 211 (217)

С. Г. Петросян. Нанотехнологии и их перспективы 219 (228)

ВОЕННАЯ МЕДИЦИНА

А. М. Парсаданян. Некоторые концептуальные вопросы развития военно-медицинской службы ВС РА 231 (238)

А. М. Дарбинян. Военная медицина в системе здравоохранения республики 241 (247)

Д. Г. Думанян, С. Г. Галстян. Стратегия и тактика реформ сферы военно-медицинского образования в рамках Болонского процесса 249 (254)

В. П. Айвазян, А. С. Галстян. Некоторые вопросы ранений конечностей в ВС РА 256 (262)

С. Г. Галстян, М. В. Саргсян, А. А. Хачатрян. К вопросу организации терапевтической помощи в ВС РА 264 (270)

К. С. Егиазарян, А. В. Арзуманян, К. Л. Ваанян. Перспективы усовершенствования системы санаторного обслуживания военнослужащих 272 (276)

СОЦИАЛЬНОЕ ОБЕСПЕЧЕНИЕ ВОЕННОСЛУЖАЩИХ

С. А. Арутюнян. Улучшение социального состояния военнослужащих как приоритетная задача ВС РА 279 (285)

А. Дж. Асатрян. Идеологические и политические основы стратегии устойчивого развития сферы труда и социальной защиты Республики Армения 286 (291)

А. К. Хачатрян, Т. Р. Мартиросян. Некоторые теоретические и практические вопросы обеспечения безопасности РА в военно-социальной сфере 293 (297)

А. Н. Саргсян. Военно-социальная работа как составляющая морально-психологического обеспечения Вооруженных Сил 299 (303)

ДЕМОКРАТИЧЕСКИЙ ГРАЖДАНСКИЙ КОНТРОЛЬ НАД ВООРУЖЕННЫМИ СИЛАМИ

А. С. Назарян. Законодательные механизмы обеспечения демократического гражданского контроля над Вооруженными силами РА 307 (313)

А. Г. Вагаршян. Типы конституционного регулирования и конституционно-правовое закрепление принципов политического нейтралитета Вооруженных сил и гражданского контроля над ними в трех Республиках Армения 315 (325)

В. А. Хачатрян. Правовое закрепление демократического контроля над Вооруженными силами в законодательстве РА 327 (335)

Г. К. Карапетян. Некоторые вопросы парламентского контроля над сферой обороны в Республике Армения 337 (342)

Г. Б. Арутюнян. Место Общественного совета при Министре обороны РА в деле общественного контроля над Вооруженными силами 344 (348)

Р. Дж. Махмудян. Роль Института защитника прав человека Республики Армения в деле защиты прав человека в Вооруженных силах 350 (358)

Г. Е. Мирзоян, А. Э. Овнанян. Некоторые вопросы защиты прав призывников со стороны общественной организации 360 (365)

ЭКОНОМИЧЕСКОЕ ОБЕСПЕЧЕНИЕ ОБОРОННЫХ РЕФОРМ

В. Н. Аветисян. Некоторые вопросы внедрения и развития системы программного бюджетирования в Министерстве обороны РА 369 (380)

А. Р. Геворкян. Экономические предпосылки оборонных реформ в РА 383 (387)

М. А. Парванян. Правовые основы экономического обеспечения оборонной системы РА 389 (398)

М. Р. Исаханян, А. Р. Товмасян. Понятие и задачи военно-экономической науки в контексте оборонных реформ РА 399 (403)

CONTENTS

LEGAL ASPECTS OF THE DEFENSE REFORMS

A. S. Nazaryan. Basic directions of legislative reforms in the RA defense sphere at the contemporary stage of building the Armed Forces . 5 (14)*

S. G. Sedrakyan. The legal support of defense reforms in the context of building the RA Armed Forces 15 (26)

S. O. Abrahamyan. Some aspects of legal affirmation of security and defense issues 27 (35)

T. T. Kocharyan. Organization-legal support of the military service in the Republic of Armenia 36 (44)

H. I. Gevorgyan. Perspectives of the introduction of the savings and mortgage system for housing into the RA Armed Forces 45 (54)

ROCKET FORCES AND ARTILLERY

Yu. G. Khacaturov. The main directions of the RA AF rocket forces and artillery development in the context of defense reforms with a glance at global trends 57 (64)

A. G. Mardoyan, G. G. Asryan. The impact of the training level of an artillery commander on the effective implementation of a fire mission by artillery units 67 (73)

A. E. Baghdasaryan, G. A. Karapetyan. Major trends of modernizing the artillery professional training in the Armed Forces of the Republic of Armenia 75 (81)

A. A. Yesayan, B. V. Voskanyan. The role of the RA military-industrial complex for technical development of the rocket forces and artillery 82 (88)

M. O. Babajanyan. The application of the tactical ballistic missile system 9K 72 «Elbrus» («Scud-B») with the use of modern technologies 89 (91)

V. R. Barseghyan. Guided aircraft and problems of dynamic design of control systems 92 (101)

M. V. Markosyan. Some issues of the organization of anti-ballistic and anti-artillery defense 102 (105)

E. A. Apriamov. The experience of using the anti-tank warfare on the example of the Karabakh conflict 106 (110)

MILITARY INDUSTRY

S. M. Ohanyan. The development of the RA military industry system as a foreground task of the defense reforms 113 (120)

* Numbers in brackets mean the page of the text in English.

M. R. Isakhanyan, A. P. Petrosyan. The main steps to develop the RA military industry system within the framework of the defense reforms 122 (128)

A. P. Petrosyan, A. R. Tovmasyan. Economic preconditions for the development of the RA military industry system 129 (137)

G. Zh. Badalyan. On the development perspective of the military industry system in the context of the RA industrial development . . . 139 (145)

H. H. Matevosyan. The military industry complex and fundamental science 147 (156)

H. I. Gevorgyan, A. R. Tovmasyan. On the legislative basis for the development of military industry of the RA 158 (163)

R. V. Atoyan, Y. G. Mossikyan, H. A. Melikyan, V. R. Barseghyan, L. G. Melkumyan. The significance, structure and concise description of functioning of the Automated Control System of the RA Armed Forces 165 (172)

G. T. Hovhannissyan. The principal directions of activities and development perspectives of the Yerevan Computer Research and Development Institute 174 (181)

Z. M. Gabrielyan, Zh. H. Amirkhanyan, H. H. Kostanyan, R. H. Tumanyan, A. A. Gyurdjyan. The ways to modernize the armoured hardware of the RA Armed Forces 182 (194)

K. A. Dadalyan, A. P. Petrossyan. The process of modernization of radio equipments and directions of their development 195 (200)

M. V. Markosyan, F. P. Solomonyan. An option for organizing communication in the Armed Forces 201 (210)

P. A. Shadyan, A. H. Vardanyan, G. S. Gevorkyan, T. K. Dadalyan. Optical and optoelectronic systems in the defense sphere and principal directions of their development 211 (218)

S. G. Petrossyan. Nanotechnologies and their perspectives 219 (228)

MILITARY MEDICINE

A. M. Parsadanyan. Some conceptual issues of developing the Military Medical Service of the RA Armed Forces 231 (239)

H. M. Darbinyan. Military medicine in the healthcare system of the Republic 241 (247)

D. H. Dumanyan, S. G. Galstyan. Strategy and tactics of military medical education reforms within the scope of the Bologna process . 249 (255)

V. P. Ayvazyan, A. S. Galstyan. Some issues on the wounds of extremities in the RA Armed Forces 256 (262)

S. G. Galstyan M. V. Sargsyan, A. A. Khachatryan. On the issue of therapeutic aid organization in the RA Armed Forces 264 (271)

K. S. Yeghiazaryan, A. V. Arzumanyan, K. L. Vahanyan. The perspectives of the Military's sanatorium services improvement 272 (276)

SOCIAL SUPPORT OF SERVICEMEN

S. A. Harutyunyan. Improvement of servicemen's social state as a priority task of the RA Armed Forces 279 (285)

A. J. Asatryan. Ideological and political principles of the sustainable development strategy of the labor and social protection sphere of the Republic of Armenia 286 (292)

A. K. Khachatryan, T. R. Martirosyan. Some theoretical and practical issues of ensuring the RA security in the military-social sphere . . 293 (298)

A. N. Sargsyan. Military-social work as a constituent of moral-psychological security of the Armed Forces 299 (303)

IMPROVEMENT OF THE SYSTEM OF DEMOCRATIC CIVILIAN CONTROL OVER THE ARMED FORCES

A. S. Nazaryan. The legislative mechanisms of ensuring democratic civilian control over the Armed Forces of the Republic of Armenia . . 307 (314)

A. G. Vagharshyan. The types of constitutional regulation and constitutional legitimation of the principles of political neutrality of the Armed Forces and civilian control over them in the three Republics of Armenia 315 (326)

V. A. Khachatryan. The legitimation of the democratic control over the Armed Forces in the RA Legislation 327 (336)

H. K. Karapetyan. Some issues of the parliamentary control over the defense sphere in the Republic of Armenia 337 (342)

G. B. Harutyunyan. The place of the Public Council under the RA Minister of Defense in the public control over the Armed Forces . . 344 (349)

R. J. Makhmudyan. The role of the Ombudsman Institute of the Republic of Armenia in the Human Rights Protection in the Armed Forces 350 (359)

G. Ye. Mirzoyan, A. E. Hovnanyan. Some problems of the conscripts' rights protection by the Non-governmental organization . . . 360 (366)

ECONOMIC SUPPORT OF THE DEFENSE REFORMS

V. N. Avetisyan. Some issues of implementing and developing the program budgeting system in the RA Ministry of Defense 369 (381)

A. R. Gevorkyan. The economic premises for the defense reforms in the Republic of Armenia 383 (388)

M. A. Parvanyan. The legal bases of economic support of the RA defense system 389 (398)

M. R. Isakhanyan, A. R. Tovmasyan. The notion and tasks of the war economy science in the context of the RA defense reforms 399 (404)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ-ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ

(ՄԱՍ 2)

Գիտական խմբագիրներ՝ *քաղ. գիտ. դ. Հ. Քոթանջյան,*
քաղ. գիտ. թ. Ս. Օհանյան

Խմբագիր՝ *Դ. Չիլինգարյան*

Թարգմանիչներ՝ *Մ. Ավետիսյան, Ա. Հակոբյան, Ա. Մարտիրոսյան,*
Ն. Մկրտչյան, Ա. Մովսիսյան, Դ. Չիլինգարյան,
Լ. Պապիկյան, Ք. Փիրոյան

Տեխնիկական խմբագիր՝ *Ա. Նազարեթյան*

Շարվածքը՝ *Վ. Խալաֆյանի, Գ. Դադայանի, Ն. Ծատուրյանի*

Շապիկի ձևավորումը՝ *Դ. Փարվանյանի*

Լուսանկարները՝ *Ա. Ներսիսյանի*

Սրբագրիչներ՝ *Ն. Բաղդասարյան, Ա. Սարուխանյան,*
Տ. Տիրացույան

Պատվեր՝ 126: Տպաքանակ՝ 1000:
Չափս՝ 70x100/16: 26 տպ. մամուլ:
Տառատեսակներ՝ Arial, Arial LatArm, Times New Roman,
Dallak Time New, Russian TimesET:

Տպագրված է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում